ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

2022

Հրատարակության է երաշխավորել Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդը:

Գլխավոր խմբագիր՝

Ռ. Խ. Հակոբյան	ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Ն. Ա. Կուտուզյան	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ. Պ. Ավագյան	գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Թ. Ա. Ասոյան	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս. Գ. Ամիրխանյան	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Գ. Ղաջոյան	փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Թ. Գ. Խաչիկյան	կենսաբանական գիտությունների թեկնածու
Ա. Գ. Միրիբյան	ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի

The publication is guaranteed by the Academic Council of Gavar State University

Editor-in-chief

R. Kh. Hakobyan	Rector of GSU, Doctor of Law, Associate Professor

Editorial Council

N. A. Kutuzyan	PhD in Physical and Mathematical Sciences, Associate Professor
M. P. Avagyan	Doctor of Agriculture
T. A. Asoyan	PhD in Philology, Associate Professor
S. G. Amirkhanyan	PhD in Economics, Associate Professor
H. G. Ghajoyan	PhD in Philosophy
T. G. Khachikyan	PhD in Biology
A. G. Miribyan	Head of GSU Student Scientific Council, 1st year Master Student at the Department of Economics, Faculty of Economics

Рекомендовано к изданию Ученым советом Гаварского государственного университета.

Главный редактор	
Р. Х. Акобян	ректор ГГУ, доктор юридических наук, доцент
Редакционная коллегия	
Н. А. Кутузян	кандидат физико - математических наук, доцент
М. П. Авагян	доктор сельскохозяйственных наук
Т. А. Асоян	кандидат филологических наук, доцент
С. Г. Амирханян	кандидат экономических наук, доцент
Г. Г. Каджоян	кандидат философских наук
Т. Г. Хачикян	кандидат биологических наук
А. Г. Мирибян	Студентка магистратуры 1-ого курса отделении экономики экономического факультета, председатель студенческого научного совета ГГУ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՆՈՒՇ
Տեսահսկման համակարգերի տեղեկատվության պաշտպանության միջոցները և հիմնահարցերը.....18
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
Տեքստային փաստաթղթերի ճանաչման ինտելեկտուալ համակարգի նախագծում 34
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
Ֆոտոռոբոտի ստեղծման FACE (RS) համակարգչային ծրագրի նշանակությունը և կիրառումը քրեական հետաքննության գործընթացում .45
ՄԱՍՏՈՅԱՆ ԿԱՐԵՆ
Դեմքերի ճանաչման և նույնականացման համակարգերի առանձնահատկությունները 54
ԽԵՔՈՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Երրորդ սերնդի բջջային 3G ցանցի WCDMCA/UNTS շարժական համակարգի նշանակությունը և հիմնական ֆունկցիաները..... 69
ՔՈԼՈՋՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
CLIENT-SERVER համակարգի արձանագրությունների համեմատական վերլուծությունը.....78

2. ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆՆԱ
Հովհաննես Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը (1905-1906 թթ.) 90
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՆԱ
«Զանգեզուր» թերթի անդրադարձը քաղաքական բռնաճնշումներին (ԽՍՀՄ-ում 1937-1938 թթ.-ին) 99
ԱՊԿԱՐՅԱՆ ԼՈՒԻԶԱ
Ամենագերմանացին գերմանացի կայսրուհիների մեջ՝ Թեոֆանու կայսրուհի 109

ԱՐԶԱՆՅԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ
«Զանգեզուր» թերթը որպես արցախյան առաջին պատերազմի սկզբնաղբյուր (1991-1992 թթ.) 116
ԱՅՎԱԶՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ
Թուրքմենչայի պայմանագրի կնքումը.....129
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀՐԱՆՈՒՀԻ
Կրթական կյանքի արտացոլումը «Գավառ» շաբաթաթերթում (1909-1910թթ.).....140
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ
Մանուկ Բեյի հասարակական-քաղաքական գործունեությունը.....150
ԳՈՉԵՅԱՆ ՎԱՀԵ
Առաքել Դավրիժեցու «Պատմություն» աշխատության քննական վերլուծությունը և պատմագիտական արժեքը.....158
ԼԱԲԼԱՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ
Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը որպես Հայաստանի ազատագրության և անկախ հայկական պետության ստեղծման ծրագիր 172

3. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ, ՏԿԱՉԵՆԿՈ ԱՆԺԵԼԱ
Ներդրումային գործունեության միտումները Հայաստանի Հանրապետությունում.....180
ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԼԱ
ՀՀ բանկային համակարգի վարկավորման առանձնահատկությունները համավարակի (Covid-19) պայմաններում 189
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Զբոսաշրջության զարգացման ուղիները Նորատուս գյուղում 199
ՄԻՐԻԲՅԱՆ ԱՐՓԻ
Քրաուդֆանդինգը որպես ՓՄՁ ֆինանսավորման այլընտրանքային մեթոդ.....207
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՓԻՆԵ
Կրիպտոարժույթների շրջառանության վերլուծությունն ու զարգացման հեռանկարները ՀՀ-ում.....218

ԳԱՓՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության միջազգային փորձը.....229
ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ
Սոցիալական ձեռնարկատիրությունը որպես տնտեսության զարգացման այլընտրանքային գործոն 244

4. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆԻԿ
Հնչյունափոխությունը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում.....256
ԲԱԴՈՅԱՆ ԱՐՓԻՆԵ
Լեզվական սխալները մուլտֆիլմերում 262
ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՆՈՒՇ
Մայրենիի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառելիությունը և արդյունավետությունը 272
ՄԱՇԱԿԱՐՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
Դիտարկումներ Մ. Գալշոյանի «Տարեմուտին» անավարտ վեպի շուրջ.....284
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության և Բալզակի «Շագրենի կաշին» վեպի համեմատական վերլուծություն.....293
ՄԿՐՏՉՅԱՆ ՄԻԼԵՆԱ
Մեդիայի ազդեցությունը նախագահական ընտրությունների վերջնարդյունքի վրա..... 303
ԲՐԱԳԻՆԱ ՆԵԼԼԻ
Արվեստագետի լինելիության և իրականության հակասականությունն ըստ Լևոն Խեչոյանի ստեղծագործությունների..... 318
ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
Հովհաննես Մելքոնյանի ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունները 331

ՉՈԲԱՆՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Օտարման թեմայի դրսևորումը Հրանտ Մաթևոսյանի «Մեր վազքը» պատմվածքում..... 338
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ
Համայնավարության քննադատությունը Զորայր Խալափյանի «Միջնաշեն» վեպում.....347
ՀԱԼԱՋՅԱՆ ԷԴԻՏԱ
«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթի դարձվածքների իմաստային հերթագայումները.....357
ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԻ
Դպրոցականի հարմարումը՝ ադապտացիան, և դեզադապտացիան անցումային շրջանում որպես հոգեբանամանկավարժական հիմնախնդիր (4–5–րդ դասարաններ) 366
ԳԱՓՈՅԱՆ ԱՐԵՎԻԿ
Խաչատուր Աբովյանի մանկավարժական հայացքները.....377
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Բանաստեղծությունների ուսումնասիրումը տարրական դպրոցում.....387
ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ
Որոշման ընդունման նյարդակենսաբանական համահարաբերականները 397
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԵՀՄԻՆԱ
Խաղերի դերը մայրենիի ուսուցման գործընթացում 406
ՊՈՂՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Մասնագիտական կողմնորոշման գործոնները դեռահասության շրջանում..... 412
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԾԱՂԻԿ
Քաղցկեղի վերաբերյալ առասպելների նկատմամբ վստահության անձնային հիմքերը 423
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ
Սելեկտիվ աբորտը որպես գենդերային կարծրատիպերի ազդեցության հետևանք.....436
ԲԱՎԵՅԱՆ ՆԱՐԻՆԵ
Դեռահասության փուլում ագրեսիվության ձևավորման գործոնների և պայմանների ուսումնասիրություն.....445

5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵԳԱՆՅԱՆ ԱՆՆԱ
Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի մասին 458
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ
ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները 467
ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
Քաղաքացիաիրավական առցանց գործարքների հիմնական հատկանիշներն ու դրանց կնքման հետ կապված խնդիրները 476
ՊՈՂՈՍՅԱՆ ԳՐԵՏԱ
Պատասխանատվությունը միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար 483
ՄԻՆԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
Երեխայի իրավունքները.....493
ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐԻ
Երեխայի որդեգրումը որպես իրավական ինստիտուտ 505
ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՍԱԻԴԱ
Իրավաբանի դերը հասարակության մեջ 518

CONTENTS

1. NATURAL SCIENCES

BAGHDASARYAN ANUSH
Means and Issues of Information Protection of Video Surveillance Systems.....18
PETROSYAN GEVORG
Design of Intellectual System for Recognition of Text Documents 34
HARUTYUNYAN DAVIT
The Meaning of The Computer Program "Face" (Rs) Intended for
Creating a Photo Robot and its Application in Criminal Investigation.....45
MASTOYAN KAREN
Features Of Face Detection And Recognition Systems.....54
KHEKOYAN MARIAM
Importance of Wcdmca / Unts Mobile 3g Mobile Network and Key Functions.. 69
QOLOZYAN MARIETA
Comparative Analysis of Client-Server System Protocols..... 78

2. HISTORY

ISPIRYAN ANNA
Hovhannes Tumayan's Socio-Political Activity (in 1905-1906) 90
VARDANYAN ALINA
"Zangezur'' Newspaper's Reference to Political Repressions (in the USSR,
1937-1938) 99
APKARYAN LUIZA
The Most Roman - among the Roman Empresses - the Empress Theophan....109
ARZANYAN HAYKUSH
The Newspaper "Zangezur" as the Initial Source of the 1st Artsakh
War in 1991-1992 116
AYVAZYAN HRIPSIME
Treaty of Turkmenchay 129
MATEVOSYAN HRANUSH
Reflection of Educational Life in "Gavar" Weekly Newspaper 140

MARGARYAN JULIETA
Manuk Bey's Social and Political Activities 150
GOZEYAN VAHE
Analysis and Historiographic Significance of the Work “History” by Arakel Davrizhetsi.....158
LABLAJYAN VARDAN
Movses Baghramyan's "New Notebook Calling Yordorak" as a Program for Liberation of Armenia and Establishment of an Independent Armenian State. 172

3. ECONOMICS

ABRAHAMYAN ANAHIT, TKACHENKO ANJELA
Investment Activity Tendencies in the Republic of Armenia 180
SARGSYAN ALLA
Peculiarities of the Banking System of the Republic of Armenia in Pandemic Conditions 189
HAMBARDZUMYAN ARMINE
Tourism Development Ways in Noratus Village 199
MIRIBYAN ARPI, HOVEYAN ASTGHIK
Crowdfunding as an Alternative Way for Investing in SMEs.....207
MKRTCHYAN ARPINE
The Analysis Circulation and Development Prospects of Crypto Currency in The Republic of Armenia..... 218
GAPOYAN LUSINE
International Experience of Banking System Settlement and Supervision.....229
POGHOSYAN HAYKANUSH
Social Entrepreneurship as an Alternative Factor of Economic Development..244

4. PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY

AVETISYAN ANIK
Alternation in the Poem "Dantesque Legend" by Yeghishe Charents 256
BADOYAN ARPINE
Linguistic Errors in Cartoons 262

SHAHUMYAN ANUSH
Applicability and Effectiveness of Traditional and Modern Methods of the Mother Tongue.....272
MASHAKARYAN VARDUHI
Discourses on the Unfinished Novel "New Year's Eve" by Mushegh Galshoyan 284
KHACHATRYAN MARIAM
The Comparative Analysis of the “Faust” Tragedy by Goethe with the “Skin Of Sorrow” Novel by Honore De Balzac 293
MKRTCHYAN MILENA
The Impact of Media on the Result of Presidential Elections..... 303
BRAGINA NELLY
The Contradiction between the Artist’s Existence and Reality in The Creations of L. Khechoyan 318
MIRIBYAN NUNE
Linguistic Features of Hovhannes Melkonyan's Literary Works 331
CHOBANYAN RUZANNA
Explanation of the Topic of Alienation in "Our Run" Story by Hrant Matevosyan..... 338
HOVHANNISYAN SVETLANA
Criticism of Communism in Zorayr Khalapyan’s “Mijnashen” Novels.....347
HALAJYAN EDITA
The Semantic Sequences of the Phrases in the Fairy Tale "Whoever Digs a Pit for Another Man's Feet, Shall Fall into it Himself".....357
MARGARYAN ANI
The Problems of Adaptation and Deadaptation of Schoolchildren in the Transition Period as a Psychological and Pedagogical Problem (4-5th Grades)..... 366
GAPOYAN AREVIK
Khachatur Abovyan's Pedagogical Views.....377
VARDANYAN ARMINE
Study of Poetry in Primary School.....387
LALAYAN GAYANE
Neurobiological Correlates of Decision Making 397

GEVORGYAN TEHMINA
The Role of Games in Teaching the Mother Tongue 406
POGHOSYAN LUSINE
Factors of Professional Orientation among Teenagers 412
MIKAYELYAN TSAGHIK
Personal Conditioning of Trust Related to Common Myths about Cancer 423
MARGARYAN HEGHINE
Selective Abortion as a Result of the Influence of Gender Stereotypes.....436
BAVEYAN NARINE
Factors of Forming Aggressiveness of Adolescents in the Period of Adolescence 445

5. LAW

YEGANYAN ANNA
The History of the Formation of the Institute of Criminal Liability of Legal Entities.....458
GASPARYAN GALUST
The Principles of the RA Criminal Legislation 467
SHAHINYAN ANAHIT
The Main Features of Online Civil and Legal Transactions and the Problems Connected With Concluding Them 476
POGHOSYAN GRETA
Liability for Violations of International Humanitarian Law.....483
MINASYAN KARINE
Children's Rights 493
SARGSYAN MERI
Adoption of a Child as a Legal Institute 505
OHANJANYAN SAIDA
The Role of a Lawyer in Society..... 518

СОДЕРЖАНИЕ

1. ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

БАГДАСАРЯН АНУШ
Средства и проблемы защиты информации систем видеонаблюдения..... 18
ПЕТРОСЯН ГЕВОРГ
Проектирование интеллектуальной системы распознавания текстовых документов 34
АРУТЮНЯН ДАВИД
Значение и использование компьютерной программы создания фоторобота Face (RS) в процессе уголовного расследования 45
МАСТОЯН КАРЕН
Особенности систем обнаружения и распознавания лица 54
ХЕКОЯН МАРИАМ
Значение и основные функции мобильной сети третьего поколения 3G мобильной системы WCDMCA/UNTS..... 69
КОЛОЗЯН МАРИЕТА
Сравнительный анализ протоколов системы клиент-сервер 78

2. ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ИСПИРЯН АННА
Общественно-политическая деятельность Ованеса Туманяна (1905-1906гг.)..... 90
ВАРДАНЯН АЛИНА
Отражение политических репрессии в СССР в газете "Зангезур" (1937-1938гг.) 99
АПКАРЯН ЛУИЗА
Самая римская среди римских императриц - императрица Феофано.....109
АРЗАНЯН АЙКУШ
Газета «Зангезур» как первоисточник первой Арцахской войны (1991-1992гг.).....116

АЙВАЗЯН РИПСИМЕ
Туркманчайский договор 129
МАТЕВОСЯН ГРАНУШ
Отражение о образовательной жизни в еженедельнике “Гавар” 140
МАРГАРЯН ДЖУЛИЕТА
Общественно-политическая деятельность Манука Бея 150
ГОЗЕЯН ВАГЕ
Анализ и историографическое значение труда “История” Аракела Даврижеци..... 158
ЛАБЛАДЖЯН ВАРДАН
«Новая книга, называемая увещеванием» Мовсеса Баграмяна как программа освобождения Армении и создания независимого армянского государства 172

3. ЭКОНОМИКА

АБРААМЯН АНАИТ, ТКАЧЕНКО АНЖЕЛА
Тенденции инвестиционной деятельности в Республике Армения 180
САРГСЯН АЛЛА
Особенности банковской системы Республики Армения в условиях пандемии (COVID-19)..... 189
АМБАРЦУМЯН АРМИНЕ
Пути развития туризма в деревне Норатус..... 199
МИРИБЯН АРПИ
Краудфандинг как альтернативный метод финансирования малого и среднего бизнеса 207
МКРТЧЯН АРПИНЕ
Анализ оборота и перспективы развития криптовалюты в РА 218
ГАПОЯН ЛУСИНЕ
Международный опыт расчетов и контроль банковской системы..... 229
ПОГОСЯН АЙКАНУШ
Социальное предпринимательство как альтернативный фактор экономического развития 244

4. ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

АВЕТИСЯН АНИК
Чередования в поэме Егише Чаренца «Дантова легенда» 256
БАДОЯН АРПИНЕ
Языковые ошибки в мультфильмах.....262
ШАУМЯН АНУШ
Эффективность применения традиционных и современных методов при обучении родному языку..... 272
МАШАКАРЯН ВАРДУИ
Рассуждения о незавершенном романе Мушега Галшояна «Накануне нового года»..... 284
ХАЧАТРЯН МАРИАМ
Сравнительный анализ трагедии Гёте "Фауст" с романом Оноре де Бальзак "Шагреновая кожа" 293
МКРТЧЯН МИЛЕНА
Влияние медиа на окончательный результат президентских выборов..... 303
БРАГИНА НЕЛЛИ
Противоречие между бытием поэта и реальностью в творчестве Л. Хечояна.....318
МИРИБЯН НУНЕ
Языковые особенности произведений Ованеса Мелконяна..... 331
ЧОБАНЯН РУЗАННА
Выражение темы отчуждения в произведении Гранта Матевосяна "Наш бег"..... 338
ОГАНЕСЯН СВЕТЛАНА
Осуждение коммунизма в романе Зорайра Халапяна “Миджнашен’’..... 347
АЛАДЖЯН ЭДИТА
Семантическая альтернация фразеологизмов в сказке «Кто другому яму роет, сам в нее попадет».....357
МАРГАРЯН АНИ
Адаптация и дезадаптация школьника в переходный период как психолого-педагогическая проблема (4-5 классы)..... 366
ГАПОЯН АРЕВИК
Педагогические взгляды Хачатура Абовяна.....377

ВАРДАНЯН АРМИНЕ
Изучение поэзии в начальной школе.....387
ЛАЛАЯН ГАЯНЕ
Нейробиологические корреляты принятия решений.....397
ГЕВОРГЯН ТЕГМИНА
Роль игр в процессе обучения родному языку..... 406
ПОГОСЯН ЛУСИНЕ
Факторы профессиональной ориентации в подростковом возрасте..... 412
МИКАЕЛЯН ЦАХИК
Личностные основы доверия к мифам о раке.....423
МАРГАРЯН ЕГИНЕ
Селективный аборт - как результат воздействия гендерных стереотипов.....436
БАВЕЯН НАРИНЕ
Исследование факторов и причин агрессивного поведения в подростковый период.....445

5. ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ЕГАНЯН АННА
Об институте уголовной ответственности юридических лиц.....458
ГАСПАРЯН ГАЛУСТ
Принципы уголовного законодательства РА.....467
ШАГИНЯН АНАИТ
Основные признаки гражданско-правовых онлайн-сделок и проблемы, связанные с их заключением.....476
ПОГОСЯН ГРЕТА
Ответственность за нарушение международного гуманитарного права.....483
МИНАСЯН КАРИНЕ
Права ребенка..... 493
САРГСЯН МЕРИ
Усыновление ребенка как правовой институт..... 505
ОГАНДЖАНЯН САИДА
Роль юриста в обществе.....518

1.	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ NATURAL SCIENCES ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՆՈՒՇ
Գավառի պետական համալսարանի
բնագիտական ֆակուլտետի
«Համակարգչային ճարտարագիտություն»
բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ anushik.bagdasaryan.99@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մամիկոն
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Հոդվածում ներկայացվում է տեսահսկման համակարգերի տեղեկատվության պաշտպանության միջոցներից էլեկտրոնային կոդավորված ազդանշանային փականով համակարգի հիմնահարցերի վերլուծությունը: Վերլուծության հիման վրա ձևակերպվել է վերջնական համակարգի պահանջները: Պահանջների հիման վրա մշակվել է ալգորիթմի բլոկ-սխեմա: Կառուցվածքային գծապատկերից ելնելով՝ ընտրվել է համապատասխան սարքեր՝ համակարգի տարրերին հանձնված գործառույթները իրականացնելու համար: ProView ծրագրային փաթեթի հիման վրա մշակվել են այն բոլոր բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային կոդավորված ազդանշանային փականով համակարգ ստեղծելու, խմբագրելու և մշակելու համար կարգաբերելու ծրագրերը:

Բանալի բառեր՝ *պաշտպանական ազդանշանային համակարգեր, փվիչ, ընդունիչ-կառավարող սարք, ռադիոընդունիչ, միկրոհսկիչ, ինտերֆեյս, սղեղնաշար, ազդանշան:*

Անվտանգության հետևող համակարգերը, առավելապես անվտանգության ավտոմատացված համակարգերը նախատեսված են տարբեր օբյեկտների և դրանց գույքի (շենքերի, այդ թվում հարակից տարածքների, առանձին տարածքների, տրանսպորտի և ջրային տրանսպորտի, չհրկիզվող պա-

հարանների և այլն) պաշտպանության համար: «Անվտանգության հետևման համակարգ» հասկացությունը ընդհանրացնում է մի քանի տեսակի համակարգեր: Հիմնական նպատակն է կանխել անձանց նյութական կամ ոչ նյութական վնասները, որոնք կարող են հասցվել կողոպտիչների կամ ինչ-որ օտար անձանց կողմից:

Ինչքան ժամանակ գոյություն ունի մարդկությունը, այնքան ժամանակ էլ առկա է պաշտպանված լինելու խնդիրը: Տարբեր ժամանակներում այդ խնդիրը լուծվում էր տարբեր եղանակներով՝ օգտագործելով փականներ, թիկնապահներ, շներ, մեխանիկական թակարդներ և այլն: Սակայն տեխնիկական առաջընթացի դարաշրջանում ամենուրեք սկսեցին օգտագործել պաշտպանության տեխնիկական միջոցներ, առաջին հերթին՝ պաշտպանական ազդանշանային համակարգեր [1]:

Անվտանգության ապահովման համակարգը (ԱԱՀ) տարբեր օբյեկտների անվտանգությունն ապահովելու ավտոմատացված համակարգ է: Բացի պաշտպանական ֆունկցիայից՝ այդ սարքավորումները կատարում են տարբեր տեխնոլոգիական պարամետրերի հսկման և հետևման ֆունկցիաներ:

Այն կազմված է պաշտպանական պանելից/ներդիրից, կառավարման վահանակից, անընդհատ սնման լարման աղբյուրից, կաբելային կամ GSM ցանցից, կառավարող տվիչներից և այլ սարքավորումներից:

Ըստ ազդանշանման եղանակի՝ անվտանգության ապահովման համակարգերը կարելի է բաժանել երկու խմբի.

անվտանգության ազդանշանային ավտոմատ համակարգ,

անվտանգության ապահովման «ակտիվ» համակարգ:


Ազդանշանային համակարգը սովորաբար բաղկացած է լինում հետևյալ բաղկացուցիչ մասերից.

1. տվիչներից, որոնք անմիջականորեն հսկում են տարածքը և վտանգի դեպքում ձևավորում են ահազանգի ազդանշանը,

2. ընդունիչ-կառավարող սարքերից (կառավարման վահանակից), որոնք մշակում են այդ ազդանշանը՝ շնորհիվ ներդրված միկրոպրոցեսորների, և որոշում են հետագա գործունեությունը,

3. կատարող սարքերից, որոնց թվին են պատկանում ձայնային կամ լուսային հաղորդիչները, ցուցադրման բլոկը, տպիչները, որոնք անհրաժեշտ են արձանագրությունների դուրս բերման համար և այլն [2]:

Պաշտպանական համակարգի ահազանգի ազդանշանը փոխանցվում է այնպիսի սարքավորումներով, ինչպիսիք են ռադիոընդունիչը, զանգահարման սարքը, GSM (Global System for Mobile) մոդուլը և այլն (նկ.1.1.):



Նկ.1.1. Անվտանգության ապահովման համակարգի կառուցվածքը:

ԱԱՀ-ում օգտագործվող էլեմենտային բազան ներառում է տարբեր էլեկտրոնային տարրեր, ինչպես նաև դրանց հենքի վրա կառուցված միկրոպրոցեսորներ, միկրոհսկիչներ և այլն:

ԱԱՀ-երում կիրառում են տարբեր տեսակի տվիչներ՝ ծավալային, մագնիսակոնտակտային, ունակային, ուլտրաձայնային և այլն:

Ըստ որոնման տիպի՝ տվիչները բաժանվում են շարժման, բացման, ապակու կոտրման, հպման, տատանման և այլ տեսակների:

Շնորհիվ իրենց մեծ ֆունկցիոնալության ԱԱՀ-երում մեծ կիրառություն են գտել Atmel ֆիրմայի 8 կարգանի AVR միկրոհսկիչները: Հիմնականում օգտագործում են Microchip Technology ֆիրմայի PIC, ARM ճարտարապետությամբ MSP430 16 և 32- կարգանի միկրոհսկիչները:

Աշխատանքի սկզբում միկրոհսկիչը հիշողությունից կամ պորտից հաշվում է հրամանները և իրականացնում դրանք: Յուրաքանչյուր հրամանի նշանակությունը որոշվում է միկրոհսկիչի հրամանների համակարգի միջոցով, որը մտնում է միկրոհսկիչի ճարտարապետության մեջ: Սակայն միկրոհսկիչը միայնակ չի աշխատում. այն միացնում են սխեմային, որտեղ բացի դրանից միացվում են նաև տարբեր էկրաններ, մուտքագրման ստեղներ, տարբեր տվիչներ և այլն:

Ամենապարզ պաշտպանական սարքերից է ուլտրաձայնային ազանշանային սարքավորումը: Այս սարքավորումը կազմված է տեղափոխման տվիչից, ձայնային ազդանշանից և սնման աղբյուրի ավտոնոմ(անկախ) բլոկից: Ձայնային ազդանշանի մշակումը տեղի է ունենում, երբ տեղափոխվում է ինչ-որ առարկա: Նմանատիպ օրինակ է նաև հեռախոսային գծով ձայնային ազդանշանի հաղորդման անվտանգության համակարգը: Տվյալ սարքավորումը թույլ է տալիս լազերային տվիչի միջոցով հսկել կառույցը կողմնակի անձանց մուտքից: Լազերային ճառագայթի հատման դեպքում սարքավորումը տալիս է ահազանգի ազդանշան, կատարում է համարի հավաքում և հեռախոսային գծով տալիս է ձայնային ազդանշան: Սարքավորումը թույլ է տալիս նաև ապահովել հսկվող օբյեկտի հրդեհի անվտանգությունը:

Անվտանգության ապահովման համակարգի համար անհրաժեշտ են.

միացվող տվիչների մեծ քանակություն,

ունիվերսալություն և ֆունկցիաների լայն հավաքածու,

սարքի բարձր հուսալիություն,

հարմարավետ օգտագործման ինտերֆեյս,


սարքի ոչ շատ բարձր ինքնարժեք և այլն:

Ավելի բարդ և ժամանակակից համակարգերում ինֆորմացիայի փոխանցումը տվիչի և ընդունող-հսկող սարքի միջև իրականանում է թվային ձևաչափով: Այդպիսի տվիչներն անվանում են «հասցեային»: Այդ դեպքում տվիչը համակարգին տալիս է ոչ միայն իր դիսկրետային վիճակի մասին ինֆորմացիա, այլ նաև փոխանցում է սենսորի անալոգային արժեքները (օրինակ, ջերմաստիճանը կամ ծխի աստիճանը), իսկ սարքը միայն որոշում է ընդունում ազդանշան տալու մասին:

Ընդունող-հսկող սարքերը ինֆորմացիա են ստանում իրենց միացված տվիչներից, մշակում են այդ ինֆորմացիան և ըստ կազմաձևման՝ (կոնֆիգուրացիայի) կատարող սարքերին տրվում է կառավարման ազդանշան:

Ընդունող-հսկող սարքերը թողարկվում են տարբեր հզորություններով, որը կախված է հսկվող տեսախցիկների քանակից:

Ընդունող-հսկող սարքի օրինակը բերված է նկ.1.2.-ում:



Նկ. 1.2. Ընդունող-հսկող սարքի կառուցվածքը:

Այս ընդունող-հսկող սարքը կազմված է երկու կառավարման հանգույցներից, որոնցից մեկին միացված են երկհաղորդիչ հրդեհային ազդանշանիչներ, իսկ երկրորդին՝ պասիվ պաշտպանական տվիչներ:

Պաշտպանական սարքերից են կոդավորված փականները: Կոդավորված փականները արդյունավետ միջոցներ են՝ սահմանափակելու այլ անձանց մուտքը դեպի պահպանվող տարածք: Ծրագրի առավելություններն են օգտագործման պարզությունը, հուսալիությունը, բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելու հնարավորությունը, ծածկագիրը փոխելու հարաբերական պարզությունը՝ սովորական մեխանիկական փականի հետ համեմատած: Ոչ պակաս կարևոր է մեծ թվով մարդկանց անխափան մուտքի ապահովումը և մուտքի բանալու կորստի հավանական բացակայությունը: Այդպիսի համակարգերի թերությունն այն է, որ կարող են փոփոխել ծածկագիրը կամ վերացնել այն: Սակայն ծածկագրի բարդությունը կամ նախագծման առանձնահատկությունները, միջամտելով ծածկագրի ընտրությանը, ինչպես նաև սահմանափակելով փորձերի քանակը կամ ձախողված փորձե-

րի միջև ժամանակի հետաձգումը, խնդիրը բավականին դժվարացնում են, ուստի այս թերությունը չի կարելի անվանել էական:

Կոդավորված փականը պետք է ապահովի էլեկտրամեխանիկական փականի «լեզվակի» /ակտվատորի/ վերահսկողությունը, այսինքն այն պետք է վերահսկի լարման մատակարարումը՝ ապահովելով դռան ապակողպումը: Ենթադրվում է, որ փականը բացվում է լեզվակի վրա լարման առկայությամբ և փակվում է դրա բացակայությամբ: Հետևաբար համակարգում պետք է լինի դռան բաց սենսոր, որը կորոշի՝ երբ է դուռը բաց, և սնուցման անհրաժեշտություն այլևս չի լինի: Երբ օգտագործողը մուտքագրում է ճիշտ կոդ, նրան պետք է տեղեկացվի, որ փականը բաց է, և դուռը կարող է բացվել, այսինքն՝ պետք է լինի ինֆորմացիա փականի բացման մասին:


Սխալ ծածկագիր հավաքելու հաջորդական փորձերում նպատակահարմար կլինի բնակիչներին տեղեկացնել այս մասին՝ անկախ այն բանից, թե դա հարձակվող է, թե վարձակալ, որ մոռացել է կամ ի վիճակի չէ ճիշտ կոդ մուտքագրել:

Այսպիսով, համակարգը որոշակի անհաջող փորձերից հետո պետք է ազդարարի հնարավոր վտանգի մասին: Կոդավորված փականը համակարգ է, որի ձախողումը կամ անսարքությունը կարող է հանգեցնել լուրջ դժվարությունների և անհարմարությունների պահպանվող տարածքի սեփականատիրոջ համար, ուստի համակարգը պետք է լինի հուսալի և ապահովի կայուն գործողություն: Հաշվի առնելով, որ փականը տեղադրված է տան արտաքին դռան վրա, այն պետք է կարողանա գործել նաև տարբեր ջերմաստիճանային պայմաններում:

Ելնելով վերը նշված սարքի պահանջներից՝ էլեկտրոնային կոդավորված փականը պետք է ներառի հետևյալ տարրերը.

- Միկրոհսկիչ,
- Ստեղնաշար,
- էլեկտրամեխանիկական փականն աշխատացնող տարր,
- ազդանշանային համակարգ՝ դուռը բացվելու ժանանակ,
- ազդանշանային համակարգ՝ կոդ ընտրելու փորձի ժամանակ,
- դռների բացվելու ցուցիչ:

Սարքի կառուցվածքային գծագրում ներկայացված է տարրերի փոխազդեցությունը:



Նկ. 1.3. Սարքի կառուցվածքային գծագիրը:

Ելնելով կառուցվածքային սխեմայից՝ իրականացնենք կոդավորված փականով համակարգի և ծրագրաշարի ալգորիթմի մշակում:

Կոդի կողպման ծրագրի գործողության ալգորիթմը ներառում է հետևյալ հիմնական բլոկները.

- միացում,
- կոդի մուտքագրում,
- մուտքագրված ծածկագրի ստուգում,
- ծածկագիրը մուտքագրելու փորձերի քանակի վերահսկում,
- կողպեքի բացում,
- կողպեքը փակում,
- լույսի ցուցում,
- ձայնային ազդանշան:

Գծապատկերում ցույց է տրված ծրագրի ալգորիթմի բլոկային դիագրամը:

Ծրագրի ալգորիթմն ուսումնասիրենք ավելի մանրամասն:

1. Սարքի միացում:

Ուժ կիրառելիս արտադրվում է նախաստորագրված փոփոխականներ. հասցեի պահպանման համար հիշողության բջիջը՝ ներկա ծածկագրի թվանշաններով, օգտագործում է r0 գրանցումը, մուտքային փորձերի քանակի համար տվյալների հիշողությունը 38 ժամ է: Այնուհետև լուսադիոդը անջատվում է, բարձրախոսը միացնում p2 զրոյական դաշտի համապատաս-

խան բիթերին: Սահմանված է t0 ժամանակաչափը, որը հետագայում կօգտագործվի ծրագրի ձգձգման համար: Ռեժիմը 16 բիթանոց ժամանակաչափ է: Հետո սահմանվում է կոդի առաջին նիշի հասցեն և մուտքի փորձերի քանակը:

2. Կոդի մուտքագրում:

Կոդի գրանցումը կատարվում է ստեղնաշարի հարցման և հաստատման ստեղների միջոցով: Ստեղնաշարը հարցվում է անվերջ ցիկլով: Կոճակ սեղմելիս մի քանի սեղմումները և դրա կոնտակտի կորուստը կանխելու համար ծրագրով սահմանում ենք 5 մվրկ դադար (հետաձգում 2): Կոճակը թողարկելուց հետո մուտքագրված արժեքը պահպանվում է, և ստեղնաշարը վերադառնում է նախնական ցիկլի, եթե մուտքագրված թվանշաններ չկան:

3. Մուտքագրված ծածկագրի ստուգում::

Երբ կոդերի բոլոր թվանշանները մուտքագրվում են, կատարվում է բոլոր թվանշանների հաջորդական ստուգում՝ սկսած վերջինից (պիտակի կոդով):

Օրինակ, ընտրվում է «123456» վեց նիշանոց ծածկագիրը, եթե կոդը չի համապատասխանում սահմանված համարին, ապա ստուգվում է կոդ մուտքագրելու մնացած փորձերի քանակը (պիտակի ծածկագիր շրջանը):

4. Ծածկագիրը մուտքագրելու փորձերի քանակի վերահսկում:

Եթե մուտքագրման բոլոր փորձերը օգտագործվել են, միացվում է ազդանշան 1 վ տևողությամբ: Ձգձգում ձևավորելու համար օգտագործվում է հետաձգման ենթածրագիրը: Ձայնի ընթացքում սարքը չի արձագանքում ստեղներին:

5. Դռան բացում:


Կողպեքը բացելը կատարվում է p2.0 դաշտի բիթեր սահմանելով:

6. Կողպեքի փակում:

Կողպեքը փակվում է p2.0 բիթը վերականգնելու միջոցով:

7. Լույսի ցուցում:

Լույսի նշումը միացված է՝ բիթը տեղադրելով p2.2-ում, և անջատվում է՝ այն վերափոխելով:



Նկ. 1.4. Ծրագրի ալգորիթմի բլոկային դիագրամ:

Ժամանակային հետաձգման ծրագրային մոդելավորում:

5 միլիվայրկյան(մվրկ.) հետաձգման մոդելավորում:

Ժամկետի հետաձգման իրականացման ռեժիմը օգտագործում է ծրագրի ցիկլի մեթոդը: Միևնույն ժամանակ, աշխատանքային ռեգիստրում վերբեռնվում է համար, որը ցիկլի յուրաքանչյուր անցումում նվազում է 1-ով: Այսպես շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ աշխատանքային ռեգիստրի բովանդակությունը չի դառնում զրո, ինչը ծրագիրը մեկնաբանում է որպես ցիկլից դուրս գալու պահ: Այս դեպքում ձգձգման ժամանակը որոշ-

վում է աշխատանքային ռեգիստրում բեռնված համարով և ծրագրի ցիկլը կազմող հրամանների կատարման ժամանակ:

```
mov     r2,#0ffh
loop3:
djnz    r2,loop3
```

mov հրամանը կատարվում է 1, իսկ djnz-ը՝ 2 մեքենայական ցիկլով: 24 մհց ժամային հաճախականությամբ յուրաքանչյուր մեքենայի ցիկլը կատարվում է 0,5 միկրովայրկյան (մկվրկ): Այսպիսով, մեկ ցիկլի ձգձգման առավելագույն տևողությունը իրականացվում է (1 + 255 * 2) * 0,5 = 255,5 մկվրկ.:

Երկարատև հետաձգումը կարող է իրականացվել բծավոր հանգույցի մեթոդով:

```
delay2:                         ;հետաձգում 5 մվրկ
mov     r3,#13h
loop4:
mov     r2,#0ffh
loop3:
djnz    r2,loop3
djnz    r3,loop4
ret
```

Այսպիսով, երկու ցիկլեր օգտագործելիս հետաձգման առավելագույն ժամանակը

(1 + ((1 + 2 * 255) +2) * 255) / 2 = 65408 մկ.վրկ = 65,41մվրկ: Հաշվենք գրանցման r3 արժեքը 5 մվրկ տևողության ուշացման դեպքում: Ակնհայտ է, որ ռեգիստրում r2-ի առավելագույն արժեքը պետք է մուտքագրված լինի 255: Հաշվարկելիս պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուրի համար զանգի և հետադարձ հրահանգների կատարումը 2 մեքենայական ցիկլ է պահանջում: (2+2+1+((1+2*255)+2)*X)/2=5000. X=19,42. Ռեգիստրում արժեքը մուտքագրված է 13 ժ:

2. 1 վրկ ուշացման մոդելավորում:

1 վրկ ուշացում առաջացնելիս օգտագործվում է ժամանակաչափ T0:

```
delay:                          հետաձգում 1 վ
mov     r1,#1fh
loop1:
mov     th0,#0h
```

```
mov     tl0,#0h
setb    tcon.4
loop2:
jb tcon.4,loop2
djnz r1,loop1
 ret
```

16 բիթանոց ռեժիմում (ժամանակաչափի արժեքների 0-65535 տիրույթը) 24 մհց հաճախականությամբ ժամանակաչափը թույլ է տալիս առաջացնել մինչև 32767.5 մկվրկ տևողությամբ հետաձգումներ: 1 վրկ ուշացում ստեղծելու համար ժամանակաչափը պետք է լցվի 1 / 0,0327675 = 30.52 անգամ: Այսպիսով, ռեգիստրում r1- ի արժեքը 1 է:

Այժմ ներկայացնենք կոդավորված փականի ծրագրերի մշակման միջավայրի նկարագրությունը: Ծրագրակազմ մշակելու և կարգաբերելու համար օգտագործվում է ProView փաթեթը: Franklin Software Inc. ընկերության ProView փաթեթը Intel 8051 ընտանիքի միկրոկառավարիչների և դրա կլոնների համար ծրագրային ապահովման զարգացման ինտեգրված միջավայր է: Այն ներառում է բոլոր բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ստեղծելու, խմբագրելու, կազմելու, թարգմանելու, կապելու, բեռնելու և կարգաբերելու ծրագրերը:

-Windows- ի ստանդարտ ինտերֆեյս,

Բազմաֆունկցիոնալ խմբագիր՝ սկզբնական կոդի սիստեմատիկ ընդգծումով – գույների տարրեր,

ծրագրի կազմակերպիչ,

թարգմանիչ C լեզվից,

հավաքիչ,

կարգաբերիչ,

ներկառուցված օգնության համակարգ:

Զարգացման միջավայրը Windows-ի համար նման է Microsoft-ի Visual C ++- ին և Borland C ++- ին: Այս ծրագրերից որևէ մեկին ծանոթ օգտվողները իրենց ProView-ում հարմարավետ կզգան: Ծրագրի մշակման առաջին փուլը սկզբնաղբյուրը ծրագրավորող լեզվով գրառելն է: Այնուհետև այն կազմվում կամ թարգմանվում է միկրոկառավարչի հրամանատարական համակարգի կոդերի, օգտագործելով թարգմանիչ կամ հավաքիչ: Թարգմանիչները և հավաքիչները կիրառական ծրագրերեն, որոնք ծրագրի աղբյուրը պարունակելով,տեքստային ֆայլեր են մշակում, և ստեղծում օբյեկտի կոդ պարունա-

կող ֆայլեր: Օբյեկտի մոդուլների դասավորությունից հետո, սկսվում է ծրագրի կարգաբերման փուլը, սխալի ուղղումը, օպտիմիզացումը և ծրագրի փորձարկումը: ProView-ը համատեղում է կիրառման մշակման բոլոր փուլերը մեկ ռեկուրսիվ գործընթացի մեջ, երբ ցանկացած պահի հնարավոր է արագ վերադառնալ ցանկացած նախորդ փուլ:

Նկարագրենք ProView- ի հիմնական բաղադրիչները:

C51 խաչաձև բաղադրիչի օպտիմալացում:

Պրոցեսորի հրահանգների համակարգի վերաբերյալ խորը իմացություն չի պահանջվում, Intel 8051 մոդելի հիմնական գիտելիքները ցանկալի են, բայց ոչ անհրաժեշտ:

Գրանցման տեղաբաշխումը և հասցեագրման եղանակները ամբողջությամբ վերահսկվում են թարգմանչի կողմից:

Ապահովում է ծրագրի ավելի լավ ընթեռնելիությունը, որովհետև օգտագործում է բանալի բառեր և գործառույթներ, որոնք առավել բնորոշ են մարդու մտքին:

Նվազեցնում է զարգացման և ծրագրի կարգաբերման ժամանակը՝ հավաքման լեզուների ծրագրավորման հետ համեմատած:

Ստանդարտ ռեժիմով գրադարանային ֆայլերի առկայություն, որը կարող է ներառվել հայտի ծրագրում:

Առկա ծրագրերը կարող են բազմիցս օգտագործել նոր ծրագրերում՝ օգտագործելով մոդուլային ծրագրավորման մեթոդներ:

Մակրո հավաքիչ A51:

A51 հավաքիչը համատեղելի է Intel ASM51-ի հետ միկրոկառավարիչների Intel 8051 ընտանիքի համար: Հավաքիչը փոխարինում է սիմվոլիկ mnemonics-ը օբյեկտի կոդով՝ ունենալով մեծ արագություն և փոքր չափսեր: Մակրո գործիքները արագացնում են զարգացումը և խնայում ժամանակը, քանի որ ընդհանուր հաջորդականությունները կարող են մշակվել միայն մեկ անգամ: Հավաքիչն երաշխավորում է խորհրդանշական մուտք դեպի միկրոկառավարչի բոլոր տարրերը և վերականգնում է կոնֆիգուրացիան Intel 8051-ի յուրաքանչյուր տարբերակի համար: A51-ը փոխարինում է սկզբնական ֆայլը օբյեկտի մոդուլի հետ: Կարգաբերման կամ միացված տարբերակով աշխատելու ժամանակ խորհրդանշական “Include debugging information” («Ներառեք կարգաբերման մասին տեղեկությունները») օբյեկտի ֆայլը պարունակում է ամբողջական տեղեկատվություն կարգաբերիչ / սիմուլյատորի կամ ներդրված էմուլատորի համար:

Կապիչ L51:

Կապիչը համատեղում է մեկ կամ մի քանի առարկայի մոդուլներ մեկ գործադիր ծրագրում: Կապիչը տեղադրում է արտաքին և ընդհանուր հղումներ, բացարձակ հասցեներ է տալիս տեղափոխվող ծրագրի հատվածներին: Այն կարող է մշակել օբյեկտային մոդուլներ, որոնք ստեղծվել են C51 թարգմանչի, A51 հավաքիչի, Intel PL / M-51 թարգմանչի և Intel ASM51 հավաքիչի կողմից:


Կապիչը ինքնաբերաբար ընտրում է համապատասխան գրադարաններ և գրադարաններից կապում է միայն անհրաժեշտ մոդուլները: L51-ի համար նախնական պարամետրերը ընտրված են այնպես, որ դրանք հարմար լինեն դիմումների մեծ մասի համար, բայց կարող են սահմանվել նաև հատուկ պարամետրեր:

Կարգաբերիչ / սիմուլյատոր WinSim51:

Կարգաբերիչ / սիմուլյատորը օգտագործվում է C51 թարգմանչի, A51 հավաքիչի, Intel PL / M-51 թարգմանչի և Intel ASM51 հավաքիչների հետ: Այն թույլ է տալիս մոդելավորել Intel 8051- ի առանձնահատկությունների մեծ մասը առանց ապարատային միջամտության: Այն կարելի է օգտագործել ծրագիրը ստուգելու և կարգաբերելու համար՝ ավելի արագ, քան ապարատային միջամտությամբ: Միևնույն ժամանակ մոդելավորվում է լայն բազմազանություն ծայրամասային սարքեր, ներառյալ հաջորդական դաշտերը, արտաքին մուտք - ելք և ժամանակաչափեր:

Հիմնական ծրագրի պատուհանի տեսքը ներկայացված է նկար 6-ում:

ProView- ի հիմնական պատուհանի տեսքը:



Նկ. 1.5. Հիմնական ծրագրի պատուհանի տեսքը:

Այսպիսով, հոդվածում ներկայացվել է տեսահսկման համակարգերի տեղեկատվության պաշտպանության միջոցներից էլեկտրոնային կոդավորված ազդանշանային փականով համակարգի հիմնահարցերի վերլուծությունը: Վերլուծության հիման վրա ձևակերպվել է վերջնական համակարգի պահանջները: Պահանջների հիման վրա մշակվել է ալգորիթմի բլոկ-սխեմա: Կառուցվածքային գծապատկերից ելնելով՝ ընտրվել է համապատասխան սարքեր՝ համակարգի տարրերին հանձնված գործառույթները իրականացնելու համար: ProView ծրագրային փաթեթի հիման վրա մշակվել է այն բոլոր բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային կոդավորված ազդանշանային փականով համակարգ ստեղծելու, խմբագրելու և մշակելու համար կարգաբերելու ծրագրերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Описание электромеханического замка ПОЛИС-13: http://dialog-universal.ru/product_info.php?cPath=109&products_id=173
2. Бродин В. Б., Микроконтроллеры: архитектура, программирование, интерфейс, М., ЭКОМ, 1999.

MEANS AND ISSUES OF INFORMATION PROTECTION OF VIDEO SURVEILLANCE SYSTEMS

BAGHDASARYAN ANUSH
3rd-year undergraduate student,
Department of Computer Engineering
Faculty of Natural Sciences, Gavar State University
e-mail: anushik.bagdasaryan.99@mail.ru
Academic Supervisor: Hakobyan Mamikon
PhD in Technical Sciences, Associate Professor

The article presents the analysis of the problems of the system with electronic encrypted signal lock from the means of protection of information systems of video surveillance systems. Based on the analysis, the requirements of the final system were formulated. An algorithm block diagram has been developed based on the requirements. Appropriate devices were selected based on the structural diagram to perform the functions assigned to the system elements. Based on the ProView software package, all the components needed to create, edit, and develop an electronically encoded signal lock system have been developed.

Key words: *protection signal systems, sensor, receiver-control device, radio receiver, microcontroller, interface, keyboard, signal.*

СРЕДСТВА И ПРОБЛЕМЫ ЗАЩИТЫ ИНФОРМАЦИИ СИСТЕМ ВИДЕОНАБЛЮДЕНИЯ

БАГДАСАРЯН АНУШ
Студентка бакалавриата 3-ого курса
отделения компьютерной инженерии
факультета естественных наук ГГУ
электронная почта: anushik.bagdasaryan.99@mail.ru
Научный руководитель: Акопян Мамикон
кандидат технических наук, доцент,
профессор Гаварского государственного университета

В статье представлен анализ проблем системы блокировки сигналов с электронным кодированием средств защиты информационных систем видеонаблюдения. На основе анализа сформулированы требования к итоговой системе. На основании требований разработана блок-схема алгоритма. Соответствующие устройства были выбраны на основе структурной схемы для выполнения функций, возложенных на элементы системы. На основе программного пакета ProView были разработаны все компоненты, необходимые для создания, редактирования и разработки системы блокировки сигналов с электронным кодированием.

Ключевые слова: *охранная сигнализация, датчик, приемно-управляющее устройство, радиоприемник, микроконтроллер, интерфейс, клавиатура, сигнал.*

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
Վանաձորի պետական համալսարանի
բնական գիտությունների ֆակուլտետի
«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»
բաժնի 4-րդ կուրսի ուսանող
էլփոստ՝ g-a-petrosyan@mail.ru
Գիտական ղեկավար՝ Սահակյան Ռուստամ
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ժամանակակից տեխնոլոգիաները և համացանցի զարգացման ներկայիս մակարդակը հասանելի են դարձնում ինֆորմացիայի հսկայական ծավալ ցանկացած պահի և ցանկացած վայրից: Դա նպաստում է տարբերվող գաղափարների նվազեցմանը, քանի որ կրկնօրինակումը այլևս ոչ մի դժվարություն չի առաջացնում գործնականում: Ուստի տեքստային փաստաթղթերի մշակման և համեմատման համակարգերը ներկայումս շատ պահանջված են: Սույն աշխատանքի նպատակն է նախագծել տեքստային փաստաթղթերի ճանաչման ինտելեկտուալ համակարգի կոնցեպտուալ մոդել, որը կիրականացի տեքստերի համեմատում, համադրում, դրանց միջև առկա նույնությունների բացահայտում: Այդ նպատակին հասնելու համար առաջադրված են հետևյալ խնդիրները՝ տեքստային փաստաթղթերի համեմատման մեթոդների ուսումնասիրություն, ալգորիթմների մասին ակնարկ, նոր ինտելեկտուալ համակարգի նախագծում: Կիրառվել են հետևյալ գիտական մեթոդները՝ համեմատություն, համադրում, վերլուծություն: Ուսումնասիրված մեթոդների մեջ ավելի բարձր արդյունավետություն ունի վեկտորային մեթոդը, քանի որ առավել մեծ ուշադրություն է դարձվում տվյալ տեքստում բառերի ներառման հաճախականության և ոչ թե բառերի ձևաբանական կազմի կամ տեքստում դրանց զբաղեցրած դիրքի վրա:

Բանալի բառեր՝ *տեքստային փաստաթուղթ, ալգորիթմ, համեմատման մեթոդ, գրագողություն, սեմանտիկ և սինտաքսիկ նույնություններ, ինտելեկտուալ համակարգ, վեկտորային մեթոդ:*

Ներածություն

Ժամանակակից աշխարհում համացանցի արագ զարգացմանը զուգընթաց մեծացել է տվյալների հասանելիությունը: Թվային գրադարաններն ապահովում են թվայնացված ինֆորմացիայի ահռելի մեծ քանակություն, որի արդյունքում յուրաքանչյուրը կարող է գտնել իր համար ցանկալի նյութ՝ ամենատարբեր բնագավառներին պատկանող: Դա, իհարկե, շատ դրական կողմեր ունի: Բայց, այնուամենայնիվ, խնդիրներ նույնպես առկա են՝ կապված այն հանգամանքի հետ, որ խախտվում են հեղինակների իրավունքները:

Արդիականությունը

Գրագողության հայտնաբերումը, հեղինակային իրավունքների պաշտպանությունը և նմանատիպ այլ խնդիրներ գիտության համար մարտահրավերներ են, և դրանց ի պատասխան լայնորեն կիրառվում է տեքստերի ճանաչման ու համեմատման համակարգը: Այսօր ինֆորմացիոն հասարակությունում տեքստային փաստաթղթերի համեմատումն ու համադրումը շատ լայն գործնական կիրառություն ունի: Այն հնարավորություն է տալիս բացահայտել տարբեր տեքստերի միջև առկա նույնությունները: Առաջնահերթ գործնական նշանակությունը գրագողության հայտնաբերումն է: Վերը նշված հանգամանքները պայմանավորում են ընտրված թեմայի արդիականությունը:

Խնդրի դրվածքը

Ներկայումս տեղեկատվության ավտոմատ մշակումը անընդհատ ավելի մեծ արդիականություն և լայն կիրառության բնագավառներ է ձեռք բերում: Հատկապես դրան նպաստում է համացանցի, նորագույն տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը և հասանելի տեղեկատվության աննախադեպ մեծ ծավալը [2, էջ 97]:

Աշխատանքի կատարման նպատակը տեքստային փաստաթղթերի ճանաչման ինտելեկտուալ համակարգի նախագծումն է, որը կիրականացնի տեքստերի համեմատում, համադրում, առկա նույնությունների բացահայտում:

Շինգլների մեթոդ

Այս մեթոդը տեքստային փաստաթղթերի մշակման մեթոդներից ամենալայն կիրառություն ունեցողներից մեկն է: Առաջարկվել է 1997 թվականին Անդրեյ Բրոդերի կողմից: Հիմնված է տեքստերը ֆիքսված k երկարությամբ և հարակից բառերից կազմված հաջորդականությունների տեսքով ներկա-

յացման և ստացված հաջորդականությունների խեշերի[1] համեմատության հիման վրա: Նման հաջորդականությունները կոչվում էին շինգլներ:

Նախ տեքստերը ներկայացվում են շինգլների տեսքով, այսինքն՝ յուրաքանչյուր տեքստի համար ընտրվում է միմյանց հաջորդող բառերի որոշակի քանակ: Արդյունքում համեմատվող յուրաքանչյուր տեքստի համար ստեղծվում է շինգլների խումբ: Այնուհետև այդ շինգլների հավաքածուներից ընտրվում են նրանք, որոնք բավարարում են ինչ-որ չափանիշի, օրինակ՝ զույգերը բաժանվում են ինչ-որ թվի վրա և այլն: Արդյունքում ընտրված շինգլները բաշխված կլինեն հավասարաչափ, և շեշտը չի դրվի միայն տեքստի որևէ կոնկրետ հատվածի վրա: Հաջորդիվ ընտրված հաջորդականությունները խեշավորվում են, և կազմվում են դրանց գումարները: Եթե ստուգման արդյունքում կոդավորված տեքստերի գումարների միջև կա համընկնում, ապա տեքստերի նմանությունն ակնհայտ է: Եվ որքան համընկնումը շատ է, այնքան մեծ է տեքստերի նմանությունը:

Սակայն տեքստերի նմանությունը վերլուծելու, փաստաթղթերի ընդհանուր թեման գնահատելու և դրանց հեռավորությունը որոշելու ուսումնասիրության մեջ շինգլների մեթոդը հարմար չէ այն առումով, որ պահանջում է տերմինների և դրանց հաջորդականությունների գրեթե լրիվ համընկնում: Այդ իսկ պատճառով այս մեթոդը լայնորեն կիրառվում է տեքստի պատճեններ որոնելու, և որևէ կոնկրետ հարցմանը համապատասխանող փաստաթղթերի որոնման համար:

Վեկտորային մեթոդ

Տեքստերի վերլուծության մեկ այլ մոտեցում ներառում է տեքստերից յուրաքանչյուրում բառերի հանդիպման հաճախականությունների հիման վրա տեքստերի նմանությունների գնահատումը: Յուրաքանչյուր թեմատիկ տեքստ կարող է բնութագրվել որոշակի բառերի հավաքածուով և դրանց հանդիպման հաճախականությամբ: Եթե տեքստի մեջ բառերի որոշակի խմբաքանակ օգտագործվում է հատուկ հաճախականություններով, ապա տեքստը պատկանում է որոշակի թեմայի:

Այս մեթոդի կիրառման համար նախ անհրաժեշտ է վերամշակել մուտքային տեքստերը և վերամշակված տեքստերի բառերից կազմել բառարան:

[1] Խեշ ֆունկցիան ընդունում է ցանկացած երկարության տող և վեր է ածում այն ֆիքսած երկարության տողի, որը անվանում են խեշ արժեք:

2. Հաջորդ քայլում կատարվում է այդ բառարանի բառերի տեսակավորում և բառերի կրկնությունների հեռացում: Բառարանի յուրաքանչյուր բառի համար հաշվարկվում է այն տեքստերի քանակը, որոնցում տվյալ բառը առկա է առնվազն մեկ անգամ:

3. Այս տեղեկատվության հիման վրա կառուցվում է «բառ-տեքստ» աղյուսակ, որտեղ տողերը համապատասխանում են տեքստերի վերամշակումից հետո ստացված բառերին, իսկ սյուները՝ ուսումնասիրվող տեքստերին: Աղյուսակի յուրաքանչյուր բջիջ պահում է բուլյան արժեք, որը ցույց է տալիս տվյալ տեքստում տվյալ բառի առկայությունը կամ բացակայությունը: Այս աղյուսակի հիման վրա բառարանի յուրաքանչյուր բառի համար հաշվարկվում է տվյալ բառի տվյալ տեքստում հանդիպումների քանակի և այդ տեքստի բոլոր բառերի քանակների հարաբերակցությունը:

1.Այն նշանակված է հետևյալ սիմվոլով "TF"՝

$$TF(t,d)=\frac{n_t}{\sum_k n_k} \quad (1),$$

որտեղ n_t -ն d տեքստում t բառի հանդիպումների քանակն է, իսկ $\sum_k n_k$-ն՝ d տեքստի բոլոր բառերի քանակը: Այս բանաձևը ցույց է տալիս t բառի հաճախությունը d տեքստում [3, էջ 2]:

Հաջորդ քայլում հաշվվում է տեքստային փաստաթղթի հակադարձ հաճախականությունը՝ նշանակված "IDF" սիմվոլով.

$$IDF(t)=\log_2\left(\frac{n}{f}\right) \quad (2),$$

որտեղ n-ը բազայում գտնվող բոլոր տեքստերի քանակն է, իսկ f-ը այն տեքստերի քանակը, որոնցում առկա է t բառը: Պետք է փաստել, որ լոգարիթմը կարող է լինել ցանկացած հիմքով, սակայն պարզության համար առավել հաճախ օգտագործվում են 2 կամ 10 հիմքով:

Այնուհետև ունենալով "TF" և "IDF" արժեքները կարելի է ստանալ յուրաքանչյուր բառի «կշիռը» տեքստերից յուրաքանչյուրում, որը նշանակվում է հետևյալ սիմվոլով՝ "tf-idf".

$$tf\text{-}idf = TF \times IDF \quad (3),$$

Յուրաքանչյուր փաստաթուղթ կարող է մեկնաբանվել որպես վեկտոր, որը բաղկացած է բառարանի յուրաքանչյուր բառին համապատասխան tf-idf կշիռներից:

Այժմ, երբ տեքստերը ներկայացված են վեկտորների տեսքով, պետք է դրանք համեմատել: Գոյություն ունեն վեկտորների համեմատման մի շարք

եղանակներ, որոնցից ամենաարդյունավետը կոսինուսային նմանության հաշվարկումն է հետևյալ բանաձևի միջոցով.

$$simCos(d,q) = \cos(\theta) = \frac{D \times Q}{||D|| \times ||Q||} \frac{\sqrt[2]{\sum_{i=1}^{n}(("tf-idf"_{di}) \times (("tf-idf"_{qi}))}}{\sqrt[2]{\sum_{i=1}^{n}(("tf-idf"_{di}))^2} \times \sqrt[2]{\sum_{i=1}^{n}(("tf-idf"_{qi}))^2}} \quad (4),$$


Երկու փաստաթղթերի կոսինուսային նմանության արժեքը տատանվում է 0-ից 1 միջակայքում այն պատճառով, որ tf-idf արժեքները բացասական լինել չեն կարող:

Ինտելեկտուալ համակարգի նախագծում

Ստորև ներկայացված է տեքստային փաստաթղթերի ճանաչման և համեմատման ինտելեկտուալ համակարգի նախագիծը՝ կազմված SADT1 մեթոդոլոգիայի միջոցով, IDEF0 ստանդարտին համապատասխան:

Տեքստային փաստաթղթերի ճանաչման ինտելեկտուալ համակարգը ներկայացված է դեկոմպոզիցիայի 3 մակարդակներով՝ A0, A1, A2:

A0 մակարդակում ներկայացված է կոնտեքստային դիագրամը (բարձր մակարդակի դիագրամ): Այն, լինելով դիագրամների ծառի կառուցվածքի գագաթը, ցույց է տալիս համակարգի նպատակը (հիմնական գործառույթը) և դրա փոխազդեցությունը արտաքին միջավայրի հետ:



Գծապատկեր 1. Կոնտեքստային դիագրամ (A0 մակարդակ):

1 Structured Analysis and Design Technique – ինֆորմացիոն համակարգերի ինտեգրման, ռեինժիներինգի, մշակման, վերլուծության ֆունկցիոնալ մոդելավորման մեթոդոլոգիա:

Ներկայացված ինտելեկտուալ համակարգվում առանձնացված են սլաքների հետևյալ տեսակները.

- Ձախից աջ դիագրամ մտնող – մուտքային տվյալներ՝ տեղեկատվություն, որը օգտագործվում և վերափոխվում է ֆունկցիայի միջոցով՝ արդյունք (ելք) ստանալու համար: Մուտքը պատասխանում է «Ի՞նչ է պետք մշակել» հարցին: Ներկայացված ինտելեկտուալ համակարգը որպես մուտքային տվյալ ստանում է համեմատվող տեքստը:

- Վերևից ներքև - գործառույթը կարգավորող և վերահսկող նորմատիվային տվյալներ: Կառավարումը ազդում է գործառույթի վրա, բայց դրանով չի փոխակերպվում, այսինքն՝ գործում է որպես դեղատոմս կամ սահմանափակում: Այս դեպքում որպես սահմանափակում կիրառված են բանաձևեր և գրագողության նորման:

- Դիագրամից դուրս եկող – ելքային տվյալներ՝ տեղեկատվություն, որը ներկայացնում է գործառույթի արդյունքը: Արդյունքը պատասխանում է «Ի՞նչ արդյունք է տալիս ֆունկցիան» հարցին: Ներկայացված ինտելեկտուալ համակարգի ելքում որպես արդյունք ստացվում է հաշվետվություն համեմատվող տեքստի բազային տեքստերի հետ համապատասխանության մասին:


Ներքևից վերև - մեխանիզմներ՝ ռեսուրսներ (միջոցներ), որոնք մասնակցում են գործառույթի կատարմանը: Մեխանիզմը պատասխանում է «Ո՞վ է կատարում գործառույթը կամ ի՞նչ միջոցներով» հարցին: Որպես մեխանիզմներ՝ ինտելեկտուալ համակարգում առանձնացված են ռեսուրսների բազան, Լ բառարանը, գրադարանները և մասնագետները:

Հիմնական ֆունկցիայի նկարագրությունից հետո կատարվում է ֆունկցիոնալ դեկոմպոզիցիա, այսինքն. որոշվում են հիմնականը կազմող գործառույթները: Տեքստերը համեմատող ինտելեկտուալ համակարգը դեկոմպոզիցիայի դիագրամը ներկայացված է երեք հիմնական բլոկների տեսքով.

տեքստերի վերամշակման,


վերամշակված տվյալների համեմատման,

արդյունքների գնահատման:



Գծապատկեր 2. Դեկոմպոզիցիոն դիագրամ:


Տեքստերի վերամշակման պրոցեսի դեկոմպոզիցիան ներկայացված է չորս բլոկների տեսքով: Այս պրոցեսը, որպես մուտք, ստանում է համեմատվող տեքստը, վերամշակում է այն և որպես ելք՝ տալիս է տեքստերին համապատասխանող վեկտորները:



Գծապատկեր 3. Տեքստերի վերամշակման գործընթացի դեկոմպոզիցիա:


Վերամշակված տվյալների համեմատման պրոցեսի դեկոմպոզիցիան ներկայացված է երկու բլոկների տեսքով: Այս պրոցեսը որպես մուտք ստանում է տեքստերի համապատասխան վեկտորները, դրանք նորմավորում:

Նորմավորումից և համեմատումից հետո ստացվում է համապատասխան վեկտորների կազմած անկյան կոսինուսների արժեքները:



Գծապատկեր 4. Վերամշակված տվյալների համեմատման դեկոմպոզիցիա:

Արդյունքների գնահատման պրոցեսի դեկոմպոզիցիան ներկայացված է երկու բլոկների տեսքով: Պրոցեսը, որպես մուտք, ստանում է համապատասխան վեկտորների կազմած անկյունների կոսինուսների արժեքները, գտնում է վեկտորների կազմած անկյունը և այդ տվյալների հիման վրա որոշում տեքստերի նմանության աստիճանը:



Գծապատկեր 5. Արդյունքների գնահատման պրոցեսի դեկոմպոզիցիա:

Եզրակացություններ

Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է տեքստային փաստաթղթերի մշակման, համեմատման և նմանությունների վերհանման հիմնախնդիրը, որը գործնական լայն կիրառություն ունի: Ուսումնասիրվել են առաջադրված խնդիրը լուծող հետևյալ մեթոդները՝ Շինգլների մեթոդ և վեկտորային մեթոդ: Կան բազմաթիվ այլ մեթոդներ ևս, որոնք կիրառվում են տեքստերի համեմատման բնագավառում: Վերոհիշյալ մեթոդների մեջ ավելի բարձր արդյունավետություն ունի վեկտորային մեթոդը, քանի որ առավել մեծ ուշադրություն է դարձվում տվյալ տեքստում բառերի ներառման հաճախության վրա, այլ ոչ թե բառերի ձևաբանական կազմի կամ տեքստում դրանց զբաղեցրած դիրքի վրա:

Աշխատանքի շրջանակներում առաջարկված է նոր ծրագրային գործիքի կոնցեպտուալ մոդել, որը իրականացնում է տեքստային փաստաթղթերի համեմատում: Այն նախագիծ է, որի շրջանակներում նոր հետազոտությունների իրականացումը և ծրագրի ստեղծումը կարող է իր ներդնումն ունենալ տեքստերի ավտոմատ համեմատման և գրագողության հայտնաբերման արդյունավետության բարձրացման գործում, ուստի նպատակահարմար է կազմել ծրագիր, որը կիրականացնի այդ խնդիրը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Большакова Е. И., Клышинский Э. С., Ландэ Д. В., Носков А. А., Пескова, О. В., Ягунова Е. В., Автоматическая обработка текстов на естественном языке и компьютерная лингвистика //М., МИЭМ, 2011, 272 с.
2. Лыченко Н. М., Сороковая А. В., Сравнение эффективности методов векторного представления слов для определения тональности текстов // Математические структуры и моделирование, 2019, №4(52)
3. Sitikhu, P., Pahi, K., Thapa, P., Shakya, S. - A comparison of Semantic similarity methods for maximum human interpretability // 2019

DESIGN OF INTELLECTUAL SYSTEM FOR RECOGNITION OF TEXT DOCUMENTS

PETROSYAN GEVORG
4th-year student of the department of Informatics and Applied Mathematics,
Faculty of Natural Sciences, VSU
e-mail: g-a-petrosyan@mail.ru
Academic Supervisor: Sahakyan Rustam
Doctor of Technical Sciences, Professor

Modern technologies and the current level of development of the Internet make a huge amount of information available anytime and anywhere. This contributes to the reduction of the number of unique ideas, as duplication does not cause any difficulties in practice. Therefore, text document processing and comparison systems are now in high demand. The aim of this work is to design a conceptual model of an intellectual system for recognizing text documents, which will compare texts and reveal the identities between them. To achieve this goal, the following tasks are set: the study of methods for comparing text documents, an overview of algorithms, the design of a model of a new intellectual system. The following scientific methods were used: comparison, combination, analysis. The vector method is more effective in the studied methods, as more attention is paid to the frequency of words in the text, rather than to the morphological structure of the words or their position in the text.

Key words: *text document, algorithm, method of comparison, plagiarism, semantic-syntactic identities, intelligent system, vector method.*

ПРОЕКТИРОВАНИЕ ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СИСТЕМЫ РАСПОЗНАВАНИЯ ТЕКСТОВЫХ ДОКУМЕНТОВ

ПЕТРОСЯН ГЕВОРГ
Студент 4-го курса отделения
информатики и прикладной математики
факультета естественных наук
Ванадзорского государственного университета
электронная почта: g-a-petrosyan@mail.ru
Научный руководитель: Саакян Рустам
Доктор технических наук, профессор

Современные технологии и текущий уровень развития интернета делают доступным огромный объем информации в любое время и в любом месте. Это способствует уменьшению уникальных идей, поскольку дублирование на практике не вызывает никаких трудностей. Следовательно, системы обработки и сравнения текстовых документов сейчас востребованы. Цель данной работы – создание концептуальной модели интеллектуальной системы распознавания текстовых документов, которая будет сравнивать тексты, выявлять идентичность между ними. Для достижения этой цели ставятся следующие задачи: изучение методов сравнения текстовых документов, обзор алгоритмов, построение новой модели интеллектуальной системы. Использовались следующие научные методы: сравнение, комбинирование, анализ. Векторный метод более эффективен среди изученных методов, так как больше внимания уделяется частотности слов в заданном тексте, а не морфологической структуре слов или их положению в тексте.

Ключевые слова. *текстовый документ, алгоритм, метод сравнения, плагиат, семантико-синтаксическая идентичность, интеллектуальная система, векторный метод.*

ՖՈՏՈՌՈԲՈՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ FACE (RS) ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
էլփոստ՝ harutyunyan.davit@list.ru
Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մամիկոն
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Աշխատանքում ներկայացվում է ֆոտոռոբոտի ստեղծման Face (RS) համակարգչային հատուկ տարածված և արդյունավետ ծրագրի նկարագրությունը և կիրառման քայլերի հաջորդականությունը, որոնցով հնարավոր է կազմել կոմպոզիցիոն դիմանկարներ՝ ծրագրում ներկառուցված գրադարանների տարրերով:

Իրականացվող ծրագրի հիմնական գաղափարն այն է, որ օպերատորը մեխանիկորեն հավաքում է դիմագծերը առանձին տարրերից, որոնք առկա են ծրագրի բազայում: Տարրերի միաձուլումը և տեղադրումը դեմքի շրջանի հյուսվածքի սահմաններում կատարվում է համակարգչային գրաֆիկայի մեթոդներով:

Face (RS) համակարգչային ծրագրային համակարգը անհրաժեշտ է և անփոխարինելի իրավապահպանական պրակտիկայում, որը կարելի է օգտագործել որպես ինքնուրույն արտադրանք կոմպոզիցիոն դիմանկարի օպերատիվ կազմման համար քրեական հետաքննության գործընթացում:


Բանալի բառեր՝ *ֆոտոռոբոտ, համակարգչային ծրագիր, դիմանկար, դիմագծեր, իրավապահ մարմիններ, գրաֆիկական դիմանկարներ, քրեական հետաքննություն:*

Գրեթե ամեն օր հանրային ինֆորմացիայի միջոցները տվյալներ են հրապարակում կատարված հանցանքների մասին: Որպես կանոն՝ հաղորդվում են տվյալներ հանցանքի վայրի, կատարման ժամանակի, տուժածների և այդ հանցագործության բացահայտմանն ուղղված իրավապահ մարմինների առաջնային գործողությունների վերաբերյալ:

Հանցագործի հայտնաբերման համար կարևոր դեր են կատարում ականատեսների ցուցմունքները և տեսաձայնագրությունները: Հենց ականատեսների տեղեկություններով են դատափորձագետները կազմում հանցագործների գրաֆիկական դիմանկարները կամ ֆոտոռոբոտները: Առաջ, երբ չկային համակարգիչներ, այդպիսի ֆոտոռոբոտները նկարվում էին նկարչի ձեռքով կա՛մ դիապրոյեկտորի, կա՛մ քարտերի օգնությամբ, որոնց վրա պատկերված էին դեմքի մասնիկներ՝ շուրթեր, քիթ, մազեր, բերան, աչքեր և այլն: Դա արդեն անցյալում է:

Ներկայումս գոյություն ունեն համակարգչային մասնագիտացված ծրագրեր, որոնց օգնությամբ էլ կառուցվում են ֆոտոռոբոտներ: Օրինակ՝ Faces ծրագրային կոմպլեքսը, որն իր տվյալների բազայի հիմքում ունի հազարավոր տարբեր դեմքեր և բաղադրիչ տարրեր:

Ֆոտոռոբոտը կարելի է համեմատել գեղանկարչության հետ: Ֆոտոռոբոտի սկզբունքը կտրուկ տարբերվում է գեղարվեստի դիմանկարից և լուսանկարից: Ֆոտոռոբոտը կազմվում է բազմաթիվ այլ հատվածներից, որոնք նման չեն նախնական պատկերի, առանձին տիպիկ գծերի և գծիկների (մարդու պատկերի տարրական մասնիկների) միացման միջոցով: Քրեագետների պրակտիկայում ֆոտոռոբոտը պետք է տա ոչ թե նախատիպի հստակ պատկերը, այլ ականատեսի հիշողության մեջ պահպանված դեմքի մաքսիմալ նմանությունը:



Նկար 1. Ֆոտոռոբոտի օրինակ:

Ծրագիրը պարունակում է մոտ 4400 դիմային տարրեր՝ ներառելով այնպիսի ռասաների առանձնահատկություններ, ինչպիսիք են աֆրոամերիկյանը և ասիականը:

Ֆոտոռոբոտը կարելի է պահպանել ծրագրի ֆորմատում .fas ընդարձակմամբ, էքսպորտ անել նկարում .jpg ընդլայնմամբ, ինչպես նաև ուղարկել էլեկտրոնային փոստով:

Իհարկե, այսպիսի ծրագիր իրավապահ մարմինների համար ունենալն անհրաժեշտություն է: Իսկ շարքային քաղաքացիների համար կարող է պիտանի լինել ֆոտոռոբոտի հեռավար տարբերակը Ultimate Flash Face կայքում: Այսպիսով, ի տարբերություն լուսանկարի (որը տալիս է դեմքի ակնթարթային օբյեկտիվ ձուլվածքը)՝ ֆոտոռոբոտը կենդանի դեմքի, կյանքից վերցրած դեմքի սուբյեկտ-հեղինակի ընկալման անբաժան մի տպավորություն է, որը մեր կողքով է անցնում ժամանակի հոսքի մեջ: Դա կենդանի էակի փոփոխական դեմք է, որը բաց է ժամանակի և բազմաթիվ հայացքների համար:

Լուսանկարում և դիմանկարում մեզ տրվում է մի ձուլվածք, հանված դիմակ, որը գողացված է ժամանակից և անձի ընկալումից: Լուսանկարում վարպետի հաջողությունը կախված է հաջող բռնացրած պահից, լիարժեք նմանության պահից, ընկալված մարդկային գծերի վեկտորների գումարից: Պարզ է, որ դիմանկարը երբեք չի լուծում այսպիսի անսահման խնդիրը, բայց միայն լավագույն դեպքում դնում է այն գիտակցող դիտողի առջև: Իսկ ֆոտոռոբոտը ոչ թե հանցագործի հայտնաբերման քրեական միջոց է, այլ որպես էսթետիկական սկզբունք: Այն մաքսիմում խնդիր չի դնում, այլ մինիմում. նույնիսկ ամենաանհաջող ֆոտոռոբոտը հետագա լավացման և իրական տպավորությանը մոտեցման մի շարք քայլեր է բացում:

Ֆոտոռոբոտի ստեղծման համար անհրաժեշտություն չկա գրանցվել կայքում: Կարելի է միանգամից անցնել կառուցմանը: Ավելի լավ է սկսել դեմքի օվալի ընտրությունից՝ Head, այնուհետև աստիճանաբար ավելացնել ֆոտոռոբոտի մյուս տարրերը: Տարրերի ընտրությունը մեծ է, հասանելի է նաև կիսաավտոմատ ընտրությունը: Դրա համար բավական է սեղմել առաջին տարրի վրա, այնուհետև տեղաշարժվել ցուցակով՝ Previous կամ Next սլաքների օգնությամբ: Միանգամից կարելի է տեսնել, թե տարրերից որն է ավելի համապատասխանում դեմքի տվյալ տիպին:

Չհամապատասխանող տարրերը կարելի է փոխարինել ուրիշներով կամ հեռացնել: Դրա համար է ծառայում Delete ստեղնը Feature Options

խմբում: Ավելին, դեմքի այս կամ այն մասի չափսերը փոխելով՝ մենք ակամա փոխում ենք համամասնությունները: Որպեսզի վերականգնենք այդ համամասնությունները, հաշվի առնելով կատարված փոփոխությունները, անհրաժեշտ է սեղմել Align at ստեղնը: Ծրագիրը ավտոմատ կերպով կկարգավորի բոլոր տարրերը էջի կենտրոնի և միմյանց նկատմամբ:

Ֆոտոռոբոտը նկարելուց հետո, երբ արդեն որոշվել է, որ դա վերջնական տարբերակն է, անհրաժեշտ է այն պահպանել: Ֆոտոռոբոտը պահպանվում է կայքում և հասանելի է դառնում կայքի բոլոր այցելուների համար: Ընտրացանկից /մենյու/ սեղմելով Save face ստեղնը, մուտքագրում ենք երկխոսության պատուհանում պահանջվող գաղտնաբառը, անունը և մեր ցանկությամբ ֆոտոռոբոտի նկարագրությունը: Եթե ցանկանում ենք ստանալ նամակներ այցելուներից, կարող ենք թողնել նաև e-mail հասցեն: Իսկ եթե ցանկանում ենք ստանալ ֆոտոռոբոտը թղթային տեսքով, կայքը թույլ է տալիս տպել այն՝ Print face ստեղնին սեղմելով:

Կայքի մյուս այցելուների գործողությունները կարելի է տեսնել ընտրացանկի Load face հրահանգով: Այս հրահանգով կարելի է տեսնել ֆոտոռոբոտների հեղինակների ցուցակը: Այդ ցուցակը կարելի է տեսակավորել ըստ ամսաթվի կամ այբենական կարգի:

Ցավոք, կայքում հասանելի չէ ֆոտոռոբոտների նախնական դիտումը և յուրաքանչյուր դիմանկարը անհրաժեշտ է ամբողջությամբ բեռնել էջին:

Անկասկած, կայքը շատ գրագետ է կատարված, և դրա օգտագործումը շատ հաճելի է: Միակ, այսպես կոչված, թերությունն այն է, թե որին պետք է ուշադրությունը դարձնել, որ դիմանկարներում ստացված բոլոր պատկերները «երիտասարդական» են: Իհարկե, կարելի է փորձել ավելացնել ակնոց կամ մորուք, բայց միևնույն է «ծերունիների» իրական պատկերներին շատ քիչ կնմանվի:

Դիտարկենք «Faces» ծրագիրը, որը մշակվել է ամերիկյան InterQuest ֆիրմայի կողմից: Տվյալ ծրագիրը այս խմբի տիպիկ ներկայացուցիչն է: Faces փաթեթի հետ մեկտեղ տրամադրվում են մարդկային դեմքի տարբեր հատվածների 2800 տարբերակ՝ սկսած հոնքերից և վերջացրած կրկնակի կզակով: Այդ հատվածների համատեղումը թույլ է տալիս բավականին հստակ վերարտադրել կասկածյալի դեմքը վկաների ցուցմունքների հիման վրա:

Faces փաթեթի օպերատորի գործողությունները ճշգրտելով՝ վկան կարող է օպերատիվ կերպով փոփոխել դեմքի ցանկացած հատվածը: Դրա համար պետք է ընդամենը ընտրել պալիտրայից անհրաժեշտ կետը:

Ծրագիրը թեստավորվել է Լաս-Վեգասի մունիցիպալ ոստիկանությունում, որտեղ ստացել է բարձր գնահատական: Տվյալ ծրագրի յուրահատկությունն այն է, որ Faces փաթեթը ոստիկաններին թույլ է տալիս աշխատել հավաքականորեն /խմբային/ որոնման մեջ գտնվող մարդու դիմանկարով: Դեմքի յուրաքանչյուր հատվածին տրվում է համար, այնուհետև բոլոր ընտրված տարրերի համարների մասին ինֆորմացիան փոխանցվում է ոստիկանական բաժանմունքներ, իսկ ծրագիրը ավտոմատ կերպով այդ տարրերից ձևավորում է պատրաստի պատկերը:

Faces ծրագրային ապահովումը համատեղելի է Windows և Mac OS օպերացիոն համակարգերի հետ, անհրաժեշտ է առնվազն 24 Մբայթ օպերատիվ հիշողություն, CD-ROM սկավառակասարք, SVGA գունավոր մոնիտոր և գրաֆիկական ակսելերատոր:

Ծրագիրը թույլ է տալիս ստեղծել սեփական տարրերը՝ ավելացնելով դրանք առկա խմբերում: Մոդիֆիկատորում կամ խմբագրությունում ստեղծելով սեփական տարրերը՝ օգտագործողը կարող է աշխատել դրանց հետ որպես PCX ֆայլեր: Բացի դրանից՝ դրանք կարելի է ներառել տարրերի գրադարանում՝ լրացնելով առկա խմբերը կամ ստեղծելով նորերը:

Ծրագրում նախատեսված է դիտարկվող արտաքին տարրերի ծավալի կրճատման հնարավորությունը բանավոր դիմանկարի օգտագործման դեպքում, դիմանկարի պատկերի տպելու հնարավորությունը գրեթե ցանկացած տիպի տպիչով ներառում է պատկերի հավասարեցման հնարավորությունը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ տարրերի նույնիսկ ամենա լիարժեք բազան չի կարող արտացոլել մարդկային դեմքի բազմազանությունը: Մոդիֆիկատորը թույլ է տալիս ժամանակի մինիմալ ծախսի դեպքում ձևափոխել դիմանկարի տարրերը՝ բերելով այն տեսքին, որը առավել մոտ է նկարագրվող ռեալ դիմագծերին:

Տարրերի մոդիֆիկատորը բավականին թեթևացնում է աշխատանքը, ընդլայնում է օգտագործողի հնարավորությունները ֆոտոռոբոտի կազմման դեպքում և համակարգի նոր տարբերակը լրացնող կարևոր տարր է հանդիսանում: Տարրերի նույնիսկ ամենալիարժեք բազան չի կարող արտացոլել մարդկային դեմքի բազմազանությունը: Մոդիֆիկատորը համակարգի այն մասն է, որը թույլ է տալիս ամենակարճ ժամկետներում ձևափոխել դիման-

կարի տարրերը այն տեսքի, որը առավել կնմանվի նկարագրվող դեմքի ռեալ գծերին: Տարրերի մոդիֆիկատորը հնարավորություն է տալիս՝

տարրի կամ դրա կեսի մասշտաբի փոփոխում,

ամբողջ էլեմենտի և դրա մասերի հակադարձ,

տարրի մասերի դիրքի փոփոխություն միմիանց հանդեպ,

հայելիային շրջադարձ,

տարրի յուրաքանչյուր կեսի համաչափություն:

Ծրագիրը տրամադրում է մարդու դեմքի 8000-ից ավելի տարբեր նշաններ, որոնք տեսակավորված են հետևյալ թեմաներով՝ գանգի ձև, մազեր և գլխարկներ, ճակատային մաս, ճակատային կնճիռներ և գծեր, հոնքեր, աչքեր, քիթ, շուրթեր, կզակներ և դրանց ուրվագծեր, բեղեր, մորուքներ, այծի փոքր մորուքներ, ակնոց, աչքերի գծեր (կապտուկներ, ստվերներ և այլ), այտերի գծեր (ստվերներ, փոսիկներ և այլ), բերանի գծեր և այլն:

Ծրագիրն ունի հարմարավետ, ինտուիտիվ, հասկանալի գրաֆիկական ինտերֆեյս: Ֆոտոռոբոտի արտաքինի տարրերի չափսերի բոլոր փոփոխությունները կատարվում են գրաֆիկական սլայդների օգնությամբ: Վերջնական արդյունքը՝ ականատեսի խոսքերով կազմված ֆոտոռոբոտը, քիչ է տարբերվում լուսանկարից: Ֆոտոռոբոտի կազմման ընթացքում գեներացվում է դրա ունիկալ ծածկագիրը: Այսպիսով, բավական է այդ թվերի փոքրիկ տողը ուղարկել մոլորակի ցանկացած կետ, և Face (RS) ծրագիրը անմիջապես կկազմի դրա հիման վրա պահանջվող ֆոտոռոբոտը:

Face (RS)-ը ներկայումս օգտագործվում է իրավապահ մարմինների կողմից: Այն թույլ է տալիս կազմել ցանկացած արտաքինով մարդու ֆոտոռոբոտ՝ աֆրոամերիկացու, եվրոպացու, ասիացու և այլն:

Ուղղակի մկնիկի մատնազարկով և դեմքի մասեր ընտրելով՝ կարելի է հեշտությամբ ստեղծել ցանկացած ֆոտոռոբոտ 10 րոպեի ընթացքում: Դեմքի բոլոր ընտրված մասերը միավորվում են մեկ ընդհանուրում, որի արդյունքում ստացվում է մարդու լուսանկարը: Կարելի է պահպանել ֆոտոռոբոտը ծրագրի ֆորմատում .fas ընդլայնմամբ, արտահանել նկարում .jpg ընդլայնմամբ, ինչպես նաև ուղարկել էլեկտրոնային փոստով:

Իհարկե, ունենալ այսպիսի ծրագիր իրավապահ մարմինների համար ուղղակի անհրաժեշտ է:

Այսպիսով, կարելի է ասել, որ Face (RS)-ը համակարգչային ծրագրային համակարգ է, որը անհրաժեշտ է և անփոխարինելի իրավապահպանական

պրակտիկայում, որը կարելի է օգտագործել որպես ինքնուրույն արտադրանք կոմպոզիցիոն դիմանկարի օպերատիվ կազմման համար:

Համակարգը թույլ է տալիս ոչ միայն ստեղծել կորած, հանցանքի մեջ կասկածվող մարդկանց սուբյեկտիվ դիմանկարները, այլ նաև կանխատեսել հանցագործի արտաքինի հնարավոր փոփոխությունները և որոնումներում ֆոտոռոբոտի հետագա օգտագործումը:

Այսպիսով, որպես վերջաբան՝ կարելի է ասել, որ աշխատանքում ներկայացվել է ֆոտոռոբոտի ստեղծման Face (RS) համակարգչային հատուկ տարածված և արդյունավետ ծրագրի կիրառման քայլերի հաջորդականությունը, որոնցով հնարավոր է կազմել կոմպոզիցիոն դիմանկարներ՝ ծրագրում ներկառուցված գրադարանների տարրերով: Իրականացվող ծրագրի հիմնական գաղափարը կայանում է նրանում, որ օպերատորը մեխանիկորեն հավաքում է դիմագծերը առանձին տարրերից, որոնք պարունակվում են ծրագրի բազայում:

Տարրերի միաձուլումը և տեղադրումը դեմքի շրջանի հյուսվածքի սահմաններում կատարվում է համակարգչային գրաֆիկայի մեթոդներով: Ընդհանուր ֆոտոռոբոտում հավաքած տարրերը կարող են պատկանել ձևաբանորեն տարբեր գենոտիպի մարդկանց՝ թողնելով լավ կատարված ֆոտոդիմանկարի տպավորություն, որը շատ կարևոր ներդրում ունի իրավապահ մարմինների գործունեության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Криминалистика / Под ред. Н. П. Яблокова, 3-е изд. М.: Юристъ, 2005. 781 с.
2. Аверьянова Т. В., Криминалистика, М., НОРМА -ИНФРА-М, 2000, 990 с.
3. Вэл Макдермид, Анатомия преступления, М., Альпина Нон-фикшн, 2016, 344 с.

THE MEANING OF THE COMPUTER PROGRAM "FACE" (RS) INTENDED FOR CREATING A PHOTO ROBOT AND ITS APPLICATION IN CRIMINAL INVESTIGATION

HARUTYUNYAN DAVIT
1st-year Master Student of Jurisprudence Department
of the Faculty of Humanities, GSU
e-mail: harutyunyan.davit@list.ru
Academic Supervisor: Hakobyan Mamikon
PhD in Technical Sciences, Associate Professor

The work presents a description of a popular and effective special computer program "Face" (RS) intended for creating a photo robot and the sequence of application of the steps, which can be used to create compositional portraits with elements of libraries existent in the program.

The main idea of the implemented program is that the operator automatically collects the features from separate elements that are presented in the program database. The merging and placement of the elements around the tissue of the face are done by the methods of computer graphics.

Face (RS) is a necessary and indispensable computer software in law practice, which can be used as an independent product for the operative compilation of a compositional portrait in criminal investigation.

Key words: *photo robot, computer program, portrait, features, law enforcement agencies, graphic portraits, criminal investigation.*

ЗНАЧЕНИЕ И ИСПОЛЬЗОВАНИЕ КОМПЬЮТЕРНОЙ ПРОГРАММЫ СОЗДАНИЯ ФОТОРОБОТА FACE (RS) В ПРОЦЕССЕ УГОЛОВНОГО РАССЛЕДОВАНИЯ

АРУТЮНЯН ДАВИД
Студент 1-ого курса магистратуры
отделения юриспруденции факультета гуманитарных наук ГГУ
электронная почта: harutyunyan.davit@list.ru
Научный руководитель: Акопян Мамикон
кандидат технических наук, доцент,
профессор Гаварского государственного университета

В работе представлено описание специальной программы создания фоторобота Face (RS) и последовательность шагов при ее использовании, с помощью которых возможно составить композиционный портрет с элементами библиотек, представленных в программе. Основная идея представленной программы состоит в том, что оператор механически собирает части лица из отдельных элементов, присутствующих в базе программы. Слияние и размещение элементов в области лица выполняется методами компьютерной графики. Компьютерная программная система Face (RS) необходима и незаменима в правоохранительной практике, её можно использовать для оперативного составления композиционного портрета в процессе уголовного расследования.

Ключевые слова: *фоторобот, компьютерная программа, портрет, черты лица, правоохранительные органы, криминальное расследование.*

ԴԵՄՔԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՍՏՈՅԱՆ ԿԱՐԵՆ
Գավառի պետական համալսարանի
բնագիտական ֆակուլտետի
«Համակարգչային ճարտարագիտություն»
բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող
էլփոստ՝ kmastoyan@mail.ru
Գիտական ղեկավար՝ Ավետիսյան Վարազդատ
տեխնիկական գիտությունների թեկնածու

Դեմքի ճանաչումը պատկերների վերլուծության և համակարգչային տեսողության ոլորտին առնչվող մարտահրավերային, կիրառական խնդիր է և վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել է լայնորեն կիրառվել տարբեր բնագավառներում: Տեսանյութերի և պատկերների տվյալների շտեմարանների զարմանալի աճով պայմանավորված՝ կարիք է առաջացել խելացի համակարգերի միջոցով նման շտեմարանների ավտոմատ վերլուծության և ինֆորմացիայի դուրսբերման: Դեմքը կարևոր դեր է խաղում սոցիալական հաղորդակցության մեջ՝ անձի ինքնությունն ու զգացմունքները փոխանցելու համար: Մարդիկ, ի տարբերություն մեքենաների, հնարավորություն չունեն ճանաչելու հսկայական քանակությամբ դեմքեր, ուստի դեմքի ավտոմատ ճանաչման համակարգերը կարևոր դեր են խաղում դեմքի ճանաչման, դեմքի արտահայտության ճանաչման, գլխի կեցվածքի գնահատման, մարդ-համակարգիչ փոխազդեցության մեջ և այլն: Դեմքի հայտնաբերումը համակարգչային տեխնոլոգիա է, հայտնաբերվում է թվային պատկերում մարդու դեմքի գտնվելու վայրը և չափը:

Հոդվածում ներկայացվում են դեմքերի ճանաչման և նույնականացման խնդիրները, դրանց կիրառությունները, ինչպես նաև այդ խնդիրների լուծման առավել տարածված մոտեցումները և ալգորիթմները: Հոդվածում նկարագրված են դեմքերի ճանաչման և նույնականացման ինտելեկտուալ համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *դեմքերի հայտնաբերում, դեմքերի ճանաչում, դեմքերի նույնականացման համակարգեր, արհեստական բանականություն:*

Բազմաթիվ հետազոտական նախագծեր և կոմերցիոն արտադրանքներ ցույց են տվել, որ համակարգիչը կարող է մարդկանց հետ բնական ձևով շփվել՝ նայելով մարդկանց տեսախցիկների միջոցով, լսելով մարդկանց խոսափողերի միջոցով, հասկանալով այդ ազդանշանները և բարյացակամորեն արձագանքելով մարդկանց: Մարդու և համակարգչի նման բնական փոխազդեցության (HCI) հնարավորություն ընձեռող հիմնական մեթոդներից մեկը դեմքի հայտնաբերումն է: Դեմքի հայտնաբերումը հիմնաքար է դեմքի վերլուծության բոլոր ալգորիթմների համար՝ ներառյալ դեմքի հավասարությունը, մոդելավորումը, վերախմբավորումը, ճանաչումը, դեմքի ստուգումը կամ նույնականացումը, գլխի դիրքը, դեմքի արտահայտության հետևումը կամ ճանաչումը, սեռի կամ տարիքի ճանաչումը և շատ ավելին: Այսպիսով, համակարգիչները կարող են հստակ հայտնաբերել դեմքը, դրանից հետո նրանք սկսում են իսկապես հասկանալ մարդկանց մտքերն ու մտադրությունները: Հաշվի առնելով թվային պատկերը՝ դեմքի հայտնաբերման հիմնական նպատակն է որոշել, թե արդյոք պատկերի մեջ կան դեմքեր, թե ոչ: Սա, ըստ երևույթին, աննշան առաջադրանք է մարդկային էակների համար, սակայն դա շատ դժվար գործ է համակարգիչների համար և վերջին մի քանի տասնամյակների ընթացքում եղել է ուսումնասիրված հետազոտական թեմաներից մեկը: Դեմքի հայտնաբերման հետ կապված դժվարությունները կարող են պայմանավորված լինել մասշտաբի, տեղանքի, կողմնորոշման (in-plane rotation), դիրքի (out-of-plane rotation), դեմքի արտահայտության, լուսավորման պայմանների և այլ շատ տարբերություններով: Գրականության մեջ դեմքի հայտնաբերման համար հասանելի են բազմաթիվ զեկույցներ: Դեմքի հայտնաբերման ոլորտը վերջին տասնամյակում զգալի առաջընթաց է ապրել:

Mukherjee (2017) և ուրիշները քննարկել են դեմքի հայտնաբերման երկու մեթոդներ, այսինքն՝ մարդու կողմից ստեղծված ֆունկցիաների օգտագործումը, որին հետևում է պարզ դասակարգիչ և նեյրոնային ցանցեր օգտագործող մեթոդներ: Ren-ը (2017) ներկայացրել է մարդու դեմքի իրական ժամանակի հայտնաբերման և հետևման մեթոդ: Առաջարկվող մեթոդը համատեղում է Convolution Neural Network-ի հայտնաբերումը և Kalman ֆիլտրի հետևումը: Convolution Neural Network-ը օգտագործվում է տեսանյութում դեմքը հայտնաբերելու համար, որն ավելի ճշգրիտ է, քան ավանդական հայտնաբերման մեթոդը: Երբ դեմքը հիմնականում շեղվում է կամ խիստ դուրս է գալիս, Կալմանի ֆիլտրի հետքը օգտագործվում է դեմքի դիրքը

կանխատեսելու համար: Նրանք փորձում են մեծացնել դեմքի հայտնաբերման արագությունը՝ միաժամանակ բավարարելով իրական ժամանակի պահանջները: Luo-ն (2018) առաջարկել է խորը կասկադային հայտնաբերման մեթոդ, որը կիրառում է bounding-box regression-ը, որը տեղայնացման մեթոդ է, որպեսզի մոտենա պատկերներում հնարավոր դեմքերի հայտնաբերմանը: Նրանք նաև հաշվի են առնում դասակարգման և կապող հանգույցների ռեգրեսիայի բնածին կապը և կիրառում են այն՝ ընդհանուր արդյունավետությունը բարձրացնելու համար: Նրանց մեթոդը օգտագործում է կասկադային ճարտարապետությունը՝ մանրակրկիտ նախագծված խորը կոնվոլյուցիոն ցանցերի երեք փուլով, որպեսզի կանխատեսեն դեմքերի առկայությունը:

Դեմքի հայտնաբերման մարտահրավերները

Դեմքի հայտնաբերման հետ կապված դժվարությունները նվազեցնում են դեմքի հայտնաբերման ճշգրտությունն ու հայտնաբերման արագությունը: Այդ մարտահրավերներից են բարդ հետնապատկերը,պատկերներում չափազանց շատ դեմքերի առկայությունը, դեմքի տարօրինակ արտահայտությունները, լուսավորությունը, պատկերի կետայնությունը, մաշկի գույնը, տեսախցիկի հեռավորությունն ու կողմնորոշումը և այլն:

- Տարօրինակ դեմքի արտահայտություններ: Պատկերի մեջ մարդու դեմքը կարող է տարօրինակ արտահայտություններ ունենալ՝ ի տարբերություն սովորականի, ինչը դժվար է դեմքի հայտնաբերման համար:
- Դեմքի որոշ հատվածի փակ լինելը (Face occlusion): Այս դեպքում դեմքի որոշակի հատվածը փակ է լինում որևէ օբյեկտով: Այն կարող է լինել ակնոց, շարֆ, ձեռք, մազեր, գլխարկներ և ցանկացած այլ առարկա: Այն նաև նվազեցնում է դեմքի հայտնաբերման արագությունը:
- Լուսավորման էֆեկտները կարող են համաչափ չլինել պատկերի մեջ: Պատկերի որոշ մասերում հնարավոր է շատ բարձր լուսավորություն, իսկ մյուս մասում՝ շատ ցածր լուսավորություն:
- Բարդ հետնապատկերի առկայություն (Complex background): Բարդ հետնապատկերը նշանակում է պատկերում առկա բազմաթիվ առարկաներ, որոնք նվազեցնում են դեմքի հայտնաբերման ճշտությունը և արագությունը:
- Չափազանց շատ դեմքեր պատկերի մեջ: Նշանակում է, որ պատկերը պարունակում է չափազանց շատ մարդկային դեմքեր, ինչը դժվար է դեմքի հայտնաբերման համար:

- Պատկերը կարող է շատ ցածր կետայնության լինել, որը նույնպես դժվարացնում է դեմքի հայտնաբերման աշխատանքը:
- Մաշկի գույնը (Skin-color): Մաշկի գույնի փոփոխությունները՝ պայմանավորված աշխարհագրական տեղանքով: Չինացիների մաշկի գույնը տարբերվում է աֆրիկյանից, իսկ աֆրոամերիկացիների մաշկի գույնը տարբերվում է ամերիկյանից և այլն: Մաշկի գույնը փոխելը նույնպես դժվար է դեմքի հայտնաբերման համար:
- Հեռավորությունը չափազանց շատ է տեսախցիկի և մարդու դեմքի միջև, որը կարող է նվազեցնել պատկերում մարդու դեմքի հայտնաբերման արագությունը:
- Դեմքի կողմնորոշումը (Face Orientation): Պատկերում դեմքի առկայությունը որոշակի անկյան տակ: Այն նաև նվազեցնում է դեմքի հայտնաբերման ճշտությունը և հայտնաբերման արագությունը:
- Դեմքի հայտնաբերման համակարգի կիրառությունները
- Գենդերային դասակարգում: Գենդերային ինֆորմացիան կարող է պարզվել մարդու պատկերից:
- Փաստաթղթերի ու մուտքի վերահսկողություն կարող է իրականացվել դեմքի նույնականացման համակարգով:
- Մարդ-համակարգիչ փոխազդեցության համակարգ: Դա համակարգչային տեխնոլոգիաների նախագծումն ու կիրառումն է, որը կենտրոնանում է հատկապես օգտագործողների և համակարգիչների միջև ինտերֆեյսի վրա:
- Հաճախումների ստուգում կենսաչափական տվյալների միջոցով: Համակարգ է՝ մարդկանց հաճախելիությունը ստուգելու համար կիրառելով մատնահետք կամ դեմքի ճանաչում:
- Լուսանկարչություն: Վերջերս թվային տեսախցիկները օգտագործում են դեմքի հայտնաբերումը ավտոֆոկուսի համար: Դեմքի հայտնաբերումը օգտակար է նաև ֆոտոսլայդների նկատմամբ հետաքրքրություն ներկայացնող շրջանակների ընտրության համար:
- Դեմքի ելևէջային հատկությունների դուրսբերում, ինչպիսիք են քիթը, աչքերը, բերանը, մաշկի գույնը և այլն: Կարելի է դուրս բերել պատկերից կիրառելով համակարգչային տեսողություն:
- Մարկետինգային դեմքի հայտնաբերումը շահում է մարկետոլոգների հետաքրքրությունը: Վեբկայքը կարող է միացվել հեռուստացույցին և հայտնաբերել ցանկացած մարդու դեմք, որը քայլում է փողոցով: Այնուհետև հա-

մակարգը դեմքի միջոցով հաշվարկում է սեռը և տարիքային շեմը: Տեղեկատվությունը հավաքելուց հետո կարելի է թողարկել մի շարք գովազդեր, որոնք հատուկ են բացահայտված ռասային /սեռին/, տարիքին:

- Դեմքի նույնականացում: Դեմքի նույնականացման համակարգը թվային պատկերից կամ տեսանյութից մարդուն հայտնաբերելու կամ ստուգելու գործընթաց է: Դա անելու ձևերից մեկը պատկերից ընտրված դեմքի առանձնահատկությունները և դեմքի տվյալների բազան համեմատելն է: Սովորաբար օգտագործվում է անվտանգության համակարգերում:

Կենսաչափական մեթոդները վերջին տարիներին ի հայտ են եկել որպես անձանց ճանաչելու ամենահեռանկարային տարբերակ, մարդկանց ինքնության և նրանց ֆիզիկական և վիրտուալ տիրույթներ մուտք գործելու հնարավորություն ընձեռելու փոխարեն, որոնք հիմնված են ծածկագրերի, PIN-ների, սմարթ քարտերի, պլաստիկ քարտերի, նշանագրերի, բանալիների և այլնի վրա, այս մեթոդները քննում են անհատի ֆիզիոլոգիական և/կամ վարքային առանձնահատկությունները, որպեսզի ստուգեն և/կամ պարզեն նրա ինքնությունը: Գաղտնաբառերը և PIN-ները դժվար է հիշել և կարելի է գողանալ կամ կռահել, նշաններ, բանալիներ և նման բաներ կարող են լինել սխալ, մոռացված, աղավաղված կամ կրկնօրինակված, մագնիսական քարտերը կարող են դառնալ աղավաղված և անընթեռնելի, սակայն անհատի կենսաբանական գծերը չեն կարող սխալ տեղադրված լինել, մոռացվել, գողացվել կամ կեղծվել: Կենսաչափական տեխնոլոգիան ներառում է նույնականացում՝ հիմնված ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վրա (օրինակ՝ դեմքի, մատնահետքերի, մատների երկրաչափության, ձեռքի երկրաչափության, ձեռքի երակների, ծիածանաթաղանթի, ձայնի և վարքային գծերի (օրինակ՝ քայլվածքի, ստորագրության պահվածքի դինամիկայի վրա[1]: Դեմքի ճանաչումը, ըստ երևույթին, առաջարկում է մի քանի առավելություններ այլ կենսաչափական մեթոդների նկատմամբ, որոնցից մի քանիսը շարադրված են այստեղ: Գրեթե բոլոր այս տեխնոլոգիաները պահանջում են որոշակի կամավոր գործողություն օգտագործողի կողմից, այսինքն՝ օգտագործողը պետք է ձեռքը հանգիստ դնի մատնահետքի կամ ձեռքի երկրաչափության հայտնաբերման համար և պետք է կանգնի ֆիքսված դիրքում տեսախցիկի առջև՝ ծիածանաթաղանթի կամ ցանցաթաղանթի նույնականացման համար: Սակայն դեմքի ճանաչումը կարելի է անել պասիվ կերպով՝ առանց օգտատիրոջ կողմից որևէ հստակ գործողության կամ մասնակցության, քանի որ դեմքի պատկերները հեռվից կարելի է ձեռք բերել

տեսախցիկի միջոցով: Սա հատկապես օգտակար է անվտանգության և հսկողության նպատակներով: Բացի դրանից՝ ընդհանուր առմամբ տվյալների ձեռքբերումը լի է այլ կենսաչափության հետ կապված խնդիրներով. այն մեթոդները, որոնք հենվում են ձեռքերի և մատների վրա, կարող են անօգուտ դառնալ, եթե էպիդերմիսի հյուսվածքը ինչ-որ ձևով վնասվել է (այսինքն՝ վնասված կամ ճեղքված): Ծիածանաթաղանթի և ցանցաթաղանթի նույնականացումը պահանջում են թանկարժեք սարքավորումներ և շատ զգայուն են մարմնի ցանկացած շարժման նկատմամբ: Ձայնի ճանաչումը անընկալունակ է հասարակական վայրերում ինչող աղմուկների և լսողական տատանումների դեպքում: Ստորագրությունները կարող են փոփոխվել կամ կեղծվել: Սակայն դեմքի պատկերները հեշտությամբ կարելի է ձեռք բերել մի քանի էժան ֆիքսված տեսախցիկներով: Դեմքի ճանաչման լավ ալգորիթմները և պատկերների համապատասխան նախադրյալը կարող են փոխհատուցել աղմուկը և թեթևակի փոփոխությունները կողմնորոշման, մասշտաբի և լուսավորության մեջ: Վերջիվերջո, տեխնոլոգիաները, որոնք պահանջում են, որ բազմաթիվ անհատներ օգտագործեն նույն սարքավորումները, որպեսզի նկարեն իրենց կենսաբանական առանձնահատկությունները, հնարավոր է, որ օգտագործողը ենթարկվի մանրէների և այլ օգտագործողների վիրուսների փոխանցմանը: Սակայն դեմքի ճանաչումը բացարձակապես առանց շփման է և առողջությանը սպառնացող որևէ վտանգ չի ներկայացնում:

Կիրառություններ

Դեմքի ճանաչումն օգտագործվում է երկու առաջնային առաջադրանքների համար.

1. Ստուգում (մեկը մեկի համընկնում): Երբ կատարվում է անհայտ անձի դեմքի պատկերով ինքնության ստուգում, պարզելով, թե արդյոք տվյալ անձը այնպիսին է, ինչպիսին ինքն է /նա պնդում է/:

2. Նույնականացում (մեկը շատը համընկնում): Հաշվի առնելով անհայտ անձի պատկերը, որոշել այդ անձի ինքնությունը՝ համեմատելով (հնարավոր է՝ կոդավորելուց հետո) այդ պատկերը հայտնի անձանց (հնարավոր է՝ կոդավորված) պատկերների տվյալների բազայի հետ: Կան բազմաթիվ կիրառման ոլորտներ, որոնցում դեմքի ճանաչումը կարող է շահարկվել այս երկու նպատակների համար, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև:

- Անվտանգություն (շենքերի, օդանավակայանների / ճոպանուղիների, բանկոմատների և սահմանային անցակետերի մուտքի վերահսկողություն


[2, 3]; համակարգչային/ ցանցային անվտանգություն[4], էլեկտրոնային փոստի վավերացում մուլտիմեդիա աշխատանքային կետերում):

- Հսկողություն (մեծ թվով CCTV-ներ կարելի է հսկել՝ հայտնի հանցագործներին, թմրադեղեր, հանցագործություններ և այլն փնտրելու համար, և իշխանությունները կարող են տեղեկացվել, երբ մեկը գտնվում է: Օրինակ՝ այս ընթացակարգը կիրառվել է Ֆլորիդայի Տամպա քաղաքի Super Bowl 2001 խաղի ժամանակ[2]: Մեկ այլ դեպքում, ըստ CNN-ի զեկույցի, Արիզոնայի Ֆենիքս քաղաքի Royal Palm Middle School-ում վերջերս տեղադրվել են երկու տեսախցիկ, որոնք կապված են սեռական ոտնձգություն կատարողների պետական և ազգային տվյալների բազաների հետ՝ կորած երեխաներին ու ենթադրյալ առևանգողներին բացահայտելու համար [3]):
- Ընդհանուր ինքնության ստուգում (ընտրողների գրանցում, բանկային, էլեկտրոնային առևտուր, նորածինների հայտնաբերում, ազգային ինքնության հաստատում, անձնագրեր, վարորդական իրավունքի վկայականներ, աշխատողի ԻԴ-ներ).
- Քրեական դատավարության համակարգեր (mug-shot/booking systems, post-event analysis, forensics).
- Պատկերների տվյալների բազայի հետազոտություններ (լիցենզավորված վարորդների պատկերների տվյալների բազաների որոնում, կորած երեխաների, ներգաղթյալների և ոստիկանության գրառումներ):
- «Սմարթ քարտ» դիմումները (դեմքի պատկերների տվյալների բազան պահպանելու փոխարեն, դեմքի տպումը կարելի է պահել սմարթ քարտում, բար կոդում կամ մագնիսական ժապավենում, որի աուտենտիկացումը կատարվում է կենդանի պատկերի և պահպանված տեմբրի համապատասխանեցմամբ) [1]:
- Բազմակողմանի միջավայր հարմարվող մարդ-համակարգիչ ինտերֆեյսներով (ամենուրեք տարածված կամ կոնտեքստածրագրային համակարգերի մասով, երեխաների խնամքի կամ ծերերի կենտրոններում վարքի մոնիտորինգի իրականացում, հաճախորդի ճանաչում և նրա կարիքների գնահատում):
- Տեսանյութերի պիտակավորում (պիտակավորում դեմքերը տեսագրության մեջ):
- Վկայի դեմքի վերականգնում[2]: Բացի այս կիրառություններից, ներկա դեմքի ճանաչման տեխնոլոգիայի հիմքում ընկած մեթոդները նույնպես փոփոխվել և օգտագործվել են այնպիսի հարակից կիրառումների համար,

ինչպիսիք են սեռերի դասակարգումը, դեմքի արտահայտության ճանաչումը[1] և դեմքի առանձնահատկությունների ճանաչումը և հետազոտումը[4]; դրանցից յուրաքանչյուրն ունի իր օգտակարությունը տարբեր տիրույթում: Օրինակ՝ արտահայտչամիջոցների ճանաչումը բժշկության բնագավառում կարող է օգտագործվել ինտենսիվ բուժօգնության մոնիտորինգի համար: Մինչ դեմքի առանձնահատկությունների ճանաչումը և հայտնաբերումը կարելի է շահագործել մեքենայի վարորդի աչքերին հետևելու և այդպիսով նրա հոգնածությունը վերահսկելու համար, ինչպես նաև սթրեսի հայտնաբերման համար: Դեմքի ճանաչումը կիրառվում է նաև այլ կենսաչափական միջոցների հետ զուգահեռ, ինչպիսիք են խոսքը, ծիածանաթաղանթը, մատնահետքը, ականջի և ոտնաթաթի ճանաչումը, որպեսզի բարելավվի այդ մեթոդների ճանաչման արդյունավետությունը[4]:

Դեմքի հայտնաբերման մեթոդներ

Face detection- ը համակարգչային տեխնոլոգիա է, որը որոշում է մարդու դեմքի տեղակայումը և չափը թվային պատկերում: Դեմքի առանձնահատկությունները հայտնաբերվում են, և ցանկացած այլ առարկա, ինչպիսին ծառերն են, շենքերն ու մարմինները, անտեսվում են թվային պատկերից: Այն կարելի է համարել օբյեկտ-դասակարգման հայտնաբերման կոնկրետ դեպք, որտեղ առաջադրանքը տվյալ դասին պատկանող պատկերի մեջ գտնելն է բոլոր օբյեկտների տեղերն ու չափերը: Դեմքի հայտնաբերումը, կարելի է դիտել որպես դեմքի տեղակայման ավելի ընդհանուր դեպք: Դեմքի տեղայնացման ժամանակ առաջադրանքը հայտնի դեմքերի կոորդինատների և չափսերի բացահայտումն է (սովորաբար մեկը): Տրված թվային պատկերի դեմքի մասը հայտնաբերելու համար հիմնականում գոյություն ունեն երկու տեսակի մոտեցումներ, այսինքն՝ բնութագրիչների և պատկերի վրա հիմնված մոտեցումներ: Բնութագրիչների վրա հիմնված մոտեցումը փորձում է հանել պատկերի առանձնահատկությունները և այն համապատասխանեցնել դեմքի արդեն առկա առանձնահատկությունների հետ: Պատկերի վրա հիմնված մոտեցումը փորձում է ստանալ լավագույն համապատասխանու-թյունը ուսուցման և փորձարկման պատկերների միջև: Հետևյալ մեթոդները սովորաբար օգտագործվում են ֆիքսված պատկերի կամ տեսանյութերի հաջորդականությունից դեմքերը հայտնաբերելու համար (նկար 1):



Նկար 1. Դեմքի հայտնաբերման մեթոդներ:

Բնութագրիչների վրա հիմնված մոտեցման էությունը կայանում է դեմքի invariant առանձնահատկությունների հայտնաբերման մեջ: Հիմքում ընկած ենթադրությունը հիմնված է այն դիտարկման վրա, որ մարդիկ կարող են անխտորեն հայտնաբերել դեմքերն ու առարկաները տարբեր դիրքերում և լուսավորման պայմաններում, ուստի պետք է գոյություն ունենան հատկություններ կամ առանձնահատկություններ, որոնք անտարբեր են այս փոփոխականների նկատմամբ: Դեմքի այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են մաշկի գույնը, հոնքերը, աչքերը, քիթը, բերանը և մազերը, սովորաբար դուրս են բերվում եզրային դետեկտորների միջոցով: Ստացված առանձնահատկությունների հիման վրա կառուցվում է վիճակագրական մոդել, որի միջոցով կարելի է նկարագրել նրանց հարաբերությունները և ստուգել դեմքի գոյությունը պատկերի վրա: Օրինակներ՝ Skin color, motion, edge, Viola–Jones, snakes և այլն:Առավելություններից կարելի է նշել հեշտ իրականացումը: Թերություններից՝ պատկերման առանձնահատկությունները կարող են խիստ ապականվել լուսային, աղմուկի և որոշ հատվածների փակ լինելու պատճառով: Բնութագրիչների սահմանները կարող են թուլանալ դեմքերի համար, մինչդեռ այլ ստվերները կարող են առաջացնել բազմաթիվ ուժեղ եզրեր, որոնք միասին անօգուտ են դարձնում ընկալունակ խմբավորման ալգորիթմները:

Պատկերի վրա հիմնված մոտեցման դեպքում կաղապարները (template) ուսուցանվում են պատկերներում բերված օրինակներից: Ընդհանուր առմամբ արտաքին տեսքի վրա հիմնված մեթոդները հիմնված են վիճակագրական վերլուծության և մեքենայական ուսուցման մեթոդների վրա, որպեսզի գտնեն դեմքի և ոչ դեմքի պատկերների համապատասխան հատկանիշները: Ուսուցանված հատկանիշները բաշխիչ մոդելների կամ դիսկրի-

մինանտ ֆունկցիաների տեսքով հետագայում օգտագործվում են դեմքի հայտնաբերման համար:Օրինակներ Neural-networks, HMM, SVM, AdaBoost learning և այլն, համեմատաբար ավելի դժվար է իրականացնել, քան բնութագրիչների վրա հիմնված համակարգի դեպքում:

Դեմքերի հայտնաբերման համար առավել տարածված տեխնոլոգիական լուծումներ

Աղյուսակ 1: Դեմքի ճանաչման համակարգերը ուսուցանելու և (կամ) փորձարկելու համար օգտագործված ամենահայտնի 2d դեմքերի ճանաչման տվյալների շտեմարանների համեմատական ամփոփում:

Տվյալների բազա	**Ստեղծման տարեթիվ**	**Նկարներ**	**Առարկաներ**	**Նկարներ/-Սուբյեկտ**
ORL	1994	400	40	10
FERET	1996	14126	1199	-
AR	1998	3016	116	26
XM2VTS	1999	-	295	-
BANCA	2003	-	208	-
FRGC	2006	50000	-	7
LFW	2007	13233	5749	2.3
CMU Multi PIE	2009	>750000	337	-
IJB-A	2015	5712	500	11.4
CFP	2016	7000	500	>14
DMFP	2016	2460	410	6
IJB-B	2017	21798	1845	36.2
MF2	2017	4.700000	672057	7
DFW	2018	11157	1000	5.26
IJB-C	2018	31334	3531	6
LFR	2020	30000	542	10-260
RMFRD	2020	95000	525	-
SMFRD	2020	500000	10000	-

OpenCV (Open Source Computer Vision) հայտնի համակարգչային տեսողության գրադարան է, որը թողարկել է Intel-ը 1999 թվականին: Հարթակի գրադարանը իր ուշադրությունը կենտրոնացնում է իրական ժամանակի պատկերների մշակման վրա և ներառում է համակարգչային տեսողության վերջին ալգորիթմների արտոնագրից զերծ իրականացումը[5]: 2008 թվականին Willow Garage-ը ստանձնեց աջակցությունը և OpenCV 2.3.1 այժմ գա-

լիս է ծրագրավորման ինտերֆեյսով C, C++, PythonևAndroid. OpenCV-ն թողարկվում է BSD արտոնագրի ներքո, այնպես որ այն օգտագործվում է ինչպես ակադեմիական նախագծերում, այնպես էլ կոմերցիոն արտադրանքներում:

OpenCV 2.4 այժմ գալիս է դեմքի ճանաչման համար շատ նոր FaceRecognizer դասի հետ, այնպես որ դուք կարող եք անմիջապես սկսել փորձարկել դեմքի ճանաչման հետ: Ներկայումս առկա ալգորիթմներն են.Eigenfaces, FisherFaceRecognizer, տեղային Binary Patterns Histograms:

scikit-image (նախկինում scikits.image) բաց աղբյուրների պատկերների մշակման գրադարան է Python ծրագրավորման լեզվի համար: Այն ներառում է ալգորիթմներ սեգմենտացիայի համար, երկրաչափական փոխակերպումներ, գունային տարածության մանիպուլյացիա, վերլուծություն, ֆիլտրացիա, մորֆոլոգիա, բնութագրիչների հայտնաբերում և ավելին: Այն նախատեսված է Python թվային և գիտական գրադարանների NumPy ևSciPy-ի հետ փոխկապակցելու համար:

TensorFlow-ը մեքենայական ուսուցման համակարգ է, որն աշխատում է մեծ մասշտաբներով և համասեռ միջավայրում: Tensor-Flow-ը տվյալների հոսքի գրաֆիկների միջոցով ներկայացնում է հաշվարկը, կիսված վիճակը և այն գործողությունները, որոնք մուտացիայի են ենթարկվում այդ վիճակին: Այն քարտեզագրում է տվյալների հոսքի գրաֆի հանգույցները բազմության մեջ գտնվող բազմաթիվ մեքենաների վրա, և մի մեքենայի ներսում, որը անցնում է բազմաթիվ հաշվարկային սարքերի, այդ թվում՝ multicore CPUs, ընդհանուր նպատակային GPUs և custom-designed ASICs հայտնի որպես Tensor Processing Units (TPUs)[6]: Այս ճարտարապետությունը ճկունություն է տալիս կիրառության մշակողին. մինչդեռ նախորդ «պարամետրային սերվեր» նախագծերում ընդհանուրկառավարումը ներկառուցված էր համակարգում: TensorFlow-ը հնարավորություն է տալիս ծրագրավորողներին փորձարկել նոր օպտիմիզացման և ուսուցանման ալգորիթմներ: TensorFlow-ն աջակցում է տարբեր կիրառությունների՝ կենտրոնանալով խորը նեյրոնային ցանցերի ուսուցանման և փորձարկման վրա: Google-ի մի քանի ծառայություններ արտադրության մեջ օգտագործում են TensorFlow-ն:

Դեմքի ճանաչման API-եր

- Kairos-ն առաջարկում է պատկերի ճանաչման տարբեր լուծումներ իրենց API-ի միջոցով: Նրանց API-ի հնարավորություններից են սեռի բացա-

հայտումը, տարիքի, էմոցիոնալ վիճակի, դեմքի ճանաչումը թե՛ լուսանկարում, թե՛ տեսանյութում և այլն:

- Amazon-ի ճանաչումը: Դեմքի ճանաչման այս API լիովին ինտեգրված է Amazon Վեբ ծառայության էկոհամակարգում: Այս API-ն օգտագործելով՝ շատ հեշտ կլինի կառուցել այնպիսի ծրագրեր, որոնք կօգտագործեն AWS-ի այլ արտադրանքներ:
- Microsoft face API, որն ունի «նմանատիպ դեմքի որոնման» ունակություն: Երբ API-ին տրվի դեմքերի հավաքածու և որպես հարցում՝ նոր դեմք, API-ն կվերադարձնի հավաքածուից նմանատիպ դեմքերի հավաքածու:
- Google cloud vision-ը՝ ինտեգրված Google Cloud պլատֆորմի մեջ: Այս API-ը հարմար է այն առումով, որ հնարավոր է միացնել այն ծրագրերին, որոնք արդեն օգտագործում են Google Cloud Platform-ի այլ արտադրանքներ և ծառայություններ:
- IBM Watson վիզուալ ճանաչում անկախ նրանից, թե դա դեմքեր են, առարկաներ, գույներ, թե սնունդ:Այս API թույլ է տալիս բացահայտել բազմաթիվ տարբեր տեսակի դասակարգիչներ: Եթե ներառված դասակարգիչները բավարար չեն, ապա կարելի է ուսուցանել և օգտագործել մեր սեփական դասակարգիչները:

Եզրակացություն

Վերջին տարիներին դեմքի հայտնաբերումը զգալի ուշադրության է արժանացել կենսաչափության, օրինաչափությունների ճանաչման և համակարգչային տեսողության խմբերի հետազոտողների կողմից: Այս հոդվածում ներկայացրել ենք դեմքի հայտնաբերման մեթոդների հետազոտություն: Ներկայումս կան բազմաթիվ ընկերություններ, որոնք բջջային հեռախոսով ապահովում են դեմքի կենսաչափական ճանաչման միջոցներ՝ նպատակ ունենալով մուտք գործել հեռախոսի օպերացիոն համակարգ: Ապագայում այն կօգտագործվի վճարումների, անվտանգության, առողջապահության, գովազդի, քրեական նույնականացման համար և այլն: Վերջին չորս տասնամյակների ընթացքում այս ոլորտում ինտենսիվորեն կատարվել են հետազոտություններ, և թեև հսկայական առաջընթաց է նկատվել, սակայն դեմքի ճանաչման համակարգերը գործում են սահմանափակ պայմաններում, դրանք հեռու են իդեալականից, երբեմն առաջանում են դժվարություններ բոլոր այն տարբեր իրավիճակներում (թույլ լուսավորություն, որոշակի հատվածի փակ լինել, դեմքի տարբեր դիրքեր), որոնց սովորաբար բախվում են

գործնական կյանքում այդ մեթոդները կիրառող համակարգերը: Այս ոլորտի հետազոտողների, մասնագետների վերջնական նպատակն է հնարավորություն տալ համակարգիչներին ընդօրինակել մարդկային տեսողության համակարգը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Abadi M, Barham P, Chen J, Chen Z, Davis A, Yu Y, Zheng X (2016) TensorFlow: a system for large-scale machine learning. In: Proceedings of the12th USENIX symposium on operating systems design and implementation, pp 265–283
2. Filali H, Riffi J, Mahraz AM, Tairi H (2018) Multiple face detection based on machine learning, pp 1–8
3. Liao S, Jain AK, Li SZ (2016) A fast and accurate unconstrained face detector. IEEE Trans Pattern Anal MachIntell 38(2):211–223
4. Ren Z, Yang S, Zou F, Yang F, Luan C, Li K (2017) A face tracking framework based on convolutional neuralnetworks and Kalman filter. In: Proceeding of 8th IEEE international conference on software engineeringand service science, pp 410–413
5. https://opencv.org/about/
6. https://www.tensorflow.org/learn

FEATURES OF FACE DETECTION AND RECOGNITION SYSTEMS

MASTOYAN KAREN
GSU, Faculty of Natural Sciences,
2nd-year Master student of Computer Engineering Department
e-mail: kmastoyan@mail.ru
Academic Supervisor: Avetisyan Varazdat
PhD in Computer Sciences

Face recognition is a complex practical problem in the field of image analysis and computer vision, and has become widely used in various fields in the past few years. With the astounding growth of video image databases, it became necessary to automatically analyze such databases to extract information using intelligent systems. The face plays an important role in social communication to convey a person's personality and feelings. Humans, unlike machines, cannot recognize a huge number of faces. Thus, automatic face recognition systems play an important role in face recognition, facial expression recognition, head position estimation, human-computer interaction, etc. Face detection is a computer technology that determines the location and size of a human face in a digital image.

The article presents the problems of face recognition, their applications, as well as the most common approaches to solving these problems - algorithms. The structural and functional features of the intelligent identification system for face recognition are described.

Key words: *face detection, face recognition, face recognition systems, artificial intelligence.*

ОСОБЕННОСТИ СИСТЕМ ОБНАРУЖЕНИЯ И РАСПОЗНАВАНИЯ ЛИЦА

МАСТОЯН КАРЕН
Студент 2-го курса магистратуры отделения компьютерная инженерия факультета естественных наук ГГУ
электронная почта: kmastoyan@mail.ru
Научный руководитель: Аветисян Вараздат
Кандидат технических наук

Распознавание лица - сложная практическая проблема в области анализа изображений и компьютерного зрения, и в последние несколько лет оно стало широко использоваться в различных областях. С поразительным ростом баз данных видеоизображений возникла необходимость в автоматическом анализе таких баз данных для извлечения информации с помощью интеллектуальных систем. Лицо играет важную роль в социальном общении, чтобы передать личность и чувства человека. Люди, в отличие от машин, не умеют распознавать огромное количество лиц. Таким образом, системы автоматического распознавания лиц играют важную роль в распознавании лиц, выражения лица, оценке положения головы, взаимодействии человека с компьютером и т. д. Обнаружение лица - это компьютерная технология, которая определяет местоположение и размер человеческого лица в цифровом изображении.

В статье представлены проблемы распознавания лиц, их приложения, а также наиболее распространенные подходы к решению этих проблем – алгоритмы. Описаны структурно-функциональные особенности интеллектуальной идентификационной системы распознавания лиц.

Ключевые слова: *распознавание лиц, обнаружение лиц, системы распознавания лиц, искусственный интеллект.*

ԵՐՐՈՐԴ ՍԵՐՆԴԻ ԲՋՋԱՅԻՆ 3G ՑԱՆՑԻ WCDMCA/UNTS ՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

ԽԵՔՈՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Գավառի պետական համալսարանի
բնագիտական ֆակուլտետի
«Համակարգչային ճարտարագիտություն»
բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ kheqoyanm@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մամիկոն
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,ԳՊՀ պրոֆեսոր

Հոդվածում դիտարկվում են երրորդ սերնդի բջջային կապի ցանցերի աշխատանքի առանձնահատկությունները, հիմնական բնութագրերին ներկայացվող պահանջները, առաջարկվող ծառայությունները և ցանցի կառուցվածքը, կատարված է UMTS ցանցի հիմնական բնութագրերի վերլուծություն:

Բջջային համակարգերը մատուցում են ծառայություններ մեծ թվով բաժանորդների համեմատաբար լայն աշխարհագրական գոտիներում՝ միաժամանակ զբաղեցնելով սահմանափակ և կրկնվող հաճախականային շերտեր: Բջջային հեռակապի միջոցներն ապահովում են բարձրորակ բազմաթիվ ծառայություններ: Ժամանակակից բջջային հեռահաղորդակցման համակարգերը հիմնված են ինչպես անլար, այնպես էլ լարային հեռակապի միջոցների վրա: Բջիջը որոշվում է որպես մի տարածք, որը ծածկված է ռադիոալիքներով: Նրա ձևն ու չափը կախված են մի շարք պարամետրերից, ինչպիսիք են Էֆեկտիվ ճառագայթված հզորությունը (ERP – Effective Radiated Power), ճառագայթող անտենայի ուղղորդված կամ չուղղորդված լինելը, ռադիոալիքների տարածման միջավայրը և այլն:

Բանալի բառեր՝ *բջջային կապ, շարժական կապ, հաճախականային շերտ, UMTS ցանց, լայնաշերտ ազդանշաններ:*

Շարժական կապի համակարգերը, հատկապես բջջային շարժական կապի համակարգերը տիեզերական, հեռուստատեսության և համակարգչային համակարգերի հետ համատեղ հանդիսանում են ինֆորմացիոն հա-

մակարգերում և տեխնոլոգիաներում 20-րդ դարի կարևորագույն նվաճումներից [1]:

Բջջային համակարգի գաղափարը նախատեսում է սպասարկման գոտու բաժանում բազմաթիվ, համեմատաբար փոքր շառավղով հատվածների՝ բջիջների, ինչը հնարավորություն է տալիս պարբերաբար վերաօգտագործել հատկացված հաճախականային շերտ օգտագործելով, սպասարկել զգալի քանակությամբ բաժանորդների:

Բջջային շարժական կապի համակարգերին երբեմն անվանում ենք Mobile կապ: Mobile-նշանակում է շարժական, շարժման մեջ գտնվող: Այս տերմինն օգտագործվում է անվանելու այն հեռակապի համակարգերը, որոնք հնարավորություն են տալիս բաժանորդին փոխել իր աշխարհագրական դիրքը սարքի շահագործման ընթացքում [2]: Այժմ այն փոխել է իր իմաստը, այն մի սարք է, որն ամրացված է մեծ արագությամբ շարժվող մեկ այլ համակարգի վրա (օրինակ՝ բջջային հեռախոսի ամրացումը շարժվող փոխադրամիջոցում): Բաժանորդների ամբողջ խումբը բջջային կապի համակարգերում կոչվում է «մոբիլ»:

Բջջային հեռախոսային համակարգերը ապահովում են ռադիոծածկույթի գոտիներում գտնվող բաժանորդների մուտքը դեպի քաղաքային լարային հեռախոսային ցանց: Բջջային համակարգերը մատուցում են ծառայություններ մեծ թվով բաժանորդների համեմատաբար լայն աշխարհագրական գոտիներում՝ միաժամանակ զբաղեցնելով սահմանափակ և կրկնվող հաճախականային շերտեր: Բջջային հեռակապի միջոցներն ապահովում են բարձրորակ բազմաթիվ ծառայություններ՝ համեմատելի քաղաքային լարային ցանցում մատուցվող ծառայությունների որակի հետ [3]:

Բջջային կապի հաճախականային տիրույթները տարբեր են: Բջջային կապի ծառայությունների համար նախ հատկացվել է 40 ՄՀց չընդլայնված հաճախականային շերտ 800-900 ՄՀց տիրույթում: Բջջային կապի ծավալների արագ աճի պատճառով հետագայում այդ 40ՄՀց շերտին ավելացվեց ևս 10 ՄՀց, այսպես կոչված, ընդլայնված շերտ (ES- Expanded Spectrum):

Կիրառելի հաճախականային շերտը բաժանված է տարբեր ենթաշերտերի, որոնցից ամեն մեկը զբաղեցնում է 12,5ՄՀց, որից 10 ՄՀց-ը՝ NES-ի դեպքում և ևս 2,5-ը՝ ES-ի դեպքում: Յուրաքանչյուր ենթաշերտ բաժանված է 30 ԿՀց շերտով բազմաթիվ ուղիներից, որոնք հատկացված են մեկական բաժանորդների: Այսպիսի բաժանումը ապահովում է (10 ՄՀց բաժանած 30 ԿՀց) 333 ուղի ամեն տիրույթում NES և (2,5 ՄՀց բաժանած 30 ԿՀց) 83 լրա-

ցուցիչ ուղի ES-ի դեպքում: Ուղիների հնարավոր թիվը՝ 333+83=416 ամեն մի ենթաշերտում: Այդ 416-ից 21-ը օգտագործվում են բաժանորդին կապը կազմակերպելու և այլ տեղեկություններ հաղորդելու համար: Մնացած 395-ը ձայնային ուղիներ են և օգտագործվում են խոսակցության համար:

Երրորդ սերնդի բջջային ցանցում իր մեծ գործոնն ունի հեռահաղորդակցության համընդհանուր շարժական համակարգերը (UMTS) կամ ավելի կրճատ՝ WCDMA/UMTS համակարգերը:

GSM ցանցերին փոխարինեցին երրորդ սերնդի (3G- Third Generation) բջջային ցանցերը՝ կապի հեռահաղորդակցության համընդհանուր շարժական համակարգը (UMTS- Universal Mobile Telecommunications System):

3G բջջային կապի տեխնոլոգիա է, որն ապահովում է ծառայությունների լայն տեսականի, որոնք էլ ստեղծում են ինֆորմացիայի փոխանցման հնարավորություն: Այժմ 3G անվան տակ հասկացվում է հիմնականում UMTS տեխնոլոգիան:

UMTS ստանդարտացումն իրականանում է երրորդ սերնդի համագործակցության ծրագրի (3GPP-Third Generation Partnership Project)խմբի միջոցով, որը համապատասխանում է միջազգային հեռահաղորդակցության (ITU-International Telecommunications Union) միությանը:

3G-ն ապահովում է 2 բազային ծառայություններ՝ ինֆորմացիայի և ձայնի փոխանցում: ITU-ի կանոնակարգի համաձայն՝ 3G-ն պետք է համապատասխանի ինֆորմացիայի փոխանցման հետևյալ արագություններին.

- բարձր շարժունակությամբ բաժանորդների համար (մինչև 120 կմ/ժ) – 144 կբիթ/վ-ից ոչ պակաս,
- ցածր շարժունության բաժանորդների համար(3կմ/ժ) – 384կբիթ/վ,
- անշարժ օբյեկտների համար – 2048 կբիթ/վ:

UMTS ցանցերը կազմված են ցանցի մի շարք տրամաբանական տարրերից, որոնցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի գործառույթ:

Ըստ իրենց գործառույթների՝ ցանցի տարրերը խմբավորվում են GSM համակարգում՝ ռադիոհասանելիության ցանցում (RAN- Radio Access Network), իսկ UMTS համակարգում՝ համընդհանուր վերգետնյա ռադիոհասանելության ցանցում(UTRAN –Universal Terrestrial Radio Access Network), որը ռադիոկապի միջոցով իրականացնում է հիմնական գործառույթները և կապը հիմնական ցանցի (CN- Core Network) հետ, որն էլ իր հերթին ապահովում է կապը, տվյալների փոխանակումը, ինչպես ամբողջ համակարգում, այնպես էլ արտաքին ցանցերում:

Համակարգի բաղկացուցիչ մասն է նաև օգտատիրոջ սարքավորումը (UE – User Equipment), որը համակարգի հետ կապ է հաստատում UU – ռադիոինտերֆեյսով: Այն նոր ռադիոկապի տեխնոլոգիայի համակարգին տալիս է համընդհանուր բազա՝ հայտնի և կիրառություն գտած տեխնոլոգիաներից, որն ապահովում է նրա արագ ներդրումը:

Այժմ կատարենք UMTS ցանցի հիմնական բնութագրերի վերլուծություն:

UMTS-ը ուղիղ հերթականությամբ CDMA (DS-CDMA-Direct Sequence CDMA) համակարգ է, այսինքն՝ բաժանորդների ինֆորմացիոն տվյալները փոխանցվում են հաճախության լայն շերտով՝ սկզբնական տվյալների հոսքը բազմապատկելով հաջորդական պատահական բիթերով (չիպեր անվանումով), որն էլ CDMA-ի ընդլայնված կոդն է: Այն ունի փոփոխական ընդլայնման գործակցի օգտագործման և բազմակոդային համագործակցության հնարավորություն՝ հաղորդման մեծ արագությունների ապահովման համար (մինչև 2Մբիթ/վ):

Հաղորդման արագությունը 3,84 Մչիպ/վ է, որը հանգեցնում է մոտ 2ՄՀց շերտի զբաղվածության: WCDMA համակարգին բնորոշ շերտի մեծ լայնությունն ապահովում է օգտագործողներին տեղեկությունների հաղորդման բարձր արագություն, ինչպես նաև ստեղծում է որոշ աշխատանքային առավելություններ, օրինակ, բարձր բազմաճառագայթային ուղիներում: Չխախտելով հաճախականային լիցենզիայի պահանջները՝ օպերատորը 5ՄՀց շերտում կարող է ունենալ մի քանի այդպիսի կրողներ, որով մեծացվում է թողունակությունը: Տվյալ դեպքում բջիջներում հնարավոր է հիերարխիկ կառուցվածք: Փաստացի, կախված կրողների ինտերֆերենցիայի մակարդակից, այդպիսի կրողների բազմազանությունը կարելի է իրականացնել և 200կՀց ցանցով մոտ 4,4 և 5 ՄՀց շերտում:

UMTS-ն ունի օգտագործողների տվյալների հաղորդման շատ տարբեր արագություններ, այլ խոսքով, շերտի լայնության ստացում ըստ պահանջի: Յուրաքանչյուր օգտագործողին առանձնացվում է 10 մվ տևողությամբ կադր (Frame), որոնցից յուրաքանչյուրի ընթացքում, տվյալների հաղորդման արագությունը մնում է հաստատուն: Սակայն տվյալների հաղորդման համար թողունակության հնարավորությունը կարող է փոփոխվել մի կադրից մյուսը:

UMTS-ը ունի երկու հիմնական աշխատանքային ռեժիմ՝ կապուղիների հաճախականային երկակի տարանջատմամբ FDD (Frequency-Division Duplexing) և TDD ռեժիմներ: FDD ռեժիմում վերբեռնման և ներբեռնման ուղիների համար օգտագործվում են տարբեր՝ 5 ՄՀց լայնությամբ հաճախա-

կանային կրողներ, մինչդեռ TDD ռեժիմում՝ միայն մեկ 5ՄՀց լայնությամբ հաճախականային կրող: TDD ռեժիմը էականորեն հիմնված է FDD ռեժիմի սկզբունքի վրա և ներկայացված է, որպեսզի հիմանական WCDMA համակարգը նույնպես օգտագործվի ոչ սիմետրիկ բաշխված հաճախականային շերտում:

UMTS-ը բազային կայանների հետ աշխատանքն ապահովում է ասինքրոն, այնպես որ, ի տարբերություն սինքրոն կապերի, բացակայում է համընդհանուր ժամանակի համակարգի անհրաժեշտությունը, օրինակ, գլոբալ տեղորոշման համակարգը (GPS- Globak Positioning System), որը նաև ժամանակի տվյալներ է հաղորդում:

UMTS-ի հիմնական պարամետրերը բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Բազմակի մուտքի հնարավորության մեթոդը	DS-CDMA
Երկկողմ բաժանում	Հաճախության /ժամանակի երկակի բաժանում
Բազային կայանների սինքրոնացում	Ասինքրոն աշխատանք
Չիպերի հաղորդման արագություն	3,84 *Մչիպ/վ*
Կադրի տևողություն	10 *մվ*
Մուլտիպլեքսավորում սպասարկման ժամանակ	Բազմազան ծառայություններ, տարբեր որակի սպասարկման պահանջների բավարարմամբ
Հաղորդման մեծ արագությունների գաղափար	Ընդլայնման փոփոխական գործակից և մուլտիկոդ
Ընդունում	Օգտագործելով Կոհերենտ ղեկավար-նշաններ և ընդհանուր ղեկավար-ազդանշաններ:
Բազմաթիվ բաժանորդների ընդունում, խելացի անտենաներ	Ստանդարտների ապահովմամբ, ըստ ցանկությամբ իրականացման համար

UMTS-ի ռադիո ինտերֆեյսը կառուցված է այնպիսի եղանակով, որ ցանցի օպերատորը կարող է օգտագործել CDMA-ի ընդունիչների կառուցման հեռանկարային հայեցակարգը (կոնցեպցիան), օրինակ, բազմաթիվ բաժանորդների ընդունում և խելացի, ինտելեկտուալ, հարմարեցվող անտենաների կիրառում՝ որպես եղանակ թողունակության հնարավորության մեծացման կամ ծածկույթի ապահովում ցանկացած կետում: Երկրորդ սերնդի

շատ համակարգերում բացակայում է այսպիսի ընդունիչների կառուցման հայեցակարգի օգտագործման հնարավորությունը, և արդյունքում նրանք կամ չէին կարողանում կիրառել կամ կիրառում էին միայն մեծ սահմանափակումներով և տալիս էին գործառական ցուցանիշների ոչ էական բարելավում:

UMTS-ը նախատեսված է GSM-ի հետ համատեղ օգտագործման համար: Այդ իսկ պատճառով ապահովվում է կառավարման փոխանջատման (Handover) ղեկավարումը GSM- ի և UMTS-ի միջև:

Ստորև բերված բանաձևից երևում է, որ խոսքի փոխանցումը 12,2 կբիթ/վ արագությամբ սպեկտրի ընդլայնման հաշվին շահում է 25դԲ-ով:

$$10\lg\left(\frac{3{,}84.10^{6}}{12{,}2.10^{3}}\right)=25,$$

Խոսքի հաղորդման համար Eb/N0, այն կազմում է մոտավորապես 5դԲ, ուստի լայնաշերտ ազդանշանի խանգարումները հավասար են 5դԲ-ից հանած մշակման ժամանակ շահած 25դԲ-ը (5-25=-20 դԲ): Այլ խոսքով, ազդանշանի հզորությունը կարող է լինել 20դԲ-ով ցածր խանգարումների հզորությունից և ջերմային աղմուկից, իսկ WCDMA ընդունիչը դեռ ունի ազդանշան ընդունելու հնարավորություն: Լայնաշերտ ազդանշանի և խանգարումների հարաբերությունը նույնպես կոչվում է հաճախության կրողների C/I ազդանշան-աղմուկ հարաբերություն: WCDMA-ում այն ավելի փոքր արժեք ունի, քան, օրինակ, GSM-ում, շնորհիվ ընդլայնման և C/I փոքրացման: Խոսակցային տրաֆիկը GSM-ում պահանջում է C/I = 9-12դԲ:

Նշենք այն համակարգերի առավելությունները, որոնք ունեն ազդանշանի կոդային տարանջատմամբ ուղիներ:

- Ազդանշան-աղմուկ հարաբերության շահման համախմբությունը ազդանշանի լայնաշերտ բնույթի հետ տալիս է կրկնակի հաճախության օգտագործման լիակատար հնարավորություն (կրկնման գործակիցը հավասար է 1-ի) բջջային ցանցի տարբեր սեկտորներում (այսպիսով հաճախությունը կրկնվում է յուրաքանչյուր բջջում/սեկտորում): Այդ հատկությունը կարելի է օգտագործել հաճախականային շերտի օգտագործման բարձր արդյունավետություն ստանալու համար:
- Նույն լայնաշերտ կրիչում շատ բաժանորդների համատեղ օգտագործումը նրանց կապի համար ապահովում է խանգարումներով բաժանում, այսպիսով, խանգարումները բազմակի մուտքի հնարավորության ժամանակ

դեպի բազմաթիվ բաժանորդներով ցանցեր միջինացվում են, և դա նորից հանգեցնում է թողունակության հնարավորության մեծացման այլ համակարգերի նկատմամբ:

- Միաժամանակ վերը թվարկված երկու առավելությունը պահանջում է հզորության ավելի մանրամասն կառավարում և սահուն (soft) փոխանջատում՝ բացառելու համար օգտագործողների միջև ազդանշանի խափանումները:

Լայնաշերտ ազդանշանների օգտագործման ժամանակ տարբեր ճանապարհներով ռադիոազդանշանի տարածումը կարող է հանգեցնել ավելի մեծ ճշտության ստացման, քան ավելի նեղ շերտով ազդանշանների դեպքում: Դա կբերի մարումների դեմ ավելի տարբեր հնարավորությունների ստացմանը և աշխատանքների կատարման բարելավմանը:

Այսպիսով, հոդվածում ներկայացվեցին երրորդ սերնդի բջջային կապի ցանցերի աշխատանքի առանձնահատկությունները, հիմնական բնութագրերին ներկայացվող պահանջները, առաջարկվող ծառայությունները և ցանցի կառուցվածքը; Կատարվել է նաև UMTS ցանցի հիմնական բնութագրերի վերլուծություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Гельгор А. Л., Попов Е. А., Сотовые сети мобильной связи стандарта UMTS:// Учеб. пособие, СПб., Изд-во Политехн. ун-та, 2010, 227 с.
2. Тихвинский В. О., Терентьев С. В., Юрчук А. Б., Сети мобильной связи LTE. Технологии и архитектура, 2010, 284с.
3. Кааринен Х., Сети UMTS. Архитектура, мобильность, сервисы: Техносфера, 2007, 464 стр.

IMPORTANCE OF WCDMCA/UNTS MOBILE 3G MOBILE NETWORK AND KEY FUNCTIONS

KHEKOYAN MARIAM
3rd-year undergraduate student,
Department of Computer Engineering
Faculty of Natural Sciences, Gavar State University
e-mail: kheqoyanm@mail.ru
Academic Supervisor: Hakobyan Mamikon
PhD in Technical Sciences, Associate Professor

The article discusses the peculiarities of the work of the third generation mobile networks, the requirements for the main features, the services offered, the network structure, the analysis of the main features of the UMTS network.

Mobile systems provide services to a large number of subscribers over relatively large geographical areas while occupying limited, repetitive frequency bands. Mobile telephony services provide many high quality services. Modern mobile telecommunication systems are based on both wireless and wired telecommunications. The cell is defined as an area covered by radio waves. Its size depends on a number of parameters, such as the Effective Radiated Power (ERP), the direction of the radiant antenna, the radio propagation environment, and so on.

Key words: *mobile connection, frequency band, UMTS network, broadband signals.*

ЗНАЧЕНИЕ И ОСНОВНЫЕ ФУНКЦИИ МОБИЛЬНОЙ СЕТИ ТРЕТЬЕГО ПОКОЛЕНИЯ 3G МОБИЛЬНОЙ СИСТЕМЫ WCDMCA/UNTS

ХЕКОЯН МАРИАМ
Студентка 3-его курса отделения компьютерная
инженерия факультета естественных ГГУ,
электронная почта: kheqoyanm@mail.ru
Научный руководитель: Акопян Мамикон
Кандидат технических наук доцент,
профессор Гаварского государственного университета

В статье рассматриваются особенности работы мобильных сетей третьего поколения, требования к основным характеристикам, предлагаемые услуги, структура сети, анализ основных характеристик сети UMTS.

Мобильные системы предоставляют услуги большому количеству абонентов на относительно больших географических территориях, занимая при этом ограниченные повторяющиеся полосы частот. Услуги мобильной связи предоставляют множество высококачественных услуг. Современные системы мобильных телефонов основаны как на беспроводной, так и на проводной связи. Ячейка определяется как область, покрытая радиоволнами. Его размер зависит от ряда параметров, таких как эффективная излучаемая мощность (ERP), направление излучающей антенны, среда распространения радиоволн и т. д.

Ключевые слова: *мобильная связь, диапазон частот, сеть UMTS, широкополосные сигналы.*

CLIENT-SERVER ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՔՈԼՈՋՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ
Գավառի պետական համալսարանի
բնագիտական ֆակուլտետի
«Համակարգչային ճարտարագիտություն»
բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ qmarieta@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հակոբյան Մամիկոն
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

Հոդվածում մեկնաբանվում է client-server համակարգի արձանագրությունների համեմատական վերլուծությունը: Աշխատանքում կատարվում է client-server համակարգի ուսումնասիրում, client-server մոդելի ընտրություն՝ կախված առաջադրված խնդիրների բարդությունից:

Ընդհանուր առմամբ, որպեսզի աշխատանքային կայանում աշխատող կիրառական ծրագիրը կարողանա որոշ սերվերներից ծառայություններ պահանջել, նվազագույնը անհրաժեշտ է որոշակի միջավայրային ծրագրային շերտ՝ նմանատիպ փոխգործակցությունը ապահովող: Դրանից հետևում է client-server համակարգի ճարտարապետության հիմնական սկզբունքները:

Համակարգը բաժանվում է երկու մասի՝ հաճախորդի և սերվերի, որոնք կարող են իրականացվել ցանցի տարբեր հանգույցներում: Կիրառական ծրագիրը կամ հաճախորդը փոխհամագործակցում է համակարգի հաճախորդի մասի հետ, որն ամենապարզ դեպքում ապահովում է պարզապես միջցանցային միջավայր: Սերվերային մասի ինտերֆեյսը սահմանված և ֆիքսված է: Համակարգի հիմնական խնդիրը, հիմնված client-server ճարտարապետության վրա, այն է, որ համաձայն բաց համակարգերի համագործակցության հայեցակարգի՝ նրանցից պահանջվում է շարժունակություն բաց համակարգերի, որքան հնարավոր է, լայն դասի ապարատածրագրային լուծումներ:

Բանալի բառեր՝ *client-server համակարգ, TCP/IP արձանագրություններ, կիրառական փաթեթներ, ծառայողական ծրագրեր, ինտերնետ արձանագրություն:*

Ի՞նչ է իրենից ներկայացնում client-server(հաճախորդ/սերվեր) համակարգը: Հաճախորդ սերվեր՝ համակարգչային կամ ցանցային ճարտարապետություն, որում առաջադրանքները կամ ցանցային ծանրաբեռնվածությունը բաշխված է ծառայություն մատուցողների միջև, որոնք կոչվում են սերվերներ, իսկ ծառայության պատվիրատուն՝ հաճախորդ: Ֆիզիկապես հաճախորդ և սերվեր, դա նշանակում է ծրագրային ապահովում: Որպես կանոն՝ նրանք համագործակցում են համակարգչային ցանցի միջոցով ցանցային արձանագրությունների օգնությամբ, որոնք գտնվում են տարբեր համակարգիչներում, բայց կարող են իրականացվել նաև մեկ համակարգչում:

Ծրագրերը, գտնվելով server-ում, սպասում են հաճախորդի կողմի ծրագրերի հայցերին, և վերջիններիս իր ռեսուրսները նա ներկայացնում է տվյալների տեսքով (օրինակ՝ ֆայլերի բեռնում HTTP, FTP, BitTorrent կամ հոսքային մուլտիմեդիայի միջոցով) կամ ցանցային գործողություններով:

Client-server (հաճախորդ/սերվեր) համակարգը ի հայտ է եկել բիզնեսի զարգացման և պահանջարկի փոփոխությունների ավելացման հետևանքով: Client-server-ը հիերարխիկ կառուցվածք ունեցող համակարգչային ցանց է, որտեղ server-ը հանդիսանում է կենտրոնական մեքենա, իսկ client-ները՝ նրա հետ աստղաձև առնցանց կապով կապված մեքենաները (համակյարգիչներ):

Իրենց աշխատանքի ժամանակ client-ները ցանկացած պահի կարող են դիմել server-ին՝ որոշակի ինֆորմացիա ստանալու նպատակով: Իսկ server-ը պատասխանում է client-ների կողմից ուղղված հարցումներին [1]:

Client-server-ի ճարտարապետությունն օգտագործվում է մեծ թվով ցանցային տեխնոլոգիաներում՝ ցանցային տարբեր ծառայություններ մուտք գործելու համար: Սկզբնապես նրանք ներկայացնում էին հիպերտեքստային փաստաթղթերի՝ HTTP (Huper Text Transfer Protocol, արձանագրությունների միջոցով:

Client-server ճարտարապետության հիմնական գաղափարը ցանցը բաժանելն է մի քանի բաղադրիչների, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է ծառայությունների որոշակի փաթեթ:

Ցանցի բաղադրիչները կարող են աշխատել տարբեր համակարգիչներում՝ կատարելով server-ի և (կամ) հաճախորդի գործառույթներ: Սա բարելավում է ցանցի ծրագրերային ապահովումը, ցանցի հուսալիությունը, անվտանգությունը և արագագործությունը [2,3]:

Client-server համակարգում հանգույցների փոխազդեցությունը հիմնված է TCP/IP (transmission control protocol/Internet protocol ցանցային մոդել՝ տվյալների փոխանակման համար) հերթի /ստեկի/ արձանագրությունների վրա:

TCP/IP արձանագրություններում օգտագործվում է հասցեավորման համընդհանուր համակարգ, որը կախված չէ առանձին ցանցերում օգտագործվող եղանակներից: Հասցեավորման այդ համակարգը պետք է լինի ընդհանրական /ունիվերսալ/ և միարժեքորեն որոշի բաղադրյալ ցանցի միջավայրը /ինտերֆեյսը/:


Խնդիրը լուծվում է հետևյալ կերպ.

- սկզբում կատարվում է բաղադրյալ ցանցում ընդգրկված բոլոր ենթացանցերի համարակալումը,
- դրանից հետո համարակալվում են յուրաքանչյուր ենթացանցի բոլոր հանգույցները, ընդ որում TCP/IP տեխնոլոգիայում հանգույցի հասցեն ոչ մի կերպ կախված չէ տեղային/լոկալ/ տեխնոլոգիաներում օգտագործվող հասցեավորումից:

TCP/IP տեխնոլոգիայում ցանցային հասցեն անվանում են IP-հասցե: Երբ տեղային/լոկալ/ ցանցով փաթեթը ուղարկվում է հասցեատիրոջը, դրա վերնագրում նշվում է ստացման հանգույցի IP-հասցեն: Ըստ ցանցի համարի՝ ամեն հերթական ուղևորիչ /մարշրուտիզատոր/ գտնում է հաջորդ երթուղիչի IP-հասցեն և դրա հիման վրա՝ այդ ուղևորիչի տեղային հասցեն: Այդ նպատակով IP արձանագրությունը դիմում է TCP/IP հերթի /ստեկի/ մի այլ արձանագրության՝ ARP-ին (Address Resolution Protocol), որը IP-հասցեն դինամիկորեն ձևափոխում է MAC-ի (media access control):

TCP/IP հերթում /ստեկում/ գոյություն ունի հատուկ՝ դոմեյնային անունների համակարգ DNS (Domain Name Server), որի միջոցով սահմանվում է այդ համապատասխանությունը ցանցի ադմինիստրատորների կողմից ստեղծվող աղյուսակների հիման վրա: Ընդհանուր դեպքում ցանցային միջավայրը /ինտերֆեյսը/ կարող է ունենալ մի քանի լոկալ հասցեներ, IP հասցեներ և դոմեյնային անուններ (կախված ինտերֆեյսների քանակից):

Client-serverհամակարգում հանգույցների փոխազդեցությունը հիմնված է TCP/IP հերթի արձանագրությունների վրա: Այսօր TCP/IP–ի ստեկը ամենատարածվածն է և լայնորեն օգտագործվում է ինչպես համընդհանուր, այնպես էլ տեղային ցանցերում: Ստորև բերված է TCP/IP ստեկի կառուցվածքը (նկ. 1):



Նկ. 1. TCP/IP ստեկի կառուցվածքը:

TCP/IP-ի ստեկում առանձնացված են 4 մակարդակներ:

Կիրառական մակարդակ: Գործում է OSI (Open Systems Interconnection) մոդելի կիրառական և ներկայացման մակարդակների հետ (TCP/IP կիրառական բնույթի բազմաթիվ արձանագրություններ և ծառայություններ՝ FTP, HTTP, SNMP, TELNET) [1]:

Բոլոր կիրառական փաթեթները և ծառայողական ծրագրերը գտնվում են այս մակարդակում, և նրանք տվյալ մակարդակը օգտագործում են ցանց մուտք գործելու համար: Տվյալների կազմման և փոխանակման համար օգտագործվում է այս մակարդակի արձանագրությունները:

HTTP (HyperText Transfer Protocol, հիպերտեքստի փոխանցման արձանագրություն) ի սկզբանե նախատեսված էր HTML(HyperText Markup Language, հիպերտեքստի գծանշման լեզու) ֆորմատի հիպերտեքստային փաստաթղթեր փոխանցելու համար, բայց այժմ օգտագործվում է ցանկացած տիպի տվյալ փոխանցելու համար: HTTP-ի հիմքն է հանդիսանում client-server տեխնոլոգիան, որը ենթադրում է client-ների, որոնք նախաձեռնում են կապը և ուղարկում են հարցումներ, և server-ները, որոնք «պատասխանում» են ուղարկվող հարցումներին: Ներկայումս HTTP արձանագրությունը համընդհանուր օգտագործվում է համացանցում՝ վեբ կայքերից ինֆորմացիայի ստացման համար: Հաղորդագրությունների փոխանակումը տեղի է ունենում հարցում-պատասխան սխեմայով:

HTTP արձանագրության ռեսուրսները նույնականացնելու /իդենտիֆիկացնելու/ համար օգտագործում են համընդանուր /գլոբալ/ URL (Uniform Resource Locator, Միատեսակ ռեսուրսների լոկատոր):

FTP (File Transfer Protocol,ֆայլերի փոխանցման արձանագրություն) ստանդարտ արձանագրություն է, որը նշանակված է TCP ցանցերում ֆայլերի փոխանցման համար: Այս արձանագրությունը ևս կառուցված է client-server տեխնոլոգիայով և օգտագործում է տարբեր ցանցային միացումներ՝ client-ի և server-ի միջև հրամանների և ֆայլերի փոխանցման համար: FTP-ի օգտատերերը կարող են անցնել աուտենտիֆիկացիա՝ փոխանցելով իրենց մուտքանունները և գաղտնաբառերը բաց տեսքով կամ միանալ անանուն, եթե դա թույլատրված է server-ի կողմից: Կարելի է կիրառել նաև SSH (Secure Shell, անվտանգ վահանակ) արձանագրությունը՝ անվտանգ փոխանցման համար՝ թաքցնելով /գաղտնագրելով/ մուտքանունն ու գաղտնաբառը, ինչպես նաև գաղտնագրում է պարունակությունը: Այն համարվում է ծերացող կիրառական արձանագրություն, ի հայտ է եկել մինչ HTTP և TCP արձանագրությունները՝ 1971թ.-ին:

SMTP (Simple Mail Transfer Protocol, փոստի փոխանցման պարզ արձանագրություն) ցանցային արձանագրությունը ունի լայն կիրառում, նախատեսված է TCP/IP ցանցերում էլեկտրոնային փոստի փոխանցման համար:

Այն ստեղծվել է 1982թ.-ին, վերջին թարմացումը եղել է 2008թ.-ին, և իր մեջ ներառել է ESMTP (ExtendedSMTP, ընդլայնված SMTP): SMTP-ն օգտագործում է TCP 25 կցիչը /պորտը/:

FTP արձանագրության հիմնական տարբերությունը HTTP-ից այն է, որ FTP-ն օգտագործում է բազմակի (նվազագույնը՝ կրկնակի) միացում: Ընդ որում մի կապուղին համարվում է ղեկավարող, որով server-ին են փոխանցվում հրամանները (սովորաբար դա TCP 21 կցիչն է), իսկ մնացածներով տեղի է ունենում տվյալների հիմնական փոխանցումը: Այդ պատճառով է, որ մի սեսիայի ժամանակ հնարավոր է լինում փոխանցել միաժամանակ մի քանի ֆայլեր, ընդ որում երկու ուղությամբ: FTP-ն ունի փոխանցման երկուական ռեժիմ, ինչը փոքրացնում է ավելորդ կեղծ տրաֆիկը և մեծ ֆայլեր ուղարկելու ժամանակը: HTTP-ն պարտադիր պահանջում է երկուական ինֆորմացիան կոդավորել տեքստային ձևով, օրինակ Base64 ալգորիթմի օգնությամբ:

Աղյուսակ 1.

Հատկություն	FTP	HTTP
Հիմնված է սեսիաների վրա	այո	ոչ
Ներկառուցված է օգտատերերի աուտենտիֆիկացիա	այո	ոչ
Հիմնականում նախատեսում է փոխանցել	Մեծ երկուական ֆայլեր	Ոչ մեծ տեքստային ֆայլեր
Միացման մոդելը	Կրկնակի միացում	Մեկանգամյա միացում
Հիմնականում ադապտացված է ընդունում/հաղորդում	Ընդունում և հաղորդում	ընդունում
Ապահովում է տեքստային և երկուական փոխանցման ռեժիմ	այո	ոչ
Ապահովում է փոխանցվող տվյալների տիպի նշում (MIME վերնագրեր)	ոչ	այո
Թույլ է տալիս ֆայլային համակարգի հետ գործողություններ կատարել (mkdir, rm, rename)	այո	ոչ

FTP արձանագրությամբ աշխատելու դեպքում client-ի ներառվում է սեսիայի մեջ, և բոլոր գործողությունները կատարվում են այդ սեսիայի շրջանակում (կարճ ասած՝ սերվերը հիշում է ընթացիկ վիճակը): HTTP-ն ոչինչ չի հիշում, նրա խնդիրը միայն փոխանցելն է, դրա համար HTTP-ի դեպքում հիշելու պրոցեսը կատարվում է արձանագրության համեմատ արտաքին մեթոդների կիրառմամբ:

Տրանսպորտային մակարդակ: Այս մակարդակը գործում է OSI-ի սեանսային և տրանսպորտային մակարդակների հետ: Այն համարվում է նաև հիմնական մակարդակ: Տրանսպորտային մակարդակը հնարավորություն է տալիս պատվիրել և հաստատել կապ երկու հանգույցների միջև: Այս մակարդակում է տրվում նաև կիրառական փաթեթների յուրահատուկ նշիչնե-

րը, որոնց համար և նախատեսվում են այդ տվյալները: Մակարդակում են գործում TCP և UDP [2,3]:

TCP(Transmission Control Protocol, հաղորդումների ղեկավարման արձանագրություն) - Ապահովում է հեռավոր համակարգերի հետ տվյալների հաղորդման հուսալի կապ վիրտուալ միացությունների հաստատման միջոցով: TCP-ն տալիս է հնարավորություն համակարգիչներից մեկից բայթերի հոսքը առանց սխալների առաքել ցանկացած այլ համակարգիչ, որը մտնում է բաղկացուցիչ ցանցի մեջ: TCP-ն բայթերի հոսքը բաժանում է ֆրագմենտների և փոխանցում ցածր մակարդակին: Այն բանից հետո, երբ միջցանցային համագործակցության մակարդակի միջոցների շնորհիվ այդ ֆրագմենտները կհասնեն հասցեավորիչ, TCP արձանագրությունը նորից հավաքում է դրանք բայթերի անընդհատ հոսքում:

UDP(User Datagram Protocol, օգտագործողների դեյտագրամի արձանագրություն) – Ապահովում է կիրառական փաթեթների հաղորդումը դեյտագրամների մեթոդով: UDP-ն թույլ է տալիս իրականացնել տվյալների արագ, բայց ոչ հուսալի փոխանցում: UDP-ի օգտագործման ժամանակ տվյալների ստացման վերաբերյալ հաստատման պահանջ չի ներկայացվում, որը հանգեցնում է նրան, որ ավելի քիչ տվյալներ են հաղորդվում, բայց վստահված «առաքումը» չի երաշխավորվում: UDP-ն օգտագործվում է բազմահասցե հաղորդագրությունների փոխանցման, ինչպես նաև ոչ կարևոր տեղեկությունների հաղորդման համար:

Տրանսպորտային մակարդակը կիրառական մակարդակից ստանում է տվյալների հաղորդման խնդիրը, իսկ կատարումից հետո տեղեկացնում է նրան դրա մասին:

TCP արձանագրության հիմնական տարբերությունը UDP-ից այն է, որ այն ապահովում է տվյալների երաշխավորված փոխանցում հասցեատիրեջը այն դեպքում, երբ UDP-ն չի հետևում տվյալների փոխանցման ընթացքին:

Աղյուսակ 2.

Հատկություն	TCP	UDP
Միացում	Կապի հաստատմամբ արձանագրություն	Առանց կապի հաստատման
Կիրառություն	Կիրառվում է ծրագրերում, որոնք պահանջում են բարձր հուսալիություն և որոնցում փոխանցման ժամանակը կրիտիկական չէ	Կիրառվում է ծրագրերում, որտեղ կարևորվում է փոխանցման արագությունը
Օրինակ	HTTP, HTTPs, FTP, SMTP, Telnet	DNS, DHCP, TFTP, SNMP, RIP, VOIP.
Տվյալների փաթեթների դասակարգում	Ներկայացնում է փաթեթները տրված հերթականությամբ	Բոլոր փաթեթները միմյանցից անկախ են և նրանց վերադասավորումը կատարվում է կիրառական մակարդակում
Փոխանցման արագություն	Ավելի դանդաղ է, քան UDP-ն	UDP արագ է, քանի որ փաթեթներում չի կատարում սխալների ստուգում
Հուսալիություն	Բացարձակ երաշխավորում է այն, որ տվյալները փոխանցվելիս կմնան անփոփոխ, և կժամանեն նույն կարգով, որով ուղարկվել են:	Չի երաշխավորում, որ ուղղարկված փաթեթները բոլորը տեղ կհասնեն:
Վերնագրի ծավալ	TCP-ի վերնագրի ծավալը 20 բայթ է	UDP-ի վերնագրի ծավալը 8 բայթ է
Վերնագրի հիմնական դաշտերը	Ուղարկողի կցիչ /պորտ/, ստացողի կցիչ, ստուգող գումար	Ուղարկողի կցիչ, ստացողի կցիչ, ստուգող գումար
Տվյալների հոսքի կառավարում	TCP-ն ապահովում է հոսքի կառավարում. TCP-ն պահանջում է երեք փաթեթ մինչև կապի սեղծումը և օգտատիրոջ տվյալների ուղարկումը: Ապահովում է հուսալիություն և գերբեռնամ վերահսկում:	UDP չունի հոսքի կառավարման ֆունկցիա
Կապի հաստատում	SYN, SYN-ACK, ACK	Առանց հաստատման
Ճշտության ստուգող գումար	այո	ոչ

Ինտերնետ մակարդակ: Այս մակարդակը գործում է OSI-ի ցանցային մակարդակի հետ, որը ապահովում է փաթեթների հաղորդումը՝ օգտագործելով տեղային, համընդհանուր, տարածաշրջանային և հատուկ կապի գծերը և տարբեր տրանսպորտային միջոցները: Այս մակարդակի հաղորդակարգերը /պրոտոկոլները/ ապահովում են միջավայրը տրանսպորտային մա-

կարդակի հետ՝ ստանալով նրանից բաղկացուցիչ ցանցով տվյալների հաղորդման հարցումներ: Մակարդակը պատասխանատու է նաև տվյալների հասցեավորման, երթուղավորման և փաթեթավորման համար:

Մակարդակն ունի չորս հիմնական արձանագրություններ՝

IP (Internet Protocol) – Ինտերնետ արձանագրություն, որը պատասխանատու է փոխանցվող տվյալների հասցեավորման և նշանակման վայր հասցնելու համար առանց միացումների կազմակերպման: Նպատակն է հաղորդել փաթեթը ցանցերի միջև մի երթուղավորիչից մյուսին այնքան ժամանակ, մինչև փաթեթը կհասնի հասցեավորիչ ցանց: IP փաթեթները կոչվում են դեյտագրամներ:

TSP/IP-ի ինտերնետ մակարդակին հաճախ վերագրում են արձանագրություններ, որոնք IP-ին «օգնելու» ֆունկցիաներ են կատարում: Դրանք հիմնականում երթուղավորման RIP և OSPF պրոտոկոլներն են, որոնց խնդիրն է ցանցի տոպոլոգիայի ուսումնասիրումը, երթուղու որոշումը և երթուղավորման աղյուսակների կազմումը, որոնց հիման վրա էլ IP-ն հաղորդում է փաթեթները համապատասխան ուղղությամբ:

ARP (Address Resolution Protocol) – Նախատեսված է նպատակային հասցեում գտնվող համակարգչի ցանցային քարտի MAC (Media Access Control) որոշելու համար:

Ցանցային ինտերֆեյսի մակարդակ: Այս մակարդակը գործում է OSI-ի ֆիզիկական և կապուղային մակարդակների ստանդարտների հետ: OSI-ի ֆիզիկական և կապուղային մակարդակները իրագործում են մեծ քանակությամբ ֆունկցիաներ՝ կադրերի ձևավորում, էլեկտրական ազդանշանների մակարդակների համաձայնեցում, կոդավորում և այլն: Բոլոր այս ֆունկցիաները իրագործվում են տվյալների փոխանակման այնպիսի պրոտոկոլներով, ինչպիսիք են Ethernet, Token Ring, PPP, և այլն: TCP/IP-ի հերթի ամենացածր մակարդակի խնդիրը շատ ավելի հեշտ է: Այն պատասխանում է միայն բաղկացուցիչ ցանցի կազմի մեջ մտնող ցանցերի տեխնոլոգիաների փոխգործունեության կազմակերպման համար: TCP/IP-ն բաղկացուցիչ ցանցի մեջ մտնող ցանկացած ցանց դիտում է որպես փաթեթների տեղափոխման միջոց՝ մեկից մյուսին երթուղավորիչի ճանապարհով:

TCP/IP տեխնոլոգիայի և ցանկացած այլ տեխնոլոգիայի միջև միջավայրի ապահովման խնդիրը կարելի է բերել՝

- IP փաթեթի՝ միջանկյալ ցանցի հաղորդվող տվյալների միավորում տեղավորման /ինկապսուլյացիա/ մեթոդի որոշմանը,

- ցանցային հասցեների՝ տվյալ միջանկյալ ցանցի տեխնոլոգիայի հասցեների վերափոխման մեթոդի որոշմանը,
- Ցանկացած նոր տեխնոլոգիայի համար պետք է մշակվեն սեփական միջավայրային միջոցներ: TCP/IP-ի հերթի ցանցային մակարդակը չի ներկայացվում հատուկ արձանագրությունների միջոցով: Այն պահպանում է բոլոր տարածված տեխնոլոգիաները :
- Ethernet, Fast Ethernet, Gigabit Ethernet Token Ring, FDDI, լոկալ ցանցերի համար:
- SLIP և PPP գլոբալ ցանցերի համար:
- Frame Relay, MPLS, ATM:

Եզրահանգում

Կատարելով client-server համակարգի ուսումնասիրում և համակարգի արձանագրությունների վերլուծություն՝ կարող ենք եզրակացնել, որ client-server մոդելի ընտրությունը կախված է առաջադրված խնդիրների բարդությունից, այդուհանդերձ գոյություն ունեցող մոդելները թույլ են տալիս ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխան բաշխված ինֆորմացիոն համակարգեր:

Client-server արձանագրությունների համեմատական վերլուծությունը թույլ է տվել խնդրի բնույթից կախված ընտրություն կատարել արձանագրությունների միջև՝ հաշվի առնելով դրանց առավելությունները և թերությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Таненбаум Э., Уэзеролл Д., Компьютерные сети, 5-е изд., СПб., Питер, 2012, 960 с.
2. Столлингс В., Современные компьютерные сети, 2-е изд., СПб., Питер, 2003,- 783 с.:
3. Дуглас Э., Камер, Сети TCP/IP, Том 1, Принципы, протоколы и структура. М., Вильямс, 2003, 848 с.

COMPARATIVE ANALYSIS OF CLIENT-SERVER SYSTEM PROTOCOLS

QOLOZYAN MARIETA
3rd-year undergraduate student,
Department of Computer Engineering
Faculty of Natural Sciences, Gavar State University
e-mail: qmarieta@mail.ru
Academic Supervisor: Hakobyan Mamikon
PhD in Technical Sciences, Associate Professor

The article interprets the comparative analysis of the protocols of the client-server system. The article studies the client-server system and the choice of client-server model depending on the complex of the problems.

In general, in order to make the application program work on some servers, minimum environmental software is needed to provide similar environmental layer. It follows the basic principles of the client-server system architecture. The system is divided into two parts: client and server that can be implemented in different network nodes. The applied program or the customer is mutually connected with the part of the system's client, which simply provides an internal environment. The interface of server part is identified and fixed. The main problem of the system based on client-server architecture, is that according to the concept of interaction between open systems for the mobility of open systems, a maximum wide spectrum of hardware and software solutions is required.

Key words: *client-server system, TCP / IP protocols, application packages, utilities, Internet protocol.*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПРОТОКОЛОВ СИСТЕМЫ КЛИЕНТ-СЕРВЕР

КОЛОЗЯН МАРИЕТА
студентка 3-ого курса отделения
компьютерной инженерии факультета
естественных наук ГГУ
электронная почта: qmarieta@mail.ru
Научный руководитель: Акопян Мамикон
кандидат технических наук доцент,
профессор Гаварского государственного университета

В статье представлен сравнительный анализ протоколов клиент-серверной системы. В работе изучается клиент-серверная система, выбор модели клиент-сервер в зависимости от сложности заданных задач. В целом, чтобы прикладная

программа нуждалась в услугах некоторых серверов, требуются, как минимум, определённый программный уровень, обеспечивающий такое взаимодействие. Отсюда и следуют основные принципы архитектуры системы клиент-серверной системы. Система разделена на две части, клиент и сервер, которые могут быть реализованы в разных сетевых узлах. Прикладная программа или клиент взаимодействует с клиентской частью системы, которая в простейшем виде просто обеспечивает межсетевое окружение. Интерфейс участка сервера определен и исправлен. Основная проблема системы, основанной на клиент-серверной архитектуре, заключается в том, что в соответствии с концепцией взаимодействия между открытыми системами для подвижности открытых систем требуется максимально широкий спектор программно-аппаратных решений.

Ключевые слова: *клиент-сервер система, TCP / IP протоколы, пакеты приложений, утилиты, Интернет-протокол.*

2.	ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ HISTORY ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1905-1906 ԹԹ.)

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆՆԱ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ ispiryan.2000@list.ru
Գիտական ղեկավար՝ Թունյան Վալերի
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թումանյանի անձը և հասարակական–քաղաքական գործունեությունը միշտ եղել է պատմաբանների ուշադրության կենտրոնում: Նա հայ ժողովրդի համար բախտորոշ մի ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն է ծավալել: Թումանյանի կյանքը և գործունեությունը շատ է ուսումնասիրվում, քանի որ նրա նման մտավորականները կարևոր դեր են խաղում ժողովրդական շարժումների և հուզումների ժամանակ, նրանք են համախմբում ժողովրդին և առաջ տանում: Ուսումնասիրելով Հովի. Թումանյանի հասարակական- քաղաքական գործունեությունը և արժևորելով նրա դերը 19-րդ դար վերջին և 20-րդ դարի առաջին քառորդում՝ լուսաբանվում է ամբողջ մի դարաշրջան. ցարական իշխանություն, Առաջին համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Հայաստանի Առաջին Հանրապետություն, Խորհրդային Միություն:

Բանալի բառեր՝ *հասարակական-քաղաքական գործունեություն, գրական ժառանգություն, Հայկական հարց, քաղաքականություն, եզրահանգում:*

Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունը, նրա կյանքը, ազգային-հասարակական գործունեությունն իր բազմաշերտ ու բազմակողմանի դրսևորումներով անսպառ է, և որևէ հետազոտող երբեք չի ասելու, թե ինքը ավարտուն, սպառիչ ու ամբողջական խոսք է ասել բանաստեղծի մասին:

Թեև Թումանյանի խաղաղասիրական գործունեության մասին բազմիցս ասվել ու գրվել է, սակայն նրա ժամանակակիցների հուշերում և արխիվներում, մամուլում, «Դաշնակցական գործ» վերնագիրը կրող դատական գործի արխիվային նյութերում եղած բազմաթիվ մանրամասներ, որոնք նոր լույս են սփռում Թումանյան ազգային և հասարակական գործչի գործունեության վրա, դեռևս մնում են չլուսաբանված: Տվյալ դեպքում խոսքը 1905–1906թթ. հայ-թուրքական ընդհարումների մասին է, որոնց կենտրոնում կամա թե ակամա հայտնվեց Թումանյանը՝ ոտքից գլուխ զինված, բայց և խաղաղության սպիտակ դրոշը ձեռքին, ռուսական զորագնդի գլուխն անցած, բայց հաշտարար դատավորի, խաղաղասեր և իմաստուն մարդու իր կեցվածքով, գողությունն ու սպանությունը չհանդուրժող, մարդու գազանային բնազդներին ընդդիմացող, իշխանական, թե կուսակցական ամեն մի սադրանքի դեմ պայքարող, ամենուր չարն ու վատը ամենայն խստությամբ պատժող, բարին հաստատող իր մեծ առաքելությամբ:

1905–1906թթ. հայ-թուրքական ընդհարումներն ունեին մի շարք պատճառներ: Թումանյանին ժամանակակից պատմաբաններն ու քաղաքագետները, լրագրողներն ու հրապարակախոսները մատնանշում էին ամենատարբեր պատճառներ, որոնցից էին ցեղային թշնամությունն ու ատելությունը, թուրք տարրի կենդանական, բարբարոսական բնազդը, քանդելու, ջարդելու, կործանելու հակումները, միջէթնիկական մշտական ագրեսիվությունը և քաղաքակրթվելու միանգամայն անընդունակությունը, տնտեսական անհավասարությունը, հայ հարուստների սոցիալական կեղեքումները, կուսակցական և կառավարական սադրանքները և այլն:

Հայ-թուրքական ընդհարումներն անմիջական արձագանքն էին Ռուսաստանում սկսված ժողովրդական շարժման, հասարակական մեծ տեղաշարժերի, որոնց դրդիչը և՛ իրականությունն էր՝ անվերջ զրկանքներն ու հալածանքները, և՛ Կովկասի թուրքերի ցեղային բնավորության առանձնահատկությունները, և՛ ցարական իշխանությունների «Բաժանի՛ր, որ տիրես» տխրահռչակ սկզբունքով իրականացվող քաղաքականությունը: Հիշեցնենք, որ այդ քաղաքականության և մեծ կայսրության շովինիստական ծրագրերի անմիջական իրագործողն ու կատարածուն Կովկասի փոխարքա Գոլիցինն էր:

«Անգիտակ, խավար թուրք մասսային հավատացրին, որ նրան կեղեքողը, նրա աղքատության ու թշվառության պատճառը հայն է... թե միանգա-

մից կարելի է տիրանալ հայի ունեցածին, որով և վերջ կդրվի իր թշվառությանը:

Պրովոկացիան ուժեղ էր... թուրք մասսան շարժվեց, բայց ոչ իր կեղեքիչների, ռուս բյուրոկրատիայի և բեկության, այլ իր պես կեղեքված հայ ժողովրդի դեմ, որի կողմից եղած դիմադրությունը նրան բնականաբար մղեց դեպի ցեղային թշնամություն, դեպի վայրենի ինստինկտներ»[1],– գրում է ԱԴոն (Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը) նույն այդ ընդհարումների օրերին գրած իր աշխատության մեջ և թե՛ իբրև պատմաբան, թե՛ իբրև ականատես վկայում, որ թուրք անգիտակից զանգվածը զենք դարձավ ռուսական և թուրքական հետադեմ ուժերի ձեռքում, բացեց արյունոտ ու ամոթալի մի էջ Կովկասի տարեգրության մեջ:

Նույնն է հավաստում Թումանյանը: Նկատի ունենալով 1905 թ. փետրվարն ու մարտը՝ նա գրում է. «Մենք այդ մի երկու ամսում դարեր ապրեցինք, Չինգիզ խանի ու Լենկ Թեմուրի դարերը: Նրանց անօրինություններ տեսանք 20-րդ դարում»[2]: Իրոք, Թումանյանը չէր կարող անտարբեր մնալ, երբ իր իսկ խոստովանությամբ՝ «...այսքան տգեղ, այսքան լիրբ, այսքան անիրավ, հրեշական կռիվ, ինչ-որ թուրք-հայկականն է – դժվար թե եղած լինի: Գուցե նախապատմական ժամանակներում, երբ մարդիկ իրար ուտում էին» (ԵԼԺ, 10, 15): Թումանյանին սարսափեցնում էր մարդու մեջ եղած գազանի արթնացումը, նրա առաքինությունը պահանջում էր վերականգնել խաղաղությունը, որպեսզի մարդ արարածը «շատ չբարբարոսանա... Մենք ուղղակի վայրենանում ենք» (ԵԼԺ, 10, 15):

Ընդհարումները սկսվեցին Բաքվում[3] փետրվարի 6-ին՝ կիրակի օրը, երբ ինչ-որ թուրք՝ Բաբաև ազգանունով, հայ եկեղեցու մոտ ատրճանակով ծանր վիրավորում է մի հայ զինվորի[4]: Հայերը մարդասպանին հանձնում են ոստիկանին: Սակայն երբ նա ատրճանակը ձեռքին փախչում է կառքից, հայերը հասնում են նրան և սպանում: Մահմեդականները, դիակը դնելով սայլի վրա, շրջում են թուրքական բոլոր թաղերով՝ գրգռելով թուրք ամբոխին: Հենց սա էլ դառնում է կոտորածի շարժառիթն ու ազդանշանը: Այն

[1] Ա - Դ ո. Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905–1906 թթ.) փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Երևան, 1907, էջ 7:

[2] Հովի. Թումանյան,Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 7:

[3] Հովի. Թումանյան, Նույն տեղում,էջ 8:

[4] Հովի. Թումանյան, Նույն տեղում,էջ 9:

սկսվում է երեկոյան ժամը 4-ին, տևում մինչև կեսգիշեր. դրա ընթացքում սպանվում և վիրավորվում են 35 հայեր: Հաջորդ օրը՝ առավոտյան ժամը 10-ից կոտորածը վերսկսվում է ավելի մեծ ուժգնությամբ ու դաժանությամբ: Ամենուր իրար հաջորդող կողոպուտներ, հրկիզումներ, բռնություններ ու սպանություններ, և սա տևում է երեք օր ու գիշեր:

Հարյուրավոր թուրքեր Բազարնի փողոցում թալանում են հայերի խանութները, անցնում Գուբերնսկի, Տորգովի, Նիկոլաևսկի, Հայոց փողոցները: Մի խումբ թուրք դեռահասներ՝ ատրճանակներով զինված, այլանդակություններ էին անում հայկական գերեզմանատան մոտակայքի փողոցներում, ապակիներ կոտրատում, զենքով սպառնում, վայրենի աղաղակներ արձակում:

Եվ այդ ամենը կատարվում էր ռուս զինվորների ներկայությամբ, որոնք անտարբեր դիտորդների դեր էին կատարում: Տրվող հարցերի ու միջամտության աղերսանքների նրանց միակ պատասխանն էր՝ մեզ հրամայված չէ խառնվել: Ցուցադրական անտարբերություն էին դրսևորում նաև քաղաքի դատախազ Վորոնովը, իշխանությունները, ոստիկանությունը, մինչդեռ, ինչպես վկայում էին ականատեսները, «Արյունալի սարսափները, որ տեղի են ունենում փողոցներում, բառացի կերպով քարացնում են մարդու կամքը և միտքը»[5]: Գրեթե բոլորին թիկունքից էին խփում. «Թուրքերը ետևից էին գնդակահար անում»[6]:

Նավթահանքերը վերածվել էին մարդկային սպանդանոցի: Ականատեսը նկատում է «մի խեղճ, նիհար, փոքրիկ ծերունու, որին գնդակի երեք հարվածներից բացի, սրով կտրատել էին և գլուխը զատել մարմնից»[7]: Իսկ դիակույտերի վրա ընկած էին հղի կանայք՝ արգանդները դաշույնի հարվածով պատռած, երեխան դիակի կողքին. «Ծանոթ պատկեր, որ մենք հարյուրավոր անգամներ կարդացել ենք պատմության արյունոտ էջերում»[8]:

Սոսկալի այս տեսարանների մասին լուրերը հասնում են Թիֆլիս. մարդ սարսափում էր, և արյունը սառչում երակներում, հարց էր ծագում՝ ո՞վ ստեղծեց այդ դժոխքը, և ինչպե՞ս ազատվել դրանից, երբ Բաքվի նահանգապետն անձամբ, խրախուսելով թուրքերին, խանգարում, խոչընդոտում էր հայերի ի-

[5] Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 17:

[6] Նույն տեղում:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

նքնապաշտպանությանը, զինաթափում նրանց: Փաստերը վկայում են, որ այդ ջարդերը իրականացվում էին Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեի, ոստիկանապետ Դեմինսկու, պրիստավ կապիտան Մամեդբեկովի, նրա օգնական Սուլթանովի և թաղային վերակացուներ իշխան Միքելաձեի ու Շահթախտինսկու թողտվությամբ և խրախուսմամբ[9]:

1905–1906թթ. իր ծավալած ազգային գործունեությանը գնահատել է նաև ինքը՝ բանաստեղծը. «Եվ այսօր ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից» (ԵԼԺ, 10, 14-15):

Թումանյանն այդ արդյունքին հասել էր և՛ հաշտության սպիտակ դրոշով, և՛ ռուսական զենք ու զորքով, որը նա կարողացել էր օգտագործել հայերի զինված ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ուժեղացնելու նպատակով:

Առանց չափազանցության և առանց Թումանյանի դերի գերագնահատման՝ վստահ կարելի է ասել, որ Թումանյանի շնորհիվ Լոռիում և Բորչալուի շրջանում զինված ընդհարումների փոխարեն տեղի ունեցան հայերի և թուրքերի զինված, բայց անարյուն հանդիպումներ, փրկվեցին հազարավոր կյանքեր Թումանյանի համար հեշտ չէր խաղաղության սպիտակ դրոշը բռնել, նաև թուրքերի կյանքն ու ունեցվածքը փրկելը: Այո, հեշտ չէր ողջագուրվել թշնամու հետ: «Եվ մենք, որպես աստվածային մի ծանր պատիժ, ստիպված ենք տանելու, համբուրելու, եղբայր անվանելու: ...Ես միանգամայն խորտակված եմ: Այս մասին մտածելիս հոգնում եմ իսկույն» (ԵԼԺ, 10, 7), – դառնորեն խոստովանում է Թումանյանը և ավելացնում, թե ինչպես է մեր արյունոտ անցյալը, մեր տանջալի ներկան, մեր մութ, անլույս ու անհույս ապագան ծանր քարերի նման «պառկում» սրտին. «Ափսոսում եմ մեզ» (ԵԼԺ, 10, 7):

Այդ դժոխային շրջանում, երբ ասպարեզ էր բացվել մարդու վայրենի բնազդների համար, և դրանք երևան էին եկել ահռելի չափերով, Թումանյանը համոզված էր, որ այդ նույն օրերին «Հարկավ, լավ հոգիներն էլ իրենց ամբողջ փայլով հրապարակ են իջել» (ԵԼԺ 10, 22):

Թումանյանը հենց այդ լավ հոգին էր, որ նույնիսկ վատի կողքին տեսնում էր լավը, վատի մեջ էլ փնտրում էր լավը և սիրում էր այդ լավը:

[9] Նույն տեղում, էջ 6:

1912 թ. Պետերբուրգի բանտում գտնվելիս իր օրագրում, անհյուրընկալ պատերի ներքո, Սիբիրն ու աքսորն աչքի առաջ ունենալով, դատարանում երես առ երես հանդիպած իր «հայրենակից» լրտեսների ու մատնիչների, մարդու վատ տեսակի մասին է Թումանյանը գրում.

Ահա ինչու էս աշխարհքում
Խաղաղ է միշտ իմ հոգին
Պաշտպանում է նա իր խորքում
Սիրում է ողջ և ամենքին (ԵԼԺ, 1, 260):

Երկու տարի շարունակվող հայ-թուրքական ընդհարումները տարբեր գավառների հայ ու նաև թուրք բնակչությանը մատնեցին համատարած թշվառության: Ավերվեցին 252 գյուղեր և 7 քաղաքներ, սովի ուրվականը սկսեց շրջել գյուղից գյուղ, բազմացան ավազակախմբերն ու ավազակային գործողությունները: Հազարավոր անմեղ զոհերի թափված արյունը Կովկասը դարձրեց մի կատարյալ դժոխք: Լոռին մի երջանիկ բացառություն կազմեց Թումանյանի շնորհիվ:

Հ. Դ. Սոկոլովը 1919թ. Թումանյանին ուղղած իր շնորհավորական հեռագրում նրան անվանել է հայ հասարակության խիղճը[10]: 1905–1906թթ. Թումանյանի կյանքի այն կարևոր նշանաձողն էր, երբ 36-ամյա բանաստեղծն ազգամիջյան կռիվների մեջ ներքաշված հայ ժողովրդի համար դարձավ նահապետ, առաջնորդ, անառարկելի հեղինակություն, խաղաղասիրության արտահայտիչ, հավաքական կամքի, արիության և իմաստության խորհրդանիշ: Հենց այս՝ հայ ժողովրդի համար արհավիրքի, դաժան փորձությունների բախտորոշ տարիներին նա դարձավ հայության խիղճը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա - Դո. Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում (1905–1906թթ.) փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով, Երևան, 1907:
2. Հովհ. Թումանյան,Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999:
3. Ա - Դ ո. նշվ. աշխ., էջ 17:
4. «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 27. II. 1919:

[10] «Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 27. II. 1919:

5. Հովի. Թումանյան, Երկերի ժողովածու, Եր., հտ. 4, 1954:
6. Թումանյան Ն., Հուշեր և զրույցներ, Ե., 1969:
7. Թամրազյան Հր., Հովի. Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995:
8. Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995:
9. Հովի. Թումանյան, Ընտրանի, Ե., 2001:
10. Աճառեան Հ., Տաճկահայոց հարցի պատմութիւնը, Նոր-Նախիջևան, 1915:
11. Լէօ, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915:
12. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթապանակ 5, վավերագիր 1180:
13. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Վ. Մալեզյանի ֆոնդ, գ. 742:
14. «Մշակ», 28.IV.1913:
15. Ժողովածու դիպլոմատիքական փոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում (1912 թ. Նոյեմբեր 12-ից մինչեւ 10 մայիսի 1914 թ.), թարգմ՝. Ս. Աւագեանի,Թիֆլիս, 1915:

HOVHANNES TUMAYAN'S SOCIO-POLITICAL ACTIVITY (in 1905-1906)

ISPIRYAN ANNA
4th-yaer undergraduate student of the Department of History, GSU
e-mail: ispiryan.2000@list.ru
Academic Supervisor: Tunyan Valeri
Doctor of Historical Sciences, Professor

Hovhannes Tumanyan - a writer, poet, literary and social activist, lived and worked in 1869-1923. Tumanyan's personality and his social and political activities have always been in the center of attention of historians. The studies about Tumanyan have always been relevant. Being an "All-Armenian poet", H. Tumanyan has always been actively engaged in people's lives at crucial times for the Armenian people. Even now, Tumanyan's life and activities are widely studied, because in the current social and political situation, intellectuals play an important role in different movements and turmoil, and the intellectuals themselves, being the driving forces of history, unite and lead the people.

Studying H. Tumanyan's social and political activity, evaluating his role in the late 19th century and in the first quarter of the 20th century, the following issues are brought forward:

To study H. Tumanyan's activity as a public and political figure.

To study Tumanyan's work concerning the aggravation of the Armenian Issue, particularly in 1912-1914.

To highlight Tumanyan's role in uniting the Western Armenian refugees who escaped from the Armenian Genocide.

Studying Tumanyan's life, an entire era is revealed: Tsarist power, World War I, Mets Yeghern / Genocide/, the First Republic of Armenia, the Soviet Union.

Key words: *social and political activities, literary heritage, Armenian Issue, politics, conclusion.*

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ОВАНЕСА ТУМАНЯНА (1905-1906гг.)

ИСПИРЯН АННА

Студентка 4 курса отделения истории
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: ispiryan.2000@list.ru
Научный руководитель: Тунян Валерий
Доктор исторических наук, профессор

Ованес Туманян, писатель-публицист, прозаик, национально-общественный деятель, жил и творил в 1869-1923 гг. Личность и общественно – политическая деятельность Туманяна всегда были в центре внимания историков. Туманяноведение было и остается актуальным во все времена. Сегодня жизнь и деятельность Туманяна является одной из наиболее изучаемых сфер, поскольку в создавшейся общественно-политической ситуации мы видим важную роль интеллигенции во время народных движений и волнений - именно интеллигенция, являясь движущей силой истории, объединяет народ и продвигает вперед.

Изучая общественно-политическую деятельность Туманяна, и оценивая его роль в конце 19-го и первой четверти 20-го веков, выдвигаем следующие задачи:

Изучить деятельность Туманяна как общественно-политического деятеля.

Изучить работу Туманяна по обострению армянского вопроса, особенно в 1912-1914 гг.

Оценить роль Туманяна в объединении западноармянских беженцев, спасшихся от Геноцида.

Изучая жизнь Туманяна, открываем и освещаем целую эпоху: царскую власть, Первую мировую войну, Геноцид, Первую Республику Армения, Советский Союз.

Ключевые слова: *общественно-политическая деятельность, литературное наследие, Армянский вопрос, политика, заключение.*

«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԹԵՐԹԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻՆ (ԽՍՀՄ-ՈՒՄ 1937-1938 թթ.-ին)

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱԼԻՆԱ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ vardanyan.lina@bk.ru
Գիտական ղեկավար՝ Հարությունյան Գրիշա
Գորիսի պետական համալսարանի ասիստենտ

Հոդվածը նվիրված է «Զանգեզուր» թերթի 1937-1938 թվականների համարներում տպագրված այն նյութերին, որոնք վերաբերում են քաղաքական բռնաճնշումներին: Քանի որ թերթը հրատարակվել է խորհրդային տարիներին, բնականաբար քաղաքական բռնաճնշումները ներկայացվում են որպես հակահեղափոխական «հայրենիքի դավաճանների, շպիոնների, նացիոնալիստ տրոցկիստների» դեմ պայքար: Խորհրդային իշխանությունը նույնիսկ ադրբեջանցի քոչվորներին ծեծելու մեջ մեղադրում էր հայ կոլտնտեսականներին՝ նրանց անվանելով «նացիոնալիստ տրոցկիստ խուլիգաններ»: Իսկ մանկավարժական ուսումնարանում աշխատող Վաղինակ Խալթանջյանին աշխատանքից ազատում են՝ Րաֆֆու և Ակսել Բակունցի աշխատություններին անդրադառնալու համար՝ նրանց անվանելով «նացիոնալիստական թափթփուկ»:

Բանալի բառեր՝ *սոցիալիզմ, բռնաճնշում, բոլշևիկ, հակահեղափոխական, տրոցկիստ, դավաճանություն, նացիոնալիստ:*

20-րդ դարի 30-ական թվականներին Խորհրդային Միությունում իրականացվող բռնաճնշումները լայնորեն ներկայացվում էին խորհրդային մամուլի էջերում՝ ժամանակի տիրապետող գաղափարախոսության սկզբունքներին ու չափանիշներին համապատասխան: Քաղաքական այս գործընթացներից չէր կարող անմասն մնալ Գորիսի շրջանային «Զանգեզուր» թերթը, որի էջերում անդրադարձներ կան ոչ միայն միութենական նշանակության քաղաքական բռնությունների, այլ նաև տեղերում դրանց արձագանքների արդյունքում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Այս հոդվածում կներկայացնենք 1937-1938թթ. ընթացքում «Զանգեզուր» թերթի էջե-

րում տեղ գտած այն հրապարակումները, որոնք վերաբերում են քաղաքական բռնաճնշումներին և բոլշևիկների որդեգրած քաղաքականությանը: Հոդվածներից պարզ է դառնում, որ այն մարդիկ, որոնք ունեին այլ գաղափարական ուղղվածություն ու հայացքներ, անմիջապես ենթարկվում էին հալածանքների ու հետապնդումների իշխանության կողմից: Եվ ակնհայտ է, որ որևէ հակաբոլշևիկյան քայլ համարվում էր որպես ազգային դավաճանություն և սոցիալիզմի գաղափարից շեղում դեպի կապիտալիզմ, որը բոլշևիկները ամեն կերպ ձգտում էին թույլ չտալ և գործադրում էին ամենախիստ միջոցները իրենց հակառակորդների նկատմամբ: Հիմնականում բոլշևիկները իրենց հակառակորդներից ազատվելու համար նրանց մեղադրում էին դավաճանության մեջ և տեսնում կապ օտարերկրյա երկրների հետ, որոնց համար իբր աշխատում էին և փորձում խարխլել Խորհրդային Միության ամուր գցված հիմքերը, տապալել սոցիալիզմը ու հաստատել կապիտալիստական կարգեր:

«Զանգեզուր» թերթի 1937թ. լույս տեսած մի հոդվածում, որը վերնագրված է «Հայրենիքի դավաճանները, ֆաշիստական շպիոնները գնդակահարվեցին», ներկայացվում է ութ գործիչների՝ Տուխաչևսկու, Յակիրի, Ուբորևիչի, Կորկիի, Էյդեմանի, Ֆելդմանի, Պրիմակովի և Պուտնայի դատական գործերը, որոնք մեղադրվում էին «զինվորական պարտքը խախտելու, հայրենիքին, բանվորագյուղացիական կարմիր բանակին դավաճանելու մեջ»[1]: Ըստ կատարված «քննության»՝ բացահայտվում է, որ ներկայացված ութ լրտեսները կամ մեղադրյալները ձգտել են խարխլել ու ջլատել բանվորագյուղացիական կարմիր բանակի հզորությունը և քայքայել բանվորների և գյուղացիների՝ աշխարհում գոյություն ունեցող առաջին սոցիալիստական պետության ամուր գցված հիմքերը: 1937թ մարտի 3-ին ՀամԿ(բ)Կ կենտկոմի պլենումում Ստալինն իր զեկուցման մեջ ներկայացնում էր «վոր լրտեսներ և դիվերսանտներ ուղարկելը յուրաքանչյուր բուրժուական պետության անհրաժեշտ հատկանիշն ե: Թշնամուն վաճառված, հայրենիքին դավաճանած ութ բռնված լրտեսներին ամբողջ խորհրդային ժողովրդի անունով դատելու յե ԽՍՀ Միության Գերագույն դատարանի դատական հատուկ ատյանը»[2]: Ստալինի խոսքերից արդեն պարզ է, թե ինչպիսի վերաբերմունք ունի նա բուրժուական պետությունների նկատմամբ, որը օգտագործում է նաև հակա-

[1] «Զանգեզուր» թերթ,№54(224) 1937թ.,հունիսի 16, չորեքշաբթի, էջ1:

[2] «Զանգեզուր» թերթ,№54(224) 1937թ.,հունիսի 16, չորեքշաբթի, էջ1:

բոլշևիկյան հակառակորդների նկատմամբ՝ նրանց մեղադրելով լրտեսության, դավաճանության մեջ և ստեղծելով այնպիսի մթնոլորտ, որ իբր մեղադրյալները համագործակցել են ֆաշիստների հետ և ցանկացել են վնաս հասցնել Խորհրդային Միությանը: Հակախորհրդային ցանկացած ելույթ համարվում էր դավաճանություն և պատժվում էր ամենայն խստությամբ:

«Հայրենիքի դավաճանները, ֆաշիստական շպիոնները գնդակահարվեցին» հոդվածում ներկայացվում է նաև, որ 1937թ. հունիսի 12-ին իրականացվում է դատարանի վճիռը և նշված մեղադրյալները ենթարկվել են գնդակահարության: Եվ ինչպես հոդվածում է նշվում, որ դրանով ի կատար է ածվում Խորհրդային Միության ամբողջ աշխատավորների կամքը, և այդ վճիռը միակ, հնարավոր և արդարացի վճիռն էր: Տեղի ունեցած տարբեր հավաքներում բազմաթիվ կոլտնտեսականներ ողջունում են Ստալինին, որ կարողացավ մերկացանել ֆաշիստական լրտեսներին և հարված հասցնել միջազգային հակահեղափոխական հետախուզության գործակալներին, որոնք ցանկանում էին վնաս հասցնել և տապալել սոցիալիստական կարգերը[3]: Այս հոդվածը փորձում է ներկայացնել հասարակության շրջանում առկա տրամադրությունները, վերաբերմունքը կայացրած վճռի նկատմամբ և ներկայացնել Ստալինի ունեցած հեղինակությունը, որը վերածվել էր պաշտամունքի:

«Զանգեզուր» թերթի 1937 թվականին լույս տեսած «Հակահեղափոխական նացիոնալ-տրոցկիստական վիժվածքների գործը» հոդվածում խոսվում է հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին՝ դրանք ներկայացնելով որպես բարիդրացիական, որը ցանկանում էին խարխլել հակահեղափոխական դաշնակցական-նացիոնալիստական, տրոցկիստական թշնամիները՝ հրահրելով ազգամիջյան բախումներ: Հոդվածից կարող ենք հետևյալ մեջբերումը կատարել. «Մեր շրջանի բոլոր աշխատավորների կողմից սիրով և հարգանքով ընդունվում են յեղբայրական Ադրբեջանի քոչվորներն ու տեղավորում յուրյաղներում...: Մեր թշնամիները օգտագործում են իրենց հակահեղափոխական դաշնակցական-նացիոնալիստական տրոցկիստական սև գործը»: Այսպիսով, նացիոնալիստ-դաշնակցականները փորձում էին վերջ տալ բարեկամական երկու ազգերի հարաբերություններին և հարված հասցնել կոլտնտեսային կյանքին և ինչպես նշվում է, Դավիդ Ծատրյանը ծեծի է ենթարկել մի քանի թաթարների և ստեղծել թշնամական վերաբեր-

[3] «Զանգեզուր» թերթ, №54(224) 1937թ., հունիսի 16, չորեքշաբթի,էջ 1:

մունք երկու ազգերի ներկայացուցիչների միջև և դատախազությունը քննել է ամբողջ գործը և բացահայտել մեղավորներին[4]: Մեջբերումից հետևյալը պետք է եզրակացնենք, որ ազգամիջյան խնդիրները ևս կապվում են հակահեղափոխական գործիչների հետ, որոնք, ըստ բոլշևիկների, հրահրում էին ազգամիջյան բախումներ, որոնք կարող էին լուրջ հետևանքներ ունենալ միության կենսունակության համար: Եվ ներկայացված հոդվածից այնպես է ստացվում, թե հայերն ու թաթարները գտնվում էին շատ սերտ հարաբերությունների մեջ, որը փորձում էին քանդել նացիոնալիստ-դաշնակցականները, որոնց բոլշևիկները տանել չէին կարողանում և համարում էին թշնամի, քանի որ դավանում էին այլ գաղափարախոսության, ինչպես տրոցկիստները:

«Զանգեզուր» թերթի «Նացիոնալիստական վիժվածքը տեղ չունի խորհրդային դպրոցում» նյութում ներկայացվում է Գորիսի մանկավարժական ուսումնարանի մանկավարժ Վաղինակ Խալթանջյանի գործունեությունը, որը մեղադրվում էր հակահեղափոխական-նացիոնալիստ լինելու մեջ, քանի որ սովորողներին ներկայացրել է նշանավոր հայ գրողների ստեղծագործություններից, որոնց անուններն ու ստեղծագործությունները այդ ժամանակ արգելված էին բարձրաձայն հնչեցնել՝ Ակսել Բակունց, Րաֆֆի: Թերթում Ակսել Բակունցը ներկայացվում է որպես «տեռորիստ և սրիկա», քանի որ հակաբոլշևիկյան գաղափարներ է արտահայտել և իր հայացքներով չի համապատասխանել սոցիալիզմի գաղափարներին[5]: Այսպիսով, պարզ է դառնում, որ այլ հայացքներ ունենալու կամ որևէ հակաիշխանական կարծիք արտահայտելու դեպքում անմիջապես ենթարկվում էին հետապնդումների և նույնիսկ մեղադրվում օտարերկրյա լրտես լինելու մեջ: Գրաքննություն էր իրականացվում, խորհրդային ղեկավարությունը սահմանել էր «արգելված հեղինակներ և արգելված գրքեր», որոնց անդրադառնալու դեպքում ենթարկվում էին աքսորի, հալածանքների:

1937-1938թթ. համարներում ավելի շատ անդրադարձներ կային Լև Տրոցկուն և նրա գաղափարակիցներին, որոնց համարում էին ազգային դավաճաններ, ուստի բոլշևիկները փորձում էին արագ ազատվել նրանցից: Թերթում տրոցկիզմը քաղաքական հոսանք չի համարվում, իսկ տրոցկիստները օտարերկրյա հետախույզներ, լրտեսներ էին, որոնք աշխատում էին բուրժուական պետությունների համար: Համարներում ներկայացվում է

[4] «Զանգեզուր» թերթ, №47(217) 1937թ., մայիսի 18, էջ 4:

[5] «Զանգեզուր» թերթ, №31(201) 1937թ., ապրիլի 2, էջ 3:

Տրոցկու և նրա հետևորդների կատարած հանցանքները, թե ինչպես էին նրանք փորձում թուլացնել միությունը և հարված հասցնել ԽՍՀՄ-ի հզորությանը: «Զանգեզուր» թերթում ներկայացվում է Տրոցկու և նրա հետևորդների դատավարությունը:

Ինչպես ներկայացվում է «ԽՍՀՄ դատախազության մեջ» հոդվածում, Լև Տրոցկու գլխավորությամբ ստեղծվել է «Զուգահեռ կենտրոնը», որի մեջ մտնում էին Յու. Լ(Դ. Լ) Պյատակովը, Կ. Բ. Ռադեկը, Գ. Յու. Սոկոլնիկովը և Լ. Պ. Սերեբրյակովը, որոնք ենթարկվում էին Տրոցկու հրամաններին և իրականացնում հակաազգային գործունեություն հօգուտ օտարերկրյա պետությունների: Ըստ կատարված քննության՝ ակնհայտ է դառնում,որ նրանք իբր նպատակ էին հետապնդում արագացնել ռազմական հարձակումը ԽՍՀՄ-ի վրա, օժանդակել թշնամիների մուտքը ԽՍՀՄ, բռնազավթել իշխանությունը և Խորհրդային Միությունում հաստատել կապիտալիստական կարգեր: Եվ այս գործով դատական պատասխանատվության են կանչվում Յու. Լ(Դ. Լ), Պյատակովը, Կ. Բ. Ռուդեկը, Գ. Յու. Սոկոլնիկովը, Լ. Պ. Սերեբրյակովը, Ն. Ի. Մուրալովը, Յա. Ա. Լիվշիցը, Յա. Ն. Դրոբնիսը, Մ. Ս. Բոգուսլավսկին, Ի. Ա. Կնյազեվը, Ս. Ա. Ռատայչակը, Բ. Ո. Նորկինը, Ա. Ա. Շեոտովը...: Գործի քննությունը տեղի էր ունենալու հունվարի 30-ին[6]: Տեղի է ունենում դատական բաց նիստ՝ Վ. Վ. Ուլրիխի գլխավորությամբ, որտեղ քննվում էր նշված գործը. նրանք մեղադրվում էին տեռորիստական ակտեր կատարելու մեջ, նիստի ժամանակ նրանք ընդունում են իրենց առաջադրված մեղադրանքները[7]: Հետաքննության ժամանակ պարզվել է, որ Լև Տրոցկու ուղղակի ցուցումով «Զուգահեռ կենտրոնի» անմիջական ղեկավարությամբ մի շարք մեղադրվողներ՝ Տուրոկ, Կնյազև, Ռատայչակը, Շեստով, Սորոյիլով, Գրաշեն, համագործակցել են գերմանական և ճապոնական լրտեսների հետ և դիվերսիոն գործունեություն իրականացրել: Հետաքննության ժամանակ Ռադեկը հաստատել է Պյատակովի ցուցմունքները, որ Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստական կուսակցության ներկայացուցչի հետ Տրոցկին կնքել է համաձայնություն, և կետերից մեկը եղել է այն, որ պատերազմի ժամանակ Գերմանիայի դեմ պարտվողական դիրք բռնել և գործել են Տրոցկու անմիջական ցուցումներով, որոնք, իհարկե, համաձայնեցված կլինեն Գերմանիայի գլխավոր շտաբի հետ: Մեղադրյալ Պյատակո-

[6] «Զանգեզուր» թերթ, №8(178), 1937, հունվարի 25, էջ 1:

[7] «Զանգեզուր» թերթ, №9(180), 1937, հունվարի 27, էջ 2:

վը 1937 թվականի հունվարի 4-ին հարցաքննության ժամանակ ցուցմունք տվեց: «Յես հանձնարարել եյի իմ մարդկանց(և ինքս ել անում եյի այդ) բաժան-բաժան չլինել իրենց վնասարարական աշխատանքում, իրենց ուշադրությունը կենտրոնացնել արդյունաբերության հիմնական խոշոր օբյեկտների վրա, վորոնք ունեն պաշտպանական և համամիութենական նշանակություն: Այդ կետում յես գործում եյի Տրոցկու դիրեկտիվով՝ «Առավել զգալի հարվածներ հասցնել առավել զգայուն տեղում»»: Այսպիսով, այնպես էր ներկայացվում, որ մեղադրվողները գործում էին ԽՍՀՄ-ի թշնամիների հետ և փորձում էին ամեն կերպ վնաս հասցնել Խորհրդային Միությանը ու սպասվող պատերազմում անել ամեն ինչ, որ միությունը պարտություն կրի, իշխանությունն էլ արագ զավթեն: Այդ ամենը իրականացնելու համար փորձում էին վնաս հասցնել տնտեսության կարևորագույն ճյուղերին: Հետագայում կայացավ Տրոցկու գաղափարակիցների ձերբակալությունը, որին հաջորդեցին արդեն դատական նիստերը և ըստ կայացած դատավճռի՝ մեղադրվողները պետք է գնդակահարվեին, քանի որ օտարերկրյա լրտես և դավաճան լինելը ծանրագույն հանցագործությունն էր համարվում ԽՍՀՄ-ում:

Թերթի «Ել ավելի բարձրացնենք մեր զգաստությունը» հոդվածը անդրադարձավ դատավճռին և ներկայացրեց, թե ինչ արձագանքներ ունեցավ հասարակության մեջ կատարված դատավճիռը, և արդյո՞ք հասարակությունը խանդավառությամբ ընդունեց վճիռը: «Հակահեղափոխական-տրոցկիստական տականքների, դիվերսիոն բանդիտական «զուգահեռ կենտրոնի» անդամների գնդակահարությունից հետո, Հալիձորի կոլտնտեսական մասսան կոչ ե անում բոլորին այսուհետեվ ել ավելի բարձրացնելու զգաստությունը, մինչեվ վերջը հայտնաբերելու Հայրենիքի դավաճաններին, վոչնչացնելու մեր յերկրում կապիտալիզմը վերականգնելու բոլոր ձգտումները: Մենք ավելի սերտ կերպով կհամախմբվենք մեր կուսակցության և նրա առաջնորդ ընկեր Ստալինի շուրջ...»[8]: Մեջբերված հոդվածից նկատում ենք, որ ատելություն էր ձևավորվել դեպի կապիտալիզմը, և հասարակության լայն շրջանակում ձևավորվել էր Ստալինի անձի պաշտամունքը և նրա գաղափարախոսության լայն տարածումը, ինչին Ստալինն էր ձգտում:

«Զանգեզուր» թերթի 1938 թվականին լույս տեսած մի հոդվածում, որը վերնագրված է «Մեղադրական յեզրակացություն» ներկայացվում է, որ Հա-

[8] «Զանգեզուր» թերթ, №11(181), 1 937, փետրվարի 2, էջ 1:

յական ԽՍՀ ներքգործժողկոմատի կողմից հայտանաբերվել է Հայաստանի հակահեղափոխական, աջտրոցկիստական, նացիոնալիստական-դաշնակցական կազմակերպությունը, որը ղեկավարում էին թշնամիներ Խանջյանը, Տեր-Գաբրիելյանցը, Օթյանը, Յերզնկյանը, Ամատունին, Գուլոյանը, Ակոպովը, որոնք իրենց առաջ նպատակ էին դրել տապալել խորհրդային իշխանությունը և Հայաստանը անջատել Խորհրդային Միությունից ու հաստատել կապիտալիզմ: Նախնական քննության արդյունքում ապացուցվել է, որ բոլոր մեղադրվողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հեղափոխական գործունեություն ծավալելու համար: Աջտրոցկիստական կազմակերպության ակտիվ մասնակիցներից էր Գուրգեն Գումեդինը, որի ցուցմունքներից պարզ է դառնում այն, որ հակահեղափոխական կազմակերպությունը գլխավորել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Աղասի Խանջյանը, Սեդրակ Օթյանը Տեր-Գաբրիելյանը և Արամայիս Յերզնկյանը: Ինչպես Գումեդինն էր իր ցուցմունքի մեջ ներկայացնում, Ա.Խանջյանը 1933 թվականին առաջարկել է իրեն մտնել հակահեղափոխական կազմակերպության մեջ, որն էլ Գումեդինը ընդունել էր, քանի որ հակախորհրդային կազմակերպության հայացքները համապատասխանում էին իր հայացքներին, ձգտում էին իրականացնել Խորհրդային Միության անջատումը Հայաստանից ու բորժուական կարգեր հաստատել[9]: Ստացվում է, որ Հայաստանում ևս գործել է հակահեղափոխական-տրոցկիստական կազմակերպություն, որը մեկ նպատակ է հետապնդել՝ անջատել Հայաստանը Խորհրդային Միությունից և հաստատել կապիտալիզմ:

1938 թվականին հրապարակված համարներից մեկում, որը վերնագրված է «Նշանավոր հեղափոխական Ղուկաս Ղուկասյանի սպանողների դատավարությունը», ներկայացվում է մայիսյան ապստամբության հերոս բոլշևիկ Ղուկաս Ղուկասյանի և նրա մարտական ութ ընկերների՝ Սուրեն Ծառուկյանի, Հովի.Մանուկյանի, Նավարկովի, Խրիստովսկու, Գուրգեն Դուզճակատյանի, Քերոբ Խաչատրյանի սպանության դատավարությունը: Դատարանը կարողացավ պարզել, որ դաշնակ հակահեղափոխականներ Երեմ Մխիթարյանը, Հմայակ Սահակյան-Դունամալյանը, Սահակ Քոչարյանը, Մխիթար Պողոսյանը 1920 թվականին գաղտնաբար սպանել են բոլշևիկ հերոս Ղուկաս Ղուկասյանին և նրա ութ մարտական ընկերներին: Կատարված քննությունից հետո Գերագույն դատարանը Երեմ Մխիթարյանին, Հմայակ

[9] «Զանգեզուր» թերթ, №11(181), 1 937, փետրվարի 2, էջ 1:

Սահակյանին, Աբգար Տոնոյան-Ավդալյանին դատապարտեց գնդակահարության, իսկ մյուսները ենթարկվեցին ազատազրկման և բռնագրավեց անձնական գույքի 50 տոկոսը[10]: 1938 թվականի համարներից մեկում «Դատավճիռ» է ներկայացվում, ըստ որի «աջ-տրոցկիստական բլոկը» մի շարք տեռորիստական ակտեր է կատարել խորհրդային կառավարության դեմ, որը ապացուցվել է մի շարք փաստերով և դրա մեջ ընդգրկված են եղել Բուխարինը, Ռիկովը, Յագոդան, Կրեստինսկին, Ռոզենհոլցը, Գրինկոն, Շարանգովիչը, Խոջանը, Իկրամովը, Իվանովը, Զուբարյովը, Ելինսկին և Չերնովը, որոնք ստեղծել են «աջ-տրոցկիստական» անունով դավադրական խումբ, որը միավորել է Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, միջինասիական հանրապետությունների տրոցկիստներին, աջերի, զինովևականների ընդհատակյա հակախորհրդային խմբերը[11]: Եվ ինչպես մյուս հակախորհրդային ուժերն էին ցանկանում տապալել խորհրդային կարգերը և հաստատել կապիտալիստական կարգեր, այնպես էլ աջտրոցկիստները: Եվ ցանկանալով իրականացնել իրենց դավադրական նպատակները՝ համագործակցել են օտարերկրյա գործակալների հետ և հանդիսացել օտարերկրյա լրտեսներ:

Այնուհետև դատական նիստերից հետո կայացվում է վերջնական որոշումը, որը ներկայացված է «Զանգեզուր» թերթի «Ֆաշիստական շների ոհմակը ոչնչացված է» հոդվածում, ըստ որի՝ ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանը խորհրդային «աջ-տրոցկիստական բլոկի» գործով ներկայացված մեղադրյալներին՝ Բուխարինին, Ռիկովին, Կրեստինսկուն, Ռոզենհոլցին, Կիրովին, Չերնովին, Գրինկոյին, Զելինսկուն, Իկրամովին, Խոջաևին, Շարանովին, Կազակովին, Մաքսիմովին, Կրյուչկովին, ենթարկել գնդակահարության: Հակախորհրդային «աջ-տրոցկիստական բլոկի» դատավարությունը ցույց տվեց, որ ֆաշիզմի հավատարիմ գործակալները փորձում էին խորհրդային ժողովրդի կոկորդից բռնել և կապիտալիզմ հաստատել, սակայն չի հաջողվում և Խորհրդային Միությունը շարունակում է կանգուն մնալ և դիմակայել ֆաշիզմի լրտեսներին[12]:

Այսպիսով, Խորհրդային Ռուսաստան չէր հանդուրժում ազգային և հակաբոլշևիկյան որևէ երևույթ, և բոլոր նման փորձերն ավարտվում էին գնդա-

[10] «Զանգեզուր» թերթ, №25, 1938, ապրիլի 4, էջ 4:

[11] «Զանգեզուր» թերթ, №20(305), 1938, մարտի 21, էջ 2:

[12] «Զանգեզուր» թերթ, №18(303) 1938թվական, մարտի 8-ին, էջ 3-րդ

կահարությամբ կամ աքսորով: Ուսումնասիրելով ընդամենը 1937-1938թթ. Համարները՝ մենք հանդիպում ենք բազմաթիվ նման օրինակների, երբ նույնիսկ Րաֆֆի կամ Ակսել Բակունց դասավանդելու համար էին աշխատանքից ազատում, և ամեն տեղ քարոզվում էր սոցիալիզմը՝ որպես միակ և ճիշտ գաղափարախոսություն, որից շեղվելը համարվում էր դավաճանություն և ազգային գաղափարներից շեղում: Բերված փաստերից կարող ենք եզրակացնել, որ բոլշևիկները իրենց գաղափարախոսության քողի տակ փորձում էին ազատվել հակառակորդներից, ինչպիսիք էին տրոցկիստները, դաշնակցականները և այլ հայացքներ ունեցող անձիք՝ նրանց մեղադրելով հակախորհրդային գործունեություն ծավալելու մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զանգեզուր» թերթ, 1937-1938 թթ.:

"ZANGEZUR" NEWSPAPER'S REFERENCE TO POLITICAL REPRESSIONS (IN THE USSR, 1937-1938)

VARDANYAN ALINA
3rd-year student of the Department of History,
Faculty of Humanities, Goris State University
e-mail: vardanyan.lina@bk.ru
Academic Supervisor: Harutyunyan Grisha
Assistant

The article is dedicated to the political repressions published in "Zangezur" newspaper in the years 1937 and 1938. As they are published in the Soviet years, political repressions are presented as a fight against "traitors of the homeland, spies of fascists", "nationalist-Trotskyists". The Soviet government even accused the Armenians of beating the Azeri nomads, calling them "nationalist-Trotskyist hooligans". Moreover, Vaghinak Khaltanjyan, a professor at the Pedagogical University, was fired for referring to the works of Raffi and Aksel Bakunts, being called a "nationalist scum".

Key words: *socialism, repression, counter-revolutionary, Trotskyist, nationalist, betrayal, "nationalist-Trotskyist hooligans".*

ОТРАЖЕНИЕ ПОЛИТИЧЕСКИХ РЕПРЕССИИ В СССР В ГАЗЕТЕ "ЗАНГЕЗУР" (1937-1938гг.)

ВАРДАНЯН АЛИНА
Студентка 3 курса отделения истории
факультета гуманитарных специальностей
Горийского государственного университета,
электронная почта: vardanyan.lina@bk.ru
Научный руководитель: Арутюнян Гриша
Ассистент

Статья посвящена исследованию материалов, опубликованных в номерах газеты «Зангезур» за 1937-1938 годы, в которых говорится о политических репрессиях.

Поскольку это выпуски, изданные в советские годы, политические репрессии естественно преподносятся как борьба с "предателями Родины, шпионами фашизма", "националистами-троцкистами". Советское правительство даже обвинило армянских колхозников в избиении азербайджанских кочевников, назвав их "националистическими троцкистскими хулиганами". Вагинак Халтанджяна, преподавателя педагогического колледжа, уволили за то, что он сослался на произведения Раффи и Акселя Бакунца, назвав его "националистической мразью".

Ключевые слова: *социализм, репрессии, большевики, контрреволюционеры, троцкисты, предательство, националист.*

ԱՄԵՆԱԳԵՐՄԱՆԱՑԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԿԱՅՍՐՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ՝ ԹԵՈՖԱՆՈՒ ԿԱՅՍՐՈՒՀԻ

ԱՊԿԱՐՅԱՆ ԼՈՒԻԶԱ
Գավառի պետական համալսարանի
բնագիտական ֆակուլտետի
«Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ luizaapkaryan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Հայրապետյան Քանաքարա
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ,
ԳՊՀ դասախոս, ասիստենտ

Սույն հոդվածում ներկայացված են սրբազան գերմանական կայսրության հայազգի Թեոֆանու կայսրուհու՝ հայկական արմատներ ունենալու մասին վկայությունները, կյանքն ու գործունեությունը: Ժամանակի տարեգիրները, պատմիչներն ու պատմաբանները Թեոֆանուին ներկայացրել են որպես իր ժամանակի ամենակրթված ու ամենանշանավոր գործիչներից մեկը, որը մեծ լրջությամբ նախագծել և իր իշխանության տարիներին հաստատակամորեն փորձել է իրականացնել համաեվրոպական պետական համակարգ ստեղծելու իր յուրօրինակ ծրագիրը: Նրա մշակած քաղաքական նոր սկզբունքները մեծ ազդեցություն են ունեցել իր որդի և իրավահաջորդ Օտտո 3-րդի ապագա քաղաքականության վրա:

Բանալի բառեր՝ *գերմանական կայսրություն, Թեոֆանու, Օտտո 3-րդ, ամենագերմանացին, համաեվրոպական պետական համակարգ, Հովհաննես Չմշկիկ, Սուրբ Պանթալիոն եկեղեցի, Սկլերոսներ:*

Պատմության հարուստ էջերը թերթելիս հանդիպում ենք շատ հերոսների, որոնք դարձել են իրենց դարի կենսագիրը, խորհրդանիշը: Նրանցից շատերը փոխել են պատմության ընթացքը՝ մարտահրավեր նետելով ճակատագրին, հարստացրել են պատմությունը հերոսական էջերով, փառահեղ իրադարձություններով, երդվել իրենց գործով օրինակ ծառայել ապագա սերունդներին:

Հայ ժողովուրդը ևս իր հարուստ պատմության ընթացքում ունեցել է բազում հերոսներ, որոնք իրենց հերոսական վարքագծով օրինակ են ծառայել երիտասարդներին, մատաղ սերնդին: Հերոս տղամարդկանց կողքին անմասն չեն մնացել հայ կանայք, որոնք, փափկասուն տիկնայք լինելուց բացի, բացառիկ տիրուհիներ էին, զավակին անձնվիրաբար սիրող մայրեր, հայրենիքը պաշտող նվիրյալներ, փառահեղ զորավարներ, գլուխն օտարի լծի տակ չխոնարհող տաճարներ: Նրանք իրենց բացառիկ տաղանդի և բնության կողմից տրված գեղեցկության շնորհիվ գերել և տիրել են՝ դառնալով ոչ միայն իրենց ամուսինների ուղեկիցները և սիրելիները, այլ նաև առաջնորդներ, պետական գործիչներ, գիտնականներ, որոնք իրենց գործունեությամբ ազդել են ոչ միայն իրենց ազգի, այլև համաշխարհային պատմության վրա՝ փոխելով նրա ընթացքը: Նրանցից շատերը պետականության կազմավորման գործում ունեցել են կարևոր դեր՝ իրենց թագավոր ամուսիններին պետության համար ծանր ժամանակներում աջակցելով իմաստուն խորհուրդներով, հարկ եղած դեպքում դառնալով ազգի առաջնորդն ու հոգին:


Հայ աշխարհահռչակ, նշանավոր առաջնորդ, պետական գործիչ կանանցից (Եգիպտոսի թագուհի Թիա, Նեֆերտիտե, Մումթազ Մահալ, Դիանա Աբգար, Գոհար Վարդանյան, Աննա Տեր-Վարդանյան, Անիտա Կոնտի, Ալենուշ Տերյան և ուրիշներ) փորձել ենք առանձնացնել Գերմանիայի կայսրուհի հայազգի Թեոֆանուին, որն իր իմաստնության, խոհեմության շնորհիվ դարձավ Գերմանիայի կայսրության իմաստուն թագուհի: Նա իր անունը ոչ միայն ոսկե տառերով գրեց Գեյմանիայի, այլ նաև համաշխարհային պատմության մեջ՝ որպես պետությունը պահպանող ու հզորացնող իր դարի կին կենսագիր:

Ի սկզբանե ենթադրվում էր, որ Թեոֆանուն եղել է Բյուզանդիայի կայսեր (կա՛մ Ռոման II և նրա կնոջ, կա՛մ Պորֆի Կոնստանտին VII) դուստրը[1]: Սակայն հուշագրություններում նրա՝ Պորֆի ընտանիքին պատկանելու մասին վկայություն չկա: Թեոֆանու թագուհու ազնվական ծագումը, ըստ միջնադարյան սկզբնաղբյուրների, շատ վիճելի է, սակայն Մոնտե Կասսինոյի տարեգրությունում տեղեկություն է պահպանվել, ըստ որի՝ Թեֆանուն բյուզանդական հայազգի կայսեր Հովհաննես Չմշկիկի զարմուհին է[2]:

[1] Балакин В. Д, Творцы Священной Римской империи,Москва, 2004, с. 182-183.

[2] Там же, с. 182-183.

Նորահայտ փաստերը՝ բյուզանդական սկզբնաղբյուրները, վկայում են, որ Թեոֆանուն սերում էր երկու հայ ազնվականական ընտանիքներից: Նա պատրիկ Կոնստանտին Սկլերոսի և Սոֆիա Փոկասի դուստրն էր, այսինքն՝ Բյուզանդիայի 10-րդ դարի հռչակավոր հայ ազգի կայսեր՝ Հովհաննես Չմշկիկի առաջին կնոջ՝ Մարիայի եղբոր դուստրն էր[3]: Պատմաբանների կարծիքով՝ Թեոֆանուն, ամենայն հավանականությամբ, ծնվել է 959 թվականին Հայաստանում կամ էլ Սկլերոսների մակեդոնական կալվածքներից մեկում[4]:



Գծապատկեր 1. Թեոֆանու կայսրուհու նախնիները:

Նրա մանկության մասին տեղեկություններն աղոտ են, սակայն ժամանակակիցների վկայությամբ՝ նա կրթված, բանիմաց անձնավորություն էր: Իրեն ժամանակակից տարեգիրները նրան բնորոշում են որպես համեստ, գեղեցիկ, խելացի, ճարպիկ և կրթված կին: Նա հունարենի հետ մեկտեղ տիրապետել է լատիներենին, հետագայում նաև գերմաներենին: Նա ծանոթ էր անտիկ գրականությանը[5]:

Թեոֆանուի՝ գերմանական կայսեր հետ ամուսնության հարցում մեծ ներդրում է ունեցել Հովհաննես Չմշկիկը, որը պատմության մեջ հայտնի է որպես գերմանական կայսրության հետ բարեկամության հաստատման և խաղաղության պահպանման ամենահայտնի ջատագովներից մեկը: Վերջինս ոչ միայն առավելագույնս նպաստեց, որ Թեոֆանուն դառնա գերմա-

[3] Там же, с. 182-183.

[4] Там же, с. 184.

[5] Там же, с. 184.

նական կայսրուհի, այլև իր մերձավոր և վստահելի ազգակիցներից մի քանիսին դրեց երիտասարդ թագուհու տրամադրության տակ՝ օտար երկրում գործով և խոսքով նրան օգտակար լինելու համար, որոնք Գերմանիայում ազնվորեն ծառայեցին Թեոֆանուին՝ դրանով իսկ Գերմանական կայսրությանը: Թեոֆանուի խնամակալ տիկնանցից հայտնի է հատկապես հայազգի Նիկետաս Կուրիկասը[6]:

972 թվականի ապրիլի 14-ին Թեոֆանուն Հռոմի Սուրբ Պետրոս եկեղեցում Հովհաննես 12-րդ պապի ձեռնադրմամբ ամուսնանում է սաքսոնական ընտանիքից սերված Օտտո Մեծ կայսերորդի Օտտո 2-րդի հետ և կայսրուհի թագադրվում: Նրանց ամուսնությունից ծնվում են հինգ զավակներ: 983թ. դեկտեմբերի 7-ին՝ ամուսնու մահից հետո, նրանց երեք ու կես տարեկան որդին՝ Օտտո 3-րդը, Աախեն քաղաքում հռչակվում է թագավոր, իսկ Թեոֆանուն միանձնյա դառնում է երկրի կառավարիչ[7]: Նա մեծ խոհեմությամբ է կառավարում երկիրը 983-991 թվականների ընթացքում: Թեոֆանուի վարած բյուզանդամետ քաղաքականությունը և նրա մշակած քաղաքական նոր սկզբունքները մնայուն ազդեցություն են ունենում իր որդի և իրավահաջորդ Օտտո 3-րդի ապագա քաղաքականության վրա: Ժամանակի տարեգիրները, հետագա պատմիչներն ու պատմաբանները Թեոֆանուին ներկայացրել են որպես իր ժամանակի ամենակրթված ու ամենանշանավոր գործիչներից մեկը: Թեոֆանուի ամենամեծ ծառայություններից մեկն այն էր, որ նա մեծ լրջությամբ նախագծել և իր իշխանության տարիներին հաստատակամորեն փորձել է իրականացնել համաեվրոպական պետական համակարգ ստեղծելու իր յուրօրինակ ծրագիրը: Գերմանացի ուսումնասիրող Հենրի Բենրաթը Թեոֆանուին արձանագրում է.

«Չնայած Թեֆանու կայսրուհու արևելյան ծագմանը, նա ամենագերմանացին էր՝ գերմանացի կայսրուհիների մեջ:[8]»

---

[6] Ազատ Օրդուխանյան, Հայերը Գերմանիայում, Երևան, 2002, էջ 13:

[7] Балакин В. Д, Творцы Священной Римской империи,Москва, 2004, с. 201.

[8] Հենրի Բենրաթ - գերմանացի գրող Ալբերտ Ռաուշի կեղծանունը:



Նկար 1. Թեոֆանու կայսրուհու արձանը Էշվեգեի Սուրբ Դիոնիսիոս եկեղեցու պատին:

Հենրի Բենրաթը գտնում էր, որ Թեոֆանու կայսրուհու վաղաժամ մահը պետք է դիտել որպես Գերմանիայի ազգային դժբախտություն, ինչպես որ ազգային դժբախտություն էր նրա քեռու՝ Հովհաննես Չմշկիկի մահը Բյուզանդիայի համար[9]: Թեոֆանուն մահացել է 991թ.-ին՝ Նիմվեգեն (հոլանդերեն՝ Նիյմեգեն) կայսերական պալատում[10]: Նա իր կամքի համաձայն թաղվում է Քյոլնի Սուրբ Պանթալիոն եկեղեցում՝ հարավային հատվածում, որն ավելացվել և կառուցվել էր իր իշխանության տարիներին: Քյոլնի Սուրբ Պանթալիոն եկեղեցին գտնվում է քաղաքի փոքր բլրի վրա (բարձրությունը Հռենոս գետի մակարդակից 17 մետր է): Առաջին հիշատակությունները բլրի վրա գտնվող եկեղեցու մասին տրվում է 866 թվականի Քյոլնի արքեպիսկոպոս Գյունտերի կողմից: 955 թվականին արքեպիսկոպոս Բրունո I Մեծը այստեղ հիմնել է Բենեդիկտյան միաբանությունը: Կարոլինգյան դինաստիայի վերջում վանքն ընդարձակվեց: Արդեն 10-րդ դարի վերջում Թեոֆանուն շարունակում է վանքի կառուցապատման աշխատանքները՝ այն զարդարելով Սուրբ Պանթալիոնի, Կոսմայի և Դամասի քանդակներով: Կայսր Օտտո 2-րդի և նրա կնոջ Թեոֆանու կայսրուհու օրոք հարուստ կերպով զարդարվում է եկեղեցին, ստանում է տարբեր մասունքներ՝ նվերների տեսքով, ինչպիսիք են Կոստանդնուպոլսից բերված Սբ. Նիկոլասի հրաշագործի մասունքները կամ Աիենից բերված Մեծ պալատական պանտալեմանի մա-

[9] Հենրի Բենրաթ - գերմանացի գրող Ալբերտ Ռաուշի կեղծանունը:

[10] Феофано (императрица Священной Римской империи), https://ru.wikipedia.org

սունքները: Եկեղեցին կանգուն է մինչ այսօր, և այնտեղ ամեն կիրակի պատարագ է մատուցվում:

Թեոֆանու կայսրուհին աշխարհահռչակ, նշանավոր առաջնորդ, պետական գործիչ է կանանց շարքում: Նա մեծ ներդրում է ունեցել Գերմանիայի պատմության մեջ՝ իրականացնելով կայսրության եվրոպակենտրոն քաղաքականությունը: Կին հզոր պետական գործիչների շարքում լավագույներից է: Նա անձնվիրաբար ծառայել է կայսրությանը՝ նրա շահը առաջնային համարելով: Կառավարելով դժվարին ժամանակներում՝ վարել է ճկուն քաղաքականություն, հզորացրել պետությունը, կարևորել կրթությունը, գիտությունը և մշակույթը: Իր հաջորդներին թողել հզոր պետություն աշխարհի քաղաքական քարտեզում զբաղեցրած լավ դիրքով: Գերմանացի պատմիչների գնահատմամբ՝ նա ամենագերմանուհին էր գերմանացիների մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ազատ Օրդուխանյան, Հայերը Գերմանիայում, Երևան, 2002:
2. Балакин В. Д, Творцы Священной Римской империи,Москва, 2004.
3. https://ru.wikipedia.org
4. https://armenpress.am/arm/news/732664

THE MOST ROMAN - AMONG THE ROMAN EMPRESSES - THE EMPRESS THEOPHANU

APKARYAN LUIZA
3rd-year undergraduate student,
Department of Computer Engineering
Faculty of Natural Sciences, Gavar State University
e-mail: luizaapkaryan@gmail.com
Academic Supervisor: Hayrapetyan Kanakara
Applicant of the Institute of History of NAS, RA
GSU Lecturer

This article presents the testimonies, life and activities of Empress Theophanu of the Holy Roman Empire having Armenian roots. The chroniclers and historians of the time have presented Theophanu as one of the most educated and prominent

figures of his time. The new political principles she developed had a lasting impact on the future policies of her son and successor Otto III.

Key words: German Empire, Theophanu, Otto III, the most German, pan-European state system, John Chmshkik, St. Pantalion Church, Scleros.

САМАЯ РИМСКАЯ СРЕДИ РИМСКИХ ИМПЕРАТРИЦ - ИМПЕРАТРИЦА ФЕОФАНО

АПКАРЯН ЛУИЗА

Студентка бакалавриата 3-ого курса
отделения компьютерной инженерии факултета естественных наук ГГУ,
электронная почта: luizaapkaryan@gmail.com
Научный руководитель: Айрапетян Канакара
Соискатель института НАН РА,
преподаватель, ассистент ГГУ

В этой статье представлены свидетельства, жизнь и деятельность императрицы армянского происхождения Священной Римской империи Феофаны. Летописцы, историографы и историки того времени представили Феофану как одну из самых образованных и значимых деятелей своего времени, которая с большой серьезностью спроектировала и в годы своей власти твердо пыталась реализовать свой своеобразный план по созданию общеевропейской государственной системы. Новые политические принципы, разработанные ею, оказали постоянное влияние на будущую политику ее сына и правопреемника Отто III.

Ключевые слова: *Германская империя, Феофан, Otto III, общеевропейское государственное устройство, Иоанн Чмшкик, церковь Св. Панталиона, Склер.*

«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԹԵՐԹԸ ՈՐՊԵՍ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (1991-1992 ԹԹ.)

ԱՐԶԱՆՅԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ arzanyanhayush@gmail.com
Գիտական ղեկավար՝ Շաբունց Գայանե
Գորիսի պետական համալսարանի ասիստենտ

«Զանգեզուր» թերթի բոլոր համարներում բավականին շատ տեղեկություններ կան հայ-ադրբեջանական բախումների, հատկապես Սյունիքի Գորիս, Կապան քաղաքների և սահմանամերձ Խնձորեսկ, Տեղ, Կոռնիձոր, Շուռնուխ և այլ գյուղերի վրա ադրբեջանական սադրանքների և հարձակումների մասին: Արժեքավոր տեղեկություններ կան Գորիսի և Կապանի հարակից գյուղերի ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման և հակահարձակման կազմակերպման վերաբերյալ: Այս հոդվածում ուսումնասիրվել են «Զանգեզուր» թերթի 1991-1992թթ. համարներում արձանագրված տեղեկությունները արցախյան առաջին պատերազմի ընթացքում հայ-ադրբեջանական բախումների մասին:

Բանալի բառեր՝ *Խնձորեսկ, սահմանամերձ գյուղեր, հարձակում, ադրբեջանական սադրանքներ, ինքնապաշտպանություն, հակագրոհ, հաղթանակ:*

Այսօր մեր հայրենի Խնձորեսկ, Կոռնիձոր, Խնածախ, Տեղ, Արավուս և այլ սահմանային գյուղեր կանգնած են այն նույն վտանգի առջև, որը եղել է Արցախյան առաջին պատերազմի տարիներին: Ադրբեջանցիները բազմիցս հարձակումներ և սադրանքներ են իրականացրել նշված գյուղերի ուղղությամբ: Այդ պատճառով, ուսումնասիրելով «Զանգեզուր» թերթի 1991 և 1992 թվականների համարները, որտեղ մանրամասն խոսվում է այդ բոլոր հարձակումների մասին, փորձել ենք վեր հանել և պատճառահետևանքային կապ տեսնել գյուղերի այսօրվա և 1991-1992թթ. վիճակի հետ՝ հասկանալու համար, թե այսօր ի՞նչ վտանգի առջև ենք կանգնած:

Պատերազմի տարիներին շատ լուրջ վնասներ են կրել Գորիսի գյուղերը, մասնավորապես Կոռնիձորը: Թերթում հաղորդվում է, որ 1990թ. դեկ-

տեմբերի 31-ին՝ ժամը 23:30-ից սկսած, Լաչինի շրջանի Ներքին Ջիջիմլի գյուղից, որտեղ տեղակայված են եղել խորհրդային բանակի զինվորները, կրակ է բացվել Կոռնիձոր գյուղի ուղղությամբ: Մի քանի ժամ հետո հաջողվել է լարվածությունը թուլացնել[1]: Թերթի մյուս համարներից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի տարածքում գտնվող խորհրդային բանակի զինվորները հաճախ փոխել են իրենց գնդակոծության աշխարհագրությունը: Ուստի օրինաչափ է եղել, որ նրանք փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը կրկին գնդակոծել են Կոռնիձոր գյուղը: Չբավարարված կրքերը պատճառ դարձան, որ փետրվարի 18-ին՝ ժամը 23-ից 24-ի սահմաններում, վերստին կրակ բացվեր Կոռնիձորի վրա: Գյուղը գնդակոծվել է արկերով, հրազենային այլ զենքերով[2]:

Ապրիլի 24-ին՝ ժամը 23-ի սահմաններում, Լաչինի շրջանի տարածքից՝ Կոռնիձորի դիմաց կառուցվող բնակավայրից, հրետակոծվել է Կոռնիձոր գյուղը: Պատահարն անցել է առանց վնասների և ավերածությունների: Մի քանի ժամ հետո՝ ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը՝ ժամը 2-ին, Զաբուղի ձորից հրետանային կրակ է բացվել Կոռնիձոր և Տեղ գյուղերի ուղղությամբ: Ժամը 21-ից Կոռնիձոր գյուղից Գորիս քաղաք էին էվակուացվում երեխաներ, ծերեր և կանայք: Բոլոր այս դեպքերում էլ թշնամին ստացել է արժանի հակահարված: Օրվա վերջին՝ ուշ երեկոյան, սահմանապահ բոլոր ուղեկալներում առաջին պատրաստության վիճակ էր: Առաջնագծում էին ինչպես սահմանային պարետատան զինվորները, այնպես էլ Գորիսի միլիցիայի աշխատակիցները, երկրապահ ջոկատի մարտիկները: Ժամը 21-ի սահմաններում Զաբուղի ձորում կրկին որոտում էր հրետանին[3]: Այս չդադարող հարձակումներով ազերիները ցանկանում էին ստուգել Կոռնիձորի պահակակետի քաջարի մարտիկների զգոնությունը, ինչպես նաև անընդհատ վախի և խուճապի մեջ պահել տեղացիներին: Սակայն դա երբեք նրանց չի հաջողվել: Սահմանամերձ բոլոր գյուղերի բնակիչները միշտ էլ մնացել են իրենց տներում՝ հայրենի գյուղում՝ ամուր պահելով գյուղի անվտանգությունը:

Թշնամին շարունակում էր իր գրոհները գյուղերի ուղղությամբ: Մայիսի 14-ին ազերիները կրկին անցել են հրետակոծման: Մի քանի արկ պայթել էր Խնձորեսկում, որին հետևել է պաշտպանական մեր ուժերի հակահարվածը:

---

[1] «Զանգեզուր» թերթ, №2 (6949), 3 հունվարի, 1991թ., էջ 1:

[2] «Զանգեզուր» թերթ, №24 (6971), 23 փետրվարի, 1991թ., էջ 1:

[3] «Զանգեզուր» թերթ, №32 (7100), 29 ապրիլի, 1992թ., էջ 4:

Հակառակորդն անմիջապես լռել է: Գիշերը՝ ժամը 2:30-ին, Լաչին-Կուբաթլի ճանապարհով անցնող ադրբեջանական շարասյունը կրակ է բացել Կոռնիձորում գտնվող մեր պաշտպանական դիրքերի վրա զրահատեխնիկայից և մեծ տրամաչափի գնդացիրներից: Պաշտպանական մեր ուժերն ունեցել են 1 վիրավոր և 1 զոհ: Առավոտյան ժամը 6-ի սահմաններում Կուբաթլիի Մազրի դուզ կոչվող տարածքի կրակակետերից հրետակոծվել էր նաև Հարթաշեն գյուղը: Պատասխան գործողություններից հետո լռեցվել էր թշնամու մեկ կրակակետ[4]:

1992թ. հունիսի 3-ին՝ ժամը 18-ի սահմաններում, Կուբաթլիի Մազրի դուզ տարածքից հրետակոծվել են Կոռնիձորը, Խնձորեսկը, Հարթաշենը, Խոտը, Գորիս քաղաքը: Բարեբախտաբար զոհեր, վիրավորներ, նոր ավերածություններ չեն եղել[5]: Հունիսի 13-ին Կուբաթլիի տարածքից շարունակվում էր չդադարող հրետակոծությունը Կոռնիձորի վրա: Փաստորեն, մեկ օրվա ընթացքում թշնամին մի քանի գրոհներ է ձեռնարկել տարբեր գյուղերի ուղղությամբ՝ ցանկանալով հասնել հաջողության, սակայն դա նրանց չի հաջողվել, քանի որ բոլոր դեպքերում էլ հայ մարտիկները տվել են արժանի հակահարված՝ լռեցնելով թշնամու կրակակետերը[6]:

«Զանգեզուր» թերթի «Կուբաթլի-Գորիս սահմանագիծը բոցերի մեջ» հոդվածից տեղեկանում ենք, որ հունիսի 16-ի առավոտյան՝ ժամը 6-ի սահմաններում, Կուբաթլիի շրջանից Ադրբեջանի բանակայինները կրկին հարձակում են ձեռնարկել Կոռնիձոր գյուղի ուղղությամբ՝ Լաչինի շրջանի Մալախալափ գյուղի տարածքով: Փորձ էր կատարվել վերագրավել հումանիտար միջանցքում գտնվող այդ գյուղը: Ուժեղ հակահարվածից հետո թշնամին հետ է նահանջել: Ինքնապաշտպանության մարտիկներից երկուսը վիրավորվել են: Ժամը 15-ից Կոռնիձորը կրկին գնդակոծության թիրախ էր: Գյուղի վրա և մերձակայքում ընկել են հարյուրավոր արկեր: Հրետակոծությունը շարունակվել է մինչև ուշ երեկո: Գյուղում կային նոր ավերածություններ: Կոռնիձորի վրա ազերիները հունիսի 17-ին խոշոր հարձակում են ձեռնարկել՝ նպատակ ունենալով հսկողություն սահմանել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ միջանցքի վրա: Թշնամու առաջխաղացումը խափանելու նպատակով

[4] «Զանգեզուր» թերթ, №37 (7105), 16 մայիսի, 1992թ., էջ 1:

[5] «Զանգեզուր» թերթ, №42 (7110), 6 հունիսի, 1992թ., էջ 1:

[6] «Զանգեզուր» թերթ, №45 (7113), 17 հունիսի, 1992թ., էջ 1:

գետն անցնելու ժամանակ հայ մարտիկներից մեկը՝ Սեյրան Քարամյանն անհետ կորել է[7]:

Օգոստոսի 8-ին՝ ժամը 15-ից մինչև 8-ը, գյուղը կրկին ենթարկվել է զանգվածային հրետակոծության «Գրադ» կայանքով և ՍՈՒ-24 ռմբակոծիչով: Փլվել էր 1 տուն: Գյուղից ներքև՝ «Ծըրպարան» կոչվող դաշտում, ընկել է 16 արկ: Բռնկվել է հրդեհ, հրկիզվել մոտ 8 հա արտ: Մեծ վնաս է հասցվել սեփականաշնորհված այգիներին[8]: Սահմանին իրադրությունը շարունակվում էր լարված մնալ: Օգոստոսի 26-ին՝ ժամը 22-ից կրակ է բացվել Կոռնիձոր գյուղի վրա, որը տևել է մինչև ժամը 00:30: Կային նոր ավերածություններ: Այդ նույն օրը հրետակոծել են նաև Տեղը՝ պատճառելով նյութական զգալի վնաս[9]: Իսկ օգոստոսի 29-ին ազերիները հարձակվել էին Շուռնուխի վրա: Հարձակումը հետ է մղվել մեր ազատամարտիկների կողմից: Ադրբեջանցիները կրել էին կենդանի ուժի զգալի կորուստներ: Ի նշան սեպտեմբերի 1-ի՝ զինադադարի անցնելու ղազախստանյան պայմանավորվածության՝ ադրբեջանցի ելուզակները վերստին ցույց տվեցին իրենց «պատրաստակամությունը»՝ այն արտահայտելով հրանոթային, հրթիռային գնդակոծության նոր ալիքով: Սեպտեմբերի 1-ի ցերեկը ազերիները հրթիռահրետանային գնդակոծության են ենթարկել Խնձորեսկի, Կոռնիձորի, Հարթաշենի պաշտպանական դիրքերը՝ ցանկանալով լրիվ «սանրել» դրանք: Մեր մարտիկները սկզբնական շրջանում պատասխան հարվածի չեն դիմել՝ հաշվի առնելով զինադադարի մասին Ալմա-Աթայում ձեռք բերված պայմանավորվածությունը: Տեսնելով, որ ազերիների գրոհները չեն դադարում, մեր սահմանապահ ուղեկալի մարտիկները ստիպված դիմել են հակահարվածի[10]: Ուսումնասիրելով «Ձանգեզուր» թերթը, համեմատելով 1991-1992թթ. դեպքերը և կապ ստեղծելով ներկայի հետ՝ հասկանում ենք, որ թշնամին նույնն է մնացել: Նրանց համար կարծես թե սովորական է դարձել, որ պետք է արհամարհել զինադադարի մասին բոլոր պայմանավորվածությունները: Ազերիները նույնն են մնացել նաև այն իմաստով, որ պատերազմի ընթացքում չեն խնայում ոչինչ, օգտագործում են տարբեր տեսակի արգելված զենքեր, որի ականատեսն էինք նաև Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում:

---

[7] «Ձանգեզուր» թերթ, №46 (7114), 20 հունիսի, 1992թ., էջ 1:

[8] «Ձանգեզուր» թերթ, №61 (7129), 12 օգոստոսի, 1992թ., էջ 1:

[9] «Ձանգեզուր» թերթ, №66 (7134), 29 օգոստոսի, 1992թ., էջ 2:

[10] «Ձանգեզուր» թերթ, №67 (7135), 2 սեպտեմբերի, 1992թ., էջ 1:

Արցախյան առաջին պատերազմի ժամանակ հրետակոծություններից անմասն չէին մնացել նաև Խնձորեսկ և Ներքին Խնձորեսկ գյուղերը, որոնք բավականին շատ էին տուժել այդ ընթացքում: Թերթում մանրամասն տեղեկություններ կան այդ մասին: 1991թվականի հունվարի 13-ին՝ ուշ երեկոյան, Ադրբեջանի վարչական տարածքից կրակոցներ են եղել Ներքին Խնձորեսկի ուղղությամբ: Ոչ պաշտոնական տվյալներով զրահամեքենաները պատկանել են ԽՍՀՄ ՆԳ նախարարության ներքին ստորաբաժանումներին: Հունվարի 14-ի առավոտյան դրությունը շարունակում էր մնալ լարված, թեպետ կրակոցներ չէին լսվել[11]: Ամբողջ հունվար- փետրվար ամիսներին սահմանամերձ գյուղերի վիճակը դեռևս լարված էր: Փետրվարի 27-ին ավտոմատներից, կարաբիններից կրակ էր բացվել Խնձորեսկի, Խնաձախի, Կոռնիձորի և Տեղի ուղղությամբ Մալիբեյ գյուղի կողմից: Գորիսի արտակարգ շրջանի զինվորները պատասխան կրակ են բացել գնդակոծողների ուղղությամբ: Այդ օրը Խնաձախը երկրորդ անգամ գնդակոծվեց մեծ տրամաչափի զենքերից ժամը 22:30-ի սահմաններում: Իսկ ահա հաջորդը կրկին Խնձորեսկն էր: Փետրվարի 28-ի լույս մարտի 1-ի գիշերը՝ ժամը 4:10 րոպեին, կրակ էր բացվել գյուղի պահակակետերի ուղղությամբ: Խնձորեսկի վրա հարձակումները շարունակվում էին: Թշնամին ամեն կերպ ցանկանում էր շարքից հանել գյուղի պահակակետերը, սակայն, ինչպես տեսնում ենք, դա նրանց չի հաջողվել:

«Զանգեզուր» թերթից մենք բավականին շատ տեղեկություններ ենք ստանում Խնձորեսկի վրա կատարված հարձակումների մասին, որոնցից հերթականը տեղի է ունեցել 1992թ. փետրվարի 11-ին, երբ Կուբաթլիի տարածքից հրետանային գնդակոծության է ենթարկվել գյուղը: Խնձորեսկում տեղակայված զինվորական պահակակետի պատասխան կրակից հետո հակառակորդը լռել է: Հրետակոծության պատճառով գյուղում կային ավերածություններ: Գյուղը դեռ չէր հասցրել մոռանալ փետրվարի 11-ի գնդակոծությունը, երբ կրկին փետրվարի 18-ին դարձավ հրետակոծության թիրախ: Երեկոյան՝ ժամը 21-ի սահմաններում, Կուբաթլիի շրջանի Նովլու, Ալիղուլիշեն գյուղերի մերձակայքից և սահմանամերձ պահակակետերից կարկտահար հրանոթներով, մարտական մեքենաներով կրակ է բացվել Խնձորեսկի ուղղությամբ: Արկերի առաջին պայթյունին հաջորդեցին մյուսները: ՀՀ ներքին գործերի նախարարության հատուկ գնդի՝ Գորիսի ստորաբաժանման

[11] «Զանգեզուր» թերթ, №7 (6954), 15 հունվարի, 1991թ., էջ 1:

Խնձորեսկի դասակի մարտիկները Սանասար Բեգլարյանի հրամանատարությամբ ոտքի էին կանգնել առաջին իսկ կրակոցներից անմիջապես հետո՝ փոխադարձ կրակահերթեր ուղղելով հակառակորդի կրակակետերին: Սակայն ծավալուն հակագրոհը սկսվեց միայն փետրվարի 19-ի առավոտյան՝ մոտ ժամը 7-ին:

Լուսադեմին ձեռնարկված լայնածավալ հակագրոհին հաջորդեց ժամանակավոր հրադադար: Հակառակորդի կրակակետերը նույնպես լռեցին: Ցավալիորեն մարտական գործողությունների այդ օրվա խրոնիկան դրանով չամփոփվեց: Ցերեկը՝ ժամը 13:30-ի սահմաններում, Խնձորեսկը և գյուղի մերձակայքը ենթարկվեցին ինտենսիվ հրետակոծման: 9 արկ ընկել է գյուղի վրա՝ տարբեր տեղերում: Արկերից մեկը պայթեց Անդրանիկ Դադալյանի տան վրա, որի հետևանքով մահացու վիրավորվեց չորսամյա Լուսինե Բալասանյանը: Վիրավորվեցին տան հարսը՝ Ալվարդ Դադալյանը, և տանտերը՝ Անդրանիկ Դադալյանը: Արկի հարվածն այնչափ դիպուկ էր, որ անմիջապես հրդեհ բռնկվեց տանը, փլուզվեց պատը: Մասնակի վնաս պատճառվեցին նաև այլոց բնակարաններին և տնտեսություններին: Ադրբեջանցիների ցերեկային վերահարձակումը, որի ողբերգական հետևանքները չէին կարող չկանխատեսել դրա ձեռնարկիչները, արժանի էր հաշվեհարդարի:

Վճիռը կայացված էր՝ գրոհով վնասազերծել, շարքից դուրս բերել Կուբաթլիի սահմանային պահակակետը: Ի դեպ, այս կետը, որտեղ ավելի վաղ տեղաբաշխված էր 4-րդ բանակի ուղեկալը, քիչ չէր հենադաշտ հանդիսացել թշնամական արյունալի ձեռնարկումների համար: Գրոհին նախորդեց ադրբեջանական կրակակետի հրետակոծումը: Կեսժամյա հրետանային պատրաստությունից հետո՝ ժամը 15-ին, Սանասար Բեգլարյանի դասակն անցավ գրոհի: Մեկ ժամ տևած մարտը թուրք օմօնականներին ստիպեց փախուստի դիմել: Կրակակետը շարքից հանված էր դասակի հմուտ, համարձակ գործողությունների շնորհիվ: Այնտեղ գտնվող ռազմական տեխնիկան հիմնականում ոչնչացվեց, 2 հակատանկային հրանոթ, 50 արկղ արկ ևս, իսկ ահա մարտական 2 մեքենա բռնագրավվեց: 7-րդ բանակի օպերատիվ խմբի ուղեկալի զինվորականները հայ մարտիկների հետ գործում էին խիստ համագործակցված և իրենց հնարավորությունները լիովին ծառայեցնում էին ագրեսիային հակահարված տալուն: Ժամը 18-ի սահմաններում, ինչպես նկատել էին ուղեկալի դիտորդները, ադրբեջանցի բանակայինները կրկին մոտենում էին ավերված ուղեկալին: Քիչ անց հրետանային փոխհրաձգությունը արդեն սկսված էր... Անքուն, տագնապալի երկու օրը իր

դրոշմն էր թողել Ներքին Խնձորեսկի վրա: Անմիջապես սահմանագծում գտնվող գյուղը, որը յուրօրինակ մի ամրոց է այսօր գորիսեցիներիս համար, արիաբար դիմակայում էր պարտադրված սադրանքին: Գյուղի վիճակը հեռու էր խուճապային լինելուց, թեև անկարելի էր նաև այն սովորական համարել: Ներքին խնձորեսկցիների ոգին բարձր էին պահում Սենիկ Ղուլյանի ջոկատի տղաները[12]: Փաստորեն, ինչպես Կոռնիձորի բնակիչները, այնպես էլ խնձորեսկցիները թշնամու ցանկացած գրոհի տվել են արժանի հակահարված՝ ամուր մնալով իրենց տեղերում:

«Գորիսը ենթարկվում է զանգվածային հրետակոծության» հոդվածում մանրամասն տեղեկություններ կան մայիսի 8-ի դեպքերի հետ կապված: Ադրբեջանցիները մայիսի 8-ին Լաչինի և Կուբաթլիի տարածքից լայնածավալ հարձակում էին սկսել Գորիսի շրջանի ամբողջ սահմանի երկարությամբ: Չայզամիից մինչև Խոզնավար թշնամու հարվածն իրենց վրա էին վերցրել սահմանային գյուղերի բնակչությունը, ՀՀ սահմանապահ զորքերի Գորիսի պարետատան զինվորները, երկրապահ ջոկատի մարտիկները: Ցավոք, մղված մարտերի արդյունքում հայկական կողմից եղել են զոհեր: Իսկ Խնածախ, Տեղ, Արավուս, Կոռնիձոր, Շուռնուխ գյուղերը նյութական զգալի վնասներ էին կրել: Կրքերը այդ ամենով չհանդարտվեցին: Մայիսի 9-ի առավոտյան Լաչինի շրջանի տարածքից վերսկսվել է Գորիսի սահմանային գյուղերի հրետակոծումը: Ռադիոկապով Գորիսի, Լաչինի շրջանների իրավապահ ղեկավարների միջև տեղի ունեցած խոսակցությունից և հատկապես Գորիսի տարածքից Լաչինի շրջկենտրոնին հրետանային ուժգին հակահարված տալուց հետո ադրբեջանական կողմը լռել է: Ժամը 20-ին Լաչինի տարածքից հրետանային նոր հարվածներ են ուղղվել Գորիսին, որին հետևել է Գորիսի պատասխանը: Դրանից հետո Գորիս-Լաչին սահմանագծում հաստատվել է հարաբերական անդորր: Ժամը 22-ին շրջանի տարածքը ուժգին հրետանային գնդակոծության է ենթարկվել Կուբաթլիի տարածքից: Հարվածներն ուղղված էին առանձնապես Գորիս քաղաքին, Հարթաշեն, Քարահունջ գյուղերին: Հրետակոծությունը դադարել է այն բանից հետո, երբ Կուբաթլիի շրջկենտրոնը հայկական կողմից ստացել է պատասխան հարված: Այդ ընթացքում, մոտ 3 ժամ տևողությամբ, Գորիս քաղաքում քաղաքացիական պաշտպանության շրջանային շտաբի կողմից հայտարարվել էր տագնապ՝ «հրանոթային գնդակոծության» պատճառով: Ինչպես քա-

[12] «Զանգեզուր» թերթ, №15 (7083), 22 փետրվարի, 1992թ., էջ 1-2:

ղաքում, այնպես էլ սահմանային գյուղերում վնասվել էին ինժեներական առանձին կառույցներ, գազատար ցանցը, էլեկտրալարերը, հեռախոսակապը[13]:

Ադրբեջանցիների կողմից 1991-1992թթ. ինտենսիվ կերպով հրետակոծվել են նաև Գորիսի մյուս գյուղերը, մասնավորապես Տեղ, Արավուս, Խոզնավար, Խնածախ, Շուռնուխ և այլն: Թերթի թիվ 24-ի հոդվածում խոսվում է, որ 1991թ. փետրվարի 13-ի լույս 14-ի գիշերը Ադրբեջանի տարածքում գտնվող խորհրդային բանակը գնդակոծել է Սև քերծի տարածքը (Տեղ գյուղ): Ադրբեջանի տարածքից հրետակոծում էին հայերի դիրքերը: Տեղանքը նրանց կարծիքով մաքրելուց հետո զրահամեքենաները մտնում են Սև քերծի տարածք, հրդեհում մեղվանոցը, ոչխարանոցը: Փետրվարի 14-ին Լաչինի շրջանի պարետի և զինծառայողների հետ հանդիպումից պարզվում է, որ խորհրդային բանակի սպայական կազմը ադրբեջանցիներ են և նրանք, ինչպես միշտ, շարժվելով իրենց կանոնակարգով, գործել էին ոչ սթափ վիճակում: Թշնամին կրակ էր բացում ոչ միայն հայ մարտիկների ուղղությամբ, այլ նաև խաղաղ բնակիչների: Փետրվարի 18-ին, երևի դժգոհ իրենց տարածքում գտնվող զինվորների մարտական գործողություններից, Ադրբեջանի ազգային բանակի ելուզակները՝ թվով 8 հոգի, կրակել են Խոզնավարցի հովիվների վրա, որոնք տվյալ պահին հոտը հանել էին արոտի: Բարեբախտաբար տուժածներ չեն եղել: Մի քանի ժամ անց՝ ժամը 23-ին, ազերիները կրակ բացեցին Խոզնավարի վրա: Գորիսի հատուկ ստարաբաժանման մարտիկներին հաջողվել է լռեցնել նրանց՝ պատասխան կրակից հետո: Գորիսեցիներին ներքաշել նոր պրովոկացիաների մեջ չի հաջողվել ո՛չ Ադրբեջանի ազգային ճակատի մոլեռանդներին, ո՛չ էլ նրանց խոսափողը դարձած խորհրդային բանակի մարտիկներին[14]:

Բազմաթիվ տվյալներ փաստում են, որ Արցախյան երրորդ պատերազմում նույնպես ադրբեջանցիները գործել են ոչ սթափ վիճակում:

Մայիսի 10-ի առավոտվանից համեմատաբար անդորր էր: Ժամը 18-ի սահմաններում Լաչինի շրջանի տարածքից հրետանային համազարկերով հարվածել են Տեղին: Ադրբեջանական կրակակետերին պատասխան հարված տալուց հետո գնդակոծությունը դադարեցվել է: Օրվա երկրորդ կեսին ադրբեջանցիները զանգվածային հարձակում էին ձեռնարկել Կապանի ուղ-

[13] «Ձանգեզուր» թերթ, №36 (7104), 13 մայիսի, 1992թ., էջ 1-2:

[14] «Ձանգեզուր» թերթ, №24 (6971), 23 փետրվարի, 1991թ., էջ 1:

ղությամբ՝ Կուբաթլիի և Զանգելանի տարածքից: Գորիսից և Դավիթ Բեկից Կուբաթլիի շրջկենտրոնին ուժեղ հակահարված տալուց հետո հարձակումը Կապանի ուղղությամբ կասեցվել է: Սակայն ժամը 21-ից հետո Կուբաթլին հրետանային նոր հարվածներ է ուղղել Գորիսի, Հարթաշենի ուղղությամբ, որին հետևել է հայկական կողմի հակահարվածը: Գիշերը սահմանի առանձին հատվածներում տեղի է ունեցել գնդացրային և ավտոմատային փոխհրաձգություն հայկական և ադրբեջանական կողմների միջև: Ազերիների նոր հարձակումը փոխկապակցված է եղել Շուշիի համար մղվող մարտերի հետ[15]:

Երկուշաբթի օրը՝ օգոստոսի 31-ին, ազերիները ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռով ռմբակոծել էին Լաչինի մարդասիրական միջանցքը: Հայ ազատամարտիկներին հաջողվել էր ոչնչացնել ՍՈՒ-25 ռմբակոծիչը[16]:

Ադրբեջանցիները Գորիսի գյուղերի վրա հարվածներ էին հասցնում նաև Քելբաջարի տարածքից: Սեպտեմբերի 20-ին թշնամին Քելբաջարի տարածքից հարձակում է իրականացրել Լաչինի միջանցքի վրա: Սյունիքի աշխարհազորայինները ստիպված են եղել մարտի մեջ մտնել թշնամու հետ: Անհավասար մարտերի ժամանակ աշխարհազորայիններին օգնության էր հասել 1 զրահամեքենա և սահմանապահ գնդի 1 ջոկատ: Գրոհը հաջողվել է կասեցնել և թշնամին ետ է շպրտվել՝ տալով մեկ տասնյակից ավելի սպանվածներ, որոնց մեջ կային ազգությամբ ռուս վարձկաններ: Հատկանշականն այն է, որ, ինչպես նկատել են աշխարհազորայինները, հակառակորդի զինվորները իրար հետ խոսում էին միայն ռուսերենով: Այդ օրը հարձակում է ծավալվել Աղավնագետ գետի հյուսիսային ուղղությամբ: Ունենալով զինուժի և տեխնիկայի բացարձակ առավելություն՝ թշնամին, անցնելով Ղարաղըշլաղ գյուղը, ընդհուպ մոտեցել է Աիմավան-5 գյուղին, որտեղ գտնվում էր մ.թ. 5-րդ դարի կառույց Ծիծեռնակավանքը: Սեպտեմբերի 20-ին Կուբաթլիի կողմից «Գրադ» կայանքներով սաստիկ հրթիռակոծության է ենթարկվել Աիմավան-1 (Զաբուղ) գյուղը:

Սեպտեմբերի 21-ին թշնամին հետ է շպրտվել նաև Ծիծեռնակավանքի մատույցներից՝ տալով մեծ կորուստներ: Ադրբեջանական մի մեծ ստորաբաժանում սեպտեմբերի 21-ին ընկել է շրջափակման մեջ: Հաջորդ օրը հայկական ինքնապաշտպանական ուժերը, անցնելով հակահարձակման, հակա-

[15] «Զանգեզուր» թերթ, №36 (7104), 13 մայիսի, 1992թ., էջ 1-2:

[16] «Զանգեզուր» թերթ, №67 (7135), 2 սեպտեմբերի, 1992թ., էջ 1:

ռակորդին հետ են շպրտել Լաչինի միջանցքում գտնվող Ղոչազ գյուղից: Թշնամին մարտի դաշտում թողել էր 60 սպանված: Լաչինի միջանցքում վերահսկողությունն իր ձեռքը վերցնելու համար հակառակորդը ոչ մի բանի առջև կանգ չի առել: Նրանք մարտի դաշտ էին հանում նույնիսկ 18-20 տարեկան պատանիներին: Հակառակորդի կողմից կռվում էին նաև ազգությամբ ռուս վարձկաններ: Հայ ազատամարտիկները լսել են նաև կանացի ձայներ: Կարծես թե ռուս վարձկանների մեջ եղել են նաև կանայք[17]: Անցել է մոտ 30 տարի, սակայն թշնամին չի փոխել իր մարտավարությունը: Այս անգամ ևս նրանց կողմից մարտական գործողություններին մասնակցում էին մեծ թվով գրոհայիններ՝ սիրիացի վարձկաններ: Նրանք, ինչպես նաև ադրբեջանցի զինվորականները, իրենց սովորության համաձայն, գտնվում էին ոչ սթափ վիճակում՝ խաղալով մի ամբողջ սերնդի ճակատագրի հետ, անմարդկային և դաժան վերաբերմունք ցուցաբերելով նաև խաղաղ բնակիչների նկատմամբ:

«Զանգեզուր» թերթը անդրադարձ է կատարել նաև Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին: 1992թ. հունվարի 13-ի լույս 14-ի ամբողջ գիշերը «Ալազան» հրթիռներով և Ս-12 տիպի արկերով գնդակոծվել է Ստեփանակերտ քաղաքը: Ստեփանակերտում իսկական քաոս էր տիրում: 15 օր քաղաքը էլեկտրականություն չի ունեցել, չէին աշխատում հացի գործարանները, ալյուր և վառելիք նույնպես չկար: Մրսածության հետևանքով Ստեփանակերտում, հատկապես մեծահասակների մոտ, համաճարակ էր սկսվել: Ադրբեջանական հարող շրջաններից գնդակոծվել էին նաև Հադրութի շրջկենտրոնը և Շահումյանի շրջանը:

Հունվարի 24-ի գիշերը Շուշիի, Մալիբեյլիի, Խոջալուի կողմից նորից հրթիռակոծվել ու գնդակոծվել է Ստեփանակերտը: Նույն գիշերը ադրբեջանական Շեֆեզ գյուղի կողմից գնդակոծման էր ենթարկվել Ղարաչինար գյուղը: Հունվարի լույս 25-ի գիշերը ադրբեջանցիները կրկին զանգվածաբար հարձակման անցան Ղարաչինար գյուղի վրա: Նույն օրը վերսկսվել էր նաև Ստեփանակերտի ռմբակոծությունը Շուշիի կողմից, որը տևել է 3 ժամ: Հունվարի 26-ի առավոտվանից Ադրբեջանի ազգային բանակի ստորաբաժանումները լայնամասշտաբ մարտական գործողություններ են սկսել Քարինտակի դեմ: Հարձակմանը մասնակցում էին շուրջ 250 պատժիչներ, որոնց գործողությունները պաշտպանվում էր ուժեղ հրետանային կրակով: 12 ժամ

[17] «Զանգեզուր» թերթ, №73 (7141), 26 սեպտեմբերի, 1992թ., էջ 1,4:

տևած մարտից հետո ադրբեջանցիները նահանջել են՝ մարտադաշտում թողնելով մինչև 75 միավոր զենք: Մարտերի ժամանակ զոհվել են գյուղը պաշտպանող 18 քարինտակցիներ:

Հունվարի 28-ին՝ ժամը 16:20 րոպեին, Աղդամ-Շուշի ուղերթ կատարող Մի-8 ուղղաթիռներից մեկը ընկել է Շուշիքենդ գյուղի մոտակայքում: Ուղղաթիռը ընկել և ջախջախվել է[18]:

ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի և այլ բնակավայրերի անդադար ռմբակոծությունները, շրջափակումը, գազի և էլեկտրաէներգիայի երկարատև բացակայությունը ստեղծել էին անտանելի վիճակ, սովի ու համաճարակի սպառնալիք: ԼՂՀ իշխանությունները հարկադրված էին դիմելու արտակարգ միջոցների՝ լռեցնելու հանրապետության անդորրը խանգարող հենակետերը: 1992թ. Մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը՝ ժամը 2:30-ի կողմերը, հայ ազատամարտիկների ծավալած գործողությունները պսակվեցին կատարյալ հաջողությամբ՝ Շուշի քաղաքի ազատագրմամբ[19]:

Այս հոդվածում ներկայացված են ընդամենը 1991-1992թթ. ադրբեջանական սադրանքները մեր գյուղերի նկատմամբ, որոնք շուրջ 30 տարի հետո դարձան նույն սահմանամերձ կարգավիճակով գյուղերը: Այսօր նույն ազերին ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա է Խնձորեսկ, Կոռնիձոր, Շուռնուխ, Որոտան գյուղերից, և եթե չկազմակերպվենք և միասնական չդառնանք, ապա նորից, ցավոք, հերթական սադրանքների դեպքում չենք կարողանա արժանի հակահարված տալ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զանգեզուր» թերթ, №2, №24, №7 (1991թ.)
2. 2.«Զանգեզուր» թերթ №9, №15, №24, №32, №36, №37, №38, №42, №45, №46, №61, №66, №67, №73 (1992թ.)

[18] «Զանգեզուր» թերթ, №9 (7077), 1 փետրվարի, 1992թ., էջ 1:

[19] «Զանգեզուր» թերթ, №38 (7106), 20 մայիսի, 1992թ., էջ 3:

THE NEWSPAPER "ZANGEZUR" AS THE INITIAL SOURCE OF THE 1ST ARTSAKH WAR IN 1991-1992

ARZANYAN HAYKUSH
3rd-year student of the Department of History,
Faculty of Humanities, Goris State University
e-mail: arzanyanhayush@gmail.com
Academic Supervisor: Shabunts Gayane
Assistant

In all chapters of «Zangezur» newspaper there is a lot of detail-oriented information about the Armenian-Azerbaijani conflicts especially concerning the Azerbaijan's aggression and attack towards cities of Syunik region: Goris, Kapan and the frontier villages Khndzoresk, Tegh, Kornidzor, Shurnukh and other villages. There is valuable information on the organization of a counterattack and self-defense brigades in adjacent villages of Goris and Kapan. In this article we have researched the information about the Armenian-Azerbaijani conflicts in 1991-1992 presented in chapters of «Zangezur» newspaper.

Key words: *Khndzoresk, frontier villages, attack, Azeri provocations, self-defense, counterattack, victory.*

ГАЗЕТА «ЗАНГЕЗУР» КАК ПЕРВОИСТОЧНИК ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ (1991-1992гг.)

АРЗАНЯН АЙКУШ
Студентка 3-его курса отделения истории
факультета гуманитарных специальностей
Горийского государственного университа,
электронная почта: arzanyanhayush@gmail.com
Научный руководитель: Шабунц Гаяне
Ассистент

Во всех номерах газеты «Зангезур» достаточно много сведений об армяно-азербайджанских столкновениях, имеется подробная информация, в особенности, о провокациях и нападениях Азербайджана на Сюник, на города Горис, Капан, а также на приграничные села Хндзореск, Тех, Корнидзор, Шурнух.

Имеются ценные сведения относительно формирования отрядов самообороны и организации контрнаступления в селах, близлежащих к Горису, Капану. В данной статье была исследована информация об армяно-азербайджанских столкновениях в период первой Арцахской войны, взятая из газеты «Зангезур» за 1991-1992 гг.

Ключевые слова: *Хндзореск, приграничные села, нападение, азербайджанские провокации, самооборона, контратака, победа.*

ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

ԱՅՎԱԶՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ hripsime.ayvazyan.99@mail.ru
Գիտական ղեկավար՝ Թունյան Վալերի
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1828թ-ի ձմռանն ավարտվում է ռուս- պարսկական հերթական պատերազմը, որից հետո ռուսական կայսրությունը և Պարսկաստանը ստորագրեցին Թուրքմենչայի պայմանագիրը: 1827թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը տեղի է ունենում Երևանի նշանավոր բերդի ռմբակոծությունը: Շուտով կոտրվում է թշնամու համառ դիմադրությունը և վերջնականապես ընկնում է պարսկական բռնակալության վերջին հենակետը Հայաստանում: 1828թ. փետրվարի 10-ին Գրիբոյեդովի գործուն մասնակցությամբ կնքվում է Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագիրը: Այդ պայմանագրի համաձայն՝ Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի շրջանը մեկընդմիշտ ազատագրվում են պարսկական բռնակալության լծից և անցնում Ռուսաստանի տիրապետության տակ: Թուրքմենչայի պայմանագիրը վճռական շրջադարձ առաջ բերեց հայոց կյանքում: Նոր դարագլուխ էր սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ, որը սերտորեն կապվեց Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան հետ:

Բանալի բառեր՝ *ռուսական կայսրություն, ռուս-պարսկական պատերազմ, Թուրքմենչայի պայմանագիր, Ալեքսանդր Գրիբոյեդով, Երևանի և Նախիջևանի խանություններ, Օրդուբադի շրջան:*

1826 թվականի հուլիսի 16-ին առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու Երևանի սարդար Հուսեին- Կուլի խանի զորքերի հարձակմամբ սկսվում է ռուս- պարսկական երկրորդ պատերազմը: Պարսկական զորքերը ներխուժում են Ղարաբաղ և այնուհետև առաջ շարժվում դեպի Թիֆլիս: Երևանի խանի զորքերը միաժամանակ հարձակման են անցնում Լոռի-Փամբակի ուղղությամբ [3, էջ 313-314]:

Անդրկովկասի ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի համար ստեղծվում է օրհասական դրություն: Հայ ժողովուրդը, միացած ռուս զորքերին, կենաց և մահու կռվի է նետվում պարսկական բռնակալության դեմ: 1826թ. սեպտեմբերի 3-ին ռուսական զորքերը՝ հայազգի նշանավոր զորավոր Մադաթովի գլխավորությամբ, Շամխորի մոտ կանգնեցնում են դեպի Թիֆլիս արշավող պարսկական զորքերին և ջախջախիչ հարված հասցնելով՝ ետ շպրտում: Սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը՝ գեներալ Երմոլովի և գեներալ Պասկևիչի գլխավորությամբ, խոշոր հաղթանակ են տանում Գանձակի ճակատամարտում: Այդ նույն ժամանակ Դիլիջանը և Շամշադինը թշնամուց պաշտպանում էին Գրիգոր Մանուչարյանի պարտիզանական ջոկատները: Իսկ Դենիս Դավիդովը Ջալալօղլիում (Ստեփանավանում) եղած իր փոքրաթիվ զորքով հետապնդում է Հասան Խանի հեծելազորին և հարկադրում է նահանջել Երևանի բերդը: 1827թ. գարնանը ռուսական զորքերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ սկսում են երևանյան արշավանքը [3, էջ 314]:

Մայիսի 12-ին գեներալ Պասկևիչը իր բանակով շարժվում է դեպի Երևան: Նրա շքախմբում և բանակում կային բազմաթիվ հայ զինվորականներ, քաղաքացիական պաշտոնյաներ, թարգմանիչներ և այլն: Պասկևիչի շքախմբում էր նաև Գրիբոյեդովը: 1827թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը տեղի է ունենում Երևանի նշանավոր բերդի ռմբակոծությունը: Շուտով կոտրվում է թշնամու համառ դիմադրությունը և վերջնականապես ընկնում է պարսկական բռնակալության վերջին հենակետը Հայաստանում: Պատերազմի դաշտում պարտություն կրելով՝ Պարսկաստանը հարկադրված հաշտություն է խնդրում [2, էջ 55]:

Ռուսական կողմից բանակցություններին մասնակցում էին Ի. Պասկևիչը և Ա. Գրիբոյեդովը: Պարսկական կողմը, ի դեմս Աբաս Միրզայի, ընդունում է ռուսական կողմի առաջարկությունը՝ Արաքս և Կուր գետերը ճանաչել որպես պետական սահմանագիծ, միաժամանակ էլ ռուսներն ընդառաջ են գնում և նվազեցնում ռազմատուգանքի չափը: Միևնույն ժամանակ հայտնի է դառնում, որ պարսկական կողմը զանազան պատրվակներով աշխատում է ձգձգել բանակցությունները՝ հուսալով, թե Թուրքիան պատերազմ կսկսի Ռուսաստանի դեմ, որը Պարսկաստանին հնարավորություն կտար վերսկսելու ռազմական գործողությունները և վերացնելու ռուսների ձեռք բերած հաջողություններն ու նվաճումները: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Պասկևիչը հաշտության բանակցությունները վարելու համար սահ-

մանված զինադադարի ժամկետը վերջանալուց հետո՝ 1828թ. հունվարի 6-ին, պաշտոնական հայտարարություն է հրապարակում բանակցությունների ընդհատման մասին, իսկ հաջորդ օրն էլ ռուսական պատվիրակությունը վերադառնում է Թավրիզ: Այս ամենից հետո կովկասյան զորակազմի հրամանատարությունը որոշում է վերսկսել ռազմական գործողությունները՝ ստիպելով Պարսկաստանին նորից նստել բանակցությունների սեղանի շուրջ: Ռուսական զորքերը, որոնք տեղակայված էին Հարավային Ատրպատականում, հունվարին իրար հետևից գրավում են Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Մարաղան, Աբդաբիլը, այնուհետև շարժվում են դեպի Թեհրան: Շահական Պարսկաստանում շատ մեծ թափով սկսվում են խանական երկպառակություններ, Ղաջարների դինաստիայի դեմ տեղի են ունենում հուզումներ և խռովություններ: Ֆաթհ Ալի շահը, զգալով, որ կանգնած է մեծ վտանգի առջև, Մեծ Բրիտանիայի դեպան Մակդոնալդի միջոցով գեներալ Պասկևիչին հայտնում է հաշտության բանակցությկունները վերսկսելու և ռուսների առաջարկած բոլոր պայմաններն ընդունելու Պարսկաստանի պատրաստակամության մասին [1, էջ 212-213]: Եվ այսպես Թավրիզից Թեհրան տանող Ճանապարհին ընկած աննշան մի փոքրիկ գյուղ մտավ միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Երկու տերությունների միջև հաշտության բանակցությունների վայր նշանակվեց այդ ճանապարհին գտնվող Թուրքմենչայ գյուղը [2, էջ 48]:

Թուրքմենչայի հաշտության բանակցությունները սկսվում են 1828թ. փետրվարի 6-ին: Փետրվարի 7-ի հրահանգում, որը ուղղված էր Ա. Գրիբոյեդովին, Ի. Պասկևիչը ցուցում է տալիս, որ մինչև պարսկական կողմի հետ իր հանդիպումը, այնպես կազմակերպել, որ նրանց գլխավոր և հիմնական պահանջը դառնա Ատրպատականից ռուսական զորքերը հանելու հարցը (որի շրջանակներում հնարավոր կլիներ զիջումների գնալ), որն էլ հնարավորություն կտար վերացնել պարսկական կողմից ռազմատուգանքի նվազեցման խնդրին ուղղված ջանքերը [4, էջ 370]:

Պայմանագիրը ստորագրվեց փետրվարի 10-ին: Ռուսաստանի կողմից այն ստորագրեցին գեներալ Ի. Պասկևիչը և պետական խորհրդական Ա. Օբրեզկովը, իսկ Պարսկաստանի կողմից՝ գահաժառանգ Աբաս Միրզան: Պայմանագրի ստորագրումն սկսվեց ռուսական թնդանոթների 101 համազարկով: Թուրքմենչայի պայմանագիրը կազմված էր 16 հոդվածից, գլխավոր պայմանագրից և 9 հոդվածներից բազկացած հատուկ արձանագրությունից: Այս պայմանագրի կնքման գործում կարևոր դեր է ունեցել Ա. Գրի-

բոյոդովը, որի մասին հիշատակում է Ի. Պասկևիչի կենսագիր իշխան Շչերբատովը՝ վկայակոչելով Ի. Դիբիչին հղած Ի. Պասկևիչի մի զեկուցագիր, որտեղ իբր կայսերը ուղղված մի զեկույցում է Ի. Պասկևիչը գրել. «Համարձակվում եմ երաշխավորել նրան (Ա.Ս. Գրիբոյեդովին) որպես մի մարդու, ով ինձ մոտ քաղաքական գործերում չափազանց օգտակար է եղել: Ես նրան եմ պարտական այն մտքերի համար, որ պայմանագիր չկնքվի, մինչև նախօրոք չստացվի ռազմատուգանքի մի մասը»: Ի. Պասկևիչը պարզապես գովաբանում է Ա. Գրիբոյեդովին՝ որպես եռանդուն, տեղական գործերում փորձառու մարդու: 1828թ. փետրվարի 10-ին Գրիբոյեդովի գործուն մասնակցությամբ կնքվում է Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագիրը: Նախնական պայմանագիրը պատրաստ էր 1827թ. ապրիլի 27-ին, բաղկացած էր 11 հոդվածից, սակայն գաղթի մասին ոչինչ չկար պայմանագրում: Գաղթի մասին 1-ին անգամ ներկայացրել է Ներսես Աշտարակեցին 1826թ. դեկտեմբերի 15-ին: 1827թ. տեղի է ունենում ռազմական նիստ՝ գլխավոր շտաբի պետ կոմս Տոլստոյի գլխավորությամբ, այստեղ արձանագրվեց, որ պետք է իրականացվի քրիստոնյա հայերի գաղթ Պարսկաստանից: 1827թ. նոյեմբերին Ներսես Աշտարակեցին՝ որպես Երևանի վարչության անդամ, առանձին գրություն է ներկայացնում քրիստոնյաների գաղթի մասին, որը հասցեատիրոջը հասցնում է Փարիզի պարետ Եղիազար Լազարյանը: Այդ առաջարկության հիման վրա էլ կազմակերվեց գաղթը [4, էջ 370-371]:

Ինչպես նշեցինք, պայմանագիրը կազմված էր 16 հոդվածից: Առաջին հոդվածը հավաստիացնում էր, թե պայմանավորվող Բարձր կողմերի միջև «այսուհետ առհավետ թագավորելու է խաղաղություն, բարեկամություն և կատարյալ համաձայնություն»: Պայմանագրով ռուս-պարսկական սահման էր ճանաչվում Արաքս գետը: 2-րդ հոդվածում նշվում էր. «Նորին մեծության պարսից շահը իր և իր ժառանգորդների անունից ռուսական կայսրությանն է զիջում, որպես նրա կատարյալ սեփականություն, Երևանի խանությունը՝ Արաքսի այս և այն կողմերում, և Նախիջևանի խանությունը», ինչպես նաև Օրդուբադի գավառը: Պարսկաստանը պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք արծաթով: Դիվանագիտական առևտրային հարաբերությունները վերականգնվում էին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, երկու կողմերին էլ տրվում էր ազատ առևտրի իրավունք, ինչպես նաև կիրականցվեր ռազմագերիների փոխանակություն: Հայ ժողովրդի համար հատուկ կարևորություն էր ներկայացնում 15-րդ հոդվածը, ըստ որի՝ պարսկահայերին իրավունք էր տրվում գաղթելու ռուսական կայս-

րության սահմանները: Մեկ տարի սահմանվեց նրա համար, որ պարսկահայերը կազմակերպեն իրենց գաղթը, իսկ անշարժ գույքը վաճառելու և այն իրենց հայեցողությամբ տնօրինելու համար սահմանվեց 5 տարի: Գաղթը իր բնույթով լինելու էր կամավոր սկզբունքով, չէին կիրառվելու հարկադրանք և սպառնալիք: Գաղթողներն իրավունք էին ստանում առանց որևէ մաքսի Ռուսաստանի տիրապետության սահմանները տեղափոխել իրենց շարժական կայքն ու գույքը: Պայմանագրի 15-րդ հոդվածը, անկասկած, ամենից առաջ ելնում էր կառավարության ռազմաքաղաքական շահախնդրություններից: Չպետք է անտեսել այն փաստը, որ շահ Աբաս Առաջինի՝ 1604թ. կազմակերպած հայերի բռնագաղթի հետևանքով ամբողջ Արարատյան դաշտն ու հարակից շրջանները լիովին դատարկվել ու ամայացել էին բնիկ հայ բնակչությունից, որը տեղափոխվել էր Պարսկաստանի խորքերը: Չնայած նրան, որ նշված վայրերում հետագա երկու դարերի ընթացքում հայ բնակչության կուտակումներ կային, բայց նկարագրվող իարդարձությունների ու դեպքերի ժամանակ Երևանի և Նախիջևանի խանությունների բնակչության թվում զգալի տոկոս էին կազմում թուրքերը, որոնք Հայաստան էին տեղափոխվել շահ Աբասի կազմակերպած հայերի բռնագաղթից հետո: Ահա թե ինչու ռուսական ռազմաքաղաքական շրջանակները ձեռնամուխ եղան իրենց հավատարիմ, համակրող և աշխատասեր հայերի ներգաղթի կազմակերպմանը: Պարսկահայերին ռուսական տիրապետության սահմաններ տեղափոխելու անհրաժեշտությունը Ի. Ֆ. Պասկևիչ-Էրիվանսկին իր զեկուցագրերից մեկում ներկայացնում է հետևյալ կերպ. «Կայսրությանը մեծ օգուտ կարող է բերել, աշխատասեր, ընդունակ և հավատով մեզ նվիրված հայ ժողովուրդը, որոնց պետք է բնակեցնել ռուսական տիրապետության ներքո անցած ամայի հողերի վրա»: Հայ հասարակական շրջանները նույնպես շահագրգրվածություն էին ցուցաբերում: Ներգաղթի միջոցով նրանք ուզում էին ոչ միայն զարգացնել Ռուսաստանին նոր միացված հայկական երկրամասերի քանդված տնտեսությունը, այլև այն դարձնել հայերի ազգահավաքման կենտրոն: Այս գործում յուրօրինակ դեր է կատարում Ներսես արք. Աշտարակեցին: Բացի այս ամենից՝ կար նաև մեկ այլ մտայնություն. Պարսկահայքի հայ բնակչությունը, որ աղուհացով ու մեծ խանդավառությամբ էր դիմավորել ռուսներին, ինչպես նաև ցույց էր տվել իր օժանդակությունը, ռուսական բանակի վերադառնալուց հետո կարող էր ենթարկվել հետապնդումների, վրեժխնդրության և պատասխանատվության [3, էջ 329-331]:

Պայմանագրի յոտաքանչյուր կետ շատ կարևոր էր: Եվ նշանակալից է այն, որ պայմանագրի 12-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածները պայմանագրի մեջ մտցնելու գաղափարը վերագրվել է հենց Ա. Գրիբոյեդովին, որի համար հիմք է ծառայել գերիների փոխանակման և վերաբնակեցման վերաբերյալ Գյուլիստանի պայմանագրի 6-րդ հոդվածի հետ 12-րդ, 14-րդ, 15-րդ հոդվածների համեմատական վերլուծությունը: Սակայն պետք է փաստել, որ վերոհիշյալ պնդումները ենթադրական են. հիշյալ ծանոթության մեջ Ա. Գրիբոյեդովը պարզապես մեկնաբանում է հոդվածները, որովհետև դա կապված էր մահմեդական որոշ անձանց՝ պայմանագրի հոդվածները ճիշտ չհասկանալու և կրկին պարսկահպատակություն ընդունելու ցանկության անհնարին լինելու հետ, ինչն Ա. Գրիբոյեդովը աշխատում է Ի. Պասկևիչի միջոցով հրամանի ձևով հասցնել մաքսային և սահմանապահ պետերին [5, էջ 182]:

Թուրքմենչայի պայմանագրին վիճակված էր վճռական փոփոխություն առաջ բերելու հայ ժողովրդի կյանքում: Նոր դարագլուխ էր սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ, որը և սերտ կապված էրԳրբոյեդովի անվան հետ: Պայմանագրի կնքումով խափանվեց Անդրկովկասում Պարսկաստանի դիրքերն ամրապնդելու և նրան Ռուսաստանի դեմ օգտագործելու արևմտյան տերությունների ծրագրերը: Պայմանագիրն ամրագրում է. «... Կովկասյան լեռների և Կասպից ծովի միջև ընկած բոլոր հողերն ու կղզիները, ինչպես նաև այդ երկրներում ապրող բոլոր քոչվոր և մյուս ժողովուրդներն հավիտյան պատկանում են Ռուսական կայսրությանը»: Ռուսաստանի հարավային սահմանները ձգվեցին մինչև Կուր- Արաքս գիծը: Հայերը չունեին իրենց ներկայացուցիչները ո՛չ Թուրքմենչայի, և ո՛չ էլ դրանից առաջ եղած բանակցությունների ժամանակ: Այնինչ ռուս-պարսկական դիվանագիտական հարաբերությունների կենտրոնական հարցը Հայաստանի հարցն էր: Ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչները՝ Ներսես Աշտարակեցին, Ալամդարյանը, Արղությանը և ուրիշները, օգտվելով և գիտենալով Գրիբոյեդովի՝ հայերի նկատմամբ ունեցած տևական և մտերիմ կապերից, նրա միջոցով էին ներկայացնում հայերի ցանկություններն ու պահանջները: Թուրքմենչայի բանակցությունների ժամանակ էլ հայերի շահերը ներկայացնում և պաշտպանում էր Գրիբոյեդովը, որն ամենից ավելի գիտակ էր հայկական հարցում և առհասարակ համարվում էր շատ հմուտ դիվանագետ:

Ելնելով Ռուսաստանի շահերից՝ Գրիբոյեդովը իր պետական-դիվանագիտական գործունեության շրջանում միշտ էլ հովանավորում ու պաշտպանում էր հայ ժողովրդին, քանի որ բարձր էր գնահատում հայ ժողովրդի կուլ-

տուր-պատմական դերը Արևելքում: Թուրքմենչայի պայմանագրի վավերացումից հետո էլ, երբ Գրիբոյեդովը նշանակվել էր Ռուսաստանի մինիստր-դեսպան Պարսկաստանում, հայերը շատ լայն կերպով օգտվում էին նրա հովանավորությունից, և ամենից առաջ պարսկահայերը, որոնք Գրիբոյեդովի ջանքերով հայրենիք վերադառնալու հնարավորություն էին ստացել, միշտ էլ զգում էին նրա հոգատարությունը: Գրիբոյեդովը զբաղվում էր նրանց տեղավորման հարցերով, պարզապես ապրում էր հայ գաղթականների առօրյա հոգսերով ու ցավերով: Նրանց համար հող և բնակարաններ էր հայթայթում, պետական նպաստներով ապահովում: Գրիբոյեդովը անխնա մերկացնում էր այն բոլոր ռուս և հայ պաշտոնյաներին, որոնք անհոգի և շահախնդիր վերաբերմունք էին ցույց տալիս հայ գաղթականների նկատմամբ: Գրիբոյեդովը իր զեկուցագրերից մեկում անարգանքով խարազանմում է մարզային վարչության թարգման Միրզա Թաթոսի պես «ավազակ» և Սուրմալուի գավառապետի պես «հանրահայտնի անպիտան» պաշտոնյաների, որոնք գողանում և հափշտակում էին գաղթականների համար կառավարության բաց թողած նպաստները: Ժամանակակիցների վկայությամբ, որը զետեղված է 1911թ. Վ. Պոկրովսկու լույս ընծայած ժողովածուում, Գրբոյեդովը «չափազանց շատ էր սիրում հասարակ ժողովրդին»: Դա ակնհայտ ձևով արտահայտվել է նաև հայ ժողովրդի հետ կապված նրա գործունեության մեջ: 1828թ. Հայաստանում եղած ժամանակ Գրիբոյեդովը անձամբ և իր թարգմանի (Դադաշյանի) միջոցով ծանոթանում է գյուղացիների դժգոհություններից մի քանիսին և անհապաղ տեղեկացնում է Ի. Պասկևիչին և խնդրում է միջոցներ ձեռնարկել վերացնելու դժգոհության «իրական պատճառը՝ անկարգ կառավարությունը և ծանր պարհակները»: Խոսելով հայկական տեղական իշխանությունների, առանձին պաշտոնյաների ապօրինությունների և դատարանների մասին՝ Գրիբոյեդովը գրում է. «Խաներից ու բեգերից մենք իշխանությունը վերցնում ենք, իսկ դրա փոխարեն ժողովրդին տալիս ենք օտար օրենքների խճճվածություն, նրանք ստորագրում են այնպիսի որոշումներ ու վճիռներ, որոնք բնակիչներն ընդունում են ոչ թե համոզվելով, այլ կարծես թե բռնությամբ»: Հայ ժողովուրդը հանձին Գրիբոյեդովի տեսնում էր հասարակական շահերով առաջնորդվող մի մարդու և որպես այդպիսին՝ նրան սիրում ու բարձր էր գնահատում: Հայ ժողովրդի հանդեպ Գրիբոյեդովի ունեցած վերաբերմունքի տեսակետից ուշագրավ է նաև Պարսկաստանի հայ գերիներին ցույց տված նրա օգնությունը: Ելնելով Թուրքմենչայի ռուս-պարսկական պայմանագրից՝ Գրիբոյեդովն

առանց որևէ ազգային խտրության, հավասարապես ջանք չէր խնայում ռուս ռազմագերիների հետ ազատել և հայրենիք վերադարձնել նաև հայ գերիներին:

«Նյութեր ազգային պատմության համար» իր արժեքավոր աշխատության մեջ Գալուստ Շերմազանյանը պատմում է, որ երբ հայ գերիների հարազատները իմանում են Գրիբոյեդովի՝ որպես դեսպան, Պարսկաստան մեկնելը, Անդրկովկասի զանազան վայրերից շտապում են տեսնել նրան և նրա աջակցությամբ գտնել ու գերությունից ազատել իրենց հարազատներին: 1804թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գերի տարված երևանցի Միրզա Յաղուբ Մարգարյանը դիմում է Գրիբոյեդովին՝ հայրենիք վերադառնալու համար: Եվ Գրիբոյեդովն էլ չի մերժում ու փորձում է օգնել նրան: Բայց քանի որ Միրզա Յաղուբը շահի հարեմի բարձր պաշտոնյա էր եղել, ծանոթ էր պալատական ներքին կյանքի շատ գաղտնիքների, ուստի պարսկական կառավարությունը զանազան պատրվակներով չէր ցանկանում ազատել Մարգարյանին: Եվ դրանով իրավիճակը ավելի է սրվում:

Այս առիթով իրավիճակն այնքան է սրվում, որ պարսիկ խաները և մոլեռանդ հոգևորականները բացարձակ կերպով ստիպում են կույր ամբոխին՝ հարձակում գործելու ռուսական դեսպանատան վրա և վերջ դնելու այնտեղ ապաստանած Միրզա Յաղուբի կանքին: 1829թ. հունվարի 30-ին խառնիճաղանճ ամբոխը դիվային կատաղությամբ հարձակվում է ռուսական դեսպանատան վրա, ավերում է շենքը և գազանաբար հոշոտում Միրզա Յաղուբին, Գրիբոյեդովին, նրա աշխատակիցներին և այնտեղ ապաստանած հայրենիք վերադարձող գերի կանանց ու տղամարդկանց: Գրիբոյեդովի սպանության լուրը շուտով հասնում է Հայաստան: Նախիջևանում, Երևանում, Էջմիածնում, Ջալալօղլիում և Հայաստանի այլ վայրերում զանգվածաբար սգում են նրա մահը [2, էջ 56-60]: Ռուս մեծ ժողովրդի հանճարեղ զավակը ոչ միայն իր գրական ստեղծագործությամբ, այլև անձամբ, իր պրակտիկ գործունեությամբ նպաստել է հայ ժողովրդի ազատագրությանը, նրա կուլտուրական վերելքին, էթնիկ գոյատևմանը: Նրա ռազմավարական քայլը կարևոր դեր խաղաց հայ-ռուսական փոխազդեցության համագործակցության և եղբայրության պատմության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարխուդարյան Վ. և ուրիշ., Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես –XIX դարի վերջ), Գիրք առաջին, Հ. 3, Եր., 2010:
2. Պարսամյան Վ. Ա., Պատմագիտական աշխատություններ, Եր., «Լույս», 1985:
3. Սիմոնյան Հր. Ռ., Հայոց պատմություն., Եր., 2012:
4. Սիմոնյան Վ. Ռ., Ա. Ս. Գրիբոյեդովի կյանքն ու գործունեությունը (պատմագրություն- պատմություն)/, Եր., 2019:
5. Балаян Б.П., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Изд-во АН Арм. ССР, Ереван, 1988:

TREATY OF TURKMENCHAY

AYVAZYAN HRIPSIME
4th-year student of Department of History
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: hripsime.ayvazyan.99@mail.ru
Academic Supervisor: Tunyan Valeri
Doctor of Historical Sciences, Professor

In the winter of 1828, another Russo-Persian war ended, as a result of which the Russian Empire and Persia signed the Treaty of Turkmenchay. From September 25 to October 1, 1827, the bombing of the famous fortress of Yerevan took place. The stubborn resistance of the enemy was soon crushed, and the last stronghold of the Persian dictatorship in Armenia finally fell. The Russian-Persian treaty of Turkmenchay was signed on February 10, 1945, with Griboyedov's active participation. According to that agreement, the former khanates of Yerevan, Nakhichevan, and the Ordubad region were once and for all liberated from the yoke of Persian occupation and passed under Russian rule. The Treaty of Turkmenchay was destined to bring a decisive turning point into the Armenian life. A new era was beginning in the history of the Armenian people, which is closely connected with the name of Alexander Griboyedov. Studying the Russo-Persian War, and Treaty of Turkmenchay, the article raises a number of issues.

To study the Russo-Persian war, to understand the political events in which the Treaty of Turkmenchay was signed.

To study the Treaty of Turkmenchay, to find out what significance it had for the Armenians.

To mention the role of Alexander Griboyedov in concluding the Treaty of Turkmenchay.

By presenting and studying this topic, we discover the causes and consequences of the Russo-Persian war and understand the role of the Turkmenchay Treaty in Armenian life.

Key words: *Russo-Persian war, Treaty of Turkmenchay, Alexander Griboyedov, khanates of Yerevan and Nakhichevan, Ordubad region.*

ТУРКМАНЧАЙСКИЙ ДОГОВОР

АЙВАЗЯН РИПСИМЕ
Студентка 4-ого курса отделения истории
факультета гуманитарных специальностей
Гаварского государственного университета,
электронная почта: hripsime.ayvazyan.99@mail.ru
Научный руководитель: Тунян Валерий
Доктор исторических наук, профессор

Зимой 1828 года закончилась очередная русско-персидская война, после которой Российская империя и Персия подписали Туркманчайский мирный договор. С 25 сентября по 1 октября 1827г. происходит бомбардировка знаменитой крепости Еревана. Упорное сопротивление противника вскоре было подавлено, а последний оплот персидской диктатуры в Армении, наконец, упал.

10 февраля 1828г. при активном участии Грибоедова был подписан Российско-персидский Туркменчайский договор. Согласно этому договору, бывшие ханства Еревана и Нахичевана и Ордубадский район окончательно были освобождены от ига персидской владычества и перешли под власть России.

Туркменчайскому договору суждено было стать решающим поворотным моментом в жизни Армении. В истории армянского народа начинается новая эпоха, которая тесно связана с именем Александра Грибоедова.

Изучая русско-персидскую войну и Туркменчайский договор, в статье ставим ряд задач:

1. Изучить русско-персидскую войну, понять политические события, в рамках которых был подписан Туркменчайский мирный договор.

2. Изучить Туркменчайский мирный договор, выяснить его значение для армян.

3. Отметить роль Александра Грибоедова в заключении Туркменчайского мирного договора.

Излагая и изучая эту тему, мы открываем причины и последствия русско-персидской войны, понимаем роль Туркменчайского договора в жизни Армении.

Ключевые слова: *русско-персидская война, Туркменчайский мир, Александр Грибоедов, ханства Еревана и Нахичевани, Ордубадский район.*

ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԳԱՎԱՌ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ(1909-1910ԹԹ.)

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ matevosyanhranush2@gmail.com
Գիտական ղեկավար՝ Շաբունց Գայանե
ասիստենտ

«Գավառ» շաբաթաթերթը Գորիսում լույս է տեսել 1909-1910թթ., սակայն այդ կարճ ժամանակահատվածում արժեքավոր տեղեկություններ է հաղորդել ոչ միայն Գորիսի, այլև ամբողջ Զանգեզուրի գավառի հասարակական-քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական հարցերի մասին: Չկար որևէ համար, որտեղ խմբագրությունն առնվազն մեկ կամ երկու հոդված չնվիրեր Զանգեզուրի գավառի գյուղական դպրոցների կրթական խնդիրներին և դրանց լուծման առաջարկներին: Այս առումով արժեքավոր տեղեկություններ կան Ախլաթյանի, Ագարակի, Խնածախի, Զեյվայի, Լորի, Խնձորեսկի և այլ դպրոցների մասին:

Բանալի բառեր՝ *«Գավառ», Սիմեոն Տեր-Մինասյան, Գորիս, կրթություն, դպրոց, ուսուցիչ, դպրոցական շենք:*

«Գավառ» պարբերականը, որը լույս է տեսել Գորիսում 1909-1910թթ., տպագրվել է 1908թ. հիմնված «Սասուն» տպարանում՝ Սիմոն Տեր-Մինասյանի խմբագրությամբ, և Ա. Բակունցի բնորոշմամբ՝ համարվում էր «վարժապետի գազեթը»:

«Գավառ» պարբերականը անդրադարձել է գավառի հասարակական-քաղաքական, կրթամշակութային հարցերին: Հոդվածում անդրադարձել ենք պարբերականում արծարծված միայն կրթական հարցերին: Ի դեպ, խմբագիր Սիմոն Տեր-Մինասյանը շատ էր արժևորում շրջանում կրթական կյանքի հարցերը, որով էլ պայմանավորված է կրթական կյանքին վերաբերող բազմաթիվ հոդվածների, պարբերականի տարբեր համարներում լույս տեսած թղթակցությունների առկայությունը: Շատ կարևոր է, որ բարձրաց-

վում էին կրթությանը վերաբերող բոլոր խնդիրները՝ դպրոցների շենքային պայմաններ, ուսուցչական կազմ և այլն:

Այսպես, «Գավառ»-ի հենց առաջին համարում անդրադարձ կա Խոտանան գյուղի մեկդասյա երկսեռ դպրոցի մասին[1]: Հոդվածում նշվում է, որ Խոտանան գյուղն ունի 75 տուն, իսկ դպրոցը՝ 45 աշակերտ, բայց չկա մեկը, որ կարողանա դպրոցը կանգուն պահել: Նշվում է, որ դպրոցը զուրկ է բոլոր հարմարություններից, և երբ իրավիճակին լուծում տալու նպատակով հրավիրվում է ժողով, հավաքվում են միայն մի քանի ծերունիներ, ովքեր «երկու խոսք ասելով՝ նիրհում են»:

Նույն համարում ասվում է, Խնձորեսկ գյուղի ծխական դպրոցի ուսուցչական կազմը համալրել են երկու ուսուցչուհի և երկու ուսուցիչ: Աշակերտների թիվը 100-ից նվազել էր 40-50-ի, և մարդկանց մեջ կարծիքներ են հնչում դպրոցը պետական դարձնելու մասին[2]: Ի դեպ, Խնձորեսկի դպրոցի մասին անդրադարձներ կան նաև թերթի այլ համարներում ևս: Այսպես, 1910թ. 28-րդ համարում խոսվում է Խնձորեսկի դպրոցական շենքի վատթար պայմանների մասին՝ կարևոր համարելով դպրոցական շենքի ու պարտեզի բարեկարգման աշխատանքները[3]:

Շաբաթաթերթի առաջին համարում խոսվում է նաև Քարաշեն գյուղի դպրոցի մասին, որտեղ նշվում է, որ հոկտեմբերի կեսերից հրավիրված ուսուցիչն իր պարապմունքները սկսել է նոյեմբերի կեսերից՝ շենքի անպատրաստ լինելու պատճառով: Հոդվածից պարզ է դառնում, որ 25 աշակերտ ունեցող մեկդասյա դպրոցում հրավիրված ուսուցիչը պարապելու էր բոլոր առարկաները, իսկ դասի տևողությունը լինելուէր 60 րոպե:

«Գավառ»-ի 1909թ. 2-րդ համարում ներկայացվում է Սիսիանի Ախլաթյանի դպրոցը, նշվում է, որ դպրոցական շենքը իրենից ներկայացնում է մի մռայլ պատկեր, քանի որ 1889թ. հիմնված այդ շենքը հոգաբարձության որոշումով քանդվեց՝ տեղը ընդարձակ շենք կառուցելու համար: Գյուղում դպրոցի կարիքը այդքան էլ չէր զգացվում, քանի որ կար երեք դպրոց. նախկին ուսուցչի մասնավոր դպրոցը, հոգաբարձու ծխատեր քահանայի դպրոցը և տիրացուի դպրոցը[4]: Այսպիսին է Ախլաթյանի դպրոցի լուսավորության

[1] «Գավառ», Գորիս, 1909 թ., 1, դեկտեմբերի 5, էջ 3:

[2] Նույն տեղում, էջ 4:

[3] «Գավառ», Գորիս, 1910 թ., 28, հուլիսի 25, էջ 3:

[4] «Գավառ», Գորիս, 1909 թ., 2, դեկտեմբերի 20, էջ 3:

պատկերը: Էլ ինչ հարկավոր է հասարակական դպրոց. չէ՞ որ այդպիսով շատերի «ականջներն են դինջ»...

«Գավառ»-ի 1910թ. 29-րդ համարում հիշատակվում է Ախլաթյանի դպրոցի մասին: Նշվում է, որ Ախլաթյանում կա երկու դպրոցական շենք՝ հին և նոր, որոնք երկուսն էլ գետնին են հավասար[5]: «Գավառ» շաբաթաթերթը բացասաբար է անդրադառնում այն հարցին, որ 300 բնակիչ ունեցող գյուղը չունի դպրոց, այն էլ 20-րդ դարում: Ժողովուրդը զուրկ է տարրական ինքնագիտակցությունից, իսկ երիտասարդությունը ոչինչ չի ցանկանում անել կրթության բարելավման համար: Իհարկե, Ախլաթյանում դպրոց չլինելուն նպաստում է նաև այն, որ չկան անհրաժեշտ նյութական պայմաններ, բայց գյուղացիները իրենց հերթին չունեն ոչ մի հետաքրքրվածություն դպրոցաշինության գործում:

Սիսիանի շրջանի կրթական գործի մասին տեղեկություններ կան «Գավառ»-ի 1910թ. 9-րդ համարում[6]: Այստեղ խոսվում է կրթության կազմակերպման գործում ուսուցիչների անտարբերության մասին, որոնք, բացի իրենց ես-ից, հասարակական ու կրթական ոչ մի գործով չեն զբաղվում, իսկ մատաղ սերունդը չի ստանում անհրաժեշտ կրթություն: Ժամանակն է սթափվելու, քանի որ մեր մատաղ սերունդը բթանում է ու վայրենանում:

«Գավառ»-ի 1910թ. 4(3)-րդ համարի «Անցյալ տարին» հոդվածում անդրադարձ է կատարվում 1909թ. լուսավորության առաջադիմությանը, նշելով, որ աննպաստ պայմանների պատճառով հետ էին մղվել գրականությունը, գեղարվեստը, լրագրությունը, կուլտուրական-դպրոցական գործը[7]: Չկար մի շրջան, որտեղ դպրոցական գործը վնաս կրած չլիներ, եղան շրջաններ, որտեղ դպրոցներում 1-2 դասարան կրճատվեցին: Ավելորդ է նույնիսկ խոսել գրականության ու մամուլի ունեցած առաջադիմության մասին, քանի որ գավառական շրջաններում լույս տեսնող թերթերը ճգնաժամ էին ապրում:

«Գավառի»-ի 1910թ. 4(3)-րդ համարի «Զանգեզուրը կուլտուրապես» հոդվածում խոսվում է գավառի մշակութային հետընթացի մասին: Նշվում է, որ փակված է ամբողջ Զանգեզուրի միակ գրադարան-ընթերցարանը, փակված է Բարեգործական ընկերության ճյուղը, չկա կանոնավոր թատերասերների մշտական խումբ, չկա նախկին դպրոցի վեհությունն ու գրավչությունը,

[5] «Գավառ», Գորիս, 1910 թ., 29, օգոստոսի 8, էջ 3:

[6] Նույն տեղում:

[7] «Գավառ», Գորիս, 1910 թ., 4(3), էջ 1:

որովհետև եսականությունը, թայֆայականությունը, խնամիական կապերը, հոգաբարձուական ոտնձգությունները, ընկերությունների ու նրանց գործակալների կամայական կարգադրությունները ժողովրդին հասցրել են վերջին ծայր հուսահատության[8]:

«Գավառ» շաբաթաթերթում հրապարակում կա նաև Էջմիածնի թեմական խորհուրդների մասին, որոնք կարևոր են դպրոցական գործի կազմակերպման մեջ: Ըստ թերթի՝ անպայման կենտրանին պիտի ենթարկվի դպրոցի համար ընդհանուր նշանակություն ունեցող դասագրքերի ընտրությունը, դպրոցավարտների, դասավանդողների իրավական դրությունը, մի դպրոցից մյուսն անցնելու իրավունքն ու պարտականությունը և այլն:

Թերթը նաև հետաքրքիր տեղեկություններ է տալիս Ղամարլուի դպրոցի մասին: Նշվում է, որ Ղամարլուն ունի ծխական դպրոց, սակայն դա դպրոցի սեփական շենքը չէ: Շինությունը, որտեղ պահվում է դպրոցը, բաղկացած է երեք սենյակից, որոնք խոնավ են ու մութ, իսկ հատակը հողից է: Դպրոցը գոյության համար չունի անհրաժեշտ միջոցներ, նույնիսկ ուսուցիչներն իրենց ռոճիկը ժամանակին չեն ստանում, շատ հաճախ դատարանով են այն պահանջում, իսկ ծնողները անտարբեր են և իրենց երեխաների համար հատկացված թոշակադրամներն ժամանակին չեն ուղարկում: Ոչ մի ծնող դպրոց չի գնում և չի հետաքրքրվում իր երեխայի կրթության գործով: Ամեն բան թողնված է բախտի քմահաճույքին[9]:

Ինչպես տեսնում ենք, խմբագրին շատ էր մտահոգում հասարակության անտարբերությունը կրթության նկատմամբ: Թերթի համարներում խմբագիրն անընդհատ բարձրաձայնում էր կրթության կարևորությունը: Այսպես, «Գավառ»-ի 1910թ., 7-րդ համարում անդրադառնում է գյուղական դպրոցներին: Նշվում է, որ գյուղացին ևս հասկանում է կրթության անհրաժեշտությունը, սակայն քանի որ նա սովոր է կռանալ ուրիշի առաջ, շարունակում է անտարբեր վերաբերմունք դրսևորել դպրոցական գործի նկատմամբ: Դպրոցական գործի կազմակերպումը կարող է արդյունք ունենալ միայն այն ժամանակ, երբ դպրոցը ապահովվի թե՛ նյութական և թե՛ շինության տեսակետից, երբ հասարակությունը առանց բացառության մասնակցի դպրոցական գործի կազմակերպմանը և տուրքեր վճարի: Այս դեպքում չունևորը չի զրկվի դպրոցական բարիքից, ունևորները կվճարեն հաստատուն տուրք և, որ

[8] Նույն տեղում, էջ 2:

[9] «Գավառ», Գորիս, 1910 թ., 5, հունվարի 31, էջ 3:

ամենագլխավորն է, հասարակությունը կդառնա իր իրավունքների տերը և հսկողություն կունենա դպրոցի վրա: Ուրեմն կանոնավոր դպրոց կարող է լինել միայն կանոնավոր հիմքերով ժողովված հասարակական տուրքերի միջոցով, որի մասին մտածելու պարտականությունն ընկնում է հասարակության բանիմաց խավի վրա[10]:

Նույն մտահոգությունն է նկատվում նաև Շիկահողի դպրոցի մասին գրված հոդվածում: Նշվում է, որ Շիկահողի դպրոցը տեղակայված է մասնավոր վարձու շենքում: Դպրոցը մի քանի նկարներից և մի համրիչից զատ ոչինչ չունի: Այն բաղկացած է երեք բաժանմունքից՝ 60 աշակերտ-աշակերտուհիներով: Ուսուցիչ է պ. Ռուբեն Տեր-Հովակիմյանը, որը բավականին եռանդուն երիտասարդ է: Կա ցանկություն ամբողջ շրջանի ուսումնարանները միացնել և Շիկահողում կենտրոնական դպրոց բացել:

Հասարակության անտարբերության մասին է գրված նաև Ագարակի դպրոցի վերաբերյալ՝ նշելով, որ Բաքվի «Արամազդ» ընկերության նպաստներով բացված դպրոցներ կան Կապանում, բայց հասարակությունն անտարբեր է դպրոցական կյանքի նկատմամբ:

«Գավառ»-ը տարբեր համարներում մի քանի անգամ անդրադառնում է Կապանի դպրոցներին: Այսպես, 1910թ. 11-րդ համարում ասվում է, որ արդեն երրորդ տարին է, որ Առաջաձոր գյուղում գոյություն ունի ծխական դպրոց, որը պահվում է գլխավորապես «Արամազդ» ընկերության նպաստով[11]: Այստեղ ևս հասարակությունը անտարբեր ու սառն վերաբերմունք էր դրսևորում դպրոցական գործի նկատմամբ: Չնայած նրան, որ գյուղի դպրոցն ունի երեք հոգաբարձու, բայց վերջիններս գյուղում չէին լինում, դպրոցական գործով չէին հետաքրքրվում, իսկ հասարակությունը շարունակում էր անտարբեր մնալ կրթության նկատմամբ, մինչև որ «Արամազդ» ընկերությունը սթափեցնող ազդակ հնչեցրեց, և դպրոցի փակման վտանգը հիմք հանդիսացավ դպրոցական նոր շինության կառուցման համար:

«Գավառ»-ի 1910թ. 14-րդ համարում խոսվում է Եղվարդի դպրոցի մասին: Երեք տարի առաջ, երբ Կապանն իր տնտեսական տագնապալից շրջանն էր ապրում, «Արամազդ» ընկերությունն այդտեղ հիմնում է մի քանի դպրոցներ, որը մեծ օգնություն էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ

[10] «Գավառ», Գորիս, 1910 թ., 7, փետրվարի 14, էջ 3:

[11] «Գավառ», Գորիս, 1910 թ., 11, մարտի 14, էջ 4:

ժողովուրդը նյութական ու մտավոր կարիքի մեջ էր[12]: «Արամազդ» ընկերության որոշմամբ՝ այդ դպրոցներից մեկը բացվեց Եղվարդում: Չնայած նրան, որ բնակչությունը ոգևորված մղվել էր դպրոցական գործին, այնուամենայնիվ կային որոշակի նյութական խոչընդոտներ, բացի դրանից՝ հիվանդացել էր դպրոցի ուսուցիչը, «Արամազդ» ընկերությունը նախկին չափով չէր օգնում, իսկ հոգաբարձուները խեղճ գյուղացիներ էին, ովքեր չէին կարող որևէ քայլ իրականացնել, ուստի գյուղացիների ոգևորությունը նվազում է, դպրոցը փակվում է, բայց կրկին եռանդով գյուղացիները լծվում են դպրոցաշինության գործին, իսկ գյուղի հարուստները սկսում են նվիրատվություններ իրականացնել:

«Գավառ»ի 1910թ. 9-րդ համարում խոսվում է Վաչագանի ծխական դպրոցի մասին: Այստեղ ողջունելի է համարվում այն փաստը, որ գյուղի համար ուսումը կարևոր հարց է դարձել, և յուրաքանչյուր անհատ այժմ հետևում է կրթության գործին: Վաչագանում գյուղացիները ոգևորված ցանկանում են ունենալ դպրոցական շենք: Գյուղացիության շրջանից դուրս են գալիս մարդիկ, ովքեր ամեն կերպ նպաստում են դպրոցական գործի կազմակերպմանը: Այդ նպատակով Սաղաթել Հովհաննիսյան-Օրբելյանը նվիրել է գյուղի հարավային մասում մի կտոր հողաբաժին, որի վրա պիտի կառուցվեր դպրոցի շինությունը[13]:

Շարունակելով Կապանի դպրոցական կյանքի մասին հրապարակումները՝ «Գավառ»-ի 1910թ. 17-րդ համարում անդրադարձ է կատարվում իգական սեռի դպրոցի կազմակերպման մասին[14]: Հոդվածում նշվում է, որ Կապանի շրջանում, շնորհիվ «Արամազդ» և Հ.Հ. Կուլտուրական ընկերությունների աջակցության, կրթական գործը բավականին լավ հիմքերի վրա է դրվել: Չնայած Կապանի շրջանում կան բազմաթիվ դպրոցներ, բայց չկա օրիորդաց դպրոց: Կոչ է արվում «Արամազդ» և Հ.Հ Կուլտուրական ընկերություններին, որոնք նպաստում են կրթական գործի բարելավման աշխատանքներին, վարժուհիներ ուղարկել գյուղական դպրոցներ: Վարժուհիների դերը մեծ է կրթական գործի կազմակերպաման հարցում, քանի որ նրանց առկայության դեպքում ծնողները՝ նրանց դիտելով որպես երկրորդ մայրեր, շահագրգռված կլինեն աղջիկներին դպրոց ուղարկելու հարցում:

[12] «Գավառ», Գորիս, 1910 թ., 14, ապրիլի 4, էջ 3:

[13] «Գավառ», Գորիս, 1910 թ., 9, փետրվարի 28, էջ 3:

[14] «Գավառ», Գորիս, 1910 թ., 17, մայիսի 2, էջ 2:

«Գավառ» թերթում բավականին դրական գծերով է ներկայացված Երևանի գավառի Գեառնի-Բասարի Նովրուզլու գյուղի դպրոցի մասին: 1909թ. ընթացքում մի քանի անգամ արծարծվել էր դպրոցի կարևորության հարցը և նկատվել, որ այն հասունացած է, այդ իսկ պատճառով գյուղի բնակիչները իրենց միջոցներով, զգալով դպրոցի անհրաժեշտությունը, սկսել էին իրականացնել դպրոցի շինարարությունը: Գյուղն արդեն 1910թ. ուներ ծխական դպրոց՝ իր սեփական շենքով ու հարմարություններով: Այնուհետև խմագիրը նշում է, որ շատ կարևոր է, որպեսզի Նովրուզլու գյուղի օրինակը տարածվի նաև շրջանի մյուս գյուղերում:

«Գավառ» թերթի 1910 թվականի 9-րդ և 10-րդ համարներում խոսվում է Քարահունջի դպրոցի մասին: 9-րդ համարում նշվում է Քարահունջի դպրոցի շենքային վատ պայմանների և կրթության ոչ բարվոք վիճակի մասին, մասնավորապես նշվում է, որ ռուսաց լեզուն դասավանդում է ռուսական կրթություն չունեցող մարդ, իսկ աշխարհագրություն (հայրենագիտություն) առարկան հանվել է տեսուչի կարգադրությամբ[15]: Իսկ 10-րդ համարում նշվում է, որ Քարահունջը՝ իբրև առաջնակարգ գյուղ, պետք է ունենա առաջնակարգ դպրոց, և պետք է բոլորը գիտակցեն դպրոցական գործի կազմակերպման անհրաժեշտությունը, այլապես «տգիտության ալիքները մեր մանուկներին կքաշեն դեպի իրենց, և նրանք անհետ կկորչեն անհատակ ու խավար անդունդում»[16]:

«Գավառ»-ի 1910թ. 22-րդ համարում խոսվում է Տաթևի դպրոցի սեփական շինություն չունենալու հանգամանքի մասին[17]: Գորիսաբնակ Ս. Օրբելյանը առանց վարձակալության իր բնակարանը տալիս է հոգաբարձությանը, որտեղ մեկ տարի ծավալվում է դպրոցական գործունեություն: Ապա Սինոդից խնդրելով վանքի սենյակները՝ տեղափոխվում են և երեք տարի իրականացվում է կրթական գործունեություն: Չնայած Տաթևն ունի անհրաժեշտ նյութական միջոցներ՝ դպրոցը ապահովելու համար, բայց հոգաբարձուները դպրոցը դիտում են որպես եկամտի աղբյուր, որի հետևանքով մնալով ուշադրությունից դուրս՝ դպրոցական շենքը օր օրի շարունակում է վատթարանալ:

[15] «Գավառ», Գորիս, 1910 թ., 9, փետրվարի 28, էջ 3:

[16] «Գավառ», Գորիս, 1910 թ., 10, մարտի 7, էջ 3:

[17] «Գավառ», Գորիս, 1910 թ., 22, հունիսի 6, էջ 2:

Թերթի 1910թ. 19-րդ համարում խոսվում է կենտրոնական դպրոցի հիմնման, իսկ 20-րդ համարում՝ գավառներում դպրոցական գործի բարեկարգման համար վերահսկվող տարրի գործունեության անհրաժեշտության մասին, որի գործունեությունից է կախված հոգաբարձուական, ուսուցչական կազմերի անթերի ու անսխալ գործունեությունը[18]: Հատկապես կարևորվում է գավառում այնպիսի մարդու գործունեությունը, ով մեծ ուշադրություն կդարձնի դպրոցների բարելավման աշխատանքին:

«Գավառ»-ի 1910թ. 24-րդ համարում խոսվում է 1909 թվականի Զանգեզուրի դպրոցների պատկերի մասին: Նշվում է, որ բավականին երկար ժամանակ է, ինչ խոսվում է գավառի դպրոցների անմխիթար պատկերի ու նրանց ղեկավարների տգիտության մասին: Չնայած Զանգեզուրում մոռացված լինելուն՝ դպրոցն ունի իր ծրագիրն ու կանոնադրությունը: Ինչպես երևում է պաշտոնական աղբյուրներից, էջմիածնում շուտով լույս կտեսնի դպրոցական ծրագիրն ու կանոնադրությունը19: Այժմ ժամանակն է, որ դպրոցներ մուտք գործեն իրենց կոչման բարձրության վրա կանգնած անձնավորություններ: Դպրոցում կարևոր է ավագ ուսուցչի պաշտոնի դերը, ով իր գործունեությամբ կնպաստի որակյալ կրթության կազմակերպմանը:

1910թ. 25-րդ համարում խոսվում է գյուղի և ուսուցչի՝ որպես հասարակական ամբողջության մասին20: Գյուղն այն հենակետն է, որի վրա կանգնած է հասարակական կազմը՝ պետությունը: Երբ գյուղ է գալիս ուսուցիչը, նրա պարտականությունը ոչ միայն գրագիտություն տարածելն է, այլ նաև կրթել հասարակությանը, ուղղություն տալ հասարակական գործերին: Սա համարվում է ուսուցչի բարոյական պարտքը, որը նա պետք է անպայման իրագործի:

Այսպիսով, «Գավառ» շաբաթաթերթը բավականին մեծ դերակատարություն է ունեցել կրթական կյանքի բարելավման գործում: Բարձրացնելով և վեր հանելով կրթական կյանքին առնչվող հրատապ հարցերը՝ շաբաթաթերթը փորձել է պայքարել և վերացնել մատաղ սերնդի համար չարիք հանդիսացող տգիտությունն ու անտարբերությունը կրթության և սեփական ապագայի նկատմամբ: Չնայած նրան, որ շատ տեղերում կրթական գործը դեռևս բարելավված չէր, սթափության կոչերը շատ վայրերում նպաստեցին

[18] «Գավառ», Գորիս, 1910, թ. 20, մայիսի 23, էջ 1:

[19] «Գավառ», Գորիս, 1910, թ. 24, հունիսի 27, էջ 2:

[20] «Գավառ», Գորիս, 1910, թ. 25, հուլիսի 4, էջ 1:

դպրոցաշինության գործի ծավալմանն ու կրթական գործի բարելավմանը: Անգնահատելի է «Գավառ» շաբաթաթերթի գործունեությունը այդ ժամանակաշրջանի կրթության ոլորտում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Գավառ» շաբաթաթերթ, 1909, 1910:

REFLECTION OF EDUCATIONAL LIFE IN "GAVAR" WEEKLY NEWSPAPER

MATEVOSYAN HRANUSH
3rd-year student of Department of History
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: matevosyanhranush2@gmail.com
Academic Supervisor: Shabunts Gayane
Assistant

The weekly newspaper Gavar was published in Goris from 1909 to 1910, but in that short period of time it provided valuable information not only about the social, political, cultural and economic issues of Goris but also about Syunik.

In all the issues of the newspaper, the editorial board has dedicated at least one or two articles to the educational problems of Zangezur.

In this regard, there is valuable information about Akhlatyan, Agarak, Khnatsakh, Zeyva, Lori and Khndzoresk schools.

Key words: *"Gavar", Simeon Ter-Minasyan, Goris, education, school, teacher, school building.*

ОТРАЖЕНИЕ О ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ЖИЗНИ В ЕЖЕНЕДЕЛЬНИКЕ “ГАВАР”

МАТЕВОСЯН ГРАНУШ
Студентка 3-его курса отделения истории
факультета гуманитарных специальностей
Горисского государственного университета
электронная почта: matevosyanhranush2@gmail.com
Научный руководитель: Шабунц Гаяне
Ассистент

Еженедельник “Гавар” издавался в Горисе в 1909-1910 годах, но за этот короткий период времени сообщал ценную информацию не только о Горисе, но и о социальных, политических, культурных и экономических проблемах всего Сюника. Нет ни одного номера, в котором редакция не посвятила бы по меньшей мере одну или две статьи образовательным проблемам сельских школ Зангезурской провинции и предложениям по их решению.

В связи с этим есть ценная информация об школах Ахлатян, Агарак, Хнацах, Зейва, Лори, Хндзореск.

Ключевые слова: *«Гавар», Симеон Тер-Минасян, Горис, образование, школа, учитель, здание школы.*

ՄԱՆՈՒԿ ԲԵՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՋՈՒԼԻԵՏԱ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ julya.margaryan1999@mail.ru
Գիտական ղեկավար՝ Թունյան Վալերի
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մանուկ Մարտիրոսի Միրզայանը XVIII-XIXդդ. օսմանյան և ռուսական դիվանագիտական ասպարեզի ամենահայտնի դեմքերից մեկն է, բարձր կարգի սեղանավոր, օսմանյան կայսրության բանակի մատակարար, մեծ վաճառական:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հայ անվանի գործիչ Մանուկ Բեյի կերպարը, քաղաքական և տնտեսական գործունեությունը օսմանյան կայսրությունում, ինչպես նաև արժևորել նրա ծավալած հայրենանվեր գործունեությունը և խաղացած դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում:

Ուսումնասիրությունը կատարվել է բազմաբնույթ փաստաթղթերի, նյութերի և գրականության հետազոտությունների հիման վրա, որի արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Մանուկ Մարտիրոսի Միրզայանը ոչ միայն մեծահարուստ վաճառական էր, այլև նշանավոր պետական գործիչ ու դիվանագետ: Վարելով բարձր պաշտոններ օսմանյան կայսրության մեջ՝ նա գործուն մասնակցություն է ունեցել XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի ռուս-թուրքական հարաբերություններում: Ունենալով ռուսական կողմնորոշում՝ Մանուկ Բեյը աշխատել է ամեն կերպ պաշտպանել Ռուսաստանի շահերը: Նա միաժամանակ աջակցել է թուրքական բռնապետության դեմ ուղղված ինչպես հայ, այնպես էլ մերձդանուբյան ու բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումներին:

Բանալի բառեր՝ *Մանուկ բեյ, բանակի մատակարար, մեծահարուստ վաճառական, պետական գործիչ, դիվանագետ, ազատագրական շարժում:*

Մանուկ Միրզայանը Մարտիրոս Միրզայանի որդին էր: Նրանց ընտանիքը բնակվել է Արարատի մարզի Կարպի գյուղում: Հայրը՝ Մարտիրոսը,

հարուստ մարդ չի եղել, վերջին ունեցվածքը կորցրել է պարսիկ ավազակների կողմից իրականացված թալանի հետևանքով[1]:

Նադիր շահի մահվան և բռնությունների ավելացման պատճառով Մարտիրոսը 1747թ. տեղափոխվել է Բուրգաս (Բուլղարիա), որտեղ ամուսնացել է տեղի հայ վաճառականներից մեկի դստեր հետ, որի մահից հետո տեղափոխվել է Ռուշչուկ, որը այդ ժամանակներում առևտրային խոշոր կենտրոն էր: Այստեղ նա կրկին ընտանիք է կազմել Ռուշչուկի հայ վաճառական Հանըմ օղլուի դուստր Մամիկի հետ[2], ումից 1764 թվականին ծնվել է առաջնեկը՝ Հովհաննեսը, իսկ 1769-ին՝ Մանուկը (Էմանուելը): Նախնական կրթությունը Մանուկը ստացել է Ռուշչուկի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցում, իսկ 1781 թվականին՝ տասներկու տարեկան հասակում, ծնողները նրան ուղարկել են Յասի՝ մի հայ վաճառականի մոտ, որտեղ հայկական Սուրբ Մարիամ տաճարում Մանուկը չորս տարի սովորել է օտար լեզուներ: Ձեռք բերած գիտելիքները ավելի է խորացրել Կոստանդնուպոլիս և հարևան քաղաքներ կատարած մի շարք ուղևորությունների ժամանակ[3]:

Մանուկի ազդեցիկ և հեռատես ազգականները, հոգ տանելով նրա ապագայի մասին, ցանկանում էին նրան հայրենասիրական դաստիարակություն տալ, նրան մոտեցնել Ռուսաստանին, որին ավելի շատ հետաքրքրում էր օսմանյան կայսրության հզորության ջախջախումը: Պետք է ասել, որ Յասիի ընտրությունը՝ որպես Մանուկի հետագա դաստիարակության վայր, պատահական չէր: Ռուսական զորքերի առաջին հաղթական արշավանքները ազատագրվելու մեծ հույսեր էին արթնացնում:

Ատելություն տածելով թուրք բռնարարների հանդեպ և լսելով Ռուսաստանի ազատագրական դերի մասին՝ Մանուկը պատանեկան սրտի ողջ եռանդով ներգրավվում է տեղի բնակչության շրջանում հակաթուրքական խմորման մթնոլորտի մեջ: Բնակչության մեծամասնությունը մոլդովացիներ էին՝ կապված ռուս և ուկրաինացի ժողովուրդների հետ դարավոր բարեկամության կապերով:

Մանուկ Միրզայանն աչքի էր ընկնում իր արտաքինով ու բարությամբ, նա բարձրահասակ էր, գեղեցիկ, լայն ճակատով, սև շողշողուն աչքերով,

[1] Безвикони Г., Манук-бей. Ереван, 2009, с. 5, http://armenia.md/sites/default/files/bezvoconi_manuk_bey.pdf

[2] Фаньян Дж. С., Манук-бей и его дипломатическая деятельность// Историко-филологический журнал, Ереван, 1977, № 4, с. 150.

[3] Тунян В. Г., Манук-бей Мирзаян: грани созидания, Ереван, 2019, с. 16.

հնարամիտ, նուրբ և սիրալիր: Նա ուներ թե՛ պերճախոսության, թե՛ հեռատեսության շնորհ[4]:

Չորս տարի անց՝ 1785թ.-ին, Մանուկը վերադառնում է Ռուշչուկ և հոր պնդմամբ ամուսնանում Ավետ (Ավետիս) անունով հայ վաճառականի դստեր հետ: Ճակատագրի հեգնանքով այս կինը 9-ամյա ամուսնությունից հետո հիվանդության պատճառով անզավակ մահանում է: Մանուկը հոր պես երկրորդ անգամ է ամուսնանում, այս անգամ տարածաշրջանի ազդեցիկ գործիչ Հաջի Հարությունի դստեր՝ Մարիամի հետ, ումից ունենում է երկու տղա, չորս աղջիկ[5]:

Այդ ժամանակից ի վեր նա գործընկեր է դարձել հոր և աներոջ առևտրային գործերում, զգալի հարստություն ժառանգել կապիտալի, առևտրական ձեռնարկությունների ու կալվածքների տեսքով: Առևտրական գործերով այցելել է բազմաթիվ քաղաքներ, այդ թվում և Կ. Պոլիս, զբաղվել է բամբակի, մետաքսի, բրդի, ծխախոտի, համեմունքների առևտրով: Բացի դրանից, ջերմ հարաբերություններ է հաստատել Ռուշչուկի թուրք փաշաների հետ:

Հաճախակի և երկարատև ուղևորությունները դեպի Կոստանդնուպոլիս, Բուխարեստ, Յասի և այլ քաղաքներ նպաստում էին երիտասարդ մեծահարուստի կարողության բազմապատկմանը, ընդլայնվում են նրա կապերը գործարար շրջանակների հետ, աստիճանաբար նա հաղորդակից է դառնում հետամնաց Թուրքիայի անկայուն քաղաքական կյանքին:

Հենց այդ ժամանակահատվածում է, որ Մանուկ Միրզայանը հայտնվում է Ռուսաստանի ռազմական-դիվանագիտական ներկայացուցիչների տեսադաշտում՝ սկսելով որոշակի գործունեություն ծավալել Թուրքիայի քաղաքականության մեջ: Մանուկի առևտրային գործունեությանը և հարստացմանը նպաստում է ռուս-թուրքական 1787-1791 թվականների պատերազմը, որը թույլ է տալիս նրան ընդլայնել գործունեության շրջանակը և դառնալ մեծածախ վաճառական Բալկաններում, դառնում է նաև թուրքական զորաբանակի մատակարարը:

Երբ 1806 թվականին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, 27-ամյա Մանուկ բեյն արդեն ազդեցիկ մարդ էր: 1802 թվականին Մանուկը Վալախիայի իշխանից ստացել էր ազնվականի տիտղոս, 1806թ.-ին նշանակվել

[4] Безвикони Г., Манук-бей. Ереван, 2009, с.5, http://armenia.md/sites/default/files/bezvoconi_manuk_bey.pdf

[5] Тунян В. Г., Манук-бей Мирзаян: грани созидания., Ереван, 2019, с.19.

Ռուշչուկի գավառապետ Մուստաֆա փաշայի խորհրդական, իսկ Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների համար 1808 թվականին թուրքական սուլթանի կողմից արժանացել է Մոլդովայի իշխանի կոչման և բեյի տիտղոսի[6]: Եղել է օսմանյան դանուբյան բանակի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքթարի խորհրդականն ու բարեկամը՝ օժտված ռուսների հետ հաշտության բանակցություններ վարելու լիազորությամբ:

Պատերազմի ժամանակ զբաղվել է օսմանյան բանակի պարենավորմամբ և ռազմական կառույցների նորոգմամբ: Պատերազմը հիմնովին փոխել է նրա ներաշխարհը, նա հասկանում էր, որ հայերը և սլավոնական մյուս ժողովուրդները ապագա չունեն թուրքական գերիշխանության ներքո, այդ իսկ պատճառով էլ որդեգրում է ռուսական կողմնորոշում և սկսում գաղտնաբար օգնել ռուսներին, ընդ որում հենց ռազմական գործողությունները ծրագրելու և իրականացնելու հարցում:

Նրա եռանդուն ջանքերի, դիվանագիտական հմտությունների շնորհիվ է կայացել ռուս-թուրքական 1806-1812թթ. պատերազմի հաշտության բանակցությունները, որոնց արդյունքում 1812 թվականին իր կառուցած պալատում կնքվել է Բուխարեստի հաշտության պայմանագիրը: Ռուսական կողմից այն ստորագրել է Կուտուզովը: Բուխարեստի պայմանագիրը ձախողել է Նապոլեոն Բոնապարտի՝ այս երկու պետություններին պատերազմի մեջ ներքաշելու ծրագիրը[7]:

Մինչ պայմանագրի կնքումը 1811թ. Բարձր դուռն անմիջապես հենց Մանուկին հանձնարարել է զբաղվել խաղաղության հաստատմամբ՝ պայմանով, որ ոչ մի դպքում տարածքի հանձնում տեղի չունենա: Սակայն Բուխարեստում կնքված խաղաղության պայմանագիրը նախատեսում էր հենց տարածքային զիջումներ, որը մեծ վրդովմունք է առաջացնում Ստամբուլում: Կնքված պայմանագիրը որոշակի լարվածություն առաջացրեց ցարական թագավորության շրջանակներում, իսկ թուրքական կողմը Մանուկ բեյին մեղադրում է դավաճանության մեջ[8]: Վախենալով թուրքերի վրեժխնդրությունից՝ 1813թ. Մանուկ բեյը կնոջ հետ տեղափոխվում է Տրանսիլվանիա և մեկ տարի ապրում Հերմանշտադտ քաղաքում: 1814թ. հաստատվում է

[6] Խաչատուր Դադայան, Դիվանագետ վաճառականներ. Մանուկ Միրզայան- http://www.diplomat.am/publ/divanage

[7] Սիրունի Հ., Էջեր Մանուկ Բեյի կյանքեն, Երևան 2018թ., էջ 4:

[8] https://168.am/2017/07/24/823118.html

Քիշնևում, ընդունում ռուսահպատակություն, արժանանում գեներալի կոչման: Գնահատելով Մ. Միրզայանի ծառայությունները՝ Ալեքսանդր I-ը 1814թ. հոկտեմբերի 3-ին նրան շնորհում է պետական խորհրդականի աստիճան[9]:

Մանուկ բեյը այցելել է Հայաստան, նյութական օժանդակություն ցույց տվել Էջմիածնի, Մուշի և այլ վայրերի վանքերին: Բուխարեստի հայոց եկեղեցու մերձակայքում հիմնել է քաղաքում առաջին հայկական դպրոցը: Նա 100 հայ ընտանիք է տեղափոխել և պատրաստվում էր շուրջ կես միլիոն օսմանահպատակ հայերի ևս տեղափոխել Վալախիա: Մանուկ բեյը գաղափար հղացավ Բեսարաբիայում հիմնել նոր քաղաք, ուր բնակություն կհաստատեին ազգակից հայերը, ինչպես նաև իր ծանոթներն ու բարեկամները: Այդ խնդրանքով նա դիմեց ցարին և թույլտվություն ստացավ 1816թ.-ին: Ալեքսանդր Առաջինը խոստանում է Մանուկին, որ Բեսարաբիան կդառնա տեղահանված օսմանահպատակ հայերի փրկության հանգրվաններից: Իր ազգի համար նա կառուցել է եկեղեցիներ, դպրոցներ: Հարազատ Ռուշչուկում կառուցել է կամուրջներ, ջրաղացներ, մանուֆակտուրաներ, զարկ տվել հանքարդյունաբերությանը: Բալկանյան շատ քաղաքներ իրենց տնտեսական զարգացմամբ մեծապես պարտական են Մանուկ Միրզայանին:

Մանուկ Մարտիրոսի Միրզայանը ոչ միայն մեծահարուստ վաճառական էր, այլև նշանավոր պետական գործիչ ու դիվանագետ: Վարելով բարձր պաշտոններ օսմանյան կայսրության մեջ՝ նա գործուն մասնակցություն է ունեցել XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի ռուս-թուրքական հարաբերություններում: Ունենալով ռուսական կողմնորոշում՝ Մանուկ բեյը աշխատել է ամեն կերպ պաշտպանել Ռուսաստանի շահերը: Նա միաժամանակ աջակցել է թուրքական բռնապետության դեմ ուղղված ինչպես հայ, այնպես էլ մերձդանուբյան ու բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումներին:

Իր ազգի համար նա կառուցել է եկեղեցիներ, դպրոցներ: Հարազատ Ռուշչուկում կառուցել է կամուրջներ, զարկ տվել հանքարդյունաբերությանը: Բալկանյան շատ քաղաքներ իրենց տնտեսական զարգացմամբ մեծապես պարտական են Մանուկ Միրզայանին:

[9] Խաչատուր Դադայան, Դիվանագետ վաճառականներ. Մանուկ Միրզայան- http://www.diplomat.am/publ/divanage

Այսպիսով, ապրելով քաղաքական մեծ խմորումների և տնտեսական կառուցվածքում խոր վերափոխումների պատմական շրջանում, Մանուկ բեյը օսմանյան կայսրությունում, Ռումինիայում և կյանքի վերջին ժամանակաշրջանում՝ նաև Ռուսաստանում ստեղծած կապերի շնորհիվ ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ասպարեզում գերազանց ձևով է իրականացրել իր մտահղացումները:

Նա գործել է ստվերում, սակայն իր ազդեցության շնորհիվ Կոստանդնուպոլսում, Բուխարեստում և նույնիսկ Պետրոգրադում մասնակից է եղել շատ դեպքերի, որոնցից մի քանիսը ունեցան պատմական հետևանքներ:

Օգտագործված գրականության ցանկ

Սկզբնաղբյուրներ

1. Հակոբ Սիրունի, Էջեր Մանուկ Բեյի կյանքեն, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1969թ., N 3, (24):
2. Հակոբ Սիրունի, Էջեր Մանուկ Բեյի կյանքեն, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1970թ., N 2 (26), N 3(27):

Գրականություն

1. Безвикони Г., Манук-бей. Кишинев, 1938.
2. Рштуни Г., Армянский принц Манук - бей, Ереван, 2010.
3. Тунян В. Г., Манук-бей Мирзаян: грани созидания, Ереван, 2019.
4. Тунян В. Г., А. С. Грибоедов: новое в известном, Ереван, 2015.
5. Фаньян Дж. С., Манук-бей и его дипломатическая деятельность/ /Историко-филологический журнал, Ереван, 1977, № 4.
6. Հակոբ Սիրունի, «Էջեր Մանուկ Բեյի կյանքեն», Եր., 2018թ.:
7. Հասմիկ Ստեփանյան, Հայերի ներդրումն Օսմանյան Կայսրությունում, Եր., 2012թ.:
8. Շտեֆան Յոնեսկու, Մանուկ Բեյ՝ 19-րդ դարի սեղանավոր և դիվանագետ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1989թ.:

Հոդվածներ և ինտերնետային կայքեր

1. Խաչատուր Դադայան, Դիվանագետ վաճառականներ. Մանուկ Միրզայան-http://www.diplomat.am/publ/divanage
2. https://168.am/2017/07/24/823118.html

MANUK BEY'S SOCIAL AND POLITICAL ACTIVITIES

MARGARYAN JULIETA
4th-year undergraduate student of the Department of History, GSU
e-mail: julya.margaryan1999@mail.ru
Academic Supervisor: Tunyan Valeri
Doctor of Historical Sciences, Professor

Manuk Martiros Mirzoyan is one of the most popular figures in the Ottoman and Russian diplomatic arena, a high-class banker, supplier of the Ottoman Empire Army, a large merchant in XVIII-XIX centuries.

The purpose of this Article is to study the image of professional literature, scientific articles, documents, the image of the famous Armenian, and the economic and political activity in the Ottoman Empire, as well as his role in the national liberation struggle of the Armenian people.

The study was conducted on the basis of various documents, materials and literature research and with the use of general mental activities and methods: historical-comparative, historical-systemic methods, analysis, cooperation, comparison.

As a result of the study, we came to the conclusion that Manuk Martiros Mirzoyan was not only a wealthy merchant, but also a famous statesman and diplomat. By taking high positions in the Ottoman Empire, he took an active part in Russian-Turkish relations in the late 16th century and at the beginning of the 19th century. Having a Russian orientation, Manuk Bey has worked to protect Russia's interests in every possible way. At the same time, he supported the liberation movements of both the Armenian and the Danubian and the Balkan peoples against Turkish dictatorship.

Key words: *Bey, Army Supplier, rich merchant, statesman, diplomat, liberation movement.*

ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ МАНУКА БЕЯ

МАРГАРЯН ДЖУЛИЕТА
Студентка 4 курса отделения истории
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: julya.margaryan1999@mail.ru
Научный руководитель: Тунян Валерий
Доктор исторических наук, профессор

Мирзоян Манук Мартиросович является одним из самых известных лиц на Османской и российской дипломатической арене XVIII-XIX вв, поставщик армии Османской империи, великий купец.

Цель исследования настоящей статьи-на основе специальной литературы, научных статей, документов изучить и представить образ известного армянского высокопоставленного чиновника Манука Бея, его политическую и экономическую деятельность в Османской империи, а также подчеркнуть важность его патриотической деятельности в национально-освободительной борьбе армянского народа:

Исследование было проведено на основе изучения различных документов, материалов и литературы с применением таких методов мыслительной деятельности как анализ, сравнение, сопоставление и историко-сравнительный, и историко-системный методы.

В результате исследования мы пришли к выводу, что Манук Мартиросович Мирзоян был не только богатым купцом, но и видным государственным деятелем и дипломатом. Занимая высокие посты в Османской империи, он принимал активное участие в русско-турецких отношениях конца XVIII и начала XIX веков. Имея русскую ориентацию, Манук Бей старался всячески защищать интересы России. В то же время он содействовал освободительному движению как армянского, так и приданубского и балканского народов, направленного против турецкой диктатуры.

Ключевые слова: *Бей, поставщик армии, богатый купец, государственный деятель, дипломат, освободительное движение.*

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ԳՈՉԵՅԱՆ ՎԱՀԵ
Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Պատմություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող
էլփոստ՝ vahegozeyan@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հայրապետյան Քանաքարա ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, ԳՊՀ դասախոս, ասիստենտ

Առաքել Դավրիժեցին XVII դարի ամենամեծ պատմագիրն է: Նրա «Պատմությամբ» է նշանավորվում ուշ միջնադարի հայ պատմագրության վերածնունդը:

Հոդվածում քննության է առնվում XVII դ. պատմագիր Առաքել Դավրիժեցու «Պատմություն» աշխատությունը, որն ընդգրկում է Հայաստանի, Անդրկովկասի երկրների և հայ գաղթօջախների 1602-1662թթ. քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական և պատմական անցքերը, շահ Աբաս Ա-ի կողմից հայոց մեծ գաղթի իրականացման, Թուրքիայի ու Իրանի միջև տեղի ունեցող պատերազմների ժամանակաշրջանը: Հոդվածում ցույց է տրվում Դավրիժեցու առանձնահատուկ դերը հայ պատմագրության մեջ:

Բանալի բառեր՝ *Առաքել Դավրիժեցի, պատմագրություն, մեծ գաղթ, շահ Աբաս, Պարսկաստան:*

Առաքել Դավրիժեցին ծնվել է Ատրպատականի Թավրիզ քաղաքում և ծննդավայրի անունով էլ անվանվել Դավրիժեցի (Թավրիզեցի): Ըստ Հրաչյա Աճառյանի հաղորդած տեղեկությունների՝ «Առաքել վարդապետի տունը և գերդաստանը մնում են այժմ Թավրիզում (Ղալայի Ս. Աստվածածին եկեղեցու նրբանցքում) և կրում Պատմագրեան ազգանունը»[1]: Ծննդյան թիվը հայտնի չէ: Կա տեսակետ, որ նա ծնվել է XVI դ. վերջին տասնամյակում[2]: Կրթությունն ստացել է Էջմիածնի միաբանությունում, աշակերտել է Փիլիպ-

[1] Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942, էջ 216:
[2] Աբեղյան Մ., Երկեր, հ.Դ, Եր., 1970, էջ 513:

պոս Աղբակեցի կաթողիկոսին և նրանից ստացել է վարդապետական աստիճան: Զաքարիա Քանաքեռցի պատմիչը վկայում է, որ Դավրիժեցին մեկ տարի եղել է Օհանավանքի վանահայրը՝ 1636թ., որից հետո գնացել է Էջմիածին[3]: Ըստ երևույթին, Առաքել Դավրիժեցին Էջմիածնի միաբանության ճանաչված դեմքերից է եղել, իբրև Փիլիպպոս կաթողիկոսի նվիրակ՝ ճանապարհորդել է Հունաստանում, Սեբաստիայում, Ուռհայում, Հալեպում, Սպահանում և ուրիշ վայրերում[4]: Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով ծերունի Դավրիժեցին ձեռնարկում է իր «Պատմության» շարադրումը, որն ավարտում է արդեն Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք: «Պատմություն»-ը գրվել է 9 տարում՝ սկսել է 1651թ., 1655թ. դադար է տվել և 1658թ. շարունակել աշխատանքը[5]:

Դավրիժեցու կյանքը և հատկապես պատմագիտական ժառանգությունը մշտապես գրավել է հայագետների ուշադրությունը: Նրա «Պատմություն»-ը համարվել է «հազվագյուտ ստեղծագործություն» (Նոյման, Մյուլլեր)[6]: Ղ.Ալիշանը նշում է, որ Դավրիժեցին թե՛ իրենից 2-3 դար առաջ և թե՛ իրենից հետո եղած պատմիչների մեջ լավագույնն է[7]: Հայտնի մատենագետ Հ. Անասյանը նշում է, որ Դավրիժեցին «ստուգապատում մատենագիր է և իր ժամանակի պատմության համար վստահելի աղբյուր»[8], իսկ Լեոն հիաց-

---

[3] Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրություն, Հայոց պատմություն, Եր., 2013, էջ 208-209:

[4] Բաբայան Լ.Հ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., 1984, էջ 80:

[5] Ա. Դավրիժեցու կյանքի և պատմագիտական ժառանգության մասին մանրամասն տե՛ս Հ. Անասյան, «Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ.», հատոր Ա, Եր., 1959, էջ 1144-1155, Ա. Առաքելյան, «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն» աշխատության 1964-ին լույս տեսած երկրորդ հատորի 519-559 էջերը, Վ. Առաքելյանի «Առաքել Դավրիժեցի» (մահվան 300-ամյակի առթիվ) հոդվածը, Պատմաբանասիրական հանդես, 1970, թիվ 3, նույն հեղինակի «Առաջաբանը» Առաքել Դավրիժեցու «Պատմություն» գրքում, Եր., 1988, էջ 3-16, Լ. Խանլարյանի «Առաջաբանը» Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» գրքում, Եր., 1990, էջ 5-52:

[6] Դանեղյան Լ. Գ., Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի հարցերը Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան, հ.VIII, 1975, էջ 365, հղումը ըստ՝ Neuman C.F., Versuch einer Geschichte der armenischen literatur, Leipzig, 1836, s. 249; Muller Fr., Wiener zeitschrift fur die Kunde des Morgenlandes, Bd. II, 1889, s. 259-262:

[7] Ալիշան Ղ., Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 131:

[8] Անասյան Հ., նշվ. աշխ,, էջ 1144:

մունքով ընդգծում է. «…առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակակիցների մեջ»[9]:

Անկասկած, Ա.Դավրիժեցու աշխատության գրապատմական գնահատականը 1669թ. Ոսկան Երևանցու կողմից դրա լույսընծայումն էր Ամստերդամում, որի շնորհիվ Դավրիժեցին դառնում է առաջին հայ պատմիչը, ում աշխատությունը լույս տեսավ իր իսկ կենդանության օրոք[10]: Ոսկան Երևանցին ինքնանպատակ չէր ձեռնարկել այդ գործը, մանավանդ որ այդ ժամանակ արդեն ուներ «հրատարակչական աշխատանքի շուրջ յոթ տարվա փորձ ու հմտություն»[11], իսկ Դավրիժեցու պատմագիրքը Ոսկան Երևանցու հրատարակած թվով տասնյոթերորդն էր[12]: Կարող ենք ենթադրել, որ Ոսկանը տեղյակ էր այն հետաքրքրության մասին, որ տածվում էր Դավրիժեցու աշխատության հանդեպ, և նաև այն, «… որ հրատարակում է 17-րդ դարի պատմագրության ամենամնայուն արժեքը»[13]: Դրանից հետո պատմագիրքն ունեցել է ևս չորս հրատարակություն[14]:

Գոյություն ունի նաև Պետերբուրգի կայսերական ճեմարանի գործունյա անդամ Մ. Բրոսսեի ֆրանսերեն հրատարակությունը[15]: 1973 և 2005-2006 թվականներին տպագրվել են նաև պատմագրքի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները[16]:

---

[9] Լեո, Հայոց պատմություն, հ.Գ, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1946, էջ 362:

[10] Գիրք Պատմութեանց, շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դավրէժացւոյ, Ամսթէլոդամ, 1669:

[11] Միրզոյան Հ., Առաքել Դավրիժեցու «Պատմության» առաջին հրատարակության մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1977, էջ 190:

[12] Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977, էջ 530:

[13] Նիկողոսյան Ա., Առաքել Դավրիժեցու «Պատմությունն» իբրև գրական երկ, Եր., 2012, էջ 15:

[14] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., 1988, Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ.Ա.Խանլարյանի, Եր., 1990:

[15] M.Brosset, Livre d’istoires, compose′ par le vartabied Arakel de Tauriz, “ Collection d’historiens armeńiens”, t.I, SPB, 1874.

[16] Аракел Даврижеци, Книгаистории, переводсармянского, предисловие и комментарий Л. Ханларяна, М., 1973; The History of Vardapet Arak’el of Tabriz, Introduction and Annotated Translation from the critical text by George A. Bournoutian, Vol. 1-2, Costa Mesa: Mazda, 2005-2006.

«Պատմության» ճանաչվածությունը արդյունք էր այն բանի, որ Դավրիժեցին ականատես, ականջալուր էր դեպքերին և անաչառ, նա նաև տեղեկություններ է տալիս այլ երկրների մասին՝ հաղորդելով այնպիսի տվյալներ, որոնք բացակայում են 17-րդ դ. այլ պատմիչների երկերում[17]:

Դավրիժեցու պատմագիրքը գրեթե միակն է, որտեղ ներկայացվում է հայ ժողովրդի քաղաքական, մշակութային և եկեղեցական կացությունը պարսից շահ Աբասի շրջանում: Առաքել Դավրիժեցու արժեքավոր գործը լույս է սփռում վաթսունամյա (1602-1662թթ.) պատմական մի շրջանի վրա, առանց որի «պատմագիրներ պիտի խարխափէին իրենց հետազօտութեանց ընթացքին մէջ, առանց կարենալ յստակօրէն տեսնելու եւ հանգամանօրեն քննելու իրական վիճակը հայ ժողովուրդին»[18]: Պատմությունը բաղկացած է առաջաբանից և բուն շարադրանքից, որն ունի 56 գլուխ:

Կարելի է ասել, որ Դավրիժեցին սովորական պատմիչ չէ, այլ քննող և անաչառ, պատմական դեպքերի հիմքը համարելով ժամանակը՝ ձգտել է ճշտել նկարագրելիք պատմական երևույթների ժամանակները: Պատերազմների, կոտորածների հետևանքով հայ բնակչությունը ցաքուցրիվ է լինում և ապրում է թշվառության մեջ: Դա է պատճառը, որ Դավրիժեցին չի գտնում պատմական իրադարձություններն իմացող մեկին, որը «պատմության հետ նաև թվականը իմանար»[19]: Պատմիչը ջանում է գտնել պատմական իրադարձության թվականը, իսկ չգտնելու դեպքում պարզապես դեպքերն է գրի առնում:

Մինչ Մեծ գաղթի՝ սուրգունի պատմության շարադրումը, պատմագիրը դառնացած գրում է հայ ժողովրդի ճակատագրի մասին. «Հայոց ազգից ոմանք իրենց կամքով ու մատով կուրացրին իրենց աչքերը, որովհետև իրենք կործանեցին իրենց թագավորությունն իրենց նենգությամբ, անհնազանդությամբ և եղան այլ ազգերի ու թագավորների կոխան, ծառաներ, գերիներ, և երբ ինչ-որ նեղություններ են վրա հասնում՝ որևէ տեղից օգնություն չգտնելով ու ճարահատ մնալով փախստական լինելով ճողոպրում են այստեղ-այնտեղ:

---

[17] ԴանեղյանԼ.Գ.,նույնտեղում, էջ 366:

[18] Սարգիսյան Խ.,Առաքել Դավրիժեցին և իր պատմագրութիւնը, «Գլաձոր», Բեյրութ, 1956, թիվ 1, էջ 69:

[19] Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 6:

Արդ, թե՛ այս պատճառով, թե՛ ... մեծ սովի ու ջալալիների պատճառով հայոց ողջ ազգը ելավ, դարձավ վտարանդի և իր տեղերից, հայրենի բնակավայրերից ու երկրներից և գլուխ առած իր երեսի ուղղությամբ ցիրուցան լինելով սփռվեց ամբողջ աշխարհում»[20]: Այնուհետև թվարկում է այն երկրներն ու քաղաքները, ուր ապաստան են գտել գաղթած հայերը:

Անզուսպ ատելությամբ Դավրիժեցին խոսում է շահ Աբաս Ա-ի և նրա արքունիքի մասին: Ցավով բացահայտում է պարսիկների՝ հայերի նկատմամբ գործադրած քաղաքականության բուն էությունը, քայլ առ քայլ մերկացնում է Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ նրանց նենգ ու բիրտ վերաբերմունքը: Այնուհանդերձ Դավրիժեցու ժամանակակիցները, իր իսկ վկայությամբ, չեն հասկացել այդ քաղաքականության հետապնդած նպատակները: Տեղին է հիշել պատմաբան Լ. Բաբայանի խոսքն այն մասին, թե «Դավրիժեցին այնքան խորն է ապրել իր հայրենիքին ու ժողովրդին Արևելքի այդ բռնակալի կողմից պատճառած արհավիրքները, որ նրա ամեն մի ձեռնարկումը նկարագրելուց առաջ կարծեք թե թափանցել է շահ Աբբասի ներաշխարհը, կռահել նրա չար դիտավորությունները»[21]: Դավրիժեցու զայրույթը ոչ միայն պարսկական քաղաքականությամբ է պայմանավորված, այլև հայոց եկեղեցու թուլակամությամբ: Նա անարգանքի սյունին է գամում Դավիթ և Մելքիսեթ կաթողիկոսներին, որոնք Էջմիածինը ծանր հարկերից փրկելու համար որոշում են ընդունել շահի հպատակությունը: Այդ կապակցությամբ Աբաս Ա-ն հայոց երկու կաթողիկոսներին իր մոտ է կանչում և հայտնում, որ օսմանցիներին վճարելիք պարտքը նրանք պետք է պարսկական գանձարան տան:

Դավրիժեցու աշխատությունում բավական մեծ տեղ է հատկացվում շահ Աբասի օրոք իրականացված ժողովուրդների, հատկապես հայ ժողովրդի բռնի տեղահանման պատմական իրադարձությունների մանրամասն նկարագրությանը: Հայտնի է, որ XVII դարասկզբին Մերձավոր Արևելքում գերիշխող դիրք գրավելու համար աշխարհակալության ձգտող Իրանի և Թուրքիայի միջև հակամարտություններն իրենց գագաթնակետին են հասնում, Հայաստանն ու հարևան շրջանները շարունակում են մնալ պատերազմական գործողությունների հիմնական թատերաբեմ: Շահ Աբասը ծրագրում է ամայացնել Հայաստանի մի շարք շրջաններ, որպեսզի թուրքական զորքե-

[20] Նույն տեղում, էջ 123:

[21] Բաբայան Լ.Հ., նշվ. աշխ., էջ 89:

րը, Հայաստան ներխուժելով, մնան առանց սննդի և օժանդակ աշխատուժի: Արևմտյան Հայաստանից (Կարս, Շիրակ, Բերկրի, Արծկե, Արճեշ, Խնուս և այլն) բռնագաղթվում է 300 հազար հայ, Արարատյան կուսակալությունից՝ առնվազն 60 հազար մարդ, Նախիջևանի երկրամասից՝ 145 հազ., Գանձակի նահանգից և Ատրպատականից՝ 100 հազար բնակիչ, ընդհանուր՝ 605 հազար բնակիչ[22]: Կարևոր է այն հանգամանքը, որ շահ Աբասի՝ քրիստոնյաների նկատմամբ վարած քաղաքականության հիմնական նպատակը ոչ միայն քաղաքական էր, այլև տնտեսական՝ Իրանում զարգացնել առևտուրն ու արհեստները: Այդ կապակցությամբ Դավրիժեցին գրում է. «Բոլոր քարագործ արհեստավորներին անջատեցին ժողովրդից, տարան Սպահան քաղաքը այն արհեստի համար, որ պետք էր գալիս այնտեղ թագավորի տան շինության և ողջ պարսից ազգի համար: Սրանց Սպահանում բնակեցրին»[23]:

Շահ Աբասի 1604թ. գազանաբարո բռնագաղթն այսպիսի նկարագիր ունի. «Տագնապալից աճապարանքով գավառների բոլոր բնակիչներին շուտափույթ շորթելով իրենց բնակավայրերից և վտարելով ինչպես հոտ ու նախիր բազմաթիվ ոչխարների ու տավարների առաջները անելով բռնությամբ քշեցին բերին հասցրին Արարատյան գավառը: Նրա լայնանիստ դաշտը ծագեծագ լցրին, որովհետև Գառնիի լեռների ստորոտներից մինչև Արաքս մեծ գետը բանակի լայնքն էր, իսկ երկարությունը ... մի օրվա ճանապարհ, բայց այլուր տեսա՝ գրված էր հինգ օրվա ճանապարհ»[24]: Իսկ երբ պարսից զորքերը նկատում էին թուրքերի առաջխաղացումը. «...խիստ տագնապով նեղում էին ժողովրդին, ոմանց մահու հարվածներով ծեծում էին, ոմանց քթերն ու ականջներն կտրելով, ոմանց էլ գլուխները կտրում էին ու ցցում էին ձողի վրա...Եվ ժողովրդի շատության պատճառով նրանց նավ կամ արկղ չէր բավականացնում, որոնցով գետը անցնեին...Իսկ թշվառ ժողովուրդը նայում իր առջև տեսնում էր ծովի նման անհուն գետը, որ խեղդում էր, իսկ ետևից պարսից սուրն էր, որ սպանում է, և փախուստի ոչ մի հնար չկար...աղիողորմ ողբեր, հորդ արցունքներ աչքերից թափելով երկրորդ Արաքս էին գոյացնում .... Բայց պարսից անողորմ զորքերը ժողովրդին քշելով լցնում էին գետը, ... Իսկ նրանք, որոնք լողալ չգիտեին, կամ ուժ չունեին՝ ծերեր, պա-

[22] Մալխասյան Մ., ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում - 17-րդ դարի առաջին կեսին, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 129 - 176:

[23] Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 356:

[24] Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 43:

ռավներ, տղաներ, աղջիկներ, մատղաշ մանուկներ լցված էին ջրի երեսը, և գետը քշած տանում էր նրանց իբև չոր ճյուղ գարնան ժամանակ: Գետատար մարդկանցով ծածկված էր գետի երեսը. Թեպետ անցնողները անցան, բայց շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով մեռան»[25]:

Պետք է նկատել, որ Դավրիժեցու նկարագրած բռնագաղթի պատկերները ամբողջությամբ հաստատվում են ժամանակակիցների թողած հիշատակարաններով, ինչպես նաև եվրոպական ճանապարհորդների հուշագրություններով[26]: Պատմագրին անհանգստացնում է Պարսկաստան և այլուր գաղթածների ճակատագիրը: Նրան առաջին հերթին հետաքրքրում են ամբողջ ժողովրդի վիճակը, հատկապես ստորին խավի: Ըստ Դավրիժեցու՝ շահ Աբասը «ղարիպականքի» ստորին խավերի նկատմամբ անզիջող դաժան է եղել, նրանց տնտեսական սնանկության է հասցրել և ստիպել է դավանափոխ լինել: Միաժամանակ շահը բարյացակամ է եղել առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների նկատմամբ, որոնց բնակեցրել է Սպահանում՝ ելնելով սեփական պետության շահերից:

Դավրիժեցին նշում է, որ շահ Աբասը մտադրված է եղել Սպահանում նոր էջմիածին կառուցել և մայր աթոռը տեղափոխել այնտեղ: Իբր դրա պատճառը եղել է այն, որ գաղթական հայերը «շատ էին բաղձում Հայաստան գնալ[27]:

Դավրիժեցու աչքից չեն վրիպում անգամ Պարսկաստանի ներսում կատարվող քաղաքական իրադարձությունները[28]:

---

[25] Նույն տեղում, էջ44-45:

[26] Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան և ապագան, մաս Ա, Վիեննա, 1911, Զեքիյան Լ., Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1983, թիվ 1, Զուլալյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Եր., 1990, «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974, Корганян Н. К., Квопросуо насильственном переселения армян шахом Аббасом I, Պատմա-բանասիրական հանդես, 1983, н. 2-3, Blow D., Shah Abbas:The Ruggles King Who Became an Iranian Legend, London - New York, 2009; Newman A., Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London-New York, 2009; Herding E., The Deportation of the Armenians in 1604-1605 and Erop's Myth of Shah' Abbas I, " Pembroke Papers", 1990, N 1.

[27] Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 161:

[28] Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1978, Նաջարյան Հ. Խ., Թուրք -իրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Եր., 1961:

Դավրիժեցու «Պատմությունը» ոչ միայն պարունակում է լրացուցիչ փաստեր, այլև օգնում է ճիշտ լուսաբանելու մի շարք հարցեր՝ Սեֆյանների արտաքին քաղաքական կյանքի, հայ-իրանական հարաբերությունների, երկրի ներքին կյանքի վերաբերյալ և այլն: Պատահական չէ, որ որոշ ձեռագրերում այս երկը անվանվում է «Պատմութիւն թագավորացն Պարսից...»[29]: XVII դ. սկզբի իրանաթուրքական պատերազմների, ինչպես նաև իրանահայ գաղութի կյանքի նկարագրություններից զատ՝ Դավրիժեցու երկում տեղեկություններ են հաղորդվում Իրանի ներքին, սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ: Կարևոր տվյալներ կան երկրի քաղաքների, արհեստների, պալատի, վարչակարգի, հարկերի և հարակից այլ հարցերի վերաբերյալ: Նրանից ենք իմանում շահ Աբաս Ա-ի օրոք Սեֆյանների և Ռուսաստանի հետ դեսպանությունների փոխանակման մասին: Մանրամասն նկարագրություն կա ջալալիների[30] պատճառած ավերածությունների, կողոպուտի, կոտորածի, գերեվարման մասին: Նա խիստ բացասական վերաբերմունք է ցուցաբերում ջալալիների նկատմամբ, նրանց շարժումը «աշխարհավեր ու աշխարհակործան» է համարում:

Պատմագիրը զայրույթով է խոսում շահ Աբասի՝ Կախեթի և Քարթլիի թագավորների նկատմամբ գործադրած նենգ ու ստոր միջոցառումների մասին: Կարևոր ու հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում վրաց Թամրազ և Լավասափ թագավորների՝ պարսից զորքին ցույց տված դիմադրության մասին:

Չնայած իր ապրած ժամանակաշրջանի մղձավանջային պայմաններին, հայրենիքին ու ժողովրդին հասած աղետներին՝ Դավրիժեցին այս ամենի մեջ տեսել է հայ հոգևոր կյանքի, մշակույթի ազդարարումը: Ժողովրդի անգրագիտության ահռելի դժբախտությունը խորը գիտակցելով՝ Դավրիժեցին նրա դեմ ուղղված պայքարի ամենափոքր միջոցառումը հպարտորեն գրի է առել: Հիրավի, ճիշտ է Լեոն, երբ գրում է, որ շահ Աբաս Ա-ն կարող էր բնաջինջ անել հայ ազգաբնակչությանը, բայց սպանել մի ազգի պատմական բնազդը, սպանել նրա մեջ այդ դարավոր եռանդը, որ պատմությունն ստեղծել է տալիս հայրենի հողի վրա՝ այդ արդեն դուրս էր գալիս նույնիսկ պար-

[29] Օրինակ՝ Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 2271, էջ 214:

[30] Ջալալիական ապստամբությունների մասին մանրամասն տե՛ս Ջուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (16-17-րդ դդ.), Եր., 1966:

սից մեծ բռնակալի կարողությունից[31]: Հենց սա է գիտակցել պատմագիրը և իր «Պատմությամբ» ժամանակակիցներին ու հետագա սերունդներին հասկացրել է, որ հայերի մեջ պատմական բնազդն ու դարավոր եռանդը մեռած չեն, որ դեռևս իր ապրած օրերում արդեն ի հայտ են եկել մտավոր վերածնության գործիչներ: Նա հիացմունքով է խոսում առաջադեմ հոգևորականության բացահայտ պայքարի մասին՝ հետադեմ և տգետ հոգևորականության դեմ: Այստեղ տեղին է շեշտել, որ Դավրիժեցու «Պատմության» արժանիքներից մեկն էլ այն է, որ նա որոշակի պատկերացում է տալիս Հայաստանում վերանորոգչության սկզբում հոգևոր վերնախավի շրջաններում ծավալված այն պայքարի մասին, որ տեղի էր ունեցել հին սերնդի՝ ի դեմս Դավիթ, Մելքիսեթ, Սահակ կաթողիկոսների և նրանց համախոհների, և նոր սերնդի՝ ի դեմս Մովսես և Փիլիպպոս կաթողիկոսների, Պողոս վարդապետի, որոնք համառ պայքարում հաղթանակ էին տարել հին սերնդի նկատմամբ և լայն գործունեություն ծավալել ու կաթողիկոսարանը դուրս բերել ճգնաժամային վիճակից: Պատմագիրը մերկացնում է Հռոմի պապին և կաթոլիկ ճիզվիտներին, որոնք հովանավորել են Լվովի՝ կաթոլիկություն ընդունած Նիկոլ (Նիկողայոս Թորոսովիչ) եպիսկոպոսին, որը, քաղաքի իշխանից զինական ուժ ստանալով, բռնի տիրել է եկեղեցիներին ու վանքերին, բոլորին ստիպել է ընդունել կաթոլիկություն, վարել է եկեղեցու հարստությունը, կողոպտել է ժողովրդին և այլն: Այս իրադարձությունների կապակցությամբ Դավրիժեցին հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ է տալիս Լվովի գաղթօջախի ներքին ինքնավարության, կառավարման համակարգի և պապականության դեմ համառ ու անզիջում պայքարի մասին, որոնք հաստատվում են արխիվային փաստաթղթերով[32]:

Դավրիժեցին իր «Պատմության» մեջ զգալի տեղ է հատկացրել հայ առևտրավաշխառուական կապիտալի վերնախավի ծավալած գործունեությանը Պարսկաստանում և Թուրքիայում, ցույց է տվել նրա կարևոր դերը հայ քաղաքական-հասարակական կյանքում: Պատմիչը հիացմունքով և հպարտությամբ է գրում Հին և Նոր Ջուղաների, Արևմտյան Հայաստանի, Կոստանդնուպոլսի և Լվովի խոջաների ու դովլաթավորների մասին: Բայց միաժամանակ ողբում է Հին Ջուղայի ճակատագիրը: Նա երախտագիտությամբ է նշում հայ առևտրական վերնախավի ցույց տված նյութական և բարոյա-

[31] Լեո, նշվ. աշխ., էջ 272:

[32] Տե՛ս Аракела Даврижеци, Книга историй, стр. 34, примеч. - 12:

կան օգնությունը ուսումնակրթական, հայոց հոգևոր կենտրոնի վերականգնման ու ամրապնդման բնագավառներում: Կարծես թե Դավրիժեցին չի նկատել կամ գուցե չի ցանկացել տեսնել հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչների գործունեության արատավոր կողմերը, նրանց շվայտ կենցաղավարությունը, որի մասին զայրույթով են խոսել Դավրիժեցու ժամանակակիցներ Գրիգոր Դարանաղցին[33] և Զաքարիա Ագուլեցին[34]:

«Պատմության» մեջ որոշ տեղեկություններ կան Պարսկաստանում և Հայաստանում ծավալած կաթոլիկ միսիոներների գործունեության մասին: Դավրիժեցին սրանց նկատմամբ բավականին բացասական է տրամադրված: Դավրիժեցին անարգում է «ֆրանկ պատրիկներին», որոնք եկել էին Էջմիածին, կաշառել Մելքիսեթ կաթողիկոսին և սկսել սրբերի նշխարները գաղտագողի յուրացնել:

Դավրիժեցու պատմության ամենաստվերոտ կողմը գրքի բովանդակության հետ առնչություն չունեցող կողմնակի նյութերի առատությունն է, որոնք որոշ դեպքերում խճողել են շարադրանքը, խախտել տրամաբանական կապը: Պատմագիրը հաճախ ընդհատում է այս կամ այն իրադարձության և կամ անձի մասին պատմածը, մեջ է բերում բոլորովին կողմնակի զրույց ու նորից վերադառնում ընդհատված պատմությանը[35]: Այս համատեքստում կարող ենք նշել, որ Դավրիժեցու «Պատմության» մեջ զետեղված են ուրիշների գրած պատմություններ, որոնցից են գլուխ Ը-ն («Մասնակի հրդեհի մասին, որ եղավ մեծ քաղաք Կոստանդնուպոլսում», որի հեղինակն է ականատես Ստեփանոս Մեղրեցի վարդապետը, գլուխ ԸԵ-ն («Ծարեցի Հովհաննես վարդապետի գրած Աղվանից աշխարհի պատմությունը»), թանկարժեք քարերին նվիրված «Այս է աշխարհի վրա գտնվող գոհարների գիրքը, թե որտեղից են ստացվում. ամենից առաջ ալմաստը»: Ակնեղենի նկատմամբ XVII դարում մեծ ուշադրություն է դարձվում հայագետների կողմից, որոնց կիրառելիությունը դիտվում է ազգագրական տեսանկյունից[36]:

---

[33] Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915:

[34] Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938:

[35] Բաբայան Լ., նշվ. աշխ., էջ127:

[36] Քերովբե Պատկանյանը ունի առանձին ուսումնասիրություն՝ Драгоценные камни, их названия и свойство по понятиям армян в XVII в., СПб, 1873: Ազգագրական տվյալների և ժողովրդագրության առումով ուշագրավ են Ռաֆիկ Նահապետյանի երկու հոդվածները՝ Հայ ազգագրական տեղեկությունները ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի, Պատմություն

Դավրիժեցու «Պատմությունն» ունի մեկ այլ կարևոր առանձնահատկություն. XV-XVI դարերի պատմությանը անդրադառնալիս նա ամենայն բարեխղճությամբ նշում է իր աղբյուրները: Օրինակ՝ Զաքարիա կաթողիկոսի այցը Ջահանշահին պատմության նյութը վերցրել է Անկյուրիա քաղաքի եկեղեցում գտնված մի Հայսմավուրքի հիշատակարանից. «Գտա մի Հայսմավուրք այն եկեղեցում, որն անվանում են Սուրբ հոգի»[37]: Կամ՝ Էջմիածնի կաթողիկոսությունը վերահաստատվելու մասին նյութը վերցրել է Թովմա Մեծոփեցուց. «...կաթողիկոսությունը հաստատեցին Սուրբ Էջմիածնում, ինչպես որ պատմում է Թովմա վարդապետը»[38] և այլն:

Դավրիժեցու «Պատմությունը» ոչ միայն հայ պատմագիտության նվաճումներից է, այլև նրանում տեղ գտած որոշ պատումներ հիմք են հանդիսացել գեղարվեստական խոշոր գործերի: Զանազան զրույցներ ունեն գեղարվեստական շարադրանք: Այս հանգամանքն էլ հետագա հայ գրողներից շատերին առիթ է տվել ստեղծելու նորանոր գործեր, որոնցից են Մուրացանի «Անդրեաս Երեց» պատմավեպը (1897թ.), Դ. Վարուժանի «Արմենուհի» պոեմը կամ դյուցազնավեպը (1908թ.) և Հովի. Թումանյանի «Թագավորն ու չարչին» բալլադը (1917թ.):

Այսպիսով, Առաքել Դավրիժեցու «Պատմություն»-ը կարևոր սկզբնաղբյուր է XVII դ. առաջին կեսի Հայաստանի, Անդրկովկասի, Թուրքիայի և Պարսկաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության համար: Այն կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների, դրանց կործանարար հետևանքների համար: Նրանում բազմակողմանի ցույց է տրված հայ հասարակական խավերի բռնած դիրքն օտար բռնակալների նկատմամբ: Հայ պատմագիտության մեջ Դավրիժեցին դարձավ հայ հոգևոր ու մտավոր կյանքի զարթոնքի վառ ներկայացուցիչներից մեկը՝ միաժամանակ դառնալով նաև խավարի դեմ լուսավորության պայքարի պատմագիրը:

և մշկույթ, N Բ, Եր, 2011, էջ 251-269, Առաքել Դավրիժեցու տեղեկությունները հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և տեղանունների մասին, Ակունք. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1, Եր., 2011, էջ 9-18:

[37] Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 328:

[38] Նույն տեղում, էջ 341:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ.Դ, Եր., Հայկական ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1970:
2. Ալիշան Ղ., Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901:
3. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Եր., 1942:
4. Անասյան Հ., Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ., հատոր Ա, Եր., 1959:
5. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988:
6. Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան և ապագան, մաս Ա, Վիեննա,1911:
7. Առաքելյան Վ., Առաքել Դավրիժեցի (մահվան 300-ամյակի առթիվ) հոդվածը, «Պատմաբանասիրական հանդես», 1970, թիվ 3:
8. Բաբայան Լ. Հ., Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984:
9. Դանեղյան Լ., Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Եր., 1978:
10. Դանեղյան Լ. Գ., Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի հարցերը Առաքել Դավրիժեցու «Պատմության» մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան, հ.VIII, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1975:
11. Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938:
12. Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրություն. Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթագրութ.՝ Վարագ Առաքելյանի, Եր., «Հայաստան» հրատ., 2013:
13. Զեքիյան Լ., Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1983, թիվ 1:
14. Զուլալյան Մ., Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Եր., 1990:
15. Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (16-17-րդ դդ.) .), Եր., 1966:
16. Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրապարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915:
17. Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1, Եր., 1977:
18. Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1946:
19. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ.Ա, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974:
20. Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացները Հյաստանում 16-րդ դարում - 17-րդ դարի առաջին կեսին, Եր., ԵՊՀ հրատ., 2020:

21. Նահապետյան Ռ., Հայ ազգագրական տեղեկությունները ըստ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» երկի, Պատմություն և մշկույթ, N Բ, Եր, 2011:
22. Նահապետյան Ռ., Առաքել Դավրիժեցու տեղեկությունները հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և տեղանունների մասին, Ակունք. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1, Եր., 2011:
23. Նիկողոսյան Ա., Առաքել Դավրիժեցու «Պատմությունն» իբրև գրական երկ, Եր.,«Անտարես» հրատ., 2012:
24. Սարգիսյան Խ., Առաքել Դավրիժեցին և իրՍարգիսյան Խ., Առաքել Դավրիժեցին և իր պատմագրութիւնը, «Գլաձոր», Բեյրութ, 1956, թիվ 1:
25. Аракел Даврижеци, Книга истории, перевод с армянского, предисловие и комментарий Л. Ханларяна, М., 1973.
26. Корганян Н. К., К вопросу о насильственном переселения армян шахом Аббасом I, Պատմա-բանասիրական հանդես, 1983, н. 2-3.
27. Патканов К., Драгоценные камни, их названия и свойство по понятиям армян в XVII в., СПб, 1873.
28. Blow D., Shah Abbas:The Ruggles King Who Became an Iranian Legend, London - New York, 2009.
29. Newman A., Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London-New York, 2009.
30. Herding E., The Deportation of the Armenians in 1604-1605 and Erop's Myth of Shah' Abbas I,"Pembroke Papers", 1990, N 1.
31. The History of Vardapet Arak'el of Tabriz, Introduction and Annotated Translation from the critical text by George A. Bournoutian, Vol. 1-2, Costa Mesa: Mazda, 2005-2006.

ANALYSIS AND HISTORIOGRAPHIC SIGNIFICANCE OF THE WORK "HISTORY" BY ARAKEL DAVRIZHETSI

GOZEYAN VAHE
1st-year MA student, Department of History
e-mail: vahegozeyan@mail.ru
Academic Supervisor: Hayrapetyan Kanakara
Applicant of the Institute of History of NAS, RA
GSU Lecturer

The article studies the 17th century Historiography in Arakel Davrizhetsi's work "History" covering the events in the political, cultural, socio-economic history, the

Armenian colonies of Armenia and Transcaucasia in 1602-1662, especially the status of Armenia during the reign of Shah Abbas I, the period of Great Armenian migration, the wars between Turkey and Iran, and the catastrophes the Armenian people suffered. Davrizheci's special role in Armenian historiography is shown, his credible critical attitude towards his own work is verified.

Key words: *Arakel Davrizhetsi, historiography, the Great Migration, Shah Abbas, Iran.*

АНАЛИЗ И ИСТОРИОГРАФИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТРУДА “ИСТОРИЯ” АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ

ГОЗЕЯН ВАГЕ
Студент 1-ого курса магистратуры истории
факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: vahegozeyan@mail.ru
Научный руководитель: Айрапетян Канакара
Соискатель института НАН РА,
преподаватель, ассистент ГГУ

В статье исследуется труд "История" историка XVII в. Аракела Даврижеци, охватывающий события политической, культурной, социально-экономической жизни Армении, Закавказья, армянских колоний 1602-1662гг., особенно статус Армении во время правления шаха Аббаса I, в период его великого переселения в Армению, войн между Турцией и Ираном и катастроф, которые пережил армянский народ в связи с этими событиями.В статье показана особая роль Даврижечи в армянской историографии, его авторитетное и критическое отношение к собственному творчеству.

Ключевые слова: *Аракел Даврижеци, историография, Большое переселение, Шах Аббас, Иран.*

ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ «ՆՈՐ ՏԵՏՐԱԿ, ՈՐ ԿՈՉԻ ՅՈՐԴՈՐԱԿ»-Ը ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԼԱԲԼԱՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Ազգային անվտանգություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող
էլփոստ՝ vardanbest979707@gmail.com
Գիտական ղեկավար՝ Ենգոյան Աշոտ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում ամփոփ անդրադարձ է կատարված լուսավորիչ Մ. Բաղրամյանի գործունեությանը, նրա հեղինակած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» մեծարժեք աշխատությանը: Մ. Բաղրամյանի գաղափարները ոչ միայն տարածվել են՝ մեծ ազդեցություն թողնելով 19–րդ հայ հասարակական առաջադիմական մտքի զարգացման վրա, այլև հասել են մեր օրեր՝ պահպանելով արդիականությունը և կարևորությունը:

Աշխատանքում ներկայացված են նաև տարբեր նշանավոր մարդկանց դիտարկումները «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ»-ի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվել է այն գործիքակազմը՝ հրապարակախոսական հնարանքները, որոնցով Մ.Բաղրամյանը ցանկանում էր հասնել իր նպատակին:

Բանալի բառեր՝ *Մովսես Բաղրամյան, Մադրաս, մատենագրություն, ազգային ծրագիր, գաղափար, բուրժուա-դեմոկրատական կարգ, ազգային-ազատագրական շարժում, ռազմավարություն, քաղաքական հնարք:*

18-րդ դարի հայ քաղաքագիտական մտքի հանճարներն են Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը: Նրանք այն իսկական նվիրյալներն են, որոնք հայ ժողովրդին վերադարձրին 400-ամյա խավարի ընդերքում թաղված, մոռացված արժեքները, գծեցին ազգի զարգացման, առաջընթացի ուղիները: Իսրայել Օրուց մեզ են հասել նրա զեկույցները, Հովսեփ Էմինից՝ հուշերը, Շահամիր Շահամիրյանից՝ «Որոգայթ փառաց»-ը, «Տետրակ, որ կոչի նշաւակ»-ը, Մովսես Բաղրամյանից՝ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը: Հայ մշակույթի պատմության ոչ

մի հանգրվանում այս գործիչների թողած վերոնշյալ աշխատությունները այնպես չեն ներդաշնակվում ու միահյուսվում, ինչպես քաղաքագիտական մտքի ասպարեզում: Այս փաստով էլ նրանք ներկայանում են որպես հայ քաղաքական մտքի ինքնատիպ ու հզոր դպրոցի հիմնադիր-գործիչներ:

Մովսես Բաղրամյանի վերաբերյալ, ցավոք, պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Հայտնի չեն ո՛չ ծննդյան, ո՛չ մահվան թվականները: Նրան լայն ճանաչում է բերել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունը (լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1772/1773թթ.), որն իր բովանդակությամբ և գաղափարներով մի նոր և բացառիկ երևույթ է հայ մատենագրության պատմության մեջ: Այն բաղկացած է ութ գլխից: Մ. Բաղրամյանը բարձրացնում է հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի շարք հարցեր, կոչ է անում սթափվել միջնադարյան թմրությունից, դիմել համազգային համախմբվածության, ապստամբել թուրք-պարսկական բռնակալության դեմ, թոթափել դրա ստրկացնող լուծը, ստեղծել հայկական ինքնուրույն պետություն՝ բուրժուա-դեմոկրատական կարգով: Նա կարծում էր՝ լուսավորության միջոցով կարելի է մերժել հին կարգերը և ստեղծել նորը: Հայկական պետականության անկման և ժողովրդի ծանր կացության մեջ ընկնելու պատճառները վերլուծելիս Բաղրամյանն այն միտքն է արտահայտում, որ ստեղծված կացությունը վերուստ առաքված պատիժ չէ. Աստված այստեղ գործ չունի: Ոչ մի ժողովուրդ առանց զոհերի ու պայքարի, միայն հրաշքով Աստծու ողորմությամբ չի ազատագրվել ուրիշի տիրապետությունից և ոչ մի ժողովուրդ էլ իր ազատության համար մղած պատերազմներում չի սպառվել, չի ոչնչացել (Հայ մշակույթի... 1976թ., 541):

Նշենք, որ Մովսես Բաղրամյանի այս աշխատանքը հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու կողմից բացասաբար է ընդունվել: Բանն այն էր, որ դեռևս Մադրասի տպարանի բացվելու ժամանակ Սիմեոն Երևանցին նախազգուշացրել էր, որ գրքերը տպագրելուց առաջ իրեն տեղյակ պահեն, որպեսզի ոչ մի գիրք չհրատարակվի առանց իր իմացության, քանզի այն կարող էր առաջացնել թուրքերի, ինչպես նաև պարսիկների անսահման զայրույթը, որը կհանգեցներ նոր արյունալի կոտորածների: Իրողությունն այն էր, որ եթե Հնդկաստանում և Ռուսաստանում պարսկական ու թուրքական իշխանությունների դեմ կարելի էր ցանկացած կոչ հրապարակել ու տարածել, ապա Հայաստանում այդ նույնը չէր կարելի անել, քանի որ թուրքական ու պարսկական գործակալները վխտում էին ամենուր:

Բավական է, որ նրանց հայտնի դառնար, թե հայկական շրջաններում ապստամբության կոչեր էին արվում, կասկած լինել չէր կարող, որ կձեռնարկվեին նորանոր հալածանքներ: Սիմեոն Երևանցին, իմանալով Մադրասում բացված տպարանի մասին, իսկույն պատվիրում է զգուշացնել, որ առանց իր հավանության ոչ մի գիրք լույս չընծայվի, որպեսզի գիրքը տեղի չտա «ժպտման թշնամեաց»: Եվ ահա, հակառակ այս զգուշացումների, լույս է տեսնում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը, որը կաթողիկոսին ուղարկվելուց հետո առաջացնում է անսահման զայրույթ: Սիմեոն Երևանցին անգամ պահանջում է հրկիզել այդ գրքի բոլոր օրինակները, ցրել Մադրասի հայկական տպարանը, իսկ գրքի հեղինակին՝ որպես «դիվահար» խելացնորի, բանադրել ու հալածել: Սպասելի է, որ կաթողիկոսը պիտի սաստիկ զայրանար, որովհետև ինչպես նրա հիշատակարան կազմողն է ասում, նրա կանխագուշակած «վտանգավոր բանս այժմ գլուխ եկավ»:

Հետաքրքրական է, որ միչև 1908թ. (ոտիղ 135 տարի) առանց որևէ կասկածի և վերապահության «Նոր տետրակ,որ կոչի յորդորակ» գրքի հեղինակ է համարվել Հակոբ Շահամիրյանը: 1908թ. սկսած, երբ լույս տեսավ Սիմեոն Երևանցու հիշատակարանը, առաջ քաշվեց մի կարծիք, որը գնալով տարածվեց և դարձավ մինչև մեր օրերը իշխող միակ կարծիքը: Այն հիմնավորվեց «Հիշատակարանի» հետևյալ վկայությամբ. «Զգիրքն այն խելացնոր Մովսէսն էր շարադրեալ», որի մասին առաջին կարծիքը հայտնեց հրատարակողը՝ Գյուտ Աղայանցը: Ստորև բերենք հաստատող մի քանի փաստարկներ՝ օգտվելով Թ. Ավդալբեգյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» աշխատությունից: Այսպես՝

«Հորդորակի» վրա պարզ գրված է, որ սրա հեղինակը Մովսես Բաղրամյանն է («աշխատութեամբ Մովսեսի Բաղրամեան»), իսկ Հակոբ Շահամիրյանը եղել է հրատարակիրչը («տպագրեցեալ ջանիւք և ծախիւք Յակոբայ Շահամիրեան»):

«Հորդորակն» ու «Որոգայթը» միևնույն գրչի արգասիք չեն. «Հորդորակի» լեզուն տանելի գրաբար է, իսկ «Որոգայթինը»՝ մի անգրագետ լեզու՝ գրաբարի լոկ կերպարանքով: Բացի սրանից՝ «Հորդորակի» հեղինակը լավ ծանոթ է ոչ միայն հայոց պատմությանը, այլև Հայաստանի աշխարհագրությանը, այնինչ նույն բանն ամենևին չի կարելի ասել «Որոգայթը» շարադրողի մասին:

Եթե «Հորդորակն» ու «Որոգայթը» նույն հեղինակի գրական արտադրանքը չեն, և «Հորդորակը» Բաղրամյանի գրածն է, ապա պարզ է, որ «Որոգայթը» նրան վերագրել չի կարելի (Ավդալբեգյան 1969թ., 258):

Բազմաթիվ նշանավոր այրեր են անդրադարձել Մ. Բաղրամյանին, նրա հեղինակած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ին: Կարևորում ենք Լեոյի, Ս. Պողոսյանի, Մ. Թելունցի, Ա. Առաքելյանի, Գ. Գրիգորյանի ուսումնասիրությունները: Լեոն Բաղրամյանին ներկայացրել է որպես հայ քաղաքական հրապարակախոսության տաղանդավոր հիմնադրի: Նա գրել է. «Մովսես Բաղրամյանը գուցե առաջին հայն է Մովսես Խորենացուց հետո, որ վերցնում է հայությանն իբրև մի ազգություն և քննադատում է այդ ազգության իրական դրությունը, ցույց է տալիս նրա պակասությունները, մտրակում նրա տգիտությունը, որ անկում է բերել ընդհանուրին: Նա պահանջում է, որ հինավուրց ստրուկը սրբի իր կեղտերը, ոտքի կանգնի իբրև վերածնվող մի մարմին և ազատություն, կատարյալ անկախություն ձեռք բերի, քանզի առանց քաղաքական անկախության, չկա փրկություն, չկա ազգային պատիվ, առաջադիմություն և երջանկություն» (Լեո, 1946թ., 527): Եղիազար Լազարյանը նշում է, որ Հայաստանի ազատագրության գործում արցախցիների վրա հենվելու համար նախ պետք է կրթել ու լուսավորել նրանց, ինչպես կարևորում է հանճարամիտ Մովսեսը: Հավելենք, որ Լազարյաններին և Ռուսաստանի հայ առաջավոր գործիչներին այնքան էր դուր եկել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը, որ նրա հինգերորդ և վեցերորդ գլուխները, որոնք ընդգրկում են հայոց պետականության պատմությունը և Հայաստանի պատմական աշխարհագրության հատվածները, թարգմանել են տվել ռուսերեն և հրատարակել: Հ. Մանուչարյանը «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության» աշխատության մեջ նշում է, որ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ում շոշափվում են մարդու, քաղաքական գործչի, պետության, մայր հայրենիքի, ազգային ազատագրության ուղիների որոնման, ազգային ներուժի բացահայտման, ազգային միասնության և քաղաքական մտքի պատմության համար կարևոր հարցեր: Գ. Մելքումյանն առանձին քննության է առնել Մ. Բաղրամյանի մարդաբանական և պատմափիլիսոփայական հայացքները և կատարել այն կարևոր եզրակացությունը, որ ազգային ազատագրական պայքարի արժեքները միաժամանակ գերակայող դեր են զբաղեցրել ժամանակաշրջանի մարդկանց նպատակների համակարգում (Դավթյան, Մանուչարյան, 2015թ., 13): Միով բանիվ, բոլոր ուսումնասիրողները բարձր են գնահատում աշխատանքը, նշում են, որ Բաղրամյանի «Նոր

տետրակ, որ կոչի յորդորակ»-ը քաղաքական հրապարակախոսական ժանրի առաջին ստեղծագործությունն է հայ իրականության մեջ:

Հետևելով Բաղրամյանի մտքի ընթացքին՝ փորձել ենք ի հայտ բերել այն հիմնական գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական հնարանքները, այսպես ասած՝ գործիքակազմը, որոնցով նա ցանկանում էր հասնել իր նպատակին: Կարևորվում են նրա արծարծած այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են հայոց պետականության պատմության համառոտ շարադրանքը, հայ երիտասարդությանը, հայ ժողովրդին ներկայացնելը որպես պետականակիր ու տիտղոսակիր ազգ: Առաջնային է նաև հայրենիքի գոյի գիտակցության անհրաժեշտությունը, անմնացորդ նվիրումը: Բաղրամյանը ոչ միայն վերարտադրում է իրականությունը, այլև բացահայտում այն, կայացնում համարձակ վճիռներ, դիմում իրականության գեղարվեստական արտացոլման միջոցներին, ստեղծում պատկերավոր երևույթներ, թափանցում դրանց բովանդակության խորքերը, ստեղծում գիտականորեն մշակված գաղափարախոսություն (Դավթյան, Մանուչարյան, 2015թ., 73): Պարզվում է, որ Բաղրամյանը առավելապես կիրառել է հրապարակախոսության մեջ շատ տարածված պոստուլացման մեթոդը: Պոստուլատ կանխադրույթների, աստվածաշնչյան անառարկելի ճշմարտությունների, եվրոպական լուսավորիչների հիմնավորած դրույթների միջոցով Բաղրամյանը համոզում ու համախմբում է ունկնդիրներին իր առաջադրած խնդիրների շուրջ: Իրականացնելով տեղեկատվական- ճանաչողական գործառույթ՝ Բաղրամյան-հրապարակախոսը հանդես է գալիս որպես հետազոտող, որը օգտվում է գիտական մեթոդներից և ստեղծում է գիտական գիտելիք արդիականության և իր հետապնդած խնդիրների մասին, որով նրա ստեղծագործությունը սկզբունքորեն գիտությունից չի տարբերվում (Դավթյան, Մանուչարյան, 2015թ., 71): Ավելացնենք, որ ունկնդիրներին համոզելուց առաջ Բաղրամյանն ինքն էր համոզված իր առաջադրած փաստերի, իրողությունների, գաղափարների ճշմարտության մեջ: Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը նաև հայոց ազգային գաղափարախոսության առաջին մանիֆեստն է, որում մշակվում են ազգային ինքնության, ինքնահամախմբման, ինքնաազատագրման գաղափարներ: Բաղրամյանը գիտակցում էր, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումը ծավալվելու է ոչ թե մեկուսի՝ լոկալ միջավայրում, այլ այնպիսի բարդ տարածաշրջանում, որտեղ բախվում էին տերությունների, քաղաքակրթությունների, քաղաքական խմբավորումների շահերը: Շահագրգիռ տերությունները բացահայտ կամ քողարկված ձգտում էին, հայ ժո-

ղովրդի շահերն անտեսելով, իրադարձությունների ընթացքը զարգացնել իրենց օգտին: Ահա այս ըմբռնումով է Բաղրամյանը մշակում ազգային-ազատագրական շարժման կուռ տեսություն, մարտավարություն ու ռազմավարություն:

Այսպիսով, ապրելով միջնադարի ու նոր դարի սահմանագլխին՝ Բաղրամյանը դարձավ նախընթաց դարաշրջանների հայոց մոռացված արժեքների հայտնագործողն ու հայ ժողովրդի սեփականությունը դարձնողը, ազգին համախմբողն ու ազգի ապագան ուղենշողը, նախորդ դարերն անջրպետող ու նաև այն հաջորդ դարերին կապող հզոր կամուրջը, մեծ քաղաքացին ու մեծ քաղաքագետը (Դավթյան, Մանուչարյան, 2015թ., 6): Նրա «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը հայ քաղաքագիտական մտքի և քաղաքական հրապարակախոսության կոթողային հուշարձաններից է: Աշխատության մեջ արծարծվում են ժամանակակից քաղաքագիտության համար կարևոր այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հայոց ազգային-ազատագրական շարժման տեսությունը, պայքարի մարտավարությունն ու ռազմավարությունը, միջնադարյան ամբոխից քաղաքական ազգի կերտումը, ազգային գաղափարախոսությունը և այլն: Սա մի կոչ և ծրագիր էր հայկական ազատագրական շարժումը կազմակերպելու, Հայաստանն ու հայ ժողովրդին թուրքական ու պարսկական տիրապետությունից ազատագրելու համար: Կարևորելով ազգի մարդկային ու նյութական ուժերի համախմբան խնդիրը՝ Մ. Բաղրամյանը խորապես ըմբռնում է կազմակերպված փոքրամասնության անկազմակերպված մեծամասնությանը տեր լինելու փաստը: Հեղինակի մտքերը, գաղափարները նպատակ ունեն միայն ու միայն ժողովրդին ինքնավստահություն ներշնչելու, ազատագրական պայքարի մղելու: Դրանք առայսօր արդիական են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., Մովսես Բաղրամյանի բանադրանքի վերացման մասին, Երևան, 1977թ.:
2. Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969թ.:
3. Դավթյան Մ., Մանուչարյան Հ., Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբանվորումը, Երևան, 2015թ.:
4. Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, Երևան, 1946թ.:
5. Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երևան, 1976թ.:

6. Հովյաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959թ.:

MOVSES BAGHRAMYAN'S "NEW NOTEBOOK CALLING YORDORAK" AS A PROGRAM FOR LIBERATION OF ARMENIA AND ESTABLISHMENT OF AN INDEPENDENT ARMENIAN STATE

LABLAJYAN VARDAN
YSU, Faculty of International Relations, MA Student
e-mail: vardanbest979707@gmail.com
Academic Supervisor: Engoyan Ashot
Doctor of Historical Sciences, Professor

In this article, we have briefly referred to the enlightener M. Baghramyan, his activity, as well as the valuable work "New notebook called Yordorak". M. Baghramyan's ideas are not only spread, having a great influence on the development of the progressive Armenian public thought of the 19th century, but also have reached to our days, preserving modernity and power.

In this article, we have presented the observations of various famous authors on the "New notebook called Yordorak", as well as have revealed the toolkit - the publicist tricks with which he wanted to achieve his goal.

Key words: *Movses Baghramyan, Madras, bibliography, program, idea, bourgeois-democratic order, national liberation movement, strategy, artifice.*

«НОВАЯ КНИГА, НАЗЫВАЕМАЯ УВЕЩЕВАНИЕМ» МОВСЕСА БАГРАМЯНА КАК ПРОГРАММА ОСВОБОЖДЕНИЯ АРМЕНИИ И СОЗДАНИЯ НЕЗАВИСИМОГО АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА

ЛАБЛАДЖЯН ВАРДАН
ЕГУ, Факультет международных отношений, магистр
электронная почта: vardanbest979707@gmail.com
Научный руководитель: Енгоян Ашот
Доктор исторических наук, профессор

В этой статье нами подытожена деятельность просветителя М. Баграмяна, а также рассмотрен его ценный труд «Новая книга, называемая увещеванием».

Идеи Баграмяна не только распространились, оказав большое влияние на развитие передовой армянской общественной мысли XIX века, но и дошли до наших дней, сохранив современность и мощь.

В работе мы представили наблюдения разных известных авторов над "Новая тетрадь под названием Иордорак", а также открыли для себя инструментарий - публицистические уловки, с помощью которых он хотел достичь своей цели.

Ключевые слова: *Мовсес Баграмян, Мадрас, библиография, программа, идея, буржуазно- демократический порядок, национально-освободительное движение, стратегия, фокус.*

3.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆԱՀԻՏ
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժնի
4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ anahitabrahamyan2000@mail.ru
ՏԿԱՉԵՆԿՈ ԱՆԺԵԼԱ
ՀՌՀ ասպիրանտ
էլփոստ՝ tkanjela@gmail.com
Գիտական ղեկավար՝ Ամիրխանյան Սամվել
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Օտարերկրյա ուղղակի ներդրումները մեծ ազդեցություն ունեն զարգացող պետությունների տնտեսությունների վրա, ուստի դրանց ներգրավումը կենսական նշանակություն ունի ՀՀ-ի համար: Հոդվածում քննվել է օտարերկրյա ներդրումների կարևորությունը, ներկայացվել են միջազգային կառույցների հրապարակած ՕՈՒՆ-ի ցուցանիշները և կանխատեսումները, կատարվել է ՕՈՒՆ-ի վերլուծություն ոլորտային և ներդրում կատարող երկրների կտրվածքով:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ը վերջին տարիներին զգալիորեն նվազել է, իսկ կատարված օտարերկյա ներդրումների արդյունքում ՀՆԱ-ի կառուցվածքում լուրջ փոփոխություններ չեն նկատվել: Կատարված կանխատեսումները ցույց են տալիս, որ սույն թվականից օտարերկրյա ներդրումների ծավալները կսկսեն աճել:


Վերլուծությունների և ուսումնասիրությունների ընթացքում հանգել են այն եզրակացության, որ օտարերկրյա ներդրողներին տրված արտոնությունների արդյունավետության գնահատման իրականացումը մշտադիտարկումների միջոցով հնարավորություն կընձեռի բացահայտելու հնարավոր թերությունները և բարելավելու դրանք: Ներդրումներ ներգրավելու համատեքստում կարևոր է նաև առանձին ոլորտներում համապարփակ քաղաքականության և ռազմավարության

արդիականացումը հստակ գործողությունների մշակման և դրանց պատշաճ իրականացման միջոցով:

Բանալի բառեր՝ *օտարերկրյա ուղղակի ներդրումներ, բարենպաստ ներդրումային միջավայր, ՕՈՒՆ-ի ներգրավման տեսլական:*


Ներդրումները կապիտալի երկարաժամկետ ներգարվումն են ձեռնարկատիրական կամ այլ տեսակի գործունեության մեջ եկամուտ (շահույթ) ստանալու նպատակով: Դրանք կարևոր դեր են խաղում ինչպես տնտեսության հետագա զարգացման, այնպես էլ երկրում սոցիալական և անվտանգության խնդիրների լուծման գործում: Ներդրումները, հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետ՝ ՕՈՒՆ) համարվում են տնտեսական կայուն աճի շարժիչ ուժ, քանի որ դրանք ավելի արագ տեմպերով են աճում, քան ՀՆԱ-ն [4]: Հարկ է հավելել, որ, ի տարբերություն զարգացած պետությունների, զարգացող պետությունների տնտեսությունների, այդ թվում ՀՀ-ի վրա ՕՈՒՆ-ը ավելի մեծ ազդեցություն է ունենում՝ երբեմն հանգեցնելով կախվածության. այն արտաքին կապիտալի կենսական աղբյուր է զարգացող երկրների մեծ մասի համար[5]: Հետևաբար ներկայումս առավել քան երբևէ ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

Համաձայն ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի կողմից (UNCTAD, United Nations Conference on Trade and Development) 2021 թվականի հունվարին պաշտոնապես հրապարակված «Համաշխարհային ներդրումների միտումների մշտադիտարկում» (Global Investment Trend Monitor) զեկույցի՝ 2020 թվականին ՕՈՒՆ-ը անկում է ապրել 42%-ով: Նման ցածր ցուցանիշ վերջին անգամ նկատվել է 1990-ական թվականներին, 2020 թվականին ՕՈՒՆ-ը ավելի քան 30%-ով ցածր է 2008-2009 թվականների՝ Համաշխարհային ֆինանսական ճգնաժամին հաջորդած ներդրումների մակարդակից[2]: Ընդ որում, ինչպես երևում է ներքոհիշյալ գծապատկերից, համաշխարհային ՕՈՒՆ-ի 72%-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին (որոնց շարքում է դասվում նաև ՀՀ-ն), և հոսքերը դեպի այդ երկրների տնտեսություններ նվազել են 12%-ով (ընդհանրական ցուցանիշ է):



Գծապատկեր 1. Համաշխարհային ՕՈՒՆ-ի ներհոսքն ըստ տնտեսությունների խմբերի 2007-2020 թվականների համար (միլիարդ դոլարներով և տոկոսներով):


Դիտարկելով ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների շարժընթացը 2014-2019 թվականներին (տե՛ս գծապատկեր 2)՝ կարող ենք փաստել, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները 2017 թվականից հետո զգալիորեն նվազել են՝ պայմանավորված և՛ քաղաքական, և՛ տնտեսական գործոններով: Նշենք, որ բացարձակ փոփոխության տեսանկյունից առավելագույն մեծությունն արձանագրվել է Ջերսիից եկող ներդրումների շրջանակում՝ կազմելով 20 640.0 մլն դրամ: Ջերսին ներդրումներ է կատարում հանքագործական արդյունաբերության հարակից ոլորտում, սակայն ՕՈՒՆ-ի զուտ հոսք չի գրանցվել, որը պայմանավորված է Ամուլսարի հանքի շահագործման հետ կապված խնդիրներով[1]:



Գծապատկեր 2. ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների շարժընթացը 2014-2019 թվականներին (մլն դրամ):

Իսկ ահա 2020թ. հունիսին ՕՈՒՆ-ը կազմել է 9269.7 մլն. դրամ[6]՝ 2019-ի նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով մոտավորապես երկու անգամ, որն էլ պայմանավորված է թագավարակի ազդեցությամբ:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ի 2018-2019 թվականների ընթացքում ոլորտային կտրվածքով արված վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ-ի ծավալներում ամենամեծ տեսակարար կշիռ ունեն էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտները: Ներդրումները ավելացել են հիմնային մետաղների արտադրության, հեռահաղորդակցության, օդային տրանսպորտի գործունեության, իսկ նվազել՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում ու անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտներում: Ներդրում չի իրականացվել հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության ոլորտներում: Ինչ վերաբերում է 2020 թվականի հունվար-հունիս ամիսներին, այդ ընթացքում օտարերկրյա ներդրումները զգալիորեն նվազել են գրեթե բոլոր ոլորտներում կամ իրականացված ներդրումները դուրս են բերվել երկրից[6]:




Գծապատկեր 3. ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալներում (մլն դրամ) մեծ տեսակարար կշիռ ունեցող ոլորտներ:

Ընդհանուր առմամբ կատարված օտարերկրյա ներդրումների արդյունքում 2018-2019 թվականների ընթացքում և 2020 թվականի հունվար-հունիս ամիսներին ՀՆԱ-ի կառուցվածքում լուրջ փոփոխություններ չեն նկատվում[6]:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ծավալներում (ներառյալ ՕՈՒՆ, պորտֆելային և այլ ներդրումները) ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրները 2018-2019 թվականներին Ռուսաստանի Դաշնությունը, Գերմանիան,

Իտալիան, Միացյալ Թագավորությունը, Լիբանանը, Ջերսին, Շվեյցարիան և Լյուքսեմբուրգն են (տե՛ս գծապատկեր 4): Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ 2020 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում վերոնշյալ երկրները շարունակել են մեծ տեսակարար կշիռ ունենալ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ծավալներում, սակայն բացարձակ փոփոխության տեսանկյունից նվազել են Ռուսաստանի Դաշնության, Գերմանիայի, Իտալիայի օտարերկրյա ներդրումների ծավալները[6]: Դա մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ծավալներում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրները աշխարհում համավարակից ամենաշատ տուժած երկրների շարքում էին գտնվում:



Գծապատկեր 4. ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների ծավալներում (մլն դրամ) 2014-2019 թվականներին մեծ տեսակարար կշիռ ունեցող երկրներ:

Հարկ է ընդգծել, որ այդ երկրների տնտեսությունների համար իրականացված կանխատեսումները ենթադրում են տնտեսական աճ՝ Ռուսաստանի Դաշնությունում և Իտալիայում՝ 3%, Գերմանիայում՝ 3.5%, Մեծ Բրիտանիայում՝ 4.5%[3], ուստի կարող ենք ենթադրել, որ սույն թվականից օտարերկրյա ներդրումների ծավալները կսկսեն աճել: Իհարկե, ուսումնասիրությունները վկայում են՝ ինչպես 2008-2009 թվականների Համաշխարհային ֆի-

նանսական ճգնաժամից հետո, այնպես էլ ներկա և դեռևս շարունակվող ճգնաժամից հետո, առկա ռազմաքաղաքական դրության պայմաններում օտարերկրյա ներդրումների ծավալները նախկին մակարդակին կարող են հասնել երկարաժամկետ ժամանակահատվածում:

Նոր ներդրումների ներգրավման կամ դրանց ծավալների ավելացման համատեքստում որոշիչ դեր ունեն երկրում վերոհիշյալի տեսլականի և բարենպաստ ներդրումային միջավայրի առկայությունը:

Որպես կանոն, աշխարհում ներդրողների համար բարենպաստ ներդրումային միջավայրի հիմք են հանդիսանում ներդրումային, առևտրային, մրցակցային, հարկային քաղաքականությունները, կորպորատիվ կառավարումը, պատասխանատու գործարար վարքագիծը, մարդկային ռեսուրսների զարգացումը, ենթակառուցվածքների և ֆինանսական ոլորտի զարգացումը և հանրային կառավարումը[5]: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները կարգավորում են «Օտարերկրյա ներդրումների մասին», «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքներով, դրա հետ կապված ՀՀ կառավարության որոշումներով, տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթներով, միջազգային պայմանագրերով և այլ միջազգային մակարդակով երկկողմանի ներդրումային համաձայնագրերով (ՀՀ-ն նման համաձայնագրեր ունի 43 երկրներիհետ): Համաձայն «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրյա ներդրումների և դրանց հետ կապված իրավական ռեժիմը ՀՀ-ում չի կարող նվազ բարենպաստ լինել, քան ՀՀ քաղաքացիների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գույքի, գույքային իրավունքների և ներդրման գործունեության ռեժիմը: Ի հավելում սրա, նշենք, որ օտարերկրյա ներդրողների նկատմամբ ամրագրված են ազգային և առավել բարենպաստության ռեժիմներ, սահմանված են մի շարք արտոնություններ: Նման արտոնությունները անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման են բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման համար, քանի որ այժմ ՀՀ-ում փոքր ներքին շուկան, ազգային արժույթի արժեզրկման տեմպերը, փոխարժեքային տատանումները, տնտեսական և հիմնական հաղորդակցման ուղիների շրջափակման մեջ լինելը (դա ազդում է ՀՀ-ում արտադրված ապրանքների մրցունակության վրա), քաղաքական և ռազմաքաղաքական անկայուն վիճակը լուրջ խոչընդոտներ են ՕՈՒՆ-ների ներգրավման համար: Այս համատեքստում պետք է նշել, որ օտարերկրյա ներդրողներին տրված արտոնությունների

արդյունավետության գնահատում չի իրականացվել, ուստի մշտադիտարկումների միջոցով արտոնությունների արդյունավետության գնահատումը հնարավորություն կընձեռի դիտարկելու հնարավոր թերությունները և բարելավելու դրանք:

Բացի դրանից՝ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած ՀՀ-ում ներդրումային քաղաքականության հայեցակարգի առկայությանը՝ լուրջ խնդիր է ՕՈՒՆ-ի ներգրավման տեսլականի բացակայությունը: Ներդրումներ ներգրավելու տեսանկյունից լուրջ խոչընդոտ է նաև առանձին ոլորտներում համապարփակ քաղաքականության և ռազմավարությունների արդիականացման անհրաժեշտությունը, հետևաբար անհրաժեշտ է մշակել հստակ գործողություններ այդ ուղղությամբ և ապահովել դրանց պատշաճ իրականացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ԼՈՒՅՍ» հիմնադրամ, Ներդրումների աճին ուղղված ՀՀ կառավարության գործունեության ուսումնսիրություն (2018-2019թթ.ժամանակահատված), 2020/ հասանելի է՝ https://shorturl.at/dvBZ1
2. ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով, «Համաշխարհային ներդրումների միտումերի մշտադիտարկում» (Global Investment Trend Monitor) զեկույց, 2021/հասանելի է՝ https://unctad.org/system/files/official-document/diaeiainf2021d1_en.pdf
3. International Monetary Fund, World economic outlook update, January 2021/ հասանելիէ՝ https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2021/01/26/2021-world-economic-outlook-update
4. Melnyk L., Kubatko O., Pysarenko S., (2014). The impact of foreign direct investment on economic growth: case of post communism transition economies. Problems and Perspectives in Management, 12(1)/ հասանելի է՝ https://businessperspectives.org/images/pdf/applications/publishing/templates/article/assets/5575/PPM_2014_1_Melnyk.pdf
5. OECD (2014), “Creating an environment for investment and sustainable development”, in Development Cooperation Report 2014: Mobilising Resources for Sustainable Development, OECD Publishing, Paris./հասանելի է՝https://doi.org/10.1787/dcr-2014-16-en
6. https://www.armstat.am – ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ:

INVESTMENT ACTIVITY TENDENCIES IN THE REPUBLIC OF ARMENIA

ABRAHAMYAN ANAHIT
4th-year student of the Department of Accounting and Taxation,
Faculty of Economics, GSU
e-mail: anahitabrahamyan2000@mail.ru
TKACHENKO ANJELA
PhD student, RAU
e-mail: tkanjela@gmail.com
Academic Supervisor: Amirkhanyan Samvel
PhD in Economics, Associate Professor

Foreign direct investment has a great impact on the economies of developing countries, so their involvement is vital for Armenia. The article discusses the potential of foreign investments, presents the FDI indicators and forecasts published by international organizations; analyzes of the FDI from the point of view of investing countries are presented. FDI in Armenia has significantly decreased in recent years, and as a result of foreign investments made, no significant changes have been observed in the structure of GDP. Forecasts show that foreign investment will increase from this year on.

Through analysis and research, we have come to the conclusion that the evaluation of the effectiveness of the benefits granted to foreign investors through monitoring will provide an opportunity to identify possible drawbacks and improve them.

In the context of attracting investments, it is also important to modernize comprehensive policies and strategies in certain fields through the development of precise actions and their proper implementation.

Key words: *foreign direct investment, favorable investment environment, vision of attracting foreign direct investment.*

ТЕНДЕНЦИИ ИНВЕСТИЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АБРААМЯН АНАИТ
Студентка 4 курса отделения бухгалтерского учета и налогообложения экономического факультета ГГУ,
электронная почта: anahitabrahamyan2000@mail.ru
ТКАЧЕНКО АНЖЕЛА
Аспирант РАУ
электронная почта: tkanjela@gmail.com
Научный руководитель: Амирханян Самвел
Кандидат экономических наук, доцент

Прямые иностранные инвестиции (ПИИ) имеют большое влияние на экономику развивающихся стран, поэтому их привлечение жизненно необходимо для Армении. В статье обсуждается значимость иностранных инвестиций, представлены прогнозные показатели ПИИ, публикуемые международными организациями, проведен анализ ПИИ в отраслевом разрезе с точки зрения стран-инвесторов. За последние годы значительно сократился приток ПИИ в Армению, в результате чего в структуре ВВП значительных изменений не наблюдаются. Нынешние прогнозы показывают, что с этого года объем иностранных инвестиций начнет расти.

В результате анализа и исследований мы пришли к выводу, что осуществление оценки эффективности льгот, предоставляемых иностранным инвесторам, посредством мониторинга даст возможность выявить возможные недостатки и устранить их. В контексте привлечения инвестиций также возможна модернизация комплексной политики и стратегии в определенных сферах путем разработки четких действий и их надлежащей реализации.

Ключевые слова: *прямые иностранные инвестиции, благоприятная инвестиционная среда, видение привлечения прямых иностранных инвестиций.*

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ (COVID-19) ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԼԱ
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Ֆինանսներ» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ allasargsyan@bk.ru
Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Գայանե
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2020 թվականի հունվարից ի վեր աշխարհին պատուհասած համավարակը հանգեցրել է մի շարք բացասական հետևանքների բոլոր երկրներում և բոլոր ոլորտներում: Այս համատեքստում առավել շատ է կարևորվում բանկային համակարգի արձագանքը և ձեռնարկած միջոցառումների վերլուծությունը, քանի որ վերջինս հանդիսանում է երկրի ֆինանսական կայունության հիմնական գրավականը և տնտեսության մյուս ճյուղերի ֆինանսավորման աղբյուրը: ՀՀ առևտրային բանկերը ևս, ի դեմս կենտրոնական բանկի, հարկադրաբար փոխեցին իրենց գործունեության ռազմավարությունը և տարբեր միջոցառումների տեսքով աջակցեցին ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ առկա պարտավորությունների հետագա պատշաճ կատարման նախապայմանների ստեղծմանը:


Բանալի բառեր՝ *ֆինանսական կայունություն, վարկային արձակուրդ, վերանայում-երկարաձգում-վերակառուցում, պարտավորություններ:*

Բանկային համակարգը՝ որպես ֆինանսական ինստիտուտների ամբողջություն, ունի կարևորագույն դեր ՀՀ տնտեսության կայունության և առաջընթացի ապահովման տեսանկյունից: Բանկերի դերակատարումը ՀՀ տնտեսության ամբողջության մեջ դրսևորվում է նաև պետական բյուջե իրականացված հարկային վճարումների տեսքով: Մասնավորապես 2020 թվականի առաջին կիսամյակում բոլոր բանկերը միասին պետական բյուջե են վճարել ավելի քան 26 մլրդ 741 մլն դրամ հարկ: Նշենք նաև, որ, ըստ հրապարակված վիճակագրության, 2020 թվականի տվյալներով առևտրային 17

բանկերից 13-ը ներկայացված են 1000 խոշոր հարկատուների առաջին հայրույրակում[1]:

Ինչ վերաբերում է տնտեսական ճգնաժամերին, բնականաբար վերջիններս ունենում են ցայտուն ազդեցություն բանկային համակարգի վրա, քանի որ այն հանդիսանում է տնտեսության ֆինանսական կայունության գլխավոր երաշխիքներից մեկը: Միաժամանակ նկատենք նաև, որ ցանկացած պարագայում, երբ երկիրը հայտնվում է տնտեսական շրջափակման մեջ, ֆինանսական կառույցները, ի դեմս կենտրոնական բանկերի, փոխում են իրենց գործունեության ռազմավարությունը և փորձում են այն հնարավորինս ճկուն դարձնել, որպեսզի առավելագույնս մեղմացվեն սպասվելիք բացասական հետևանքները:

Նշենք նաև, որ ֆինանսական կայունությունը ինքնին ենթադրում է տնտեսական աճի ապահովման նախապայման, և այս համատեքստում տնտեսության ցանկացած ճյուղում տեղի ունեցող նույնիսկ աննշան փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական կազմակերպությունների վիճակի վատթարացման, հաշվեկշիռների փոփոխության, ընդհուպ մինչև նորմատիվների խախտումների: Ընդ որում այս և նմանատիպ այլ խնդիրները առավել սուր կերպով են արտահայտվում այն երկրներում, որոնք ունեն փոքր տնտեսություն, և որոնց համեմատաբար ավելի բնորոշ է շղթայական զարգացումների սցենարը:



Մլրդ դրամ	2016	2017	2018	2019	2020
Մարտ	2134.5	2422.9	2718.9	3151.8	3825.6
Հունիս	2170.9	2472.9	2876.4	3266.5	3834.9
Սեպտեմբեր	2189.7	2495.1	2946.3	3415.6	4023.8
Դեկտեմբեր	2412.5	2677.1	3078.5	3631.2	4150.7

Գծապատկեր 1. Վարկային պորտֆելի ծավալային շարժընթացը ՀՀ-ում 2016-2020 թթ. պարբերաշրջանում եռամսյակային կտրվածքով[2]:

[1] Տե՛ս www.petekamutner.am-ՀՀ պետական եկամուտների կոմիտե, պաշտ. կայքէջ:

Խոսելով ճգնաժամերի, տնտեսական շրջափակումների մասին՝ չենք կարող անդրադարձ չկատարել 2020 թվականից ամբողջ աշխարհին, այդ թվում Հայաստանի Հանրապետությանը պատուհասած «թագավարակ» COVID-19- ին և վերջինիս պատճառով ի հայտ եկած բացասական հետևանքներին, որոնցից անմասն չի մնացել նաև մեր հանրապետությունը և ՀՀ բանկային համակարգը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային վիճակագրությունը, COVID-19 համավարակով պայմանավորված՝ ամբողջ աշխարհում դիտվել է վարկավորման ծավալների նվազում: Վերջինս հիմնավորվում է առկա ռիսկերով և անորոշության բարձր մակարդակով: Որպեսզի վերլուծությունը լինի ամբողջական, ստորև դիտարկենք ՀՀ ֆինանսական համակարգում վարկային պորտֆելի ծավալային շարժընթացը 2016-2020 թվականների ընթացքում եռամսյակային կտրվածքներով:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում, 2016-2020 թվականների պարբերաշրջանում բոլոր եռամսյակների կտրվածքով դրսևորվել է բացառապես աճի միտում: Վերջինս պահպանվել է նաև 2020 թվականի ընթացքում, մասնավորապես 2020 թվականի 4-րդ եռամսյակի տվյալներով ՀՀ Վարկային պորտֆելը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցել է 14,3 տոկոսային կետի աճ: 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելը ՀՀ ֆինանսական համակարգում կազմել է 4,15 տրիլիոն ՀՀ դրամ: Ընդ որում բիզնես վարկերը կազմել են 2,6 տրլն դրամ, սպառողական վարկերը՝ 1,06 տրլն դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 0,49 տրլն դրամ: Նկատենք նաև, որ վարկային պորտֆելի ծավալային աճի միտումը վերոնշյալ դասակարգման շրջանակներում ևս պահպանվել է: Ինչպես ցույց է տալիս ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական զեկույցը, ՀՀ տնտեսության ամենախոշոր վարկառուոլորտը ծառայություններինն է՝ 32,65 տոկոս, իսկ ամենափոքր մասնաբաժինը ընկնում է շինարարության ոլորտին՝ ընդհանուր բիզնես վարկավորման կազմում 7,98 տոկոս:

Բացի ոլորտային դասակարգումից՝ կարևորենք նաև վարկային պորտֆելի կառուցվածքային պատկերը 2016-2020 թվականներին ռեզիդենտնե-

[2] Տե՛ս www.armstat.am -ՀՀ ՎԿ, պաշտոնական կայքէջ, «ՀՀ սոցիալ- տնտեսական վիճակը» զեկույցներ:

րին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերի համատեքստում՝ զուգահեռաբար դիտարկելով նաև վերջիններիս բաշխումն ըստ արժույթների[3]:

Աղյուսակ 1.

ՀՀ վարկային պորտֆելի կառուցվածքային պատկերի շարժընթացն ըստ ռեզիդենտության և արժութային բաշխվածության հատկանիշի, /մլն դրամ/[4]:

	2016	2017	2018	2019	2020
Ռեզիդենտներ	2,116,834	2,479,584	2,890,387	3,411,640	3,941,237
այդ թվում՝					
Արտարժույթով	1,013,410	1,518,183	1,558,817	1,682,718	1,951,385
ՀՀ դրամով	746,311	961,401	1,331,570	1,728,922	1,989,852
Ոչ ռեզիդենտներ	319,248	204,997	238,184	245,371	240,562
Այդ թվում՝					
Արտարժույթով	164,990	138,110	196,629	180,504	151,780
ՀՀ դրամով	154,258	66,887	45,555	64,867	88,782


Ինչպես տեսնում ենք, աղյուսակ 1.-ում 2020 թվականի դրությամբ վարկային միջոցների պահանջարկի արժութային կառուցվածքի մասով ընդհանուր պորտֆելը դրամային և արտարժութային վարկերի միջև տեղաբաշխված է գրեթե հավասարաչափ: Դրամային վարկերը կազմում են ընդհանուր պորտֆելի 49,7 տոկոսը, իսկ արտարժութային վարկերը՝ 50,3 տոկոս: Նկատենք նաև, որ նախորդ տարիներին այս համամասնությունը հօգուտ արտարժութային վարկերի է եղել: Այն հանգամանքը, որ պարբերաշրջանի տվյալներով դրամային վարկերի և արտարժութային վարկերի ծավալային բաշխվածությունը ունի հավասարակշռման միտում, փաստում է այն մասին, որ ազգային արժութային համակարգի նկատմամբ դրսևորվում է վստահության աճ: Միաժամանակ նկատենք նաև, որ երբ տնային տնտեսությունները կամ կազմակերպություններըստանձնում են արտարժութային պարտավորություններ, վերջիններս դառնում են առավել խոցելի փոխարժեք-ազգային արժույթ հարաբերակցության տատանումներից: Կենտրոնական բանկի կողմից հրապարակված 2020 թվականի վիճակագրական տվյալները վկա-

[3] Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

[4] Տե՛ս www.armstat.am-ՀՀ ՎԿ, պաշտոնական կայքէջ, «ՀՀ սոցիալ- տնտեսական վիճակը» զեկույցներ:

յում են արտարժութային վարկերի վնասակարության մասին: Մասնավորապես 2021 թվականի փետրվարի 28-ի տվյալներով 1 ԱՄՆ դոլարը միջինում համարժեք է եղել 523,54 դրամի, նույն ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի կտրվածքով կազմել է 478,74 դրամ, մյուս արտարժույթները՝ 1 եվրոն՝ 633,42 դրամ և 522,57, 1 ռուբլին՝ 7,04 և 7,47 ՀՀ դրամ[5]:

Վերլուծելով վարկային պորտֆելի ընդհանուր կառուցվածքը համավարակի պայմաններում՝ հարկ ենք համարում դիտարկել նաև երկարաձգված և ժամկետանց վարկերի ծավալային փոփոխության շարժընթացը 2016-2020 թվականների պարբերաշրջանում:



Գծապատկեր 2. Երկարաձգված և ժամկետանց վարկերի հարաբերական ծավալների շարժընթացը ՀՀ-ում 2016-2020թթ[6]:

Ինչպես տեսնում ենք, գծապատկեր 2.-ում 2020 թվականի դրությամբ ժամկետանց վարկերը ՀՀ ֆինանսական համակարգում ընդհանուրի համեմատ կազմել են 0,81 տոկոս, իսկ երկարաձգված վարկերը՝ 5,45 տոկոս: Նշենք նաև, որ ըստ կենտրոնական բանկի կողմից ընդունված սահմանման՝

[5] Տե՛ս www.cba.am/am/sitepages/default.aspx - ՀՀ Կենտրոնական բանկ, պաշտոնական կայքէջ:

[6] Տե՛ս www.armstat.am/am/ -ՀՀ ՎԿ, պաշտոնական կայքէջ, «ՀՀ սոցիալ- տնտեսական վիճակը» զեկույցներ:

ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց մարումները փոխառուի կողմից իրականացվում են սահմանված մարման գրաֆիկից որոշակի շեղումներով: Երկարաձգված վարկերը ևս դասվում են խնդրահարույց ակտիվների շարքին, և որպես կանոն՝ վարկերի երկարաձգումներ տեղի են ունենում այն դեպքերում, երբ վարկառուների ֆինանսական վիճակը վատթարանում է: Ինչպես գիտենք, համավարակը ևս տնտեսության մի շարք ոլորտներում տնտեսվարող սուբյեկտներին ստիպեց փոխել գործունեության բնականոն ընթացքը, բազմաթիվ կազմակերպություններ հարկադիր պարապուրդի մատնվեցին, որից էլ բխեց արդեն իսկ աշխատակիցների ֆինանսական խնդիրները, հետևապես վարկային պարտավորությունների կատարման հետաձգման անհրաժեշտությունը:

Նկատենք նաև, որ բանկային համակարգը, լինելով ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովման հիմնական գրավականը, չէր կարող անմասն մնալ համավարակի առաջացրած բացասական հետևանքների մեղմացման կամ վերացման միջոցառումների իրականացումից: Տնտեսության շրջանակներում վերջինս ոլորտային տեսանկյունից առաջիններից էր, որ սեփական նախաձեռնությամբ արձագանքեց և համապատասխան քայլեր ձեռնարկեց՝ բանկի հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցելու նպատակով:

Կորոնավիրուսի հետևանքով տուժած վարկառուներին բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հաճախորդներին տրամադրվել են վարկային արձակուրդներ, կատարվել են պարտավորությունների վերանայումներ, երկարաձգումներ և վերակառուցումներ: Ֆիզիկական անձանց դեպքում գործել է 2 հիմնական տարբերակ՝

ընդհանուր ժամանակացույցի փոփոխություն՝ տրամադրված վարկային արձակուրդի ամիսների քանակով,

ահմանված ժամանակացույցի ներսում փոփոխություն՝ վարկային արձակուրդի արդյունքում հետաձգված վճարումների հավասարաչափ բաշխումը մնացորդային ամիսների միջև:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց, ապա այս դեպքում կարող ենք փաստել, որ իրականացված կանխարգելիչ միջոցառումների միասնականություն չի դրսևորվել, բանկերը մեծ մասամբ ցուցաբերել են անհատական մոտեցում, քանի որ համավարակի տարածման ժամանակահատվածումկազմակերպությունների որոշ խմբերի գործունեության մեջ նկատելի փոփոխությունների կատարման անհրաժեշտություն չի առաջացել:

Ինչպես ցույց է տալիս պաշտոնական վիճակագրությունը, վարկային պայմանագրերի վերանայման հնարավորություններից օգտվել են բանկերի հաճախորդների ավելի քան 30 տոկոսը: Վարկային արձակուրդների տրամադրման տվյալների ամփոփման համաձայն՝ 2020 թվականի մայիս ամսվա դրությամբ պարտավորությունների վերանայման հնարավորությունից օգտվել են 550 հազար ֆիզիկական և 17,4 հազար իրավաբանական անձ, դրամային արտահայտությամբ ընդհանուր 1,3 տրլն դրամ մնացորդով շուրջ 980 հազար վարկային պայմանագիր:

Վարկային արձակուրդներ հաճախորդներին տրամադրվել են բոլոր 17 առևտրային բանկերի կողմից[7]:

Խոսելով վարկառուներին տրամադրված վարկային արձակուրդների մասին՝ անհրաժեշտ է զուգահեռաբար դիտարկել նաև բանկերի գործառութային տեսանկյունից նույնչափ կարևոր մյուս խմբի, այն է՝ ավանդատուների մասին: Ինչպես գիտենք, բանկերը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում են ցպահանջ և ժամկետային ավանդներ, որոշակի ժամանակահատվածի համար վճարում են տոկոսագումարներ և նույն ժամանակամիջոցում ստացված միջոցները վարկերի տեսքով տեղաբաշխում են, վարկառուներից հետ ստանում տրված գումարը և որոշակի հաշվեգրված տոկոսագումարներ, որոնց հաշվին էլ իրականացնում են իրենց պարտավորությունները ավանդատուների նկատմամբ: Վերոնշյալ ճգնաժամային իրավիճակի կարգավորման նպատակով տրամադրված վարկային արձակուրդների հետևանքով, ըստ ՀՀ ԿԲ վիճակագրական տվյալների, ավելի քան 100 մլրդ դրամի շրջանակներում հետաձգվել են բանկային մուտքերը: Ուստիև բանկերում առաջացել է հակասություն ավանդատուների նկատմամբ պարտավորությունների՝ ժամանակին կատարման հետ կապված: Հետևապես առաջացած ճեղքվածքը մեղմացնելու համար առևտրային բանկերը կենտրոնական բանկից ձեռք են բերել հավելյալ իրացվելիություն, որը ևս՝ որպես լրացուցիչ ֆինանսական միջոցների տրամադրում, ենթադրում է հետագայում վերցված միջոցների և տոկոսագումարների վերադարձ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ վարկային արձակուրդների տրամադրման արդյունքում բանկերը ևս, բացի եկամուտների մուտքի հետաձգումից, իրականացրել են հավելյալ ծախսեր:

[7] Տե՛ս www.uba.am/ -Հայաստանի բանկերի միություն, պաշտոնական կայքէջ:

Ըստ էության բանկային համակարգը համաճարակի բացասական հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում, բացի վարկային արձակուրդներից, հանդես է եկել նաև վարկավորման նոր առաջարկներով, որոնք իրականացվել են կառավարության հետ համատեղ ջանքերով և անհատական նախաձեռնություններով:

Մասնավորապես ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային առաջին և երկրորդ ծրագրերով ՀՀ առևտրային բանկերը բավարարել են 25885 վարկային հայտ՝ տրամադրելով ավելի քան 119 մլրդ դրամ:

Հակաճգնաժամային 1-ին միջոցառման շրջանակում, որով արտոնյալ պայմաններով վարկեր են տրամադրվում ընկերություններին՝ հումքի, սարքավորումների ձեռքբերման, սննդի և դեղերի ներկրման, ինչպես նաև աշխատավարձի, հարկերի, կոմունալ ծախսերի վճարման համար, բավարարվել է 1209 վարկային հայտ՝ շուրջ 76.5 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 2.

ՀՀ դրամով և արտարժույթով վարկերի սուբսիդավորման չափերը՝ կախված նպատակից, ըստ Կառավարության հակաճգնաժամային առաջին միջոցառման[8]

Վարկի նպատակը	Սուբսիդավորման չափը	
	Վարկեր դրամով	*Վարկեր արտարժույթով*
Աշխատակիցների	ամբողջությամբ	ամբողջությամբ
Հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների	ամբողջությամբ	ամբողջությամբ
Հումքի	7%	6%
Սարքավորումների	6%	5%
Կոմունալ վճարների	10%	8%
Սննդի	8%	6%

Ինչ վերաբերում է հակաճգնաժամային 2-րդ ծրագրին, որն ուղղված էր գյուղատնտեսության ոլորտին, 2020 թվականի սեպտեմբերի 31-ի դրությամբ բավարարվել է 24676 վարկային հայտ՝ դրամային ընդհանուր՝ 43.1 մլրդ դրամի չափով:

COVID-19-ի դեմ պայքարի շրջանակներում ՀՀ առևտրային բանկերն աջակցություն են ցուցաբերել մի շարք այլ ծրագրերի, որոնց ընդհանուր ար-

[8] Տե՛ս www.gov.am -ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ:

ժեքը 2020 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է շուրջ 260 մլն դրամ: Իրականացված ծրագրերը եղել են բազմաբնույթ և պարունակել են կրթական, առողջապահական համակարգին վերաբերող տարրեր:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք փաստել, որ համավարակը, ըստ էության, հանգեցրել է բացասական հետևանքների և լրացուցիչ խոչընդոտների տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, որին անմասն չի մնացել նաև ՀՀ ֆինանսական համակարգը մասնավորապես, բանկային համակարգը՝ հատկապես: Վերջիններիս կողմից, սակայն, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ հաջակցություն ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտավորությունների պատշաճ կատարման: Տրամադրվել է նաև աջակցություն մի շարք այլ ծրագրերի, որոնք ֆինանսական ենթատեքստ չեն պարունակել:

Օգտագործված գրականության ցանկ

1. www.petekamutner.am ՀՀ պետական եկամուտների կոմիտե, պաշտոնական կայքէջ:
2. www.gov.am - ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ,
3. www.armstat.am/am/ ՀՀ Վիճակագրական Կոմիտե, պաշտոնական կայքէջ:
4. www.cba.am/am/sitepages/default.aspx ՀՀ Կենտրոնական բանկ, պաշտոնական կայքէջ:
5. www.uba.am – Հայաստանի բանկերի միություն, պաշտոնական կայքէջ:

PECULIARITIES OF THE BANKING SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA IN PANDEMIC CONDITIONS

SARGSYAN ALLA

4th-year student of the Finance Department of the Faculty of Economics, Gavar State University

e-mail: allasargsyan@bk.ru

Scientific supervisor: Gayane Khachatryan

PhD in Economics, Associate Professor

The pandemic that has befallen the world since January 2020 has led to a number of negative consequences in all countries and in all spheres. And in this context, the reaction of the banking system and the analysis of the measures taken

are most important, since the latter is the main guarantee of the country's financial stability and a source of financing for other sectors of the economy. The commercial banks of the Republic of Armenia, represented by the Central Bank, forcibly changed the strategy of their activities and, in the form of various measures, assisted individuals and legal entities in creating conditions for the further proper fulfillment of existing obligations.

Key words: *financial stability, repayment holiday, revision-extension-reconstruction, obligations.*

ОСОБЕННОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ (COVID-19)

САРГСЯН АЛЛА
Студентка 4 курса отделения «Финансы»
экономического факультета ГГУ,
электронная почта: allasargsyan@bk.ru
Научный руководитель: Хачатрян Гаяне
Кандидат экономических наук, доцент

Эпидемия, охватившая мир с января 2020 года, привела к ряду негативных последствий во всех странах и во всех сферах. В этом контексте наиболее важна реакция банковской системы и анализ предпринятых мер, поскольку последняя является главным залогом финансовой стабильности страны и источником финансирования других секторов экономики. Коммерческие банки Республики Армения в лице Центрального банка принудительно изменили стратегию своей деятельности и оказали содействие физическим и юридическим лицам в виде различных мероприятий на должном уровне, создания предпосылок для дальнейшего надлежащего выполнения существующих обязательств.

Ключевые слова: *финансовая стабильность, кредитные каникулы, проверка- продление-реконструкция, финансовые обязательства.*

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՆՈՐԱՏՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Հաշվապահական հաշվառում և հարկում/ըստ ոլորտի/»
բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ arminhambardzumyan@mail.ru
Գիտական ղեկավար՝ Թորոսյան Դավիթ
Գավառի պետական համալսարանի դասախոս

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը և արտարժույթ ձեռք բերելու առավել մեծ հնարավորությունները նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորման ու զարգացման համար: ՀՀ զբոսաշրջության համալիր զարգացման համար կարևորվում է գյուղերի ներգրավվածությունը, դրանց ենթակառուցվածքների զարգացածության մակարդակը, զբոսաշրջային ռեսուրսների հասանելիությունը, համակողմանի գնահատումն ու արդյունավետ օգտագործումը: Ակնհայտ է, որ Նորատուս գյուղում գոյություն ունեն բոլոր նախապայմանները՝ զբոսաշրջությունը հեռանկարային ճյուղ դարձնելու համար: Նորատուսը՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով հարուստ վայր, մեծ հետաքրքրություն է առաջացնում բազմաթիվ երկրների զբոսաշրջիկների մոտ: Նորատուս գյուղը մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ: Դրա համար անհրաժեշտ են որակյալ կադրեր, միջազգային ստանդարտներին համապատասխանող զբոսաշրջային ծառայություններ, ներդրումներ, որը կնպաստի զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը: Զբոսաշրջային այսպիսի համակարգի ստեղծումն ու Նորատուսում հյուրատների ստեղծման գործունեությունը կնպաստի բնակիչների զբաղվածության և դրամական հոսքերի ավելացմանը, միջազգային կապերի զարգացմանը, Նորատուս գյուղը ՀՀ-ում և աշխարհում ավելի հայտնի դարձնելուն և այլն:

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջային վիճակագրություն, խաչքարեր, զբոսաշրջային գործակալի ծառայություն:*

Վերջին տասնամյակները նշանավորվել են միջազգային տնտեսության մեջ զբոսաշրջության կշռի կտրուկ աճով, բազմաթիվ զարգացող երկրներում զբոսաշրջությունը դարձել է ծառայություններ արտահանելու և դրամական հոսքեր ներգրավելու արդյունավետ գործիք: Ուշադրության է արժանի այն, որ զբոսաշրջությունից ստացվող համաշխարհային եկամուտները վերջին տասնամյակում աճել են միջինը 6.6% ցուցանիշով: Ինչ վերաբերում է միջազգային զբոսաշրջային այցելությունների թվին, ապա այն հատել է 1 մլրդ[1], իսկ ըստ ՄԱԿ ԶՀԿ փորձագետների կանխատեսումների՝ 2023թ. այն կկազմի 1.5 մլրդ, 2030թ. 1.8 մլրդ[2] սահմանները: Քանի որ ՀՀ կարևորագույն խնդիրներից մեկը բնակչության կենսամակարդակի բարձրացումն է և աղքատության հաղթահարումը, զբոսաշրջության շնորհիվ հնարավոր է նպաստել երկրում տնտեսական աճի ապահովմանը և այլ խնդիրների հաղթահարմանը՝ շնորհիվ ՀՀ-ում առկա բավականին մեծ զբոսաշրջային ներուժի: Հաշվի առնելով Նորատուս գյուղի բարենպաստ բնակլիմայական պայմանները, հարուստ պատմամշակութային և բնության եզակի հուշարձանները՝ կարելի է ասել, որ Նորատուս համայնքի հեռանկարային զարգացման ուղղություններից է համարվում զբոսաշրջությունը: Նորատուսը նախ և առաջ հայտնի է իր բազմաթիվ խաչքարերով՝ նշանավոր «խաչքարերի անտառով»:

Նորատուսի վերաբերյալ հյուսված ավանդազրույցներից մեկը նկարագրում է օսմանյան թուրքերի ներխուժումը Գեղարքունիք և նրանց կռիվը Գեղամ իշխանի դեմ: Ունենալով շատ քիչ զինվոր՝ վերջինս իր մարդկանց հրամայում է զինվորական համազգեստ հագցնել խաչքարերին և թշնամու համար ստեղծել խաբկանք՝ հեռվից թողնելով մեծաքանակ և ուժեղ բանակի տպավորություն: Թուրքերը սարսափահար փախուստի են դիմում, իսկ Գեղամն իր խմբով հարձակվում և պարտության է մատնում թշնամուն[3]: Խաչ-

[1] ՄԱԿԶՀԿ պաշտոնական կայք http://unvto.org/en/content/why-tourizm:

[2] Tourizm Towards 2030/Global Over iew Published by the World Tourizm Organazation, Madrid, Spain, 2011.p. 10-15.

[3] https://hy.wikipedia.org/wiki/Նորատուս

քարը քարարվեստի ուրույն, զուտ հայկական դրսևորում է թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Հայաստանն առանձնահատուկ մի երկիր է, որտեղ կա ավելի քան 50 000 ձեռատաշ խաչքար, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ: Խաչքարերը սփռված են պատմական և արդի Հայաստանի ամբողջ տարածքում: Այդ է նաև պատճառը, որ Հայաստանը համարվում է «թանգարան բաց երկնքի տակ»:

Ըստ Նորատուս գյուղի համայնքապետարանի տվյալների՝ Նորատուսի խաչքարեր և եկեղեցիներ զբոսաշրջիկների այցելությունները վերջին 2-3 տարիների ընթացքում նվազ է միայն ձմռան ամիսներին, իսկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն այստեղ են այցելում աշխարհի բազմաթիվ երկրների հազարավոր զբոսաշրջիկներ: Միջին հաշվով օրական 200-300 զբոսաշրջիկ է այցելում Նորատուս՝ ամենայն ուշադրությամբ դիտելով և ուսումնասիրելով հուշարձանների պատմությունը:Զբոսաշրջիկների տարիքային խմբում գերակշռում են 50 և բարձրտարիքային խմբերի մարդիկ: Նորատուս գյուղ այցելած երկրների մեջ գերակշիռ մաս են կազմում Գերմանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Ռուսաստանը, Իտալիան:

Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ամենտարյա վիճակագրության համաձայն՝ երևում է, որ դեպի Գեղարքունիքի մարզ զբոսաշրջիկների հոսքը տարեցտարի ավելանում է՝ ներգրավելով նորանոր զբոսաշրջային նշանակություն ունեցող վայրեր, որտեղ անմասն չի մնում նաև Նորատուս համայնքն իր խաչքարերի եզակի գերեզմանատնով:

Աղյուսակ 1. Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների վիճակագրությունն ըստ տարեկան աճի (հազ.մարդ)

2015	2016	2017	2018	2019
21.527	32.878	83.044	131.229	158.612

Ըստ աղյուսակի տվյալների՝ տեսնում ենք, որ զբոսաշրջիկների թվաքանակի բացարձակ աճ գրանցվել է 2019 թվականին: Ըստ կենտրոնի տվյալների՝ ընդհանուր հոսքը գրեթե կիսվում է երկու ուղղության մեջ. առաջին դեպքում՝ Սևանից դեպի Դիլիջան, իսկ երկրորդ դեպքում՝ Սևանից Հայրավանք-Նորատուս-Նորավանք և այլն: Գեղարքունիքի մարզում արդեն բազմաթիվ հյուրատներ կան, որոնք հաջողությամբ գործում են, և ըստ Նորատուսի գերեզմանատան մոտ բիզնես գործունեությամբ զբաղվողների՝ զբո-

սաշրջիկները գրեթե միշտ հարցնում են, թե համայնքում որտեղ կարող են գտնել հյուրատուն: Նորատուս այցելողների թվաքանակն ավելի մեծ կլիներ, եթե համայնքում լուծվեր գիշերակացի հարցը, քանզի եթե համայնքում լինեին ժամանակակից պահանջներին համապատասխանող հյուրատներ, զբոսաշրջիկները ստիպված չէին լինի լքել իրենց գտնվելու վայրը և երկար ժամանակ մնալով համայնքում՝ նրանք լիարժեք կկարողանային ծանոթանալ միջնադարի խաչքարերի ու եկեղեցիների պատմությանը:Այս ամենի արդյունքում կբացվեին նոր աշխատատեղեր, որի արդյունքում կավելանային դպի եհամայնք դրամական հոսքերը, որի արդյունքում էլ կբարձրանար բնակչության կենսամակարդակը:

Համայնքում բացակայում է մասնագիտացված զբոսաշրջային գործակալի ծառայությունը, որը կտրամադրեր ամբողջական զբոսաշրջային փաթեթ՝ համալրված ամբողջական տուրով, այն է՝ գիշերակացով, սնունդով, տրանսպորտով, զբոսավարով կամ ուղեկցորդով: Օրինակ՝ ցանկացած զբոսաշրջիկ, ով այցելում է համայնք՝ տեսնելու Նորատուսի խաչքարերը, եկեղեցիները, առանց մատչելի և հանգամանալից տեղեկատվության տարրի ստացման՝ կարող է այլևս չվերադառնալ նույն վայրը: Հետևաբար այս ամենի բացակայության հետևանքով դժգոհություններ է առաջանում զբոսաշրջիկների մոտ, և դա էլ իր հերթին նպաստում է զբոսաշրջիկների հոսքի կրճատմանը:

Աղյուսակ 2. Սևանի թերակղզի այցելած զբոսաշրջիկների վիճակագրությունն ըստ պետությունների (հազ.մարդ):

N	Ե Ր Կ Ի Ր Ը	2015	2016	2017	2018	2019
1.	ԵՎՐՈՊԱ	4996	6059	12.027	22.254	26.256
2.	ԳԵՐՄԱՆԻԱ	496	1003	2749	8216	16.808
3.	ՖՐԱՆՍԻԱ	2217	3127	5637	10.989	15.497
4.	Այլ պետություններից	2422	3419	8512	11.773	13.014
5.	ԼԵՀԱՍՏԱՆ	2216	3944	7387	11.075	12.950
6.	ՌՈՒՍԱՍՏԱՆ	1473	1108	4307	7520	12.829
7.	ԻՏԱԼԻԱ	482	1202	4019	7164	10.761
8.	ՉԻՆԱՍՏԱՆ	259	416	1768	4730	8142
9.	ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ	-	90	347	1291	4875
10.	ԱՄՆ	78	704	3088	5949	4228
11.	ԻՐԱՆ	5803	7081	16.156	1823	3759

12.	ԻՍՊԱՆԻԱ	57	435	1685	3356	3749
13.	ԱՎՍՏՐԱԼԻԱ	33	138	609	2680	3253
14.	ԿԱՆԱԴԱ	208	182	724	2973	2964
15.	ԲԵԼԳԻԱ	45	934	1989	4187	2606
16.	ՀՆԴԿԱՍՏԱՆ	72	291	1957	3624	2555
17.	ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ	82	112	501	2469	1866
18.	ՉԵԽԻԱ	97	1019	2954	3558	1799
19.	ԱՄԷ	-	-	-	964	1527
20.	ՇՎԵՅՑԱՐԻԱ	35	356	502	2077	1303
21.	ՃԱՊՈՆԻԱ	22	379	520	1724	1149
22.	ԼԻԲԱՆԱՆ	-	-	908	3092	1037
23.	ՖԻԼԻՊԻՆՆԵՐ	-	-	1434	1225	935
24.	ԴԱՆԻԱ	-	182	219	638	648
25.	ԱՐԳԵՆՏԻՆԱ	28	200	389	968	529
26.	ՎՐԱՍՏԱՆ (վրացիներ)	150	204	526	1268	481
27.	ՖԻՆԼԱՆԴԻԱ	-	69	168	536	472
28.	ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ	82	67	135	755	457
29.	ԹՈՒՐՔԻԱ (հայեր)	-	-	727	958	437
30.	ՀՈԼԱՆԴԻԱ	-	-	62	404	424
31.	ԻՍՐԱՅԵԼ	87	81	70	260	374
32.	ԻՐԱՔ	-	-	863	459	372
33.	ՈՒԿՐԱԻՆԱ	-	76	67	149	296
34.	ԱՆԳԼԻԱ	2	-	38	121	260

Ինչպես տեսնում ենք, ըստ աղյուսակ 2.-ի տվյալների՝ 2019 թվականին դեպի Գեղարքունիք այցելությունների մեջ բացարձակ աճ ապահոված երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Լեհաստանը, Ռուսաստանը և Իտալիան:

2019 թվականի տվյալները համեմատելով 2018 թվականի տվյալների հետ՝ տեսնում ենք, որ այցելությունների մեջ նվազում ունեցող երկրներն են ԱՄՆ, Կանադան, Բելգիան, Հնդկաստանը, Նոր Զելանդիան, Չեխիան, Շվեյցարիան, Ճապոնիան, Լիբանանը, Ֆիլիպինները, Արգենտինան, Վրաստանը, Ֆինլանդիան, Պորտուգալիան, Թուրքիան և Իրաքը:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Նորատուսը՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ, պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով հարուստ վայր, մեծ ձգողականություն ունի հիմնա-

կանում քրիստոնեություն դավանող երկրների զբոսաշրջիկների մոտ: Նորատուս գյուղը մեծ ներուժ ունի միջազգային զբոսաշրջային շուկային առաջարկելու բազմաբնույթ, մրցունակ զբոսաշրջային արդյունք և բարձրակարգ ծառայություններ: Դրա համար անհրաժեշտ են որակյալ կադրեր, միջազգային ստանդարտներին համապատասխանող զբոսաշրջային ծառայություններ, ներդրումներ, որի արդյունքում կնպաստենք զբոսաշրջիկների հոսքի ավելացմանը նաև նվազում ապահոված երկրներից:

Զբոսաշրջային զարգացման այսպիսի համակարգի ստեղծումն ու Նորատուսում հյուրատների ստեղծման գործունեությունը կնպաստեն բնակիչների զբաղվածության ավելացմանը, դրամական հոսքերի ավելացմանը, միջազգային կապերի զարգացմանը, համայնքը ՀՀ-ում և աշխարհում ավելի հայտնի դարձնելուն և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՄԱԿԶՀԿ պաշտոնական կայք http://unvto.org/en/content/why-tourizm:
2. Tourizm Towards 2030/Global Over iew Published by the World Tourizm Organazation, Madrid, Spain, 2011.p. 10-15.
3. https://hy.wikipedia.org/wiki/Նորատուս
4. armenia sevan b&bhttps://www.facebook.com/groups/1429930883761307
5. Tourism center (Armenia, Sevan)https://www.facebook.com/Tourism-center-Armenia-Sevan-144381582818582
6. mineconomy.am

TOURISM DEVELOPMENT WAYS IN NORATUS VILLAGE

HAMBARDZUMYAN ARMINE

1st-year MA student of Accounting and Taxation (branch-wise) Department of the Faculty of Economics, Gavar State University,
e-mail: arminhambardzumyan@mail.ru
Academic Supervisor: Torosyan David
GSU lecturer

Tourism is one of the most dynamic and profitable areas of the world economy, the rapid pace of development of which and wider opportunities for the acquisition of foreign currency create favorable conditions for the formation and development

of certain sectors of the economy of this country, in particular, the tourism industry. For the comprehensive development of tourism in the Republic of Armenia, the involvement of villages, the level of development of their infrastructures, the availability of tourism resources, their comprehensive assessment and effective use are important. It is obvious that in Noratus village there are all preconditions for developing a perspective branch of tourism. Noratus, as an attractive place for tourism, rich in historical and cultural monuments and churches, attracts a lot of tourists from many countries.The village of Noratus has a great potential to offer the international tourist market a variety of competitive tourist products and high-quality services. For that purpose, we need qualified staff, tourism services in accordance with international standards, investments, as a result of which we will increase the flow of tourists.The creation of such a tourism system will contribute to the increase of the population's employment, the increase of cash inflows, the development of international relations, thus making the village of Noratus more famous in Armenia and around the world, etc.

Key words: *tourism, tourist, tourism statistics, khachkars, travel agent service.*

ПУТИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В ДЕРЕВНЕ НОРАТУС

АМБАРЦУМЯН АРМИНЕ
Студентка 1-го курса магистратуры «Бухгалтерский учет и налогообложение/по отраслям» экономического факультета Гаварского Государственного университета
электронная почта: arminhambardzumyan@mail.ru
Научный руководитель: Торосян Давид
Преподаватель ГГУ

Туризм - одна из самых динамичных и прибыльных сфер мировой экономики, быстрые темпы развития которой и более широкие возможности приобретения иностранной валюты создают благоприятные условия для формирования и развития отдельных отраслей экономики данной страны, в частности, туристической индустрии. Для комплексного развития туризма Республики Армения важна вовлеченность сел, уровень развития их инфраструктур, доступность туристических ресурсов, их всесторонняя оценка и эффективное использование. Очевидно, что в селе Норатус есть все предпосылки для развития перспективной отрасли туризма. Норатус, как привлекательное место

для туризма, богатое историческими и культурными памятниками, церквями, привлекает множество туристов из многих стран. Деревня Норатус обладает большим потенциалом для того, чтобы предложить международному туристическому рынку разнообразные конкурентоспособные туристические продукты и высококачественные услуги. Для этого нам нужны квалифицированные кадры, туристические услуги в соответствии с международными стандартами, инвестиции, благодаря которым мы увеличим поток туристов. Создание такой туристической системы будет способствовать увеличению занятости населения, увеличению притока денежных средств, развитию международных связей, повышению известности села Норатус в Армении и в мире и т. д.

Ключевые слова: *туризм, турист, статистика туризма, хачкары, турагентские услуги.*

ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԸ ՈՐՊԵՍ ՓՄՁ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴ

ՄԻՐԻԲՅԱՆ ԱՐՓԻ
ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ,
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Տնտեսագիտություն» բաժնի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ arpimiribyan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Հովեյան Աստղիկ
Գավառի պետական համալսարանի դասախոս

Ինչպես շատ երկրներում, Հայաստանի Հանրապետությունում ևս ֆինանսական միջոցների ներգրավումը փոքր և միջին ձեռնարկությունների համար լուրջ մարտահրավերներից մեկն է: Ելնելով այդ հանգամանքից՝ ֆինանսների հայթայթման նորարարական մեթոդները, որոնցից է քրաուդֆանդինգը, ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում բազմաթիվ երկրներում:

Հոդվածի նպատակն է քննել և հիմնավորել քրաուդֆանդինգի՝ որպես ՓՄՁ ֆինանսավորման այլընտրանքային մեթոդի կարևորությունը և նշանակությունը, վերլուծել ՀՀ-ում քրաուդֆանդինգային ֆինանսավորման կիրառմանը խոչընդոտող գործոնները, ինչպես նաև զարգացման հեռանկարները:

Բանալի բառեր՝ *քրաուդֆանդինգ, քրաուդֆանդինգային հարթակ, այլընտրանքային ֆինանսավորում, ՓՄՁ ֆինանսավորման ճեղքվածք, ֆոնդհայթայթում:*

Քրաուդֆանդինգ բառը կազմված է անգլերեն «crowd» (ամբոխ) և «fund» (ֆոնդ) բառերից: Աշխարհին հայտնի են քրաուդֆանդինգի մի շարք սահմանումներ: 2015թ.-ին Եվրոպական հանձնաժողովի միավորված հետազոտական կենտրոնը (JRC) քրաուդֆանդինգը սահմանել է որպես համացանցային հարթակների միջոցով մեծ թվով անհատներից կամ կազմակերպություններից ռեսուրսների (միջոցներ, փող, շոշափելի բարիքներ) հավաքագրման բաց կոչ: Մեկ այլ սահմանմամբ՝ քրաուդֆանդինգը ընկերների,

ընտանիքի, հաճախորդների և անհատ ներդրողների հավաքական ջանքերով կապիտալ հայթայթելու մեթոդ է:

Առավել ընդհանրական սահմանում տալով՝ կարելի է ասել, որ քրաուդֆանդինգը «հանրային ֆինանսավորման» մեթոդ է, որը հնարավորություն է տալիս գումար հավաքել մեծ թվով մարդկանցից՝ հիմնականում առցանց հարթակների միջոցով: Այնուամենայնիվ, քրաուդֆանդինգը չի առաջացել համացանցում, այլ մինչ դա էլ արդեն երկար ժամանակ գոյություն է ունեցել: Դրա վառ օրինակ է Ազատության արձանը, որի տեղադրման համար պահանջվող ֆինանսական միջոցների մի մասը հավաքագրվել է ժողովրդից:

Նշենք նաև, որ քրաուդֆանդինգի արձանագրված առաջին հաջող փորձը տեղի է ունեցել 1997 թվականին, երբ բրիտանական «Մարիլիոն» (Marillion) ռոք խմբի երկրպագուների առցանց նվիրատվությունների շնորհիվ կազմակերպվեց խմբի շրջագայությունը ողջ ԱՄՆ-ում[1]: Ոգեշնչվելով ֆինանսավորման այս նորարարական մեթոդից՝ 2000թ.-ին ստեղծեցին «Արթիսթշեյր»-ը (ArtistShare)՝ նվիրատվական քրաուդֆանդինգի առաջին հարթակը, որը ֆոնդհայթայթում էր կազմակերպում երաժշտական խմբերի համար[2]: Դրանից անմիջապես հետո սկսեցին ավելի շատ քրաուդֆանդինգային հարթակներ ի հայտ գալ, և քրաուդֆանդինգի միջոցով ֆոնդհայթայթման մշակույթը գնալով սկսեց ավելի լայն տարածում գտնել:

Հարկ է նշել, որ իրենց ներդրումների դիմաց մարդիկ կարող են ստանալ մի շարք նյութական կամ ոչ նյութական օգուտներ, որը կախված է քրաուդֆանդինգի տեսակից[3]:

Քրաուդֆանդինգի հիմնական տեսակներ են՝[4]

Վարկավորման վրա հիմնված (Peer to peer lending) - Ամբոխը գումար է պարտքով տալիս մի ընկերության՝ հասկանալով, որ գումարը վերադարձվելու է տոկոսադրույքներով: Այս եղանակը շատ նման է բանկից վարկ վերցնելուն, բացառությամբ այն հանգամանքի, որ այս պարագայում ֆինանսավորումը ստանում ես բազմաթիվ ներդրողներից:

---

[1] www.fundable.com

[2] Schroter W. Top 10 Business Crowdfunding Campaigns Of All Time /Forbes.-2014.-April 16.

[3] Understanding Crowdfunding and its Regulations. How can Crowdfunding help ICT Innovation?, Garry A Gabison, Joint Research Centre, Luxembourg: Publications Office of the European Union, 2015.

[4] ec.europa.eu

Բաժնեմասային քրաուդֆանդինգ (Equity based) - Բիզնեսը մի շարք ներդրողների է վաճառում իր բաժնեմասերը նրանց կողմից ներգրվված ներդրումների դիմաց: Այս մեթոդը նման է ֆոնդային բորսայում բաժնետոմսերի առք ու վաճառքին, սակայն ի տարբերություն վերջինիս՝ այս պարագայում բաժնետոմսերը գնվում են ոչ այնքան հայտնի կազմակերպություններից, որոնք անգամ գոյություն չունեն ֆոնդային բորսայի անվանացանկում:

Պարգևատրման վրա հիմնված քրաուդֆանդինգ (Reward based) - Այս պարագայում անհատները որոշակի գումար են նվիրաբերում որևէ ծրագրի կամ բիզնեսի իրագործման համար՝ ակնկալելով, որ դրա դիմաց հետագայում ստանալու են ոչ ֆինանսական պարգևատրում, օրինակ ՝ ապրանքներ կամ ծառայություններ:

Անվերադարձ նվիրատվության վրա հիմնված քրաուդֆանդինգ (Donation based) - Անհատները նվիրաբերում են փոքր գումարներ՝ մեծ ընդհանուր նպատակն իրագործելու համար՝ չստանալով ֆինանսական կամ նյութական փոխհատուցում ներկա և հետագա ժամանակահատվածում: Քրաուդֆանդինգի այս տեսակը հիմնականում օգտագործվում է բարեգործական ծրագրեր իրականացնելիս:

Շահութաբաժնի վրա հիմնված քրաուդֆանդինգ (Profit sharing) - Այս պարագայում ներգրավվում են ֆինանսական միջոցներ՝ հետագայում սպասվելիք շահույթից ներդրողներին մասհանումներ տրամադրելու նախապայմանով:

Քրաուդֆանդինգի հիբրիդային եղանակ (Hybrid model) - Այս մոդելն օգտագործելիս հնարավոր է միաժամանակ օգտագործել քրաուդֆանդինգի մի քանի տեսակներ:

Նկատենք, որ ֆինանսների հայթայթման նորարարական մեթոդները, ինչպիսիք են քրաուդֆանդինգի տեսակները, ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում բազմաթիվ երկրներում, մասնավորապես զարգացող երկրներում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 2020 թվականին այլընտրանքային վարկավորման համաշխարհային շուկայի գործարքի արժեքը կազմել է 291,4 միլիարդ ԱՄՆ դոլար[5], իսկ քրաուդֆանդինգի միջոցով հավաքա-

[5] Alternative Lending report 2021, Statista Digital Market Outlook


գրված գումարը ամբողջ աշխարհում կազմել է 34 միլիարդ ԱՄՆ դոլար[6], այդ թվում՝

վարկավորման վրա հիմնված քրաուդֆանդինգ՝ 25 միլիարդ ԱՄՆ դոլար,

նվիրատվությունների և պարգևատրման վրա հիմնված քրաուդֆանդինգ՝ 5.5 միլիարդ ԱՄՆ դոլար,

բաժնեմասային քրաուդֆանդինգ՝ 2.5 միլիարդ ԱՄՆ դոլար:

Կանխատեսվում է, որ քրաուդֆանդինգի համաշխարհային գործարքի արժեքը մինչև 2021 թվականի ավարտը կհասնի 9.96 մլրդ ԱՄՆ դոլարի, իսկ 2022թ.-ին՝ 11.11 մլրդ ԱՄՆ դոլարի (գծ. 1)[7]:



Գծապատկեր 1. Քրաուդֆանդինգի համաշխարհային գործարքի արժեքը 2017-2022 թթ-ին (մլրդ ԱՄՆ դոլար):

Հարկ է հավելել, որ քրաուդֆանդինգը առավել հաճախ օգտագործվում է սկսնակ ընկերությունների կամ աճող բիզնեսների կողմից՝ որպես ֆինանսներ ներգրավելու այլընտրանքային միջոց:

Այլընտրանքային ֆինանսները կարող են հանդիսանալ ֆինանսական հատվածի զարգացման առաջնահերթությունների լուծում՝ մեղմելով ՓՄՁ զարգացման հիմնական և ամենակարևոր խոչընդոտներից մեկը՝ ֆինանսական ռեսուրներին հասանելիության դժվարությունը:

[6] blog.fundly.com

[7] Global crowdfunding market Size, Status And Forecast 2022, Big market research

Վերջին տասնամյակի ընթացքում շատ հետազոտողներ և ակադեմիկոսներ փորձել են վերլուծել ՓՄՁ-ների՝ ֆինանսների նկատմամբ հասանելիության խնդիրը՝ ընդգծելով նրանց կախվածությունը վարկային և դրամական հոսքերից:

Տնտեսագետներ Ռ. Այադին և Ս. Գադին (2013) նշում են, որ ՓՄՁ-ները ֆոնդերի փոխառության գործընթացում բախվում են մի շարք խոչընդոտների, քանի որ նրանք փոքր են, պակաս դիվերսիֆիկացված և ունեն ավելի թույլ ֆինանսական կառուցվածքներ[8]: Փորձագետ Թորստեն Բեկը և այլ հեղինակներ (2004) կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ ՓՄՁ-ները խիստ թերֆինանսավորված են[9], և այդ մասին են վկայում բազմաթիվ միջազգային հետազոտություններ: Ստորև փորձենք ներկայացնել թերֆինանսավորվածությունը վկայող փաստեր և ներկայացնենք մեր կողմից կատարված հաշվարկները:

Ըստ համաշխարհային բանկի զեկույցի (զեկույցում ընդգրկված են 128 երկրներ, որոնցից 112-ը ցածր և միջին ազգային եկամուտ ունեցող երկրներ են)՝ զարգացող տնտեսություններում ՓՄՁ ֆինանսավորման հնարավոր պահանջարկը գնահատվում է 8,9 տրիլիոն ԱՄՆ դոլար: Ի պատասխան դրա՝ այդ երկրներում վարկային առաջարկը կազմում է 3,7 տրիլիոն ԱՄՆ դոլար[10]: Օգտագործելով հետևյալ բանաձևը՝

ՓՄՁ ֆինանսավորման ճեղքվածք = Պոտենցիալ առաջարկ – Առկա պահանջարկ

կարելի է հաշվարկել, որ ՓՄՁ ֆինանսավորման ճեղքվածքը կազմում է 5,2 տրիլիոն ԱՄՆ դոլար, որը համարժեք է վերլուծության մեջ ընդգրկված երկրների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 19 տոկոսին: Ճեղքվածքը 1.4 անգամ գերազանցում է այդ երկրներում ՓՄՁ վարկավորման մակարդակը, և սա այն դեպքում, որ զեկույցում ներկայացված չեն պաշտոնապես չգրանցված ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման պահանջարկի մասին

[8] Access by MSMEs to Finance in the Southern and Eastern Mediterranean: What role for credit guarantee schemes?, Rym Ayadi and Salim Gadi, MEDPRO Technical Report No. 35/April 2013

[9] SME finance in developing countries – recent findings, Thorsten Beck

[10] MSME finance gap, World bank group, 2017


տվյալները, և միայն ընդգրկված է պաշտոնապես գրանցված ՓՄՁ-ների վերաբերյալ վիճակագրությունը:

Այս և այլ հետազոտությունների արդյունքում ակնհայտ է դառնում ֆինանսավորման այլընտրանքային մեթոդների կարևորությունը և անհրաժեշտությունը:

Ուշագրավ է այն փաստը, որ այլընտրանքային ֆինանսների՝ Քեմբրիջի կենտրոնի (Cambridge center for alternative finance) համաձայն՝ մեկ շնչի հաշվով այլընտրանքային ֆինանսների ծավալների առումով ՀՀ-ն առաջատար երկրների ցանկում է (գծ. 2): Մեր կարծիքով՝ այս ցուցանիշը մեծ մասամբ պայմանավորված է մեր երկրի սակավաթիվ բնակչությամբ և հիմնականում բարեգործական նպատակներով պարբերաբար դրամահավաքների կազմակերպմամբ:

Չնայած որ ՀՀ-ում գործող քրաուդֆանդինգային հարթակների մեծ մասն միտված է բարեգործական և սոցիալական նպատակներով ֆոնդհայթայթմանը, այնուամենայնիվ գործում են նաև բիզնես նախագծերի համար դրամահավաքներ կազմակերպող հարթակներ: Այդպիսի հարթակ է նաև The crowdfunding formula-ն: Հարթակի միջոցով հավաքագրվել է ավելի քան 33 միլիոն ԱՄՆ դոլար՝ 16-ից ավել բիզնես գաղափարների իրագործման կամ բիզնեսի ընդլայնման համար:

ՀՀ-ում այլընտրանքային ֆինանսավորման վերաբերյալ բիզնես ներկայացուցիչների ընկալումները, ինչպես նաև ֆինանսավորման հետ կապված նախընտրություններն ու խոչընդոտները վերլուծելու նպատակով մեր կողմից իրականացվել է հարցում 100 ՓՄՁ ներկայացուցիչների շրջանում: Հարցմանը մասնակցածների 71%-ը նշել է, որ այս պահին ունի խիստ ֆինանսավորման կարիք, 24%-ը նշել է, որ չունի ֆինանսավորման կարիք, իսկ 5%-ը դժվարացել է պատասխանել:



Գծապատկեր 2. Այլ ընտրանքային ֆինանսավորման ծավալները մեկ շնչի հաշվով 2018թ.–ի առաջատար 20 երկրներ (ԱՄՆ դոլար)[11]:

Հարցվածների 41 տոկոսն իր գործունեության ընթացքում գոնե մեկ անգամ դիմել է բանկ կամ վարկային կազմակերպություն՝ ֆինանսավորում ստանալու նպատակով, սակայն եղել են դեպքեր, երբ հայտը չի բավարարվել՝ պայմանավորված ցածր վարկունակությամբ, լավ վարկային պատմության բացակայությամբ, գրավադրման պահանջների չկատարմամբ և այլ հանգամանքներով:

Միաժամանակ կարելի է նշել, որ չնայած ՀՀ-ում, որպես ֆինանսավորման կառույցների, նախընտրություն են տալիս բանկերին և վարկային կազմակերպություններին, քանի որ դրանք առավել վստահելի են և փորձված, այնուամենայնիվ ՓՄՁ-ների գերակշիռ մասը (63%) ունի վարկավորան հետ կապված բազմաթիվ խոչընդոտներ. վարկերի բարձր տոկոսադրույքները, միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությունը, վարկային երաշխիքների և գրավի տրամադրման հետ կապված դժվարություն-

[11] The global alternative finance market benchmarking report, Cambridge center for alternative finance, april 2020

ները, վարկատու կազմակերպություններում դիմումների և բիզնես պլաններ քննարկման ծանր ընթացակարգը, ինչպես նաև ոլորտի զարգացման համար անհրաժեշտ այլընտրանքային ֆինանսական գործիքների անկատարությունը կամ իսպառ բացակայությունը:

Հարցվածների գերակշիռ մասը այլընտրանքային ֆինանսավորում ասելով հասկանում է միջազգային կամ տեղական կազմակերպություններից ստացվող դրամաշնորհները: Հարցմանը մասնակցած ՓՄՁ ներկայացուցիչների միայն 27%-ն է պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում քրաուդֆանդինգը և միայն 2%-ն է ունեցել ներգրավվածություն քրաուդֆանդինգի միջոցով ֆոնդհայթայթման նախագծի, այն էլ բարեգործական նպատակով:

Ինչպես ցույց տվեցին մեր կողմից կատարված ուսումնասիրությունները, նկատվում է ՓՄՁ ներկայացուցիչների շրջանում ֆինանսավորման այլընտրանքային մեթոդների մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն, քանի որ առկա պայմաններում ՓՄՁ ոլորտում ֆինանսավորման գլխավոր աղբյուրներ շարունակում են մնալ ավանդական կառույցները (բանկ, վարկային կազմակերպություն):

Մի խումբ խնդիրներ պայմանավորված են օրենսդրական դաշտի անկատարությամբ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ քրաուդֆանդինգ հասկացությունը, և առցանց հարթակներում դրամահավաքների կազմակերպումը չի իրականացվում համաձայն հստակ սահմանված որևէ ընթացակարգի և կանոնների: Միաժամանակ նկատվում է նաև քրաուդֆանդինգային դրամահավաքների (հատկապես նվիրատվությունների) հաշվետվողականության բարձրացման անհրաժեշտություն, քանի որ ներդրողների համար հույժ կարևոր է հետադարձ կապի ապահովումը և թափանցիկությունը:

Հարկ է հավելել, որ բաժնեմասային և շահաբաժինների վրա հիմնված քրաուդֆանդինգի տեսակների դեպքում ներդրումների ետգնման ժամկետը բավականին երկար է, իսկ մեր երկրում ներդրողների կողմից ավելի նախընտրելի են կարճաժամկետ ներդրումները:

Հետաքրքրական է, որ ՀՀ-ում մարդկանց փոքր խմբերի շրջանում լայնորեն տարածված է «խնայողական ֆոնդերի» ձևավորումը և ըստ անհրաժեշտության՝ խմբի անդամներին հերթով տրամադրումը: Այս գործընթացի էությունն այն է, որ պայմանավորվածությամբ որոշակի ժամանակահատվածում ֆոնդում գումար են ներդնում տվյալ խմբի բոլոր անդամները, և ընթացիկ ամսվա ամբողջական «ֆոնդ»-ը տրամադրվում է անդամներից որևէ մե-

կին: Մեր կարծիքով՝ մոդելը կիրառելի է նաև ՓՄՁ-ների դեպքում: Այսպիսի մոդելի գործարկումը թույլ կտա ՓՄՁ ներկայացուցիչներին կանխիկ դրամական միջոցների սղության պարագայում ֆինանսավորում ստանալ ՓՄՁ-ների ընդհանուր «խնայողական ֆոնդ»-ից՝ հաջորդ ամիսների ընթացքում սահմանված մասնաբաժնի չափով ֆոնդում ներդրում կատարելու նախապայմանով: Այսօրինակ քրաուդֆանդինգային նոր տեսակը լիովին ընդունելի է հայաստանյան իրականությունում և արդյունավետ կգործի նաև բիզնես միջավայրում:

Այսպիսով, քրաուդֆանդինգը՝ որպես ֆինանսավորման գործիք, աշխարհում ունի արագընթաց զարգացման միտում: Այնուամենայնիվ, Հայաստանում այս գործընթացն ավելի դանդաղ է ընթանում՝ տարբեր հանգամանքներով պայմանավորված: Նկատվում է օրենսդրական կանոնակարգերի մշակման և ֆոնդհայթայթման մասնակիցների նկատմամբ վերահսկողության սահմանման անհրաժեշտություն: Անհրաժեշտ է ստեղծել ներդրողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ և ֆոնդհայթայթման ընթացակարգեր, ինչը կնպաստի ոլորտի նկատմամբ վստահության բարձրացմանը և ներդրումների ծավալի աճին:

ՀՀ-ում քրաուդֆանդինգի մշակույթի ձևավորման համար մեծ նշանակություն կունենա դրա հարմարեցումը հայաստանյան պայմաններին: Որպես նմուշ կարող է ծառայել մարդկանց փոքր խմբերում արդեն իսկ գործող «խնայողական ֆոնդերը», որոնք կարող են գործել նաև ՓՄՁ-ների շրջանում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Alternative Lending report 2021, Statista Digital Market Outlook
2. Access by MSMEs to Finance in the Southern and Eastern Mediterranean: What role for credit guarantee schemes?, Rym Ayadi and Salim Gadi, MEDPRO Technical Report No. 35/April 2013
3. Global crowdfunding market Size, Status And Forecast 2022, Big market research
4. MSME finance gap, World bank group, 2017
5. Schroter W. Top 10 Business Crowdfunding Campaigns Of All Time /Forbes.-2014.-April 16
6. SME finance in developing countries – recent findings, Thorsten Beck

7. The global alternative finance market benchmarking report, Cambridge center for alternative finance, april 2020
8. Understanding Crowdfunding and its Regulations. How can Crowdfunding help ICT Innovation?, Garry A Gabison, Joint Research Centre, Luxembourg: Publications Office of the European Union, 2015.
9. ec.europa.eu
10. blog.fundly.com
11. www.fundable.com

CROWDFUNDING AS AN ALTERNATIVE WAY FOR INVESTING IN SMEs

MIRIBYAN ARPI
Head of GSU Student Scientific Council, 1st year
Master Student at the Department of Economics, Faculty of Economics
e-mail: arpimiribyan@gmail.com
Academic Supervisor: HOVEYAN ASTGHIK
GSU Lecturer

Like in many countries, in Armenia as well, financial investment for small and medium enterprises is one of the most serious challenges. Based on that, the innovative ways of procuring finances, such as crowdfunding, are growing more and more in many countries.

The aim of the article is to discuss and substantiate crowdfunding as an alternative way for investing in SMEs, its importance and meaning, analyze the factors hindering the usage of crowdfunding, as well as the perspectives of its development in Armenia.

Key words: *crowdfunding, crowdfunding platform, alternative funding, SME funding gap.*

КРАУДФАНДИНГ КАК АЛЬТЕРНАТИВНЫЙ МЕТОД ФИНАНСИРОВАНИЯ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА

МИРИБЯН АРПИ
Студентка магистратуры 1-ого курса отделении экономики экономического факультета,
председатель студенческого научного совета ГГУ
электронная почта: arpimiribyan@gmail.com
Научный руководитель: Овеян Астгик
Преподаватель ГГУ

Как и во многих странах, также и в Республике Армении привлечение средств является серьезной проблемой для малых и средних предприятий. В результате инновационные методы сбора средств, такие как краудфандинг, становятся все более популярными во многих странах.

Цель статьи - обсудить и обосновать важность и значение краудфандинга как альтернативного метода финансирования малого и среднего бизнеса, проанализировать факторы, препятствующие использованию краудфандингового финансирования в Республике Армения, а также перспективы развития.

Ключевые слова: *краудфандинг, краудфандинговая платформа, альтернативное финансирование, дефицит финансирования МСП, фондрайзинг.*

ԿՐԻՊՏՈԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ՇՐՋԱՌԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՓԻՆԵ
Վանաձորի պետական համալսարանի
հասարակական գիտությունների ֆակուլտետի
«Կառավարում» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ arpi.mkrtchyan2000@mail.ru
Գիտական ղեկավար՝ Բարսեղյան Նարինե
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Տնտեսական իրավիճակի բարդացումը տնտեսվարող սուբյեկտներին ստիպում է փնտրել գործարքների կնքման առավել ժամանակակից, հեշտ և նվազ ծախսատար տարբերակներ: Դրա արդյունքում, որպես գործարքների կնքման արդյունավետ և կատարելագործված եղանակներ, ի հայտ են եկել կրիպտոարժույթները, որոնք ներկայումս չափազանց արդիական են և կարևոր դեր են խաղում համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգում, քանի որ ունեն այնպիսի առավելություններ, ինչպիսիք են ֆինանսական գործարքների մեջ միջնորդների անհրաժեշտության վերացումը, ապակենտրոնացված համակարգի առկայությունը, փոխանցումների իրականացման նվազագույն վճարումները, գաղտնիության ապահովման երաշխավորված համակարգը և այլն: Չնայած այս առավելություններին՝ բազմաթիվ երկրներում կրիպտոարժույթները դեռևս իրավական կարգավորում չեն ստացել, քանի որ ունեն նաև մի շարք թերություններ, որոնցից են անանունությունը, հարկերից խուսափելու հնարավորությունը, անկայունությունը և այլն, որոնք էլ այս ոլորտը դարձնում են բարձր ռիսկային:

Սույն հոդվածում դիտարկվում են կրիպտոարժույթների շրջանառման վերլուծությունը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ-ում արդեն իսկ կան նախապայմաններ կրիպտոարժույթային շուկայի զարգացման համար:

Բանալի բառեր՝ *կրիպտոարժույթ, արժույթ, ապակենտրոնացված համակարգ, փոխարժեք, գործարք, տնտեսվարող սուբյեկտ, ռիսկայնություն:*

Մարդկության զարգացման ողջ պատմության ընթացքում տեղի են ունեցել քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալական և մշակու-

թային բազմաթիվ փոփոխություններ: Դիտարկելով տնտեսական բնույթի փոփոխությունները՝ ակնառու է դառնում փոխանակման գործընթացի ողջ էվոլյուցիան՝ բարտերային փոխանակումից մինչև դրամական և արտարժութային գործարքներ: Ստեղծված վիճակը թելադրեց փնտրել փոխանակման առավել կատարելագործված եղանակներ, որի արդյունքում վերջին տասնամյակում ի հայտ եկան կրիպտոարժույթները:

Կրիպտոարժույթը թվային կամ վիրտուալ արժույթ է, որը նախատեսված է որպես փոխանակման միջոց գործելու համար: Այն օգտագործում է գաղտնագրությունը՝ գործարքներն ապահովելու և ստուգելու, ինչպես նաև կրիպտոարժութային որոշակի նոր միավորների ստեղծումը վերահսկելու նպատակով (այդ պատճառով էլ անվանման մեջ օգտագործված է «կրիպտո»՝ գաղտնի տերմինը):

Կրիպտոարժույթները գործարքների կնքման առավել արդյունավետ եղանակներ են այն իմաստով, որ այստեղ բացակայում են այնպիսի ֆինանսական միջնորդները, ինչպիսիք են, օրինակ, բանկերը: Սա հնարավորություն է տալիս զերծ մնալ լրացուցիչ տրանսակցիոն ծախսերից, ինչը նշանակում է, որ փոխանակման այս եղանակը առավել նախընտրելի կլինի տնտեսվարողների կողմից: Հատկանշական է այն հանգամանքը, որ կրիպտոարժույթները հանդես են գալիս որպես ներդրումային գործիք: Դա նշանակում է, որ նրանց նկատմամբ հետաքրքրությունը գնալով աճում է: Իհարկե, բացի տարբեր դրական հատկանիշներից, կրիպտոարժույթներն ունեն նաև բացասական կողմեր, մասնավորապես Bitcoin-ը համարվում է 21-րդ դարի ֆինանսական խոշորագույն փուչիկ:

Անկախ դրական և բացասական հատկանիշներից՝ կրիպտոարժույթների շուկան ներկայումս ամենատարածվածներից է, կրիպտոարժույթները չափազանց արդիական են և կարևոր դեր են խաղում համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգում: Նրանք Հայաստանում դեռևս լայն տարածում չեն գտել, չնայած դրա համար առկա ներուժը, ըստ ֆինանսիստների, բավականին մեծ է: Ուստի համապատասխան քայլեր ձեռնարկելու միջոցով հնարավոր է այս ոլորտը զարգացնել Հայաստանում, որը, ենթադրվում է, կնպաստի տնտեսության աշխուժացմանը: Նշված հանգամանքներով էլ հիմնավորվում է սույն հոդվածում ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը:


Արժույթների նոր տեսակների՝ կրիպտոարժույթների ձևավորումը առաջացրեց նոր սոցիալական իրականություն: Կրիպտոարժույթները փոխեցին

մարդկանց ավանդական պատկերացումները փողի մասին: Ինչպես հայտնի է, արժույթը միշտ թողարկվում է պետության անունից առևտրային կամ պետական բանկի կողմից, նշանակում է՝ կենտրոնացված է, սակայն կրիպտոարժույթը ունի ապակենտրոնացված բնույթ, այսինքն՝ նրանց պաշարները և արժեքը վերահսկվում են ոչ թե կենտրոնական բանկերի կամ այլ կարգավորող մարմինների գիտակցված որոշումների, այլ նրանց օգտագործողների գործունեության, ինչպես նաև նրանց կառավարման կոդերի մեջ ներառված խիստ բարդ արձանագրությունների միջոցով: Ապակենտրոնացված վճարային համակարգը օգտվողներին տալիս է չափազանց մեծ ազատություն՝ շրջանցելով համաշխարհային ֆինանսական հաստատությունների և բանկերի պայմանները, գործարքներին հաղորդելով գաղտնիություն, որն էլ հրապուրում է մերօրյա ներդրողներին, ձեռներեցներին և պարզապես անհատներին:

Bitcoin-ն ի հայտ եկած առաջին, հիմնական և թերևս ամենահայտնի կրիպտոարժույթն է: Ներկայումս մեծ խնդիր է Bitcoin-ի՝ որպես ֆինանսական գործիքի կենսունակության և ապահովագրվածության հիմնավորումը: Այս հայեցակարգը ներմուծվել է Սատոշի Նակամոտոյի կողմից 2008թ. հոկտեմբերի 31-ին, և այն սկսել է տարածվել 2009թ.-ից:

Bitcoin-ը թողարկողի ինքնությունը թաքցնելու համար կան տարբեր դրդապատճառներ: Առաջինը գաղտնիությունն է, որի շնորհիվ Bitcoin-ը ձեռք է բերել ժողովրդականություն, դարձել համաշխարհային երևույթ: Եթե չլիներ այդ հանգամանքը, Սատոշի Նակամոտոն, ամենայն հավանականությամբ, մեծ ուշադրության կարժանանար լրատվամիջոցների և կառավարությունների կողմից: Մեկ այլ պատճառ կարող է լինել ներկայիս բանկային և դրամավարկային համակարգերում խոշոր խափանումներ առաջացնելու Bitcoin-ի ներուժը: Եթե Bitcoin-ը կիրառվեր զանգվածաբար, համակարգը կարող էր գերազանցել ազգային արժույթներին: Գոյություն ունեցող արժույթի այս սպառնալիքը կարող է դրդել կառավարություններին՝ դատական գործողություններ ձեռնարկելու Bitcoin-ի ստեղծողի դեմ: Հաջորդ պատճառը անվտանգության նկատառումներն են: Կարելի է եզրակացնել, որ Սատոշին և այլք արդեն իսկ մայնինգն իրականացրել էին մինչև 2009 թվականը, հետևաբար նրանք տիրապետում են մեծաքանակ bitcoin-ների: Եվ կանխատեսելի է, որ ինչ-որ մեկը, որը տիրապետում էր այդքան Bitcoin-ի, կարող էր դառնալ հանցագործների թիրախ [1]:

Bitcoin-ը թվային արժույթ է, արձանագրություն և ծրագրային ապահովում, որը ներառում է վայրկենական P2P գործարքներ, վճարումներ աշխարհով մեկ, գործարքների վերամշակման ցածր կամ զրոյական արժեք: Bitcoin-ն օգտագործում է P2P տեխնոլոգիա՝ առանց կենտրոնական կառավարման մարմնի գործունեության: Peer-To-Peer (P2P)-ը նշանակում է, որ ոչ մի կենտրոնական մարմին նոր փողի թողարկում չի կատարում և չի վերահսկում իրականացվող գործարքները: P2P գործարքները թույլ են տալիս կողմերին ուղղակիորեն, առանց որևէ կենտրոնական կառավարման մարմնի գործունեության իրականացնել կրիպտոփոխանակումներ, կատարել գնումներ կամ էլ պարզապես վաճառել ցանկացած արժեք [2]: Իր այս եզակի հատկությունների շնորհիվ Bitcoin-ը հնարավորությունների նոր հորիզոններ է բացում, որոնք նախկինում չեն ներկայացվել որևէ վճարային համակարգի կողմից:



Գծապատկեր 1. Bitcoin-ի փոխարժեքը դոլարի նկատմամբ 2010-2021թթ. [3]:

Bitcoin-ի գինը ստեղծման պահից ի վեր ենթարկվել է կտրուկ և անկանխատեսելի փոոխությունների: Սկզբնական շրջանում Bitcoin-ի գինը շատ փոքր էր, որը երկար ժամանակ մնում է անփոփոխ: 2009թ.-ի վերջին 1309 bitcoin-ը համարժեք էր 1$-ի: Սակայն արդեն 2010թ.-ին տեղի ունեցավ Bitcoin-ի առաջին իրական գործարքը, երբ Ֆլորիդայից մի ծրագրավորող 2 պիցցայի համար վճարեց 25$-ին համարժեք 10000 bitcoin: 2016թ. Bitcoin-ը

բավականին մեծ տարածում գտավ Չինաստանում. երբ պետական արժույթը արժեզրկվեց, այն հասավ 1140$-ի: Առաջին բումը եղավ 2017թ. վերջ-2018թ. սկզբին, երբ Bitcoin-ի գինը հասավ 20000$-ի: Զարմանալի չէ, որ Bitcoin-ի բլոկ շղթայում գործարքների թիվը հասավ օրական մոտ 400 000-ի: Աստիճանաբար Bitcoin-ի գինը սկսում է աճել, իհարկե, ժամանակ առ ժամանակ գնային անկումներ նույնպես նկատվում են [4]:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2018թ.-ի դեկտեմբերից սկսած՝ Bitcoin-ի գինն աստիճանաբար աճում է: Սա վկայում է այն մասին, որ Bitcoin-ի նկատմամբ հետաքրքրությունը գնալով աճում է, և այն գրավում է ավելի ու ավելի շատ ներդրողների:

Կրիպտոարժույթները ազդում են մարդկանց տնտեսական, քաղաքական, մշակութային և սոցիալական կյանքի վրա: Թվային փողը չի դառնում փոխարինող իրական արժույթին, բայց այն կարող է խթան դառնալ նոր արժութային համակարգի ձևավորման համար:

Կրիպտոարժույթների իրավական կարգավորումը լայն հասկացություն է և կարող է ներառել այնպիսի իրավական հարաբերություններ, ինչպիսիք են կրիպտոարժույթներով գործարքների իրականացումը, կրիպտոարժույթների սեփականության իրավունքը կամ կրիպտոարժույթների դիտարկումը որպես հարկման օբյեկտ և այլն: Ասվածից հետևում է, որ ներկա պահին ՀՀ իրավական համակարգում գոյություն չունեն այնպիսի իրավանորմեր, որոնք ուղղակիորեն կարգավորում են կրիպտոարժույթներին առնչվող հասարակական հարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրիպտոարժույթները հայաստանյան իրականությունում նոր երևույթ են, անհրաժեշտ է դառնում նրանց օրինական շրջանառման իրավական կարգավորումը հանրապետությունում: Չնայած այն հանգամանքին, որ կարգավորումը զարգացման ներկա պահին կարող է այդքան էլ պահանջարկված չլինել, այնուամենայնիվ, կրիպտոարժույթների հետ գործառնությունների և շուկայի կապիտալիզացիայի որոշակի չափի դեպքում դրա անհրաժեշտությունը կզգացվի:

Կրիպտոարժույթները ունեն մի շարք առավելություններ, որոնք կարող են հնարավորություն ընձեռել բլոկչեյն տեխնոլոգիաների զարգացման նպատակով ՀՀ-ում ազատ տնտեսական գոտի ստեղծելու համար: Այն կներգրավի նոր ներդրումներ, կնպաստի ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական նախագծերի զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը, որը կդառնա լրացուցիչ ազդակ երկրի տնտեսության զարգացման համար: Ասվածից հե-

տևում է, որ կրիպտոարժույթները ունեն մի շարք առավելություններ կամ խոստանում են բիզնես-հարմարավետություններ:

Ֆինանսական գործարքների մեջ միջնորդների անհրաժեշտության վերացում կամ ապակենտրոնացված համակարգի առկայություն: Կրիպտոարժույթների հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ գործարքները միջնորդավորված չեն, ինչպես ավանդական արժույթի դեպքում է: Գործարքը վավերացնող բանկի կամ այլ կենտրոնական հաստատության փոխարեն արժույթն օգտագործողները այն հիմնականում վավերացնում են ապակենտրոնացված ձևով: Քանի որ գործարքները, այլ կերպ ասած, «ձեռքից ձեռք չեն անցնում», ապա դա արագացնում է նրանց իրականացումը: Ապակենտրոնացված համակարգը լայնորեն ընդունվեց աշխարհում, քանի որ այն այլընտրանքային տարբերակ էր ԿԲ-ում գործող թերություններին և առկա անհարմարություններին, օրինակ՝ ֆինանսական գործիքների հասանելիության անհավասարությունը, բաժնետոմսերի հետ կապված ռիսկերը, թափանցիկության բացակայությունը և այլն:

Փոխանցումներն իրականացվում են նվազագույն վճարումներով, հաճախ նույնիսկ անվճար: Այս հանգամանքը հատկապես օգտակար է իրենց ընտանիքներին արտերկրից գումար ուղարկող արտագնա աշխատողների համար: Ներկայումս նրանք վճարում են միջինում շուրջ 9% միջնորդավճար՝ միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցով գումար փոխանցելու համար, իսկ կրիպտոարժույթների օգտագործմամբ նրանք դա կարող են իրականացնել նվազագույն վճարումներով կամ էլ գործնականում անվճար:

Գաղտնիության ապահովման երաշխավորված համակարգ: Այս ոլորտում անանունությունն ու գաղտնիությունը երաշխավորված են: Կրիպտոարժույթներից շատ օգտվողներ օգտագործում են կեղծանուններ, որոնք չեն մատնանշում որևէ տեղեկատվություն, հաշիվ կամ պահված տվյալներ, որոնք կարող են իրենց բացահայտել:

Կառավարության համար կրիպտոշրջանառությունը դժվար վերահսկելի ոլորտ է: Ռեպրեսիվ երկրներում ապրող քաղաքացիները հաճախ հայտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում, իսկ դա նշանակում է, որ կառավարությունները կարող են հեշտությամբ սառեցնել նրանց ներքին բանկային հաշիվները կամ էլ չեղարկել տեղական արժույթով կատարված գործարքները: Սա հատկապես մտահոգիչ հանգամանք է բռնապետական այնպիսի երկրներում, ինչպիսիք են Չինաստանը և Ռու-

սաստանը, որտեղ իշխող կուսակցության դեմ պայքարող մեծահարուստ անձինք հաճախ հայտնվում են կասկածելի ծագման լուրջ ֆինանսական և իրավական խնդիրների առջև: Սակայն կրիպտոարժույթները հիմնականում պաշտպանված են բռնապետական վարքագծից: Ապակենտրոնացումը խնդրահարույց է այն կառավարությունների համար, որոնք սովոր են օգտագործել ֆինանսական լծակներ՝ խնդրահարույց օլիգարխներին վերահսկելու համար [5]:

Ինչպես արդեն նշվեց, կրիպտոարժույթները ՀՀ-ում դեռևս իրավական կարգավորում չեն ստացել: ՀՀ ԿԲ-ն մշտապես հետևում է կրիպտոարժութային ոլորտի զարգացումներին և հիմք ընդունելով ու վերլուծելով միջազգային փորձը՝ նշում է, որ անկախ տեսակից, տարատեսակ բնութագրերից և տարածվածության աստիճանից՝ կրիպտոարժույթները, նրանց միջոցով որոշակի գործարքների կատարումը գնահատվում է բարձր ռիսկային ներքոհիշյալ մի շարք պատճառներով: Առանձնացնենք նրանցից մի քանիսը:

Անանունություն: Անանուն կողմերի միջև կրիպտոարժութային մի շարք գործարքների իրականացումը, տարատեսակ փոխանցումներն ու վճարումները դժվար հետապնդելի են: Այս հանգամանքն էլ կարող է դառնալ անօրինական, հանցավոր մի շարք գործողությունների հիմնական պատճառ: Անանուն, չհետապնդվող գործարքները բավականին նպաստավոր են ահաբեկչական կազմակերպությունների և այլ ապօրինությունների ֆինանսավորման համար:

Հարկերից խուսափելու հնարավորություն: Կրիպտոարժույթների առավել ընդգծված թերություններից է նրանց դուրս մնալը օրինական հարկային տիրույթից, որը պայմանավորված է ապակենտրոնացված բնույթով: Այսինքն՝ կրիպտոարժույթները չեն կարգավորվում ազգային կառավարությունների հարկաբյուջետային քաղաքականությունների կողմից և սովորաբար գոյություն ունեն նրանց անմիջական վերահսկողությունից դուրս, և դա, բնականաբար, գրավում է հարկերից խուսափողներին:

Ապահովագրված չեն և ունեն խիստ անկայուն բնույթ: Կրիպտոարժույթները հիմնականում կենտրոնացած են թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց ձեռքերում, ովքեր վերահսկում են նրանց պաշարները, շրջանառման քանակությունը, ինչն էլ անկայուն է դարձնում նրանց գները: Կրիպտոարժույթների գների աճը հնարավորություն է ընձեռում կարճաժամկետ ընթացքում ստանալ մեծ եկամուտներ: Ասվածի ամենավառ օրինակը Bitcoin-ն է, որի գինը վերջին շրջանում աճում է մեծ տեմպերով: Մասնավո-

րապես 2020թ.-ի հունվարի 1-ի դրությամբ 1 Bitcoin-ի գինը կազմել է $7.195, իսկ արդեն 2021թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ $28.944: Նշենք նաև, որ աճի տեմպը այժմ էլ պահպանվում է՝ սահմանելով ավելի ու ավելի բարձր փոխարժեքներ: Հենց այս փաստն էլ աստիճանաբար ավելի շատ վերավաճառողների է գրավում, որն էլ իր հերթին հանգեցնում է գների էլ ավելի մեծ աճի և գնային փուչիկների ձևավորմանը: Մյուս կողմից էլ կրիպտոարժույթների փոխարժեքի մեծ անկումը նրանց սեփականատերերին ստիպում է վաճառել իրենց կրիպտոարժույթը և գնել ավելի կայուն ավանդական արժույթներ կամ ապրանքներ, որոնք էլ հանգեցնում են կրիպտոարժույթի փոխարժեքների էլ ավելի նվազման: Այսինքն՝ հանգում ենք այն մտքին, որ անկայուն արժույթ ունենալ նշանակում է, որ բիզնեսը չի կարող արդյունավետ պլանավորում իրականացնել կամ բյուջե կազմել, և դա առաջացնում է քաոս, որը մեծացնում է գործարքների ռիսկայնությունը [5]:

Կրիպտոարժույթների թերություններից կարող ենք առանձնացնել նաև այն, որ նրանց կիրառությամբ սխեմաների մեծ մասում գոյություն չունեն իրավաբանորեն պատասխանատու սուբյեկտներ, ինչպես նաև խարդախության, տեղեկատվական անվտանգության խաթարմանն ուղղված հանցագործությունների դեպքերում բացակայում են հաճախորդների օրինական շահերի պաշտպանության ապահովման կամ վերջիններիս կրած վնասի փոխհատուցման իրավական մեխանիզմները, որի հետևանքով կարող են ոտնահարվել սպառողների շահերը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ԿԲ-ն զգուշացնում է առկա, իրական ռիսկերի մասին և հորդորում է հասարակությանը, հատկապես տնտեսվարող սուբյեկտներին զերծ մնալ «կրիպտոակտիվների» փոխանակման և առքուվաճառքի, նրանցով վճարումների ընդունման, ներդրումների իրականացման կամ այլ գործարքների իրականացումից: Սակայն դա չի վերաբերում «կրիպտոակտիվների» ստեղծմանը և արդյունահանմանը՝ «մայնինգ»-ին, որը գտնվում է ՀՀ ԿԲ-ի կարգավորման և վերահսկողության լիազորություններից դուրս և դիտարկվում է որպես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդյունաբերություն [6]:

ՀՀ-ում ներկայումս արդեն իսկ գործում են կրիպտոարժույթի վաճառքով զբաղվող մի շարք կազմակերպություններ և անհատներ: Թե՛ ՀՀ-ում, թե՛ ՀՀ-ից դուրս խոշոր գործարարներն այս ոլորտում մեծ ներդրումներ են կատարում, մասնավորապես ձեռք են բերում կրիպտոարժույթ, հիմնում են կրիպտարժույթի մայնինգ ֆերմաներ և այլն: Նման մայնինգ ֆերմաներ՝

փոքր հզորություններով, ՀՀ-ում վաղուց գործում են: Այս ֆերմաների բիզնես գործունեության բնութագրիչ գծերից է մեծ էներգատարությունը և սարքավորումների արագ մաշվածությունը: ՀՀ-ում էլեկտրոնային տարադրամի փոխանակման ոլորտ առաջինը մուտք է գործել «TETCHANGE» ընկերությունը, որը հիմնադրվել է 2015 թվականին Երևանում: 2018թ.-ին Երևանում հիմնադրվեց աշխարհում առաջին շարժական փոխանակման կետը՝ կրիպտոավտոբուսը: «TETCHANGE» ընկերության համար կարևոր է էլեկտրոնային արժույթի և տեխնոլոգիաների զարգացումը, այդ իսկ պատճառով էլ նրանք ստեղծել են ՀՀ-ում էլեկտրոնային արժույթների զարգացմանը նպատակաուղղված «ADECA» ասոցիացիան [7]: Նշենք նաև, որ 2018թ.-ին «Օմնիա Թեք» ընկերության և «Մուլտի Գրուպ» կոնցեռնի համագործակցությամբ ՀՀ-ում կառուցվեց տարածաշրջանում խոշորագույն մայնինգ ֆերման, որտեղ տեղադրված 150հզ. համակարգիչ պետք է ամսական արտադրեն 35 Bitcoin [8]:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ ՀՀ-ում արդեն իսկ առկա են նախապայմաններ կրիպտոարժութային շուկայի զարգացման համար, ուստի անհրաժեշտ է զբաղվել շուկայի խորքային ուսումնասիրմամբ, կատարել վերլուծություններ, քննարկել նրանց իրավական կարգավորման հարցը և ստեղծել բարենպաստ միջավայր ՀՀ կրիպտոարժութային շուկայի զարգացման և համաշխարհային կրիպտոարժութային շուկային ինտեգրման համար:

Տարբեր մասնագիտական կարծիքների և տեսակետների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հայաստանը «կրիպտո Շվեյցարիայի» վերածվելու հնարավորություն ունի, որն էլ թույլ կտա մեր երկրում բացել կրիպտոարժույթների փոխանակման գրասենյակներ, բորսաներ, կանխիկացման կետեր, իսկ դա իր հերթին կաշխուժացնի տնտեսության այլ ճյուղեր, ու երկիր կհոսեն հարյուր միլիոնավոր դոլարներ, կբացվեն նոր աշխատատեղեր:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.investopedia.com/terms/b/bitcoin.asp
2. https://eprint.iacr.org/2016/824.pdf
3. https://www.buybitcoinworldwide.com/price/
4. https://www.finance-monthly.com/2018/01/a-brief-history-of-bitcoin-in-10-years/
5. https://www.moneycrashers.com/cryptocurrency-history-bitcoin-alternatives
6. https://visitorcentre.cba.am

7. https://tetchange.com/about
8. https://armtimes.com/hy/article/146968

THE ANALYSIS CIRCULATION AND DEVELOPMENT PROSPECTS OF CRYPTO CURRENCY IN THE REPUBLIC OF ARMENIA

MKRTCHYAN ARPINE
3rd-year student of the Department of Management,
Faculty of Social Sciences, VSU
e-mail: arpi.mkrtchyan2000@mail.ru
Academic Supervisor: Barseghyan Narine
PhD in Economics, Associate Professor

The aggravation of economic situation forces the economic entities to look for more contemporary, easy and cost-effective ways for concluding transactions. As a result, crypto currencies have emerged as an effective and improved way of concluding transactions. Now crypto currencies are extremely up-to date and they play an important role in the global financial and economic system, as they have such advantages as eliminating the need of middlemen in financial transactions, the existence of a decentralized system, minimum payments for transfers, guaranteed privacy system, etc. Despite these advantages, in many countries crypto currencies haven't been legally regulated yet, as they have a number of disadvantages, such as anonymity, chance for tax evasion, instability, etc., which make this sector highly risky.

This article discusses the analysis of crypto currency circulation and development prospects in the Republic of Armenia, based on the fact that there are already preconditions for the development of the crypto currency market in the Republic of Armenia.

Key words: *crypto currency, currency, decentralized system, exchange rate, transaction, economic entity, risk.*

АНАЛИЗ ОБОРОТА И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ КРИПТОВАЛЮТЫ В РА

МКРТЧЯН АРПИНЕ
Студентка 3 курса отделения «Менеджмент»,
факультета социальных наук ВГУ
электронная почта: arpi.mkrtchyan2000@mail.ru
Научный руководитель: Барсегян Нарине
Кандидат экономических наук, доцент

Осложнение экономической ситуации вынуждает хозяйствующие субъекты искать более современные, простые и менее расходные варианты заключения сделок. В итоге появилась криптовалюта, которая является продуктивным и усовершенствованным вариантом заключения сделок. Криптовалюта в настоящее время очень актуальна и играет важную роль в мировой финансово-экономической системе, поскольку у неё такие преимущества, как устранение необходимости в посредниках при финансовых сделках, наличие децентрализованной системы, осуществление минимальных платежей за переводы, гарантированная система обеспечения конфиденциальности и т. д. Несмотря на эти преимущества, во многих странах криптовалюта пока ещё не получила правового регулирования, поскольку она имеет ряд таких недостатков, как анонимность, возможность уклонения от уплаты налогов, нестабильность и т. д., которые и делают эту сферу рискованной.

В этой статье рассматривается анализ оборота криптовалюты и перспективы его развития в РА. Автор ссылается на то обстоятельство, что в РА уже есть предварительные условия для развития криптовалютного рынка.

Ключевые слова: *криптовалюта, валюта, децентрализованная система, валютный курс, сделка, хозяйствующий субъект, риск.*

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

ԳԱՓՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»
բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ gapoyanlusine@gmail.com
Գիտական ղեկավար՝ Բաղդասարյան Արեգ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Բանկերը կարևոր դեր են խաղում շուկայական տնտեսության մեջ խնայողությունների և ներդրումների արդյունավետ տեղաբաշխման գործում և կարևոր են ամբողջ ֆինանսական համակարգի կայունության համար: Քանի որ բանկերը ռիսկի են դիմում այդ գործառույթն իրականացնելիս, նրանք կարող են ձախողվել և, հնարավոր է, սնանկանալ: Երբ դա տեղի է ունենում, ավանդատուները կորցնում են իրենց խնայողությունները, որը կարող է կործանարար հետևանքներ ունենալ հասարակության վստահության վրա ամբողջ բանկային համակարգի նկատմամբ: Վերջինս հաշվի առնելով՝ բանկերի կարգավորման և վերահսկման համար սահմանվում են չափանիշներ:

Հոդվածի հիմնական նպատակն է ներկայացնել բանկային համակարգի կարգավորման և վերահսկողության միջազգային փորձը, առանձին ուսումնասիրվել է Off-site (հեռակա) և on-site (տեղում ստուգումների միջոցով) վերահսկողության տեսակները և ռիսկերի վրա հիմնված վերահսկողության անհրաժեշտությունը, կիրառումը ՀՀ -ում և դրա արդյունավետությունը:

Բանալի բառեր՝ *բանկային համակարգի կարգավորում, վերահսկողություն, ռիսկերի վրա հիմնված վերահսկողություն, բազելյան հիմնական սկզբունքներ, ռիսկերի կառավարում:*

Բանկային համակարգի կայունությունն ապահովելու համար սահմանվում են հստակ չափանիշներ, ստանդարտներ, որոնք մշակվում են միջազգային մակարդակում և շատ երկրներում վերափոխվում են ազգային

օրենսդրության: Կարգավորումը և վերահսկողությունը միասին կազմում են բանկային ոլորտի հսկողության հիմնական մասը: Բանկային կարգավորողները սահմանում են կանոններ, որոնց բանկերը պետք է համապատասխանեն: Բանկային շուկաների գլոբալիզացիան էական մարտահրավերներ է առաջացնում սահմանային վերահսկողական համագործակցության և տեղեկատվության փոխանակման համար, և հետևաբար վերահսկողները պետք է հիմնվեն փոխադարձ վստահության և փոխըմբռնման, ինչպես նաև գաղտնիության վրա: Այդ նպատակով անհրաժեշտ են համաշխարհային ստանդարտներ ինչպես բանկային վերահսկողության, այնպես էլ ֆինանսների այլ ոլորտներում:

Բանկային վերահսկողությունը երկու հիմնական պարտականություն ունի՝

հասարակության նկատմամբ՝ նպատակ ունենալով ապահովել ֆինանսական կայունություն և բանկային համակարգի առողջություն, դրանով իսկ աջակցելով ազգային տնտեսությանը,

ֆիզիկական անձանց, ավանդատուների և պարտատերերի նկատմամբ՝ նրանց իրավունքները պաշտպանելու համար:

Միջազգային պրակտիկայում բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն մշակել է գլոբալ կարգավորման ստանդարտներ բանկերի համար և ձգտում է ուժեղացնել միկրո և մակրո պրուդենցիալ վերահսկողությունը: 2010թ. տարեվերջին կոմիտեն հրապարակեց բանկերի կապիտալի և իրացվելիության պահանջների խստացմանն ուղղված փաստաթղթերի փաթեթ, որը հայտնի է Բազել- 3 անվանումով:

Բազել-3-ը միջազգայնորեն համաձայնեցված միջոցառումների շարք է, որը մշակվել է ի պատասխան 2007-09 թվականների ֆինանսական ճգնաժամի: Միջոցառումների նպատակն է ուժեղացնել բանկերի կանոնակարգումը, վերահսկողությունը և ռիսկերի կառավարումը:

Բազելյան կոմիտեն առանձնացնում է հետևյալ գործոնները, որոնք ընկած էին ճգնաժամի հիմքում, և որոնց կարգավորմանը, ըստ էության, ուղղված է Բազել 3-ը.

նորմատիվային կապիտալի ցածր մակարդակի պայմաններում բանկերի հաշվեկշռային և արտահաշվեկշռային ակտիվների չափազանց մեծ ծավալների առկայություն,

բանկերի նորմատիվային կապիտալի որակի և մակարդակի աստիճանական անկում, կապիտալի տարրերի՝ վնասները կլանելու ոչ բավարար ունակություն,

իրացվելիության ոչ բավարար մակարդակ,

այլ խնդիրներ կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և շուկայի թափանցիկության բնագավառներում:

Ըստ Բազել 3-ի՝ բանկի նորմատիվային կապիտալը պետք է բաղկացած լինի հետևյալ տարրերից՝

1)Tier 1 կապիտալ (going-concern), որը ներառում է՝

ա/ կանոնադրական կապիտալը (Common Equity Tier 1 (CET1)),

բ/ լրացուցիչ կապիտալը (Additional Tier 1 (AT1)) :

2) Tier 2 կապիտալ (gone-concern)

Կապիտալի վերոնշյալ տարրերի համար (նվազեցումներից հետո) սահմանվում են հետևյալ նվազագույն սահմանաչափերը՝

CET1-ի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը պետք է կազմի առնվազն 4.5%,

Tier 1-ի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը պետք է կազմի առնվազն 6.0%,

Ընդհանուր կապիտալի (Tier 1 կապիտալ + Tier 2 կապիտալ) և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը պետք է կազմի առնվազն 8.0%:

Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեն սահմանել է արդյունավետ բանկային վերահսկողության հիմնական սկզբունքները: Կոմիտեն հրապարակեց հիմնական սկզբունքները՝ որպես իր ներդրումը համաշխարհային ֆինանսական համակարգի ամրապնդման գործում: Վերանայված 29 հիմնական սկզբունքները անհրաժեշտ են վերահսկողական համակարգի արդյունավետության համար: Այդ սկզբունքներն ընդհանուր առմամբ դասակարգվում են երկու խմբի. առաջին խումբը (1-13-րդ սկզբունքներ) կենտրոնանում է վերահսկողի լիազորությունների, պարտականությունների և գործառույթների վրա, իսկ երկրորդ խումբը (14-29-րդ սկզբունքներ) կենտրոնացած է բանկերի համար նախապահպանական կանոնակարգերի և պահանջների վրա:

Հատուկ ուշադրություն է դարձվում հիմնական սկզբունքների նախապահպանական պահանջներին[1]: Դրանք ներառում են բոլոր բանկերի համար կապիտալի նվազագույն պահանջների սահմանումը և ռիսկերի կառավարման հետ կապված՝ բանկերի քաղաքականության, պրակտիկայի և ընթացակարգերի՝ վերահսկողների կողմից գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունում բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է կենտրոնական բանկին[2]:

Բանկային համակարգում վերահսկողության տարածված մեթոդներից են Off-site (հեռակա) և on-site (տեղում ստուգումների միջոցով) վերահսկողության տեսակները:

Off-site վերահսկողությունն ունի երեք հիմնական նպատակ.

վերահսկել առանձին բանկերի ռիսկի զարգացումը և մակարդակները,

վերահսկել բանկերի համապատասխանությունը պրուդենցիալ սահմանների հետ,

ապահովել վերահսկողական ռեսուրսների առաջնահերթ մուտքերը և ստուգումների պլանավորումը:

On-site վերահսկողությունն ունի 2 հիմնական նպատակ.

Թույլ է տալիս վերահսկողին ավելի լավ հասկանալ անհատական բանկի բիզնեսը և ռիսկերը, նրա ռիսկերի նկարագիրը և թե որքանով են որակավորված նրա ղեկավարությունն ու աշխատակազմը:

Թույլ է տալիս համոզվել, որ կարգավորման դաշտը ճիշտ է իրականացվում, և որ բանկերը կառավարվում և կազմակերպվում են պատշաճ ու առողջ կերպով՝ ներառյալ ռիսկերի կառավարման շրջանակը:

Off-site և on-site վերահսկողությունները միմյանց փոխլրացնում են, բայց off-site վերահսկողությունը ավելի լավ կառավարում է վերահսկողական գործընթացի քանակական տարրերը, իսկ on-site վերահսկողությունը հիմնական շեշտը դնում է որակական ցուցանիշների վրա:

Ռիսկերի վրա հիմնված վերահսկողական մոտեցմամբ ռիսկերի կառավարումը բանկային վերահսկողի կողմից վերահսկվող հիմնական ոլորտն

[1] Basel Committee on Banking Supervision, Core Principles for Effective Banking Supervision, September 2012.

[2] «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 30.06.1996թ. :

է[3]: Ռիսկերի կառավարման ծրագրերը կարող են զգալիորեն տարբեր լինել՝ կախված բանկի չափից և դրա կրած ռիսկերի մակարդակից:

Ռիսկի վրա հիմնված վերահսկողության մոտեցմամբ վերահսկողը պահանջում է, որ բանկի ղեկավարությունը ավելի շատ շեշտ դնի ընթացակարգերի և ներքին հսկողության գործառույթների վրա, որոնք բանկին հնարավորություն կտան կայուն մնալ և շարունակել գործել բանկի ավանդատուների, նրա վարկատուների օգուտը և ֆինանսական կայունությունը ապահովելու համար:


Ընդհանուր առմամբ ռիսկի վրա հիմնված վերահսկողությունը (RBS) աստիճանաբար դառնում է գերիշխող մոտեցում ամբողջ աշխարհի ֆինանսական հաստատությունների կարգավորող վերահսկողության նկատմամբ: Դա համապարփակ, պաշտոնապես կառուցվածքային համակարգ է, որը գնահատում է ռիսկերը ֆինանսական համակարգի ներսում՝ առաջնահերթություն տալով այդ ռիսկերի լուծմանը:

2018 թվականի հունվարին ԿԲ-ն պաշտոնապես ընդունեց իր՝ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության (RBS) ծրագիրը, չնայած ծրագիրը մշակվում էր արդեն երեք տարի: Ռիսկի վրա հիմնված վերահսկողության շրջանակը նախատեսված է ավելի հեռանկարային գնահատել ռիսկերը և դրանց ազդեցությունը կապիտալի և իրացվելիության վրա:

Հաշվի առնելով զարգացող ֆինանսական համակարգը, ռիսկի աղբյուրների նոր տեսակները, ինչպես նաև Բազելյան կոմիտեի առաջարկած նոր սկզբունքներն ու մոտեցումները՝ օրենքներում և կանոնակարգերում տեղի են ունեցել էական փոփոխություններ, որոնք ԿԲ-ին ճկունություն են ապահովում՝ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության վարման և կիրառման համար: Նշանակալից առաջընթաց է գրանցվել կանոնակարգերը և ընթացակարգերը կորպորատիվ կառավարման լայնորեն ընդունված ստանդարտներին հարմարեցնելու հարցում: Կանոնակարգերը պահանջում են, որ բանկերը ունենան էական տարրեր՝ ռիսկը համակողմանիորեն ճանաչելու և կառավարելու համար՝ ներառյալ սթրեսի փորձարկման հնարավորությունները և ներքին կապիտալի համարժեքության գնահատման գործընթացները (ICAAP):

[3] Michael Olsen- Banking supervision, European experience and russian practice, page 30:

Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական համակարգի հիմնական մասնակիցն է, որը կազմում է ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների 83,5 տոկոսը: Ինչպես տեսնում ենք գծապատկերում, 2010 թվականից սկսած՝ բանկային համակարգի ակտիվներ /ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կայուն կերպով աճել է, սակայն որոշակի նվազման միտում է գրանցվել 2015 թվականին՝ 1,8 և 2,9 տոկոսային կետով և կազմել է՝ 68,5% և 39,8%, որից հետո գրանցվել է աճի միտումներ: 2020 թվականին բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ և բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ աճել են 19,2 և 11,1 տոկոսային կետով և կազմել 108,2 % և 63,2 %[4]:



Գծապատկեր 1. Բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ:

Ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանվել է հիմնական և հատուկ տնտեսական նորմատիվներ, որոնք բավարարում են Բազել-3-ով սահմանված պահանջներին:

Գործող բանկի կանոնադրական կապիտալի նվազագույն չափը հիսուն միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ է: Բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է երեսուն միլիարդ (30.000.000.000) Հայաստանի Հանրապետության դրամ:

[4] ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն:

Բանկի ընդհանուր կապիտալը նրա հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է համապատասխան պակասեցումները կատարելուց հետո:

Կենտրոնական բանկը բանկերի համար սահմանում է կապիտալի համարժեքության նորմատիվները.

Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) 2020 թվականի հունվարի 1-ից սահմանվում է 10 տոկոս:


Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն12 նորմատիվ) սահմանվում է 12 տոկոս:


Ներկայիս համավարակը բանկային համակարգում բնականաբար ունենում է իր բացասական ազդեցությունը, սակայն կապիտալի համարժեքության և իրացվելիության առկա մակարդակը բավարար նախադրյալներ է ստեղծում ճգնաժամը դիմագրավելու համար:

Նշենք, որ բանկային համակարգը մշտապես բնութագրվել է պահանջվող նվազագույն սահմանաչափից բավականին բարձր կապիտալի համարժեքության ցուցանիշով, որը վկայում է ոչ միայն բանկերի կողմից տնտեսության վարկավորման, այլ նաև կորուստների կլանման հնարավորությունների առկայության մասին: Հնարավոր կորուստների կլանման կարողությունը գնահատելու համար իրականացվում են սթրես-թեստեր (Pillar 2), որոնք պետք է նախատեսեն բանկերի վարկային պորտֆելների որակի վատթարացումը ճգնաժամային պայմաններում, որը ևս սահմանված է Բազելյան կոմիտեի կողմից:

2020 թվականի մայիսին ԿԲ խորհուրդը հիմնական կապիտալի համարժեքության նորմատիվը 10%-ից դարձրել է 9%, այսպիսով բանկերին հորդորել է կիրառել խելամիտ մոտեցումներ[5]: Փոփոխության արդյունքում բանկերը հնարավորություն են ստացել կապիտալի կառուցվածքում ավելացնելու լրացուցիչ կապիտալի տեսակարար կշիռը՝ մեծացնելով տնտեսության լրացուցիչ վարկավորման և կորուստները կլանելու հնարավորությունը:

[5] ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020 թվական 1-ին կիսամյակ, 2020, էջ 34:





Գծապատկեր 2. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները 2012-2020թթ. ընթացքում[6]:

Ինչպես տեսնում ենք գծապատկերում, 2012-2020 թվականների ընթացքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը փոփոխվել է: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2014 թվականին՝ 14.50%, իսկ ամենաբարձր ցուցանիշը՝ 2016 թվականին և կազմել 19.95%: Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը 2020թ.-ին կազմել է 16,93%, որը 2016թ.-ի համեմատությամբ նվազել է 3.02%-ով:

Կենտրոնական բանկը բանկերի համար սահմանում է իրացվելիության հետևյալ նորմատիվները.

[6] ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն:


բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն՝ Ն21)՝ 15%,

բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն՝ Ն22)՝ 60%:

ՀՀ բանկային համակարգն ունի իրացվելիության բարձր մակարդակ: 2012-2020 թվականների ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության ցուցանիշները անընդհատ փոփոխվել են: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016 թվականին՝ 32.46%, այնուհետև նվազել է և 2020 թվականին կազմել է 25.62%:

Ընթացիկ իրացվելիության ամենաբարձր ցուցանիշը նույնպես եղել է 2016 թվականին, որը 2012 թվականի համեմատությամբ ավելացել է 44.72 տոկոսային կետով: Այնուհետև ընթացիկ իրացվելիության ցուցանիշները կտրուկ նվազել են և 2020 թվականին կազմել են 108,80%:

Կորոնավիրուսային համավարակի տարածման սկզբնական փուլում, մասնավորապես 2020 թվականի ապրիլին տեղի է ունեցել ներգրաված ավանդների ծավալների որոշակի նվազում, այնուհետև ավանդների ծավալներն աստիճանաբար վերականգնվել են մինչհամավարակային մակարդակ: Այդ ժամանակահատվածում բանկային համակարգի իրացվելիության մակարդակն էապես չի փոփոխվել: Ինչպես տեսնում ենք, 2021 թվականի հունվարին ներգրաված ավանդների ծավալները 2020 թվականի դեկտեմբերի համեմատությամբ նվազել են 172081 մլն դրամով:



Գծապատկեր 3. Առևտրային բանկերի ներգրավված ավանդների ծավալները 2020-2021թթ. հունվարի դրությամբ (մլրդ դրամ):

ԿԲ համապատասխան ազդակներ է փոխանցել բանկերին՝ ձևավորված կապիտալի բուֆերները օգտագործելու և վարկավորումը շարունակելու ուղղությամբ: 2020 թվականի հունվարից գործում են կապիտալի պահպանման և համակարգային բուֆերները՝ յուրաքանչյուրը ռիսկով կշռված ակտիվների 0,5%-ի չափով: Կապիտալի հակացիկլիկ բուֆերը սահմանված է 0%: Ռիսկերը կլանելու ունակության տեսանկյունից՝ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը բնութագրվում է բարձր որակական կառուցվածքով. հիմնական կապիտալի (Tier 1) տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում կազմում է 86,7%:

Կապիտալի պահպանման բուֆերի նպատակն է բանկերին ստիպել ձևավորել կապիտալի ավելցուկային բուֆերներ ոչ ճգնաժամային իրավիճակներում, որոնք կարող են օգտագործվել բանկի կողմից ճգնաժամային իրավիճակներում[7]:

Վերջին մեկ տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային պորտֆելը աճել է, որին նպաստել են ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճը, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 109.4 մլրդ դրամ (6,9%) և 87,1 մլրդ դրամ (4,8%):


[7] Ա. Մ. Բաղդասարյան, Բանկային գործունեության կարգավորում, Եր., 2020, էջ 26:

Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճը պայմանավորված է ՀՀ Կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով իրականացվող ծրագրերը: Ծրագրի շրջանակներում գումարները տրամադրվել են դրամով, դրանով իսկ նպաստելով դրամայնացված սպառողական և հիփոթեքային վարկերի ծավալների աճին: Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի կազմում մեծ չափով աճել են հատկապես հիփոթեքային վարկերը, որը պայմանավորված է վճարված տոկոսների չափով եկամտահարկի հետ վերադարձով: Վարկային պորտֆելի կշիռը առևտրային բանկերի ակտիվներում վերջին տարիներին էական փոփոխության չի ենթարկվել և կազմում է շուրջ 60%:

Վարկերի աճի արդյունքում բանկային համակարգը բարելավել է շահութաբերության ցուցանիշները, մյուս կողմից, համավարակով պայմանավորված, հնարավոր կորուստները դեռևս չեն նյութականացել հավանական ամբողջ ծավալով:

Բանկային համակարգի ակտիվների (RoA) և կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները 2020 թվականին կազմել են համապատասխանաբար՝ 1,3% և 9%: Բանկային համակարգը 2012-2014 թվականների ընթացքում աշխատել է շահույթով, այնուհետև գրաֆիկից երևում է, որ 2015 թվականին բանկն աշխատել է վնասով, քանի, որ նախորդ տարիներին գրանցվել է վարկային պորտֆելի արագատեմպ աճ, իսկ արտարժութային վարկային պորտֆելի դեպքում՝ նաև նախորդ տարի դրամի արժեզրկման հետևանքով պարտքի բեռի ավելացումով[8], որն էլ հանգեցրել է վարկային պորտֆելի որակի վատացմանը, այնուհետև ցուցանիշները բարելավվել են և ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է 2019 թվականին՝ 1,5% և 10,3%:

[8] ՀՀ ԿԲ՝ ֆինանսականկայունությանհաշվետվություն 2015, 2016:



Գծապատկեր 4. Բանկային համակարգի շահութաբերությունը ըստ ակտիվների և կապիտալի 2012-2020թթ.[9]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ՀՀ կենտրոնական բանկը զգալի առաջընթացի է հասել բանկային վերահսկողության նկատմամբ իր մոտեցման մեջ՝ ընդունելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողության շրջանակը: Ռիսկերի նշված խմբերի օգտագործումը բանկային համակարգում նպաստում է բանկային համակարգից բխող ռիսկերի բացահայտմանը և վերահսկմանը: Բացի դրանից՝ կարգավորող ռեժիմում բարելավումներ են կատարվել՝ կապված ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման, երկրի ռիսկերի և համախմբված վերահսկողության պահանջների հետ: Կարելի է ասել, որ բարեփոխումները իրենց ազդեցությունն են ունեցել ազգաբնակչության շրջանում, քանի որ ավելացել է վերջիններիս վստահությունը բանկային համակարգի նկատմամբ:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցուց տվեցին, որ ՀՀ բանկային համակարգը առաջնորդվում է բազելյան սկզբունքներով: Ռիսկերը կառավարելու, դրանց՝ ժամանակին արձագանքելու համար սահմանվել են օրենքներ, կանոնակարգեր, ռիսկերի զսպման մեխանիզմներ, նորմատիվներ, որոնք բազելյան կոմիտեի կողմից սահմանված նորմատիվներից բավականին բարձր է: Չնայած COVID 19-ի առկայության, ՀՀ բանկային համա-

[9] ՀՀ ԿԲ՝ ֆինանսական կայունության ցուցանիշներ,2020:

կարգը ցուցաբերել է կապիտալի համարժեքության, իրացվելիության և վարկավորման ծավալների աճ:

Հաշվի առնելով աշխատանքում կատարված վերլուծությունները և եզրակացությունները՝ անում ենք հետևյալ առաջարկությունները՝

Ռիսկերի կառավարման համակարգում առկա բացերը լրացնելու, ինչպես նաև սթրես-թեստավորման գնահատումը ճշգրիտ իրականացնելու համար անհրաժեշտ է վերահսկողական դաշտի աշխատանքները իրականացնել նախնական փորձ կամ վերապատրաստում անցած անձանց կողմից:

Հաշվի առնելով համավարակով պայմանավորված ներկայիս անորոշությունները և ռիսկերի համակարգային բնույթը՝ հնարավոր է հետագայում դիտարկվի վարկային ռիսկի աճ, որն էլ կհանգեցնի կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջների խախտման: Ուստի անհրաժեշտ է, որ բանկերը շարունակեն պահպանել կապիտալի պահպանման բուֆերների սահմանված պահանջները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նորմատիվ իրավական ակտեր
2. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված 30.06.1996թ.:
3. «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ընդունված 30.06.1996թ.:
4. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020 թվականի 1-ին կիսամյակ, 2020թ., էջ 34:
5. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության հաշվետվություն 2015թ., 2016թ.:
6. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կայունության ցուցանիշներ, 2020թ.:
7. ՀՀ ԿԲ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն:

Մասնագիտական գրականություն

1. Ա.Մ. Բաղդասարյան, Բանկային գործունեության կարգավորում, Եր., 2020, էջ 26:
2. The Financial System Stability Assessment (FSSA) for the Republic of Armenia,2018 International Monetary Fund.
3. Republic of Armenia Financial sector assessment program detailed assessment of observance—Basel Core Principles for effective banking supervision, February 2019.

4. Michael Olsen- Banking supervision, European experience and russian practice, page 30.
5. Basel Committee on Banking Supervision, Core Principles for Effective Banking Supervision, September 2012.
6. Basel Committee (2000), “Principles for the Management of Credit Risk”, September 2012.

Համացանցայինաղբյուրներ

1. https://www.cba.am-ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք:
2. https://bis.org/- Bank for International Settlements.

INTERNATIONAL EXPERIENCE OF BANKING SYSTEM SETTLEMENT AND SUPERVISION

GAPOYAN LUSINE
1st-year MA student of "Finance, Money Circulation and Credit" Department, Faculty of Economics, GSU,
e-mail: gapoyanlusine@gmail.com
Academic Supervisor: Baghdasaryan Areg
PhD in Economics, Associate Professor
Lecturer, Gavar State University

Banks play an important role in the efficient placement of savings and investments in a market economy; they are important for the stability of the entire financial system. As banks run the risk of performing this function, they may fail and may go bankrupt. When this happens, depositors lose their savings, which can have a devastating effect on public confidence in the entire banking system. Taking into consideration the latter, criteria are set for the regulation and control of banks.

The main purpose of the article is to present the international experience of banking system regulation and supervision, separately studied off-site (correspondence) and on-site (through on-site inspections) types of management and the need for risk-based control, its application in the Republic of Armenia and its effectiveness.

Key words: *Banking system regulation, control, risks-based supervision, Basel core principles, risks management.*

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ РАСЧЕТОВ И КОНТРОЛЬ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ

ГАПОЯН ЛУСИНЕ
Студентка магистратуры отделения
«Финансы, денежное обращение и кредит»
Научный руководитель: БАГДАСАРЯН АРЕГ
Кандидат экономических наук, доцент,
Преподаватель ГГУ

Банки играют важную роль в эффективном размещении сбережений и инвестиций в рыночной экономике, они важны для стабильности всей финансовой системы.

Поскольку банки берут на себя риски при выполнении этой функции, они могут потерпеть неудачу и обанкротиться. Когда случается это, вкладчики теряют свои сбережения, что может привести к разрушительным последствиям - к потере общественного доверия ко всей банковской системе. С учетом последнего определяются критерии регулирования и контроля банков.

Основная цель статьи - представить международный опыт регулирования и контроля банковской системы, отдельно изучены Off-site (заочный) и on-site (через инспекции на месте) виды управления и необходимость риск-ориентированного контроля, его применение в Республике Армения и его эффективность.

Ключевые слова: *регулирование банковской системы, контроль, контроль на основе риска, базельские основные принципы, управление рисками.*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
«Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժնի
2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ hakpoghosyan758@mail.ru
Գիտական ղեկավար՝ Ամիրխանյան Սամվել
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Շուկայական տնտեսության պայմաններում յուրաքանչյուր երկրի զարգացումը արդյունք է համայնքների արդյունավետ զարգացման, որի վրա ժամանակակից աշխարհում իր դրական ազդեցությունն ունի սոցիալական ձեռնարկատիրությունը, և դա օրեցօր ակնհայտ է դառնում:

Այժմ ՀՀ–ի տարբեր մարզերում արդեն գործում են ավելի քան 30 սոցիալական ձեռնարկատիրություններ: Հարցը, թե ինչ դեր կարող է ունենալ սոցիալական ձեռնարկատիրությունը համայնքային զարգացմաան գործում, ունի մեկ պատասխան. որքան էլ մեծ լինեն պետական կառույցների և միջազգային դոնորների հնարավորությունները, անհավանական է այն փաստը, որ համայնքային խնդիրները կունենան լիարժեք լուծումներ: Այդ իսկ պատճառով, երբ մեր երկրում սկսվեց սոցիալական ձեռնարկատիրության զարգացման խթանում, պարզ դարձավ, որ այն մի հնարավոր տարբերակ է, որով համայնքային խնդիրների լուծման հարցին անդրադառնում են ավելի կայուն և իրատեսական ձևով:

Սոցիալական ձեռնարկատիրությունը, հիմնվելով սոցիալական խնդրի վրա, ոչ միայն լուծում է այն, այլ նաև իր անընդհատ գործունեությամբ կարողանում է գեներացնել ռեսուրսներ (մարդկային, նյութական): Այսինքն՝ համայնքի բնակիչը գիտակցում է, որ սոցիալական ձեռնարկատիրության միջոցով կարող է իր իսկ բարձրացրած խնդիրներին տալ կայուն լուծումներ, համայնքն սկսում է ինքնուրույն գործել և տեղի է ունենում միջոցների անընդհատ գեներացիա:

Բանալի բառեր՝ *սոցիալական ձեռնարկատիրություն, շահույթ, եկամուտ, բիզնես մոդել, նորարարություն, գեներացիա, հանրային արտադրողականություն:*

Սոցիալական ձեռնարկատիրությունը համեմատաբար երիտասարդ բիզնես գործունեության տեսակ է: Սակայն սոցիալական ձեռներեցները գոյություն են ունեցել մարդկության ողջ պատմության ընթացքում: Ֆրանցիսկյան կարգի հիմնադիր Ֆրանցիսկոս Ասիզիացին կարող է համարվել սոցիալական ձեռնարկատեր, քանի որ նա հիմնել է մի շարք կազմակերպություններ, որոնք հանդիսացել են հիմնարար փոփոխությունների պատճառ հասարակության մեջ: Սոցիալական ձեռնարկատիրության վերելքը քաղաքակիրթ հասարակության զարգացման հետևանք է վերջին երեք տասնամյակների ընթացքում:

Սոցիալական ձեռնարկատիրությունը[1] ձեռնարկատիրական գործունեության տեսակ է, որը բնակչության խնդիրների լուծումը և սոցիալական շահը դնում է իր բիզնես մոդելի հիմքում, և որն իր շահույթի մեծ մասը (50+n%) ներդնում է դրական փոփոխությունների իրականացման և սոցիալական մարտահրավերների լուծման մեջ: Սոցիալական ձեռնարկատիրության մասին կան տարատեսակ սահմանումներ: Իմաստը սոցիալական խնդիրները բիզնեսի միջոցով լուծելու հնարավորությունն է: Սոցիալական ձեռնարկատիրությունը հնարավորություն է տալիս անհատին զբաղվել բիզնես–գործունեությամբ՝ բնությանը հնարավորինս քիչ վնասներ հասցնելով:

Այս հայեցակարգը գործում է տնտեսական գրեթե բոլոր ոլորտներում և խթան է հանդիսանում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական ակտիվ կյանքին ներգրավելու խնդրի լուծումից սկսած մինչև կրթության, բնապահպանական, մշակութային հիմնախնդիրներ և այլն: Երբ սոցիալական ձեռներեցը ստեղծում է իր բիզնես նախագիծը, նա կենտրոնանում է ոչ թե շահույթի ստացման, այլ արդյունավետ (երկարաժամկետ) աշխատող բիզնես մոդելի վրա: Այստեղ ներդրումը պարզապես նպատակային խումբը(ընտրված սեգմենտը) տնտեսության մեջ ինտեգրելու մեխանիզմ է:

Նշենք մի շատ կարևոր հանգամանք. եթե որևէ հիմնադրամ ֆինանսապես օգնում է մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց կամ տրամադրում է անվճար աջակցություն (խնամակալներ, սայլակներ և այլն) որոշակի ժամանակահատվածում, ապա դա հանդիսանում է խնդրի ժամանակավոր լուծման տարբերակ, բայց երբ այդ նույն մարդիկ ներգրավված են աշխատանքի մեջ, ստեղծում են հասարակական կարիքները բավարարող որևէ ապրանք կամ ծառայություն և միաժամանակ լուծում

[1] Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը, YouTube, 0:06 վայրկյան, 2019

են սոցիալական խնդիր, դա բոլորովին այլ արդյունք ապահովող գործընթաց է:

Սոցիալական ձեռնարկատիրության գործունեության հիմքում ընկած են մի քանի սկզբունքներ.

ա/ շահույթի վերաներդրում ձեռնարկատիրության սեփական կապիտալում՝ այն սոցիալական նպատակին (գաղափարին) ծառայեցնելու համար,

բ/ ժողովրդավարության և արդարության վրա հիմնված կազմակերպությունների և սեփականության ձևերի արտացոլում ձեռնարկատիրական գործունեության մեջ,

գ/ նորարական գաղափարների օգտագործման միջոցով սոցիալական բարիքի ստեղծում, հասարակության մեջ առևտրային գործունեության ակտիվացում:

Չնայած ոլորտների բազմազանությանը՝ սոցիալական ձեռնարկատիրությունները հիմնականում գործում են հետևյալ չորս ոլորտներում.

ա/ աշխատանքի ինտեգրում՝ հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների վերապատրաստում և ներգրավում,

բ/ սոցիալական անհատական ծառայություններ՝ առողջություն, բարեկեցություն և բուժօգնություն, մասնագիտական ուսուցում, կրթություն, երեխաների խնամքի ծառայություններ, տարեցներին մատուցվող ծառայություններ կամ օգնություն անապահով մարդկանց,

գ/ հեռավոր գյուղական բնակավայրերում անբարեկարգ տարածքների տեղական զարգացում, սոցիալական ձեռնարկությունների հիմնում, քաղաքային թաղամասերի զարգացման, վերականգնման սխեմաներ և համագործակցություն երրորդ երկրների հետ,

դ/ այլ բնագավառներ՝ շրջակա միջավայրի պաշտպանություն, վերամշակում, սպորտ, արվեստ, մշակույթ կամ պատմամշակութային կոթողների պահպանում, գիտություն, հետազոտություն և նորարարություն, սպառողների պաշտպանվածություն և այլն[2]:

Այսպիսով, սոցիալական ձեռներեցությունը հասարակության մեջ դրական փոփոխություններ կատարելու հսկայական ներուժ ունի, և ուրախալի է դիտարկել այն փաստը, որ ավելի ու ավելի շատ մարդիկ, հասարակական կազմակերպություններ և բիզնես գործունեություն իրականացնողներ են

[2] Social enterprises | Internal Market, Industry, Entrepreneurship and SMEs (europa.eu), թարգմանություն

միանում այս շարժմանը՝ գիտակցելով, որ այն հիմնվում է սոցիալական գաղափարի, այլ ոչ թե միայն շահույթի ստացման վրա:

Տարբերում են սոցիալական ձեռնարկատիրության հետևյալ տեսակները.

ա/ Պետական հատվածի կողմից ստեղծվող սոցիալական ձեռնարկատիրություն, երբ որևէ խնդրի լուծման համար որևէ պետական հատվածի ներկայացուցիչ (ՏԻՄ) որոշում է գործարկել սոցիալական ձեռնարկատիրության մոդելը համայնքային որևէ խնդրի լուծման համար:

բ/ ՀԿ–ների կողմից ստեղծվող սոցիալական ձեռնարկատիրություններ, քանի որ մի շարք երկրներում հասարակական կազմակերպություններին արգելվում է իրականացնել այնպիսի գործունեություն, որից կարող է ձևավորվել եկամուտ, այդ պատճառով շատ ՀԿ–ներ հիմնում են սոցիալական ձեռնարկատիրություններ՝ համայնքում ծառացած որոշակի խնդիրների լուծման նպատակով:

գ/ Անկախ գործող սոցիալական ձեռնարկատիրություններ. սրանք ամբողջովին պատկանում են մասնավոր սեկտորին, որը իրավակազմակերպչական ոչ մի կապ չունի պետական հատվածի հետ:

Եկամուտ ստանալու նպատակով սոցիալական ձեռնարկատերերը կիրառում են մի քանի բիզնես մոդելներ[3], որոնցից են.

1. Շուկայի միջնորդության մոդել: Այս մոդելի հիմքում ընկած է թիրախ խմբի (սեգմենտի) համար բաց շուկա մուտք գործելու նպատակով որպես միջնորդ հանդես գալը: Այս դեպքում սոցիալական ձեռնարկատերը իր սեգմենտի ձայնը շուկայում դարձնում է լսելի և գտնում այն գնորդին, որն այլ եղանակով չէր հասնի թիրախ խմբի արտադրած ապրանքին կամ մատուցած ծառայությանը:Այս մոդելը կիրառողները անմիջականորեն զբաղվում են արտադրանքի մշակմամբ, փաթեթավորմամբ, դիզայնով, ներկայացմամբ և այլն: Այստեղ մեծ դեր ունի նաև թիրախային բնակչությունը, որը հանդես է գալիս որպես մատակարար և որը վաճառում է թիրախային խմբի կողմից արտադրված ապրանքը կամ մատուցած ծառայությունը:

2. Ձեռնարկատիրության աջակցության մոդել: Այս մոդելի կողմնակիցները թիրախային խմբին առաջարկում են զարգացման ծառայություններ կամ ապրանքներ, որոնք կիրառելով նրանք կարողանում են կայունացնել

[3] Arm final print.pdf (savethechildren.net), էջ 42:

իրենց բիզնեսը, ստեղծել բարիքներ և դուրս գալ բաց շուկա: Այս դեպքում և՛ հաճախորդները, և՛ թիրախային խումբը շատ ժամանակ կարող են լինել նույն մարդիկ:

3. Զբաղվածության մոդել: Ի տարբերություն շուկայի միջնորդության մոդելի՝ այս դեպքում սոցիալական ձեռնարկատերը աշխատանք է առաջարկում ընտրված սեգմենտին: Այսինքն՝ թիրախային խումբը դառնում է աշխատակից սոցիալական ձեռնարկատիրությունում:

4. Վճարովի ծառայությունների մոդել: Այս դեպքում սոցիալական ձեռնարկատիրությունը ուղիղ կապով թիրախային խմբին է վաճառում որոշակի ծառայություններ: Հիմնականում ընտրվում են այնպիսի ծառայություններ, որոնք մինչ այդ հասանելի չեն եղել թիրախային խմբին կա՛մ թանկ լինելու, կա՛մ շուկայում չլինելու պատճառով:

5. Շուկայի հետ կապ հաստատող ձեռնարկության մոդել: Այս դեպքում սոցիալական ձեռնարկատերը հանդիսանում է միջնորդ ազատ շուկայի և թիրախային խմբի միջև: Այստեղ թիրախային խումբը համագործակցում է սոցիալական ձեռնարկատիրության հետ, որը օգնում է իրեն իր ապրանքը կամ ծառայությունը հասցնել հաճախորդին: Այստեղ սոցիալական ձեռնարկատերը վճարվում է իր մատուցած ծառայությունների համար (միջնորդավճար):

6. Կոոպերատիվ մոդել: Այս դեպքում թիրախային խումբը դառնում է սոցիալական ձեռնարկատիրության հիմնադիրը: Կազմելով կոոպերատիվներ՝ հիմանդիրները կարողանում են օգտագործել եղած լայն հնարավորությունները, որոնք հաճախ թերագնահատվում են: Այստեղ յուրաքանչյուր հիմնադիր ունի իր սեփական մասնաբաժինը և համապատասխանաբար որոշակի պարտականություններ:

7. Ծառայության սուբսիդավորման մոդել: Այս դեպքում թիրախային խումբը նույնիսկ կարող է անմիջական կապ չունենալ ծավալվող գործունեության հետ: Սոցիալական ձեռնարկատիրության այս ձևը հանդես է գալիս որպես մայր կազմակերպության դուստր կազմակերպություն, որի ներկայացրած ապրանքը վաճառվում է կազմակերպության առաքելությանը համապատասխան եկամուտ ապահովելու նպատակով:

Այսպիսով, կայուն ձեռնարկատիրության հիմնման գրավականը վերոհիշյալ բիզնես մոդելներն են: Հասկանալով սոցիալական խնդիրը, գտնելով համապատասխան սեգմենտին և օգտագործելով վերոհիշյալ մոդելներից

որևէ մեկը կամ դրանցից մի քանիսի համադրումը՝ կարող ենք ապահովել կայուն բիզնես և մի շարք խնդիրների լուծում:

Սոցիալական ձեռնարկատիրությունը սկսելիս անհրաժեշտ է հստակ հասկանալ՝ արդյո՞ք խնդիրը պետք է լուծվի սոցիալական ձեռնարկատիրության միջոցով: Հաշվի առնելով, որ առօրյայում, մարդիկ հիմնում են բիզնես և այն անվանում սոցիալական ձեռնարկատիրություն, սակայն ինչպես բազմիցս նշեցինք, բիզնես մոդելի հիմքում ընկած է միայն շահույթ ստանալու գաղափարը: Սակայն անհրաժեշտ է հստակ հասկանալ, որ նման դեպքում բիզնեսը երկարատև կայունություն ապահովել չի կարող և բարձր եկամուտներ չապահովելը բացարձակապես անհասկանալի չէ: Ուղղակի պետք է տարանջատել սոցիալական ձեռնարկատիրությունը ավանդական բիզնես գործունեությունից:

Ցանկացած խնդրի բացահայտման դեպքում սոցիալական ձեռնարկատիրությունը տալիս է ստանդարտներից դուրս՝ «կարծրատիպերը կոտրող» լուծումներ: Հետևաբար նորարարությունը սոցիալական ձեռնարկատիրության անբաժան մասն է կազմում: Կախված բնագավառից՝ նորամուծությունները կարող են լինել տեխնոլոգիական, արժեհամակարգի փոփոխության, կարծրատիպերի փոփոխման և այլնի տեսքով: Բերենք մեկ օրինակ: «Pragulic»[4] սոցիալական ձեռնարկատիրությունը հիմնվեց երկու տարբեր սոցիալական խմբեր իրար հետ կապելու խնդրի վրա: Քանի որ անօթևան մարդիկ ավելի լավ գիտեն քաղաքը, Թերեզան՝ հիմնադիրը, որոշեց, որ Պրահա քաղաք այցելած զբոսաշրջիկներին կուղեկցեն անօթևան մարդիկ: Դրանով իսկ հաճախորդները հնարավորություն կունենան շփվելու անօթևան մարդկանց հետ և ապահովելու նրանց աշխատանքով: «Պրագուլիկը» անօթևաններին հնարավորություն է տալիս վճարել սննդի, կեցության և մարդավայել ապրելու համար:

Այսպիսով, տվյալ օրինակի մեջ նորարարությունը կայանում էր «կարծրատիպեր կոտրելու» և տարբերվող տուր – փաթեթներ կազմելու մեջ: Հաճախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս հնարավորինս պետք է փորձել համայնքում եղած թույլ կողմերը դարձնել մրցակցային առավելություններ, դրանով իսկ կիրառելով նորարարական հնարքներ: Տեղական փորձի վերաբերյալ բերենք մեկ օրինակ: Մարդկային և բնական ռե-

[4] Pragulic - SELLA project case study #4 - YouTube, 0:10 վայրկյան. 2019

սուրսների ճիշտ համադրումով Ռոբերտ Ղուկասյանը Գեղարքունիքի մարզի Կալավան համայնքը դարձրեց հանրահռչակ: Անբարեկարգ ճանապարհները դարձնելով արկածային տուրիզմի գրավչության մասնիկ, իսկ մթերային խանութների բացակայությունը՝ անտառային խոհանոցի հիմնման միջոց՝ Ռոբերտը Կալավանում սկսեց զարգացնել տուրիզմը: Գյուղում կա 24 ընտանիք, ովքեր իրենց տները վերածել են հյուրատների, որպեսզի կարողանան սպասարկել գյուղ այցելող բոլոր զբոսաշրջիկներին: Տեսնելով գյուղում կատարվող փոփոխությունները՝ տեղաբնակներն այլևս չեն մտածում գյուղը լքելու մասին:

Հետևաբար նորարարության բաղադրիչը գործարկելով՝ սոցիալական ձեռնարկատերը կարողանում է կայուն եկամուտներ ապահովել և երկարաժամկետ ու արդյունավետ աշխատանք կատարել:

Ինչպես նշեցինք, սոցիալական ձեռնարկատիրության կարևորագույն խնդիրներից մեկը արդյունավետ (երկարաժամկետ) բիզնես մոդել ունենալն է: Բերենք մեկ օրինակ, որում կներկայացնենք ոչ միայն արդյունավետ բիզնես մոդելի գործարկումը, այլև սոցիալական ձեռնարկատիրությանը բնորոշ բոլոր սկզբունքների (նորարարություն, կայունություն, փոփոխություններ և այլն) կիրառումը:

Գ. Սանժապովան Մալի Տուրիշ գյուղում հիմնեց «Տեղական կրեմային մեղրի արտադրություն» սոցիալական ձեռնարկատիրությունը[5]: Նրա հայրն ուներ մեղվանոց, բայց մեղրի վաճառքը կազմակերպել հնարավոր չէր: Այդ ժամանակ օգնության հասավ քրաուդֆանդինգը (crawdfunding), և բազմաթիվ մարդիկ ծրագրին կյանք տվեցին: Մեղրի վաճառքից ստացված հասույթով գյուղում կառուցվեց առաջին խաղահրապարակը: Այնուհետև սկսեցին արտադրել խոտաբույսերից գդալներ թեյի համար և դրանք պատեցին կարամելով: Առաջիկա պլանների մեջ է կարամելի գործարանի և հացի փռի հիմնումը, որպեսզի ձմռանը գյուղացիները աշխատանք ունենան և հնարավոր լինի լուծել համայնքում ծառացած մյուս սոցիալական խնդիրները: Գ. Սանժապովայի այս գաղափարի շնորհիվ Մալի Տուրիշում տատիկներն իրենց պիտանի են զգում: Այս սոցիալական ձեռնարկատիրության բիզնես մոդելը հիմնված է սոցիալական ձեռնարկատիրությանը բնորոշ բոլոր սկզբունքների վրա՝ սոցիալական խնդրի բացահայտում, հասույթի գոյա-

[5] Cocco Bello - SELLA project case study #2 - YouTube, 0:15 վայրկյան, 2019

ցում, նորարարական գաղափարների կիրառում, գործունեության մասշտաբների ընդլայնում և տնտեսական կայունություն: Սոցիալական ձեռնարկատիրություն «կարգավիճակին» ամեն մի պետություն ունի առանձնահատուկ մոտեցում: Սակայն այն ոչ միայն գործում է զարգացած երկրներում, այլև բազմաթիվ զարգացող երկրների տնտեսություններում՝ նույնիսկ առանց որևէ հայեցակարգային հիմունքների կամ որոշակի արտոնությունների առկայության:

Այսպիսով, համայնքներում սոցիալական ձեռնարկատիրությունը, կիրառելով նորարարության բաղադրիչը, լուծում է բազում խնդիրներ:

Սոցիալական ձեռնարկատիրությունը Հայաստանում նոր թափ առնող ոլորտ է: Այն դեռևս չունի կազմակերպաիրավական ձև և ոլորտի աշխատանքին վերաբերող հայեցակարգային հիմունքներ: ՍՁ–ները գործում են այն նույն օրենսդրական դաշտում, որտեղ գործում են ՓՄՁ-ները, և նրանց գործունեության հիմքում նույնատիպ հիմնախնդիրներ և ոլորտային առաջնահերթություններ են: Սակայն տարբերությունն այն է, որ ՍՁ գործունեությունից ստացված շահույթն ուղղվում է սոցիալական սուր հիմնախնդիրների լուծմանը: ՍՁ–ի կարևորագույն նպատակներից մեկն էլ այն է, որ իրենք՝ սոցիալական ձեռնարկատերերը, իրենց գործունեությամբ շարժառիթ հանդիսանան հասարակության համար՝ ՍՁ գործունեություն սկսելու առումով:

Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի զարգացման համար փորձագետներն առաջարկել են հետևյալ ուղղությունները՝

- հստակեցնել ՍՁ-ների աշխատանքում կամավորության ինստիտուտի դերը՝ արտոնություններ տալով միայն ՍՁ-ներին և բացառելով խոշոր բիզնեսի կողմից այսպիսի ռեսուրսի չարաշահումը:

- ոլորտին հատուկ ուշադրություն՝ ֆինանսավորման, վարկային ավելի ցածր տոկոսադրույքների, տեխնիկական և խորհրդատվական աջակցության մասերով՝ հաշվի առնելով, որ ՍՁ-ների մոտ բիզնես բաղադրիչը պետք է լինի շատ ավելի ուժեղ, քան սովորական բիզնեսինը՝ պայմանավորված ՍՁ–ների դեպքում շահույթի բաշխման հնարավորությունների սահմանափակությամբ:

- սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի հետագա զարգացման և ընդլայնման համատեքստում փորձագետները կարևորել են ոլորտում տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող վերապատրաստողների առկայությունը, մասնավորապես առաջարկվում է ոլորտում գոր-

ծող ՍՁ-ների հիմնադիրներին, նախաձեռնողներին վերապատրաստել որպես դասընթացավարներ (թրեյներներ):

Ամենանոր ձևավորված ՍՁ–ն Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքում գտնվող «Էթիունի մոռացված թագավորություն» հյուրատունն է: Այն Էթիունիի ժամանակ խոշոր բնակավայր է եղել, որն ունի զբոսաշրջության զարգացման նախադրյալներ: Այս սոցիալական բիզնեսը ստեղծվել է՝ հիմնվելով համայնքի ունեցած մշակութային ժառանգության վրա: Հիմնադիրները՝ Մարտին և Սաթիկ Բադեյանները, նպատակ ունեն բարելավել համայնքում ապրողների կյանքը և խթան հանդիսանալ գյուղում այլ հյուրատների հիմնման համար:

Այսինքն, սոցիալական ձեռնարկատիրությունն ունի երկու դրական ազդեցություն. մի կողմից կարողանում ենք իրականացնել բիզնես գործունեություն և ստանալ կայուն եկամուտ և մյուս կողմից կարողանում ենք ապահովել բարեկեցիկ կյանք, բարձր կենսամակարդակ, բարելավված համայնք և զարգացած երկիր:

Քանի որ, սոցիալական ձեռնարկատիրությունը մարդկանց հնարավորություն է տալիս արագ և արդյունավետ կերպով լուծել համայնքային խնդիրներ և հասնել բարձր կենսամակարդակի, ապա առաջարկվում է հետևյալ ռազմավարական քաղաքականությունը.

ընդունել հայեցակարգային հիմունքներ սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ ՀՀ–ում,

մշակել ֆինանսական մեխանիզմներ սոցիալական ձեռնարկատիրության խթանման համար,

սոցիալական ձեռնարկատիրության միջոցով լուծում տալ ՀՀ–ի շատ համայնքների սոցիալ–տնտեսական խնդիրներին՝ մշակելով որոշակի սկզբունքներ և կիրառելով բիզնես մոդելներից որևէ մեկը,

համայնքային թույլ կողմերը դարձնել մրցակցային առավելություններ և կիրառել սոցիալական ձեռնարկատիրության գործունեության մեջ,

տարանջատել ՀԿ գործունեությունը սոցիալական ձեռնարկատիրությունից,

ունենալ հստակ ռազմավարական պլան, որով կառաջնորդվի սոցիալական ձեռնարկատերը,

ունենալ ճկուն բիզնես–պլան, որը ոչ թե կհարմարվի ծառացած փոփոխություններին, այլ կընդունի մարտահրավերներ:

Սոցիալական ձեռնարկատիրությունը դյուրին գործընթաց չէ, քանի որ համայնքներում դժվար է լուծել սոցիալական խմբերի խնդիրները: Այն խրախուսում է, որ մարդիկ սկսեն զբաղվել բիզնես գործունեությամբ եղած ռեսուրսների պայմաններում և ապահովեն «մեկս մյուսի համար» եզրույթը՝ ներգրավելով տեղացի բնակիչներին՝ արդյունքում բարելավել բնակչության ապրելակերպը: Սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար կարելի է հենվել գործող ձեռնարկատիրությունների և առանձին մարդկանց փորձի վրա, ինչպես նաև կիրառել ՍՁ-ի սկզբունքները, մոդելները և հստակ իրականացնել ռեսուրսների կառավարում: Ինչպես ասել է Փիթեր Դրաքերը, եթե ավանդական ձեռնարկատերը փոխում է ավանդական տնտեսական ռեսուրսների արտադրողականությունը, ապա սոցիալական ձեռնարկատերը փոխում է ողջ հասարակության արտադրողականությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ի՞նչ է սոցիալական ձեռնարկատիրությունը - YouTube, 0:06 վայրկյան, 2019
2. Arm final print.pdf (savethechildren.net), էջ 42
3. Cocco Bello - SELLA project case study #2 - YouTube, 0:15 վայրկյան. 2019
4. Pragulic - SELLA project case study #4 - YouTube, 0:10 վայրկյան, 2019
5. Social enterprises | Internal Market, Industry, Entrepreneurship and SMEs (europa.eu), թարգմանություն,
6. https://ec.europa.eu/growth/sectors/proximity-and-social-economy/social-economy-eu/social-enterprises_en
7. Saint Francis of Assisi | Biography, Facts, Feast Day, Patron Saint Of, & Legacy | Britannica, https://www.britannica.com/biography/Saint-Francis-of-Assisi

SOCIAL ENTREPRENEURSHIP AS AN ALTERNATIVE FACTOR OF ECONOMIC DEVELOPMENT

POGHOSYAN HAYKANUSH

2nd-year student of Accounting and Taxation Department
Faculty of Economics, Gavar State University
e-mail: hakpoghosyan758@mail.ru
Academic Supervisor: Amirkhanyan Samvel
PhD in Economics, Associate Professor

In the conditions of a market economy, the development of each country is the result of the effective development of communities, on which the social enterprise

has its positive impact in the modern world, and it becomes obvious day by day. Currently, more than 30 social enterprises already operate in different regions of Armenia. The question of what role social entrepreneurship can play in community development has one answer: no matter how great the opportunities of state institutions and international donors are, the fact that community problems will have complete solutions is unbelievable. That is why, when the promotion of social entrepreneurship started in our country, it became clear that it is a possible way to address the issue of solving community problems in a more stable and realistic way. Social entrepreneurship, based on the social problem, not only solves it, but also manages to generate resources (human, material) through its continuous activity. In other words, the resident of the community realizes that through social entrepreneurship he can give sustainable solutions to his own problems; the community begins to act independently; there is a constant generation of funds.

Key words: *social entrepreneurship, profit, income, business model, innovation, generation, public productivity.*

СОЦИАЛЬНОЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО КАК АЛЬТЕРНАТИВНЫЙ ФАКТОР ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

ПОГОСЯН АЙКАНУШ

Студентка 2-ого курса отделения бухгалтерского учёта и налогообращения экономического факультета Гаварского государственного уииверситета

электронная почта:hakpoghosyan758@mail.ru

Научный руководитель: Амирханян Самвел

Кандидат экономических наук, доцент

В условиях рыночной экономики развитие каждой страны является результатом эффективного развития сообществ, на которые социальное предприятие оказывает положительное влияние в современном мире. В настоящее время в разных регионах Армении уже действуют более 30 социальных предприятий. На вопрос о том, какую роль социальное предпринимательство может играть в развитии сообщества, есть один ответ: независимо от того, насколько велики возможности государственных институтов и международных доноров, тот факт, что проблемы сообщества будут иметь полное решение, невероятен. Вот почему, когда в нашей стране началось продвижение социального предпринимательства, стало ясно, что это возможный путь решения проблемы решения

общественных проблем более стабильным и реалистичным образом. Социальное предпринимательство, основанное на социальной проблеме, не только решает ее, но и позволяет генерировать ресурсы (человеческие, материальные) за счет своей непрерывной деятельности. Другими словами, житель сообщества осознает, что через социальное предпринимательство он может дать устойчивое решение своим собственным проблемам, сообщество начинает действовать самостоятельно, происходит постоянное генерирование средств.

Ключевые слова: *социальное предпринимательство, прибыль, доход, бизнес-модель, инновации, генерация, общественная продуктивность*.

4.	**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY** **ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ**

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԴԱՆԹԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ» ՊՈԵՄՈՒՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆԻԿ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ anikavetisyan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Ասոյան Թաթուլ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածում ներկայացված է հայերենի շեշտափոխական հնչյունափոխության արտացոլումը Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում: Ուսումնասիրվել են թե՛ ձայնավորների, թե՛ երկհնչյունների հետ կապված հնչյունափոխական երևույթները: Բերվել են համապատասխան օրինակներ պոեմից: Հոդվածի վերջում արվել է եզրակացություն ըստ պոեմում առկա հնչյունափոխական երևույթների արտահայտման:

Բանալի բառեր՝ *Եղիշե Չարենց, «Դանթեական առասպել», պոեմ, պատերազմ, հնչյունափոխություն, ձայնավոր, երկհնչյուն:*

Եղիշե Չարենցն իր ստեղծագործությունների պատմական նշանակությամբ համարվում է 20-րդ դարի հայ գրականության խոշորագույն դեմքերից մեկը: Մեծ է Եղիշե Չարենցի դերը հայ բանաստեղծական արվեստի զարգացման գործում: Նա թողել է հարուստ գրական ժառանգություն՝ բանաստեղծություններ, վեպ, պոեմներ, քառյակներ, ինչպես նաև հոդվածներ, ճառեր, նամակներ: Իրական դեպքերի և մտածումների արդյունքում է ծնվել

«Դանթեական առասպել» պոեմը: Իր կառուցվածքով պոեմը պատերազմի շարքային մասնակցի հուշագրություն-խոստովանություն է: Պոեմն ունի «Հիշողություններ պատերազմի դաշտից» ենթավերնագիրը: 1915թ. ռուսական զորքերը անցնում են հարձակման: Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում կռիվներ են: Եղիշե Չարենցն անձամբ մասնակցում է մարտերին 6-րդ դիվիզիայի կազմում: 18-ամյա բանաստեղծը տեսնում է պատերազմի դաժան հետևանքները: Այդ պատկերների անմիջական տպավորության տակ գրում է «Դանթեական առասպել» պոեմը 1915-1916թթ.՝ նվիրված նահատակ ընկերների հիշատակին, որոնք զոհվել էին 1915թ. Սուլդուզի դաշտում[1]:

Մեր նպատակն է Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում քննել հայերենի շեշտափոխական ինչյունափոխության երևույթները, պարզել, թե ինչ ծավալով է շեշտափոխական ինչյունափոխությունը արտահայտվել այս պոեմում:

Տարբեր լեզվաբանների մոտ ինչյունափոխություն հասկացության ձևակերպումը տարբեր կերպ է արտահայտվում:

Մ. Աբեղյանը ինչյունափոխությունը ձևակերպում է իբրև ժամանակի ընթացքում ընդհանրապես փոփոխվող ինչյունների, վանկերի ու շեշտերի ավանդական արտաբերություն[2]:

Ըստ Ա. Մարգարյանի՝ ինչյունափոխությունը լեզվի ինչյունների փոփոխությունն է[3]:

Յու. Ավետիսյանի ձևակերպմամբ՝ ինչյունափոխությունը որևէ ձայնավորի կամ երկինչյունի փոփոխությունն է կամ սղումը[4]:

Ա. Սուքիասյանը ինչյունափոխությունը դիտարկում է՝ հաշվի առնելով փոփոխություններ առաջացնող հանգամանքները:Ըստ նրա՝ կարող է տեղի ունենալ պատմական զարգացման, ինչյունների կամ բառերի՝ միմյանց վրա ազդելու հետևանքով և շեշտի դիրքի փոփոխությամբ[5]:

Հայտնի է, որ շեշտի հետ կապված ինչյունափոխական երևույթները վերաբերում են ոչ միայն ձայնավորներին, այլ նաև երկինչյուններին: Այս երևույթները լեզվի դրսևորման բոլոր փուլերում էլ կան, բայց համեմատությունը ցույց է տալիս, որ ձայնավորների ինչյունափոխությունը շատ ավելի ծա-

[1] http://www.tarntercum.ru/2015/09/blog-post_50.html:

[2] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974:

[3] Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997:

[4] Ավետիսյան Յու., Հնչյունաբանություն, Եր., 2008:

[5] Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, 4-րդ հտ., Եր., 2004:

վալուն է եղել միջին հայերենում: Այն ընդգրկել է բազմաթիվ դեպքեր և միջինհայերենյան հնչյունափոխական շատ երևույթներ արտացոլվել են արևմտահայերենում: Միջինհայերենյան այս բազմազանությունը չփոխանցվեց աշխարհաբարին: Բոլոր ժամանակներում էլ հայերենում տեղի են ունեցել հնչյունափոխություններ, ինչպես գրաբարում, միջին հայերենում, այնպես էլ ժամանակակից հայերենում: Հնչյունափոխական դեպքեր առավել հաճախ հանդիպում են միջին հայերենում: Ժամանակից հայերենում նկատելի են հնչյունափոխության երեք տիպ՝ պատմական, փոխազդեցական, շեշտափոխական: Պատմական հնչյունափոխությունը հետևանք է լեզվի պատմական զարգացման: Պատմականորեն լեզուն զարգացող, փոփոխվող երևույթ է, ինչպես հնչյունաբանական, քերականական առումներով, այնպես էլ հնչյունափոխությունների պարագայում:

Փոխազդեցական հնչյունափոխությունը տեղի է ունենում հնչյունների կամ բառերի՝ միմյանց վրա փոխազդելու հետևանքով:

Շեշտափոխական հնչյունափոխությունը պայմանավորված է շեշտի դիրքի փոփոխությամբ: Հայտնի է, որ հայերենի շեշտը կայուն-շարժական է: Իբրև կայուն իրողություն այն միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա (կան բացառություններ): Բառի հոլովման, խոնարհման, հոգնակիի կազմության, ածանցման, բառաբարդման դեպքերում շեշտը տեղափոխվում է դեպի բառի վերջին վանկ: Շեշտի տակ գտնվող ձայնավոր հնչյունները շատ ավելի ուժգին են հնչում, սակայն զրկվելով շեշտից՝ թուլանում են, որի հետևանքով էլ ենթարկվում են երկու տիպի փոփոխության՝ սղվում են, այսինքն՝ դուրս են ընկնում, կամ վերածվում են այլ հնչյունի, հատկապես գաղտնավանկ ը-ի: Հնչյունափոխության այս տիպը կոչվում է նաև ժառանգորդական կամ ավանդական: Այդպես ենք անվանում, որովհետև հնչյունափոխության այս տիպը գործում էր նաև հին հայերենում՝ գրաբարում, որը իր ընդհանուր գծերով պահպանվել և փոխանցվել է աշխարհաբարին ու գործում է նաև արևելահայերենում:

Մենք գիտենք, որ հայերենում բոլոր ձայնավորներն էլ հնչյունափոխվում են: Հնչյունափոխությունը կատարվում է բառասկզբում, բառամիջում և բառավերջում: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ա և օ (ո) ձայնավոր հնչյունների հնչյունափոխությունները սակավ են՝ մյուս ձայնավորների հնչյունափոխական երևույթների հետ համեմատած: Գրաբարում ա և օ (ո) ձայնավորները ընդհանրապես հնչյունափոխության չեն ենթարկվում, բայց ժամանակակից հայերենում կրկնավոր կամ բառակազմական այլ

երևույթների հետ կապված ա և օ (ո) ձայնավորները ենթարկվում են փոփոխությունների: Օրինակները բերվում են ըստ Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի տվյալների:

Ա ձայնավորի հնչյունափոխություն, օրինակ՝ զնգացին, դադրած, հարսնիք: Օ (ո) ձայնավորի հնչյունափոխություն, օրինակ՝ ոսկրացած: Պոեմում ա և օ (ո) ձայնավորների հնչյունափոխական այլ դեպքեր չեն հանդիպում:

Բառավերջի գաղտնավանկի ը ձայնավորը սղվել է այն բոլոր դեպքերում, երբ բառին ավելացող բաղադրիչը սկսվում է ձայնավորով, օրինակ՝ բարձրացա, ծանրացավ, խառնարան, համրաքայլ:

Բառասկզբի ու ձայնավորի հնչյունափոխության դեպքեր պոեմում չեն հանդիպում: Բառամիջում ու ձայնավորը դառնում է գաղտնավանկի ը, օրինակ՝ շնչով, մտանք, քնեցինք, սրընթաց, շնչեցի, կրծքում, հնոցներ, թնդանոթներ, թնդում, ջրհոր, տներ, մղում, շնչեցի, լռին,, զսպելով, գթասիրտ, հրով, տրտնջացողին, բռնեցին, մթին, հնչեղ, լռեն, անշնչանում, հնչյուն, հնչում, գնդակներ, շրթերից, հրացան, փտել, շնչում, բնություն, սն

Ու ձայնավորի բառամիջում հնչյունափոխման դեպքեր ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ «Դանթեական առասպել» պոեմում հաճախ են հանդիպում:

Բառավերջի բաց վանկի ու ձայնավորը քիչ դեպքերում դառնում է վ, օրինակ՝ տվեցին, առվակը, ուրվագծվեց, հեռվից: Ու ձայնավորը սղվել է որոշ բառերում, օրինակ՝ չխախտի, տխրություն, փշրանք, քնքշություն, պատմեցին, աշնանային, ցասման, մանկական, բազմատարազ, բազմաերազ, կանգնեցին, իրիկնամուտին:

Բառասկզբի ի ձայնավորի հնչյունափոխման դեպքեր պոեմում առկա չեն:

Ի ձայնավորը փակ վանկում դարձել է գաղտնավանկի ը, օրինակ՝ երկնքի, նստել, սրտով, գնով, թռիչքներ, կնոջ, խնդաց, քմայքին, կրել, մտածեցի, սրտատրոփ, լցված, սրտերս, սրտին, լցվել, թռչուն, ջղաձգորեն, քմահաճ, գրկում, քրքջացել, լսում, սրտի, կշռույթներ, թռչկոտում, լսել, հանգստի, հանգստանալու, ժրաջան, ուրվագծվեց, պղծումներ, կպած, ճչում, խղճալ: Բառաբարդման և ածանցման դեպքերում բազմավանկ բառի բաց վանկում ի ձայնավորը միանալով ա հոդակապին դառձել է է(ե), օրինակ՝ ոսկեգույն, բարեկամ, հոգեթով:

Ի ձայնավորը սղվել է, օրինակ, ժպտում, թռչում, փոշոտ, Աստղկա, քրքջում, մարդկային, ժպտադեմ, կռվով, մոխրակույտ, կռվելու, ճակատագրի բառաձևերում

Բառասկզբի է(ե) դառնում է ի, օրինակ՝ իջավ, իջնում: Պոեմում այլ օրինակ չի հանդիպում: Բառամիջի փակ վանկում ևս է(ե)-ն դառնում է ի, որը շատ հաճախադեպ է, օրինակ՝ սիրահար, կիսանեխ, վիրավոր, զինվոր, միջից, դիվահար, հանդիսաքայլ, հավիտյան, գիտակ, շինող:

Որևէ ձայնավորի և յ կիսաձայնի արտասանական զուգակցումը կոչվում է երկհնչյուն:Հայերենի հնչյունափոխվող երկհնչյուններն են՝ ույ, յու, յա: Փակ վանկի ույ երկհնչյունը կարող է դառնալ ու, օրինակ՝ ծուլորեն, լուսնյակը, կուրորեն, լուսնոտի, հուզում, ողջունում, լուսնահար, հուզված, լուսին, խորասուզված: Ույ երկհնչյունը կարող է սղվել, օրինակ՝ սառցի:

Յու երկհնչյունը կարող է սղվել, օրինակ՝ արնաճարավ, արնաներկ, արնաբույր, արնոտ, արնավառ, արնակալած, արնաշաղ:

Ամփոփենք՝ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմում հայերենին բնորոշ շեշտափոխական հնչյունափոխությունն արտահայտվել է իր լրիվ ծավալով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974:
2. Ավետիսյան Յու., Հնչյունաբանություն, Եր., 2008:
3. Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., 1984:
4. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997:
5. Սուքիասյան Ա.,Ժամանակակից հայոց լեզու, 4-րդ հտ., Եր., 2004:
6. http://www.tarntercum.ru/2015/09/blog-post_50.html:

ALTERNATION IN THE POEM "DANTESQUE LEGEND" BY YEGHISHE CHARENTS

AVETISYAN ANIK
2nd-year student of the Department of "Primary Pedagogy and Methodology",
Faculty of Humanities, GSU
e-mail: anikavetisyan@gmail.com
Academic Supervisor: Asoyan Tatul
PhD in Philological Sciences, Associate Professor

The article presents the reflection of Armenian stress-shift in sound-change in the poem "Dantesque legend" by Yeghishe Charents. Phonetic phenomena related to both vowels and diphthongs were studied. The corresponding examples from the poem are given. At the end of the article, a conclusion was made on the expression of phonetic phenomena in the poem.

Key words: *Yeghishe Charents, "Dantesque legend", poem, war, alternation, vowel, diphthong.*

ЧЕРЕДОВАНИЯ В ПОЭМЕ ЕГИШЕ ЧАРЕНЦА «ДАНТОВА ЛЕГЕНДА»

АВЕТИСЯН АНИК
Студентка 2-ого курса отделения начальной педагогики и методики
факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: anikavetisyan@gmail.com
Научный руководитель: Асоян Татул
Кандидат филологических наук, доцент

В статье рассмотрено акцентированное чередование в поэме Егише Чаренца "Дантова Легенда". Были изучены явления альтернации, связанные и с гласными и с дифтонгами. Были приведены соответствующие примеры из поэмы. В конце статьи был сделан вывод относительно выраженности фонетических изменений в стихотворении.

Ключевые слова: *Егише Чаренц, "Дантова Легенда", поэма, война, альтернация, гласная, дифтонг.*

ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ ՄՈՒԼՏՖԻԼՄԵՐՈՒՄ

ԲԱԴՈՅԱՆ ԱՐՓԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի
«Հայոց լեզու և գրականություն»
բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ badoyan.arpine@mail.ru
Գիտական ղեկավար՝ Ասոյան Թաթուլ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Լեզվական սխալների հանդիպում ենք թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում: Շատ ավելի տգեղ երևույթ է, երբ այս ամենը տեսնում և լսում ենք հեռուստաեթերից: Թիրախային գոտում են գտնվում հատկապես երեխաները, ովքեր անմիջապես ընկալում և սովորում են ինչող լեզվական սխալ կառույցները: Այս առումով թեման արդիական է և կարիք ունի անդրադարձի:

Հոդվածում անդրադարձ է կատարված մասնավորապես հայերեն թարգմանությամբ ամերիկյան կինոարտադրության «Մադագասկար» (2005), «Շրեկ» (2001) և Ղազարոս Աղայանի «Անահիտ» (2014) հեքիաթի հիման վրա նկարահանված մուլտֆիլմերին: Փորձել ենք ներկայացնել և ցույց տալ դրանցում տեղ գտած լեզվական սխալները և տալ դրանց ճիշտ ձևակերպումները:

Թարգմանական աշխատանքներ կատարելիս կամ հայերեն մուլտֆիլմեր ստեղծելիս անհրաժեշտ է պահպանել գրական հայերենի նորմերը՝ երեխաների բանավոր խոսքը զարգացնելու և լեզվական սխալներից զերծ պահելու նպատակով:

Բանալի բառեր՝ *լեզվական սխալներ, մուլտֆիլմեր, «Մադագասկար», «Շրեկ», «Անահիտ», ավելորդ բառեր, օտարաբանություն:*

Երեխաները նախընտրում են իրենց ժամանակն անցկացնել խաղեր խաղալով, մուլտֆիլմեր, ժամանցային հաղորդումներ դիտելով: Մասնավորապես մուլտֆիլմերը նպաստում են երեխաների բարոյահոգեբանական դաստիարակությանը՝ միաժամանակ զանազան տեղեկություններ տալով արտաքին աշխարհի մասին: Դրանք սովորաբար նկարահանվում են այնպես, որ բացասական ազդեցություն չթողնեն երեխայի ներաշխարհի ձևա-

վորման ու զարգացման վրա: Այդ առումով դրանք, ինչքան հնարավոր է, պետք է լինեն անթերի, զերծ ամեն տեսակ վրիպումներից: Մի կողմ թողնելով դիպաշարի, գեղարվեստական ընկալումների և հարակից այլ հարցեր՝ ուզում ենք անդրադառնալ լեզվական մի շարք սխալների, որոնք վերաբերում են բառագործածությանը, քերականական որոշ իրողությունների: Լեզվական միջոցների անփույթ կիրառություններն ու թարգմանությունները կարող են լեզվամտածողության խաթարման պատճառ լինել, որը մեր ազգային գոյության կարևոր հենքերից է:

Փոքրիկները սիրում են ջունգլիների, կենդանիների մասին պատմող պատմություններ լսել և մուլտֆիլմեր դիտել: Նրանց սիրելի մուլտֆիլմերի ցանկում միշտ առաջնային տեղում է գտնվում «Մադագասկար»-ը: Ողջունելի է, որ մուլտֆիլմը թարգմանվել է հայերեն, հիանալի ձայներ են, կրկնօրինակող խումբը մեծ աշխատանք է կատարել, սակայն հայերեն տեքստում առկա են բազմաթիվ լեզվական սխալներ:

Բառը լեզվական կարևոր միավորներից մեկն է, որը իր դերն ունի թե՛ բառագիտության, թե՛ ձևաբանության և թե՛ շարահյուսության ոլորտներում: Ճիշտ բնութագիր է տալիս բառին Ա. Սուքիասյանը՝ գրելով.

«Լեզուն թեև իր հաղորդակցման կարևոր դերը նախադասության շնորհիվ է կատարում, բայց, այնուհանդերձ, բառը մնում է իբրև հիմնական, կենտրոնական միավոր, անկախ այն բանից, թե լեզվի մեկնակետը նախադասությունն է համարվում, թե ձևույթը (հնչյունի և իմաստի միաձուլության տեսակետից նվազագույն միավորը)»[1]: Ուրեմն պետք է շատ զգույշ լինել բառերը գործածելիս, մինչդեռ բառագործածական սխալները ողողել են մուլտֆիլմը: Բերենք մի քանի օրինակներ, որոնք առանձնացրել ենք մուլտֆիլմից:

Զեբր Մարտինն ասում է առյուծ Ալեքսին. «Դու ճիշտ մարդու մոտ ես եկել, ընկերս»: Մուլտֆիլմում ամեն ինչ կարող է լինել: Օրինակ՝ զեբրը կարող է մարդու պես խոսել, սակայն նա իր մասին չի ասի՝ ճիշտ մարդու մոտ ես եկել: Կարելի էր հեշտությամբ խուսափել «մարդ» բառից և այս ամենը արտահայտել այսպես՝ «Ինչ էլ գիտես, թե ում պիտի դիմես», «Լավ է, որ ինձ մոտ ես եկել»:

«Պետք է դուրս գաս նույն, ձանձրալի առօրյայից»: Եթե առօրյան ձանձրալի է, ուրեմն այն միապաղաղ է, անհետաքրքիր, բայց ոչ նույնը:

[1] Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 2004, էջ 91:

Զեբրն ասում է, որ ուզում է գնալ վայրի բնություն: Առյուծը պատասխանում է. «Էլ այդպես չասես, թե չէ՝ իրոք անհանգստացել էի»: Այստեղ խոսքը ասելու ձևի՝ ինչպես ասելու մասին չէ, այլ ասվածի բովանդակության՝ ինչ ասելու մասին: Թարգմանելիս կարող էին օգտագործել «Էլ այդպիսի բան չասես…» կամ «Էլ նման բան չասես…» ձևակերպումները:

Առյուծը մսի կտորի մասին ասում է. «Իմ քաղցր, հյութալի սթեյք»: Այստեղ ևս նկատելի է բառագործածության սխալ: Միսը կարող է լինել անուշահամ, համեղ, բայց ո՛չ քաղցր: Այս նախադասության մեջ քաղցր բառի գործածումը տեղին չէ:

«Ո՞ւր վերացավ դասային անհավասարությունը»: Ընդունելի է, երբ ասում ենք «ո՞ւր կորավ», քանի որ կորած բանը մեկ այլ՝ անհայտ վայրում է: Իսկ այն, ինչ վերացել է, չի կարող այլ տեղում լինել: Ձևակերպումը ճիշտ կլիներ, եթե ասվեր «Ինչո՞ւ վերացավ դասային անհավասարությունը» կամ «Ո՞ւր կորավ դասային անհավասարությունը»:

Մուլֆիլմում հնչում է հետևյալ սխալ կառույցը. «Ես երազո՞ւմ եմ»: Իրավիճակը շատ նման է և՛ երազանքի, և՛ երազի, բայց այստեղ խոսքը երազ տեսնելու մասին է: Իմաստային շփոթ չառաջացնելու համար ճիշտ կլիներ օգտագործել «Ես երա՞զ եմ տեսնում» կառույցը:

Մուլտֆիլմի տեսարաններից մեկում, երբ առյուծը բնազդաբար կծում է զեբրին, վերջինս հուզված հարցնում է. «Հետույքս որպես աղա՞նդ»: Ակնհայտ է բառի սխալ գործածությունը: «Աղանդը իշխող եկեղեցու դավանանքից շեղվող կրոնական ուսմունք է»[2]: Պարզ է, որ այստեղ խոսքը աղանդերի՝ ճաշից հետո մատուցվող «թեթև ուտելիքի»[3] մասին է:

Նկատելի են նաև դերանունների սխալ կիրառություններ: Օրինակ՝ մի քանի անորոշ դերանունը «արտահայտում է անորոշ, բայց ոչ մեծ քանակի գաղափար՝ նախադասության մեջ հանդես գալով որոշչի շարահյուսական պաշտոնով»[4], և պահանջում է եզակի թվով դրված որոշյալ: «Մենք գտել ենք մի քանի օգնող ձեռքեր»: Պետք է լիներ՝ «Մենք գտել ենք մի քանի օգնող ձեռք»:

---

[2] Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ.Մ., Հոմանիշների, հականիշների, դարձվածքների, ուղղագրական, բացատրական դպրոցական բառարան, Եր., 2007, էջ 322:

[3] Տե՛ս նույնը, էջ 322:

[4] Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., 2004, էջ 187:

Ահա դերանվան մեկ այլ սխալ կիրառություն. «Քո ընկերը որսորդ է, ով միս է ուզում», «Կենդանիների պաշտպանները, ում շնորհիվ այս կենդանիներին ուղարկել էին Աֆրիկա...»: Ո՛չ թե «ով», այլ «որը», ո՛չ թե «ում», այլ «որոնց»: Այսպես՝ «որսորդ է, որը», «պաշտպանները, որոնց»:

Թվարկած լեզվական սխալները մուլտֆիլմում այսքանով չեն սահմանափակվում, դրանց թիվը հասնում է տասնյակների և ներթափանցում երեխաների բառապաշար:

Մյուս մուլտֆիլմը, որ հազարավոր փոքրիկների ուշադրությանն է արժանացել, կանաչ, անճոռնի հսկայի մասին պատմող «Շրեկ» լիամետրաժ մուլտֆիլմն է: Այն կինոարտադրության պատմության մեջ առաջինն էր, որ արժանացավ «Օսկար» մրցանակի: Ցավոք, մուլտֆիլմում լեզվական սխալներն այնքան շատ են, որ խանգարում են բազմերանգ և զվարճալի պատկերները դիտել առանց ուշադրությունը շեղելու: Կրկնօրինակող խմբի կատարած աշխատանքը լիարժեք կլիներ, եթե չլինեին լեզվական սխալներ:

Մուլտֆիլմը զերծ չէ քերականական սխալներից: Պարբերաբար հանդիպում ենք հետ կապի սխալ գործածության դեպքերի: «Հետ կապը արտահայտում է միասնության՝ միասին լինելու, մի բան անելու հարաբերության իմաստ, որը դրսևորվում է մեծ մասամբ տեղի ու ժամանակի ընդհանրության հողի վրա»[5]: Ահա մի քանի օրինակ՝ «Հեյ, գիտե՞ս թե նա ինչ կարող է անել քեզ հետ: Կաղա ոսկորներդ», «Շրեկ, ի՞նչ ես արել արքայադստեր հետ», «Չգիտեմ ինչ էր եղել ինձ հետ», «Նայիր, թե ինչ է արել քեզ հետ», «Շրեկ, ի՞նչ է եղել քեզ հետ», «Գեղեցիկ թագավորն ի՞նչ է արել Ֆիոնայի հետ»: «Դու ինձ հետ լավ չես վերաբերվում»: Եթե վերաբերվում, ուրեմն դարձյալ առանց հետ-ի: Իսկ հետ կապի գործածության դեպքում կարող էր թարգմանվել «Դու ինձ հետ լավ չես վարվում» ձևով:

Մուլտֆիլմում նկատելի է ավելորդ կապերի գործածություն: Այս անգամ ավելորդ կապը մասին-ն է. «Կափսոսա այն օրվա մասին, երբ խլեց իմ թագավորությունը»: «Հոգ էի տանում ձեր սիրո բույնի մասին»: «Աղջիկներ, սրանից հետո մենք ենք հոգ տանելու էս գործի մասին»: «Մի վախեցիր, մենք ամեն ինչի մասին հոգ կտանենք»: «Մեկը կա, որի մասին պետք է հոգ տանել»: Հայերենում ափսոսում, հոգում, հոգ են տանում ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի համար, այլ ո՛չ մասին: Բերված օրինակներում միայն մասին

[5] Թելյան Լ., Շարահյուսական նորմ. կապերի գործածությունը, Եր., 2019, էջ 83:

կապի գործածումը չէ, որ սխալ է: Երկրորդ օրինակը ընդունելի կլիներ, եթե ասվեր ոչ թե «սիրո բույնի», այլ «սիրո բնի»:

Մուլֆիլմում հնչում է հետևյալ սխալը՝ «Ինձ ինչո՞ւ ես հարցնում, նրանից հարցրու»: Ինչ-որ մեկից իմանում են, իսկ հարցնում են ինչ-որ մեկին: Ճիշտ է՝ «նրան հարցրու»:

«Երբեմն նախադասության մեջ գործածվում են բառեր, որոնք ավելորդ են, քանի որ այդ բառերի իմաստն արդեն արտահայտում է կից գործածված մյուս բառը կամ բառերը»[6]: «Համար առաջին հարսնացուն մի բանտարկյալ է»: Այս սխալը ամենագործածականն է: Պետք է ասվեր կա՛մ «թիվ մեկ», կա՛մ պարզապես «առաջին»:

«Ճիշտ կանես դիետայի վրա նստես»: Կրկին բառագործածության սխալ և օտարաբանության առկայություն: Նախ՝ դիետայի փոխարեն կարելի էր օգտագործել հատուկ սննդակարգ արտահայտությունը, բացի դրանից՝ դրա վրա չեն նստում: Դրան հետևում են, կամ պահպանում:

Ահա ևս մեկ սխալ, որին հանդիպում ենք մուլտֆիլմում՝ «ամեն ինչ այդպես չէ»: Երեխաների համար փոքր-ինչ դժվար է կռահել, որ խոսքը «դու ճիշտ չհասկացար»-ի մասին է:

Նշված սխալների բնույթը ցույց է տալիս, որ մուլտֆիլմի կրկնօրինակումը կատարվել է ոչ թե բնագրից, այլ ռուսերենի միջնորդությամբ, քանի որ նշված կառույցները ռեւսերենին են բնորոշ:

Նման սխալներ թերևս շատ են հնչում հեռուստաեթերից: Եթե վերոնշյալ մուլտֆլմերում տեղ գտած լեզվական սխալները սխալ թարգմանության արդյունք էին, ապա շատ ավելի տհաճ երևույթի ենք բախվում, երբ լեզվական սխալներ նկատվում են հայկական արտադրության մուլտֆիլմերում: Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի հիման վրա նկարահանված համանուն մուլտֆիլմում տեղ են գտել մի շարք լեզվական սխալներ:

Մուլտֆիլմում փորձ է արված ներկայացնել բարու և չարի կռիվը, հայրենասիրության և արհեստների գովքը, սակայն լեզվական պատկերը գրեթե փոշիացնում է ներկայացված արժեքները: Երեխաների համար գուցե հետաքրքիր, ծիծաղելի և տպավորվող արտահայտություններ են հնչում, սակայն համարժեք հայերեն տարբերակներն ավելի հայեցի կդարձնեին մուլտֆիլմը: Ստորև ներկայացնում ենք «Անահիտ» մուլտֆիլմում տեղ գտած լեզվական սխալները:

[6] Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2012, էջ 239:

Անդրադառնանք մուլտֆիլմի մի քանի կերպարների: Հետաքրքրական է Անդոկի՝ Անահիտի ձիու կերպարը: Այս կերպարում միախառնված են մի քանի լեզվի իմացությունն ու ողջ ընթացքում դրանց օգտագործումը: Մուլտֆիլմում Անդոկն ասում է. «Ի՞նչ կա որ, սյուրպրիզ ա», «Վայ, ես մեռա, իսծերիկա»: Անդոկը կարող էր սյուրպրիզ բառի փոխարեն ասել անակնկալ, է օժանդակ բայն օգտագործեր ա-ի փոխարեն, իսկ հաջորդ արտահայտության փոխարեն՝ չեմ դիմանում, հիմա կուշաթափվեմ ձևակերպումն օգտագործել:

Մուլտֆիլմի ստեղծագործական անձնակազմը փորձել է Սայաթ-Նովայից անմասն չմնալ և Անդոկի բառապաշարին ավելեցրել է Սայաթ-Նովայի գրվածքի ոճը. «Յիս էն Անդոկսին ձին չիմ, վուր ավզի վրա հիմնանանամ»: Սայաթ-Նովան իր «Թամամ աշխարհ պտուտ էկա» բանաստեղծության մեջ իրեն Սայաթ-Նովասի է անվանում, ինչը փորձում է անել նաև ձին, իսկ վերջում հիմնանամ բառը, որ ունի հենվել, հիմնվել նշանակությունները, դառնում է հիմնանանամ:

«Էդ պռակատից աման-չաման ա»: Նկատելի են օտարաբանություն, դերանվանական և ձևաբանական սխալ ձևակերպումներ: Կրկին ա-ի սխալ կիրառում: Իսկ պռակատ բառը վարձույթով փոխարինելը և էդ-ը՝ այդ-ով, խոսքն ավելի գեղեցիկ կդարձնեին:

Հաճախակի ենք մուլտֆիլմում հանդիպում օտարամոլ Անդոկի լատիներեն արտահայտություններին, որոնք թեմայի հետ բացարձակ առնչություն չունեն: Օրնակ՝ homo homini lupus est (մարդը մարդուն գայլ է), post scriptum (հետգրություն), terra incognita (անհայտ երկիր), mea culpa (իմ մեղքը) և այլն:

Մուտֆիլմի մեկ այլ հերոս իր խոսքում անդադար թույլ է տալիս ձևաբանական սխալներ. «Ու հլը ուզում ես գնալ մենակո՞վ: /Մարդիկ են կորչում օրը ցերեկով»: Այսպես է խոսում արքունական ներկայացուցիչ Սերոբը՝ արքայի խնամակալը, ումից սպասելի էր բարձր ոճի խոսվածք: Մինչդեռ նա կարող էր հլը-ն դեռ, իսկ մենակով-ը մենակ, միայնակ ձևերով փոխարինել:

Արքայի հորեղբայրը ևս զերծ չի մնացել լեզվական սխալներ թույլ տալուց: «Էս ո՞նց էսքան արագ հայտնվիր»: Պալատական Ազարը կարող էր ասել «Այս ինչպե՞ս այսքան արագ հայտնվեցիր»:

«Կարևորը ինձ չքաշես: Դե փախար դու այստեղից»: Ճիշտ կլիներ ասել. «Կարևորը ինձ վատ վիճակի մեջ չգցես: Դե հեռացիր այստեղից»:

Ազարը այսպես ներկայացնում է փողոցային խոսվածք, և այն էլ ոչ թե Վաչագան արքայի ժամանակաշրջանի, այլ մեր օրերի:

«Գահասենյակում դարերով ի վեր / Երբեք չեն դրվել ավելորդ իրեր»: Ճիշտը դարեր ի վեր ձևն է:

«К чертовой бабушке»: Այս ռուսերեն արտահայտության փոխարեն կարող էին լինել փոխարինող բազմաթիվ հայերեն արտահայտություններ՝ գրողի ծոցը, սատանան քեզ հետ և այլն:

Մուլտֆիլմում արքայի շունը՝ Զանգին, կարողանում է խոսել և թույլ տալիս լեզվական սխալներ: «Ուրեմն լսեք, բանը նրանում ա». ռուսերեն дело в том-ի պատճենումն այն կոպիտ լեզվական սխալներից է, որ ներթափանցել է մեր լեզվի մեջ: Այս արտահայտությունը հեշտորեն կարող էր փոխարինվել բանն այն է ձևակերպումով:

«Է՛, ձյած Սերոբ, ինչի՞ց ես խաբար»: Այստեղ արդեն նկատվում է լեզուների խառնաշփոթ: Հայերեն, ռուսերեն և թուրքերեն բառերի խառնուրդը նախընտրելի կլիներ ամբողջովին հայեցի դարձնել և ասել. «Է՛, քեռի Սերոբ, ինչի՞ց ես տեղյակ»:

Մուլտֆիլմում մեծ ուշադրության է արժանանում Վաչագան արքայի կերպարը: Արքան մեծ ջանքեր է գործադրում արհեստ սովորելու համար, նրա միջոցով ցույց է տրվում արհեստների կարևոր դերը ժողովրդի կյանքում: Արհեստի իմացությունը կարող է նույնիսկ կյանքեր փրկել, բայց թույլ տված լեզվական սխալների շտկումը կարող է ավելի գեղեցկացնել այս ամենը: Ներկայացնենք մի քանի լեզվական սխալ, որ թույլ է տալիս Վաչագան արքան:

«Արագացրա, Սերոբ»: Ահա այսպես է խոսում մուլտֆիլմի գլխավոր հերոս Վաչագան արքան, որ կրթված և դաստիարակված է: Հայոց լեզվում «հրամայական եզակիում ու վերջավորություն են ստանում պատճառական բայերը. դա դրվում է կատարյալի հիմքի վրա»[7]: Արքային ոչինչ չէր խանգարի ասել՝ «արագացրու»:

«По коням»,-կոչ է անում Վաչագան արքան: Կարելի էր օտարաբանությունից խուսափել և ասել դեպի նժույգները կամ ձի՛ հեծեք:

Երբ Վաչագան արքան Սերոբին տեսնում է գետնին ընկած, ասում է. «Սերոբ, ընկել ես հողի՞ն»: Գուցե արքան բառագործածական սխալը կատարել է և պարզապես չի ասել գետնին, որպեսզի հանգավորված լինի Սե-

[7] Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Եր., 2004, էջ 311:

րոբի պատասխանի հետ (Սերոբը պատասխանում է. «Ես աչքիս հանձնվեմ դողին»), և սա ներկայացվում է իբրև լեզվական բարձր մշակույթ:

Հետաքրքրական է մեկ այլ արտահայտություն, որ լսվում է մուլտֆիլմում. «Այդ ի՞նչ էր՝ գա՞յլ էր, գազա՞ն, կենդանի՞»: Այստեղ գերակշռում է լեզվական անտրամաբանություն և բառիմաստային սխալ ձևակերպում: Պարզվում է՝ գայլը ո՛չ գազան է, ո՛չ կենդանի, գազանն էլ ո՛չ գայլ է, ո՛չ կենդանի:

Հայ հեքիաթագրության դասական ներկայացուցիչ Ղազարոս Աղայանը Թումանյանին գրած իր նամակներից մեկում սրտի ցավով պատմում է, թե ինչ հեշտությամբ է մեր ժողովուրդը մոռանում իր հին զրույցները, հիշելիս էլ պատահում է՝ աղավաղում է դրանք:

Աղայանը խիստ կարևոր, հրատապ էր համարում բանավոր մաքուր ակունքից վերցրածը գրի միջոցով նույնքան մաքուր պահպանելն ու սերունդներին փոխանցելը:

Ցավալի է, բայց փաստ է, որ մեր օրերում երեխաները մեծանում են՝ սնվելով հիմնականում օտար մշակույթով: Պետք է ջանալ անել ամեն ինչ երեխաներին բոլոր հնարավոր դեպքերում ազգային անխառն մշակութային արժեքներով սնելու համար: Աղայանի «Անահիտ» հեքիաթը այդ արժեքներից մեկն է, որ այսպես անխնա ապականվել է:

Այսպիսով՝ խուսափելու համար մուլտֆիլմերում և առհասարակ եթերում հնչող լեզվական սխալներից, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մատուցվող խոսքին, հոգալ, որ մինչ եթերից հնչեցնելը խոսքը շտկվի խելացի, գրագետ և լեզվական կառույցներին գիտակ անձանց կողմից: Ժամանակակից սերնդի համար անհրաժեշտություն է լեզվական սխալ կառույցներից զերծ մուլտֆիլմեր ունենալը, որպեսզի կարողանան ճիշտ դաստիարակվել ու կրթվել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու (ձևաբանություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2004, 432 էջ:
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, «Լիմուշ», Եր., 2012, 295 էջ:
3. Թելյան Լ., Շարահյուսական նորմ. կապերի գործածությունը, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, Եր., 2019, թիվ 2 (29), էջ 79-89:

4. Սահակյան Վ.Ա., Սահակյան Վ.Մ., Հոմանիշների, հականիշների, դարձվածքների, ուղղագրական, բացատրական դպրոցական բառարան, Հեղինակային հրատ., Եր., 2007, 396 էջ:
5. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևանի համալս. հրատ., Եր., 2004, 352 էջ:
6. https://www.langcom.am
7. https://blog.168.am/blog/256072.html
8. https://www.langcom.am

LINGUISTIC ERRORS IN CARTOONS

BADOYAN ARPINE
1st-year MA student of the Department of Armenian Language and Literature,
Faculty of Philology, Gavar State University
e-mail: badoyan.arpine@mail.ru
Academic Supervisor: Asoyan Tatul
PhD in Philology, Associate Professor

We encounter linguistic errors in both written and oral speech. It is much uglier when seen and heard on TV. In particular, this targets the children, who immediately perceive and learn the wrong linguistic structures. In this respect, the topic is actual and needs to be observed.

In the article, we particularly referred to the American-made cartoons such as "Madagascar" (2005), "Shrek" (2001) with Armenian translation, and the cartoon "Anahit"(2014) shot with the eponymous fairy tale by Ghazaros Aghayan. We tried to present the linguistic errors discovered there and to give their correct formulations.

Translating or creating Armenian cartoons, it is necessary to observe the norms of literary Armenian in order to develop children's oral speech and to avoid linguistic errors.

Key words: *language mistakes, cartoons, "Madagascar", "Shrek", "Anahit", unnecessary words, barbarism.*

ЯЗЫКОВЫЕ ОШИБКИ В МУЛЬТФИЛЬМАХ

БАДОЯН АРПИНЕ
Студентка 1 курса магистратуры отделения
армянского языка и литературы
филологического факультета ГГУ,
электронная почта: badoyan.arpine@mail.ru
Научный руководитель: Асоян Татул
Кандидат филологических наук, доцент

Мы встречаем языковые ошибки как в письменной, так и в устной речи. Наиболее неприемлемо, когда мы видим и слышим языковые ошибки в телеэфире. В опасной зоне находятся, в особенности, дети, непосредственно воспринимающие и усваивающие неправильные языковые конструкции, озвученные в эфире. Исходя из того, что телеэфир насыщен различными языковыми ошибками, исследуемая тема актуальна и заслуживает внимания.

В статье мы особо отметили мультфильмы американского производства «Мадагаскар» (2005), «Шрек» (2001) с армянским переводом и одноименный мультфильм по сказке Газароса Агаяна «Анаит» (2014). Мы пытались представить в них языковые ошибки, а также привести правильные языковые формы.

При переводе или создании армянских мультфильмов необходимо соблюдать нормы армянского литературного языка, чтобы развивать устную речь детей и избегать языковых ошибок.

Ключевые слова: *языковые ошибки, мультфильмы, «Мадагаскар», «Шрек», «Анаит», лишние слова, заимствования.*

ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱՆՈՒՇ
Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ shahum1986@gmail.com
Գիտական ղեկավար՝ Իսկանդարյան Նաիրա բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածում քննվում են մայրենիի ուսուցման գործընթացում ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառելիության և արդյունավետության հարցեր: Ներկայացվում են «Դերային խաղ» և «Բացատրական ընթերցանություն» մեթոդների արդյունավետության որոշմանն ուղղված հետազոտության և թեմայի վերաբերյալ կատարված փորձագիտական հարցման արդյունքները:


Ուսուցման մեթոդների ընտրության և կատարելագործման հարցերը միշտ եղել են և կլինեն մանկավարժության ամենակարևոր խնդիրներից և արդիական բոլոր ժամանակներում: ժամանակակից ուսումնական պրակտիկայում ուսուցիչների մեծ մասը (87%) նախընտրում է մայրենիի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների միասնությունը, ընդունում բոլոր մեթոդների արդյունավետ լինելը: Մայրենիի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բոլոր մեթոդները փոխկապակցված են, որոշ հին մեթոդներ կամ դրանց տարրեր դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը և կիրառելի են նաև այսօր, որոշ մեթոդներ փոխարինվել են նորերով, իսկ ժամանակի պահանջին զուգահեռ ի հայտ են եկել նաև նոր մեթոդներ: Վերոնշյալ գործընթացը շարունակական և զարգացող բնույթ ունի: Մայրենիի ուսուցման ժամանակակից պահանջներում առաջին հերթին կարևորվում է վերջնարդյունքը, և դրան հասնելու համար բոլոր տեսակի մեթոդներն ընդունելի են, իսկ այդ հարցում որոշում կայացնողը միայն ուսուցիչն է:

Բանալի բառեր՝ *արդյունավետ ուսուցում, ավանդական մեթոդներ, ժամանակակից մեթոդներ, դերային խաղ, բացատրական ընթերցանություն, ԽԻԿ համակարգ, կորելացիոն վերլուծություն:*

Կրթության ոլորտը անընդհատ փոփոխվող ու զարգացող բնագավառ է: Ժամանակի ընթացքում կրթության նպատակների և բովանդակության փոփոխման հետ մեկտեղ փոխվում են նաև ուսուցման մեթոդները: Հայաստանի ներկա անցումային և ճգնաժամային փուլում անհրաժեշտ է գտնել կրթության կազմակերպման այնպիսի տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնք կարող են ապահովել լավագույն արդյունք:

Ապացուցված փաստ է, որ ժամանակակից երեխային արդյունավետ չէ ուսուցանել միայն ավանդական մեթոդներով, քանի որ նման մոտեցումը նրա մոտ հետաքրքրություն չի առաջացնում ուսման հանդեպ, իսկ մյուս կողմից էլ ժամանակակից մեթոդներով ուսուցումը պահանջում է մանկավարժների կողմից դրանց լիարժեք տիրապետում և կիրառում, դասարանում աշակերտների քիչ թվաքանակ, դպրոցների՝ արդի տեխնոլոգիաներով հագեցվածություն, որոնց բավարար չլինելը երբեմն դժվարություններ է ստեղծում հանրակրթական դպրոցներում:

Ուսուցման ժամանակակից գործընթացում օգտագործվում են ինչպես ավանդական, այնպես էլ դասավանդման նորարարական մեթոդներ: Անհրաժեշտ է ոչ միայն առաջ շարժվել ժամանակակից մեթոդներով, այլև չմոռանալ ավանդական մեթոդների մասին, որոնք պակաս արդյունավետ չեն, և որոշ դեպքերում առանց դրանց հնարավոր չէ:




Գծապատկեր 1. Դասավանդման ավանդական և ժամանակակից մեթոդներ:

Կրտսեր դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում ավանդական և ժամանակակից մեթոդների կիրառելիությունը և արդյունավետությունը

պարզելու նպատակով կատարել ենք երկու հետազոտություն, ստորև ներկայացված են արդյունքները:


Առաջին հետազոտության ընթացքում մեր կողմից կազմված փորձագիտական հարցաթերթով ուսուցիչների շրջանում փորձել ենք պարզել մայրենիի դասավանդման մեթոդների կիրառելիությունը հանրակրթական դպրոցներում, նախընտրելի մեթոդները և դրանց հետ կապված խնդիրները: Հարցումն իրականացվել է թղթային և առցանց տարբերակով (Google Form ծրագրի կիրառմամբ), որին մասնակցել են շուրջ 40 ուսուցիչ: Ուսուցիչների 65%-ն ունեցել է 16 տարուց ավելի աշխատանքային ստաժ, իսկ 20%-ը՝ մինչև 5 տարվա ստաժ:

Հարցվածների մեծամասնությունը՝ 87%-ը, կողմ է ավանդական և ժամանակակից մեթոդների զուգակցմանը:




Գծապատկեր 2.

Ուսուցիչների 87%-ը միշտ կամ հաճախ օգտվում է մեթոդական ձեռնարկներից և գտնում է, որ դրանք մատչելի ու օգտակար են:




Գծապատկեր 3.




Գծապատկեր 4.

Ուսուցիչների 37%-ը գտնում է, որ ավանդական մեթոդները չունեն թերի կողմ, մյուսները որպես թերի կողմ են նշել դրանց պասիվ, ձանձրալի, վերարտադրողական և ուսուցչակենտրոն լինելը:




Գծապատկեր 5.

Այլ է պատկերը ժամանակակից մեթոդների պարագայում. 49%-ը գտնում է, որ դրանք թերի կողմ չունեն, մյուսները նշում են դրանց աղմուկ առաջացնող, անկառավարելի, ինքնաբուխ և ժամանակատար լինելը:




Գծապատկեր 6.


Որպես ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառման խոչընդոտներ են դիտվում աշակերտների մեծ թվաքանակը դասարանում, դասասենյակի անհարմարությունը, դասաժամի կարճ տևողությունը և մեթոդական անպատրաստվածությունը:



Գծապատկեր 7.




Գծապատկեր 8. Նախընտրելի մեթոդները՝ ըստ դասի ընթացիկ փուլերի




Գծապատկեր 9.

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ուսուցիչների մեծամասնությունը (85%-ը) գոհ է վերապատրաստման դասընթացներից, իսկ 15%-ը դժգոհ է և որպես պատճառ՝ նշում է, որ դրանք նպատակային չեն, ձևական բնույթ են կրում և մեթոդներ չեն ներկայացվում:




Գծապատկեր 10.

Չնայած որ ժամանակակից ուսուցման գործընթացում ուսուցիչն ազատ է մեթոդներ ընտրելու հարցում, այնուամենայնիվ փորձագիտական հարցման արդյունքում ուսուցիչների մեծամասնությունը՝ 83%-ը, ցանկություն է հայտնել, որ մայրենիի ժամանակակից դասագրքերում թեմաներին զուգահեռ տրված լինեն նաև մեթոդական ցուցումներ, առաջարկվող հստակ մեթոդ տվյալ դասանյութը ուսուցանելու համար:




Գծապատկեր 11.

Հետազոտության արդյունքները վերլուծելիս նկատեցինք, որ փոխադարձ անմիջական կապ կա հարցաթերթում ընդգրկված երեք հարցերին տրված դրական պատասխանների միջև: Այն ուսուցիչները, որոնք գոհ են մեթոդական ձեռնարկներից և մասնագիտական վերապատրաստումներից, ցանկանում են նաև, որ դասագրքերում առկա լինեն մեթոդական ցուցումներ:



Գծապատկեր 12.

Այն ուսուցիչները, որոնք դժգոհ են մեթոդական ձեռնարկներից և վերապատրաստումներից, չեն ցանկանում նաև, որ դասագրքերում լինեն մեթոդական ցուցումներ:



Գծապատկեր 13.

2. Տարրական դասարաններում մայրենիի ուսուցման գործընթացում «Բացատրական ընթերցանություն» և «Դերային խաղ» մեթոդների արդյունավետության հետազոտություն:

Երկրորդ հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք տարրական դասարաններում մայրենիի ուսուցման գործընթացում նշված երկու մեթոդների արդյունավետությունը:

Հետազոտությունն իրականացվել է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Ս. Դարբինյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում 2021թ.-ի փետրվար-մարտ ամիսներին 2 փուլով՝ ձևավորող և ստուգողական: Հետազոտությանը մասնակցել է զուգահեռ 4-րդ դասարաններում սովորող 20 աշակերտ:

Ձևավորող փուլում 4-րդ Ա դասարանում 3 դասաժամ (յուրաքանչյուրը՝ 45 րոպե) բացատրական ընթերցանության մեթոդով ուսուցանվել են Հ. Թումանյանի «Քաջ Նազար», «Սուտլիկ որսկանը», «Կացին ախպեր» հեքիաթները, իսկ 4-րդ Բ դասարանում նույն երեք հեքիաթները երեք դասաժամով ուսուցանվել են դերային խաղի մեթոդով:


1-ին մեթոդով ուսուցման ընթացքում կատարվել է բնագրի ընթերցում, բառային աշխատանք բնագրի շուրջ և ամփոփում: 2-րդ մեթոդով (դերային խաղ) ուսուցման ընթացքում՝ բնագրի ընթերցումից հետո՝ իմաստավորման փուլում, կատարվել է դերերի բաժանում և հեքիաթի դերային ներկայացում: Այն աշակերտները, որոնք դերեր չեն ստացել, եղել են դիտորդի դերում, իսկ դասի ավարտին մասնակցել են քննարկմանը՝ ներկայացնելով իրենց կարծիքն ու ընկալումը հեքիաթի վերաբերյալ:

Ստուգողական փուլում ուսուցման արդյունավետությունը ստուգելու նպատակով 3 շաբաթ անց մեր կողմից կազմված հարցաթերթով կատարել ենք թեստավորում աշակերտների շրջանում: 10 հարցից բաղկացած թեստը գնահատվել է 20 բալանոց համակարգով: Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են երկու դասարանների արդյունքները:


Աղյուսակ 1. երկու դասարանների արդյունքներ՝ 20 բալանոց համակարգ:

Դասարանը	Աշակերտների հավաքած բալերը									
IV Ա	13	13	13	15	17	17	17	18	18	19
IV Բ	13	13	15	16	17	17	17	17	18	18

Արդյունքների զուգակցումից պարզ է դառնում, որ 2 մեթոդների արդյունավետության տարբերությունը գրեթե աննշան է: Ընդհանուր միջին գնահատականը դերային խաղ մեթոդի կիրառման դեպքում 16.1 է, իսկ բացատրական ընթերցանություն մեթոդի դեպքում՝ 16:




Գծապատկեր 14.



Գծապատկեր 15.


Տարբեր մեթոդների կիրառումը բերում է հեքիաթի ընկալման տարբեր մոտեցում, մասնավորապես բացատրական ընթերցանության մեթոդով ուսուցման դեպքում աշակերտների մեծամասնության համար առավել իրական թվացող հեքիաթը «Կացին ախպեր»-ն է, իսկ մյուս մեթոդի կիրառման պարագայում՝ «Քաջ Նազար»-ը:



Գծապատկեր 16.

Բացատրական ընթերցանության մեթոդի կիրառությունը երեխաների մոտ կարծիք է ստեղծում, որ ամենատպավորիչ հեքիաթը «Սուտլիկ որսկանը»-ն է, իսկ դերային խաղ մեթոդի կիրառման դեպքում՝ «Քաջ Նազար»-ը:

Կարող ենք արձանագրել, որ մեթոդի ընտությունը կարող է ազդել աշակերտների կողմից դասանյութի ընկալման վրա:



Գծապատկեր 17

Այսօր մանկավարժական գործընթացում տեխնոլոգիական տարատեսակ հայեցակարգերը, մեթոդական բազմազանությունը ստեղծում են մասնագիտական պրակտիկայում կողմնորոշման հետ կապված լուրջ դժվարություններ: Մեր կարծիքով՝ կրտսեր դպրոցում ցանկացած առարկայի, այդ թվում մայրենիի ուսուցման գործընթացում առավել նպատակային է հաճախ կիրառել խաղային տեխնոլոգիան և նրա մեջ մտնող խաղային մեթոդները (դերային խաղ, լեզվական խաղեր)՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով:

Մայրենիի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների զուգադրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բոլոր մեթոդներն իրար հետ փոխկապակցված են, որոշ հին մեթոդներ կամ դրանց տարրեր դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը և կիրառելի են նաև այսօր, որոշ մեթոդներ փոխարինվել են նորերով, իսկ ժամանակի պահանջին զուգահեռ ի հայտ են եկել նաև ամբողջովին նոր մեթոդներ: Վերոնշյալ գործընթացը շարունակական և զարգացող բնույթ ունի և ժամանակի հետ կրկնվում է՝ պահպանելով իր շղթայական փոխկապակցված ձևը:

Ժամանակակից ուսումնական պրակտիկայում ուսուցիչների մեծ մասը (87%) նախընտրում է մայրենիի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների միասնությունը և ընդունում բոլոր մեթոդների արդյունավետ լինելը:

Զուգադրելով երկու մեթոդների՝ դերային խաղի և բացատրական ընթերցանության արդյունավետությունը մայրենիի ուսուցման գործընթացում՝ պարզ դարձավ, որ երկուսի կիրառելիությունն էլ արդյունավետ է:

Մայրենիի ուսուցման ժամանակակից պահանջներում առաջին հերթին կարևորվում է վերջնարդյունքը, և դրան հասնելու համար բոլոր տեսակի մեթոդներն ընդունելի են, իսկ այդ հարցում որոշում ընդունողը միայն ուսուցիչն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020թ. 74 էջ:
2. Սարուխանյան Ս.,Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, «Վանատուր», 2008թ., 97 էջ:
3. Дидактические и развивающие игры в начальной школе. Методическое пособие с электронным приложением (Сост. Е. С. Галажина), Москва, Планета, 2011г. 272 с.
4. Калугин М. А., Развивающие игры для 1-4 классов, Ярославль, 2006г., 82с.

APPLICABILITY AND EFFECTIVENESS OF TRADITIONAL AND MODERN METHODS OF THE MOTHER TONGUE

SHAHUMYAN ANUSH

2nd-year MA student of the Department of Elementary Pedagogy and Methodology, Faculty of Humanities, Gavar State University

e-mail: shahum1986@gmail.com

Academic Supervisor: Iskandaryan Naira

Associate professor of GSU

The article discusses the issues of effectiveness and applicability of traditional and modern methods in the process of teaching the mother tongue. The results of an expert survey on the topic of “role-play” and “explanatory reading” research to determine the effectiveness of these methods are presented.

Key words: *effective learning, traditional methods, modern methods, role-play, explanatory reading, CPC system, correlation analysis.*

ЭФФЕКТИВНОСТЬ ПРИМЕНЕНИЯ ТРАДИЦИОННЫХ И СОВРЕМЕННЫХ МЕТОДОВ ПРИ ОБУЧЕНИИ РОДНОМУ ЯЗЫКУ

ШАУМЯН АНУШ

Магистрантка 2-ого курса отделения начальной педагогики и методики факультета гуманитарных специальностей Гаварского государственного университета, электронная почта: shahum1986@gmail.com

Научный руководитель: Искандарян Наира Кандидат филологических наук, доцент

В статье рассматриваются вопросы эффективности применения традиционных и современных методов в процессе обучения родному языку. Представлены исследование для определения эффективности использования методов «пояснительное чтение» и «ролевые игры» а также результаты экспертного опроса по теме.

Ключевые слова: *эффективное обучение, традиционные методы, современные методы, ролевая игра, объяснительное чтение, система УПК, корреляционный анализ.*

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ Մ. ԳԱԼՉՈՅԱՆԻ «ՏԱՐԵՄՈՒՏԻՆ» ԱՆԱՎԱՐՏ ՎԵՊԻ ՇՈՒՐՋ

ՄԱՇԱԿԱՐՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ
Վանաձորի պետական համալսարանի
հումանիտար գիտությունների ֆակուլտետի
«Հայոց լեզու և գրականություն» բաժնի
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ varduhimashakaryan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Փիլոյան Վալերի
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածի նպատակն է ներկայացնել Գալշոյան անհատի և գրողի միտումը, արծարծած հարցերի արդիականությունն ու հրատապությունը, պատմության կրկնության, հին և նոր սերունդների փոխհարաբերությունների, մի ողջ ազգի ողբերգության և անցյալի ցավոտ էջերի վերհանումով նոր սերնդի ճիշտ դաստիարակության խնդիրները: Գալշոյանի համար կարևոր է մարդկանց հոգեբանության, հոգին տանջող ցավի, մորմոքի բացահայտումը: Անցյալը մոռանալ կամ բաց թողնել չենք կարող, սակայն պետք է կարողանանք իմաստավորել այն, մեր հայրենիքը և հայի տեսակը պահելով ենք հատուցելու մեր պապերին՝ իրենց թափած արյան համար: Յուրօրինակ պատումով ու սասունցիներին բնորոշ լեզվանյութով Գալշոյանը կարողանում է ազդել ընթերցողի գիտակցության վրա: Կրկնությունները վեպին հաղորդում են քնարականություն ու արտահայտչականություն: Թեև վեպն անավարտ է, սակայն իր անավարտությամբ էլ հայ տեսակի մաքառման, պարտության ու հաղթանակի վկայությունն է:

Բանալի բառեր՝ *Մուշեղ Գալշոյան, բախտորոշ-ողբերգական իրադարձություններ, ճակատագիր, հայրենիք, ծուռ սասունցի, կարոտ, հոգեբանական երկվություն, «Տարեմուտին» վեպ, Մարութա սար, Ագռավաքարի հրաշք:*

Հայոց պատմության մեջ բախտորոշ-ողբերգական իրադարձություններ շատ են եղել, որոնց անդրադարձել են մեր գրողներն իրենց գործերում: Մուշեղ Գալշոյանն իր ստեղծագործությունների նյութ է դարձրել հայ ժողովրդի համար դժվարին ու ողբերգական իրադարձությունները, որ բնութագրում ենք եղեռն բառով:

Գալշոյանի ստեղծագործությունը պետք է ուսումնասիրել նրա կենսադրվագների զուգահեռների համադրմամբ: Նա այն գրողներից է, որն իր կերպարներին չհորինեց, քանզի նրանք կային, ապրում էին հեղինակի հետ կողք կողքի: Նրանք հայրենիք, օջախ, ընտանիք, կին ու երեխա կորցրած մարդիկ էին, որոնք, անշեջ կարոտն իրենց մեջ անթեղած, երբեք չկորցրին հայրենիք վերադառնալու հույսը և հպարտ ու մեջքները շիտակ տարան ճակատագրի ծանր հարվածը: Նրանք խրոխտ ու հպարտ զինվորներ էին՝ վրեժն ու ցասումը սրտներում պահած, բայց ոչ պարտված, քանզի այդ պարտվածի հոգեբանությունը չտեսանք նրանցից և ոչ մեկի մեջ: Ղուկաս Սիրունյանն իր՝ «Գրական թերթում» տպագրած հոդվածում Գալշոյանի հերոսներին անվանում է «պարտված զինվորներ»[1], որի հետ համամիտ չենք, քանզի պատերազմի դաշտից երգով հեռացողները դեռ վերադառնալու են, իսկ Գալշոյանի կերպարներն այդ երգը իրենց հոգիներում պահած սպասում են վերադարձի օրվան:

Պարտվել, նշանակում է հանձնվել, բայց մենք չենք տեսնում և ոչ մի հանձնված սասունցու: Նրանք ծուռ սասունցիներ էին, որ Արաքսի այս ափին տուն դնելով ու ապրելով էլ մնացին իսկական սասունցի, սպասեցին վերադարձին, կարոտեցին, հիշեցին, դառնացան, բայց չհանձնվեցին: Այս դժբախտ ու դժվար ժամանակահատվածի իրադարձությունները գրական նյութ դարձնելով՝ Գալշոյանն ամենևին էլ նպատակ չուներ տանջված ու մաշված մարդկանց հոգիների ցավն ու կսկիծը ավելի բորբոքելու. եղավ այն, ինչ եղավ, բայց ժամանակն էր գործելու, պատմությունից դասեր քաղելու, ժամանակն էր կորցրածը ետ բերելու, այդքան տարիներ սպասումի մեջ ապրած մարդկանց աչքերին լույս բերելու: Իզուր չէ Գ. Անանյանը գրել, որ Գալշոյանը ժողովրդի մոտ անցյալի ողբերգությունները պատկերում է արդիականության տեսանկյունից, նա կերտում է հայրենիքի կարոտը հոգիներում կրող կերպարներ, որոնք ծերանում են կարոտից ծնվող տառապանքի մեջ, բայց մեջքները չեն կռացնում ծանր վշտի տակ[2]:

Գալշոյանի համար առաջնային խնդիր էր անցյալի հերոսական կամ ցավոտ էջերի վերհանումով նոր սերնդի ճիշտ դաստիարակությունը: Պատմության դաժան և ճակատագրական խնդիրներից Գալշոյանը անցում է կատարում ներկային: «Տարեմուտին» վեպում տեսնում ենք վերը նշվածի հաս-

[1] https://www.grakantert.am/archives/3929

[2] Տե՛ս Անանյան Գ., Որոնումներ, Ե., «Հայաստան» հրատ., 1974թ., էջ 239:

տատումը: Այս վեպը «Մարությա սարի ամպերը» պատմվածաշարի վիպական արտահայտությունն է, «Էս հին ու նոր օրեր...» պատմվածքի գաղափարական շարունակությունն ու ընդլայնումը: Այստեղ նաև հարկ է նշել, որ յուրօրինակ է պատումի ձևը, քանի որ ուղղակիորեն միաժամանակ միմյանց միահյուսվում են երկու, նույնիսկ երեք պատումներ՝ «-Հասմիկ, այս ինչքան լավ է գրել... Մարութը չեկավ՝ մի բաժակ օղի խմեինք, այս ինչքան ճիշտ է գրել Կոստան Զարյանը,- «Հայոց դաժան լեռներում քայլում էին աստվածները բարկացած»,-Կրակի պես ներս են մտնում, հարսանիքը, բոցավառվում է,- Գևորգ, Անդրանիկ, Մակար, Սմբատ... Լեռան որդիներ... Խաբրիկ Նորե... այս ծխոտ տունն ու այս սուրբ սեղանը ձեզ փեշքեշ... Ոչ, ոչ, եղածը ֆիդայիների համար լի ու բոլ է, ֆիդայիների համար այս սեղանը թագավորի սեղան է...»[3]: Այս կերպ նա ավելի ընկալելի ու բնական է դարձնում իր ասելիքը. Էլ ինչ հարսանիքի նկարագրություն, էլ ինչ երգ ու երաժշտություն այդ պահին մոտ գտնվելու, առանց նրանց խրոխտ երգ ու պարը տեսնելու ու լսելու, որին էլ այս եղանակով ձգտում է Գալշոյանը: Սասունցիներին այս հոգեհարազատությունն էլ հենց պայմանավորված է գրողի անհատականությամբ: Նա ինքը սասունցիների ժառանգ էր, հայրն էլ Սասունից էր գաղթել, կորցրել էր ընտանիքը, ինքը մանկուց լսել էր նրանց դառը-դժբախտ պատմությունները, սրանով է պայմանավորված նաև սասունցիների տիպիկ կերպարներ կերտելու հմտությունը: Մեծանալով սասունցիների միջավայրում՝ Գալշոյանը նրանց հետ զգացել, կարոտել, «հիշել է». այո՛, հիշե՛լ, քանզի Գալշոյանն այնպիսի բանիմացությամբ է կերտում Սասնո աշխարհի կյանքը, որ կարծես ինքն էլ նրանց հետ միասին ապրել է այնտեղ, մասնակցել հարսանիքներին, ֆիդայիների հետ ապրել լեռներում՝ «- Դու այդ հարսանիքը չես պատկերացնում, Հասմիկ, բոլորովին չես պատկերացնում, իսկ ես տեսնում եմ»[4]: Նա փորձում է իր տեսածն ու լսածը, իր զգացածը, զգացմունքային, քնարական տարրերով ընթերցողի հոգուն ու մտքին ընկալելի դարձնել, որին էլ հասնում է ոչ միայն Սասուն աշխարհի յուրօրինակ լեզվական նյութով, այլև տեղին կրկնություններով: Այդ կրկնությունները ոչ միայն պահն են իրական դարձնում, այլև խոսքին յուրահատուկ արտահայտչականություն հաղորդում. խոսքը դառնում է բանաստեղծական, ի հայտ է գալիս ռիթմը՝ «Անդոկի գլխին քարերի մեջ մի քար կար, քարերի մեջ, քարերի մեջ,

[3] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 295:
[4] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 286:

քարերի մեջ, փայտերի մեջ մի ժայռ կար և այդ ժայռի անունը Քարանձավ Խևոն կնքել էր Ագռավու քար»[5]: Ըստ երևույթին գրողը գրքի էջերին է հանձնել իր ընտանիքի կյանքից մի դրվագ և այս անավարտ մնացած ստեղծագործության մեջ տվել այնպիսի կերպարներ, որ իրենց մեջ խտացնում են մի ողջ ազգի ու կյանքի դառը պատմություն: Օվեի կերպարի մեջ ամբողջացած է հոր կերպարը, որի միջոցով էլ հեղինակը դնում է անձի հոգեբանական երկվության խնդիրը, որի հետ բախվում են գաղթի հետևանքով այլ հողի վրա տուն ստեղծած մարդիկ, այդ հողն էլ էր Հայաստան, բայց Սասուն չէր: Խևիկը Գալշոյանն է, Գալշո Մանուկի թոռը, որին հայրը կնքել է եղբոր անունով, իսկ Խևիկի եղբոր անունը Մարութ է՝ Մարութա սարի նմանությամբ: Այդ կերպ նա փորձում է անցյալի շունչը պահել. ոչ միայն սրտի տաքուկ անկյունում ունենալ Սասուն, այլև այդ Սասունը պահել ամեն խոսքի ու պահի մեջ: Հոր կերպարի մեջ դեպքերն ու իրողություններն ավելի խտացված են ներկայացված, առավել ցայտուն են երևում կերպարների խոր դրամատիզմն ու հուզականությունը՝ «...հին ու նոր օրեր իրար խառնած, ժամանակի մեջ ճոճանակի պես տարուբեր, իր տեղն ու տարիքը կորցրած...»[6]:

Խոսելով այս վեպի մասին՝ գրականագետ Վալերի Փիլոյանը նշում է, որ այս ստեղծագործության մեջ է երևում հայ ազգին բնորոշ բարոյականությունը՝ որպես հայոց մարդ-մշակույթին բնորոշ իրողություն[7]: Այստեղ տեսնում ենք մեր էպոսի փլվածքներն ու թռիչքները: Բացահայտ երևում է կապը մեր էպոսի հետ: Այն կերպարները, որոնք ասես գալիս են մեր էպոսից, թերևս լավագույնս են բացահայտում մեր ազգի բարոյական կերտվածքն ու բնավորությունը, դարերի մեջ թշնամուն դիմադրելու կարողությունը: Ազգի բարոյական կերտվածքի խնդիրը կարևորվում է այնքանով, որ հայ ազգը պահում է մեզ բնորոշ ազգայինը, որ եկել է դարերի խորքից և եկել է հաստատուն ու անփոփոխ: Ասվածի ապացույցը վեպում մանուկների կռվի տեսարանն է, քանզի որպես տղամարդ՝ երեխաները պետք է դաստիարակվեն մանկուց, որն էլ տեսնում ենք նաև մեր էպոսում՝ Դավթի կռիվ գնալը: Իր ողջ գրական ժառանգությամբ, մասնավորապես կերտած կերպարներով Գալշոյանը ցույց է տալիս, որ դժվարին ճանապարհին հայ ազգը պահել է իրեն բնորոշ բարոյական սկզբունքը, բնորոշ հատկանիշները, որոնք նրան օգ-

[5] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 317:

[6] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 256:

[7] Տե՛ս Փիլոյան Վ., Ժամանակի ձայները, Եր., «Լուսակն» հրատ., 2008թ, էջ 35:

նում են ապրել ու գոյատևել դժվարին պահերին: Այդ բարոյականությունն է մեզ հայ պահում, փրկում միաձուլումից, և դրա պահպանումը մեր ազգի պահպանումն է: Սա է կարևորում Գալշոյանը, սրա պահպանումն է համարվում առանցքայինը: Անցյալը մոռանալ կամ բաց թողնել չենք կարող, պարզապես պետք է կարողանանք սովորել մեր պապերի անցյալի վրա:

Մեր հայրենիքը պահելով, հայի տեսակը պահելով ենք հատուցելու մեր պապերին իրենց թափած արյան համար: Այս ստեղծագործության մեջ դրված է ինչպես պատմության կրկնության խնդիրը, այլև ազգի ճակատագրի, նրա հանդեպ գործված ոճրագործության խնդիրը՝ «...առավել կոտորում կլինի, քան իննսունյոթ թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան երեք թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան չորս թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան հինգ թվի կոտորումն էր, առավել կոտորում կլինի, քան...»[8]: Եվ պատահական չէ, որ Գալշոյանը շարադրանքն ավարտում է բազմակետերով, կարելի է ասել՝ չի ավարտում, այլ տեղ է թողնում շարունակության համար, քանզի կոտորածների թվարկումը կարող ենք շարունակել մինչև մեր օրերը:

Պատմությունը կրկնվում է, այդ պատմության հետ զուգընթաց անպատժելիությունից կրկնվում է նաև հանցագործությունը, անմեղ մարդկանց արյուն թափելը, իսկ կրկնվում է ամեն մի նոր եկող սերնդի համար, մինչև ամեն մի նոր սերունդ իր վրա չզգա մեր պապերի թափած արյան պատասխանատվությունը: Այս անավարտ վեպում Գալշոյանը ցույց է տալիս, որ ինքը շատ մոտ է կանգնած սասունցիներին հասած ողբերգությանը, նրանց դժբախտությանը, բայց տեսնում ենք, որ դրան անհաղորդ են կինը, երեխաները, որովհետև մարդու համար դժվար է հասկանալ դիմացինի դժբախտությունը, եթե նա չի ճանաչում այդ մարդու հոգին: Միաժամանակ տեսնում ենք ժամանակների, հին և նոր սերունդների բախումները, իր աղջկա համար տատն ուղղակի բառ է, բայց ի՞նչ ասել է սասունցի մանուկի համար տատ, տատը նրա համար մարե է, թանկ, սիրելի, անգին մարե, որի սիրտը անբաժան կապով կապված է մնալու իր թոռների սրտերին:

Գալշոյանը մեծ տեղ է հատկացրել կերպարների հոգեբանական զարգացումներին ու ապրումներին. հայրը, ապրելով ներկայում, ապրում է նաև անցյալում, սակայն ներկայում ապրելը նրա համար ուղղակի գոյատևել է, նա իրական կյանքով ապրել և շարունակում է ապրել իրենց Սասունի տա-

[8] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 315:

նը: Ոչ ոք չի կարող ուղղակի վերցնել և ազատվել իր հիշողություններից ու հոգին տանջող ցավից, ինչպես՝ «...Խաբրիկ Նորեի ցավերն խուրջինի մե՞ջ են, որ խուրջինը ձգե հեղեղի բերանն ու պրծնի... իմ ապրած կյանքն էդ է, ձգուկ, իմ տեսածն ու ապրածն ցավ է՝ ինչպես խաբիմ ու մոլորցնիմ իմ մեջ... Խաբրիկ Նորեն կմեռնի ու կթաղե իր ցավերն»[9], ինչպես կանեն մեր օրերում հայրենիք, տուն, գերեզման, հիշողություն, մի ամբողջ կյանք կորցրած արցախցիները: Գալշոյանը զգուշացնում էր՝ կոտորում կլինի, և այդ կորոտումը եղավ, մի ողջ երիտասարդ ու հեռանկարային սերնդի եղեռն եղավ, մենք կորցրինք մեր երկիրը զարգացնող ու առաջ մղող սերունդը: Այս ստեղծագործության մեջ արդեն իսկ եղած խնդիրները Գալշոյանը ներկայացնում է անձնական օրինակով ու այլ կողմից. վեպը ներկայացնում է հենց ինքը, իր խոսքն է, իր մտքերը, կարիք չկա ինչ-որ կերպարի անվան տակ ներկայացնել իր ասելիքը, ինքն է, իր հայրն ու մայրն են, նրանց կյանքը, կորուստը, և նորից վերածնվելը, զավակներ ու թոռներ ունենալը, այսինքն՝ ազգը, տոհմը շարունակելը:

Առաջին գլխում հանդես է գալիս հեղինակը-կերպարը-պատմողը, որն էլ գործողությունները տանում է առանձին կերպար-մարդկանց ներկայացնելու ճանապարհով:

Երկրորդ գլխում արդեն պատմում է Քարանձավ Խևոն, որն էլ ցավալի բացահայտում է կատարում. «... հրաշք գոյություն ունի՞, մեր բախտի մեջ, մեր բախտի մեջ հրաշք գոյություն ունի՞, Ագռավու քարի ճակատին հրաշք գրված է, թե ոչ...: Չկա, ասաց Քարանձավ Խևոն, հրաշք չկա»[10]: Ագռավաքարի հրաշքը չկար, հրաշքը լեռը պահող ու կռվող տղաներն են՝ Ախո, Խևո, Մնջո, Մանուկ, Չոլո: Պատմությունը կրկնվում է այնքանով, որ թուրք ասկյարի դիմաց մենք մենակ ենք մնում. մենք պետք է սովորենք ինքներս պաշտպանվել և չսպասել ուրիշների օգնությանը:

Վերջին հատվածներում արդեն վեպը ողբերգական ու տխուր երանգ է ստանում, ֆիդայիները, եղածից ուշքի չգալով, իրենց որդիներին ծնկների արանքում սեղմած, մտածում են կատարվածի մասին ու չեն հասկանում՝ «...բա մարդը... մարդը, եթե մարդ է ծնվել, բան ու գործը թողած՝ թուր ու թվանքն առած ընկնի անմեղ մարդու ետևից...»[11], ու ծավալվում են բոլորի

[9] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 316:

[10] Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 317:

[11] Գալշոյան Մ., Պայուսակը, Ե., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 327:

հոգեբանական ծանր ապրումները. մարդիկ չէին հասկանում, թե ինչ կատարվեց, ինչպես եղավ, ուր են հարազատները, կամ ինչն էր կատարվածի պատճառը, ու մտածում են, որ մեղք են իրենց երեխաները, որ այդ վախը իրենց երեխաներին կկործանի, պետք է երեխաներին կռվել սովորեցնել, գոնե կռվելիս նահատակվեն, իսկ Մլքիկը երազ է տեսնում՝ «Անդոկի գլխին կապույտ երկինք, կապույտ երկնքում՝ գունեղ-գունեղ պատկեր…»[12]:

Վեպի անավարտությունը թույլ չի տալիս պատկերացնել սյուժեի հնարավոր զարգացումները, սակայն կարող ենք ասել, որ հայ տեսակի պայքարի, մաքառումների, պարտության ու հաղթանակի վկայություն էր դառնալու «Տարեմուտին» վեպը:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.grakantert.am/archives/3929 :
2. Անանյան Գ., Որոնումներ, Եր., «Հայաստան» հրատ., 1974:
3. Գալշոյան Մ., Պայուսակը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1988:
4. Փիլոյան Վ., Ժամանակի ձայները, Եր., «Լուսակն» հրատ., 2008:

DISCOURSES ON THE UNFINISHED NOVEL "NEW YEAR'S EVE" BY MUSHEGH GALSHOYAN

MASHAKARYAN VARDUHI
2nd-year MA student of
"Armenian Language and Literature" Department
e-mail: Varduhimashakaryan@gmail.com
Academic Supervisor: Piloyan Valeri
PhD in Philology, Associate Professor

The purpose of the article is to reveal the aspirations of M. Galshoyan as a personality and M. Galshoyan as a writer, to unveil the timeliness and relevance of the problems he expressed, to outline important issues that emerge when analyzing the images created by the prose writer, including the problems of the eternal repetition of history, the tragedy of past and new generations, of the whole people and, pointing to the sore pages of the past, to correctly educate the younger

[12] Գալշոյան Մ., Պայուսակը, Ե., «Սովետական գրող» հրատ., 1988թ, էջ 334:

generation. An analysis of the images reveals their specific psychology and deep drama. For M. Galshoyan, both the victory and the identification of human psychology, the pain tormenting the soul, and sorrow are important. The past can neither be forgotten nor set aside; however, we must be able to rethink the past and, preserving our Motherland and the Armenian nation, reward our grandfathers for the blood they shed. With the original narrative and unique speech of the Sasun Armenians, M. Galshoyan succeeded in influencing the consciousness of the reader. Repetitions add lyricism and expressiveness to the novel. The novel has not been completed, however, even in its incompleteness, it is an evidence of the struggle, defeats and victories of the Armenian people.

Key words: *Mushegh Galshoyan, fateful and tragic events, fate, Motherland, Sasun daredevils, melancholy, psychological duality, the novel "On New Year's Eve", Mount Marut, the miracle of the Crow Stone.*

РАССУЖДЕНИЯ О НЕЗАВЕРШЕННОМ РОМАНЕ МУШЕГА ГАЛШОЯНА «НАКАНУНЕ НОВОГО ГОДА»

МАШАКАРЯН ВАРДУИ
Студентка магистратуры 2-ого курса отделения
«Армянский язык и литература»
электронная почта: Varduhimashakaryan@gmail.com
Научный руководитель: Пилоян Валерий
Кандидат филологических наук, доцент

Цель статьи – раскрыть устремления М. Галшояна-личности и М. Галшояна-писателя, выявить своевременность и актуальность выраженных им проблем, обозначить важные вопросы, проступающие при анализе образов, созданных прозаиком, в том числе проблемы вечного повторения истории, трагедии прошлых и новых поколений, целого народа и, указав на наболевшие страницы прошлого, правильно воспитать подрастающее поколение. При анализе образов обнаруживается их специфическая психология и глубокий драматизм. Для М. Галшояна важными являются как победа, так и выявление человеческой психологии, боли, терзающей душу, и скорбь. Прошлое невозможно ни забыть, ни отодвинуть в сторону, однако, мы должны уметь переосмыслить минувшее и, сохранив нашу Родину и армянскую нацию, вознаградить наших дедов за пролитую ими кровь. Оригинальным нарративом и уникальной речью сасунских

армян М. Галшояну удается воздействовать на сознание читателя. Повторы придают роману лиричность и выразительность. Хотя роман и не доведен до конца, однако, даже в своей незавершенности он является свидетельством борьбы, поражений и побед армянского народа.

Ключевые слова: *Мушег Галшоян, судьбоносно-трагические события, судьба, Родина, сасунские удальцы, тоска, психологическое двойничество, роман «Накануне Нового года», гора Марут, чудо Вороньего Камня.*

ԳՅՈԹԵԻ «ՖԱՈՒՍՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԼԶԱԿԻ «ՇԱԳՐԵՆԻ ԿԱՇԻՆ» ՎԵՊԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ khachatryan.mariam.98@gmail.com
Գիտական ղեկավար՝ Առաքելյան Արա
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածի նպատակն է համեմատական վերլուծություն կատարել Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության և Բալզակի «Շագրենի կաշին» վեպի միջև, ներկայացնել առկա նմանությունները և տարբերությունները:

Խնդիր է դրված միմյանց կողքի դնել նշված երկերի համեմատելի եզրերը, մատնանշել Սատանայի ունեցած ազդեցությունը մարդու վրա, ցույց տալ ստեղծագործություններում գոյություն ունեցող եսասիրական հակումները և վեր հանել դրանց մեջ տեղ գտած որոշ սոցիալական խնդիրներ:

Հետազոտությունը իրականացվել է համեմատական վերլուծության մեթոդով:

Վերլուծության արդյունքում արվել է այն եզրակացությունը, որ երկու ստեղծագործությունների գլխավոր հերոսներն ունեն ճակատագրական նմանություններ, հերոսներից ոմանք ունեն նույն խորհրդանշական ներկայությունը և բնավորության նույն տիտանական տեսակը: Ստեղծագործությունների հիմնական առանցքը գերբնական կամ սատանայական ուժով օժտված իրերն ու անձինք են, որոնք որոշում են հերոսների կյանքի ընթացքը և վախճանը:

Բանալի բառեր՝ *գոթական միջավայր, Ֆաուստ, Մեֆիստոֆել, Ռաֆայել, Շագրենի կաշի, մերժման ոգի, Աստված, Սատանա, սոցիալական խնդիր, եսասիրություն:*

18-19-րդ դարերը համաշխարհային գրականության մեջ շրջադարձային էին, ասպարեզ եկան դեմքեր, որոնց ստեղծած աշխատաքները մինչ օրս անմրցելի են: Այս հոդվածում ներկայացվում է այդ շրջանի երկու հայտնի

դեմքերի՝ Յոհան Վոլֆգանգ Գյոթեի և Օնորե դը Բալզակի գլուխգործոցների համեմատական վերլուծությունը:

Գերմանացի Գյոթեն՝ ծնված 1749 թվականին, իրավաբան էր, որն զբաղվում էր նաև բնական գիտություններով: Գյոթեի համար բնությունը ոչ միայն գիտական ուսումնասիրության նյութ էր, այլ գեղագիտական ոգեշնչման աղբյուր, որի վրա կառուցված է նրա ողջ քնարերգությունը: Բնությունից գնալով դեպի մարդկային կյանքը՝ Գյոթեն վերջինիս գեղեցկությունը համարում է ներդաշնակությունը, մշտական ձգտումը դեպի բարին: Գյոթեի ողբերգության սիմվոլիկայի մեջ Աստված մարմնավորում է բնությունը: Մարդը բնության ստրուկն է, քանի որ ծառայում է նրան[1]:

Օնորե դը Բալզակը ծնվել է 1799 թվականին: Իրավաբանական կրթություն ստացած երիտասարդը կարողանում է իրագործել իր գրող դառնալու մեծ երազանքը: 1830-1840-ական թվականներին՝ ստեղծագործական ճանապարհի երկրորդ փուլում: Նա գրում է «Մարդկային կատակերգության» 95 վեպերը: Գրողը մտադրվում է գրել «Մարդկային կատակերգությունը» իբրև մեկ միասնական ստեղծագործություն: Ռեալիստական կերպավորման իր մշակած սկզբունքներին հավատարիմ մնալով՝ նա մտադրվում է ստեղծել իր ժամանակի ֆրանսիական հասարակության գեղարվեստական համարժեքը: Այս մասին Ս. Ա. Սողոմոնյանը ասել է. «Բալզակի վեպում կատակերգություն բառն այլ իմաստ ունի. նրա գրվածքներն ըստ էության կծու ծաղր էին ժամանակակից հասարակության հասցեին: Աստվածայինը դարձել է մարդկային, ամեն ինչ կատարվում է իրական հողի վրա, գործող անձինք իրական մարդիկ են»[2]: Վիպաշարի առաջաբանում Բալզակը գրում է. «Իմ աշխատանքն ունի իր աշխարհագրությունը, ինչպես որ ունի իր ծագումնաբանությունը, իր ընտանիքները, իր տեղավայրերը, իրադրությունը, իր ազնվականությունը և իր արհեստավորներին ու գյուղացիներին, քաղաքագետներին և դենդիրներին, իր բանակը, մի խոսքով՝ ողջ աշխարհը»: «Մարդկային կատակերգություն» վիպաշարը իր կառուցվածքով հիշեցնում է եռաշերտ բուրգ, որի հիմքը «Բարքերի էտյուդներն» են, դրա վրա բարձրանում են «Փիլիսոփայական էտյուդները», իսկ գագաթը կազմում են «Վերլուծա-

[1] Ս. Դ. Արտամոնով, XVII-XVIIIդդ. արտասահմանյան գրականության պատմություն, Երևան, 1986, էջ 560:

[2] Ս. Ա. Սողոմոնյան, Արտասահմանյան գրականություն, Երևան, 1979, էջ 181:

կան էտյուդները»: Մեր ուսումնասիրությունը կատարվում է «Փիլիսոփայական էտյուդներից» մեկի՝ «Շագրենի կաշվի» շուրջը:

Համեմատվող այս երկու ստեղծագործությունները մինչ օրս ունեն իրենց ընթերցողների լայն շրջանակը և չեն կորցրել իրենց տեղն ու դերը համաշխարհային գրականության պատմության մեջ: Ստեղծագործություններում կա յուրահատուկ գոթական մթնոլորտ, որը, անշուշտ, ընթերցողներին պահում է մշտական լարվածության մեջ: Ներկայացվում են տարբեր հասարակարգեր, գրված են տարբեր ժամանակներում, և տարբեր հեղինակների կողմից, սակայն ունեն համեմատության մի շարք եզրեր:

«Ֆաուստ»-ը երկհատոր ողբերգություն է՝ շարադրված ժողովրդական բանահյուսության հիման վրա, գրված 60 տարվա ընթացքում: Ստեղծագործությունը չափածո է և հանգավորված, ունի 22 տեսարաններ: Այն հետաքրքիր է իր կառուցվածքով. կան բազմաթիվ դրվագներ, որոնք ամբողջական, ավարտուն ստեղծագործության տպավորություն են թողնում:

«Շագրենի կաշին» արձակ ստեղծագործություն է, բաղկացած՝ երեք գլուխներից՝ «Թալիսման», «Անսիրտ կինը» և «Հոգեվարք»: Սակայն այս գրքում առկա գլուխները չեն կարող հանդես գալ որպես առանձին ստեղծագործություններ:

«Ֆաուստը» և «Շագրենի կաշին» պարունակում են գերմանական և ֆրանսիական հասարակությանը բնութագրող տարրեր: Հատկանշական է, որ Գյոթեն և Բալզակը փորձել են վերոնշյալ վեպերի գլխավոր հերոսների դերում մարմնավորել իրենք իրենց: Մի անգամ Գյոթեն խոստովանել է, որ ոչ միայն Ֆաուստի մռայլ, չբավարարված ձգտումները, այլև Մեֆիստոֆելի հեգնական ու կծու ծաղրը կազմում են իր սեփական էության մի մասը: Ինչ վերաբերում է Բալզակին, նա «Շագրենի կաշին» վեպի «Անսիրտ կինը» հատվածում ներկայացնում է Ռաֆայել դը Վալենտենի կյանքի պատմությունը, որը կրկնությունն է իր սեփական կյանքի պատմության:

Ֆաուստը և Ռաֆայելը, լինելով հասուն և կիրթ երիտասարդներ, հասել էին այնպիսի ժամանակահատվածի, ուր կյանքը կորցրել էր իր իմաստը, և երկուսի դեպքում էլ մտավոր ու սոցիալական կայուն ու անփոփոխ վիճակը բերել էր հոգեկան տանջանքների: Գյոթեն և Բալզակը իրենց հերոսներին տանջանքից ազատելու համար ընտրել էին ինքնասպանության ճանապարհը: Ֆաուստը պետք է թույնով վերջ տար իր կյանքին, իսկ Ռաֆայելը ընտրել էր Սենա գետն ընկնելու տարբերակը: Բայց ինչ-որ նախախնամությանբ երկուսի փորձերն էլ ի կատար չեն ածվում: Այնուհետև երևան են գալիս

ստեղծագործությունների մյուս կարևոր դեմքերը և առարկաները: Գյոթեն սկսում է Ֆաուստի գործողությունները ծավալել Մեֆիստոֆելի հետ, իսկ Բալզակը Ռաֆայելի կողքին է դնում շագրենի կաշին: Ի սկզբանե պարզ է դառնում Սատանայի ազդեցությունը հերոսների վրա: Հենվելով Մեֆիստոֆելի և շագրենի կաշվի գերբնական ուժի վրա՝ հերոսները փորձում են իրականացնել իրենց ցանկությունները, որի համար, իհարկե, թանկ են վճարելու: Այսինքն՝ Մեֆիստոֆելը և Շագրենի կաշին գտել էին մարդու վրա ազդելու հիմնական միջոցը, և դա մարդու ցանկությունների կատարումն էր: Իզուր չէ, որ Բալզակի վեպում իմանալ, գիտենալ, կարողանալ բառերը ունեն փիլիսոփայական արժեք[3]: Ըստ հնավաճառի՝ մարդուն սպառման հասցնող 2 բառերն են ցանկանալը և կարողանալը: Ցանկանալն այրում է մարդուն, կարողանալը՝ կործանում, բայց գիտենալը մարդուն պարգևում է մշտական հանգստություն:

Սատանայի ազդեցությունը հերոսների վրա եղել է իրենց հոժար կամքով: Ֆաուստը Մեֆիստոֆելի հետ արյամբ հաստատված պայմանագիր կնքեց, որով նա կարող էր վերցնել Ֆաուստի կյանքը հենց այն պահին, երբ նա ասեր «Կա՛նգ առ, վայրկյան, ի՞նչ չքնաղ ես դու», իսկ Ռաֆայելը, կարդալով շագրենի կաշվի գրությունը, որում ակնհայտ էր վաղ թե ուշ մահվան ճիրաններում հայտվելու վտանգը, կրկին համաձայնում է վերցնել այն: Այստեղից կարելի է հետևություն անել, որ Սատանան չի կարող ներգործել մարդու վրա, եթե մարդն իր կամքով թույլ չտա:

Ֆաուստի հետ պայման կապելիս Մեֆիստոֆելը խոստացել էր նրան նախ ցույց տալ միկրոկոսմը, հետո՝ մակրոկոսմը: Գյոթեագետներից ոմանց կարծիքով՝ միկրոկոսմ ասելով՝ պետք է հասկանալ մասնավոր կյանքը, քաղքենիական միջավայրը, իսկ մակրոկոսմ ասելով՝ պալատական, քաղաքական աշխարհը: Սյուժեից պարզ է դառնում, որ վերոնշյալ բացատրությունը ճիշտ է, և Մեֆիստոֆելը կատարում է իր խոստումը: Վերոնշյալ բացատրությունը կարելի է համեմատել և նմանեցնել Ռաֆայելի և շագրենի կաշվի անցած ուղու հետ: Սկզբնական շրջանում Ռաֆայելի համար կարևոր էր մասնավոր կյանքը և դրա գոյությունը, բայց շագրենի կաշվի գերբնական ուժի ազդեցությամբ Ռաֆայելը դառնում է բարձր հասարակության մեջ կարևոր դեմք:

[3] Օնորե դը Բալզակ, Շագրենի կաշի,Երևան, 1992, էջ 256:

Ինչպես նկարտել է Ս. Ա. Սողոմոնանը, ««Ֆաուստ»-ի գեղավեստական ուժեղ կողմերից մեկը բնավորությունների հզորությունն է: Ֆաուստը, Մեֆիստոֆելը, Մարգարիտը միջին թվաբանականի մեթոդով ստեղծված սովորական գրական տիպեր չեն, այլ հզոր կրքերով, կամքով, եռանդով օժտված տիտանական բնավորություններ, որոնց միջոցով բացահայտված են հասարակական, պատմական, փիլիսոփայական շատ էական ճշմարտություններ»[4]: Նույն նկատառումը կարելի է անել Բալզակի ստեղծագործության վերաբերյալ, այս դեպքում հասարակության բացահայտումը կատարվում է վերոնշյալ տիտանական բնավորություններով օժտված այլ հերոսների՝ Ռաֆայելի, Ֆեոդորայի, Պոլինի կողմից:

Ե՛վ Ֆաուստին, և՛ Ռաֆայելին պարուրում է սիրո բերկրանքը, Գյոթեն ողբերգական ավարտ է տվել Ֆաուստի և Մարգարիտայի սիրուն, իսկ Ֆաուստի տառապանքը հասցրել է առավելագույն աստիճանի: Բալզակը փորձել է այդ տեսարանին տալ այլ լուծում. նա իր հերոսի սիրային ճակատագրի մեջ ներդրել է սոցիալական խնդիրներ, ինչի պատճառով Ռաֆայելը հրաժարվում է Պոլինի սիրուց:

Համեմատելի են նաև Ֆեոդորան և Հեղինեն. նրանք երկուսն էլ ստեղծագործությունների մեջ կանացի գրավչության խորհրդանիշներն են:

«Ֆաուստ» վեպում սոցիալական խնդիրներ ևս կան, և դրանք դրված են կապիտալիստական քաղաքակրթության ժխտման, ինչպես նաև բուրժուական մի քանի տիպական երևույթների քննադատության վրա: Տիպիկ սարկազմ է արտահայտվում հետևյալ հատվածում.

…Ամենամեծ բարությունն է երկնակալի

Որ կանցլեր չեմ, ոչ էլ արքա[5]:

Այս տողերով հեղինակը փորձում է ցույց տալ բարձր հասարակարգի փչացած լինելը:

Գյոթեի իդեալը ազատ աշխարհն է, ազատ մարդկությունը, նա փափագում է տեսնել հասարակական ներդաշնակություն, շահերի միասնություն, մի կյանք, որը շարունակ գնում է դեպի լավը: Այդ պատճառով էլ Ֆաուստը արտահայտում է հետևյալ միտքը.

…Իմ երազանքն ունի միայն մի կատարում

Տեսնել ազատ, մի ժողովուրդ ազատ երկրում:

---

[4] Ս. Ա Սողոմոնյան, Արտասահմանյան գրականություն, Երևան, 1979, էջ 120:

[5] Գյոթե, Ֆաուստ, հատոր 1, Երևան, «Հայպետհրատ» հրատ. , 1963, էջ 113:

Այնժամ կասեմ ակնթարթին.

«Չքնա՛ղ ես դու, կա՛նգ առ, վայրկյա՛ն»:[6]

Պարզ է, որ Գյոթեն չէր ընդունում իր ժամանակի հասարակարգը և քննադատում էր այն, ուստի պատահական չէ, որ նա իր խոսքը ավարտում է ապառնի ժամանակով՝ փորձելով ցույց տալ, որ ապագայում է լինելու իր երազած հասարակությունը:

Բալզակի վեպում շագրենի կաշին հանդես է գալիս որպես անհատի ճակատագրական դատապարտվածության խորհրդանիշ: Վեպի կերպարների զարգացման ողջ տրամաբանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անհատի ներդաշնակ զարգացումն անհասանելի է բուրժուական հասարակության մեջ: Այն հնարավորություն չի տալիս, որ մարդը դրսևորի իր տաղանդն ու զգացմունքները: Բուրժուական հասարակությունը կործանում է մարդու բարոյական հատկությունները և զրկում հնարավորություններից:

Վերոնշյալից հետևում է, որ յուրաքանչյուր երկրում տիրող քաղաքական իրավիճակը անմիջական ազդեցություն է ունենում տվյալ երկրի յուրաքանչյուր բնակչի ո՛չ միայն հոգեբանության, այլև ճակատագրի վրա:

Առանձնահատուկ են Սատանայի երկու կերպարները, այսինքն՝ շագրենի կաշին և Մեֆիստոֆելը: Մեֆիստոֆելի ուժը նկարագրել է անգամ Բալզակն իր «Շագրենի կաշին» վեպում. «Նկարիչը վրձնի երկու շարժումով տալիս էր համապատասխան արտահայտություն՝ Մեֆիստոֆելի հեգնող դիմակը, նրա ճակատին դրոշմված էր գերագույն ուժ, իսկ բերանին՝ չարագուշակ ծաղր»[7]: Մեֆիստոֆելը ամենակարող ու անդրդվելի տեսակ էր: Այդպիսին էր նաև շագրենի կաշին: Դրա նախկին մեծությունը ստանալու համար այն հազար ու մի արտաքին ազդեցությունների ենթարկվեց, բայց ապարդյուն: Սրանով Բալզակը փորձել է ցույց տալ Սատանայի անսասան լինելը, որ նույնիսկ գիտությունն է անզոր չարիքի դեմ:

Մեֆիստոֆելի ամենաբնորոշ գիծը նիհիլիզմն[8] էր: Մեֆիստոֆելը մերժման ոգին էր, նա մերժում էր աշխարհում գոյություն ունեցող ամեն իր ու երևույթ: Հատկանշական է, որ այս մերժման գծերից ունի նաև Ֆաուստը:

---

[6] Գյոթե, Ֆաուստ, հատոր 2, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, էջ 394:

[7] Օնորե դը Բալզակ, Շագրենի կաշին, Երևան, 1992, էջ 248:

[8] 19-րդ դարի վաթսունական թվականներին մտավորականության շրջանում ծագած ուղղություն, որ ժխտողաբար էր վերաբերվում ազնվական կարգերին, ավանդույթներին և ճորտատիրությանը

Նա քննում է կյանքի, աշխարհի, կեցության և գոյության մասին տարածված կարծիքները: Ֆաուստը կարծում է, որ ամեն ինչի սկիզբը գործն է, և մերժելով ուժի, մտքի, և խոսքի առկայությունը՝ համապատասխանորեն մերժում է հեղափոխական բռնության օրենքները, իդեալիստական ու աստվածաբանական մոտեցումները կյանքի ծագման վերաբերյալ: Սա հակասում է Ռաֆայելի կերպարին: Նրա կողմից գոյություն ունեցող բոլոր երևույթների չափից ավելի խորը ընդունումը ու մտատանջությունը նրան հասցնում են հոգեկան տանջանքների:

«Շագրենի կաշին» կարելի է համարել ես-ի և եսասիրության ողբերգություն: Հեղինակի խոսքով՝ այն կմնա որպես մեր այժմյան դարի, մեր կյանքի, մեր եսամոլության բանաձև: Ռաֆայել դը Վալենտենի համար փառքը և իր սեփական կյանքը դարձել էին առաջնային պայմաններ, նա չէր մտածում այլոց բարօրության մասին, որովհետև դրա փոխարեն վճարում էր կյանքի տարիներով: Որպես ասվածի վառ օրինակ՝ կարելի է բերել հետևյալ դրվագները, երբ ընկերները Ռաֆայելից խնդրում են մի քանի բան նվիրաբերել, նա առանց երկար-բարակ մտածելու պատասխանում է. «Ես պատրաստ եմ ձեզ բոլորիդ մահ ցանկանալ... »[9]: Կամ երբ իր ուսուցիչը պաշտոնի բարձրացում է խնդրում, իր իսկ սխալ արտաբերած բառերի համար Ռաֆայելը դուրս է վռնդում նրան: Այս դրվագները բացատրվում են նրանով, որ մարդկանց խնդրանքները կատարելու համար Ռաֆայելը պետք է ցանկություն հայտներ, որի կատարումը կրճատում էր իր սեփական կյանքի օրերը, իսկ նա պատրաստ չէր նման զոհողության հանուն այլոց: Այլ է պատկերը Ֆաուստի մոտ, էգոիզմի դրսևորումներ ևս նկատվում են այս ստեղծագործության մեջ: Բայց ի տարբերություն Ռաֆայելի՝ Ֆաուստը հասարակության մարդն է, ով մինչև կյանքի վերջին վայրկյանը մտածում է հասարակության բարօրության մասին: Ֆաուստի մոտ «ես»-ը վերաճում է «մենք»-ի: «Գործն ամեն ինչ, փառքն է ոչինչ», ահա նրա փիլիսոփայության հենասյունը: Մարդասիրական հակումը նկատվում է նրա այս տողերում.

.....կկառուցեմ
Մի բարձրաբերձ նոր աշտարակ,
Որ ողջ հեռուն բացվի իմ դեմ
Ծերուկներին կտամ նոր տուն
Կզգան, որ մարդ չեմ անհոգի,

[9] Օնորե դը Բալզակ, Շագրենի կաշի, Երևան, 1992, էջ 424:

Եվ թող այնտեղ ապրեն խնդուն
Վերջին օրերն իրենց կյանքի[10]:

«Սատանայի հետ չպետք է դաշինք կապել» առածը հաստատվում է այս ստեղծագործությունների վերջում:

Ֆաուստի կուրանալուց հետ Մեֆիստոֆելը դավաճանում է նրան: Ֆաուստը կույր ժամանակ, լսելով աշխատավորների ու գործիքների ձայնը, կարծում է, թե իր երազանքն են ի կատար ածում, բայց իրականում Մեֆիստոֆելը նրա գերեզմանն էր հրամայել փորել: Ֆաուստը հասարակության մարդն է, ինչի շնորհիվ էլ հաղթում է էգոիզմին: Հրեշտակների ու Սատանայի երկար կռվից հետո Ֆաուստի հոգին բաժին է հասնում Աստծուն: Ֆաուստը փրկված էր:

Շագրենի կաշին կատարել էր Ռաֆայել դը Վալենտենի բոլոր ցանկությունները, Ռաֆայելը հատուցում է կյանքով, նա չի կարողանում ազատվել էգոիզմից, և հետևաբար նրա հոգին չի փրկվում:

Համաշխարհային գրականության մեջ շատերն են անդրադարձել Սատանայի կերպարին ու գործունեությանը, և յուրաքանչյուր գրող յուրովի հատկություններ ու էություն է վերագրել նրան: Ցանկացած կերպար և դրա հիմքում ընկած գաղափարախոսություն ավելի ցայտուն է դառնում, երբ դրվում է համեմատության մեջ, ուստի նմանատիպ համեմատություններն օգնում են ավելի լավ պատկերացնել համաշխարհային գրականության գլուխգործոցները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյոթե Յո., Ֆաուստ, հատոր 1, Երևան, «Հայպետհրատ» հրատ.,1963:
2. Գյոթե Յո, Ֆաուստ, հատոր 2, Երևան, «Հայաստան» հրատ, 1967:
3. Արտամոնով Ս.Դ., XVII-XVIIIդդ. արտասահմանյան գրականության պատմություն,Երևան, 1986:
4. Սողոմոնյան Ս.Դ., Արտասահմանյան գրականություն, Երևան, 1979:
5. Օնորե դը Բալզակ, Շագրենի կաշի, Երևան, 1992:

[10] Գյոթե, Ֆաուստ, Երևան, «Հայպետհրատ» հրատ.,1963, հատոր 1, էջ 380:

THE COMPARATIVE ANALYSIS OF THE "FAUST" TRAGEDY BY GOETHE WITH THE "SKIN OF SORROW" NOVEL BY HONORE DE BALZAC

KHACHATRYAN MARIAM
2nd-year MA Student at the Department of Philology,
Gavar State University
e-mail: khachatryan.mariam.98@gmail.com
Academic Supervisor: Arakelyan Ara
Doctor of Philological Sciences, Professor

This article aims to compare the "Faust" tragedy by Goethe with "The Skin of Sorrow" novel by Honore de Balzac, to highlight similarities and differences between these works.

Our objective is to put the comparable parts side by side, point out the influence of Satan on the human being, demonstrate the tendency to selfishness and reveal social problems found in society.

The research was conducted by the comparison method.

We came to the conclusion that the main heroes of both works have fatal similarities, some of the heroes have the same symbolic presence and the same titanic character. The cornerstones of these works are the people and things having supernatural power, which decide their life path. The research throws a light on such issues which become obvious only within the comparison process.

Key words: *Gothic environment, Faust, Mephistopheles, Raphael, the Skin of Sorrow, spirit of rejection, God, Devil, social problem, selfishness.*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ТРАГЕДИИ ГЁТЕ "ФАУСТ" С РОМАНОМ ОНОРЕ ДЕ БАЛЬЗАК "ШАГРЕНЕВАЯ КОЖА"

ХАЧАТРЯН МАРИАМ
Студент филологического факультета
Гаварского государственного университета
e-mail: khachatryan.mariam.98@gmail.com
Научный руководитель: Аракелян Ара
Доктор филологических наук, профессор

Цель статьи - провести сравнительный анализ различий между трагедией Гёте «Фауст» и романом Бальзака «Шагреневая кожа», представить имеющиеся сходства и различия.

Задача состоит в том, чтобы сложить воедино сопоставимые грани названных произведений, показать влияние, которое имеет сатана на человека, показать отражённые в произведениях эгоистические тенденции, раскрыть социальные проблемы, существующие в обществе.

Исследование проводилось методом сравнения.

Мы пришли к выводу, что главные герои обоих произведений имеют фатальное сходство, некоторые из героев имеют одинаковую символическую натуру и один и тот же титанический тип характера. Краеугольным камнем этих произведений являются люди и предметы, наделённые сверхъестественной силой, которые определяют их жизненный путь. Исследование проливает свет на такие вопросы, которые становятся очевидными только в процессе сравнения.

Ключевые слова: *готическая среда, Фауст, Мефистофель, Рафаэль, Шагреновая кожа, дух отвержения, Бог, Дьявол, социальные проблема, эгоизм.*

ՄԵԴԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄԻԼԵՆԱ
Երևանի պետական համալսարանի
ժուռնալիստիկայի ֆակուլտետի
«PR և հաղորդակցային տեխնոլոգիաներ» բաժնի մագիստրատուրայի
1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ milena.mkrtchyan.ysu@gmail.com
Գիտական ղեկավար՝ Մենեմշյան Անահիտ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նախագահական ընտրություններն առանցքային նշանակություն ունեն տվյալ երկրի ապագայի, միջազգային քաղաքական արենայում դիրքավորման և, իհարկե, քաղաքացիների կյանքի համար: Հետազոտության նպատակն է, ուսումնասիրելով նախագահական ընտրությունների նախընտրական քարոզարշավ ժամանակ մեդիայի, ՋԼՄ-ների աշխատանքի առանձնահատկությունները, պարզել, թե ինչպես է մեդիան ազդեցություն ունենում ընտրությունների վերջնարդյունքի վրա:

Ընտրությունների վերջնարդյունքի վրա մեդիաազդեցությունն իրականացվում է անուղղակի կերպով: Մեդիայի երկու հիմնական խմբերը՝ տեղեկատվության տարածման և հաղորդակցության միջոցները, ուղղակիորեն ազդում են հանրային կարծիքի, վարքի, դիրքորոշման և մտածողության ձևավորման վրա, որն էլ որոշ չափով կանխատեսելի է դարձնում քաղաքացիների ընտրությունը:

Այս հետազոտության առանցքում նախագահական ընտրությունների վերջնարդյունքի վրա մեդիայի ազդեցության օրինակներն են ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան քաղաքական մրցապայքարներում: Օրինակները ներկայացված են ըստ համապատասխան մեդիաարտադրանքի տեսակի, ձևաչափի և ժամանակագրության:

Չնայած հոդվածում ներկայացված է մեդիայի ազդեցությունը նախագահական ընտրությունների համատեքստում, սակայն նշված տեխնոլոգիաները և մոտեցումները կիրառվում են նաև ընտրական այլ գործընթացներում՝ կախված տվյալ երկրի կառավարման համակարգից:

Բանալի բառեր՝ *մեդիա, ՋԼՄ, նախագահ, ընտրություն, մեդիաազդեցություն, տեխնոլոգիա, հաղորդակցություն, քաղաքականություն, հեռուստաբանավեճ, լուսաբանում:*

Հասարակությունը քաղաքական գործիչների և ուժերի մասին կարծիք ձևավորում է մեդիայի կողմից փոխանցված տեղեկությունների հիման վրա: Քաղաքական գործիչները մեդիառեսուրսները մեծ մասշտաբներով կիրառում են հատկապես նախընտրական և ընտրական ժամանակահատվածներում:

ԶԼՄ-ներում (այդ թվում նաև հանրային) սահմանվում է նախընտրական և ընտրական ժամանակահատվածներում ԶԼՄ-ներին եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը: Հեռարձակվում են թեկնածուների նախընտրական հոլովակները, լուսաբանվում է քարոզարշավը՝ հանրահավաքները, երթերը և այլն: Ֆորմալ առումով թեկնածուների մասին հաղորդելուց զատ՝ ԶԼՄ-ներում տեղ են գտնում նաև լրագրողական տարբեր ժանրերով և ձևաչափերով պատրաստված թողարկումներ, հաղորդումներ, հրապարակումներ, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ թեկնածուի հանդեպ կարծիքի և վարկանիշի ձևավորման գործընթացի վրա:

Առանձնացրել ենք նախագահական ընտրությունների վերջնարդյունքի վրա ազդեցություն ունեցող ԶԼՄ արտադրանքի հիմնական տեսակները՝

նախընտրական հեռուստատեսային բանավեճեր,

վերլուծական հոդվածներ, դիմանկարային ակնարկներ, սկանդալային բացահայտումների դեպքում՝ հետաքննական հոդվածներ, ռեպորտաժներ:

Նախընտրական հեռուստատեսային բանավեճեր

Նախընտրական հեռուստատեսային բանավեճեր իրականացնելը ընդունված պրակտիկա է թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում: Այս ձևաչափում քաղաքացիների համար ստեղծվում է հարթակ, որտեղ դեմ դիմաց կանգնում են մրցակից քաղաքական գործիչները և հրապարակային բանավեճի ընթացքում հիմնավորում սեփական տեսակետները, հերքում հակընդդեմ կարծիք ունեցողի պնդումները, ամրապնդում իրենց դիրքորոշումը կամ հակառակը: Հեռուստատեսային բանավեճի ընթացքը կարգավորում է ղրուցավարը՝ թեկնածուներին հղելով հիմնական հարցերը, սահմանելով պատասխանի ժամանակ և հետևելով սահմանված կանոնների պահպանմանը:

Հայաստանյան իրականությունում հատկանշական է 2003 թվականի նախագահական ընտրությունների նախաշեմին նախագահի երկու թեկնածուների՝ Ռոբերտ Քոչարյանի և Ստեփան Դեմիրճյանի նախադեպային հեռուստաբանավեճը[1]: Հեռուստաբանավեճի ընթացքում տաղավարում ներկա

[1] Հեռարձակվել է Հայաստանի Հանրային հեռուստատեսության եթերում 2003 թվականին:

էին վեց լրագրողներ, որոնք ներկայացնում էին Հայաստանի հանրային, «Արմենիա», «Կենտրոն», «Պրոմեթևս», «Շանթ» և «ԱԼՄ» հեռուստաընկերությունները: Հեռուստաբանավեճը վարող Արթուր Բախտամյանից բացի՝ լրագրողները նույնպես հնարավորություն ունեին թեկնածուներին հղել երկուական հարց:

Ուսումնասիրելով հեռուստաբանավեճի ընթացքում երկու թեկնածուների խոսքը, հարցերին պատասխանելու մոտեցումները, ժեստիկուլյացիան, դիմախաղը, լսարանի վրա հոգեբանական ներազդման մեթոդները, քաղաքական հնարքները և այս ամենի արդյունքում ստեղծված ընդհանուր պատկերը՝ կարող ենք նշել, որ նախընտրական շրջանի այս հեռուստաբանավեճում Ռոբերտ Քոչարյանը բարելավեց իր դիրքերը և ընդգծեց իր առավելությունը՝ որպես փորձառու, ինքնավստահ, առավել իրազեկ և մտահոգ, հետևողական քաղաքական գործիչ: Հեռուստաբանավեճն ուսումնասիրելիս երևում է՝ Քոչարյանը շատ ավելի լավ էր պատրաստված թե՛ հոգեբանորեն, թե՛ քաղաքական ծրագրերի ներկայացման առումով: Վերջինս անգամ հղումներ էր անում քաղաքական հակառակորդի՝ Ստեփան Դեմիրճյանի քաղաքական ծրագրից: Հիշատակման է արժանի հատկապես այն հատվածը, որտեղ Քոչարյանը զարմանքով նշում է, որ Դեմիրճյանի նախընտրական ծրագրում չկա ոչ մի խոսք համահայկական կարևորություն ունեցող երեք հարցերի մասին՝ սահմանադրական բարեփոխումներ (ՀՀ-ում նախատեսվում էր իրականացնել հանրաքվե), Հայոց ցեղասպանություն և Ղարաբաղյան հարց: ՀՀ երկրորդ նախագահը պարբերաբար նաև հղումներ էր կատարում կոնկրետ փաստերի, փաստաթղթերի: Արդյունքում նրա խոսքը ավելի հիմնավորված էր հնչում և ազդեցիկ: Հնարավոր չէ ճշգրիտ ասել, թե որքան և ինչ մասշտաբներով ազդեցություն ունեցավ այս հեռուստատեսային բանավեճը նախագահական ընտրությունների ելքի վրա, բայց որ այն դրական ազդեցություն ունեցավ Քոչարյանի հաղթանակի համար՝ փաստ է: Ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրություններում հաղթանակ տարավ Ռոբերտ Քոչարյանը[2]:

Արտերկրում նախագահական մրցապայքարներում ևս նախընտրական հեռուստաբանավեճերը նշանակալի և սպասված քաղաքական իրադարձություն են: 2017 թվականի Ֆրանսիայի նախագահական ընտրությունների

[2] 19 փետրվար 2003թ. Նախագահի ընտրություններ, Փուլ 1-ին https://www.elections.am/-results1903/

արդյունքի վրա զանգվածային լրատվամիջոցները և մեդիան ունեցան էական ազդեցություն: Անկյունաքարային էր հատկապես Մակրոնի և Լը Պենի հեռուստատեսային բանավեճը[3]: Թեկնածուները բանավիճում էին դեմ առ դեմ: Հեռարձակումն ուղիղ միացմամբ էր: Մարին Լը Պենը բավականին արդյունավետ էր անցկացրել քարոզարշավը, սակայն նրա վարկանիշը դանդաղ, բայց կայուն նվազեց հատկապես այս հեռուստատեսային բանավեճից հետո[4]: Պատճառները մի քանիսն էին. դրանք առնչվում էին ինչպես հեռուստաբանավեճի ընթացքում քաղաքական գործիչների դիրքավորմանը՝ կերպարային առումով, այնպես էլ քաղաքական հայտարարություններին: Ի տարբերություն Մակրոնի՝ Լը Պենը հաճախ հարցերին պատասխանելիս և Մակրոնին արձագանքելիս օգտվում էր իր առջև դրված թղթերից, որոնց վրա արված էին գրառումներ: Տպավորություն էր ստեղծվում, որ վերջինս անքան էլ լավ չէր տիրապետում այն թեմաներին, որոնց մասին խոսում էր: Վերջինս որոշ դեպքերում անգամ պատասխանում էր քաղաքացիներին արդեն ծանոթ կարգախոսներով: Իսկ Մակրոնն ինքնավստահ տեսք ուներ, հարցերին պատասխանում էր միանգամից և առանց վարանելու: Նա խոսում էր ոչ թե այն մասին, թե ինչ կանի Ֆրանսիայի համար իր նախագահ դառնալուց հետո, այլ թե ինչպիսի հնարավորություններ կստեղծի ժողովրդի համար: Մակրոնն օգտագործում էր հեռուստաբանավեճի ընձեռած հնարավորությունը. իր խոսքում կարևոր շեշտադրումներ անելով՝ գրագետ մշակված ուղերձներ էր ձևակերպում և հղում հանրությանը: Նա ստեղծում էր երիտասարդ, վստահելի և ուժեղ քաղաքական գործչի կերպար: Հեռուստաբանավեճն օգնեց Մակրոնին, քանի որ չնայած այն իրողությանը, որ Մակրոնը երիտասարդ էր, ուներ ավելի քիչ քաղաքական փորձառություն (այս թեզերը տարածողներից էր նաև Լը Պենը), ֆրանսիացիները հեռուստաբանավեճի ընթացքում տեսան թեկնածուներին բանավիճելիս գաղափարների, քաղաքական ծրագրերի, իրենց տեսալականի և, իհարկե, հռետորության պայքարում: Հաջողությունը Մակրոնի կողմն էր:

ԱՄՆ-ում ևս նախընտրական հեռուստաբանավեճերը սպասված և առանցքային իրադարձություններ են: 2020 թվականի ԱՄՆ նախագահական

[3] BBC News, "Le Pen and Macron clash in crucial French election debate", https://www.youtube.com/watch?v=_x-FhJFRyg8

[4] France24, "REPLAY - Watch the full French Presidential debate between Macron and Le Pen", https://www.youtube.com/watch?v=dH9uXWh3n-Y

ընտրությունների ընթացակարգը մի շարք փոփոխությունների ենթարկվեց՝ նոր տեսակի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված: Փոփոխվեց նաև նախագահական հեռուստատեսային բանավեճի կարգը, սակայն այդ ամենը ոչ միայն չնվազեցրեց, այլ ավելի մեծ հետաքրքրություն առաջացրեց հասարակության շրջանում: ԱՄՆ-ում նախագահական բանավեճերը սովորաբար ընթանում են երեք փուլով, սակայն 2020թ.-ին՝ առաջին փուլից հետո որոշվեց, որ երկրորդ փուլը կլինի հեռավար, բայց հանրապետականները դեմ արտահայտվեցին այդ տարբերակին: Արդյունքում երկրորդ փուլը չեղարկվեց, և կողմերը սկսեցին համաձայնություններ ձեռք բերել երրորդ փուլի կայացման հարցում: Չնայած բազմաթիվ տարաձայնությունների (թեմաների, օրակարգի հարցերում)՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ին՝ ընտրություններից 12 օր առաջ, տեղի ունեցավ ԱՄՆ՝ այդ ժամանակ գործող հանրապետական նախագահ Դոնալդ Թրամփի և Դեմոկրատական կուսակցության ԱՄՆ նախագահի թեկնածու, ԱՄՆ նախկին փոխնախագահ Ջո Բայդենի վերջին՝ ամփոփիչ հեռուստաբանավեճը[5]: Առաջին հեռուստաբանավեճը վարել էր «FOX» հեռուստաընկերության ներկայացուցիչ Քրիս Ուոլասը: Այդ բանավեճի ընթացքում երկու թեկնածուներն էլ անհարգալից վերաբերմունք ցուցաբերեցին միմյանց նկատմամբ. վիրավորանքներ և ծաղր, մրցակցի խոսքի ընդհատում, ռեգլամենտի խախտումներ և այլն: Վերոհիշյան հեռուստաբանավեճը բազմաթիվ քննադատությունների առիթ հանդիսացավ: Այն դարձավ սկանդալային և տարածվեց մեդիայում որպես մի հետուստաբանավեճ, որի ընթացքում ԱՄՆ նախագահի թեկնածուները չկարողացան տիրապետել իրենց, պահպանել բանավեճի կազմակերպչական կանոնները և այլն: Այս ամենը բացասական ազդեցություն ունեցավ երկու թեկնածուների հեղինակության վրա:

Ի տարբերություն առաջինի՝ վերջին հետուստաբանավեճի ժամանակ պատկերն էապես փոխվել էր: Վերլուծաբանները նկատում էին թեկնածուների, հատկապես Թրամփի վարքագծում փոփոխություն և զսպվածության դրսևորում: Այդ բանավեճի մոդեռատորը NBC-ի լրագրող Քրիստեն Ուելքերն էր: BBC-ն հրապարակեց մի հոդված[6], որում ներկայացվել էր սոցիա-

[5] Final 2020 Presidential Debate Between Donald Trump, Joe Biden | NBC News, https://youtu.be/UCA1A5GqCdQ

[6] “Kristen Welker: Presidential debate moderator was 'clear winner' on social media”, https://www.bbc.com/news/election-us-2020-54655482

լական ցանցերում օգտատերերի արձագանքները հեռուստաբանավեճին: Հոդվածում նշվում էր, որ բանավեճում կար միայն մի հաղթող, և դա զրուցավար, լրագրող Ուելքերն էր, ում հաջողվել էր զսպել թեկնածուներին, պահպանել բանավեճի կանոնները և վերահսկել ընթացքը: Ամփոփիչ հեռուստաբանավեճի ընթացքում թեկնածուներն անդրադարձել են հիմնական վեց թեմաների՝ Covid-19-ի դեմ պայքար, ազգային անվտանգություն, տնտեսություն, ռասսայական խնդիրներ, կլիմայի փոփոխություն և երկրի առաջնորդություն: Վերոնշյալ հեռուստաբանավեճերն առանցքային նշանակություն ունեցան նախընտրական արշավում, քանի որ այսպիսով մեդիան լսարանին ևս մեկ հնարավորություն տվեց լսելու նախագահի թեկնածուներին ամերիկացիների համար կարևոր հարցերի շուրջ, առանցքային խնդիրների լուծման տարբերակները, ինչպես նաև ընդգծվեցին քաղաքական գործիչների իմիջի թույլ և ուժեղ կողմերը:

Լրատվամիջոցները՝ քաղաքական-նախընտրական օրակարգի ձևավորողներ

1968թ.-ին Ամերիկայի նախագահական ընտրությունների վերաբերյալ ուսումնասիրության ընթացքում Մաքս ՄաքՔոմբսի և Դոնալդ Շոուի կողմից պաշտոնապես զարգացվեց «Օրակարգի ձևավորման տեսությունը»: Այն սոցիալական գիտության տեսություն է, համաձայն որի՝ լրատվամիջոցները մեծ ազդեցություն ունեն իրենց լսարանի վրա. մարդիկ կարևորում են այն, ինչը կարևորում և լուսաբանում է մեդիան: «Օրակարգի ձևավորման տեսությունը» բնութագրում է ՋԼՄ-ների՝ հասարակական կյանքի վրա ներազդելու և այն պայմանավորելու գործընթացը[7]:

Զանգվածային տեղեկատվամիջոցները նախընտրական շրջանում պաշտոնական լրահոսից, հեռուստատեսային բանավեճերից բացի՝ հատուկ ուշադրություն են դարձնում հեղինակային մեդիաարտադրանքների ներկայացմանը հանրությանը, քանի որ քարոզարշավի լուսաբանումը, կրկնվող քարոզչական թեզերը, հաճախ միապաղաղ և նույնատիպ լինելով, դադարում են հետաքրքիր և գրավիչ լինել մեդիասպառողների համար: Այդ իսկ պատճառով ՋԼՄ-ներում հեղինակում են տարատեսակ լրագրողական նյութեր, որոնցից նախագահական ընտրությունների ընթացքում մեծ ազդեցություն և ինչեղություն կարող են ստանալ հատկապես դիմանկարային ակ-

[7] Communication Theory, Agenda setting theory (Maxwell McCombs and Donald L. Shaw), https://www.communicationtheory.org/agenda-setting-theory/

նարկները, վերլուծական հոդվածները, սկանդալային բացահայտումների դեպքում՝ հետաքննական հոդվածները, ռեպորտաժները:

ԶԼՄ-ները ընդհանուր օրակարգ սահմանելուց բացի՝ ձևավորում են քաղաքական օրակարգ՝ հաճախ լուսաբանելով այնպիսի իրադարձություններ, նորություններ, որոնք կարող են ուժեղացնել քաղաքական կոնկրետ ուժի կամ թեկնածուի վերաբերյալ դրական կամ բացասական կարծիքը: Նախընտրական շրջանում ԶԼՄ-ներում պարբերաբար տեղ են գտնում այնպիսի նյութեր, որոնցում լուսաբանվում է քաղաքական գործչի կերպարը, գործունեությունը, նախընտրական քարոզարշավն այնպես, որ վերջինս կամ ավելի ընդունելի, համակրելի դառնա քաղաքացիների համար, կամ ընդհակառակը: Նման հրապարակումների միջոցով հնարավոր է քաղաքական գործչի իմիջի վրա թողնել մեծ ազդեցություն և էական նշանակություն ունենալ վերջինիս հեղինակության վրա: Օրինակ՝ Ֆրանսիայի նախագահի թեկնածու Ֆրանսուա Ֆիոնի քաղաքական կարիերայի վրա «Le Canard enchaîné» թերթի հետաքննական հոդվածի թողած ազդեցությունը: Քաղաքական զարգացած մշակույթ և ավանդույթներ ունեցող Ֆրանսիայում, որը կարելի է համարել Եվրոպայի քաղաքական կենտրոնը, 2017 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ որպես ամենից հավանական թեկնածու շրջանառվում էր Ֆրանսուա Ֆիոնի անունը (Ֆիյոնը 2007-2012թթ. զբաղեցրել էր Ֆրանսիայի վարչապետի պաշտոնը) մինչ այն պահը, երբ մամուլում տարածվեցին հրապարակումներ Ֆիոնի և նրա կնոջ՝ Պենելոպեի հետ կապված սկանդալի մասին: Ֆրանսիական մամուլը ակտիվորեն լուսաբանեց այդ սկանդալը և ազդեց քարոզարշավի ընթացքի, հետևապես նաև նախագահական ընտրությունների վերջնարդյունքի վրա: Թեև Ֆիոնը նախագահական լուրջ հավակնություն ուներ, այնուամենայնիվ, սկանդալը հիմնովին փակեց նրա՝ քաղաքականությամբ զբաղվելու էջը:

Մինչ «Le Canard enchaîné» թերթի հետաքննական հոդվածի[8] հրապարակումը Ֆիոնը նախագահական ընտրությունների մրցապայքարում ֆավորիտ թեկնածու էր: Թերթը առաջինն էր, որ գրեց կոռուպցիոն սկանդալի մասին. Պենելոպե Ֆիոնը մի քանի տարի գրանցված է եղել որպես Ֆրանսուա Ֆիոնի օգնական և վճարվել է այդ աշխատանքի համար այն պարագայում, երբ չի ստանձնել կոնկրետ պարտականություններ: Ֆիոնի վարկա-

[8] "LA UNE DU 1ER FÉVRIER 2017", https://www.lecanardenchaine.fr/la-une-du-1er-fevrier-2017/

նիշը, որ բոլոր թեկնածուների համեմատ ամենից բարձրն էր, կտրուկ անկում գրանցեց, և նա՝ որպես նախագահի թեկնածու, ձախողվեց: Այդ ժամանակ Էմանուել Մակրոնն առանց քաղաքական մեծ կենսագրության, ոչ այդքան հայտնի քաղաքական գործիչ էր: Մակրոնը Ֆիոնի տապալման ֆոնին մտավ ակտիվ քաղաքականություն: Ֆրանսիայի պատմության ամենաերիտասարդ նախագահ Էմանուել Մակրոնը երկրի առաջնորդի պաշտոնը ստանձնեց 2017 թվականի մայիսին: Նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով մյուս թեկնածուն՝ Մարին Լը Պենը, ստացած քվեների հարաբերակցությամբ զիջեց Ֆրանսիայի ապագա նախագահին: Ըստ ընտրաձայների քանակի՝ Մակրոնը հաղթանակ տարավ 66,10%-ով, իսկ Լը Պենը ստացավ 33,90% քվե[9]:

2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրություններում հաղթանակ չէր տանի Դոնալդ Թրամփը, եթե չլինեին լրատվամիջոցները և մեդիան: Այս եզրակացությանը հանգել ենք ուսումնասիրելով ամերիկյան ԶԼՄ-ներում քարոզարշավի լուսաբանումը, կիրառված մանիպուլացիոն հնարքները և թեկնածուների մասին հրապարակումների բովանդակային շեշտադրումները:

Հիլարի Քլինթոնը՝ ընտրություններում Թրամփի հիմնական մրցակիցը, 2017 թվականին լույս տեսած իր հեղինակային «Ինչ պատահեց» գիրք-հուշագրությունում խոստովանում է, որ քարոզարշավի ընթացքում ԶԼՄ-ները լուսաբանում էին ոչ այնքան իր ելույթները ամերիկացիներին հուզող խնդիրների վերաբերյալ, այլ ընթերցողների ուշադրության առանցքում պահում էին իր անձի հետ կապված սկանդալային պատմությունները, հատկապես էլիասցեների հետ կապված աղմկահարույց գործը[10]. «Ցավոք, չնայած ես անվերջ խոսում էի գաղափարների մասին, ԶԼՄ-ները երբեք բավական ուշադրություն չդարձրին այդ ամենին, և մարդկանց մեծամասնությունը երբեք չլսեց դրանցից և ոչ մեկի մասին: Ինձ չհաջողվեց մամուլին վստահեցնել, որ տնտեսությունը առավել կարևոր է, քան էլիասցեների հետ կապված սկանդալը»[11],- գրում է Քլինթոնը:

---

[9] "How France Voted", https://www.nytimes.com/interactive/2017/05/07/world/europe/france-election-results-maps.html

[10] BBC, "Hillary Clinton emails - what's it all about?", https://www.bbc.com/news/world-us-canada-31806907

[11] Hillary Rodham Clinton, "What Happened", 2017

2016 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ Էլիասցեների հետ կապված պատմությունը միակը չէր, որ զգալիորեն բացասական ազդեցություն ունեցավ Քլինթոնի հեղինակության վրա: Կեղծ լուրերի մի տարատեսակի՝ հորինված կոնտենտի վառ օրինակ էր «պիցցագեյթի» պատմությունը, համաձայն որի՝ Հ. Քլինթոնի համակիրները կապ ունեն մանկապիղծների գաղտնի կազմակերպության հետ և համագործակցում են «Comet Ping Pong» պիցցերիայի հետ[12]: Մեդիայում այս տեղեկատվությունը տարածվում էր՝ որպես հիմք ներկայացնելով Հ. Քլինթոնի շտաբի ղեկավար Ջոն Պոդեստայի և պիցցերիայի ղեկավարի նամակագրությունը, որը հրապարակվել էր նախընտրական մրցապայքարի ժամանակ «Վիքիլիքս»-ում: Տարածված կոնտենտի ազդեցությունն այնքան մեծ էր, որ Կարոլինայի բնակիչներից մեկը հարձակում գործեց այդ սրճարանի վրա՝ անձամբ հետաքննելու համար, թե ինչ է կատարվում «Pizza Gate»-ում: Ոստիկանական դեպարտամենտը «պիցցագեյթի» պատմությունն անվանեց «շինծու առցանց դավադրության տեսություն»[13]:

ԱՄՆ 2016թ.-ի ընտրություններն աչքի են ընկնում կեղծ լուրերի տարբեր տարատեսակների առաջացմամբ և ԶԼՄ-ներում, սոցցանցերում տարածմամբ: Հիմնականում դրանք «հարվածում» էին Հ. Քլինթոնի հեղինակությանը և վարկանիշին՝ արդյունքում ի նպաստ ծառայելով Թրամփին:

Հատկանշական է ընդգծել ԶՄ-ների և Թրամփի վարած քաղաքականության ընդհանուր միտումները: Ինչպես նշում է Յան-Վերներ Մյուլլերը, սկզբունքային, բարոյականացված հակապլյուրալիզմը և ոչ ինստիտուցիոնալացված «ժողովրդի» գաղափարը օգնում են բացատրել, թե ինչու են պոպուլիստներն ընտրությունների «բարոյապես ճիշտ» արդյունքն այդքան հաճախ հակադրում դրանց՝ էմպիրիկ առումով ճշգրիտ թվաբանական արդյունքին, երբ այն նրանց օգտին չի լինում: Դոնալդ Թրամփը նախընտրական փրայմերիզներում իր ամեն պարտությանն արձագանքում էր մրցակիցներին խարդախության մեջ մեղադրելով: Ավելին, նա նաև նախահարձակ պնդում էր, որ ամբողջ համակարգը՝ ներառյալ Հանրապետական ազգային

[12] Հովհաննիսյան Ա. Ա., Այվազյան Մ. Գ., Մեդիա իրավունք, «Հայրապետ» հրատ., էջ 50-51, 2020:

[13] Metropolitan Police Department, https://mpdc.dc.gov/release/arrest-made-assault-dangerous-weapon-gun-5000-block-connecticut-avenue-northwest Monday, December 5, 2016

համագումարը, «կեղծված է»[14]: Արդյունքում մամուլի ուշադրությունը գրավում են մեղադրանքները, դրանց ապացույցները և քննությունները՝ ստվերելով երկրի զարգացման վերաբերյալ թեկնածուների նախընտրական ծրագրերը:

Քաղաքական ընտրությունների և առհասարակ քաղաքականության մեջ մեդիան քաղաքական գործիչների համար դառնում է միջոց, գործիք՝ քաղաքական ծրագրերը իրականացնելու համար: 2016 թվականի ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների ժամանակ մեդիայի կողմից կիրառվեց մանիպուլյացիոն ևս մեկ հնարք, որը նույնպես ազդեց նախագահական ընտրությունների ելքի վրա: Հիմնական լրատվամիջոցները տարածեցին լուրեր այն մասին, որ Քլինթոնի հաղթանակի հնարավորությունները զգալիորեն գերազանցում են իր հիմնական հակառակորդին՝ Թրամփին: Մեդիայի նմանօրինակ կանխատեսումների արդյունքում Քլինթոնի կողմնակիցների մի մասը չմասնակցեց ընտրություններին՝ վստահ լինելով, որ իր նախընտրած թեկնածուի հաղթանակն անխուսափելի է: Արձանագրենք, որ Քլինթոնի հնարավոր հաղթանակի մասին լուրեր և կանխատեսումներ տարածող ԶԼՄ-ների առաջամարտիկը «FoxBusiness»-ն էր[15]: Գաղտնիք չէ, որ «FoxNews»-ը աչքի է ընկնում որպես Թրամփի քաղաքականության աջակից, հաճախ նաև որպես վերջինիս «բարձրախոս»:

Քլինթոնը դժգոհ էր լրատվամիջոցների կողմից նախագահական ընտրությունների քարոզարշավը և մրցավազքը լուսաբանելու եղանակից: Իր գրքում խոստովանում է. «Անհնար էր անտեսել Թրամփին. ԶԼՄ-ներն անգամ նրան տրամադրում էին քարոզարշավը լուսաբանելու անվճար հարթակներ»: Սակայն միայն այս հանգամանքով պայմանավորված չէր Թրամփի հաղթանակը. նա ավանդական թեկնածու չէր և հաճախ շրջանցում էր կանոնավոր քաղաքական նորմերը: Թրամփը քաղաքական դաշտում որդեգրել էր խաղի բոլորովին նոր կանոններ: Դա էր առանցքային պատճառը, որ վերջինս ստացավ լրատվամիջոցների աննախադեպ ուշադրությունը և ձեռք բերեց բարձր վարկանիշ:

Սոցիալական ցանցերը՝ քարոզարշավի կարևոր գործիք

[14] Յան-Վերներ Մյուլլեր, «Ի՞նչ է պոպուլիզմը», 2019թ.:

[15] “Media predicts Clinton will win the election”, https://www.youtube.com/watch?v=m-ZLa72m_Zwk

Հաղորդակցության միջոցների պատմության ընթացքում ընդհանուր տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ զարգանում են նաև մեդիատեխնոլոգիաները: Էլեկտրոնային միջոցների և թվանշային մեդիայի ժամանակաշրջանում քաղաքական գործիչների կողմից կիրառվում են տեղեկատվության փոխանցման և քաղաքացիների հետ հաղորդակցության զանազան խողովակներ: Մեդիայի հաղորդակցության միջոցներից վերջին տարիներին սոցիալական ցանցերի հաղթարշավն է: Մարդկանց շրջանում լայն տարածում են գտել հատկապես «Facebook»-ը և «Twitter»-ը, որոնց ժողովրդականացումը տարբեր երկրներում այս հարթակները դարձրին գրավիչ և խոստումնալից քաղաքական գործիչների համար (ոչ միայն): Սոցիալական ցանցերը հնարավորություն են տալիս բազմահազարանոց լսարանի հետ վարել ավելի օպերատիվ և անմիջական հաղորդակցություն: Հատկապես նախընտրական քարոզարշավների ընթացքում սոցիալական ցանցերը գործածվում են նաև որպես քաղաքական գովազդի, քաղաքական հայտարարությունների, թեզերի տարածման հավելյալ տարբերակներ:

Քաղաքական գործիչների կողմից սոցիալական ցանցերի հնարավորությունների մեծ մասշտաբներով օգտագործմամբ և արձագանքներով աչքի են ընկնում հատկապես ԱՄՆ նախագահական ընտրությունները: «The Washington Post»-ը Բրեդ Պարսկալին՝ Թրաֆիի նախընտրական արշավի թվային տեխնոլոգիաների գծով մենջերին, նկարագրում է որպես «հանճար, ով շահեց Թրամփի նախընտրական արշավը»[16] 2016 թվականին: Պարսկալը նշել է՝ գովազդի և մարքեթինգի ոլորտում իր փորձառությունը և գիտելիքները օգնել են իրեն տեսնելու, որ Թրամփը «հիանալի ապրանք» է, որին հեշտությամբ կարելի է գովազդել, առաջմղել ամերիկյան հասարակության համար[17]: «Ֆեյսբուքն» օգնել է տարածել Թրամփի ուղերձներն ամերիկացիների շրջանում, և դա է պատճառը, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում մեծ ֆինանսավորում է հատկացվել սոցցանցային գովազդներին:

Հաճախ քաղաքական գործիչների կողմից այս հարթակների շահագործումը կամ սխալ կիրառումը հանգեցնում է անցանկալի հետևանքների՝ խո-

[16] "'60 Minutes' profiles the genius who won Trump's campaign: Facebook" https://www.washingtonpost.com/news/politics/wp/2017/10/09/60-minutes-profiles-the-genius-who-won-trumps-campaign-facebook/

[17] "How I helped get Trump elected: The president's digital guru" https://www.cnbc.com/2017/11/08/how-i-helped-get-trump-elected-the-presidents-digital-guru-brad-parscale.html

չընդոտում է տեղեկատվության փոխանցման ավանդական միջոցների աշխատանքին, նպաստում է ապատեղեկատվության, կանխակալ տեղեկատվության արագ տարածմանը և այլն: Այնուամենայնիվ, սոցիալական ցանցերը շարունակում են մնալ քաղաքական գործիչների համար առաջնային գործիքներից մեկը՝ հանրության հետ հաղորդակցության ապահովման համար:

Նախընտրական տեսահոլովակներ, պաստառներ, թռուցիկներ

Մեդիայի՝ տեղեկատվության տարածման միջոցների օգտագործումը նույնպես մեծ կիրառություն ունի նախընտրական քարոզարշավների ժամանակ, այդ թվում նաև նախագահական ընտրություններին ընդառաջ: Կոնկրետ թեկնածուի համար հաջողված մեդիաարշավ կազմեկերպելիս հաճախ վերջինիս քաղաքական թիմի կողմից պատրաստվում և կիրառվում են հետևյալ մեդիառեսուրսները. քաղաքական գործչի կենսագրականի կամ իր հեղինակած գրքի հրատարակում՝ անցած ուղու և գաղափարախոսության վերաբերյալ, քաղաքացիների շրջանում տեսալսողական նյութերի՝ հանրահավաքների, կոչերի, հատուկ պատրաստված նախընտրական տեսահոլովակների տարածում կրիչների և սկավարակների միջոցով, բուկլետներ, պաստառներ, թռուցիկներ, արտաքին, տպագրվող և հեռաձակվող գովազդներ և այլն:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք արձանագրել՝ մեդիան ազդում է քաղաքական գործիչների վերաբերյալ հասարակական գիտակցության՝ ժամանակաշրջանին բնորոշ կոլեկտիվ պատկերացումների ձևավորման վրա: Ձևավորելով լուսաբանման քաղաքական օրակարգ՝ մեդիան ավելի շատ ազդեցություն է ունենում, երբ լսարանին հուշում է, թե ինչի մասին պետք է մտածել: Արդյունքում հանրային քննարկման նյութ է դառնում այն, ինչը կարևորում է մեդիան: ՋԼՄ-ների թեմատիկ նախապատվությունների սահմանումը նպաստում է հանրային կարծիքի, հետևաբար նաև հասարակության կառավարմանը, որի շնորհիվ էլ մեդիան անուղղակիորեն ազդում է ընտրությունների վերջնարդյունքի վրա: Ուսումնասիրության ընթացքում քննելով նախընտրական ժամանակաշրջանում մեդիայի ազդեցության օրինակները, կիրառված հնարքները, տեխնոլոգիաները, դրանց մասշտաբները, ինչպես նաև համեմատելով տվյալ ընտրությունների վերջնարդյունքների հետ՝ կարող ենք արձանագրել, որ քաղաքացիները, նախագահական ընտրությունների ժամանակ կատարելով իրենց ընտրությունը, հիմնականում ա-

ռաջնորդվում են այն պատկերացումներով, որոնք ձևավորվել են մեդիայի միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Hillary Rodham Clinton, “What Happened”, 2017թ.:
2. Յան-Վերներ Մյուլլեր, Ի՞նչ է պոպուլիզմը, 2019թ.:
3. Հովհաննիսյան Ա. Ա., Այվազյան Մ. Գ., Մեդիա իրավունք, «Հայրապետ» հրատ., 2020թ.:
4. Ռ. Քոչարյանի և Ս. Դեմիրճյանի հեռուստատեսային բանավեճ՝ հեռարձակված Հանրային հեռուստատեսության եթերում 2003 թվականին:
5. 19 փետրվար 2003թ. Նախագահի ընտրություններ, Փուլ 1-ին https://www.elections.am/results1903/:
6. BBC News, “Le Pen and Macron clash in crucial French election debate”,
7. https://www.youtube.com/watch?v=_x-FhJFRyg8
8. France24, “REPLAY - Watch the full French Presidential debate between Macron and Le Pen”, https://www.youtube.com/watch?v=dH9uXWh3n-Y
9. Final 2020 Presidential Debate Between Donald Trump, Joe Biden | NBC News, https://youtu.be/UCA1A5GqCdQ
10. BBC, “Kristen Welker: Presidential debate moderator was 'clear winner' on social media”, https://www.bbc.com/news/election-us-2020-54655482
11. Communication Theory, Agenda setting theory (Maxwell McCombs and Donald L. Shaw), https://www.communicationtheory.org/agenda-setting-theory/
12. “LA UNE DU 1ER FÉVRIER 2017”, https://www.lecanardenchaine.fr/la-une-du-1er-fevrier-2017/
13. The New York Times, “How France Voted”, https://www.nytimes.com/interactive/2017/05/07/world/europe/france-election-results-maps.html
14. BBC, “Hillary Clinton emails - what's it all about?”, https://www.bbc.com/news/-world-us-canada-31806907
15. Metropolitan Police Department, https://mpdc.dc.gov/release/arrest-made-assault-dangerous-weapon-gun-5000-block-connecticut-avenue-northwest Monday, December 5, 2016
16. Fox Business, “Media predicts Clinton will win the election”, https://www.youtube.com/watch?v=mZLa72m_Zwk

17. The Washington Post, "'60 Minutes' profiles the genius who won Trump's campaign: Facebook", https://www.washingtonpost.com/news/politics/wp/2017/-10/09/60-minutes-profiles-the-genius-who-won-trumps-campaign-facebook/
18. CNBC, "How I helped get Trump elected: The president's digital guru", https://www.cnbc.com/2017/11/08/how-i-helped-get-trump-elected-the-presidents-digital-guru-brad-parscale.html

THE IMPACT OF MEDIA ON THE RESULT OF PRESIDENTIAL ELECTIONS

MKRTCHYAN MILENA
1st-year MA student of Department of PR and Communaction Technologies
Faculty of Journalism, Yerevan State University
e-mail: milena.mkrtchyan.ysu@gmail.com
Academic Supervisor: Menemshyan Anahit
PhD in Philology, Associate Professor

The presidential election is crucial for the future of the country, its position in the international political arena and, of course, for the lives of its citizens. The purpose of the research is to study the work of the media during the presidential elections, including the specifics of the work of the media, to find out how the media influences the final outcome of the elections.

The media indirectly influences the election's final result. The two main groups of media, the channels of dissemination of information and channels of communication, directly affect the shaping of public opinion, behavior, position and thinking, which makes the choice of citizens to some extent predictable.

At the core of this research are examples of media influence on the outcome of the presidential election in both Armenian and foreign political competitions. Examples are presented according to the type of media product, format and chronology.

The article presents the influence of media in the context of the presidential elections, but the presented technologies and approaches are used in other electoral processes as well, depending on the country's governance system.

Key words: *media, Mass Media, president, election, media influence, technology, communication, politics, TV debate, coverage.*

ВЛИЯНИЕ МЕДИА НА ОКОНЧАТЕЛЬНЫЙ РЕЗУЛЬТАТ ПРЕЗИДЕНТСКИХ ВЫБОРОВ

МКРТЧЯН МИЛЕНА
Студентка магистратуры 1-ого курса
отделения «PR и коммуникационные технологии»
факультета журналистики ЕГУ
электронная почта: milena.mkrtchyan.ysu@gmail.com
Научный руководитель: Менемшян Анаит
Кандидат филологических наук, доцент

Президентские выборы имеют решающее значение для будущего страны, ее положения на международной политической арене и, конечно же, для жизни ее граждан. Цель исследования – изучив работу медиа, в том числе и особенности работы СМИ во время предвыборных кампаний президентских выборов, выяснить, как медиа влияет на окончательный исход выборов.

Влияние медиа на окончательный результат выборов осуществляется не прямым образом. Две основные группы медиа - средства распространения информации и средства коммуникации, напрямую влияют на формирование общественного мнения, поведение, позицию и мышление, что делает выбор граждан в определенной степени предсказуемым.

В основе данного исследования - примеры влияния СМИ на окончательный исход президентских выборов как в армянской, так и в зарубежной политической конкуренции. Примеры представлены по типу медиапродукта, по формату и хронологии.

В статье представлено влияние медиа в контексте президентских выборов, но представленные технологии и подходы применяются также и в других избирательных процессах, в зависимости от системы управления данной страны.

Ключевые слова: *медиа, СМИ, президент, выборы, медиавлияние, технологии, коммуникация, политика, теледебаты, освещение.*

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԼԵՎՈՆ ԽԵՉՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲՐԱԳԻՆԱ ՆԵԼԼԻ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ nelli.bragina@list.ru
Գիտական ղեկավար՝ Գրիգորյան Վաչագան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածն անդրադառնում է Լևոն Խեչոյանի ստեղծագործության առանձնահատկություններին: Գրողն իր ստեղծագործություններում նորովի է վերագնահատում ու վերաարժևորում համամարդկային հասկացությունները, հոգեբանափիլիսոփայական հայեցակետից է դիտարկում մարդու՝ բանաստեղծ տեսակի ծնունդը:

Հոդվածում արծարծվում են արվեստի, գոյաբանական իմաստի, մարդկայնության ու մարդու մասին Խեչոյանի պատկերացումները:

Խեչոյանի պատմվածքները բանաստեղծի էության բացահայտման բացառիկ փորձեր են: Ըստ նրա՝ բանաստեղծ-մարդը դատապարտված է հոգևոր միայնության, քանզի նրա և հասարակության միջև մշտապես առկա է օտարում, հակասականություն և բախում: Նկարագրված է բանաստեղծի կայացման գործընթացը: Խեչոյանն անդրադարձել է հասարակական ընկալումներին և հոգեբանասոցիալական տեսանկյունից վերլուծել է դրանք: Ստեղծագործություններում կան արժեհամակարգային ուշագրավ զուգահեռներ և փիլիսոփայական հիմնավորումներ: Հեղինակը կերտել է բազմաշերտ ու կուռ արձակ, որը բացահայտում է արվեստագետի լինելության հիմնախնդիրները:

Գրողի ազնիվ արվեստը նոր է թե՛ որպես գրականության տեսակ, թե՛ որպես բանաստեղծի ինքնության բացահայտում:

Բանալի բառեր՝ *Խեչոյան, բանաստեղծ, գեղարվեստական մեկնություն, հոգեվիճակ, ներշնչանք, հասարակություն, մենություն, առաքյալ, ճակատագիր:*

«Հայրս» հրաշալի պատմվածքը կարծես այն իրական աշխարհի մանրակերտն է, որում հայտնվում է արվեստագետը, մի առանձնաշնորհ առա-

քյալ, որը Հիսուսի պես միայնակ ու անապակ է այս մեղսախլիրտ ու անտարբեր աշխարհում: Մինչդեռ բանաստեղծի գոյությունն ինքնին հարմոնիա է և կոչված է կարգավորելու ֆիզիկական լինելության քաոսը: Խեչոյանը նշում է Աստվածաշնչի և աստվածային սկզբի մասին, քանզի արվեստագետի շնորհն ի վերուստ ու ի սկզբանե է: Պատահական չէ, որ պատանին ճշմարտության ու սիրո փնտրտուքներում ապավինում է Հիսուսին, քանզի ինքն էլ մի առաքյալ է, ով կամովին է հանձնառնում կրել աշխարհիկ փորձությունների պսակը: Բանաստեղծի լինելությունն ու իրականությունը զուգահեռ գոյություններ են ասես: Բանաստեղծը ողջ կյանքում տենդագին փորձում է մարդեղորեն երջանիկ լինել, բայց… ճակատագիրն անդրդվելի է, Չարենցը վկա: Խեչոյանի մոտ Չարենցի ու Հիսուսի էությունների որոշակի նույնություն կա, որը ուրվագծում է արվեստի ուղին: Հայեցիության գիծը Խեչոյանի մոտ կրկին առկա է. նուռը հնուց ի վեր եղել է մեր կյանքի, սրտի սիմվոլը, ուստի մեր պատանի բանաստեղծն էլ ծագել է նռնից, զերծ է ադամական մեղքից: Թվում է՝ բանաստեղծը ապրում է մեր կողքին, բայց նրա իրականությունն այլ է՝ ծածանվող քամին է, աղջիկների կարմիր նախշազարդ ծաղիկներով շապիկներից կտրվող շունչը, սարի բույրը, սմբուլի խաղը… Հակադրությունն է՝ Լենինի մասին երգող դպրոցականների և տնօրենի հետ կապված տեսարանը: Դա կաղապար է, որի մեջ ուզում են բանտել նաև բանաստեղծին, բայց անզոր են… Ինչպես կասեր Պետեֆին. «Երգն արծիվ է, և ուղին այլ է, անհայտ ճամփով է սլանում միշտ նա»: Եվ երգի տիրակալը փախչում է, փնտրում է հարազատ, տաք ու ազատ եզերքներ, ուր ներշնչանքը հնարովի չէ ու սիրտը չեն պահում թերմոսում: Բանաստեղծը շարունակում է ապրել հրաշապատում հեքիաթում, որտեղ նուռն է մոգական… Մոր կերպարը հերոսի էության շարունակությունն է, նա ինքն էլ հավատում է իր հերոս-որդուն, իր հեքիաթին… Ինչու՞ Մարիամն ու Ծովինարը կարող էին՝ ինքը՝ ոչ… Երբեմն ապրելու միակ ելքը պատրանքին ապավինելն է, բայց մի՞թե իսկապես պատրանքները չեն հաճախ մեզ կառավարում՝ խամաճիկների պես… «Միջավայրն այդպես էլ չի հասկանում որդուն ու մորը, ով կարևորում է կյանքի գեղագիտական կողմը, սովորականի մեջ նկատում դրա պոեզիան: Նրանց համար շոշափելի երևույթների չափ իրական ու գուցեև առավել իրական է պատրանքը»[2]:

Պատմվածքում ասես երեք ողբերգությունների զուգահեռ գծեր են ընթանում՝ տղայի, մոր ու հոր: Այդ հոգեբանական թելերը զարմանալիորեն խճճվում են, քարկապ ընկնում: Բայց դա կերպարներից յուրաքանչյուրի

ընտրությունն ու խաչն է: Սրանով կերպարներն ասես ավելի բարձրանում ու ամբողջական են դառնում: Այստեղ հոր կենսաբանական լինել-չլինելու հետ կապված ինտրիգ կա: Ըստ իս՝ դա չէ կարևորը: Խեչոյանն ուզում է ընդգծել բանաստեղծի սկզբնավորման խորհրդավորությունը: Բանաստեղծն ինքնին անկախ գոյություն է: «Խեչոյանի բանաստեղծը ծնունդով իսկ դժբախտ է: Ամեն ինչ կատարվում է նրա կամքից դուրս, գուցեև նրա կամքին հակառակ: Անհայտ է ակունքը, քանի որ բանաստեղծներն, ըստ երևույթին, սովորական ծնունդ չեն ունենում» [2]:

«Գրողը կարևորում է հերոսների մեջ եղած ներքին մարդուն»[2]: Մեզ համար ուշագրավ է մոր կերպարը: Մեր էպոսում նույնպես կնոջ նշանակությունն ու կարևորությունը որոշիչ են: Անսովորությունը սկսվում է մորից: Խեչոյանը զուր չէ, որ հիշատակում է Ծովինարին: «Հատուկ» էությունն սկսվում է մորից. այն գյուղում, որտեղ միրգ չկար, մայրը մոգուհու պես մանուշակ, նարգիզ ու սմբուլ է աճեցնում: Նա նույնիսկ չի վախենում, որ վերջինս դժբախտություն կարող է բերել: Մարիամի պես նա էլ նվիրաբերում է իր զավակին՝ աշխարհին ավելի գեղեցիկ ու տանելի դարձնելու համար: Ասես մի Մարիամ՝ նա էլ կանխազգում է գալիքում պահված արհավիրքը, բայց ազնիվ է համարում դեպի այն ընթանալը: Ինչ էլ լինի, նա շարունակելու է կրակագույն կակաչներ աճեցնել: Հիշենք, որ սևսիրտ կակաչը վշտի սիմվոլն է: Եվ տղան շարունակում է հավատալ իր՝ նոնից ծնված լինելուն, քանի որ մայրն է ասել: Այստեղ կինը կյանքի տիրուհին է, ուժ ու խորհուրդ տվողը… Բակունցյան «Ալպիական մանուշակի» հերոսուհու պես նա է մոգուհին, նա է ակունքը սիրո ու աշխարհաշեն բարիքի… Եթե «Երկու կրակոց» պատմվածքի մեջ ճաղերը երևակայական են, ապա այստեղ պատկերը թանձրացել է և նյութեղացել… Բուժակները, ասես ռացիոնալիզմի ստրուկներ, իբր փորձում են կարգավորել քաոսը բռնությամբ, միայն թե ամեն ինչ հասկանալի ու սովորական դառնա… Մարդիկ ապրում են մեքենայական բնազդով: «Դժվար է նրանց հավատացնել, թե հնարավոր են գոյության այլ ձևեր ևս՝ ավանդականից տարբեր ու անկրկնելի» [2]:

Բանաստեղծն աշխարհ է մտնում ակնկալելով, որ այն էլ իր պատկերացումների պես մաքրամաքուր է, բայց… Խեչոյանի հերոսներից մեկը՝ ալեխառն մորուքով ծերունին, ասես մարմնավորում է այն գեղատեսիլ խաբկանքը, որին հաջորդում է հուսախաբությունը: «Կյանքն իր անակնկալներով ամեն ինչ վերածևում է ըստ էության: Պատրանքը տեղի է տալիս իրականության առջև»[2]: Այո՛, զուր չէ, որ պատանին ծերունուն նմանեցնում է Հիսու-

սին: Այս գրոտեսկը միտված է պատկերացումների և իրականության միջև եղած հակասությունն ավելի թանձրորեն ընդգծելուն: Բանաստեղծը բառիս բուն իմաստով բախվում է իրականությանը. «Գիտեի, որ նա ինձ չի հետապնդում, բայց ես վազում էի, նա գալիս էր…»[5]: Իրականության անխուսափելի գիտակցումն արդեն ստվերի պես է ուղեկցելու պատանուն: Ոստիկաններն ասես իրավապահ համակարգի հավաքական կերպարը լինեն: Հատկանշական է, որ նրանցից մեկի ականջում բամբակ կա, այսինքն՝ խուլ է: Այնուհետև Խեչոյանը նրան կոչում է «ձախ ականջին բամբակ խրած»[5]: Մյուսին կոչում է «խոշոր գլուխ»[5], բայց չնայած այդ գլխի առկայությանը, նա զուրկ է ապրումակցում ու հասկացողություն ցուցաբերելու ունակությունից: Դյուրահավատ պատանին անկեղծ միամտությամբ կարծում է, թե ինքը հասկացվեց, երբ լսում է, որ կգտնեն կապույտ աչքերով, Քրիստոսի նման ծերունուն: Որպես սրտակցի՝ խոստովանում է, որ ինքը նռնից է ծնվել: Այստեղ կատարվում է ողբերգականը, մարդիկ դառնում են «ծիծաղողներ»[5]: Հենց այստեղ հառնում է արվեստագետ-հասարակություն հավերժական բեկումը: Ամբոխը թույլ է, այն չի կարողանում ընդունել արվեստագետի գերակայությունը, իրենից ավելի լավին ու արժանավորին վերացնելու ենթագիտակցական մղումը միշտ նրա խղճուկ ուղեղի չեղած գալարներում է: Այդ չարորակ ծիծաղը գելիոտինից ու կախաղանից ավելի շատ արվեստագետների է վերացրել: «Նրանք քաշքշում էին, հավաքվածները ծիծաղում էին, էլի ծիծաղ…»[5]: Օրենք կոչվածը մարդու կյանքը մարդկային դարձնելու, պահելու համար է, բայց նույնիսկ այն կստանա բռնատիրական բովանդակություն, եթե մերժի արվեստն ու արվեստագետին, քանզի արվեստն է, որ մարդասիրությամբ պիտի լցնի օրենք կոչվող անոթը, այլապես այն կմնա դատարկ ու կվերածվի ընդամենը գործիքի, որը հայտնվում է ֆիզիկապես ուժեղի ձեռքում. «…ստվերի նման ծեփվեցի թիթեղյա պատին: Հետո ես ընկա հատակին, ինքը նստած՝ ծխում էր»[5]: Բուժակներն ասես այդ դատարկամիտ ոստիկանների տրամաբանական շարունակությունն են: Թվում է, թե բժիշկը պետք է մի բան հասկանա: Նա հիշեցնում է կեսմարդ-կեսգազան կենտավրոսին: Կարծես այս երկու սկիզբը պայքարում են նրա մեջ:

Երկխոսությունը ուշագրավ է: «Լավ, բա ինչի՞ վախեցար: Ասի՝ Որովհետև հավատում եմ, որ նռից եմ ծնվել…» [5]: Այսինքն՝ եթե հասարակ լիներ ծնունդը, ապա ստորությունն այդքան ցնցող ու վախենալու չէր լինի: Այստեղ հաղթում է կենտավրոսի մարդը. «Հայ ճարտարապետները ինչ-որ նման մի տեսություն առաջ քաշում են՝ հիմք ընդունելով խաչքարերի նռները: Ու՞ր է,

թե այդպես լիներ»[5]: Խաչքարն այստեղ հառնում է որպես արվեստագետի ծննդական-հավաստագիր:

Բայց կենտավրոսյան մարդը տեղի է տալիս. «Սոխը ի՞նչ է, որ ձեր բոստանում չեք ցանում»[5]: Բանաստեղծը շարունակում է գտնվել մի իրականությունում, որը կապ չունի բժշկի իրականության հետ... «Թերթերն այնքան բարակ են, այնքան թափանցիկ...»[5]: «Քեզ բուժում է պետք»[5], - հնչում է որպես դատավճիռ: Այսինքն՝ բժիշկը գերադասում է ծանծաղուտը, առանց խորամուխ լինելու՝ ձեռաց ախտավորի պիտակ է կպցնում: Խեչոյանը գրում է արվեստագետի ու հասարակության անխուսափելի, ինքնըստինքյան օտարման մասին, որը ճակատագիր է դառնում տարբերվող անհատի համար. «Ես ուզում էի, որ մերոնք գան»[5]: Միայնակ բանաստեղծը հարազատ ափ է փնտրում, որ կառանի իր հուզախռով էության նավը, բայց արդյո՞ք գտնում է... «Երկու ամիս անցավ, մերոնք՝ հայրս ու մայրս եկան»[5]: Այստեղ առանձնակի ուշադրության է արժանի հոր կերպարը: Դա միայնակ ու մոլորված, ինքնության ու կյանքի բավիղներով անվստահ քայլող մարդու կերպար է: Այնուամենայնիվ, նա էլ ունի իր բաժին հերոսականությունը. Բավականաչափ քաջ է եղել, երբ կնության է վերցրել հղի կնոջը, բայց չի կարողացել, որ տիրոջ գիտակցումով ապրի: Այլապես նա հենց առաջին օրը կգնար տղայի մոտ.«Հայրդ քեզ կթողնե՞ր հիվանդանոցում»[5],- այս մի հատիկ արտահայտությունը որքան խռովք է բացահայտում: Խեչոյանը հակված չէ մեղավորներ փնտրելու կամ ներկայացնելու, հայրն էլ իր բաժին ողբերգությունն է ապրում: Նա իրեն օտար է զգում իր իսկ ընտանիքում: Ըստ էության, նա «փոքր մարդ» է, դրա համար պարզապես չի կարողացել հոգևոր կապեր ստեղծել: Չեխովյան «պատյանով մարդու» պես մոլորուն ու տարտամ է քայլքը: Հատկանշական է այս հատվածը.«Ոտքերը խամաճիկի թելն արձակած ոտների նման ծուռումուռ թափվեցին ամեն կողմ: Հավաքում, ուղղում էր, կրկին ծռմռվում, անջատվում էին, գալիս քիթ քթի՝ իրար հպվում»[5]: Նա միշտ էլ փորձել է «թելերն ուղղել», բայց չի զորել: Հոր կրունկներին կպչող քարերը հայր-որդի կապն են խորհրդանշում: Տղան այսպիսով ուզում է վերահաստատել կապը: Վերհուշի մեջ հայրը արձագանքում է, որպես հարազատ՝ ժպտալով նախատում է: Իսկ հիմա մանր քարերը կրկին հասնում, թույլ կպչում էին հոր կրունկներին, նա ետ չէր նայում: Այսինքն՝ կապը կտրվել էր, նա այլևս այդպես էր քայլելու՝ ինչ-որ բանից վախեցած և աշխարհում միայնակ: Տղային միայն վերհուշն էր մնացել՝ «մեջքիս

պառկած, գլուխս նրա ծնկներին, հանգստանում էի, նա մազերիս հետ էր խաղում»[2]:

Խեչոյանի արվեստն ասես մարդեղացման կոչ է՝ ուղղված աշխարհին: Նա արծարծել է մի խնդիր, որը, ցավոք, արդիական է ամենաքաղաքակիրթ հասարակություններում: Այն է՝ հոգեկան խնդիր ունեցող մարդու հանդեպ վերաբերմունքը: Դա է հոր և որդու կապվածության խզման պատճառը: Բայց եթե ենթադրվող հարազատն է այդպես վարվում, ուրեմն ի՞նչ ասել օտարների մասին: Նրանք իրենց պարտքն ու օրինական իրավունքն են համարում հիվանդին նվաստացնելն ու ծաղրելը: Սերմանը սինձ է տալիս ու ասում, որ խոզանի անարատ սինձ է, հորդորում է, որ տղան ուտի: Հետո ասում է. «Տղա՛, սինձն էլ անվա կուտե՞ն»[5]: Տղան ուզում է, որ հայրը պաշտպանի իրեն, բայց... գլորված քարերը հասնում էին հորը, բայց նա ետ չէր նայում: «Բերանիս մեջ զգում էի հողի համը ու ուզում էի լաց լինել»[5]: Հայրը յոփովի դավաճանում է որդուն, երբ ասում է, որ տղան սթրես ունի: Ենթագիտակցական օտարումն ակնհայտ էր, դրա համար մայրը ինչ-որ բանից վախեցած դողում էր, իսկ տղան շարունակում է հողի համն զգալ: Հայրը վա՞տն է... Խեչոյանը նման հարցադրում չի անում, հայրը սոսկ «փոքրիկ մարդ» է, որն ապրում է իր ողբերգությունը: Խեչոյանը պարզապես նատուրալիստական անսքող անկեղծությամբ երևակում է եղածը: Կարծում ենք՝ մոր կերպարը, ի հակադրություն, մի քիչ միֆական է, ասես հեքիաթի հերոսուհի լինի, որը ծաղիկներ է աճեցնում և հավատում է իր հորինած աշխարհի գոյությանը: Այդ հուզիչ միամտությունը ոչ ռեալիստական ու գրավիչ է: Մյուս կողմից էլ բանաստեղծի մայրը չի կարող հատուկ չլինել: Նա է Իսահակյանի ասած այն հրեշտակը, որը միշտ իր զավակի կողքին է և պաշտպանելու է՝ անկախ ամեն ինչից... «Մայրս պինդ սեղմեց թևս, ասաց՝ հետ չնայես»[5]: Հիրավի, հրեշտակն էլ այդպես կվարվեր: Մայրն ասես կիսով չափ աննյութեղեն է, այլ ոլորտի բնակիչ:

Խեչոյանի գեղարվեստական մեկնությունը անզուգական կերպով սովորական զգացողությունները վերածում է էսթետիկականի, խտացնում, երևակում ու իմաստավորում ներքին ու արտաքին հարթություններում, այսբերգային խորք ու ծավալ հաղորդում իրադարձություններին: Սովորական և գեղարվեստական զգացողությունների միջև եղած տարբերությունը Լ. Վիգոտսկին այսպես է բնորոշում. «... այդ հանելուկային տարբերությունը, ինձ թվում է, պետք է հասկանալ այսպես. Դա նույն զգացողությունն է, բայց երևակայության միջոցով հնարավորինս ուժգնացված»[8]: Խեչոյանի ար-

վեստը մոդեռնիստական է, ուստի զգալի է «գիտակցության հոսքի» առկայությունը: Այս եզրույթը գիտական գրականություն է ներմուծվել Ուիլյամ Ջեյմսի կողմից իր «Հոգեբանության հիմունքներ» աշխատության միջոցով [7]: Այս պարագայում գրողը պատկերում է նաև հերոսների ենթագիտակցության ազդակները, կերպարները բացահայտում ու ամբողջանում է ներաշխարհի համապարփակ նկարագրության շնորհիվ: Խեչոյանի պատմվածքներում միտքը ունի անկանխատեսելի շարունակականություն և բնականություն: Այսինքն՝ առհասարակ գրողները ժամանակային հստակ հաջորդականությամբ են նկարագրում իրադարձությունները, իսկ Խեչոյանը կերտում է մարդու գիտակցությունում հերթագայվող մտապատկերաշարի իրական հոսքը: «...իրար հաջորդող գործողություններն ու ներքին մենախոսությունները ոչ միշտ են իրար լրացնում ու շարունակում և կարող են հարել տարբեր ժամանակատարածական պլանների»[6]: Նմանատիպ գրականություն են ստեղծել Ջոյսը, Ֆոլքները, Ֆիցջերալդը, Միլլերը: Խեչոյանը լեզվական միջոցներով արտապատկերում է իր հերոսների գիտակցության մեջ արտացոլված իրականությունը: Ռ. Առաքելյանը դիպուկ կերպով նշում է, որ այս դեպքում «տեքստի ստեղծման ու ընկալման գործընթացները համարվում են անհատի խոսքամտածական գործունեության արդյունք»[1]: Հեղինակը՝ տվյալ դեպքում Խեչոյանը, ներկա է իր հերոսների ներաշխարհում և հեշտությամբ ներգրավում է նաև ընթերցողին: Ըստ Շախովսկու՝ հույզերի արտահայտումը լեզվում ոչ միայն դրանց անվանումների, այլև հենց հույզերի անմիջական հաղորդումն է[10]: Մենք Խեչոյանի մոտ տեսնում ենք արտաքին իրադարձություններին զուգահեռ ընթացող ներքին մենախոսություն: Այսպիսով, մեզ համար զգալի ու հասկանալի է դառնում հերոսի գիտակցության հոսքը:

Փոքրիկ բանաստեղծի կերպարն առկա է նաև «Խոզը» պատմվածքում: Խեչոյանը շատ հետաքրքիր ու բազմաշերտ է պատկերում բանաստեղծի կայացման ընթացքը, բանաստեղծի ու աշխարհի բախումն ու հակասությունը, այն վերափոխելու, իր ընկալմանը համապատասխան դարձնելու ազնիվ ճիգը: «Նա կոչվածն է, որը տեսնում ու հավատում է կյանքի վերափոխման հնարավորությանը»[2]: Ընթերցողն ասես բանաստեղծի աչքերով է նայում շուրջը՝ աննկատ վերամարմնավորվում է կարդալիս: «Ով էր սպասում, որ սիրտն ու թիկունքը այդքան մոտիկ՝ դավաճանություն կկատարվի»[5]: Այս միտքը շաղափում է պատմվածքը: Բանաստեղծին միշտ հարազատ հոգի է պետք, և դա հորեղբայր Մուկուչն է: Վերջինս փորձում է առաջնորդել՝ վախը

զատել վախից, ճիշտը՝ ճշմարիտից... Բայց իրականությունն ավելի զորեղ է գտնվում և շրջապտույտի մեջ է առնում նրանց երկուսին էլ: «Մուկուչը կյանքի պարտադրանքով կործանման խարանը թիկունքին տանողն է, որ դառնում է այլոց մեղքերի յուրօրինակ շալակտարը: Նրան գերմարդկային կամք էր պետք՝ նենգությունների, խաբեության, ցեղակիցների զազրելի վարմունքի ծովում առայժմ, գոնե ժամանակավորապես չխեղդվելու համար»[2]: Երեխան Մուկուչին պաշտպանելու համար... մատնում է նրան: Կյանքն ասես գլխիվայր է շրջում ամեն ինչ: Խեչոյանն ուզում է ցույց տալ, թե ինչ դժվար է բանաստեղծի համար ֆիզիկապես լինելը: Բայց նա Ընտրյալ է և ասես փրկելու համար ձիեր են գալիս, և կառքը սլանում է: Կարծում ենք՝ դա վերերկրային ներշնչանքն է, որը հնարավոր է դարձնում բանաստեղծի երկրային գոյությունը: Պատմվածքում մի քանի անգամ երկիմաստ հնչում է «խոզ» կոչականը: Ընթերցողն ամեն անգամ պետք է ինքնուրույն զգա բառիմաստը: Ըստ մեզ՝ դա մարդու մութ կողմը խորհրդանշող մակդիր է, որը տարակերպ է դրսևորվում: Այդպես դիմում են Մուկուչին, բայց այդ բառն ամենաքիչն է նրան վերաբերում: Մարդիկ ձևացնում են, թե հավատում են հրաշքներին, բայց չեն ուզում տեսնել ու զգալ դրանք, էլի նախընտրում են հեշտն ու սովորականը: «Մուկուչն ասաց՝ Այդպիսի բան էլ չի պատահի, մի անգամ տեսեք»[5]: Բայց նրան անվարկեցին ու ուզեցին խփել: Ս ստացական հոդը հուշում է Մուկուչի և երեխայի բանաստեղծական էությունների որոշակի նույնության մասին: Սա արվեստագետ տեսակի ճակատագրի մեկ տարբերակն է: «Նրանք նույնն են իրենց մարդկային տեսակով, անտեսանելին զգալու, հրաշքներին հավատալու, մարդկանց վստահելու դյուրահավատությամբ»[2]: Հասարակությունը «խոզ» է խարանում և հալածում է նրան, մինչդեռ այսպիսի մարդիկ կարող են և կոչված են նրանց ճշմարտությանը հասու դարձնելու: Եվ ներանձնային ողբերգությունն աստիճանաբար վերաճում է համամարդկայինի, քանզի սա սոսկ լոկալ իրավիճակ չէ, սա գլոբալ իրավիճակի մանրակերտն է: «....Անարդար աշխարհում նրանք զոհեր են՝ ճակատին կամ թիկունքին արված մերժվածի ծանրանիստ խարանով»[1]: Հասարակությունը՝ ասես հիվանդ օրգանիզմ, հրաժարվում է ընդունել փրկարար հաբը, ավելին՝ դեն է նետում, ոչնչացնում է այն, մինչդեռ ինքը շարունակում է հիվանդ լինել: Աբսուրդի իշխանություն է:

Ա. Ս. Իվակինան նշում է, որ մոդեռնիզմը «...միտված է վերափոխվող իրականության իմաստավորմանը, դրա աններդաշնակությամբ, մարդկային գոյության անկայունությամբ, ռացիոնալիզմի ճգնաժամով»[5]: Ուստի մոդեռ-

նիստ գրողները բովանդակության փոխանցման այլ մեթոդներ ու նոր մոտեցումներ են փնտրում:

Խեչոյանը դեռահասի աչքերով է փորձում բացահայտել իրականությունը, որովհետև այդպիսով ճշմարտությունն ավելի ակնհայտ է դառնում: Խեչոյանի ստեղծագործություններում հանդիպող արվեստագետի կերպարը հավետ միայնակ ու հալածվող առաքյալ է:

Ի վերջո, ո՞րն է բնականը: Մի՞թե այն հնարովի ու կեղծ, գուցե ինչ-որ չափով հարմարեցված կարգուկանոնը, որի սարդոստայնում ապրում է հասարակությունը: Եվ ահա այդ սարդոտայնում է հայտնվում արվեստագետը՝ մի գունեղ, հրաշք թիթեռ, որի թևերն անմիջապես խճճվում են հզոր սարդոստայնում: Մինչդեռ սարդ-հասարակությունը շարունակում է իր ամրածնոտ երախով գործել ոստայնը:

«Երկու կրակոց» պատմվածքում «օդեղեն հուրը» այն վերերկրային շնորհն է, որը առաքյալ ու ընտրյալ է դարձնում մահկանացուին: Բայց բնազդով ապրող ամբոխը գիտի, որ պիտի վերացնի տարբերվողը, գեղեցիկը: Դա է իր խղճուկ գոյությունն անվրդով որոճալու երաշխիքը: Այսպիսի հասարակությունում արվեստագետ հոգին միայնակ է ու դատապարտված: Մարդիկ ամենայն հրաշագեղություն ուզում են մասնատել, գունազրկել ու տեղավորել քառակուսի լինելությունում: Հիշյալ պատմվածքում դրա առաջամարտիկը դպրոցի տնօրենն է: Նրա և նկարչի կերպարները հակադիր բևեռներում են: «Միմյանց են հակադրված ռացիոնալ և զգայական մտածողության ձևերը» [2]: Պատմվածքի միջով ասես անցնում է «օդեղեն հուրը»՝ ցույց տալով միջավայրի ստատիկ ճղճիմությունը: Հասարակությունն արվեստը վաճառքի է հանում՝ հավ ու ձվի կողքին: Անհաղորդ է մնում, թեև արվեստն է իր փրկությունը: Մարդիկ այնքան են անասնացել, որ նույնիսկ չեն հասկանում, թե որն է դաժանությունը: Նույնիսկ շունը ավելի զգացմունքային և ազնիվ է: Եվ այստեղ «դուրս ընկած անառակ շուն»[5] արտահայտությունն այնքան անհեթեթ է: Արվեստագետը նույնիսկ սեփական տանն է անպաշտպան ու չհասկացված: Տղան ցանկանում էր մութ լռության մեջ մնացած թափառող կրակը կրկին գտնել: Դա թումանյանական «անշեջ հուրն» է, որը կարող է փոխել կյանք ու ճակատագիր: Զվարթ և էսթեր անունները պատահական չեն ընտրվել. նույնիսկ նրանք են անկում ապրել, քանի որ չի եղել արվեստը…

Ավելի ստույգ է ընդգծվում միջավայրը, երբ Խեչոյանը ներմուծում է Սիմոնի կերպարը: Նշեցինք, որ հասարակության իրական պատկերը երևում է

նրանից, թե ինչպես են ընկալվում հոգեկան խնդիր ունեցողները: Դա յուրօրինակ լակմուսի թուղթ է: Մարդիկ, ծաղրելով ու ի սրտե զվարճանալով, տանջում են նրան, փակում երևակայական բանտում, որը ուզածդ բանտից ավելի իրեղեն է, քանզի կերտված է նախապաշարմունքներից: Ի՜նչ անփութությամբ են նրա գլխից վերցնում գլխարկը: Հնուց ի վեր գդակը եղել է արժանապատվության խորհրդանիշ և ապրելու իրավունքի հավաստիք: Մինչդեռ հասարակությունը, երբ խելքին փչի, կարող է խլել այդ իրավունքը:

Խաչի երևանությունը պատահական չէ, քանզի արվեստագետն է խաչի կրողը: Այստեղ խաչ-սիմվոլի ընկալումը դուալիստական է. այն և՛ փորձությունների, և՛ շնորհի խորհուրդն ունի: Հասարակությունը փորձում է արվեստագետին զրկել այդ վերերկրային զորությունից: Դա կարծես հաջողվում է... բայց հայտնվում է «օդեղեն հուրը» և տանում իր ընտրյալին: Հիսուսային էության մաս կա նաև նկարչի ճակատագրում:

Լողափի արձակած զույգ կրակոցը բողոք է աշխարհիկ կարգի դեմ: Նույնիսկ անդադրում հնչող զանգը չի սթափեցնում ամբոխին, նրանք հաճույք են ստանում կործանելուց ու կործանվելուց: Նրանք թույլ չեն տալիս ուղղել խաչը, թեև արվեստագետը դա հանուն իրենց է անում: Նիհիլիզմը դեպի անկում ուղղորդող թափանիվ է: Արնաթաթախ թռչունը մեղքն է, որը շարունակում է մնալ մարդկանց հետ, որոնք սովոր են ամեն ինչ իրենց խղճուկ աշխարհընկալմանը հարմարեցնելուն:

Կարծում ենք՝ պատմվածքի վերջը լավատեսական է. բանաստեղծի ոգին ապրում է վերում: Նա մի օր ստիպելու է, որ իր թոռը զգա ու տեսնի «օդեղեն հուրը», ջերմացնի աշխարհ ու հոգի: «Ինչպես մարմնի մեռնելուց հետո դրա տարրերը սփռվում են տիեզերքով մեկ, այնպես էլ հոգու տարրերը միավորվելով այլ տարրերի հետ՝ գոյացնում են նոր հոգիներ»[4]: Սա հարում է բուդդիզմի փիլիսոփայությանը. հոգի կատեգորիային հատուկ են դինամիզմն ու վերափոխումը:

Խեչոյանի գիրը կարծես հատուկ կերպով բարդացված է, պարունակում է անհայտներ, բացահայտելիք խորք: Վ. Բելյանինը, փորձելով դասակարգել գեղարվեստական տեքստերը, առանձնացնում է նաև բարդ տեքստը, որին հատուկ են իմաստային և շարահյուսական բարդությունները[8]: Խեչոյանի արվեստն ասես առեղծված է կրում ներսում, առաջին հայացքից անսովոր է թվում: Դա կարող է ծնել վերացականության զգացողություն: Խեչոյանի պարագայում բարդությունն ընդգրկում է տեքստի և՛ արտաքին, և՛ ներքին կա-

ռույցները: Գրողի հետագա գործերում այդ հատկանիշն ավելի է ընդգծվում ու բնորոշ դառնում:

Գրականագետ Վ. Գրիգորյանն իր գրքում շեշտում է, որ Խեչոյանի համար կարևոր է արվեստագետի՝ աստվածահայտնության կրող լինելը: Արվեստագետը կտրում է հիվանդ հասարակությունից դեպի իր ինքնությունը տանող ճանապարհը: Կարևոր է ներքին մարդը: Եվ ի վերջո, արվեստագետին է վիճակվում ու վստահվում հազարամյա վեպի խորհրդի կռահումը: Ըստ Վ. Գրիգորյանի՝ Խեչոյանը ևս իր ուղին գտած և այն համառորեն շարունակող արվեստագետն էր. «Նրա հերոսը ոտք է դնում աշխարհ, և դա… դժոխքն է: Եվ այս հանգամանքն էլ կանխորոշելու էր գրողի ուղին դեպի Ագռավաքար» [2] :

…Վերին ուժն իր մոտ է տանում իր ընտրյալներին, երբ անգո է ամենայն հույս… Այդպես հեռացավ Մուկուչը: Այդպես հեռացավ Դեմիրճյանի Զվարթը՝ հոգում ծաղիկներ: Այդպես «կառքը թռցնում ու սլանում է»[5]: Այդպես հայտնվեց «օդեղեն հուրը» և տարավ արվեստագետի հոգին: Ի ցավ Խեչոյանի՝ մարդիկ երբեմն արժանի չեն այն լույսին, որն իրենց հետ բերում են բանաստեղծները:

Դ. Դեմիրճյանի «Գիրք Ծաղկանց»-ի մեջ վանահայրը մարգարեանում էր. «… Անէանա մարմինն իմ որպես ծուխ և մնան միտք իմ ճշմարտության: Դուք կգողանաք իմ մարմինը, ցրիվ կտաք որպես խոիվ, բայց իմ միտքը կմնա որպես լույսն արեգական»[3]:

Ըստ էության՝ այս պատմվածքներն արվեստագետի ուղու, նրա տեսակին պատուհասող փորձությունների մասին են: Արվեստագետ, որը գրեթե միշտ միայնակ է ընդդեմ ճակատագրի: Առաքյալ, ում ուղին ի վերուստ է կանխորոշված, ով կոչված է կյանքը դեպի լավը փոխելու, կամովին ու հիսուսավարի փրկելու ու փարատելու…

Օգտագործված գրականության ցանկ

1. Առաքելյան Ռ., Հոգելեզվաբանություն, Երևան, 2017թ., էջ 132:
2. Գրիգորյան Վ., Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը, Երևան, 2019թ., էջ 37-57:
3. Դեմիրճյան Դ., Ընտիր պատմվածքներ, Երևան, 1950թ., էջ 198:
4. Զաքարյան Ս.,Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2007թ., էջ 22:
5. Խեչոյան Լ, Պատմվածքներ, https://grapaharan.org/Լևոն_Խեչոյան

6. (էլ. ռեսուրս, վերջին այց՝ 16.04.2021թ.)
7. Մալխասյան Ս., Մտածական գործընթացն իբրև «Գիտակցության հոսքի» մեխանիզմ, «Օտար լեզուները Հայաստանում» գիտամեթոդական հանդես, Երևան, 3/2012, էջ 7:
8. James W., The Principles of Psycology, New York, 1950, p. 189.
9. Белянин В. П., Психолингвистические аспекты художестенного текста, Москва, 1988, стр. 44.
10. Выготский Л. С., Избранные психологические исследования, Москва, 1956, стр. 267.
11. Шаховский В., В., Эмотивный компонент значения и методы его описания, Волгоград, 1983, стр. 54.

THE CONTRADICTION BETWEEN THE ARTIST'S EXISTENCE AND REALITY IN THE CREATIONS OF L. KHECHOYAN

BRAGINA NELLY
1st-year MA student of the Department of Primary Pedagogy and Methodology
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: nelli.bragina@list.ru
Academic Supervisor: Grigoryan Vachagan
Doctor of Philology, Professor

The peculiarities of the works of L. Khechoyan are discussed in this article. The writer reconsidered universal human values in a new way. The birth of an artist and his destiny are seen in the light of psychological and philosophical points of view. The article examines Khechoyan's views of art and the meaning of being, humanity and a human.

Khechoyan's stories are unique attempts to unveil the real nature of the artist. According to his interpretation, a man-artist is sentenced to spiritual loneliness, because there are constant contradictioans and collision between him and society. Khechoyan touched upon public perception and analyzed them from the psycho-social point of view. His art has interesting parallels between systems of values and their philosophical underpinnings. By the use of literary means the author has created a multi-layered and holistic prose, which reveals the problems of the artist's life.

The honest art of Khechoyan represents by itself a new kind of literature, the revelation of artist's nature.

Key words: *Khechoyan, artist, artistic interpretation, state of mind, inspiration, society, loneliness, apostle, destiny.*

ПРОТИВОРЕЧИЕ МЕЖДУ БЫТИЕМ ПОЭТА И РЕАЛЬНОСТЬЮ В ТВОРЧЕСТВЕ Л. ХЕЧОЯНА

БРАГИНА НЕЛЛИ
Студентка магистратуры
филологического факультета ГГУ,
электронная почта: nelli.bragina@list.ru
Научный руководитель: Григорян Вачаган
Доктор филологических наук, профессор

В статье рассмотрены художественные особенности произведений Левона Хечояна. В своих произведениях писатель по - новому переоценивает и переосмысливает общечеловеческие понятия, рассматривает рождение поэта с психолого-философской точки зрения. В статье рассматриваются представления Хечояна об искусстве, о смысле бытия, о человечности и о человеке.

Рассказы Хечояна - исключительные попытки раскрытия сути поэта. Согласно его трактовке, человек-поэт обречен духовному одиночеству, поскольку между ним и обществом постоянно присутсвуют отчуждение, столкновение и конфликт. Описан процесс становления молодого поэта. Хечоян коснулся общественных восприятий и проанализировал их с психосоциальной точки зрения. В произведениях имеются занимательные параллели системы ценностей и философские обоснования. Автор создал многослойную и целостную прозу, раскрывающую проблемы бытия поэта. Правдивое исскуство Хечояна ново и как вид литературы, и как раскрытие поэтической сущности.

Ключевые слова: *Хечоян, поэт, художественная трактовка, душевное состояние, вдохновление, общество, одиночество, посланник, судьба.*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԻՐԻԲՅԱՆ ՆՈՒՆԵ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ n.miribyan@gsu.am
Գիտական ղեկավար՝ Սարգսյան Ռուզաննա
Գավառի պետական համալսարանի դասախոս

Ժամանակակից հայ արձակի ներկայացուցիչ Հովհաննես Մելքոնյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում ոչ միայն գեղարվեստական պատկերավորությամբ, այլև գրողի լեզվաոճական որոշ առանձնահատկություններով, որոնց ուսումնասիրմանն է նվիրված այս հոդվածը:

Բանալի բառեր՝ *գեղարվեստական արձակ, ներդաշնակություն, լեզու, ստեղծագործություն, բառապաշար, հուզականություն, ոճաբանություն:*

20-րդ դարի 60-70-ական թվականների հայ արձակագիրների սերունդը, հանդես գալով որոշակի գրական նախասիրություններով, ձգտում է վերլուծաբար թափանցել հասարակական-քաղաքական երևույթների խորքը և պարզել պատճառահետևանքային կապերի դիալեկտիկան՝ ընտրելով կյանքի ճշմարտացի պատկերման ու ոճավորման միջոցներ, որոնք գրողի ասելիքը դարձնում են դիպուկ ու տպավորիչ: Այս շրջանի արձակի ներկայացուցիչների լավագույն գործերին բնորոշ հիմնական առանձնահատկությունն է ոճի սեղմությունը, կարճ նախադասությունները, որոնք բեռնաթափված են ավելորդ բառերից, կառուցվածքային բազմազանությունը, զանազան տիպի զեղչումները, որոնց շնորհիվ խոսքը դառնում է հակիրճ ու հուզական [2,236]:

Յուրաքանչյուր մեծ գրող, սնվելով իր լեզվի բառապաշարի զարգացման բոլոր ակունքներից, բառաստեղծման իր ջանքերով որոշակի ինքնատիպություն է հաղորդում խոսքին, և այդ առումով հայերենի ոճաբանության

կարևոր խնդիրներից է դառնում գեղարվեստական գրականության լեզվաոճի ուսումնասիրությունը:

Արձակագիր Հովհաննես Մելքոնյանը գեղարվեստական գրականություն է ներմուծել որոշակի թեմատիկա (պատերազմական շրջան, քարավանային գաղթ, հեռավոր հողի ձայն) և բովանդակության հոգեբանություն (պատերազմական թիկունքի, գաղթականի ներաշխարհի), որը ներկայացվել է ուրույն լեզվամտածողությամբ, խոսքի կառուցման՝ միայն իրեն բնորոշ ձևերով [**Error! Bookmark not defined.**,128]: Հայ գրականության մեջ հայրենասիրական թեմատիկայի զարգացմանն ու խորացմանը նա նպաստել է վավերականի ու գեղարվեստականի յուրօրինակ համադրմամբ՝ ստեղծելով ու ոճավորելով իրավիճակային պատկերներ ու կերպարներ:

-Պատերազմը պատերազմ է, հա՞, ասում ես՝ ի՞նչ տարբերություն, հա: Ձեննե՛րդ, մի րոպե, լսե՛ք,-ափերով կողքինների բերանները փակելով, ասաց Պատրիկը: -Շատ տարբերություն, մե՛ծ տարբերություն: Էն պատերազմի մեջ պարտվեցինք, էս պատերազմի մեջ հաղթեցինք: Հասկացա՞ր, Արամ: Հետո.... /էջ 223/:

Հ. Մելքոնյանի խոսքում գրեթե չենք հանդիպում երկարաշունչ նախադասությունների. նա ընտրել և գործածել է պատկերավորման այն միջոցները, որոնց միջոցով ասելիքը կդառնա դիպուկ, բայց միաժամանակ խորը, հուզական: Մակդիրների հանդիպում ենք հիմնականում հեղինակի նկարագրություններում. հերոսների խոսքն ինքնաբուխ է, կենդանի, բնական: Հաճախ է հանդիպում անձնավորման, չափազանցության, նվազաբերության գործածություն:

Բերենք բնագրային օրինակներ:

Մակդիրներ: Ամեն տարվա ձյունը մի գույն է ունեցել՝ եկել անցել են կապույտ ձյունով տարիներ, կանաչ ձյունով տարիներ, վարդագույն ձյունով տարիներ, դեղին ձյունով տարիներ.../: Անահիտը նայեց քարաճեղքից ելած և ելքին թեքված վտիտ ծաղկին, որ չգիտես՝ ինչ գույնի էր:

Նախ, կընդհատեի այդ տաքգլուխ դասախոսի քննադատական ճառը..../էջ 116/:

Վազրիկ Ասայանի նկատմամբ մաղձոտ ատելությունը Ասողիկը համարում էր հանրօգուտ սկզբունք /էջ 136/: Այս պառաված տան մեջ ապրում էր որդուն պատերազմ ճամփած և վերադարձին սպասող մայր Վարսենիկը:

Անձնավորում: Տան հողե հատակին մշտապես պառկած է կիսախավարը /էջ 211/: Մութը նստեց մեր աթոռներին, մեզ պարտկեց /էջ47/:

Համեմատություն: Տան պես ծեր է և տան դուռը /էջ 212/: Ասում եմ, ախր, ես ամբողջ օրը բվի պես մենակ եմ…./էջ 94/:

Չափազանցություն: Սպանվել եմ իմ դիրքակից ընկերներից ամեն մեկի հետ, նրանցից ամեն մեկի հետ գերեզման եմ մտել, ո՞վ է ասում, որ ես ողջ եմ /էջ 8/: Նազիկը ծամոն դարձավ, կպավ ինձ…./էջ91/: Շնչելու օդ չկար, ես խեղդվում էի /էջ 29/:

Նվազաբերություն: Ինքը մի բուռ, վշտի մի սար /էջ 212/:

Փոխանունություն: Ձմռան գիշերվա ցածրիկ երկնքից լուսնյակը նայում էր դիմացի ձյունոտ տանիքին, պսպղում էր ձյունը և մեր պատուհանից ներս ընկած պսպղանքի լույսից իմ կիսաբաց աչքերի առաջ ճերմակին էին տալիս մորս սև շորերը, սև գլխաշորը, սևերը /էջ 10/:

Խորհրդահայ արձակին բնորոշ առանձնահատկություններից է լեզվի ժողովրդայնությունը, որը գրական երկի կատարելության կարևորագույն չափանիշներից է:

«Ժամանակակից արևելահայ և արևմտահայ գրական լեզուների և ժողովրդախոսակցական կամ ընդհանուր բարբառախոսական տարբերակները հայերենի արդի փուլում գտնվում են սերտ փոխհարաբերության մեջ և լեզվաոճական կիրառության տեսակետից ունեն ֆունկցիոնալ-ոճական համարժեքություն և համազորություն'» [2,128]:

Հ. Մելքոնյանի ստեղծագործություններում կերպարներն օժտված են ուրույն լեզվամտածողությամբ. Նրանց խոսքն ինքնաբուխ է ու դիպուկ, շատ դեպքերում միահյուսված են գրական և խոսակցական լեզուները, և դա նորից խոսում է կերպարների ոճավորման մասին: Այս առումով բավականին շատ են դարձվածքներով կառույցները, խոսակցական լեզվի դրսևորումները, ժարգոնային բառերն ու արտահայտությունները, որոնք, կարելի է ասել, ծնվել են խոսքային տվյալ իրադրությունը ներկայացնելիս:

Դարձվածքներ:

Ուզեցել է փորը թափի, չի հաջողվել /էջ 101/: Կինը որ տարիքն առնում է, ասում էր ողորմածիկ սկեսուրս,-պիտի ամուսնու սիրտը առնի իր եփել-թափելով, իր լվացք անելով, իր տուն ու դռան մաքրությամբ /էջ 97/: Ես սիրտս վեր քաշեցի…/էջ47/:

Խոսակցական լեզվի դրսևորումներ:

Մի տղա ունի, ծովային կապիտան է եսիմ որտեղ /էջ 98/:

Փորն ընկած ձենով դարձավ ինձ,- մի պուտ ջուր… /էջ 38/:

Հովհ. Մելքոնյանի հերոսներն ունեն խոսքի իրենց արտահայտչաձևերը, յուրահատուկ բառապաշարը: Նա նույնպես գրում է քաղաքային կյանքի մա-

սին, բայց սա պատերազմական շրջանի քաղաքն է՝ իր հոգսերով, ծանր ապրումներով, անցյալի ճնշող ստվերներով, մարդկանց հոգեկան աշխարհը տարուբերող դրվագներով, որոնք իրենց դրոշմն են թողել յուրաքանչյուրի վրա: Պատահական չէ, որ հերոսների խոսքում իրար հաջորդում են մենախոսությունն ու երկխոսությունը, անեծքն ու օրհնանքը, ոգևորությունն ու հուսահատությունը: Օրինակներ՝

Օղորմի հորս, հիշում եմ, հայրս դրսից ներս մտավ, գրկեց ու ասաց. «Թող քո կորցրածը սանր լինի, քեզ համար ես նոր սանր կառնեմ, մի լա...- Բա ինչ անեն, դարձավ մորս, էն մյուսները, սրա նման, սրա տարիքին, որ սանր չեն կորցրել, իրենց հորն ու մորն են կորցրել, իրենց տուն ու տեղը, իրենց հող ու ջուրը: Բա նրանք ինչ լաց ու կոծ դնեն, նրանք ումի՞ց, ո՞ր աստծուց ուզեն իրենց կորցրածը» /էջ 95/:

Տո ծովն էլ սև անհատակն անցնի, քո ծովային անհատականությունն էլ /էջ98/:

Երախտամո՛ռ շան որդի, տո թքե՛մ ես քո պրոֆեսորության վրա, ռեկտորության վրա և առհասարակ քե՛զ վրա /էջ 105/:

Վիրավորում է, քոսոտի՛ մեկը, քոսո՛տ, անպատվում է /էջ 92/:

Միջին սերնդի արձակի լեզվաոճական առանձնահատկություններից մեկն էլ գրական հայերենի կանոնականության պահպանվածությունն է, և այս իրողությունը ցայտուն կերպով դրսևորվում է նորակազմ բառերի կիրառության մեջ: Գրողը, բացի բառապաշարում եղած բառերից, իր լեզվամտածողության շրջանակներում ստեղծում է ինքնատիպ, նորակազմ բառեր ու արտահայտություններ, որոնց, իբրև դիպվածային բառերի, հանդիպում ենք միայն տվյալ ստեղծագործության մեջ:

Պատերազմահոտ հողը... Մեր ոտի տակի լուռումնջացած հողը... /էջ 31/: Ինչ հոտուն խնձորներ են /էջ 130/:

Հանդիպում են նաև օտարաբանությունների կիրառություններ: Լեյտենանտը թույլ տվեց սապոգներս փոխեմ /էջ 76/: Նեստորը որ չլիներ, դա իր գլխով կարո՞ղ էր դիսերտացիա պաշտպանել:

Ինստիտուտի ռեկտոր է, ո՞նց կլինի, ժամամակ չունի գնա հիվանդանոց ծանր պառկած իր ազգականին տեսնելու /էջ 105/: Հարցն այն է, որ այս թեկնածուն ծայրահեղությունների մեջ ընկնելով, դիմեց ժողովականներին, ասելով՝ ասացեք, խնդրեմ, իր որ արժանիքների համար է Արսեն Մեժլումյանը նշանակվել մինիստրի առաջին տեղակալ /էջ 115/:

Շատ են հատվածական բաղադրությամբ բառային միավորներ ու բարդություններ:

«Արձակագիրների լեզվաոճի մեջ գործածվող յուրաքանչյուր հատվածական բաղադրություն այլ բան չէ, քան հասկացական մակարդակների որոշակի երևույթի լեզվահաղորդակցական դրսևորում՝ կապված լեզվագիտակցական համադրական կազմությունների հետ» [2,131]: Ինչպես, օրինակ՝ Վեց խոռվարարների դատավարությունը տևեց երկու օր, երրորդ օրը՝ առավոտյան ընթերցվեց ռազմա-դաշտային դատարանի վճիռը:

Էսքանն անելուց հետո մի օր էլ տղերքիս առան փախցրին, տարան տնիցս, թե պիտի հեր ու մորից բաժան-առանձին ապրենք: Փախցրին տարան, բա: Հիմա մեզնից՝ իրենց հորն ու մորից, բաժան-առանձին են: Ծիծաղ-աղմուկի մեջ բղավոցով ասաց Արամը…./էջ 223/:

Բավականին շատ են հարցուպատասխանային բնույթի երկխոսությունները՝ շատ դեպքերում առանց հեղինակի միջամտության: Հաճախ դիմելով խոսքի սեղմությանը՝ նա բառերի նպատակային բացթողումներով ասելիքի մի մասի կռահումը թողնում է ընթերցողին:

-Մի օր շուտ գայինք, Նունիկի հարսանիքին հասնեինք:

-Նունիկը ո՞վ է:

-Նունիկն է, է՛լի, որ Սալուտից հարս են տարել…./էջ290/:

-Հեծելազորային էի:

-Վա՜յ: Ես էլ:

-Դիվիզիա՞դ, գո՞ւնդդ:

-..Դիվիզիա, ..գունդ,-ուսուցիչը շարունակում է կատակի տալ…. /էջ 377/:

-Հը՞…

-Դուրը չեկա:

-Ի՜, մոտեցում է պետք ունենալ: Դե, հիմա տե՛ս/էջ 382/:

Երկխոսություններում նախադասությունների երանգները տարբեր են՝ պատմողական, հարցական, բացականչական, հրամայական:

Գրողի խոսքին յուրահատուկ հուզականություն են հաղորդում զանազան բառակրկնությունները, որոնք նույնպես ոճական արժեք ունեն:

«Գրողը ուշադիր պետք է լինի հատկապես բառերի ներդաշնակության նկատմամբ, որպեսզի բառական հյուսվածքից ոչ մի բառ չառանձնանա, չդառնա կարկատան, չխախտվեն համամասնությունը, բառերի ներդաշնակությունը, ռիթմը: Ընթերցողը երբեք չպետք է զգա, որ որևէ բառ հեղինակը չարաշահում է՝ շատ գործածելով [2,131]:

Ոճական նպատակադրումով կատարված բառակրկնությունները, որոնք հաճախ վերածվում են միակազմ նախադասությունների, առանձնակի հուզականություն են հաղորդում խոսքին:

-Մենք սովոր ենք, մեր միս ու ոսկորը սովոր են, չեն էլ վառվի, մեր մազ ու մուզը չեն էլ խանձվի: Հրդեհ... Հրդեհն ինչ, ասա գաղթ չլինի, գաղթ, տուն ու տեղից զրկվել չեղնի, տուն ու տեղից: Օտար աշխարհներ, օտար դռներ ընկնել չեղնի, օտար դռներ... Հրդե՛հ, հրդեհն ինչ է, ջանըմ, ասա մարդ թափառական պանդուխտ չեղնի, անհայրենիք չեղնի, անհայրենիք:

-Հրշեջնե՛րը:

-Հրշեջնե՛րը:

-Հրշեջնե՛րը /էջ 244/:

-Կան: Կան: Իհարկե կան /էջ 130/:

-Շտապիր: Շտապիր /էջ 5/:

-Գերեզմաններ, գերեզմաններ, գերեզմաններ: Անվերջ գերեզմաններ :

-Դիրքեր: Դիրքեր: Դիրքեր/6/:

Դիմելով լեզվագործածության նման միջոցների՝ հեղինակն ասես ընթերցողին է ուզում փոխանցել այն մտքերն ու հույզերը, որ թաքնված են կրկնվող բառերի ներքո, և որ մեկ բառով գուցե քիչ լիներ արտահայտելը:

Այսպիսով, Հ. Մելքոնանի ստեղծագործությունները աչքի են ընկնում ոճական բազմազանությամբ: Հեղինակի խոսքարվեստը պայմանավորված է լեզվի օգտագործման անհատական յուրահատկություններով, որոնք նրա լեզուն դարձնում են ինքնատիպ ու գրավիչ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1976թ., էջ 929:
2. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 2002թ,, Էջ 234:
3. Համբարձումյան Վ. Գ., Սովետական գրականություն, 1978թ., № 2, հոդված, էջ 125:
4. Հարությունյան Հ. Ա, Գրողի լեզվի և ոճի հարցեր, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1979թ., էջ 297:
5. Մարության Ա. Ա., Նոր բառեր ու նորաբանություններ, ԲԵՀ, №3, Երևան, 1998թ. էջ 77-85:

6. Մելքոնյան Հ. Ռ., Մոր ձայնը, Երևան, «Սովետական գրող»հրատարակչություն, 1980թ., էջ 448:
7. Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,Երևան, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2010թ., էջ 283:
8. Սուքիասյան Ա. Ա., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1975թ., էջ 614 :

LINGUISTIC FEATURES OF HOVHANNES MELKONYAN'S LITERARY WORKS

MIRIBYAN NUNE
1st-year MA student of Department of Primary Pedagogy and Methodology
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: n.miribyan@gsu.am
Academic Supervisor: Sargsyan Ruzanna
Lecturer at Gavar State University

The works of Hovhannes Melkonyan, who is a representative of modern prose, stand out not only for their artistic imagery, but also for their linguistic and stylistic features, which characterize the originality of the author's linguistic uniqueness.

Key words: *fiction, prose, modern, linguistic work, vocabulary, colloquial.*

ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ ПРОИЗВЕДЕНИЙ ОВАНЕСА МЕЛКОНЯНА

МИРИБЯН НУНЕ
Студентка магистратуры 1-ого курса отделения начальной педагогики и методики факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: n.miribyan@gsu.am
Научный руководитель: Саргсян Рузанна
Преподаватель ГГУ

Произведения Ованеса Мелконяна, представителя современной прозы, выделяются не только художественной образностью, но и языковыми и стилистическими особенностями, которые характеризуют своеобразие языковой деятельности автора.

Ключевые слова: *художественная литература, проза, модерн, лингвистическое произведение, лексика, разговорная речь.*

ՕՏԱՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ՄԵՐ ՎԱԶՔԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

ՉՈԲԱՆՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Վանաձորի պետական համալսարանի
հումանիտար գիտությունների ֆակուլտետի
«Հայոց լեզու և գրականություն» բաժնի մագիստրատուրայի
2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ ruzchobanyan97@mail.ru
Գիտական ղեկավար՝ Բաբուրյան Հերմինե
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ուսումնասիրելով Հրանտ Մաթևոսյանի ստողծագործությունը՝ հանգում ենք հետևյալին.

1.Նա այն եզակի գրողներից է, ով հնարավորինս թափանցեց մարդու հոգու խորքը և վեր հանեց այնտեղ թաքնված հույզերը:

2.Լեզվաոճական առանձնահատկությունների շնորհիվ գրվածքի խոսքը դարձրեց ավելի գրավիչ, հետաքրքիր ու հուզական:

3.Անդրադարձավ օտարման թեմային, որը շատ քիչ գրողների կողմից է արծարծվել և, ըստ էության, անուշադրության է մատնվել:

4.Կերպարների միջոցով ցույց տվեց, որ հասարակությունը չի ընդունում թույլ և կամազուրկ մարդկանց:

5.Նա այն եզակի գրողներից է, որը պատկերում է իրական կյանքը լավ և վատ կողմերով:

6.Այնպես է անում, որ յուրաքանչյուր գործ դաստիարակի իր ընթերցողին և հեռու պահի սխալ արարքներից:

7.Պատմվածքի գաղափարական եզրահանգումներից մեկը «դառնում է ուժեղի և թույլի, զորավորի և անպաշտպանի բարոյախոսութունը»:

Բանալի բառեր՝ *վազք, օտար, վախկոտ, հուզական, անտեսված շրջապատի կողմից, պատերազմ, ընկերասիրություն:*

Հրանտ Մաթևոսյանը 20-րդ դարի 2-րդ կեսի հայ արձակի ինքնատիպ դեմքերից է, որը շարունակելով յուրովի զարգացրեց թումանյանական արձակագրության ավանդները: Նրա երկերի գեղագիտական ու հոգեբանա-

կան բազմաշերտության մեջ ամենայն խորությամբ, բարդ հանգույցներով բացվեց թումանյանական դպրոցի ողջ հմայքը: Մաթևոսյան հոգեբան արձակագրին հաջողվում է ջղուտ թեմաների արվեստավոր բացահայտումներ կատարել, մարդու ներաշխարհը քննել՝ այս ամենը մատուցելով մարդ-միջավայր բախումնային իրավիճակների պատումային համատեքստում: Այս առումով առանձին ուշադրության է արժանի «Մեր վազքը» պատմվածքը: Հենց սկզբից նշենք, որ մաթևոսյանագիտության մեջ հիշյալ երկին անդրադարձները չափազանց քիչ են, հետևաբար սակավ ուսումնասիրված այս երկի որոշ շերտեր բացահայտելու միտումով ձեռնամուխ եղանք այս հոդվածի գրությանը: Ստեղծագործության մեջ հեղինակը դիպաշարն սկսում է դպրոցահասակ երեխաների կյանքի պատկերով:



Նկար 1.

Թերևս ուղղակիորեն չկա 20-րդ դարակեսին ամբողջ համաշխարհային գրականության մեջ լայն երակ բացած անհատի օտարման թեման, բայց մաթևոսյանական հայացքի ներքո այն արձագանքում է միջավայրի կողմից մարդու օտարման, մեկուսացման թեման բոլորովին այլ համատեքստում: Դիպաշարը հաստատապես մաթևոսյանական է, բարդ անցումներով, ջղուտ ընթացքով, առանց ավելորդ էֆեկտների, բայց դրանով իսկ հուզող, գրավիչ:

Դպրոցականների միջավայրում հենց սկզբից գրողն առանձնացնում է Արտավազդ անունով մի երեխայի, որին բոլորը Թուրք էին ասում: Հաջոր-

դող տողերում այսպես է բացատրվում. «Նրանից առաջ ծնված նրա եղբայրները դառնալիս էին եղել մեկ տարեկան ու մեռնելիս, և պառավները նրա մորը խորհուրդ էին տվել երեխայի վրա թուրքի ու քրդի մի օտար անուն դնել: Մահը չէր հասկանա, իբր, որ օտարի անվան տակ հայի տղա է ու ետ կդառնար ձեռքերը պարապ»[1]: Այստեղից սկսվում է օտարման գաղափարի բարձրաձայնումը հեղինակի կողմից, որին զուգահեռ ուշադրություն է դարձվում սնահավատության փաստին: Երեխայի և միջավայրի միջև տեսանելի սահմանագիծ է գոյանում, որը ձևավորվում է Օտարի արտաքինի, հագուստի, վարքի, անցյալի, ընտանիքի առանձնահատկություններով:

Օտարումը ընտանիքի համար փրկության հույսն էր, քանի որ մինչ այդ նրանք կորցրել էին իրենց բոլոր զավակներին, որոնց մեկ տարին դեռ չէր էլ լրացել: Դա մեծ ցավ էր զավակներին կորցրած մոր համար, որ ամեն ինչի պատրաստ էր, միայն թե այս մեկին էլ չկորցներ: Ու ինչ-որ օտար անուն են դնում: Բայց հետագայում պարզվում է, որ դա հենց իսկական հայի անուն է: Այդ փաստը շատ է վախեցնում ու սարսափեցնում որդեկորույս մորը: Այդպես վախն ու սարսափը սրտում, ամեն օր վատ լուրի սպասելով՝ շարունակում են ապրել ու մեծացնել փոքրիկին, որին դպրոցում Թուրքի փոխարեն սկսել էին անվանել Օտար: Եվ արդեն հետագա բոլոր գործողությունների, իրադարձությունների ու երևույթների պատկերման համար Մաթևոսյանը նշում է ոչ թե տղայի իրական անունը, այլ նշում է Օտար ձևը: «Նրա ճակատագիրը կախված է նաև աշակերտներից, որոնք ուսուցչուհու կազմակերպած վազքի մրցումների ընթացքում ի հայտ են բերում ոչ մարդկային վերաբերմունք թուլակազմ և անպաշտպան հասակակցի նկատմամբ»[2]: Այդ երեխան ամեն ինչով տարբերվում էր մյուսներից, որի պատճառով երբեմն ծաղրանքով, երբեմն էլ արհամարհանքով էին վերաբերվում նրան: «Երբ Օտարը դասարան մտավ կարմիր վերնաշապիկը հագին, մենք բոլորս կարծեցինք աղջիկ ներս մտավ: Հետո տեսանք, որ Օտարն է, կարմիր վերնաշապիկ է հագել, և տեսանք, որ բոլոր տղաներս դարչնագույն ենք, տնագործ բրդե մեր շորերը միայն դարչնագույն են»[3]: «-Աղջկա շորեր ես հագել, դու քո հոր

[1] Մաթևոսյան Հր., Մեր վազքը, «Սովետական գրող», Ե., 1978, էջ 29:

[2] Գրիգորյան Վ. Ս., Հրանտ Մաթևոսյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1989, էջ 64:

[3] Մաթևոսյան Հր., Մեր վազքը, «Սովետական գրող», Ե., 1978, էջ 31:

հերոսության դրոշակն ես,-ասացին»[4]: Այս բոլոր իրադարձությունները տեղի էին ունենում պատերազմի համապատկերի վրա, երբ ինչ-որ բան շատ դժվարությամբ էր գտնվում կամ ընդհանրապես չկար: Եվ Օտարի մայրը ստիպված գողություն է անում, որպեսզի կարողանա գեղեցիկ հագուստով երեխային դպրոց ուղարկել: Մարդու և միջավայրի այսօրինակ հեռացումը Հրաչյա Սարիբեկյանը բնորոշում է որպես «հաղորդակցման խզում»[5՝] որպես օրինակ բերելով Յուկիո Միսիմայի «Ոսկե տաճարը» վեպի, Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխություն» վիպակի կերպարներին: Մաթևոսյանի մոտ էլ, իսկապես, «Մեր վազքի» կերպարների միջև նմանատիպ հաղորդակցման խզում է դիտվում, որը, սակայն, հետո պիտի հաշտություն զարգացնի:

Այս ամենից հետո գրողն սկսում է բացահայտել ուսուցիչների կերպարային առանձնահատկությունները, որոնց մեջ առանձնահատուկ վերաբերմունք է ցուցաբերում ռազմագիտության ուսուցչուհու կերպարը կերտելիս: Նրա հոգին պարուրված էր խոր վշտով, քանի որ պատերազմը խլել էր եղբորը, և այդ ցավը նրա հոգուց դուրս չէր գալիս: Երևի այդ ցավի պատճառով էր, որ իր «պողպատե հայացքով»[6] երբ նայում էր, բոլորի մոտ վախի, հարգանքի և զգաստության, ինչպես նաև մեղավորության զգացումներ էին առաջանում: «Նրա եղբայրը զոհվել էր ռազմաճակատում, և նրա առջև, զոհված եղբոր համար, մենք բոլորս մեզ մեղավոր էինք զգում, թեկուզ մեղավոր չէինք, և հարգանքի հետ նաև վախենում էինք նրանից, որովհետև երբ նա մեզ նայում էր, ամեն անգամ երբ նայում էր, մեզ թվում էր, թե մենք ենք սպանել նրա եղբորը: Շաբաթից շաբաթ և դասից դաս, նույնիսկ մեկ օրվա մեջ, մաթեմատիկայի ժամից մինչև ռազմագիտության ժամը, խստությունը նրա դեմքին կարծրանում էր, և մենք հասկանում էինք, թե նրա համար ինչքան լավն էր եղել նրա եղբայրը, ինչքան խորն է եղել եղբոր սերը նրա մեջ, և ինչքան մեծ է նրա վիշտը»[7]: Այս կերպարի միջոցով հեղինակը ցույց է տվել հազարավոր մարդկանց վիշտն ու տառապանքը պատերազմի ժամանակ՝ առավել սրելով պատմվածքի տողերում առկա դրամատիզմը: Նրանց ցավը, անընդհատ արնահոսող վերքերն ու անդառնալի կորուստները ստի-

[4] Նույն տեղում, էջ 32:

[5] Սարիբեկյան Հր., Հաղորդակցման խզումը և գեղարվեստական պայմանականությունը, http://kantegh.asj-oa.am/509/1/3-9.pdf (էջը հասանելի էր 7.04.2021թ.)

[6] Մաթևոսյան Հր., Մեր վազքը, «Սովետական գրող», Ե., 1978, էջ 34:

[7] Նույն տեղում, էջ 35:

պում են, որ այս ուսուցչուհու նման դառնան խիստ ու վախեցնող հայացքներով մարդիկ, որոնք երբեք չեն կարող մոռանալ իրենց տեսածը, զգացածն ու ապրած կյանքը:

Ռազմագիտության ուսուցչուհին երեխաների համար զորավարժանք է կազմակերպում: Եվ երբ խմբերի են բաժանվում, տարաձայնություն է առաջանում. Մադաթը ուսուցչուհու զոհված եղբոր տղան էր, որը իր հոր նման օժտված էր հրամանատարին բնորոշ հատկություններով, և ինքն էր առաջնորդելու առաջին խմբին: Օտարությունից ազատվելու, սեփական մտքերն արտահայտելու ու կյանքի կոչելու համար հեղինակը այս տղային տալիս է լայն հնարավորություններ, բայց վախը կամ միջավայրի անհանդուրժող վերաբերմունքը նրան անընդհատ անհանգստացնում էին: Նա չէր ուզում Օտարին իր խմբում տեսնել, որովհետև մտածում էր, որ նա չի կարող իր խմբի մյուս անդամների նման արագ վազել, ու իրենք կպարտվեն: Իսկ Օտարը միայն լուռ լսում էր և վախենում ինչ-որ բան ասել: Այս երկու երեխայի կերպարի միջոցով ցույց է տրվում մի դեպքում մեկի խեղճ, անկարող ու վախկոտ լինելու փաստը, մյուս դեպքում՝ համառ, պայքարող ու առաջնորդելու կարողությամբ օժտված լինելու փաստը, հակադրական մի իրողություն, որ խորապես բնորոշ է առհասարակ Մաթևոսյանի գեղագիտական հայացքին: Բայց յուրաքանչյուր խմբի առաջնորդ պետք է կարողանա այնպես անել, որ խմբի ամեն մի անդամ հաղթանակի իր բաժինը ունենա: «Վազքը իմ մարմնի պահանջն էր, ինչպես որ թևերի պահանջը ճախրն է»[8]: Մաթևոսյանն այս երեխաների միջոցով փորձում է նաև ասել, որ եթե թույլ են և շատ բան չեն կարող անել այնպես, ինչպես մյուսները, ապա նրանց չպետք է նեղացնել և անտեսել: «Ես գրկեցի նրան, ընկերոջ ու թույլի նրա մարմինն ինձ դուր եկավ, և ետ դարձրի ու վազեցի նրա կողքից, բայց մի րոպե ես չէի հասկանում, թե ով է ում ետ դարձրել - նա՞ ինձ՝ դեպի Սղոցարան, թե՞ ես իրեն՝ դեպի գյուղ»[9]: Այս դրվագում արդեն օտարում-հաշտություն կոնֆլիկտի գագաթնակետն է դրսևորվում. «Ես գրկեցի նրան, և երկուսս էլ ընկանք: Եվ այդպես պառկելը նույնքան դուրեկան էր, ինչքան վազքի հրճվանքը ճանապարհի սկզբում: Մենք դժվար ելանք, որովհետև ես նրան բաց չէի թողնում, իսկ նա չէր կարողանում բարձրացնել ինձ»[10]: Այս արտա-

[8] Նույն տեղում, էջ 51:

[9] Նույն տեղում, էջ 67:

[10] Նույն տեղում, էջ 69:

հայտություններից արդեն հասկացվում է, որ տղաների մոտ ընկերական ջերմ հարաբերություններ են սկսում ձևավորվել, որը չկար նախկինում: Նրանք սկսում են մեկը մյուսի մասին հոգ տանել. նրանք կարծես վախենում էին արտահայտել իրենց հոգատար վերաբերմունքը, սակայն վազքի մրցույթը նրանց հոգու մեջ ինչ-որ բան փոխեց՝ ջերմության համար տեղ բացելով: Թեև նրանցից մեկը ֆիզիկական կարողությամբ զիջում էր մյուսին, այնուամենայնիվ, մյուսը ճանապարհի կեսին մենակ չթողեց թույլին՝ փորձելով այնպես անել, որ Օտարը չտառապի իր թուլությունից: Դա հրաշալի ընկերության սկիզբն էր: Եվ ասվածի լավագույն ապացույցը հետևյալ տողերն են. «Նայում ու տեսնում էր գյուղը, որ իր որդիներից երկուսը՝ Արսեն պապի թոռը և Ավետիք պապի թոռը, վերադառնում են ընկերաբար միասին. նրանցից մեկն, իհարկե, մի քիչ ուժեղ կլինի, մյուսը՝ մի քիչ թույլ, բայց ետուառաջ չեն ընկնում, գալիս են ընկերաբար ուս-ուսի»[11]: Դիպաշարում դրվում է նաև հավասարության գաղափարը. ուժեղ երեխան թույլին օգնելիս չէր խղճում, այլ վերաբերվում էր ինչպես իրեն հավասարի: Ի վերջո, պատմվածքի գաղափարական եզրահանգումներից մեկը «դառնում է ուժեղի և թույլի, զորավորի և անպաշտպանի բարոյախոսութունը»[12]:

Տղան, թեփը իր ձեռքի մեջ սեղմած, երբ հասնում է ուսուցչուհու տուն, համոզված էր, որ գովասանքի խոսքեր կլսի: Բայց երբ Արտավազդի մասին է հարցնում, հենց այդ պահին ուսուցչուհու հայացքը փոխվում է՝ դառնալով վախեցնող ու սարսափեցնող: «...բայց նա չէր եկել, դպրոցում չէր, ձորի իր հատակներում, մենակ, շեղվելով ու ընկրկելով կռվում էր իր վազքի դեմ. «-գալիս է», ասացի ես, և նրա հայացքը դարձավ այնպիսին, կարծես իմ մեջ նա տեսնում էր իր եղբոր սպանողին»[13]: Ուսուցչուհու հայացքը, ըստ էության, ևս մեկ կորուստ ունենալու վախից է փոխվում: Այս ամենը վկայում է այն մասին, որ որտեղ և ինչ էլ պատահի, չպետք է միայնակ թողնես ընկերոջդ կամ հարազատ մարդուն. եթե կորցնես, խիղճդ միշտ կտանջի: Անդառնալի են բոլոր տեսակի կորուստները, և այդ ցավը ամբողջ կյանքում ուղեկցում է մեզ:

---

[11] Նույն տեղում, էջ 70:

[12] Գրիգորյան Վ. Ս., Հրանտ Մաթևոսյան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1989, էջ 64:

[13] Մաթևոսյան Հր., Մեր վազքը, «Սովետական գրող», Ե., 1978, էջ 73:

Այսպիսով, ուսումնասիրելով Հրանտ Մաթևոսյանի «Մեր վազքը» պատմվածքի բովանդակային շերտերը գրողի ստեղծագործության համատեքստում՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

Մաթևոսյանն այն եզակի գրողներից է, ով թափանցել է մարդու հոգու խորքը և վեր հանել այնտեղ թաքնված հույզերը, պատկերել իրական կյանքը՝ իր դրական և անընդունելի կողմերով, իսկ այս ամենի տպավորիչ իրագործմանը նպաստել են երկի լեզվաոճական առանձնահատկությունները, որոնց շնորհիվ բնագրում խոսքը ավելի գրավիչ, հետաքրքիր ու հուզական անցումներ ունի: Հեղինակն անդրադարձել է օտարման թեմային, որը շատ քիչ գրողների կողմից է ուսումնասիրվել կամ էլ անուշադրության է մատնվել, թեմա, որը 20-րդ դարի համաշխարհային գրականության մեջ շատ է արծարծվել: Պատմվածքի կերպարների միջոցով համոզիչ է դարձնում այն իրողությունը, որ հասարակությունը չի ընդունում թույլ և կամազուրկ մարդկանց, սակայն կարողանում է պատմվածքի ժանրի ծավալային սեղմ սահմաններում զարգացնել մարդու օտարման և, ի վերջո, հաշտության վերաճելու խնդիրը: Արժե ավելացնել, որ Մաթևոսյան գրողի այս գործն էլ ուղերձ ունի՝ դաստիարակելու իր ընթերցողին և հեռու պահելու սխալ արարքներից՝ այդպիսով իրագործելով գրականության բարոյական դաստիարակության գործառույթը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Ա. Գրիգորյան, Հրանտ Մաթևոսյան, Ե., 1989թ., 158 էջ:
2. Վ. Ռ. Գրիգորյան, Հրանտ Մաթևոսյան. ստեղծագործությունը, Ե., 2013թ., 560 էջ:
3. Ս. Փանոսյան, Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը, Ե., 1984թ., 220 էջ:
4. Մաթևոսյանական արձագանքներ, հատոր 2-րդ, Վանաձոր, 2011թ., 154 էջ:
5. Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի խոսքարվեստի մի քանի հարցեր, Ե., 1986թ.:
6. Դ. Գասպարյան, Երկնային շուշան: Ազգային մտածողություն և ազգային ինքնագիտակցություն, Ե., 2005թ.:
7. Հ. Մաթևոսյան, Մեր վազքը, Ե., 1978թ., 238 էջ:
8. Հրաչյա Սարիբեկյան, Հաղորդակցման խզումը և գեղարվեստական պայմանականությունը, http://kantegh.asj-oa.am/509/1/3-9.pdf

EXPLANATION OF THE TOPIC OF ALIENATION IN "OUR RUN" STORY BY HRANT MATEVOSYAN

CHOBANYAN RUZANNA
2nd-year MA student of the Department of Armenian Language and Literature
Faculty of Humanities, VSU
e-mail: ruzchobanyan97@mail.ru
Academic Supervisor: Baburyan Hermine
PhD, Associate Professor

Examining Hrant Matosyan's work, we come to the following conclusion:

1. He is one of the unique writers who penetrated the depths of the human soul as much as possible and revealed the emotions hidden there.
2. Due to the linguistic and stylistic features, it made the written speech more attractive, interesting and emotional.
3. He touched upon the topic of alienation, which has been studied by very few writers or has been neglected.
4. He showed through images the fact that the society does not accept weak-willed people.
5. He is one of the few writers who portrays real life for better or worse.
6. He does it in such a way that each work educates its reader and keeps away from wrongdoing.
7. One of the ideological conclusions of the story "becomes the morality of the strong, the weak, the powerful, the defenseless."
8. In the work, the author begins the scene portraying the life of school-age children.

Key words: *run, stranger, coward, emotional, neglected by others, war, friendship.*

ВЫРАЖЕНИЕ ТЕМЫ ОТЧУЖДЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИИ ГРАНТА МАТЕВОСЯНА "НАШ БЕГ"

ЧОБАНЯН РУЗАННА
Студентка магистратуры 2 курса отделения
армянского языка и литературы
гуманитарного факультета ВГУ
электронная почта: ruzchobanyan97@mail.ru
Научный руководитель: Бабурян Эрмине
Кандидат экономических наук, доцент

Рассматривая работы Гранта Матосяна, мы приходим к следующему.

1. Он один из уникальных писателей, которые максимально проникли в глубины человеческой души, раскрыли скрытые там эмоции.

2. Благодаря лингвистическим и стилистическим особенностям язык произведения стал более привлекательным, интересным и эмоциональным.

3. Он затронул тему отчуждения, которая изучалась очень немногими писателями или оставалась без внимания.

4. С помощью персонажей он показал, что общество не принимает безвольных людей.

5. Он один из немногих писателей, изображающих реальную жизнь и с хороших и плохих сторон.

6. Каждое произведение обучало своего читателя и удерживало его от проступков.

7. Одним из идеологических выводов рассказа «становится мораль сильного и слабого, мощного и беззащитного».

8. В произведении автор начинает сцену с изображения жизни детей школьного возраста.

Ключевые слова: *бег, чужой, трусливый, эмоциональный, заброшенный, война, дружба.*

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ «ՄԻՋՆԱՇԵՆ» ՎԵՊՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ
Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի
«Հայոց լեզու և գրականություն» բաժնի
մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ svetlana-hovhannisyan-90@mail.ru
Գիտական ղեկավար՝ Գրիգորյան Վաչագան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածն անդրադառնում է Զորայր Խալափյանի «Միջնաշեն» վեպում ներկայացված Արցախ աշխարհի Միջնաշեն գյուղում 1918-1920-ական թվականներին տեղի ունեցող իրադարձություններին: Խոհափիլիսոփայական մոտեցումները, գաղափարական անդրադարձները, ազգամիջյան բախումները տեղ են գտել այս վեպում: Գրողը նորովի է ներկայացնում արցախյան հարցը, մեծ տերությունների շահերի բախումները:

Հոդվածում քննվում է մարքսիստական գաղափարների հաստատման գործընթացը՝ բացասական հետևանքներով: Գլխավոր կերպարների միջոցով ներկայացնում է ժամանակի այն գործիչներին, ովքեր սին մտքերով տարված և սեփական ես-ը ամեն ինչից վեր դասած՝ աղճատում են մի ողջ հասարակություն:

Բանալի բառեր՝ *Խալափյան, Միջնաշեն, մարքսիստական գաղափարախոսություն, հասարակություն, ազգամիջյան բախումներ, արցախյան հակամարտություն, թաքնված միտումներ:*

Պատմությունից դասեր է պետք քաղել, սակայն հաճախ մենք՝ հայերս, կրկնում ենք նույն սխալը՝ հավատալով «եղբայրական» հարևաններին: Ու ամեն անգամ այդ հավատը հանգեցնում է կորուստների: Այդպես եղավ, որ հավատալով ցարական Ռուսաստանին, սպասելով մի ամբողջ ազգի փրկող օգնությանը՝ կորցրինք Վանը, Անին, մի ամբողջ Արևմտյան Հայաստան ու, ամենացավալին, մեկուկես միլիոն հայ: Պատմությունը կրկնվեց նաև արցախյան առաջին հակամարտության ժամանակ (1918թ.) և ոչ միայն: Հակա-

մարտությունն ի սկզբանե դրսևորվում էր քաղաքացիական ակտիվ շարժմամբ, ապա և վերաճեց պատերազմի (1918-1920թթ.): Ռազմի դաշտում հաղթեցին հայերը, իսկ դիվանագիտական սեղանին (Մոսկվայի և Կարսի պայմանագրերով (1921թ.)) սկուտեղի վրա Ադրբեջանին մատուցվեց Նախիջևանը: Եվ այս ամենը կրկին «մեր բարեկամ» Ռուսաստանի «թեթև» ձեռքով: Այս ամենը կարծես քիչ էր, նոր մարքսիստական գաղափարներն էլ մի կողմից էին ջլատում ժողովրդի ուժերը:

1918-20թթ. արցախյան հակամարտությունը իր արտացոլումն է գտել Զորայր Խալափյանի «Միջնաշեն» վեպում:

Հեղինակը «Միջնաշեն» վեպում տալիս է 1918-1920թթ. Արցախում կատարվող իրադարձությունների լայն նկարագիրը: Գրողը կերպարների միջոցով անդրադարձել է և բացահայտել համայնավարական քաղաքականության անտեսանելի, բայց իրական կողմերը, այդ քաղաքականության ազդեցությունը ազգային խնդիրների վրա, ստեղծել է ազգային միջավայր, կերտել ազգային հերոսներ, քննադատել համայնավարների ապազգային, ապամարդկային, անբարոյական և հակակրոնական քաղաքականությունը:

Միջնաշենը սահմանամերձ փոքրիկ գյուղ է, որը գտնվում է Արցախում, բայց, անշուշտ, «իր անշփոթելի տեղն ունի մեր գրական քարտեզի վրա՝ շնորհիվ Զ. Խալափյանի»: Միջնաշենը ոչ միայն պատումի, այլև աշխարհի առանցքն է: Ինչպես Ս. Սարինյանն է նկատում. «տիեզերական սուբյեկտ է և ունի բիբլիական սկիզբ»[1]: Միջնաշենցին բազում թելերով կապված է աշխարհին: Նրան աշխարհի հետ կապում են ոչ թե առևտուրն ու խաղաղ կյանքը, այլ դարի խոշորագույն իրադարձությունները՝ Առաջին աշխարհամարտ, հեղափոխություն, խորհրդային կարգերի հաստատում, աքսոր, Երկրորդ աշխարհամարտ, և ամենակարևորը՝ Միջնաշենն ազգային ազատագրական պայքարի կենտրոնն է:

Այս գյուղն ունի ևս մեկ պատմական նշանակություն. որոշ ժամանակ այստեղ է ապրել նաև Մեսրոպ Մաշտոցը. «Մեսրոպ Մաշտոցը հինգ տարի ապրել է մեր Հոռեկա վանքում, դպրոց է բացել, դաս է տվել, տառերն է սովորեցրել միջնաշենցի երեխաներին 1500 տարի սրանից առաջ»[2]:

[1] Սարինյան Ս., Արցախը ժամանակի մղձավանջում, «Գրական թերթ», սեպտեմբերի 20, 1991:

[2] Զ. Խալափյան, Միջնաշեն, Երևան, Նաիրի, 1991, էջ 31:

Կան մոտ չորս տասնյակից ավելի կերպարներ, որոնք առաջին հայացքից նույն աշխարհից չեն, սակայն սերտորեն կապված են միմյանց և լրացնում են մեկը մյուսին: Հեղինակը փորձել է ստեղծել իրականությանը մոտ կերպարներ, ովքեր ունեն ամրակուռ կամք, պայքարելու գերբնական ուժ և անսահման հավատ: Մարդիկ, ովքեր անմեղ են, մաքրամաքուր, հեռու քաղաքակիրթ աշխարհի կեղծ օրենքներից, ովքեր լուր են ստանում միայն դրսից եկած «ղարիբից»՝ անկեղծորեն հավատալով նրա ամեն մի խոսքին: Նրանք հյուրին ընդունել գիտեն, հարգել, պատվել մինչև անգամ այն աստիճան, որ կարող են ընդունել իրենց տան անդամի նման՝ չնկատելով անգամ հյուրի նենգ ու սևեռուն հայացքները (Սինդաթե): Հեղինակը խտացնում է անհեթեթության մթնոլորտը, ցույց տալիս, թե ինչպես են ոչ ադեկվատ պատկերացումները, կարգադրությունները, հրամանները խեղում մարդկային ճակատագրերը (աքսոր, ձերբակալություններ), թե ինչպես է հեղափոխական մտքերով տոգորված մարդկանց քաղաքականությունը ամեն ինչ վերածում քաոսի: Վեպում այդ քաղաքականությունն իրագործող բազմաթիվ կերպարներ կան, և բազմաթիվ կերպարներ կան, որ դառնում են հենց այդ քաղաքականության զոհը, ինչպես Մելիք-Բեգլարյան Սերգի-բեկը, որի ամբողջ ունեցվածքը՝ տունը, կալվածքները, արտերն ու այգիները, թալանում, հրդեհում են գյուղացիները, մինչդեռ մի ժամանակ նրանք հարգանք էին տածում այս բարեպաշտ ու հայրենասեր մարդու հանդեպ:

Յուրաքանչյուր մոլեռանդ գաղափարախոսություն ախտ է հասարակության համար, որը կարող է քայքայել այն: Գաղափարախոսությունն ու հասարակական հոգեբանությունն իրենցից ներկայացնում են երկու փոխկապակցված և միմյանց մեջ ներթափանցող երևույթներ, հասարակական գիտակցության երկու մակարդակներ: Ընդ որում հոգեբանությունը հանդես է գալիս գաղափարախոսական ֆենոմենի «հիմնաքարի» դերում, որն ունենում է գաղափարախոսության հետադարձ ազդեցություն մարդկանց հոգեբանության վրա: Այս ամենը ավելի նկատելի է, երբ այդ գաղափարախոսությունը «ցեցի նման» բույն է դնում և տարածվում հասարակական բոլոր օղակներում՝ թափանցելով անգամ ամենափոքր և ամենակարևոր օղակի՝ ընտանիքի մեջ: Խալափյանը վեպի հենց սկզբում ցույց է տալիս, թե ինչպես է դասակարգային պայքարի մարքսիստական ուսմունքը դառնում «լախտի» խաղացող անմեղ երեխաների ծեծկռտուքի պատճառ: Նրանք այդ խաղը խաղացել էին վաղ մանկությունից, սակայն արտաքին գաղափարական ազ-

դեցության ներքո այն դարձավ ընկերների բաժանման պատճառ: Եվ վեպում հասարակության բզկտումը սկսվում է հենց այստեղից:

Հեղինակը տալիս է հայկական նահապետական ընտանիքի նկարագիրը և ավելի տեսանելի պատկերացում տվող բնորոշ գծերը: Նկատելի է, որ նա ավելի շատ կողմ է «հայրապաշտությանը», քանի որ վեպում ավելի մեծ նշանակություն է տալիս հենց հոր դերին, իհարկե, խուսափելով սերնդային տարաձայնություններից: Նա փորձում է ներկայացնել այդ ժամանակահատվածում արցախցու ընտանիքի մոդելը, վարքուբարքը և մարքսիստական գաղափարախոսության վատ ազդեցությունը ընտանիքի վրա: Հենց այդ ազդեցության հետևանքով է, որ Յապոնը հեռանում է տանից, նույնիսկ չի կարողանում շփվել ընտանիքի հետ, սպանվում է Արշակը, Չալունց Սևին աքսորվում է Սիբիր:

Ամենավառ կերպարներից է Սինակ Թադևոսյանը (Սինդաթե), ով դառնում է մարքսիստական գաղափարների տարածողը: Նրա գրական կեղծանունն է նույնիսկ ծիծաղ առաջացնում: Այդ անվան մեջ գրողն անշուշտ փորձել է շեշտել սին բառը, որը կերպարի էությունն է: Խալափյանը նրա միջոցով ցույց է տալիս, թե որքան մոլեռանդորեն կարող է մարդը իր մեջ կրել գաղափարներ՝ դասակարգային, կոլեկտիվիզմի, հավասարության և այլն, ու դրանք իրագործելու համար կանգ չառնել ոչնչի առաջ: Տեղին է ասված հետևյալ ասույթը. «Նպատակը արդարացնում է միջոցները»: Եվ, իհարկե, այս պարագայում վերը նշվածը կարելի է հասկանալ բացասական առումով: Պատահական չէ, որ նա բանաստեղծ է: Ամեն ինչից վերացած, ամեն ինչ «պարզ ու մեկեն» տեսնող, ամեն ինչի պատասխանը գրպանում դրած և ոչ մի դիտողություն չընդունող գաղափարախոս[3]: Նրա ընկալումներն ու պատկերացումները բավականին երևակայական են, ոչ իրատեսական: Ժողովուրդը, տեսնելով և իր մաշկի վրա զգալով մարքսիստական գաղափարախոսության բացասական անդրադարձը, այնուամենայնիվ, չի կարողանում հակադրվել և դեմ դուրս գալ հեղափոխական գաղափարախոսին: Այդ ամենը հետագայում անում է ժամանակը: Կերպարի տեղաբնակ չլինելը ևս մտացածին է, քանի որ նա չի կարող հասկանալ գյուղացու՝ դառը տանջանքով վաստակած մի կտոր հացի արժեքը: Եվ հանուն մարքսիստական գաղափարախոսության պատրաստ է անցնել մարդկային բոլոր արժեքների վրայով: Հեղինակը կերտել է «բացասական կերպար»՝ խորհրդային հասա-

[3] Վաչագան Գրիգորյան, Միջնաշեն, «Նորք» ամսագիր, թ. 10-12, էջ 198:

րակարգի մարմնավորում, սակայն հետագայում խորհրդային իշխանությունն էլ է հրաժարվում իր գաղափարների տարածողից: «Ամբողջ կյանքը նվիրել է խորհրդային իշխանությանը : Ըհը՝ իր սիրած խորհրդային իշխանությունն էլ նրանից հրաժարվեց: Այսքան էլ անտե՛ր մարդ»[4]: Նրա մահը հասարակարգի վախճանն է խորհրդանշում[5]: Հետաքրքիրն այն է, որ նրա վախճանից անմիջապես հետո հեղինակը անդրադառնում է Գոմշակովի պատմությանը՝ բացահայտելով գաղափարական մտադրությունը, որ լավագույն երկերում քողարկված է մնում պատումի խորքերում:

Վեպն ունի իր կոլորիտային կերպարներն ու տեղագրությունը, ինչպես քրոնիկոնի ժանրի լավագույն օրինակներում: Թեև գործողությունները սկիզբ են առնում Թիֆլիսում, հոր՝ Չալունց Սևու և Արշակի հանդիպմամբ, կարճ ընթացքով տեղափոխվում են նախահեղափոխական Բաքու, իսկ վերջամասում՝ հետպատերազմյան Երևան, սակայն պատումի աշխարհագրական առանցքը Միջնաշեն գյուղն է: Հերոսների մի մասն իրական անձիք են (Գարեգին ՆԺդեհ), ովքեր այս կամ այն կերպ առնչվում են Միջնաշենի հետ: Կան մոտ չորս տասնյակից ավելի կերպարներ, որոնք առաջին հայացքից նույն աշխարհից չեն, սակայն սերտորեն կապված են միմյանց և լրացնում են մեկը մյուսին:

Վեպում կան նաև պատմափաստագրական անդրադարձեր, քաղաքական վերլուծություններ, ռուս-թուրքական, հայ-ռուսական, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական, Արցախի և հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցում խորհրդային կառավարության դիրքորոշման, խորհրդային քաղաքականության ինչ-ինչ մերկացումներ ու բացահայտումներ: Հեղինակը չի բավարարվում քաղաքական խաղերի պարզ ներկայացմամբ, նրան հետաքրքրում են այլ իրողություններ և հարցեր: Դրանցից մեկն էլ հայերի և թուրքերի ազգային խառնվածքների բացահայտումն ու տարբերությունն է: Թուրքական քաղաքականությունն առանձին քաղաքական մոտիվ է, առանձին մոտիվ է նաև համայնավարական քաղաքականությունը: Գրողին հաջողվում է ցույց տալ այդ քաղաքականության ողջ անհեթեթությունը՝ կուլակաթափություն, մասնավոր սեփականության վերացում, կոլեկտիվ տնտեսություն և այլն:

[4] Զորայր Խալափյան, Միջնաշեն, Երևան, «Նաիրի», 1991թ., էջ 419:

[5] Ղազարյան Լիլիթ, Սեղմագիր, Երևան 2019թ.,էջ 11

Ամեն մի երկիր իր շահն ունի և Արցախն ու հայը ևս մեկ անգամ դառնում են այդ շահերի բախման կիզակետ՝ իհարկե մնալով ամենամեծ տուժողը: Ամենացավալին էլ այն է,որ առանց գիտակցելու ինքն էլ է դառնում իր կործանման մասնակիցը:

Հեղինակը վեպում ցույց է տվել երկու թշնամի ազգերի մշակութային, ազգային, աշխարհընկալման տարբերությունները, ընդգծել այն եզրագծերը, որոնք թույլ են տվել այս ազգերին ապրել կողք-կողքի:

Հեղինակը Չալունց Սևուն դարձրել է հավաքական կերպար՝ ազգային գաղափարների կրող, պայքարող, համբերատար, միաժամանակ պարզ ու շիտակ մարդ: Նա այն տեսակը չէ, ով պարծենում է իր արած-չարած գործերով, այլ ուղղակի ապրում և գործում է այնպես, ինչպես ամեն մի հայրենասեր մարդ: Նա ամեն մի անելանելի դրության մեջ ելք է գտնում՝ հօգուտ ժողովրդի և ազգային շահի: Եվ ժողովուրդն ինքն էլ գնում է նրա ետևից ներքին բնազդային մղումով:

Նա մասնակիցն էր Անդրանիկի կռվի, բայց պարտվածի բարոյալքումը չգետնեց նրան: Որպես դյուցազն՝ ապրեց ամենադժնդակ ժամանակների Միջնաշենում, պաշտպանեց ու շահեց գյուղի բոլոր դատերը՝ բացի իր անձնական դատից:

Սևու մոտեցումները նոր գաղափարների և առհասարակ կյանքի հանդեպ իրատեսական են, հավասարակշռված, բնական: Կերպարի նախասիրությունները (որսորդություն) չէին կարող չանդրադառնալ նրա բնավորության վրա: Ծով համբերությունը նա ձեռք էր բերել եղնիկի վարգին հետևելիս, թփուտների ետև թաքնված, սրտատրոփ որսին սպասելիս:

Նա իդեալական էր նաև իբրև հայր: Նրա հայրական կերպարի հիմքում ասպետականությունն է՝ իր անձը ետին, հաճախ վերջին պլան մղելու պատրաստակամությունը, որի մեջ եղած անձնազոհությունը, նվիրումը ապրում են որպես բնական մի բան:

Չալունց Սևին առանձնանում էր իր վեհությամբ ու ողբերգականությամբ: Նա աստվածաշնչյան մոլորյալ զավակի հոր նման իր որդիների միջև խտրություն չէր դնում:[6] Նրա երազանքն էր, թե ե՞րբ պիտի երեք տղաների հետ գնա որսի, թե ե՞րբ պիտի Յապոնը վազի Բաբուռ շան հաչոցի հետևից: Սակայն այդ երազանքը այդպես էլ անկատար մնաց: Անկատար մնաց նաև

[6] Ալիս Հովհաննիսյան, Զորայր Խալափյան, «Հայրապատում», Գրական թերթ, 26.06.2019, (Էլ.ռեսուրս):

հայրենի գյուղում վերջին հանգրվանը գտնելու ցանկությունը: Սևու ճակատագիրը աքսորն էր անվերադարձ: Նույնիսկ աքսորի պարագայում նա չկորցրեց իր բնավորությանը բնորոշ կայունությունը:

Խալափյանը իր վեպում կնոջը դիտարկում է բոլորովին այլ տեսանկյունից՝ ընդգծելով բնածին բնազդային ուժեղ կողմերը, որը տարբեր մարդկանց մոտ տարբեր կերպ է զարգանում: Արևհատը ասածիս առհավատչյան է: Հեղինակը նրա միջոցով բացահայտում է արցախցի կնոջ հոգու կորովը, առաքինության բնորոշումը, առաքելության կատարումը, անսահման նվիրումն ու սերը ընտանիքի և հայրենիքի հանդեպ: Արևհատը ուժեղ էր և նույնիսկ ավելի: Նա իր հոր գործի՝ դարբնության շարունակողն էր, քրոջ՝ Ասպրամի հենարանը: Նրա նուրբ ու քնքուշ մատների տակով շատ կոշտ ու կոպիտ երկաթներ էին կռվում ու դառնում աշխատանքային գործիքներ: Նրա կերպարը կամքի, վսեմության, անձնազոհ նվիրումի, հավատարմության խորհրդանիշն է: Թվում էր, թե երեխայի և ամուսնու մահը կկործանեն նրան, կհասցնեն խելագարության, բայց՝ ո՛չ, նա ուժ գտավ իր մեջ հառնելու, սեփական կյանքը վերահմաստավորելու, պատերազմի տարիներին գյուղի երեխաների համար հաց թխելու մեջ: Եվ քանի որ հացը քիչ էր, նա պատառները կտրում էր քանոնի ճշգրտությամբ, և մանուկները նրան անվանում էին՝ Հաց մամա: Ամուսնու՝ Հովսեփի մահից հետո էլ անգամ շատ սրտեր կային, որ գերվել էին նրա գեղեցկությամբ, սակայն նա հավատարիմ էր ամուսնուն և ամուսնու ընտանիքին նույնիսկ այն աստիճան,որ սկեսրայրի՝ կյանքը նորից դասավորելու հորդորին էլ ականջալուր չեղավ: Պատերազմի տարիներին խախտվել էր կանանց հոգեկանը. «Խեղճ կնանիք: Ամեն մեկի տանը չորս, հինգ կտուց երեխա: Կատակախառը, երկիմաստ խոսքեր են ուղղում Թևանին, ծիծաղում, իրար աչքով անում, ցնդել են այս անմեղ կանայք, լրբեր են դարձել»[7]:

Թևանը պատերազմի ժամանակ գյուղում մնացած միակ տղամարդն էր: Հեղինակը նրա մեջ մարմնավորել է մի մարդու, որը պատերազմի օրերին թե՛ շարքային էր, թե՛ բրիգադավար, մի տեղ գործ անող, մի տեղ գործի դնող:

Արցախյան հարցը եղել և մնում է դեռևս իբրև կռվախնճոր, անլուծելի մի խնդիր երկու պետությունների համար, շահերի բախման կիզակետ, որից

[7] Զորայր Խալափյան, Միջնաշեն, Երևան, «Նաիրի», 1991թ., էջ 38:

ամենաշատը տուժում է ժողովուրդը: Պատմական տարբեր ժամանակներում արտաքին և ներքին ազդակների ազդեցության ներքո այդ կծիկը ավելի է խճճվում: Շատ հեղինակներ են անդրադարձել այս թեմային, սակայն Խալափյանը հարցերին անդրադարձել է բոլորովին այլ ձևաչափով:

Նա ընդգծել է հայի պայքարող տեսակը, գոյի և ինքնության պահպանման անվերջ մաքառման ձգտումը: Նաև մատնանշել է այն բոլոր թերություններն ու առավելությունները, որոնք նպաստեցին արցախյան հարցի նման լուծմանը նախորդ դարում: Նա լուծումը ցույց է տալիս՝ գոմշակովի պատմությունը ներկայացնելով: Եվ, փաստորեն, դատարանի որոշմամբ գոմշակովը վերադարձվում է հայ կնոջը: Այսինքն՝ արտաքին ուժերի ազդեցությամբ, Արցախը վերադարձվում է Հայաստանին: Ահա այսպիսին է Խալափյանի առաջարկած լուծումը:

Գրողը, ավաղ, չէր կարող պատկերացնել, որ արյան գնով պահված Միջնաշենը (ներկայիս Թալիշը) և ոչ միայն, կարող էր տրվել մեր ոխերիմ թշնամուն: Եվ ցավն էլ հենց այստեղ է, որ հանգիստ չի տալիս տառապանքից մաշված, արտասուքից խաշված հայ ժողովրդին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Զորայր Խալափյան, Միջնաշեն, Երևան, «Նաիրի», 1991թ.:
2. Վաչագան Գրիգորյան, Միջնաշեն, «Նորք» ամսագիր, թ. 10-12, 1991թ.:
3. Ալիս Հովհաննիսյան, Զորայր Խալափյան, «Հայրապատում», Գրական թերթ, 26.06.2019թ.:
4. Ղազարյան Լիլիթ, Նորագույն շրջանի հայ գրականություն, բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2019թ.:
5. Սարինյան Ս., Արցախը ժամանակի մղձավանջում, «Գրական թերթ», սեպտեմբերի 20, 1991թ.:

CRITICISM OF COMMUNISM IN ZORAYR KHALAPYAN'S "MIJNASHEN" NOVELS

HOVHANNISYAN SVETLANA
1st-year MA student of the Department of
"Armenian Language and Literature"
Faculty of Philology, Gavar State University
e-mail: svetlana-hovhannisyan-90@mail.ru
Academic Supervisor: Grigoryan Vachagan
Doctor of Philology, Professor

The article refers to the events taking place in the Mijnashen village of Artsakh Land presented in Zorayr Khalapyan's "Mijnashen" in 1918-1920. The philosophical approaches, ideological reflections and ethnic conflicts are covered in the novel. The writer presents the Artsakh issue in a new way and the conflicts of interests of the great powers.

The article examines the process of affirmation of Marxist ideas with negative consequences. Through the main characters, the author portrays people who are distracted by vain thoughts and distort a whole society by putting their own self above everything.

Key words: *Khalapyan, Mijnashen, Marxist ideology, society, ethnic clashes, Artsakh conflict, hidden trends.*

ОСУЖДЕНИЕ КОММУНИЗМА В РОМАНЕ ЗОРАЙРА ХАЛАПЯНА "МИДЖНАШЕН"

ОГАНЕСЯН СВЕТЛАНА
Студентка 1-ого курса магистратуры
отделения амяннского языка и литературы
филологического факультета ГГУ,
электронная почта: svetlana-hovhannisyan-90@mail.ru
Научный руководитель: Григорян Вачаган
Доктор филологических наук, профессор

В статье представлены события, происшедшие в 1918-1920 годах в селе Миджнашен в Арцахе, отражённые в романе Зорайра Халапяна «Миджнашен». Философские подходы, идеологические размышления, этнические конфликты

отразились в этом романе. Писатель по-новому представляет вопрос Арцаха, столкновение интересов великих держав. В статье рассматривается процесс установления марксистских идей, со своими отрицательными последствиями.

Посредством главных героев автор показывает людей, которые, одержимые суетными мыслями, искажают целое общество, ставя себя превыше всего.

В статье рассматривается процесс утверждения марксистских идей с негативными последствиями.

Ключевые слова: *Халапян, Миджаншен, марксисткая идеология, общество, межнациональные столкновения, арцахский конфликт, скрытые тенденции*.

«ՈՒՐԻՇԻ ՀՄԱՐ ՖՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿԸՆԿՆԻ ՄԵՋԸ» ՀԵՔԻԱԹԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒՄՆԵՐԸ

ՀԱԼԱՋՅԱՆ ԷԴԻՏԱ
Վանաձորի պետական համալսարանի
հասարակական գիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ edita.halajyan@bk.ru
Գիտական ղեկավար՝ Պետրոսյան Լիլիթ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Աշխատանքի նպատակն է դարձվածքների իմաստային կողմի բացահայտման ճանապարհով ցույց տալ ժողովրդական խոսքի իմաստնությունը: Հեքիաթներում դարձվածքները հաճախադեպ կիրառվող լեզվական միավորներ են, որոնց ուսումնասիրությունից հետո արվել են հետևյալ եզրակացությունները.

1. «Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» ժողովրդական հեքիաթը հարուստ է դարձվածքներով, որոնց միջոցով արտահայտվել են պատճառի և հետևանքի, պայմանի և հետևանքի, զուգադրական և հակադրական, պայմանական և հակադրական ու այլ կապերով կառույցներ:

2. Հեքիաթին բնորոշ է դարձվածքներով հարուստ հեղինակային և կերպարային խոսքը:

3. Դարձվածքները հիմնականում կիրառվել են երկխոսություններում և մենախոսություններում:

4. Հատկապես գերակշռում են բայական և վերաբերական դարձվածքները, որոնք հանդես են եկել դարձվածքներով ձևավորված բազմաբարդ կառույցներում:

Բանալի բառեր՝ *ժողովրդական իմաստնություն, հեղինակային և կերպարային խոսք, փոխաբերություն, բայ, վերաբերական, հնչերանգ, ներշարահյուսական հարաբերություններ:*

«Աստուածաշունչ» մատյանում դարձվածք արտահայտությունը առաջին անգամ կիրառվում է «Առակք Սողոմոնի» գրքում՝ «Ճանաչե՛լ զիմաստութիւն և զխրատ իմանա՛լ զբանս հանճարոյ. ընդունել զդարձուածս բանից: ’Ի մի՛տ

առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել զիրաւունս» [Առակ.Ա.3] հատվածում:

Դարձվածք լեզվաբանական հասկացության ժամանակակից «Բառերի կայուն կապակցություն, մեկ ամբողջություն կազմող բառակապակցություն»[1] նշանակությունը ծագում է գրաբարյան «Մանուած բանի, խրթնութիւն, խելամտութիւն»[2] իմաստից:

Դարձվածքներն ուսումնասիրվել են տարբեր տեսանկյուններից[3], որոնց ընդհանրական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք «փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող» կայուն բառակապակցություններ են[4], որ հատկապես հատուկ են ժողովրդական խոսքին:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» ժողովրդական հեքիաթը գրառված է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական հրատարակության երկրորդ հատորում, որտեղ ներկայացված են Այրարատ նահանգի հեքիաթները՝ Հովսեփ Օրբելու խմբագրությամբ[5]: Այստեղ ներկայացված հեքիաթներից մի քանիսը վերնագրված են ժողովրդական թևավոր խոսքերով՝ «Ասսու պահած գառը գել չի ուտի» [295], «Մարդիս ճակատի գրածը չի ջնջվի» [310], «Մարդ իրա յորղաննու գյորա պտի ոտը մեկնի» [413], «Չուտողի մալը ուտողին հալալ ա» [447], «Ինչ որ ցանես, ըն էլ կհնձես» [487], «Աստոծ որ ուզենա հարստություն տա՝ կբերի հերդկով էլ վե կածի» [505]: Սրանցից «Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթը [425] աչքի է ընկնում դարձվածքների բազմաթիվ առանձնահատուկ կիրառություններով:

Հայտնի ճշմարտություն է, որ դարձվածքները կազմավորվում են ժողովրդախոսակցական լեզվում և ապա գրականության միջոցով թափանցում գրական լեզու: «Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիա-

---

[1] Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976թ., էջ 283:

[2] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979թ., էջ 605:

[3] Балли Ш., Французская стилистика, М., 1961թ.. Шанский Н. Фразеология русского языка, М., 1963թ. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837: Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959թ., Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973թ., Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975թ. և այլք:

[4] Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, 1959թ., էջ 18:

[5] Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1959թ.: Գրքից կատարված մեջբերումների էջադրումները կներկայացնենք կից փակագծերում:

թում գործածված դարձվածքներից շատերն այսօր էլ գործածական են գրական հայերենում՝ հարացուցային տարբերակներով, ինչպես՝ գլուխ պահել, տունը քանդվել, աշխարհով մեկ լինել, ականջ դնել, մատով ցույց տալ և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի դարձվածակազմական բայական բաղադրիչի մասին տեսական ուսումնասիրություն է կատարել Ա. Պողոսյանը[6], ում աշխատանքներում քննվում են տալ, անել, դնել, առնել, գալ, ընկնել և գցել բայերին լրացնող միավորները՝ ըստ ձևաբանական արտահայտությունների:

Դարձվածքներ կազմվում են ինչպես չեզոք, այնպես էլ ներգործական սեռի բայերով, ինչպես՝ աշխատանքի տուտ բռնել - աշխատանք «սկսել» [ԴԲ[7] 565], տղեքանց չարը տանել - «մեկին հասանելիք չարիքները իր վրա ընդունել» [ԴԲ 488], սիրտը վեր ունել [ԴԲ 532] - «ախորժել, կամենալ», փորձանքի մեջ քցել - «դժբախտության, չարիքի, աղետի հանդիպել» [ԴԲ 583] և այլն:

Ինչպես առօրյա-խոսակցական ոճին, այնպես էլ հեքիաթներին բնորոշ են եղանակավորող բառ-դարձվածքները, ինչպես՝ ես ինչ գիտամ դարձվածքը կիրառվել է թվարկման հնչերանգով ներկայացված անվանական միա-

[6] Պողոսյան Ա., Տալ բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձոր, 2006թ.: Պողոսյան Ա., Անել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձոր, 2007թ.: Պողոսյան Ա., Դնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական հոդվածներ, Բանասիրություն, Վանաձոր, 2011թ.: Պողոսյան Ա., Առնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական հոդվածներ, Բանասիրություն, Բ պրակ, Վանաձոր, 2011թ.: Պողոսյան Ա., Գալ բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական նյութերի ժողովածու (Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին), Վանաձոր, 2013թ.: Պողոսյան Ա., Ընկնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա (հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկա), Երևան, 2016թ.: Պողոսյան Ա., Գցել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին, Երևան, 2019թ.:

[7] Սուքիասյան Ա., Գալստյան, Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975թ.: Գրքից կատարված մեջբերումները ներկայացվում են կից փակագծերում՝ ԴԲ համառոտագրությամբ:

կազմ նախադասություններում՝ նշանակելով «ով գիտե, ոչ ոք չգիտե, հայտնի չէ», օրինակ՝

....էլ մա՛լ, էլ դո՛լվաթ, էլ տա՛վար, էլ ոչխարի սո՛ւրու, էլ ձիու ի՛լխիք, ես ինչ գիտամ մեղրի փեթակնե՛ր, ջաղացնե՛ր [203]: Համա ո՛ւմ ես ասում «ձայն բարբառո հանապատի» [ԴԲ 571] նշանակությամբ դարձվածքին հաջորդում են դարձվածք-բաղադրիչ նախադասություններ՝ համադասական հարաբերությամբ՝ Համա ո՛ւմ ես ասում, մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաջ դնի, աղպոր կուռը բռնեց, դափ- ղարդակ տանիցը դուս արեց:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթում գործածված դարձվածքներից հատկապես հետաքրքիր են հարադրություններով կազմված դարձվածքները, որոնցում կատարվում է կրկնակի վերաիմաստավորում, ինչպես՝ ըսենց կուչ ու ձիգ անելով յոլա էր էթում, համա մենծ աղպոր էրեսը չէր էթում [449] նախադասության մեջ «տանջվել, չարչարվել» [ԴԲ 208] իմաստով կիրառված հարադրությամբ արտահայտված գործողությունները դարձվածային նշանակությամբ վերագրվում է փոքր եղբորը, որին հակադրական իմաստով համադասական շաղկապով կապակցված է «ցանկանալ, սիրտը ախորժել» [ԴԲ 354] իմաստով բայական դարձվածքը:

Բայ դարձվածքները խոսքում կիրառվում են համադասական, ստորադասական կամ բազմաբարդ կառույցներում:

Բայ-դարձվածքներով ձևավորված բարդ համադասական նախադասություններ, որոնք պատճառահետևանքային հարաբերությամբ հաջորդում են միմյանց, օրինակ՝ էրկու տղա ա ունենում, էրկուսն էլ բեդոլվաթ, ասսու էրեսիցը թափած. սաղ օրը պարապ-սարապ ման ին գալի, ըսկի միտք չին անում մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն: Սրանց հերն էլ ծերացե, հա յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե[488]: Այս նախադասության մեջ իրար հաջորդող դարձվածքները մեկնաբանում են բեդոլվաթ օտարաբանության նշանակությունը: Այսպես, բեդովլաթ մարդը բնութագրվում է աստծու երեսից թափած դերբայ-դարձվածով, որ նշանակում է «Չար, անպետք մարդ, որից աստված երես է դարձրել» [ԴԲ 67]: Օտարաբանության դարձվածային բացատրության օրինակ է նաև ընչանք ե՞ք դու պտի ըտենց քյասիբ, օրեն հացի մուրացկան մնաս [613] արտահայտությունը, որտեղ բացահայտվում է քյասիբ բառի իմաստը: «Քյասիբ» և «բեդովլաթ» մարդիկ սաղ օրը պարապ-սարապ ման ին գալի, ըսկի միտք չին անում մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն, որ նշանակում է «չեն մտածում» [ԴԲ 436] «եռանդուն սկսել աշխատել, գործ անել»

[ԴԲ 175] աշխատանք «սկսել» [ԴԲ 565]: Հեքիաթներին բնորոշ լավատեսությամբ այստեղ նույնպես կատարվում է բարին, ու դժբախտությանը հաջորդում է հաջողությունը: Հայրը տեղով-բարձով թեք է ընկնում՝ «շատ ծանր անկողնային հիվանդանալ» [ԴԲ 561], ու տղեքանց չարը տանում ա՝ «մեկին հասանելիք չարիքները իր վրա ընդունել» [ԴԲ 488]: Այսպես նաև ….մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաջ դնի, աղպոր կուռը բռնեց, դափ-ղարդակ տանիցը դուս արեց արտահայտության դարձվածքները:

Ականջ դնել «ուշադրություն դարձնել» [ԴԲ 5] իմաստով գործողության ժխտական խոնարհմամբ կիրառված դարձվածքին հաջորդում է դափ-դատարկ տնից դուրս անել դարձվածային կապակցություն-գործողությունը:

Դարձվածքներով ձևավորված բարդ համադասական կառույցները խոսքում աչքի են ընկնում իրենց հաճախականությամբ և կիրառվում են ինչպես հեղինակային խոսքում, այնպես էլ երկխոսություններում՝ արտահայտվելով երկրորդ դեմքով, օրինակ՝ վե կաց գնա քու բանին, սրանից դենը ո՛նց ուզում ես գլուխ պահա [170]: Դարձվածքներով ձևավորված բարդ կառույցների իմաստային վերլուծությունից պարզ է դառնում, որ դարձվածքները հաճախ են գործածվում զուգահեռ կառույցներում: Գնա՛ բանիդ «նախատական արտահայտության՝ իմ գործերի մեջ մի՛ խառնվիր» [ԴԲ 172] դարձվածքի տրամաբանական շարունակությունը լինում է դարձվածք՝ գլուխ պահել «ֆիզիկական գոյությունը պահպանել, ապրել» [ԴԲ 170]:

Դարձվածքներով ձևավորված բարդ համադասական կառույցները գործածական են նաև մենախոսություններում, ինչպես՝ Ասսու ողորմությունը շատ ա, — ասում էր, — ամեն մարդի իրա սրտովը կտա [540] արտահայտությունը, որի երկու մասերն էլ ժողովրդական կայուն, վերաիմաստավորված արտահայտություններ են:

Բայ-դարձվածքներով ձևավորված ստորադասական նախադասություններ, որոնցում գլխավոր նախադասությանը հաջորդում են քերականական տարբեր նշանակություններով լրացումներ: Էնքամ հարուստ ա ըլնում, որ իրանց երկրումը սրան մատով ին շանց տալի արտահայտության մեջ դարձվածքով ձևավորված երկրորդական նախադասությունը կատարում է չափի պարագայի գործառույթ:

Բայ-դարձվածքներով ձևավորված բազմաբարդ նախադասություններ, որոնցում համադասությունն ու ստորադասությունը զուգահեռվում են միմյանց, ինչպես՝ Համա մենծ աղպոր սիրտը ըտ էլ չէր վեր ունում, որ իրա աղպերը շատ թե քիչ ապրուստ ունի, մի կտոր հացի տեր ա, օր աշխատում ա,

օր ուտում. հերսիցը սիրտը տրաքում էր, չէր իմանում ի՛նչ անի, ո՛նց անի, որ աղպոր գլուխը մի օղիա գա, մի փորձանքի մեջ քցի, որ սիրտը հովանա [577] նախադասության մեջ դիմավոր բայերով ձևավորվել են դարձվածքներ: Սիրտը վերցնել «ախորժել, կամենալ» իմաստով [ԴԲ 532] արտահայտությանը հաջորդում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը՝ ապրուստ ունի, հացի տեր ա, օր աշխատում ա, օր ուտում՝ «Ապրուստի միջոցներով ապահովված» [ԴԲ 353]: Այնուհետև շարունակվում են համադասական հարաբերությամբ գործողությունները՝ սիրտը տրաքել՝ համբերությունից դուրս գալ՝ «դժբախտության, չարիքի, աղետի հանդիպել» [ԴԲ 583] սիրտը հանգստանալ՝ «Որևէ բանի ծարավը հագենալ, սիրտը հովանալ, դուրանալ» [ԴԲ 528]:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթի դարձվածային բառապաշարի քննությունից պարզ է դառնում.

ա) Ժողովրդական հեքիաթները պատմվում են ժողովրդական դարձվածքներով:

բ) Դարձվածքները գործածվում են ինչպես հերոսների, այնպես էլ հեղինակի խոսքում:

գ) Գերակշռում են բայական և վերաբերական դարձվածքները:

դ) Հաճախադեպ են դարձվածքներով ձևավորված բազմաբարդ կառույցները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976թ., էջ 283:
2. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837թթ.:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973թ.:
4. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, 1959թ., էջ 18
5. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959թ.:
6. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979թ., էջ 605:

7. Պողոսյան Ա., Տալ բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձոր, 2006թ.:
8. Պողոսյան Ա., Անել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձոր, 2007թ.:
9. Պողոսյան Ա., Դնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական հոդվածներ, Բանասիրություն, Վանաձոր, 2011թ.:
10. Պողոսյան Ա., Առնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական հոդվածներ, Բանասիրություն, Բ պրակ, Վանաձոր, 2011թ.:
11. Պողոսյան Ա., Գալ բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Գիտական նյութերի ժողովածու (Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին), Վանաձոր, 2013թ.:
12. Պողոսյան Ա., Ընկնել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ Ա (հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկա), Երևան, 2016թ.:
13. Պողոսյան Ա., Գցել բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին, Երևան, 2019թ.:
14. Սուքիասյան Ա., Գալստյան, Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975թ.: Գրքից կատարված մեջբերումները ներկայացվում են կից փակագծերում՝ ԴԲ համառոտագրությամբ
15. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975թ.:
16. Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1959թ.:
17. Балли Ш., Французская стилистика, М., 1961. Шанский Н. Фразеология русского языка, М., 1963թ..

THE SEMANTIC SEQUENCES OF THE PHRASES IN THE FAIRY TALE "WHOEVER DIGS A PIT FOR ANOTHER MAN'S FEET, SHALL FALL INTO IT HIMSELF"

HALAJYAN EDITA
2nd-year student of Faculty of Social Sciences,
Pedagogy and Methodology, VSU
e-mail: edita.halajyan@bk.ru
Academic Supervisor: Petrosyan Lilit
Ph.D. in Philology, Associate Professor

The term idiom as a linguistic unit of folk wisdom is usable in the Bible. It is presented by linguists as stable phrases with "figurative-allegorical meaning".

The folk tale "Whoever digs a pit for another man's feet, shall fall into it himself" is rich in idioms, through which sentences are expressed with cause and effect, condition and effect, comparative and contrasting, condition and contrasting and other relationships.

The fairytale is characterized by authorial-figurative words rich in idioms, which are expressed in sentences with narrative, interrogative, exclamatory and imperative tones.

The idioms used in the heroes' speech appear in dialogues and monologues.

Especially prevailing are verbal and relative idioms, which appear in compound, complex and polysyllabic constructions formed by idioms.

Key words: *folk wisdom, authorial-figurative words, metaphor, verb, relative, tone, intra-syntactic relations.*

СЕМАНТИЧЕСКАЯ АЛЬТЕРНАЦИЯ ФРАЗЕОЛОГИЗМОВ В СКАЗКЕ « КТО ДРУГОМУ ЯМУ РОЕТ, САМ В НЕЕ ПОПАДЕТ»

АЛАДЖЯН ЭДИТА
Студентка 2-ого курса отделения
начальной педагогики и методики
факультета общественных наук ВГУ,
электронная почта: edita.halajyan@bk.ru
Научный руководитель: Петросян Лилит
Кандидат филологических наук, доцент

Понятие идиома, как языковая единица, несущая народную мудрость, употребляется в Библии. Идиома представлена лингвистами как устойчивое словосочетание с «образно-аллегорическим значением».

Народная сказка «Кто другому яму роет, сам в нее попадёт» богата идиомами, посредством которых предложения выражены с причинно-следственным, условно-следственным, сравнительно-противопоставленным, условно-противопоставленным связями.

Для сказки характерна авторско-образная речь, богатая идиомами, посредством которых выражались структуры с причинно-следственными, условно-следственными, сравнительно-противоположными, условно-противоположными и другими связями.

Идиомы, используемые в речи героев, появляются в диалогах и монологах.

Особенно распространены глагольно-относительные идиомы, представленные в сложносочинённых, сложноподчиненных и многосложных конструкциях, образованных идиомами.

Ключевые слова: *народная мудрость, авторские образные слова, метафора, глагол, относительный, тон, межсинтаксические отношения.*

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀԱՐՄԱՐՈՒՄԸ՝ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ, ԵՎ ԴԵԶԱԴԱՊՏԱՑԻԱՆ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ (4–5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԻ
Գավառի պետական համալսարանի շրջանավարտ
էլփոստ՝ ani.margaryan94@mail.ru
Գիտական ղեկավար՝ Քուրքչյան Լուսիկ
մանկավարժական գիտությունների թեկնածու,
հոգեբանության դոցենտ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել 4-5-րդ դասարանների աշակերտների ադապտացիայի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները:

Հոդվածում առանձնացվել է դպրոցական ադապտացիայի 3 փուլ՝ դպրոցին, կրտսեր դպրոցից միջին դպրոցին և միջին դպրոցից ավագ դպրոցին ադապտացվելու փուլեր: Ընդ որում շեշտը դրվել է աշակերտի ադապտացիայի խանգարումների հարցի վրա, այսինքն՝ դեզադապտացիայի և նրա սոցիալ-հոգեբանական ուսումնասիրման ուղղվածության, որի պատճառները կապվում են ուսումնական գործընթացի առանձնահատկությունների՝ ցածր առաջադիմությամբ պայմանավորված չձևավորված ուսուցման շարժառիթների, ուսումնական գործունեության հմտությունների, ցածր աշխատունակության, ուսուցիչների և հասակակիցների շփման մեջ առաջացած դժվարությունների հետ: Նշվում են նաև երեխաների հարմարվողականության վրա ներազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

Հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ հինգերորդ դասարանցիների դեզադապտացիան կանխարգելելու համար անհրաժեշտ է ժամանակին արձագանքել երեխայի ուսման և անձնային դժվարություններին, մշակել վերջիններիս բացահայտման, կանխարգելման և շտկման ուղիներ:

Բանալի բառեր՝ *հարմարվողականություն, ադապտացիա, դեզադապտացիա, ուսումնական մոտիվացիա, անցումային շրջան, առաջատար գործունեություն, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ:*

Ուսումնական իրավիճակը, որը ծագել է դպրոցական կրթական համակարգում, բնորոշվում է մի շարք դրական կողմերով, որը առաջին հերթին կապված է երեխաների կրթության և ուսումնական գործընթացի բարեփոխումների հետ: Եվ, իհարկե, յուրաքանչյուր նոր իրավիճակ առաջ է բերում խնդիրներ, ինչպիսիք են երեխաների՝ դպրոցին ադապտացվելու հարցերը: Ադապտացիայի հիմնախնդիրը բարդ և բազմաբովանդակ բնույթ ունի: Նախքան հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ պարզաբանենք, թե ի՞նչ ծագում և ի՞նչ բացատրություն ունի «հարմարվողականություն» եզրույթը:

Հարմարվողականություն կամ ադապտացիա եզրույթը առաջացել է լատիներենի "adaptatio"՝ բառից, որը նշանակում է «հարմարվել, հարմարեցնել, ընտելացնել», այսինքն՝ այն միջավայրի պայմաններին օրգանիզմների (անհատների, պոպուլյացիաների ու տեսակների) և նրանց օրգանների կառուցվածքի ու գործունեության հարմարվելու գործընթաց է:

Մարդու ադապտացիայի խնդիրը ուսումնասիրվում է բազմաթիվ բնական և հասարակական գիտությունների կողմից մարդկային գործունեության բոլոր ձևերի դրսևորումներով:

Մարդը զարգացման ողջ ընթացքում հարմարվում է իր ներքին և արտաքին միջավայրերին, որոշ չափով փոփոխում դրանք՝ հարմարեցնելով իր պահանջմունքներին:

Լ. Բուևայի կարծիքով՝ անձի ձևավորման ընդհանուր գործընթացում կոնկրետ սոցիալական միջավայր մտնելու ժամանակ գործում է երկու միտում՝ յուրացում և անձի որոշակի հարմարում հասարակական պայմաններին ու նորմերին, որը երբեմն սոցիոլոգիական տեսության մեջ անվանում են «անձի ադապտացիա»՝ կապելով սոցիալականացում հասկացության հետ[1]:

Մանկավարժներն ու հոգեբանները / Ա. Ս Մակարենկո, Ս. Տ. Շացկի, Վ. Ա. Սուխոմլինսկի, Լ. Ֆիլիպս, Ֆ. Բերյոզին, Գ. Սեյլեր, Դ. Բ. Էլկոնին, Վ. Վ. Դավիդով, Ա. Վ. Պետրովսկի / երեխայի սոցիալականացման գործընթացում առանձնացնում են դպրոցական ուսուցման ադապտացիան: Երեխան դպրոցում անցնում է ադապտացման հիմնական երեք կարևոր փուլ՝ դպրոցին, կրտսեր դպրոցից միջին դպրոցին և միջին դպրոցից ավագ դպրոցին ադապտացվելու փուլեր:

[1] Буева Л.П., Алексеева В.Г. Общение как фактор развития личности // Социологические исследования. М.: 1982

Հոգեբանական մակարդակում ադապտացիայի գործընթացն առավել լիարժեք վերլուծվել է ռուս անվանի հոգեբան Ա. Վ. Պետրովսկու կողմից: Ըստ նրա՝ նոր սոցիալական միջավայրում երեխան հայտնվում է խմբում ներառվելու /ինտեգրվելու/ խնդրի առջև, նա պետք է ընդունի այդ խմբում ընդունված վարքի նորմերը, պահանջները[2]:

Երեխայի մուտքը դեպի դպրոց արմատապես փոխում է նրա կյանքը, ձեռք է բերում նոր կարգավիճակ, առաջնային դառնում է ուսումնական գործունեությունը: Իր քայլերը շրջապատի հետ իրականացվում է նոր պարտականությունների հիման վրա[3]:

Եթե երեխան պատրաստ չէ նոր կարգավիճակին, այսինքն՝ դպրոցականի դերին, այդ դեպքում նրան դժվար կլինի դպրոցում, նույնիսկ եթե ունի բավարար գիտելիքներ և բավական զարգացած ինտելեկտ, այդ ամենը հաճախ համընկնում է դպրոցին երեխայի անձնային պատրաստվածության հետ[4]:

Մանկավարժական փորձը վկայում է, որ ուսուցման առաջին 4 շաբաթները բոլոր երեխաների համար հանդիսանում են որպես լարված փուլ՝ «սուր» ադապտացիայի շրջան, իսկ շրջանը, որն ընդգրկում է ուսումնական առաջին կիսամյակը, հոգեբաններն անվանում են «առաջնային հոգեբանական ադապտացիա»: Հենց այս փուլում է իրականացվում ծնողների, ուսուցիչների ու հոգեբանների հիմնական աշխատանքը՝ երեխաների՝ դպրոցին ադապտացվելու գործընթացը՝ որպես իր հետագա զարգացման և կենսագործունեության միջավայր:

Եթե երեխան չի կարողանում հաղթահարել դժվարությունները, ապա առաջ է գալիս դպրոցական դեզադապտացիայի երևույթը: Դպրոցական դեզադապտացիան[5] դպրոցական ուսուցման անհնարինությունն է և երեխաների ադեկվատ փոխհարաբերությունները շրջակա միջավայրի հետ, որում ինքն է: Հաճախ դպրոցներում դեզադապտացիան արտահայտվում է նրանով, որ երեխան դպրոցական ծրագիրը դժվարանում է յուրացնել, և առաջ

---

[2] Պետրվսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Լույս»,1977:

[3] Балашова Е.Ю., Успешность обучения школьников в современных условиях // Педагогика и психология., 2008., П. №10.

[4] Битянова М.Г., Адаптация ребенка в школе, П М., 1998г.

[5] Каган В.Е., Психогенные формы школьной дезадаптации // Вопросы психологии., 1984, П., №4.

են գալիս վարքային խնդիրներ: Կրտսեր դպրոցականների հարմարումը տևում է 1-2 ամիս, սակայն լինում են դեպքեր, որ այն երկարում է: Դժվար հարմարվող երեխաները գտնվում են ռիսկի գոտում, այսինքն՝ կարող են հայտնվել ուսման մեջ հետ մնացող, ոչ ադապտիվ վարքային դրսևորումներով խմբի մեջ, որը հաղթահարելու համար հարկավոր է ախտորոշել և շտկողական–զարգացնող աշխատանք կատարել: Բնականաբար կարևորվում է նաև մանկավարժի մոտեցումը:

Կրտսեր դպրոցից միջին դպրոցի անցման ժամանակ աշակերտը ևս առնչվում է դժվարությունների՝ կապված ուսումնական գործունեության և տարիքային ճգնաժամի հետ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում սովորողի ադապտացման գործընթացի վրա:

Միջին դպրոցական տարիքը՝ 10-11-ից մինչև 14-15 տարեկան, համարվում է անցումային տարիք, քանի որ երեխան մանկությունից անցնում է հասունության: Այն սեռական բուռն հասունացման և խորը հոգեբանական փոփոխությունների բավականին բարդ ժամանակաշրջան է, և պատահական չէ, որ ողջ դեռահասության տարիքը շատ հաճախ քննարկվում է որպես ճգնաժամային:

Տարիքային այս փուլում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, ձևափոխումներ ինչպես ֆիզիկական, ֆիզիոլոգիական, այնպես էլ հոգեկան, սոցիալական, հուզական և ինտելեկտուալ ոլորտներում: Այդ իսկ պատճառով էլ դեռահասությունը հանդես է գալիս որպես ներքին և արտաքին հակասությունների ժամանակաշրջան, որոնք էլ որոշակի դժվարություններ են առաջ բերում երեխաների ադապտացման հարցում:

Միջին դպրոցում փոխվում է երեխայի սովորական միջավայրը. աշակերտները մեկ հիմնական ուսուցչից անցնում են առարկայական ուսուցիչների ճանաչմանը և հարմարմանը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր պահանջներն ու մոտեցումները:

Երեխան, որը մինչ այդ սովորել էր սիրով, միջին դպրոցում սկսում է չսիրել որոշակի առարկաներ, հիմնականում այն առարկաները, որոնք որոշակի դժվարություն են ներկայացնում:

Եթե տարրական դասարաններում քիչ թվով առարկաներ էին անցնում, ապա միջին դպրոցում ավելանում է ուսումնասիրվող առարկաների քանակը, որոնք բովանդակային առումով արդեն բարդ են: Այս ամենը նպաստում է երեխայի ադապտացման խնդրի և ուսումնական գործընթացում դժվարությունների առաջացմանը, և ինչքան հեշտ և արագ են հաղթահարում այդ

դժվարությունները, այնքան ավելի քիչ է տուժում ուսումնադաստիարակչական գործընթացը, և գրեթե չեն նկատվում վարքի շեղումներ, որոնք հետագայում հաղթահարելը էլ ավելի դժվար է դառնում:

Այս անցումային փուլում երեխաների ադապտացիայի հոգեբանական խնդիրներն առաջանում են օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ներգործությամբ:

Աղյուսակ 1. Երեխաների ադապտացիայի հոգեբանական խնդիրներն ձևավորող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ:

ՕԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆ	ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆ
1.Տարբեր պահանջներ տարբեր առարկաներից ու ուսուցիչներից: 2. Ինֆորմացիայի մեծ ծավալ: 3. Անհասկանալի բառեր ու մասնագիտական տերմիններ: 4. Աշխատանքի տեմպի մեծացում: 5.Հսկողության թուլացում կամ բացակայություն:	1. Ադապտացիայի աստիճանը: 2. Ուսուցման մոտիվացիայի մակարդակը: 3. Հավակնությունների աստիճանը: 4.Ինքնագնահատականի մակարդակը: 5. Դպրոցականի տագնապայնությունը: 6.Վերաբերմունքը օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական նոր պայմաններին: 7. Դասարանում առկա միջանձնային հարաբերությունները: 8. Դասվարի հետ մտերմիկ, ջերմ հարաբերության բացակայության պատճառով հուզական վիճակի փոփոխություն (մենակության զգացում):

Միաժամանակ նոր սոցիալական, մանկավարժահոգեբանական իրադրության փոփոխությունները, առաջացնելով դժվարություններ, խոչընդոտում են ադապտացիայի գործընթացը և նպաստում են ինքնագնահատականի մակարդակի նվազեցմանը, տագնապայնության աստիճանի բարձրացմանը, աշխատունակության անկմանը, անկազմակերպվածությանը և այլն: Հարմարումը դժվարանում է նաև այն պարագայում, երբ ուսուցիչները հաշվի չեն առնում երեխաների ադապտիվության աստիճանը և ներկայացնում են երեխաներին այնպիսի պահանջներ, ինչպիսիք ընդունված են միջին դպրոցում: Երեխան սկսում է հարմարվել յուրաքանչյուր ուսուցչի անձնային առանձնահատկություններին, հաղորդակցման ու դասավանդման ոճին:

Գ. Ա. Ցուկերմանը[6] նշում է, որ անցումը ուսուցման մի աստիճանից մյուսը չպետք է կրի անհրաժեշտության կրիտիկական բնույթ, չպետք է հանդիսանա կտրուկ փոփոխություն նախորդ և հաջորդ ձևերի միջև:

Վերլուծելով տարրական դպրոցից միջին դպրոցին անցնելու ադապտացիայի դասակարգված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, ուսումնական դժվարությունները՝ մեր առջև նպատակ դրեցինք ախտորոշել 5-րդ դասարանցիների ուսուցման մոտիվացիայի աստիճանը:

Փորձարարական հետազոտությունն անցկացրել ենք Գեղարքունիքի մարզի Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի հինգերորդ դասարանում: Հետազոտությանը մասնակցել են 30 աշակերտ: Փորձարարական հետազոտության ժամանակ օգտագործվել են հետևյալ մեթոդները՝

դիտում և հոգեբանական զրույց,

Ն.Գ.Լուսկանովայի «Ուսուցման մոտիվացիայի բացահայտման» մեթոդիկան,

հարցարան ծնողների համար:

Դիտման մեթոդով արձանագրեցինք, որ ուսումնական տարվա սկզբում 5-րդ դասարանի ամենօրյա դասերի ժամանակ երեխաների մի մասը անհանգիստ վարք են ցուցաբերում, ագրեսիվ են, չեն կարողանում հանգիստ նստել, լսել ուսուցչին, որոշ երեխաների մոտ նկատվում էր մեկուսացում, տագնապայնություն և այլն, որը չի նպաստում երեխայի անձնային, ինտելեկտուալ, սոցիալական զարգացմանը:

Մեր դիտարկումները հստակեցնելու համար մշակեցինք հարցարան՝ ուղղված ծնողներին, որպեսզի դիտման արդյունքում արձանագրված տվյալները ավելի ստույգ լինեն:

Ծնողների մի մասը նշեցին, որ երեխաների մոտ նկատել են որոշակի փոփոխություններ 4-րդ դասարանի հետ համեմատած:

Այն հարցին, թե ինչպե՞ս է Ձեր երեխան հաղթահարում ուսումնական բնագավառում առաջացած դժվարությունները, ծնողների մոտավորապես 40%-ը պատասխանել էր, որ դժվարությամբ է սովորում հիմնական առարկաները, թույլ է տալիս շատ սխալներ, հանձնարարությունները կատարում է

[6] Цукерман Г. А., Переход начальной школы в среднюю как психологическая проблема, М., 2001г.

անփույթ: 35%-ը պատասխանել էր, որ հազվադեպ է սխալներ թույլ տալիս: Իսկ ծնողների 25%-ը պատասխանել էր, որ յուրացնում է բոլոր առարկաների ծրագրային նյութերը, տնային հանձնարարությունները կատարում է անսխալ:


Իսկ այն հարցին, թե ինչպիսի՞ տրամադրությամբ է Ձեր երեխան հաճախում դպրոց, ծնողների գերակշիռ մասը՝ մոտավորապես 52%-ը, պատասխանել էր, որ երեխայի մոտ երբեմն տրամադրության անկում է նկատվում: 26%-ը պատասխանել էր, որ երեխան ունի բացասական հուզական դրսևորումներ՝ տագնապայնություն, հուսախաբություն, երբեմն վախ, շփոթություն, անհանգստություն: Եվ միայն ծնողների 22%-ն էր, որ նշել էր՝ երեխան ուրախ է, բարձր տրամադրությամբ գնում է դպրոց:

Հետազոտական աշխատանքների արդյունքում ստացած տվյալները փաստեցին, որ կան աշակերտներ, ովքեր ունեն որոշակի դժվարություններ՝ ուսումնական առաջադիմության հետ կապված: Ադապտացիայի զարգացման աստիճանից է կախված աշակերտների ուսումնական առաջադիմության մակարդակը, այդ մասին են փաստում 4-րդ դասարանի ուսումնական տարվա վերջում ստացած և 5-րդ դասարանի I կիսամյակի՝ առաջադիմության ցուցանիշները:

Աղյուսակ 2.4-րդ դասարանի և 5-րդ դասարանի աշակերտների առաջադիմության ցուցանիշները:

Առաջադիմության տվյալները			
4-րդ դասարան ուսումնական տարվա վերջ		5-րդ դասարան I կիսամյակ	
Գերազանցիկ	30%	Գերազանցիկ	21%
Հարվածային	39%	Հարվածային	22%
Միջակ	31%	Միջակ	57%

Արդյունքները վկայում են, որ ուսուցման, իմացական մոտիվացիան նվազել է և այդ փաստը հաստատելու համար կիրառել ենք Ն. Գ. Լուսկանովայի «Ուսուցման մոտիվացիայի բացահայտման» մեթոդիկան: Արդյունքները ներկայացված են գծապատկերում :



Գծապատկեր 1. Ուսուցման մոտիվացիայի բացահայտում:

1. Դպրոցական մոտիվացիայի բարձր աստիճան /17%/: Նման երեխաներն առանձնանում են ճանաչողական դրդապատճառների առկայությամբ, դպրոցի բոլոր պահանջները առավելագույնս հաջող կատարելու ցանկությամբ:

Նրանք հետևում են ուսուցչի բոլոր ցուցումներին, պարտաճանաչ են և պատասխանատու, շատ են անհանգստանում, եթե ուսուցչի կողմից ստանում են անբավարար գնահատականներ կամ մեկնաբանություններ:

2. Դպրոցական լավ մոտիվացիա /22%/: Ամենաբնորոշ մակարդակն է կրտսեր դպրոցականների համար, ովքեր հաջողությամբ հաղթահարում են կրթական գործընթացում առաջացած դժվարությունները:

3. Դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ /26%/: Աշակերտները իրենց բավականին լավ են զգում դպրոցում, սակայն հիմնականում դպրոց են հաճախում ընկերների, ուսուցչի հետ շփվելու համար:

Նման երեխաների ճանաչողական դրդապատճառները ձևավորվում են ավելի փոքր չափով, և կրթական գործընթացը նրանց քիչ է գրավում:

4.Դպրոցական ցածր մոտիվացիա /35%/: Ուսուցման մոտիվացիայի այս աստիճանն ունեցող դպրոցականները հաճախ դժվարանում են դպրոց հաճախել, նախընտրում են բաց թողնել դասերը: Դասարանում հաճախ զբաղվում են այլ գործերով, խաղերով՝ անտեսելով ուսումնական գործընթացը: Լուրջ դժվարություններ են ունենում ուսումնական գործունեության մեջ:

Դպրոցում դրսևորում են անկայուն վարք: Դժվարությամբ են հարմարվում դպրոցական պայմաններին, կոնֆլիկտի մեջ են մտնում դասընկերների և մեծահասակների հետ:

5-րդ դասարանի I կիսամյակում աշակերտների ուսուցման մոտիվացիայի բացահայտման արդյունքում պարզ դարձավ, որ գերակշիռ մասը ուսուցման մոտիվացիայի 4-րդ աստիճանն է (≈34,78%), այսինքն՝ ցածր ուսուցման մոտիվացիա՝ պայմանավորված ադապտացիայի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:

Այսպիսով, ախտորոշիչ աշխատանքից ստացած էմպիրիկ տվյալները փաստեցին, որ 5-րդ դասարանցիների ուսուցման մոտիվացիայի, ուսումնական առաջադիմության և ադապտացիայի միջև գոյություն ունի համակապակցություն, այսինքն՝ դպրոցական դեզադապտացիայի պատճառների շարքում կարևոր տեղ է գրավում երեխայի ուսումնական մոտիվացիայի ցածր աստիճանը:

5-րդ դասարանցիների դեզադապտացիան կանխարգելելու համար անհրաժեշտ է ժամանակին արձագանքել երեխայի ուսման և անձնային դժվարություններին, մշակել վերջիններիս բացահայտման, կանխարգելման և շտկման ուղիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Էլկոնին Դ. Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, «Լույս», 1975թ.:
2. Թունյան Ջ., Երիցյան Լ., Կրտսեր դպրոցականի հոգեբանություն, Երևան, 2013թ.:
3. Պետրովսկի Ա. Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Լույս», 1977թ.:
4. Балашова Е. Ю., Успешность обучения школьников в современных условиях// Педагогика и психология, 2008г., №10.
5. Битянова М. Г., Адаптация ребенка в школе, М., 1998г.
6. Буева Л. П., Алексеева В. Г., Общение как фактор развития личности // Социологические исследования, М., 1982 г.
7. Кджанян М. Г., Проблемы социальной адаптации личности, Ереван, 1982 г.
8. Цукерман Г. А., Переход из начальной школы в среднюю как психологическая проблема, Вопросы психологии, 2001 г.
9. www.wikipedia.am

THE PROBLEMS OF ADAPTATION AND DEADAPTATION OF SCHOOLCHILDREN IN THE TRANSITION PERIOD AS A PSYCHOLOGICAL AND PEDAGOGICAL PROBLEM (4-5th GRADES)

MARGARYAN ANI
Graduate student of Gavar State University
e-mail: ani.margaryan94@mail.ru
Academic Supervisor: Kurkchyan Lusik
PhD in Pedagogical Sciences, Associate Professor of Psychology

The purpose of the research is to study the psychological and pedagogical features of adaptation of 5th-grade students.

The article distinguishes three stages of school adaptation: adaptation to elementary school, to middle school and high school. At the same time, the emphasis is placed on studying the problems of deadaptation of the student, its socio-psychological dimension, the reasons of which are connected with the peculiarities of the teaching process: lack of learning motives, low academic performance, learning skills, low working capacity, difficulties encountered in communication between teachers and peers. The article also studied the objective and subjective factors that affect the adaptation of children.

After analyzing the results of the research work, we came to the conclusion that in order to prevent deadaptation of fifth graders, it is necessary, in a timely manner, to discover the objective and subjective factors leading to it and take measures for its prevention.

Key words: *adaptation, deadaptation, educational motivation, transition period, leading activity, objective and subjective factors.*

АДАПТАЦИЯ И ДЕЗАДАПТАЦИЯ ШКОЛЬНИКА В ПЕРЕХОДНЫЙ ПЕРИОД КАК ПСИХОЛОГО- ПЕДАГОГИЧЕСКАЯ ПРОБЛЕМА (4-5 КЛАССЫ)

МАРГАРЯН АНИ
Гаварский государственный университет
электронная почта: ani.margaryan94@mail.ru
Научный руководитель: Куркчян Лусик
Кандидат педагогических наук, доцент

Цель исследования изучить психолого-педагогические особенности процесса адаптации школьников 5-ого класса.

В статье выделены 3 этапа школьной адаптации: начало обучения в школе, переход из начальной школы в среднюю и из средней школы в старшую. При этом акцент сделан на изучение проблемы дезадаптации ученика, ее социально-психологической направленности, причины которой связываются с особенностями учебного процесса: несформированными учебными мотивами, навыками учебной деятельности, низкой успеваемостью, низкой работоспособностью с трудностями, возникшими в общении с учителями и сверстниками. Отмечены также объективные и субъективные факторы, влияющие на адаптацию детей.

Анализируя результаты исследовательской работы, мы пришли к убеждению, что для профилактики дезадаптации пятиклассников необходимо вовремя выявить объективные и субъективные факторы, способствующие ее формированию и разработать пути профилактики.

Ключевые слова: *приспособление, адаптация, дезадаптация, учебная мотивация, переходной период, ведущая деятельность, объективные и субъективные фактора.*

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ԳԱՓՈՅԱՆ ԱՐԵՎԻԿ
Գավառի պետական համալսարանի
բանասիրաական ֆակուլտետի
«Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ arevikgapoyan88@mail.ru
Գիտական ղեկավար՝ Օհանյան Հայկ
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համարձակ կարելի է ասել, որ նոր սերնդի ուսուցման ու դաստիարակության հիմնախնդիրը բոլոր ժամանակներում և ամենուրեք եղել ու մնում է մարդկային հասարակության գլխավոր հոգսերից մեկը: Բնական է, որ ուսուցման ու դաստիարակության պատմահասարակական փորձը վաղ թե ուշ պետք է առանձնացվեր ոչ միայն որպես մտածողության օբյեկտ, այլ նաև որպես հետազոտական գործունեության առարկա: Ահա, 19-րդ դարում մանկավարժական տեսությունները հավակնում էին դառնալու գիտական: Եվ հենց այդ փուլում էր, որ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը հանդես եկավ հանուն ուսուցման կազմակերպման ու դրա պատմական զարգացման օբյեկտիվ օրենքների ուսումնասիրության՝ միաժամանակ մշակելով համապատասխան հիմունքներ:

Հոդվածը նվիրված է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի մանկավարժական հայացքների լուսաբանմանը: Հոդվածում հակիրճ ներկայացվել են Աբովյանի կյանքն ու գործունեությունը:

Բանալի բառեր՝ *մանկավարժական հայացքներ, դիդակտիկական հայացքներ, բարոյական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակություն, հայ իրականություն, հայ մանկավարժություն, լուսավորական գործունեություն:*

Խաչատուր Ավետիքի Աբովյան (1809թ. – անհետացել է 1848թ.), հայ գրող, մանկավարժ, լուսավորիչ, դեմոկրատ, հայ նոր գրականության և մանկավարժության հիմնադիր: Ծնվել է հոկտեմբերի 15-ին Քանաքեռ գյուղում (այժմ գտնվում է Երևանի շրջագծի մեջ): Ինը տարեկան հասակից ապրել և ուսանել է Էջմիածնում: 1819–22թթ.-ին հաճախել է Էջմիածնի վանական դպրոցը, 1824–26թթ.-ին սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում՝ ու-

սանելով հայկաբանություն, ճարտասանություն, ռուսերեն, պարսկերեն: Աշակերտել է Պ. Ղարադաղցուն, Հ. Ալամդարյանին: Կես տարի (1827–28թթ.-ի միջև) դասավանդել է Սանահինի վանական դպրոցում: 1829թ.-ից Էջմիածնում կաթողիկոսի և սինոդի թարգմանիչն ու քարտուղարն էր: Դորպատի համալսարանի պրոֆ. Ֆ. Պարրոտի արշավախմբի հետ 1829թ.-ի սեպտեմբերի 27-ին (հոկտ. 9-ին) բարձրացել է Արարատ լեռան գագաթը և այդ «սրբապղծության» համար հալածվել հոգևորականության կողմից: Պարրոտի աջակցությամբ Աբովյանը 1830–35թթ.-ին պետական թոշակով ուսանել է Դորպատի համալսարանում, հատուկ ծրագրով նախապատրաստվել ուսուցչական գործունեության: Ուսումնասիրել է բնական և հասարակական գիտություններ, լեզուներ (գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն), եվրոպական գրականություն ու փիլիսոփայություն (Գյոթե, Շիլլեր, Հերդեր, Կանտ, Ռուսո և ուրիշներ), երաժշտություն, արհեստներ: Սերտ կապեր է հաստատել եվրոպացի և ռուս մտավորականների հետ: 1836թ.-ին վերադարձել է հայրենիք, նպատակադրվել լուսավորական գործունեություն ծավալել, սակայն հոգևորականությունն անվստահությամբ է վերաբերվել «այլադավանների» միջավայրում կրթված Աբովյանին: Չհամակերպվելով ներազգային խնդիրներում Էջմիածնի դիրքորոշմանը՝ Աբովյանը հրաժարվել է հոգևոր կոչումից: 1837–43թթ.-ին Թիֆլիսի գավառական դպրոցների տեսուչ էր: Դպրոցների ուսուցիչներ և գաղափարակիցներ պատրաստելու նպատակով հիմնադրել է նաև մասնավոր դպրոց: Ցարական իշխանությունները հայ հետադեմ մտավորականների գործակցությամբ անվերջ խոչընդոտներ էին հարուցել Աբովյանի լուսավորչական գործունեության ճանապարհին: Այդ ծանր պայմաններում Աբովյանը կարողացել է ստեղծել իր ամենանշանակալից երկերը՝ «Նախաշավիղ կրթության» (2 մաս, 1837–40թթ., հրտ. 1862թ.), «Պարապ վախտի խաղալիք» (1838–41թթ., հրտ. 1864թ.), «Հազարփեշեն» (1840թ.), «Վերք Հայաստանի» (1841թ., հրտ. 1858թ.) և այլն: 1843թ.-ից փոխադրվել է Երևանի գավառական դպրոցը՝ իբրև տեսուչ: Ապրել է հոգեկան ծանր ճգնաժամ՝ մենակ ու մեկուսացված: 1848թ.-ի ապրիլի 2(14)-ի վաղ առավոտյան Աբովյանը դուրս է եկել տնից ու այլևս չի վերադարձել: Նրա ողբերգական վախճանի հանգամանքները վերջնականապես պարզված չեն:

Աբովյանը ականավոր մանկավարժ էր ոչ միայն իր ժամանակի հետամնաց Անդրկովկասի և Հայաստանի համեստ չափանիշներով, այլև 19-րդ դարի եվրոպական ու ռուսական առաջավոր մանկավարժության չափանիշնե-

րով: Այդ են վկայում բազմաթիվ ժամանակակից ականավոր գիտնականներ, ճանապարհորդներ, Աբովյանի նախկին շատ աշակերտներ, անգամ դպրոցական և այլ իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ: Այսպես, օրինակ, գերմանացի նշանավոր բուսաբան Կ. Կոխը, ծանոթանալով Աբովյանի և նրա մանկավարժական գործունեության հետ, հետևյալ կարծիքն է հայտնում նրա մասին. «Անկասկած մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այդպիսի զոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն էր: Սակայն դժբախտաբար Աբովյանին ցույց չեն տալիս արժանի վերաբերմունք...»:[1]

Աբովյանն իրավամբ հայ նոր մանկավարժության հիմնադիրն է: Անգնահատելի է նրա վաստակը դպրոցի, լուսավորության բնագավառներում: Ի՞նչն էր նրան մղում այս մեծ առաքելության առաջամարտիկը լինելուն: Անշուշտ, առաջին հերթին ժամանակի պահանջը: Ակնհայտ է, որ ուսուցումը Հայաստանում ուներ դարավոր պատմություն և սերտորեն կապված էր հայ պետականության առաջացման հետ, ակնհայտ է, որ 5-րդ դարում Մաշտոցի ստեղծած առաջին հայկական դպրոցների հետ ծագեց և զարգացավ հայ մանկավարժական միտքը: Ակնհայտ է նաև այն, որ միջնադարյան Հայաստանում ստեղծված Տաթևի, Գլաձորի, Սանահինի համալսարաններն անգնահատելի դեր խաղացին հայ մանկավարժության հետագա զարգացման գործում, բայց և անուրանալի է և այն, որ արդեն 19-րդ դարում, որը համաշխարհային պատմության մեջ կոչվեց «գիտության դար», «բանականության դար», հայ մանկավարժությունը կարիք ուներ արմատական բարեփոխումների՝ քայլելու ժամանակին համընթաց: Եվ ահա, Խ. Աբովյանն իր առաջավոր հայացքներով ու մանկավարժական գաղափարներով ձեռնամուխ եղավ այդ գործին: Աբովյանը մատաղ սերունդների համընդհանուր դաստիարակության, ուսուցման, համակողմանի զարգացման բնագավառում առաջինն էր, որ մերժեց միջնադարյան հնացած տեսությունները, քարացած տեսակետները, դպրոցներում իշխող դոգմատիզմը, սխոլաստիկան, ֆորմալիզմը, քննադատության թիրախ դարձրեց գործող դպրոցը: Նրա ամբողջ լուսավորական գործունեությունն ուղղված էր նրան, որ հայկական դպրոցը հանի խոր թմրությունից, մերձեցնի, հասցնի եվրոպական կրթական գործի մակարդակին: Սակայն միաժամանակ որոշակի զգուշություն էր ցուցաբերում

[1] Տե՛ս Ժամանակակիցները Խ.Աբովյանի մասին, Հր. Մուրադյան, Երևան 1941, էջ 47:

կույր և տարերային ընդօրինակման նկատմամբ և միշտ ու ամեն ինչում հաշվի էր առնում տեղային-ազգային պայմանները: Աբովյանն առաջինն էր, որ հրաժարվեց ժողովրդական հոծ զանգվածների համար արդեն իսկ դժվար ըմբռնելի, անհասկանալի դարձած գրաբարից և դպրոցում դրա կիրառումից. «վասնզի գրաբարով վարժարանը՝ «տանջարան է, ուսումն՝ տանջանք ու պատիժ»: Պետք է անցնել հասկանալի աշխարհաբարին: Անկասկած, Աբովյանը քաջագիտակ էր գրաբարին, գիտեր նրա մեծագույն առավելությունները դեռևս վերջնականապես չկազմակերպված աշխարհաբարի նկատմամբ, բայց գիտակցում էր, որ որքան էլ շքեղ ու հարուստ էր, այն ժողովրդական լայն զանգվածների համար մեռած լեզու էր, անմատչելի, անհասկանալի, անօգտագործելի: Աբովյանը միաժամանակ նշեց նոր դպրոցի կազմակերպման հնարավոր զարգացման ուղիները:

Աբովյանի մանկավարժական մոտեցումները մեզ հուշում են, որ նա քաջատեղյակ էր Վոլֆգանգ Ռատիխի, Կոմենսկու, Լոկի, Ռուսսոյի, Պեստալոցիի և այլոց աշխատություններին: Եվ այդ խոշոր մանկավարժների սկզբունքներից ելնելով՝ նա առաջադրել է և հնարավորության սահմաններում իրագործել այնպիսի առաջադիմական քայլեր, որոնք հիմք հանդիսացան զգալի վերափոխումների և նպաստեցին լուսավորության գործի նորովի կազմակերպմանը հայ իրականության մեջ: Խաչատուր Աբովյանի առաջադրած դրույթներն էին.

ա. Լուսավորության ողջ համակարգի, առաջնահերթորեն դպրոցի ժողովրդայնացում, այսինքն՝ այդ ամենը ժողովրդի տնօրինությանը հանձնելը, դպրոցին ժողովրդական ոգի ներարկելը: Դա բխում էր Աբովյանի խորը ժողովրդասիրությունից, անհուն հայրենասիրությունից, դեմոկրատիզմի սկզբունքներից: Այս թելադրանքով էլ նա գրում էր՝ «Մենք պետք է մտածենք գլխավորապես այս երկրի մատաղ սերնդի մասին»:

բ. Հոգևոր ու դասական կրթության բովանդակության փոխարեն բոլոր աստիճանի դպրոցներում աշխարհիկ և ռեալական կրթության ապահովում, բնագիտական, ճշգրիտ գիտելիքների գործնական անցում և այդ միջոցով գործնական ունակությունների, հմտությունների ձեռքբերում, կատարելագործում ու անպայման աշխարհաբարով:

գ. Ազգերի, սեռերի, դասերի համընդհանուր, ընդգրկուն, իրավահավասար ուսուցման իրագործում:

դ. Պարտադիր (սկզբնական շրջանում տարրականի սահմաններում), կարիքավորների համար նույնիսկ անվճար կրթություն:

ե. Երկու սեռերի երեխաների ներդաշնակ ու համակողմանի դաստիարակություն և զարգացման ապահովում, որն իր մեջ պետք է ներառի մտավոր կրթությունը, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական դաստիարակությունը ևաշխատանքային ուսուցումը:

զ. Պայքար դպրոցական ցանցի ընդլայնման (հատկապես գյուղական վայրերում) և հայկական դպրոցի իրավահավասարության համար, հասնել այն բանին, որ մեր դպրոցը ևս օգտվի պետական (ռուսական) դպրոցներին վերապահված իրավունքներից:

է. Միջնակարգ, որոշ վերապահումներով և բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպում, մանավանդ մանկավարժական կադրերի պատրաստման նկատառումներով՝ նպատակադրվելով բանիմաց, կրթյալ ուսուցիչներով ապահովել մեր կրթական հաստատությունները և հատկապես գյուղական դպրոցները:

ը. Միասնական դպրոցական կանոնադրություն, ուսումնական պլանծրագրերի, ուսումնական ձեռնարկ- դասագրքերի անհրաժեշտություն:

թ. Առաջավոր դիդակտիկական պահանջների, նոր և նորագույն մեթոդների կիրառում:

Ինչ վերաբերում է ուսուցման կազմակերպմանը, Աբովյանը հիմնական ձևը համարում էր դաս-դասարանային համակարգը: Նա մեծ տեղ էր հատկացնում ուսուցման այնպիսի մեթոդների կիրառությանը, ինչպիսիք էին պատմելու, բացատրման, զրույցի, ցուցադրման, էքսկուրսիաների, գործնական աշխատանքների մեթոդները: Ըստ Աբովյանի՝ ուսուցումը պետք է համապատասխանի մանկան հոգեկան կարողություններին և ժամանակի պահանջներին, տարվի ոչ թե սխոլաստիկ օրենքներով ու մեռած լեզվով, այլ կենդանի խոսքով, զննական միջոցներով: Զննականության սկզբունքը Աբովյանը կենսագործում է իր կազմած դասագրքերում ու ձեռնարկներում, ինչպես և պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում: Ըստ Աբովյանի՝ արդյունավետ և խելացի ուսուցման նախապայմաններն են «զննականությունը, պարզությունը և հիմնավորությունը դասավանդման ժամանակ... Անցումը հայտնիից դեպի անհայտը, պրակտիկայից թեորիային, շնչավոր աշխարհից դեպի վերացականը, անծանոթի համեմատությունը ծանոթի հետ, հասկանալ և հաճախակի կրկնել այն, ինչ մենք անցնում ենք ու-

սումնական առարկաների համապատասխանությունը պատանեկության տարրերին և ըմբռնումներին ...»[2]:

Սակայն ուսուցման արդյունավետության համար բավական չէ միայն նրա մատչելիությունը, ուսուցումը պետք է հենվի երեխայի հետաքրքրության վրա: Աբովյանը քննադատում է դպրոցներում տիրող տաղտուկը, որն սպանում է ամեն մի մտավոր ընդունակություն, մինչդեռ ըստ Աբովյանի՝ պետք է կարողանալ ուսուցումը այնպես հետաքրքիր դարձնել, որ երեխաներն «ինքեանք բոլորովին մոռանան, թէ են ի վարժատան»[3]: Արդեն ուսուցման նոր բովանդակությունը և մատչելի լեզուն զգալի չափով լուծում են ուսուցման հետաքրքրականության խնդիրը, սակայն դրանք դեռ բավական չեն, պետք է նաև կարողանալ հետաքրքիր և գրավիչ կերպով երեխաներին մատուցել ուսումնական նյութը: Իսկ դա Աբովյանին հաջողվում է, քանզի նա իր մեջ համատեղում է տաղանդավոր մակավարժի և գեղարվեստական խոսքի հանճարեղ վարպետին: Արդեն իսկ Աբովյանի կողմից պաշտպանվող ռեալական, զննական-առարկայական ուսուցման սկզբունքը հանդիսանում է ուսուցման գիտակցականության կարևոր միջոց, քանի որ տվյալ դեպքում երեխաներն իրերի վրա չեն նայում ուրիշների աչքերով, չեն մտածում ուրիշների մտքերով, այլ հենվում են սեփական զգայարանների վկայությունների, սեփական դիտողությունների վրա: Աբովյանն ամեն կերպ աշխատում է ոչ միայն երեխաներին զինել փաստական գիտելիքներով, այլև դրա հետ սերտորեն կապված՝ խթանել, զարգացնել նրանց մտավոր ընդունակությունները, ինքնուրույն մտածողությունը, նրանց մեջ զարգացնել սեր և ճաշակ դեպի մտքի աշխատանքը: Աբովյանը երեխաների առջև դնում է բազմաթիվ հարցեր ու խնդիրներ, որոնց նպատակն է՝ նրանց մեջ զարգացնել դիտողականություն, ուշադրություն, երևույթների վերլուծության կարողություն և այլն: Աբովյանը շոշափում և հիմնականում ճիշտ է լուծում նաև ուսուցման համակարգվածության ու հաջորդականության, գիտելիքների հաստատուն յուրացման սկզբունքները:

Ելնելով ռեալական, առարկայական-զննական ուսուցման մասին իր առաջավոր դիդակտիկական հայացքներից՝ Աբովյանը պահանջում էր սահմանել ամենասերտ կապ լեզվի ուսուցման և շրջապատի առարկաների ուսումնասիրության մեջ, երեխաների խոսքի զարգացումը շաղկապելով

[2] Աբովյանի արխիվ, գ., N31:

[3] Խ. Աբովյան, Նախաշավիղ, 1940, էջ 22:

նրանց դիտողականության՝ մտածողության զարգացման հետ: Նաև Աբովյանը առաջարկել է ուսուցումը կապել երեխաների առօրյա աշխատանքային գործունեության հետ, դպրոցներին կից ստեղծել արհեստանոցներ ու փորձադաշտեր, պարբերաբար կազմակերպել բնարշավներ: Երեխաների գեղագիտական դաստիարակությունը, գեղեցիկ արվեստները, հատկապես երաժշտությունն ու նկարչությունը համարել է անհատի հոգևոր վերափոխման կարևորագույն միջոց՝ պարտադիր բոլորի համար:

Աբովյանը մեծ կարևորություն էր տալիս ֆիզիկական և աշխատանքային դաստիարակությանը և ոչ միայն տեսական հիմնավորումներով, այլև գործնական իրագործումներով:

Աբովյանի ըմբռնմամբ աշխատանքային ուսուցումը ամենից առաջ պետք է հետապնդի մարդու բազմակողմանի զարգացման հետ կապված նպատակներ: Աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը պետք է նպաստեն ինչպես երեխաների բարոյական դաստիարակությանն ու մտավոր զարգացմանը, այնպես և նրանց ֆիզիկական դաստիարակությանը: Աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը մեծ նշանակություն ունեն մասնավորապես բնավորության, կամքի, տոկունության, բարոյական-ֆիզիկական կոփվածության համար:

Աբովյանի պատկերացումները ֆիզիկական դաստիարակության մասին ամենից լավ ներկայացված են «Պատմություն Տիգրանի» վեպում: Աբովյանը կողմնակից էր փոքր տարիքից երեխաների օրգանիզմը կոփելուն, ամեն տեսակ պայմանների սովորեցնելուն, այնպես, ինչպես այդ խնդիրը դնում էին նաև Ջ.Լոկը, Ռուսոն: Դեմոկրատ Աբովյանի տեսակետից առողջ կյանքի և առողջ օրգանիզմի ամենաառաջին պայմանը հանդիսանում է աշխատանքը, քանզի պարապությունը այլասերում է մարդու և՛ հոգին, և՛ մարմինը: Բացի դրանից՝ ֆիզիկական դաստիարակության միջոց են խաղերը, էքսկուրսիաները, զբոսանքները, ճանապարհորդությունները տարվա բոլոր ժամանակներին և ամեն տեսակ եղանակներին:

Ըստ Աբովյանի՝ բարոյական դաստիարակության նպատակն է մարդքաղաքացու (ազնիվ, հայրենասեր, մարդասեր, աշխատասեր) ձևավորումը, որը իրագործվում է տարբեր միջոցներով՝ անձնական օրինակով, խրատով, խրախուսանքով, պատժի կիրառմամբ, բայց ոչ մարմնական: Աբովյանի հիմնական հոգսը հայրենիքի համար կրթված ու պիտանի քաղաքացիներ դաստիարակելն էր: Եվ իհարկե, այս ամենը հին դպրոցի քննադատության

ֆոնի վրա՝ պահանջելով դրա վերակառուցումը, միաժամանակ տալով նորի կազմակերպման ուղիները:

Հարկ է նշել, որ մեծ լուսավորիչը մեր նոր մանկավարժության մեջ առաջինն էր, որ ոչ միայն հիմնավորեց դպրոցի ու կյանքի սերտ կապի գաղափարը, այլև այն իրագործեց իր իսկ ղեկավարած դպրոցներում: Նա վստահ էր, որ իր «գավառական դպրոցով» կարող է մրցել «Եվրոպայի լավագույն դպրոցների հետ». դրան ապացույց այն արդյունքը, որին նա հասավ Թիֆլիսի և Երևանի իր տնօրինության ներքո գործող դպրոցներում: Այսպիսով, ըստ Պ. Պռոշյանի բնորոշման, իր «Ժամանակից առաջ ծնված մարդը» դպրոցի և լուսավորության դրվածքի, կրթության բովանդակության, ուսուցման ձևերի և մեթոդների մեջ բազմաթիվ նորություններ առաջադրեց և կենսագործեց: Ճիշտ է, այդ ամենը կյանքի գնով, բայց նա հարթեց այն ճանապարհը, որով հետագայում ընթացան հայկական դպրոցն ու մանկավարժական նոր միտքը:

Այսպիսով, ուսումնասիրելով Աբովյանի կյանքն ու մանկավարժական հայացքները պարզորոշ նկատում ենք նրա նվիրվածությունն ու սերը կրթական ոլորտի հանդեպ, անգնահատելի է իրոք նրա դերը թե՛ հայ գրականության, թե՛ մանկավարժության մեջ: Աբովյանը մեկն էր այն ազնիվ, բանիմաց և արդարամիտ մարդկանցից, որը, առերեսվելով բազմաթիվ դժվարությունների, միևնույն է, պայքարեց և հասավ իր նպատակին: Իսկ նպատակը մեկն էր՝ հայրենիքին տալ կրթված, գրագետ սերունդ: Եվ իհարկե, բացառիկ եղավ նրա պատմական ծառայությունն իր ժողովրդին. նա հայ միտքը ձերբազատեց ավանդական սահմանափակության շղթաներից և առաջնորդեց դեպի համաշխարհային քաղաքակրթության լայն շրջագիծ, հայկական իրականությանը ներարկեց սոցիոլոգիական, գեղագիտական և բարոյագիտական նոր գաղափարներ, ուրվագծեց հայ ժողովրդի զարգացման հեռանկարները՝ դրանք կապելով համաեվրոպական առաջավոր կենսաձևի հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ մանկավարժներ XIX- XX /1920թ./ Գիրք Ա. 1958, Գիրք Բ, կազմեց և խմբավորեց Ա.Մ. Շավարշյանը, Ե., 1961:
2. Մ. Սանթրոսյան, Խաչատուր Աբովյանը հայ նոր մանկավարժության հիմնադիր, Երևան, 1953:

3. Հ. Մուրադյան, Խաչատուր Աբովյան, Երևան, Երևանի մանկավարժական ինստիտուտի հրատարակություն, 1939, 96:
4. Շ. Սիմոնյան, Հայ մանկավարժներ, Երևան,1958:

Համացանցային կայքեր

1. https://library.anau.am/
2. http://litphilo.asj-oa.am
3. https://hy.wikisource.org/
4. http://matyan.am
5. https://abovyanmuseum.am

KHACHATUR ABOVYAN'S PEDAGOGICAL VIEWS

GAPOYAN AREVIK
3rd-year student of Department of English language and literature,
Faculty of Philology, Gavar State University
e-mail: arevikgapoyan88@mail.ru
Academic Supervisor: Ohanyan Hayk
PhD in Pedagogy, Associate Professor,
Lecturer, Gavar State University

It should be stated that the problems of education and upbringing of the new generation have always been and remain one of the main concerns of human society. It is natural, that the historical-social experience of teaching and upbringing, sooner or later, should be distinguished not only as an object of perceptive thinking, but also as a subject of research activity. Thus, in the 19th century, pedagogical theories were thought to be scientific. And it was in this period when the great enlightener Khachatur Abovyan came up with the idea of organization of education and the study of the objective laws of its historical development, at the same time developing appropriate bases.

The article is dedicated to the coverage of the pedagogical views of the great Armenian enlightener Khachatur Abovyan. In this article, we have succinctly presented Abovyan's life and activity, then referred to his enlightenment activities and proposed provisions.

Key words: *The great Armenian enlightener, pedagogical views, didactic views; moral, physical and labor education, Armenian reality, Armenian pedagogy.*

ПЕДАГОГИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ХАЧАТУРА АБОВЯНА

ГАПОЯН АРЕВИК
Студентка 4-ого курса отделения английского языка и литературы
филологического факультета ГГУ,
e-mail: arevikgapoyan88@mail.ru
Научный руководитель: Оганян Айк
Кандидат педагогических наук, доцент,
преподаватель ГГУ

Можно с уверенностью сказать, что проблемы образования и воспитания нового поколения всегда были и остаются одной из главных забот человеческого общества. Естественно, что историко-социальный опыт обучения и воспитания рано или поздно должен выделяться не только как объект перцептивного мышления, но и как предмет исследовательской деятельности. И вот, уже в XIX веке педагогические теории претендовали на научность. И именно на этом этапе великий просветитель Хачатур Абовян выступил за организацию образования, изучение объективных закономерностей его исторического развития, одновременно разрабатывая соответствующие основы.

Статья посвящена освещению педагогических взглядов великого армянского просветителя Хачатура Абовяна. В статье мы вкратце представили жизнь и деятельность Абовяна, затем обратились к его просветительскому делу, предложенных положений.

Ключевые слова: *великий армянский просветитель, педагогические взгляды, дидактические взгляды, моральное, физическое, трудовое воспитание, армянская действительность, армянская педагогика.*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ vardanyanarmine1212@gmail.com
Գիտական ղեկավար՝ Ղազարյան Օլգա
Գավառի պետական համալսարանի դասախոս

Թեմայի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ գրական ստեղծագործությունների ուսումնասիրումը տարրական և հիմնական դպրոցում պետք է իրականացվի նոր սկզբունքով՝ գրական բնագրերի ընտրությունը յուրաքանչյուր դասարանի համար կատարելով սովորողի տարիքային առանձնահատկություններին, արդեն ձեռք բերած գիտելիքների մակարդակին ու բառապաշարին համապատասխան, զարգացնելով կրտսեր դպրոցականների մոտ գեղարվեստական ստեղծագործությունների լիարժեք ընկալման կարողությունները: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում կիրառել նոր արդյունավետ մեթոդներ ու տեխնոլոգիաներ: Հոդվածում փորձ է արվել բացահայտել կրտսեր դպրոցում բանաստեղծությունների ուսուցման առանձնահատկությունները, առաջադրել արդյունավետ մեթոդներ, որոշել տարրական դպրոցի մայրենիի դասագրքերում զետեղված բանաստեղծությունների կրթական, դաստիարակչական և զարգացնող հնարավորությունները: Դրանց ուսումնասիրությունը նպաստում է գրական-գեղարվեստական արժեքների ճանաչմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, գեղագիտական դաստիարակության իրականացմանը:

Բանալի բառեր՝ *բանաստեղծություն, էպիկական, քնարական, խոսք, բառապաշար, գեղագիտական ճաշակ, լեզվամտածողություն, գրական արժեք, դաստիարակություն, զարգացում:*

Ուր որ հայրենի երգեր կլսվի՝ հոն հայրենիքը ողջ է…

Ղևոնդ Ալիշան

Մայրենիի դասագրքերում որոշակի տեղ է տրված բանաստեղծություններին, որոնք, ըստ ժանրային առանձնահատկությունների, լինում են էպիկական և քնարական: էպիկական բանաստեղծությունները, որպես կանոն, ավելի մատչելի են կրտսեր դպրոցականներին, որովհետև նրանք ունեն դիպաշար, նրանցում նկարագրվում են դեպքեր, գործողություններ, կան գործող անձեր, որոնք հարաբերվում են, դատողություններ անում և այլն: Այս իմաստով էպիկական բանաստեղծությունների ուսումնասիրումը շատ ընդհանրություններ ունի պատմվածքի շուրջ տարվող աշխատանքի հետ, այն ուսումնասիրվում է՝ իրականացնելով բացատրական ընթերցության մեթոդի բոլոր բաղադրամասերը: Ինչպես պատմվածքը, այնպես էլ էպիկական բանաստեղծությունը կարող ենք բաժանել տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածների, վերնագրել դրանք, ներկայացնել «բառային նկարչությամբ», վերարտադրել բովանդակությունը, գտնել էջի նկարազարդմանը համապատասխանող տողերը և այլն: էպիկական բանաստեղծության շուրջ իրականացվող աշխատանքների ժամանակ շահեկան է օգտագործել տարաբնույթ զննական միջոցներ, թեմատիկ նկարների համալիր, գունանկարներ, երեխաների նկարչական ապլիկացիոն աշխատանքները, բեմականացումներ՝ երեխաների պատրաստած բեմական կահավորանքով և այլն: Զգալիորեն արդյունավետ կդարձի բանաստեղծության ուսումնասիրման դասը նաև փոխգործուն մեթոդների ու մեթոդական հնարների կիրառումը:

Քնարական բանաստեղծությունները հիմնականում չունեն հերոսներ, այնտեղ չեն նկարագրվում դեպքեր: Դրանք ավելի շատ խոհական են, փիլիսոփայական, ներկայացնում են մարդու զգացմունքները, հոգեբանությունը, ապրումները և այլն: Սրանք նպաստում են երեխայի գեղագիտական ներաշխարհի և խոսքի հարստացմանը, զարգացմանը և զգացմունքային արժեքների ձևավորմանը: Կրտսեր դպրոցականներին առավել մատչելի են բնությանը, հայրենիքին նվիրված քնարական բանաստեղծությունները: Դրանց բովանդակության ընկալման դժվարությունները պայմանավորված են գործածված բառերի փոխաբերական իմաստներով, մակդիրներով և լեզվարտահայտչական այլ՝ առավել բարդ միջոցներով: Քանի որ քնարական բա-

նաստեղծության հիմքում մշտապես ընկած են զգայությունները, ուրեմն քնարական բանաստեղծության շուրջ աշխատանքի նպատակը պետք է դառնա երեխաների վրա հեղինակի զգայությունների ազդեցությունը: Որպեսզի հնարավոր լինի երեխաներին տանել հեղինակի զգացմունքների ուղիով, պետք է իրականացնել նախապատրաստական աշխատանք՝ կենդանացնելով այն երևակայական պատկերացումները, որոնք կան երեխաների կենսափորձում և կարող են հիմք դառնալ բանաստեղծի զգացմունքների հասկացման համար: Որպեսզի երեխաներին նախապատրաստենք պոեզիայի առավել խոր և լիարժեք ընկալմանը, անհրաժեշտ է նրանց օգնել ձեռք բերել բանաստեղծական խոսքի լեզուն հասկանալու, նրա շարահյուսական կառույցների առանձնահատկություններն զգալու և բանաստեղծության կառուցվածքի յուրահատկություններն ըմբռնելու կարողություններ: Այդ նպատակով առաջին հերթին պիտի ուսումնասիրել ստեղծագործության լեզուն և ոճը: Կարելի է նաև այս խնդիրն իրականացնել էքսկուրսիաների, զրույցների, երաժշտական և գրական ունկնդրումների, նկարիչների աշխատանքների դիտումների և քննարկումների, հեղինակի կենսագրության հետաքրքիր դրվագների ուսումնասիրության ճանապարհով:

Թե՛ քնարական, թե՛ էպիկական բանաստեղծության ուսումնասիրման դասի հաջողությունը մեծապես պայմանավորված է երեխաներին բանաստեղծության բովանդակության ընկալմանը նախապատրաստելու ձևերով. սա գեղարվեստական ստեղծագործության բովանդակության և գաղափարի ընկալման կարևոր պայմանն է, որը հենվում է բազմաթիվ հոգեկան գործընթացների վրա՝ խոսք, երևակայություն, մտածողություն և այլն:

Գեղարվեստական ցանկացած ստեղծագործության, այդ թվում բանաստեղծության (մասնավորապես քնարական) ուսումնասիրման գործընթացում ուսուցիչը պիտի այնպես կառուցի իր աշխատանքը, որ երեխաները հստակորեն «տեսնեն» թաքնված միտքը՝ ենթատեքստը, հասկանան նրա իմաստը, ըմբռնեն կերպարների փոխհարաբերությունների տրամաբանությունը և հեղինակի վերաբերմունքը նրանց նկատմամբ: Եթե էպիկական բանաստեղծությունը կարելի է երեխաներին պատմել սովորեցնել, ապա քնարականի ուսուցման խնդիրը երեխաների զգացմունքային երանգների արթնացումն է, դեպքերին, հերոսների ճակատագրերին, բնության երևույթներին զգացմունքներով արձագանքելու ունակության մշակումը: Անթույլատրելի է զգացմունքներով հարուստ ստեղծագործությունը պարզունակացնել, գաղափարը նեղացնել երեխաներին մատչելի դարձնելու համար:

Ուսումնասիրելով «Մայրենի 2» դասագրքի ստեղծագործությունները՝ նկատում ենք, որ բնագրերի մոտ 40%-ը կազմում են բանաստեղծությունները, այստեղ մեծամասնություն են կազմում էպիկական ժանրի բանաստեղծությունները, ինչպիսիք են Լիպարիտ Սարգսյանի «Տղան ու մրջյունը», Սիլվա Կապուտիկյանի «Ավոյի ծիլը» և այլն, իսկ քնարական բանաստեղծություններից՝ Հովի. Թումանյանի «Աշուն»-ը, Ռազմիկ Դավոյանի «Նկարչություն»-ը և այլն: Այստեղ թեմատիկան իրենց ծանոթ շրջապատող աշխարհն է՝ բնութան երևույթներ, կենդանիներ, բույսեր. այսինքն՝ այն, ինչ համապատասխանում է 7-8 տարեկան երեխայի տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին: Քիչ են օգտագործված անծանոթ բառեր, բայց դրանց առկայությունը պարտադիր է աշակերտի բառապաշարի հարստացման համար:

Երկրորդ դասարանցիների հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարող ենք ասել, որ այս տարիքում ավելի մատչելի են էպիկական ժանրի բանաստեղծությունները: Նրանց համար գերակայող գործընթաց է մտածողությունը, որի զարգացմանն էլ նպաստում են գեղարվեստական երկերի ուսուցումը դպրոցական ծրագրում: Հենց կրտսեր դպրոցական տարիքում է, որ ակնառու-պատկերավոր մտածողությունից անցում է կատարվում բառատրամաբանականին, այսինքն՝ երեխաները արդեն ընկալում են բառերն իրենց իմաստներով, այլ ոչ թե միայն պատկերով:

«Մայրենի 3» դասագրքի ստեղծագործությունների ուսումնասիրությունից երևում է, որ բնագրերի մոտ 31%-ը կազմում են բանաստեղծությունները, այստեղ նույնպես մեծամասնություն են կազմում էպիկական ժանրի բանաստեղծությունները, ինչպիսիք են Արմեն Մարտիրոսյանի «Թութակն ու վանդակը», Ռուբեն Ղարիբյանի «Անտառի բնակիչները» և այլն, իսկ քնարական՝ Սիլվա Կապուտիկյանի «Հարստություն», Համո Սահյանի «Տերևը» և այլն: Այստեղ բանաստեղծությունների թեմատիկան արդեն ընդարձակվում է, բացի բնության կամ շրջապատող աշխարհի վերաբերյալ երկերից ավելանում են նաև վերացական հասկացություններ և երևույթներ, ավելի շատ են օգտագործվում մակդիրներ, փոխաբերություններ, համեմատություններ և այլ գեղարվեստական արտահայտչամիջոցներ: Երրորդ դասարանցիները ավելի գիտակից են վերաբերվում բանաստեղծության գաղափարին, փորձում են կերպարները վերլուծել, համադրել, հակադրել, որն էլ նպաստում է խոսքի և լեզվամտածողության զարգացմանը:

Ուսումնասիրելով «Մայրենի 4» դասագրքի ստեղծագործությունները՝ նկատում ենք, որ բնագրերի մոտ 27%-ը կազմում են բանաստեղծությունները: Այստեղ հավասարաչափ ընդգրկված են քնարական և էպիկական բանաստեղծություններ: Էպիկականներից կարելի է նշել Հրաչիկ Սևոյանի «Տակառի լողը», իսկ քնարականներից՝ Հովհաննես Շիրազի «Հայոց լեզուն»: Հայրենիքի, հայոց լեզվի, ազգային խորհրդանիշների վերաբերյալ, բնության, շրջապատող աշխարհի ու մարդկանց թեմատիկան շարունակվում է նաև այստեղ: Գեղարվեստական արտահայտչամիջոցները ավելի առատ են, քան նախորդ դասագրքում, բայց դա դժվարություն չի առաջացնում չորրորդ դասարանցիների համար, քանի որ նրանց մոտ արդեն բավական զարգացած է բառատրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, երևակայությունը:

10-11 տարեկան երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս նրան թափանցել բանաստեղծության ներքին գունապնակի մեջ, գաղափարը արտահայտել սեփական բառերով, քննադատաբար վերաբերվել որոշ հարցերի:

Ներկայացնենք բանաստեղծության ուսուցման դասի պլան.

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 4-րդ

Դասի տևողություն՝ 45 րոպե

Դասի թեման՝ Սիլվա Կապուտիկյան. «Հայրենիք»

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Նպատակները՝

ա) Կրթական՝

Ծանոթացնել գրական գեղարվեստական արժեքներին,

Տեղեկություններ հաղորդել բանաստեղծության հեղինակի մասին,

Բացահայտել բանաստեղծության հիմնական գաղափարը,

Ձևավորել հայրենիքը իր պատկերացմամբ և իր բառերով նկարագրելու կարողություններ,

Բացատրել բանաստեղծության անծանոթ բառերը,

Ձևավորել բանաստեղծությունը ճիշտ և արտահայտիչ կարդալու, լեզվաոճական աշխատանք կատարելու կարողություններ:

բ) Զարգացնող

Զարգացնել գրական և գեղագիտական ճաշակը,

Զարգացնել լեզվամտածողությունը, խոսքը,

Զարգացնել ստեղծագործական երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը,

գ) Դաստիարակչական

Դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ,

Դաստիարակել բառերը խնամքով և ճիշտ ընտրելու կարողություն,

Դաստիարակել բարություն, քաջություն, ազնվություն, համերաշխություն և այլ բարոյական արժեքներ, որոնք տվյալ դեպքում առընչվում են հայրենիքի գաղափարին,

Դաստիարակել բարյացակամ վերաբերմունք հայրենակցի և առհասարակ մարդկանց նկատմամբ,

Գնահատել ազգային արժեքները և այն ամենը ինչը կապված է հայրենիքի հետ:

Մեթոդները՝ Մտագրոհ, Քառաբաժան, «Երգենք, թարմանանք», «Հիշենք բանաստեղծությունը»:

Անհրաժեշտ պարագաներ՝ Գունավոր կպչուն թղթեր, գրիչ, տետր, դասագիրք:

Դասի ընթացքը՝

ա) Խթանում - Ուսուցիչը դասը սկսում է հայրենիքի վերաբերյալ նախապատրաստական զրույցով:

-Երեխանե՛ր, եկեք խոսենք հայրենիքի մասին. Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով, ի՞նչ եք զգում, ո՞րն է ձեր հայրենիքը, ի՞նչպիսի բառերով կնկարագրեիք ձեր հայրենիքը, ի՞նչ գույներով և ինչպես կնկարեիք այն:

Ուսուցիչը գրատախտակին նկարում է շրջան, շրջանի մեջ գրում է հայրենիք բառը, շրջանից ճառագայթներ է տանում և յուրաքանչյուր ճառագայթի վրա գրում երեխաների ասած մեկ բառը: Ուսուցիչը սահմանափակումներ չի մտցնում բառերի մեջ, գրում է բոլոր առաջարկված մտքերը: Սա իրենից ներկայացնում է մտագրոհ մեթոդը:

բ) Իմաստավորում - Ուսուցիչը ներկայացնում է դասի թեման՝ տվյալ դեպքում Սիլվա Կապուտիկյանի «Հայրենիք» բանաստեղծությունը:

- Երեխաներ դուք նկարագրեցիք հայրենիքը ձեր աչքերով և պատկերացմամբ, իսկ հիմա եկեք միասին հասկանանք ի՞նչ է հայրենիքը Սիլվա Կապուտիկյանի պատկերացմամբ:

Ուսուցիչը մի քանի խոսքով անդրադառնում է Սիլվա Կապուտիկյանի կյանքին և ստեղծագործություններին: Այնուհետև ուսուցիչը սկսում է կարդալ բանաստեղծությունը՝ ուշադրություն դարձնելով արտասանության և ա-

ռոգանության նշաններին, իսկ աշակերտները լուռ լսում են ուսուցչին՝ միաժամանակ հետևելով գրքին:

Կարդալուց հետո ուսուցչի հետ միասին կատարում են բառային աշխատանք՝ բացատրելով հպարտ, վես, հողմ, կարկաչել բառերը, հետո դրանք գրում են բառատետրում և հանձնարարվում է դրանք սովորել: Կատարում են ևս մի քանի բառային վարժություն:

Բանաստեղծության բովանդակության իմաստավորման, բառապաշարի հարստացման, եզրակացություն անելու համար ուսուցիչը կիրառում է քառաբաժան մեթոդական հնարը: Յուրաքանչյուր աշակերտի ուսուցիչը բաժանում է 4 գունավոր կպչուն թուղթ՝ կարմիր, կապույտ, կանաչ, դեղին:

- Երեխաներ այստեղ կա 4 գույնի թուղթ, կարմիր թղթի վրա գրում եք թե այս բանաստեղծությունից ի՞նչ զգացիք, կապույտի վրա՝ ի՞նչ տեսաք, կանաչի վրա՝ ի՞նչ հիշեցիք, դեղինի վրա՝ մի խոսք ձեր հայրենիքին:

Որպեսզի աշակերտների մոտ մտապատկերներ առաջանան, միաժամանակ զարգանա երևակայությունը, ուսուցիչը հայրենիք բառը արտասանում է մերթ խորհրդավոր, մե՛րթ զվարթ, մե՛րթ քնարական, մե՛րթ հպարտ, իսկ այդ ժամանակ աշակերտները փակ աչքերով պատկերացնում են իրենց բնօրրանը:

Մինչ երեխաները կգրեն, ուսուցիչը գրատախտակին գծում է քառաբաժան աղյուսակ, սյունակներում գրում ի՞նչ զգացի, ի՞նչ տեսա, ի՞նչ հիշեցի, մի խոսք հայրենիքիս՝ համապատասխան գույնի թղթեր կպցնելով:

Աշխատանքը ավարտելուց հետո աշակերտները հերթով մոտենում են գրատախտակին և փաքցնում են կպչուն թղթերը համապատասխան տեղերում: Այնուհետև ուսուցիչը կարդում է բոլոր գրվածները և քննարկում դասարանի հետ միասին:

գ) Կշռադատում - Երեխաներ որպեսզի ամրապնդնեք մեր գիտելիքները, ժպտանք և թարմանանք եկեք երգենք հայրենիքին նվիրված մի գեղեցիկ երգ, որը ձեզ ծանոթ է՝ «Իմ անունը Հայաստան է»:

Տնային աշխատանք - հանձնարարվում է բանաստեղծությունը սովորել վարժ, ճիշտ առոգանությամբ կարդալ, սովորել անծանոթ բառերի բացատրությունները և գրել հայրենիքին նվիրված իրենց ծանոթ բանաստեղծությունից հատված, որը դասարանում կկարդան, իսկ մյուս աշակերտները կգուշակեն, թե որ բանաստեղծությունից է տրված հատվածը:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից ելնելով՝ կարող ենք փաստել, որ տարրական դպրոցում մայրենիի դասերին ուսումնասիրվում են

էպիկական և քնարական բանաստեղծություններ, առավել գերակշռում են էպիկականները, քանի որ դրանք ավելի մատչելի են կրտսեր դպրոցականին: Բանաստեղծությունները ունեն դաստիարակչական և զարգացնող կարևոր նշանակություն, դրանց ուսումնասիրությունը նպաստում է գրական-գեղարվեստական արժեքների ճանաչմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, գեղագիտական դաստիարակության իրականացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «-Զանգակ» հրատարակչություն, 2015թ., 316 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում. տեսություն և պրակտիկա, Երևան,« Զանգակ» հրատարակչություն, 2013թ., 296 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ,:
4. Գյուլբուդաղյան Ս.,Հայոց լեզվի մեթոդիկա, Եր.,ԵՀՀ, 1978թ., 324 էջ:
5. Հանրակրթական պետական չափորոշիչ, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2011/07/111088.pdf, 29.03.2019:
6. Հանրակրթության պետական կրթակարգ, http://www.irtek.am/views/act.aspx?aid=25829, 29.03.2019:
7. www.aniedu.am:
8. www.ktak.am:
9. www.edu.am:

STUDY OF POETRY IN PRIMARY SCHOOL

VARDANYAN ARMINE

2nd-year student of the Department of Elementary Pedagogy and Methodology, Faculty of Humanities, Gavar State University

e-mail: vardanyanarmine1212@gmail.com

Academic Supervisor: Ghazaryan Olga

GSU lecturer

The relevance of the study of this topic is based on the fact that the study of literary works in elementary and basic school should be carried out on a new

principle, selecting literary originals for each grade according to the age characteristics of the learner, the level of knowledge and already acquired vocabulary. To this end, there is a need to apply new effective methods and technologies.

The subject of research is the methodological system of studying poetry during the mother tongue class.The objectives of the research is to study the types of poems in elementary school and suggestion of effective teaching methods. The problem of the research is to mention the main types of poems, the social-psychological effects of the poems on the student and the educational component in the poems.

It can be concluded from the research that epical and lyrical poems are studied at the mother tongue classes in the elementary school, but the epical ones prevail, as they are more accessible for the primary school student: the poems have important educational and development significance and they contribute to the recognition of literary-artistic values.

Key words: *poetry, epic, lyrical, speech, vocabulary, aesthetic taste, linguistic thinking, literary value, upbringing, development.*

ИЗУЧЕНИЕ ПОЭЗИИ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

ВАРДАНЯН АРМИНЕ

Студентка 2-ого курса отделения «Начальная педагогика и методика»
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: vardanyanarmine1212@gmail.com
Научный руководитель: Казарян Ольга
Преподаватель ГГУ

Актуальность изучения темы заключается том, что изучение литературных произведений в начальной и основной школе должно осуществляться по новому принципу, выбирая художественные произведения для каждого класса с учётом возрастных особенностей учащихся и словарного запаса, развивать у младшеклассников умение полностью осмысливать произведения. Для этого необходимо применять новые эффективные методы и технологии.

Предмет исследования - методическая система изучения стихов на уроке родного языка. Цель исследования - выявить особенности обучения стихотворной речи в начальной школе, предложить эффективную методику обучения.

Проблемы исследования - выявить особенности изучения стихотворений в процессе обучения родному языку, определить образовательные, воспитательные и развивающие возможности стихотворений в учебниках по родному языку начальной школы, а также установить методическую систему, способствующую эффективности изучения стихов.

Из исследования можно сделать вывод, что в начальной школе на уроках родного языка изучаются эпические и лирические стихи, но эпические стихи преобладают, поскольку они более доступны для ученика, стихотворения имеют важное воспитательное и развивающее значение, они способствуют осознанию литературно-художественных ценностей.

Ключевые слова: *поэзия, эпический, лирический, речь, лексика, эстетический вкус, языковое мышление, литературное значение, воспитание, развитие.*

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՅԱՐԴԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

ԼԱԼԱՅԱՆ ԳԱՅԱՆԵ
Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
«Հոգեբանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ lalayangayane90@gmail.com
Գիտական ղեկավար՝ Ստեփանյան Լուսինե
կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մարդիկ իրենց ամբողջ գիտակից կյանքի ընթացքում առնչվում են վարքի ձևերից մեկի ընտրության անհրաժեշտության խնդրին, որով էլ պայմանավորված՝ առաջնային խնդիր է դառնում որոշման ընդունման մեխանիզմների միջառարկայական ուսումնասիրումը՝ երևույթի համալիր դիտարկման և վարքի կանխատեսման արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել որոշման ընդունման նյարդակենսաբանական համահարաբերականները, որին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝ առանձնացնել որոշման ընդունման պրոցեսին մասնակից նյարդահաղորդիչները, նշել որոշման ընդունման պրոցեսին մասնակից հորմոնները և դրանց գործառույթը: Իրականացված տեսական վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ որոշման ընդունման, մասնավորապես սուբյեկտիվ արժեքի հիման վրա այլընտանքներից մեկի ընտրության փուլի վրա ազդում են կենսաբանական ակտիվ նյութեր՝ նյարդահաղորդիչներ, որոնցից հիմնականը դոֆամինը, սերոտոնինը և օքսիտոցինն են, որոնցից առաջինը ապահովում է հուզական վարքը, խրախուսմամբ պայմանավորված որոշման ընդունումը, սերոտոնինի հիմնական ֆունկցիան սոցիալական որոշումների կայացումն է, իսկ օքսիտոցինի քանակով է պայմանավորված ալտրուիստական վարքը: Հետազոտությունները վկայում են նաև հորմոնների, մասնավորապես տեստոստերոնի և կորտիզոլի մասնակցությունը որոշման ընդունման ժամանակ, որոնք մասնակցում են ռիսկային որոշումների կայացմանը՝ մեծացնելով ռիսկի հակվածությունը: Ամփոփելով տեսական վերլուծության արդյունքները՝ կարելի է մշակել կենսաքիմիական և նյարդաբանական տվյալների վրա հիմնված մոդելներ՝ կիրառելով դրանք որոշման ընդունման բազմասպարեզ իրավիճակներում:

Բանալի բառեր՝ *որոշման ընդունում, կենսաքիմիական նյութեր, նյարդաէկոնոմիկա, նյարդահաղորդիչ, հորմոն, ուղեղային կենտրոններ, դոֆամին, սերոտոնին, փեստոստերոն:*

Վերջին տարիներին նյարդահոգեբանության ձեռքբերումները հնարավորություն են տալիս խոսել որոշման ընդունման նյարդակենսաբանական հիմքերի մասին: Համեմատաբար վերջերս շատ հետազոտություններ իրականացվում են նոր միջառարկայական գիտության՝ նյարդատնտեսագիտության շրջանակներում, որը միավորում է նյարդակենսաբանության, տնտեսագիտության, հոգեբանության և մի շարք այլ գիտությունների տեսակետներ որոշման ընդունման մեխանիզմների մասին և հնարավորություն է տալիս արդյունավետ մոդելավորել մարդու և կենդանիների վարքը:

Որոշման ընդունման պրոցեսի առավել մանարամասն դիտարկման համար առավել նպատակահարմար է պրոցեսին փուլայնություն տալը: Որոշման ընդունման փուլերի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ, որոնք ընդհանրացնելով կարելի է ստանալ հետևյալ պատկերը որոշման ընդունման փուլերի մասին: Առաջին փուլում տեղի է ունենում խնդրի ձևակերպում, ձևավորվում է կարծիք նպատակի և լուծման կոնտեքստի մասին: Այստեղ ամբողջացվում են օրգանիզմի ընդհանուր ներքին վիճակի և արտաքին միջավայրի գործոնների մասին տեղեկությունները: Հաջորդ փուլում որոշվում է այս կամ այն այլընտրանքի արժեքը (value կամ valuation): Երրորդ փուլում համեմատվում են որոշման այլընտրանքային տարբերակները, և տեղի է ունենում լավագույնի ընտրություն (action selection): Գործողության ընտրությունից հետո կատարվում է արդյունքների և արդյունավետության գնահատում: Վերջին փուլը ուսուցման փուլն է, որի ժամանակ տեղի է ունենում հիշողության մեջ առկա տեղեկատվության թարմացում, որն էլ իր հերթին նպաստում է հետագա գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

Նյարդատնտեսագիտության կողմից հիմնականում ուսումնասիրվում է սուբյեկտիվ արժեքի որոշման փուլը՝ որպես առավել նշանակալի գործընթաց որոշման ընդունման ընթացքում, քանի որ հենց այդ փուլում է տեղի ունենում գործողության գնահատում և ընտրություն, որն էլ որոշում է գործողության ընդհանուր արդյունավետությունը:

Որոշման ընդունման տարբեր մեխանիզմների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դրանք պայմանավորում են գլխուղեղի տարբեր կենտրոններ: Ավտոմատիզմի հետ կապված վարքը պայմանավորված է ստրիատումի լատերալ մասի ակտիվությամբ (dorsolateral striatum), որը մեծ դեր ունի վարքի պլանավորման և փոփոխման հարցում, իսկ նպատակաուղղված վարքը հիմնականում կախված է ճակատային կեղևի աշխատանքով և ստրիատումի մեդիալ մասով (dorsomedial striatum) [1]:

Նյարդահաղորդիչները՝ որպես կենսաբանորեն ակտիվ քիմիական նյութեր,ազդում են ուղեղի նյարդային ակտիվության վրա, հետևաբար պետք է հաշվի առնել, որ որոշման ընդունումը և ընդհանուր վարքը կարող են կախված լինել առանձին նյարդահաղորդչի ակտիվությունից: Վերջին շրջանում առանձին նյարդահաղորդչի դերի ուսումնասիրմանն ուղղված հետազոտությունները բավականին տարածված են նյարդակենսաբանական հետազոտությունների ոլորտում: Արդեն իսկ կան տվյալներ դոֆամինի, սերոտոնինի, օքսիտոցինի և մի շարք այլ նյարդահաղորդիչենրի դերի և գործառույթի մասին որոշման ընդունման պրոցեսում:

Դոֆամինի և զոլավոր մարմնի, ինչպես նաև սերոտոնինի և նշաձև կորիզի ակտիվության փոխկապակցվածության մասին վկայում են բազմաթիվ հետազոտություններ: Դոֆամինով միջնորդավորված պրոցեսներ են հուզական վարքը, սթրեսի իջեցումը, բացի դրանից՝ կանխատեսման սխալները և այլն, իսկ սերոտոնինի ակտիվության հետ է կապված վնասի կանխարգելումը [4]:

Հետազոտողները նշում են նաև դոֆամինի մեծ ազդեցությունը որոշման ընդունման ժամանակ: Դոֆամինը իր հիմնական՝ հույզերի կարգավորման գործառույթի իրականացումից բացի մասնակցում է որոշման ընդունման ժամանակ այլընտանքներից մեկի ընտրության գործընթացին: Դոֆամինի դերի ուսումնասիրմանն ուղղված հետազոտություններ իրականացվել են դեռևս 1970-ական թվականներին: Շուլցը կապիկների հետ իրականացրած հետազոտություններում հաստատեց դոֆամինի կապը խրախուսման մեխանիզմի հետ. դոֆամինային բջիջները ակտիվանում են խրախուսում ստանալուց առաջ: Գիտափորձերը իրականացվում էին հետևյալ կերպ. լսվում էր բարձր ձայն, որից մի քանի վայրկյան անց կապիկին հյութ էին տալիս: Սկզբում դոֆամինային նեյրոնները ակտիվանում էին միայն հյութ տալիս, բայց մի քանի անգամ գործողությունը կրկնելուց հետո նկատվեց, որ բջիջների ակտիվությունը նկատվում է ձայն լսելիս: Եթե բջիջների կանխա-

տեսումները ճիշտ էին, այսինքն՝ ձայնից հետո հյութ էին ստանում, արտադրվում էր դոֆամին, իսկ սխալվելու դեպքում ակտիվությունը իջնում էր, և դոֆամինի արտադրությունը արգելակվում: Այսինքն՝ բջջային կանխատեսումների օպտիմալացման դեպքում ուղեղը սկսում է համեմատել իր սպասումներն իրականության հետ, որն էլ ազդում է դոֆամինի արտադրության վրա:

Ուղեղի առաջնային գոտկային կեղևն այն շրջանն է, որը պատասխանատու է սխալներին արձագանքմանը: Երբ դոֆամինային նեյրոնները սխալ կանխատեսում են անում, ուղեղն առաջացնում է յուրահատուկ էլեկտրական հոսանք, որն անվանում են նեգատիվություն՝ կապված սխալի հետ: Առաջնային գոտկային կեղևի դոֆամինային բջիջները, բացի սխալ կանխատեսումներին արձագանքելուց, մասնակցում են նաև ուսուցման պրոցեսին: Մի քանի անգամ սխալվելուց հետո ուղեղային բջիջները ավելի ուշադիր են լինում տվյալ ազդակի նկատմամբ և չեն կրկնում սխալ գործողությունները:

Առաջնային գոտկային կեղևի բացակայությամբ կապիկները կարողանում էին ճշգրիտ կատարել բոլոր գործողությունները, սակայն նույնիսկ խրախուսում չստանալու դեպքում նրանք շարունակում էին կատարել նույն գործողությունները: Գենետիկական մուտացիայի հետևանքով առաջնային գոտային կեղևի դոֆամինային ընկալիչների կրճատումով մարդկանց մոտ նկատելի է նույն խնդիրը՝ նրանք չեն կարողանում նեգատիվ փորձից դասեր քաղել [2]:

Որոշման ընդունման պրոցեսում սերոտոնինի ազդեցությունն ուսումասիրող հետազոտությունները ցույց են տալիս նրա ազդեցությունը որոշման ընդունման բացասական հետևանքների, ռիսկային վարքի ոչ նորմալ ասպեկտների և սոցիալական որոշումների վրա:

Կլինիկական հետազոտությունների արդյունքում ստացած տվյալները վկայում են իմպուլսիվ վարքի վրա սերոտոնինէրգիական համակարգի թերի գործառույթի ազդեցության մասին՝ հաստատելով այդ նյարդահաղորդչի դերը մոտիվացիոն ամրապնդան ժամանակ: Այսպես, մեծ խրախուսումից հետո իմպուլսիվ վարքի կառավարումը կարող է կապված լինել սերոտոնինի քիչ քանակության, իսկ ակտիվ ռեակցիաները զսպելու անկարողությունը՝ նախաճակատային կեղևում նրա մեծ քանակության առկայության հետ: Արդյունքները վկայում են այն մասին, որ սերոտոնինը ազդում է կոգնիտիվ, հուզական և որոշման ընդունման մեխանիզմների վրա մի քանի ընկալուչային համակարգերում ակտիվության մակարդակի միջոցով:

Սերոտոնինը ազդում է նաև սոցիալական որոշումների ընդունման վրա: Կնութսոնի, Լեյթոնի, Ուոթսոնի և մի շարք այլ հետազոտողների ստացած տվյալները խոսում են այն մասին, որ սերոտոնինի քանակի մեծացումը ավելի արդյունավետ է դարձնում սոցիալական վարքը՝ ազդելով սոցիալական արժեքների ամրապնդման և դրանց՝ որոշման ընդունման պրոցեսում մասնակցության վրա [7]:

Մյուս հետազոտական ուղղությունը կենտրոնացված էր այն նյարդակենսաբանական մեխանիզմների վրա, որոնք գտնվում են օքսիտոցինի ազդեցության տակ: Նման հետազոտություններ իրականացվել են Պոլ Զակի ղեկավարմամբ: Հետազոտությունները ցույց են տվել, որ օքսիտոցինը ազդում է ալտրուիստական վարքի վրա: Հետազոտության մասնակիցները գումար էին տալիս անցորդներին, ովքեր կարող էին այդ գումարը կամ պահել իրենց, կամ կիսել ուրիշի հետ: Արյան մեջ օքսիտոցինի քանակը դրականորեն կորելացվում էր խրախուսման հետ, ինչպես նաև կանխատեսում էր գումարի վերադարձը հետազոտության մասնակցին [8]:

Բացի նյարդահաղորդիչներից՝ որոշման ընդունման վրա ազդեցություն ունեն նաև այլ կենսաբանական ակտիվ նյութեր՝ հորմոնները: Հորմոնները իրականացնում են նյութափոխանակություն և ազդում օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաների կարգավորման վրա: Հետազոտությունները ցույց են տվել, որ առանձին հորմոններ իրենց ազդեցությունն են ունենում որոշման ընդունման պրոցեսի վրա:

Այդ խնդրի ուսումասիրություններից առավել լայն տարածում ունեն Ջոն Կոատսի հետազոտությունները, որոնցում ուսումնասիրվում է օրգանիզմում տեստոստերոնի քանակի փոխկապակցվածությունը ռիսկային վարքի հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ և՛ մարդու տեստոստերոնի առավոտյան մակարդակը, և՛ այն, թե ինչպիսի մակարդում էր տեստոստերոնը մոր մոտ ներարգանդային փուլում ազդում ռիսկի հակվածության վրա: Բացի դրանից՝ մոր օրգանիզմում առկա տեստոստերոնի մակարդակը ազդում է նաև երեխայի վերջույթների ձևավորման վրա: Ըստ հետազոտությունների արդյունքների՝ Կոատսը եկավ այն եզրակացության, որ ինչքան շատ է մատների միջև ասիմետրիան, այնքան բարձր է տեստոստերոնի մակարդակը մոր մոտ եղել հղիության ժամանակ և հետևաբար տվյալ մարդիկ ավելի հակված կլինեն ռիսկի[3]:

Տեստոստերոնի և ռիսկային որոշումների ընդունման կապը ուսումնասիրել են նաև Նադլերը, Զակը և այլ հետազոտողներ: Նրանց հետազոտու-

թյան առարկան տեստոստերոնի մակարդակի ազդեցությունն էր միջազգային առևտրական դաշտում ակտիվների առքուվաճառքի վրա: Նրանք որպես մեծ ռիսկայնություն պարունակող օպերացիաների իրականացման պատճառ էին համարում օրգանիզմում տեստոստերոնի քանակը: Հետազոտությունները ցույց տվեցին, որ օրգանիզմում տեստոստերոնի բարձր մակարդակ ունեցողների որոշումները ավելի ռիսկային են, դուրս ավանդական առևտրաշրջանառության մեթոդներից [6]:

Տեստոստերոնը իր հիմնական՝ վերարտադրողական ֆունկցիայի իրականացման համար ազդում է նաև մի շարք այնպիսի հատկությունների վրա, ինչպիսիք են ագրեսիան, մրցակցությունը և ռիսկայնությունը: Դեռահասության տարիքում, կապված տեստոստերոնի քանակի ավելացման հետ, նկատվում է ռիսկայնության ավելի բարձր մակարդակ: Այն ազդում է նաև սեռական վարքի վրա: Ինչքան բարձր է տեստոստերոնի մակարդաը օրգանիզմում, այնքան բարձր է զուգընկերոջ ընտրության հարցում ռիսկայնությունը:

Ինչպես տեստոստերոնը, այնպես էլ կորտիզոլը մեծ նշանակություն ունեն ֆինանսական որոշումների կայացման վրա, որը կապված է նրանց կենսաբանական ֆունկցիաների հետ: Ֆինանսական որոշման ընդունումը անորոշ իրավիճակում որոշման ընդունման տարբերակ է, և այս կամ այն հորմոնը կարող է ազդել ռիսկայնության, խրախուսման արժեքի, ինֆորմացիայի վերամշակման և օգուտների ու կորուստների գնահատման ունակության վրա: Կորտիզոլն իր հերթին ազդում է սթրեսի հակազդման, անկանխատեսելի և սպառնացող իրավիճակների հաղթահարման վրա:

Կորտիզոլի բարձր մակարդակ նկատվում է սթրեսի արդյունքում, որն իր հերթին ազդում է որոշման ընդունման վրա: Կախված սթրեսային իրավիճակի տևականությունից՝ կորտիզոլի քանակը կարող է տարբեր կերպ ազդել որոշումների վրա: Հետազոտությունների արդյունքում եզրակացվել է, որ սթրեսը մեծացնում է ռիսկայնություն միայն նրանց մոտ, ովքեր ունեն կորտիզոլի բարձր մակարդակ, այսինքն՝ կորտիզոլն է ընկած սթրեսի հետևանքների հիմքում: Այն փոքրացնում է նաև սխալներ գտնելու հավանականությունը: Սթրեսը թուլացնում է այնպիսի ֆունկցիաների իրականացումը, ինչպիսիք են ուշադրության կենտրոնացումը, խնդիրների կառավարումն ու պլանավորումը: Եվ տեստոստերոնը, և կորտիզոլը մեծացնում են ռիսկի հակվածությունը, սակայն նրանց հիմնական տարբերությունն այն է, որ

միայն տեստոստերոնի դեպքում է մեծանում արժեքների փոփոխության նկատմամբ լավատեսությունը[5]:

Այսպիսով, որոշման ընդունման պրոցեսի հիմնական առանձնահատկությունները հասկանալու, վարքի կանխատեսման և մոդելավորման համար կարևոր է այդ պրոցեսի համալիր և միջառարկայական դիտարկումը, որի առաջին քայլն էլ նյարդատնտեսագիտության՝ որպես գիտության առանձին բնագավառի առանձնացումն է: Հենց այս գիտության շրջանակներում էլ ուսումնասիրվում են որոշման ընդունման նյարդակենսաբանական մեխանիզմները, մասնավորապես առանձին կենսաբանական ակտիվ նյութերի մասնակցությունը և ազդեցությունը որոշման ընդունման պրոցեսի վրա: Արդեն իսկ իրականացված հետազոտությունները խոսում են որոշման ընդունման առավել մեծ նշանակություն ունեցող այլընտրանքների ընտրության փուլում այնպիսի նյարդահաղորդիչների մասնակցության մասին, ինչպիսիք են դոֆամինը, սերոտոնինը և օքսիտոցինը: Դոֆամինն ապահովում է հուզական վարքը, խրախուսմամբ պայմավորված որոշումների ընդունումը և սխալներից դասեր քաղելու ունակությունը, սերոտոնինի ֆունկցիան հիմնականում սոցիալական որոշումների կայացումն է, իսկ օքսիտոցինի պարագայում ապացուցվել է նրա կապը ալտրուիստական որոշումների ընդունման հետ:Հետազոտությունները վկայում են նաև հորմոնների, մասնավորապես տեստոստերոնիևկորտիզոլի մասնակցությունը որոշման ընդունման ժամանակ, որոնք ազդում են ռիսկային որոշումների կայացման վրա՝ մեծացնելով ռիսկի հակվածությունը մարդկանց մոտ հավելյալ քանակի դեպքում: Հաշվի առնելով տեսական վերլուծության արդյունքները կարելի է մշակել նյարդակենսաբանական տվյալների վրա հիմնված մոդելներ՝ դրանք կիրառելով որոշման ընդունման բազմասպարեզ իրավիճակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ключарев В. Ашмидс А., Шестакова А. Н. “Нейроэкономика: нейробиология принятия решений”/Экспериментальная психология, 2011, том 4, № 2, с. 14–35
2. Лерер Дж. “Как мы принимаем решения ” /Corpus, Астрель, 2010, стр. 352
3. Coates J. M., Gurnell M., Sarnyai Z. “From molecule to market: steroid hormones and financial risk-taking”/ Philos Trans R Soc Lond B Biol Sci. 2010 Jan 27; 365(1538): pp. 331–343.
4. Ghanemi A. “Neurotransmitters’ Activity and Pharmacotherapies: From Decision Making Process to Juridical Implications” International Journal of Advances in Applied Sciences (IJAAS) Vol. 2, No. 3, September 2013, pp. 137-140

5. Herbert J. "Testosterone, Corisole and Financial Risk-Taking" Front Behav Neurosci. 2018; 12: 101.
6. Nadle A., Jiao P., Johnson C., Alexander V., ZakP. "The Bull of Wall Street: Experimental Analysis of Testosterone and Asset Trading"/ Management Science Vol. 64, No. 9, 2018- pp. 3971-4470
7. Rogers D. R. "The Roles of Dopamine and Serotonin in Decision Making: Evidence from Pharmacological Experiments in Humans", Neuropsychopharmacology. 2011 Jan; 36(1): 114–132.
8. Zak P.J. "The Neurobiology of Trust" // Scientific American. — Springer Nature. — Vol. 298, iss. 6. — P. 88—95.

NEUROBIOLOGICAL CORRELATES OF DECISION MAKING

LALAYAN GAYANE
4th-year student of the Department of Psychology,
Faculty of Philosophy and Psychology, YSU
e-mail: lalayangayane90@gmail.com
Academic Supervisor: Stepanyan Lusine
PhD in Biology, Associate Professor

Throughout their conscious life, people face the need to choose one of two alternatives of behavior; therefore, interdisciplinary study of decision-making mechanisms becomes a priority in the context of a comprehensive study of the phenomenon and the development of effective mechanisms for predicting behavior. The aim of this work is to study the neurobiological correlates of decision-making, for the achievement of which the following tasks were set: to identify neurotransmitters involved in the decision-making process, to indicate the hormones involved in the decision-making process and their functions. Based on the theoretical analysis, it can be concluded that the decision-making process, in particular, at the stage of choosing one of the alternatives based on subjective value, is influenced by biologically active substances - neurotransmitters, the main of which are dopamine, serotonin and oxytocin. The first provides emotional behavior, the main function of serotonin is social decision making, and altruistic behavior is due to the amount of oxytocin. Research shows that hormones, especially testosterone and cortisol, which are involved in risky decision making, increase risk appetite. Summarizing the results of theoretical analysis, it is possible to develop models

based on biochemical and neurological data, applying them in multidisciplinary decision-making situations.

Key words: *decision making, biochemicals, neuroeconomics, neurotransmitter, hormone, brain centers, dopamine, serotonin, testosterone.*

НЕЙРОБИОЛОГИЧЕСКИЕ КОРРЕЛЯТЫ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ

ЛАЛАЯН ГАЯНЕ
Студентка 4 курса отделения психологии
факультета философии и психологии ЕГУ,
электронная почта: lalayangayane90@gmail.com
Научный руководитель: Степанян Лусине
Кандидат биологических наук, доцент

На протяжении всей своей сознательной жизни люди сталкиваются с необходимостью выбора одной из двух альтернатив поведения, поэтому междисциплинарное изучение механизмов принятия решений становится приоритетным в контексте комплексного исследования явления, разработки эффективных механизмов для прогнозирования поведения. Целью работы является изучение нейробиологических коррелят принятия решений, для достижения которого были поставлены следующие задачи: выделить нейромедиаторы, участвующие в процессе принятия решений, указать гормоны, участвующие в процессе принятия решений, и их функции. На основе теоретического анализа можно сделать вывод, что на процесс принятии решений, в частности, на этап выбора одной из альтернатив на основе субъективной ценности влияют биологически активные вещества - нейромедиаторы, основными из которых являются дофамин, серотонин и окситоцин, первый из которых обеспечивает эмоциональное поведение, основная функция серотонина принятие социальных решений, а альтруистическое поведение обусловлено количеством окситоцина. Исследования показывают, что гормоны, особенно тестостерон и кортизол, которые участвуют в принятии рискованных решений, повышают склонность к риску. Обобщая результаты теоретического анализа, можно разработать модели на основе биохимических и неврологических данных, применяя их в многопрофильных ситуациях принятия решений.

Ключевые слова: *принятие решений, биохимические вещества, нейроэкономика, нейромедиатор, гормон, центры мозга, дофамин, серотонин, тестостерон.*

ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԹԵՀՄԻՆԱ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի 2–րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ tehminagevorgyan20@mail.ru
Գիտական ղեկավար՝ Ղազարյան Օլգա
Գավառի պետական համալսարանի դասախոս

Կրտսեր դպրոցական տարիքում գործունեության առաջատար ձևը խաղային գործունեությունն է, որի ադյունքում երեխան ձեռք է բերում ինքնուրույնություն, ձևավորվում է համագործակցային կարողություններ, զարգանում է երեխաների տրամաբանական, ստեղծագործական, քննադատական մտածողությունը, երևակայությունը: Խաղերը երեխաների մտավոր դաստիարակության արժեքավոր միջոցներից են, որոնք խթանում են նրանց հոգեկան գործընթացները՝ հետաքրքրություն առաջացնելով ճանաչողական գործունեության նկատմամբ: Դրանք օգնում են ուսուցչին առավել մատչելի տարբերակով ներկայացնելու դասի թեմատիկան՝ ձևավորելով երեխայի երևակայելու, զգացմունքներն ու գործողությունները ինքնուրույն կարգավորելու ունակությունները: Ուսումնասիրության ընթացքում փորձ է արվել բացահայտել կրտսեր դպրոցում մայրենիի դասերին խաղերի դերն ու նշանակությունը և արդյունավետությունը, որոշել տարրական դպրոցում մայրենիի դասերին կիրառվող խաղերի կրթական, դաստիարակչական և զարգացնող հնարավորությունները, հիմնավորել խաղի կիրառման անհրաժեշտությունը ուսուցման գործընթացում:

Բանալի բառեր՝ *մայրենի, ուսուցում, գիտելիք, խաղ, զարգացնող, դիդակտիկ, շարժուն, հետազոտական, մտածողություն:*

Խաղը մարդու գործունեության հիմնական ձևերից է, մարդկային գոյության զարմանալի ու հետաքրքիր երևույթներից մեկը: Խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում է իր հզորությունը, խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և

հետաքրքրությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոցներից է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղային հնարների մանկավարժական արժեքն այս դեպքում այն է, որ խաղալիս ակտիվանում են երեխաների մտավոր գործունեությունը և ճանաչողական հետաքրքրությունները՝ նպաստելով ուսումնական նյութի գիտակցական յուրացմանը, ապահովելով միևնույն իրողության կրկնությունն իրականացվող անձանձիր գործողություններ, զարգացնելով սովորողների ինքնուրույնությունն ու ինքնագործունեությունը: Երեխան միայն այն ժամանակ անկեղծ կսիրի դպրոցը, դասարանը, երբ ուսուցիչը կպահպանի նրա համար այն ուրախությունները, որոնք երեխան ուներ մինչև այդ: Կարևորում ենք խաղերի դերը մայրենիի ուսուցման գործընթացում, քանի որ խաղն օգնում է ուսուցման գործընթացում բազմաթիվ նպատակների իրականացմանը, լուծվում են ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական բնույթի, կարգապահության, հաղորդակցման, միմյանց լսելու կարողության և համագործակցության զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրներ:

Առանձնացնում ենք մի քանի տեսակի խաղեր, որոնք հաջորդում են իրար՝ երեխայի զարգացմանը զուգընթաց: Այդ խաղատեսակներն են՝

դիդակտիկ

շարժուն

զարգացնող

հետազոտական

Դիդակտիկ խաղերը նպաստում են երեխաների ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ինքնահիրացմանը, տարբեր դրդապատճառներով պայմանավորված՝ դրանք ձևավորում են հաջողության, հաղթանակի հասնելու կայուն ձգտումներ, ուրեմն նաև կամային որակները: Խաղի ժամանակ ձևավորվում ու զարգանում են անձնային բազմաթիվ որակներ՝ համառություն, ճարպկություն, աշխատասիրություն, արդարություն, արագ կողմնորոշվելու, կանխատեսելու ունակություններ: Խաղի ընթացքում երեխաները քննարկում են, վերլուծում, կանխատեսում, կշռադատում: Օրինակ՝

Վանկատիր բառը

Խաղի նպատակը՝ ամրակայել բառը վանկերի բաժանելու հմտությունը, արագ կողմնորոշվելու, ինքնուրույն աշխատելու կարողությունը:

Խաղի ընթացքը՝ խաղ-վարժությունը կատարելուց առաջ երեխաների հետ վերհիշում ենք գաղտնավանկի ը-ի կանոնը, այնուհետև յուրաքանչյուր

երեխային կտրվի երկու բառ, սկզբից աշակերտները ծափերի միջոցով կբաժանեն վանկերը, հետո բառերը կգրեն գրատախտակի վրա, ապա՝ տետրում: Օրինակ՝

նկար, սանր, ծրար, մտրակ

նը-կար, սա-նըր, ծը-րար, մըտ-րակ:

Շարժուն խաղերի կիրառման ժամանակ երեխաների մեջ ձևավորվում են բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ քաջությունը, ճարպկությունը, հնարամտությունը, համբերատարությունը, զսպվածությունը, կարգ ու կանոնին ենթարկվելու կարողությունը: Ուշագրավ է, որ շարժուն խաղերի կանոնները երեխաները հաճախ իրենք են ստեղծում և իրենք էլ վերահսկում են դրանց պահպանումը, դրանք խախտողների համար սահմանում որոշակի պատիժներ: Խաղի ժամանակ երեխաները ազատ են և իրենց դրսևորում են այնպես, ինչպես կան իրականում: Մայրենիի ուսուցման ընթացքում շատ հաճախ են կիրառվում շարժուն խաղեր, ուսուցիչները հաճախ ֆիզկուլտդադարը փոխարինում են շարժուն խաղերով:Օրինակ՝

Դե գտի՛ր առարկան

Խաղի նպատակը՝ զարգացնել երեխաների ուշադրությունը, զգոնությունն ու ինչյունային լսողությունը: Դասարանում ստեղծել աշխույժ մթնոլորտ՝ բեռնաթափելով երեխաների լարվածությունը:

Խաղի ընթացքը՝ ուսուցչուհին իր սեղանին դնում է տարբեր իրեր, որոնք այդ պահին ձեռքի տակ կան: Աշակերտները հերթով մոտենում են սեղանին, ուսուցչուհու հանձնարարությամբ ուշադիր նայում են դասավորված առարկաներին, աշակերտը պետք է դուրս գա դասարանից այդ պահին ուսուցչուհին առարկաներից մեկը վերցնում և տալիս է աշակերտներից մեկին, որ պահի, երբ աշակերտը մտնում է դասարան, պետք է կռահի, թե սեղանից որ առարկան է բացակայում, ասի առարկայի անունը, որոշի, թե ում մոտ է այն: Որքան մոտենում է այն երեխային, որի մոտ պահված է առարկան, այդքան դասարանի ծափերը բարձր են, որքան հեռանում է, այդքան ցածրանում է ծափերի ձայնը:

Զարգացնող խաղերը նպաստում են երեխաների ստեղծագործական ունակությունների, տրամաբանական մտածողության, երևակայության, վերլուծական, համադրական ունակությունների, ինչպես նաև կրտսեր դպրոցականի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Զարգացնող խաղերը կարող են լինել տարաբնույթ, նրանք չեն ձանձրացնում և ստեղծում են միջավայր՝ ազատ և ուրախ ստեղծագործելու համար: Օրինակ՝

Բառային քարտեր

Խաղի նպատակը՝ զարգացնել ստեղծագործական ունակությունը, բառապաշարը, վերհիշել տառերը:

Խաղի ընթացքը՝ ուսուցչուհին փոքրիկ պարկի մեջ լցնում է տարբեր գույնի քարտեր, յուրաքանչյուրի վրա գրված է մեկ տառ: Ուսուցչուհին անցնում է շարքերով, պարկից հանում է քարտը և յուրաքանչյուր երեխայի տալիս է մեկ քարտ: Երբ ուսուցչուհին ավարտում է, երեխաները հերթով կանգնում են, ասում են քարտի գույնը, քարտի վրա գրված տառը և գրում գրատախտակին, այդ տառով կազմում ՝ 3 կամ 4 բառ: Օրինակ՝

Իմ քարտը կարմիր է, վրան գրված է Ա տառը (գրատախտակին գրում է բառեր) աղվես, անտառ, աթոռ, աստղ:

Հետազոտական խաղերն օգնում են իրականացնել կոնկրետ հետազոտություններ, օրինակ՝ շարադրություն գրելու եղանակը, խնդրի լուծումը:

Հետազոտական խաղերի մեջ ներկայացվում է գործողության ընթացքը, այս տեսակի խաղերն անցկացվում են պայմանական՝ իրականությանը նման: Խաղերի իրականացման համար կազմվում է խաղի սցենարը՝ մասնակից դերակատարների դերերի հստակ կատարման համար: Օրինակ՝

Խաչբառ

Խաղի նպատակը՝ զարգացնել որոնելու, կազմելու, առանձնացնելու կարողությունը:

Խաղի ընթացքը՝ երեխաները կարդում են օրվա դասը և ամեն մեկը դասից դուրս է գրում բառեր ու կազմում խաչբառ: Օրինակ՝ Հ. Շիրազի «Մայրս» բանաստեղծությունից դուրս են գրել ճար, արեգակ, ճորտ, ճրագ, աղբյուր բառերը:

Ամփոփելով ուսումնասիրությունների արդյունքները՝ կարող ենք փաստել, որ տարրական դպրոցում մայրենիի դասագործունեության ընթացքում կիրառվում են տարբեր խաղեր՝ կախված բնույթից, նպատակից, նշանակությունից, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակից: Խաղերն ուսումնական գործընթացում ունեն ուսուցանող, դաստիարակող և զարգացնող նշանակություն, նպաստում են սովորողների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Ուստի մենք կարևորում ենք խաղերի կիրառումը ուսումնական գործընթացում և առաջարկում գործածել հատկապես այն ժամանակ, երբ անհրաժեշտ է երեխաների ուսումնասիրած ուսումնական նյութի յուրացման մակարդակը հասցնել գիտակցական աստիճանի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2015թ., 316 էջ:
2. Գյուլամիրյան Ջ., Խոսքի զարգացում. տեսություն և պրակտիկա, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ., 296 էջ:
3. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ,:
4. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., ԵՀՀ, 1978թ,, 324 էջ:
5. Խաչատրյան Հ., Թորոսյան Կ., Վեց տարեկան դպրոցականների մեկնարկը, Երևան, ԿԱԻ, 2006թ., 66 էջ:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980թ,, 564 էջ:
7. https://dpir.mskh.am/hy/node
8. https://anavdalyan.wordpress.com

THE ROLE OF GAMES IN TEACHING THE MOTHER TONGUE

GEVORGYAN TEHMINA
2nd-year undergraduate student of "Primary Pedagogy and Methodology,
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: tehminagevorgyan20@mail.ru
Academic Supervisor: Ghazaryan Olga
GSU lecturer

The leading form of activity at primary school age is playing activity, as a result of which the child acquires independence, develops cooperation skills, children's logical, creative, critical thinking and imagination. Games are a valuable means of educating children mentally, stimulating their mental processes, arousing interest in cognitive activities. They help the teacher to present the topic of the lesson in a more accessible way, developing the children's ability to imagine, regulate emotions and actions on their own. During the study, an attempt was made to identify the role and significance of games at mother tongue classes in primary school, the effectiveness of games used, to determine the educational and development possibilities of games used at mother tongue classes in elementary school and to substantiate the need to use the game in the learning process.

Key words: *native, learning, knowledge, game, developing, didactic, agile, research, thinking.*

РОЛЬ ИГР В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ РОДНОМУ ЯЗЫКУ

ГЕВОРГЯН ТЕГМИНА

Студентка 2-ого курса отделения «Начальная педагогика и методика»
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: tehminagevorgyan20@mail.ru
Научный руководитель: Казарян Ольга
Преподаватель ГГУ

Ведущей формой деятельности в младшем школьном возрасте является игровая деятельность, в результате чего ребенок приобретает самостоятельность, формируется совместные навыки, развивается у детей логическое, творческое, критическое мышление и воображение. Игры являются ценными иструментами для умственного воспитания детей, которые стимулируют их мыслительные процессы, пробуждая интерес к познавательной деятельности. Они помогают учителю более доступно изложить тему урока, формируя у ребенка способности воображать, регулировать эмоциии действия самостоятельно. В ходе исследования была предпринята попытка выявить роль изначение игр на уроках родного языка в начальной школе, эффективность используемых игр, определить учебно-развивающие возможности игр, используемых на уроках родного языка в начальной школе, обосновать необходимость использования игр в учебному процессе.

Ключевые слова: *родной, обучение, знание, игра, развивающая, дидактическая, гибкая, исследовательская, мышление.*

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊՈՂՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ lusinepoghosyan@list.ru
Գիտական ղեկավար՝ Քուրքչյան Լուսիկ
մանկավարժական գիտությունների թեկնածու,
հոգեբանության դոցենտ

Այս հետազոտության նպատակն է պարզել մասնագիտական կողմնորոշման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, ընտրության շարժառիթները դեռահասության տարիքում: Հիմնական խնդիրներն են՝ վերլուծել մասնագիտական կողմնորոշման հիմնախնդիրը դեռահասության տարիքում, ախտորոշել դեռահասների մասնագիտական կողմնորոշման հիմնական միտումները, գործնական թեստային պարապմունքների և հոգեբանական փորձարարական ասումնասիրությունների իրականացման միջոցով բացահայտել, վերլուծել և որոշակի ցուցանիշներով պարզաբանել մասնագիտական կողմնորոշման խնդիրը դեռահասների շրջանում: Հետազոտությունը կատարվել է Ե.Կլիմովի «Դիֆերենցիալ-ախտորոշիչ հարցարանի» միջոցով, որը թույլ տվեց պարզել, թե դեռահասների որ խումբը որ մասնագիտության նկատմամբ ունի հակումներ: Հաշվի առնելով, որ արտաքին ուղղվածության գործոններից առաջնայինն ու գերական ծնողների դիրքորոշումն է, իրականացվել է հետազոտություն նաև ծնողների շրջանում «Իմ դերը երեխայիս մասնագիտության ընտրության հարցում» հարցարանի միջոցով, որը թույլ է տվել բացահայտել ծնողների մասնակցության չափը երեխայի մասնագիտության ընտրության հարցում: Հիմք ընդունելով մանկավարժահոգեբանական գրականությունը և կատարելով հետազոտական աշխատանքներ դեռահասների և նրանց ծնողների շրջանում՝ կարելի է եզրակացնել, որ մասնագիտության ընտրության հիմնական դժվարությունները մեծ մասամբ կապված են ինֆորմացվածության ցածր մակարդակի հետ: Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ երեխաների մասնագիտական ընտրության հարցում մեծ է նաև միկրոխմբի դիրքորոշումը, դեռահասների բնակության վայրը, սոցիալական պայմանները:

Բանալի բառեր՝ *մասնագիտական կողմնորոշում, դեռահասության շրջան, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, անձնային առանձնահատկություններ, անհատական-հոգեբանական որակներ:*

Արդի ժամանակներում հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը արագ տեմպով զարգացում և վերափոխումներ է ապրում, որը անդրադառնում է մատաղ սերնդի կայացմանը: Այդ վերափոխումներից և բուռն զարգացումներից զերծ չի մնացել նաև կրթական համակարգը: Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվել են կրթական համակարգի խորը բարեփոխումներ: Մասնագիտական կողմնորոշման խնդրի արդիականացման պայմաններից մեկը ավագ դպրոցների առանձնացումն է հանրակրթական դպրոցից, քանի որ միջին դպրոցն ավարտելուց հետո դեռահասները մասնագիտական կողմնորոշման խնդրի առջև են կանգնում: Հանրակրթության ոլորտում իրականացվող շարունակական և լայնածավալ բարեփոխումները, ի թիվս այլ նպատակների, միտված են նաև ապահովելու դեռահասների պատրաստվածությունը աշխատաշուկա մտնելու և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալուն:.

Մասնագիտական կողմնորոշումը որոշակի մասնագիտության կամ աշխատանքային գործունեության ոլորտի ինքնուրույն և գիտակցաբար կատարվող ընտրությունն է, որն իրագործվում է մասնագիտության ընտրության սուբյեկտի ներքին ռեսուրսների վերլուծության և մասնագիտական պահանջների հետ համահարաբերակցման արդյունքում:

Ժամանակակից հոգեբանության մեջ մասնագիտական կողմնորոշման, մասնագիտության ընտրության հիմնախնդիրներին անդրադարձել են խորհրդային (Կ. Մ. Գուրևիչ, Ե. Ա. Կլիմով, Տ. Վ. Կուդրյավցև, Ե. Պ. Երմոլաև, Վ. Ա. Վասիլյով, Ե. Ի. Ն. Ս. Պրյաժնիկով և այլք) և արտասահմանյան մի շարք հեղինակներ (Փ. Պարսոնս, Ջ. Հոլլանդ, Դ. Սյուպեր, Ու. Մոզեր, Է., Դ. Տիդման, Է. Բեռն, Է. Է. Շպրանգեր և ուրիշներ)[1]:

[1] Տե՛ս Քուրքչյան Լ.Ն., Աթայան Ն.Ա., Մասնագիտական ինքնորոշման դրդապատճառների հիմնախնդիրը դեռահասության տարիքում, «ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու», 3, Եր., 2016, էջ 721-728:

Դեռահասության տարիքում մասնագիտական կողմնորոշումը ուսումնասիրել են Ի. Վ. Սլոբոդովը, Է. Էրիկսոնը և այլք, որոնք ընգծում են, որ անհատականությունը և մասնագիտական կողմնորոշումը դեռահասության տարիքին բնորոշ գծեր են[2]: Մասնագիտական կողմնորոշումը կարգավորվում և համակարգվում են դեռահասների շարժառիթային միտումներով, որոնք բխում են նրանց անմիջական հետաքրքրություններից, ձևավորվում է աշխարհայացքը:

Մասնագիտական ինքնորոշումը բարդ և երկարատև գործընթաց է, որն ընդգրկում է կյանքի զգալի ժամանակահատվածը: Մասնագիտության ընտրությունը կատարելու համար անհրաժեշտ է հարաբերակցել բազմաթիվ գործոններ՝ սեփական կարիքները, ինքնագնահատականը, երազանքները, հետաքրքրությունները, խառնվածքը, կարողությունները, առողջական վիճակը և այլն: Եվ հենց այս գործոններն են կազմում մասնագիտության ընտրության վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը:

Մասնագիտական կողմնորոշման գործոնները կարող են ինչպես նպաստել և դրականորեն ներգործել մասնագիտության ընտրության գործընթացի վրա, այնպես էլ սահմանափակել անձի ընտրության հնարավորությունները, իսկ առանձին դեպքերում նաև խոչընդոտել մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը: Այդ բոլոր գործոնները բաժանվում են երկու մեծ խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ գործոններ:

Ընտանիքի ավագ անդամների դիրքորոշումները, նրանց կարծիքներն ու պատկերացումները:

Շատ հաճախ ծնողները երեխաներին ընձեռում են ընտրության լիակատար ազատություն՝ դրանով իսկ նրանցից պահանջելով ինքնուրույնություն, պատասխանատվություն, նախաձեռնողականություն: Պատահում է, որ ծնողները համաձայն չեն լինում երեխաների ընտրության հետ և առաջարկում են վերանայել իրենց ընտրությունը կամ էլ իրենք են ձեռնամուխ լինում մասնագիտության ընտրությանը: Մասնագիտության ճիշտ ընտրությանը հիմնականում խանգարում են ծնողների պահանջները, ովքեր ցանկանում են, որ իրենց երեխաները ապագայում կոմպենսացնեն թերությունները այն ոլորտներում, որտեղ իրենք՝ ծնողները, չեն կարողացել կայանալ: Նրանք

[2] Տե՛ս Мальцева Л.В., Теоретические подходы к изучению сущности профессионального самоопределения в отечественной и зарубежной психологии, М., 2008.

կարծում են, որ իրենց երեխաները կարող են կայանալ այդ մասնագիտությունների մեջ: Մեծ մասամբ երեխաները համաձայնում են ծնողների ընտրության հետ և ընդունվում տվյալ ուսումնական հաստատությունը՝ մի կողմ դնելով իրենց սեփական պատկերացումները, նպատակները տվյալ մասնագիտության վերաբերյալ:

Հասակակիցների, համադասարանցիների, ընկերների դիրքորոշումը: Հատկապես ընկերական հարաբերությունները այդ տարիքում շատ ամուր են լինում, և նրանց ազդեցությունը մասնագիտության ընտրության վրա բացառված չէ: Երբեմն դեռահասը ընտրում է այս կամ այն մասնագիտությունը, քանի որ իր ընկերներից մեկը կամ երկուսը ևս ընտրել կամ հետաքրքրություն են ցուցաբերում հենց այդ մասնագիտության նկատմամբ: Ուստի միկրոխմբի դիրքորոշումը կարող է որոշիչ լինել մասնագիտական ինքնորոշման մեջ

Ուսուցիչների և դասղեկի դիրքորոշումը: Յուրաքանչյուր ուսուցիչ, ուսումնական գործունեության ընթացքում դիտելով սովորողներին՝ «ներթափանցում է աշակերտի արտաքին դրսևորումների ճակատ, կատարում է եզրակացություններ սովորողի հետաքրքրությունների, հակումների, վարքի, ընդունակությունների, պատրաստվածության վերաբերյալ» և հաճախ ավելի լավ է ճանաչում դեռահասին և կարող է ճիշտ ուղղություն տալ և ուղորդել երեխային, սակայն չմերժելով երեխայի սեփական ցանկությունները:

Հասարակական ճանաչման մեջ պահանջների մակարդակը: Երբեմն դեռահասների հետաքրքրության կենտրոնում են հայտնվում այն մասնագիտությունները, որոնք «նորաձև» են կամ էլ բարձր վարձատրվող, չնայած որ այդ մասնագիտությունները բացարձակապես չեն համապատասխանում իրենց ներաշխարհին և կարողություններին: Եվ արդյունքում դեռահասների մոտ առաջանում է հիասթափություն:

Իրազեկվածություն: Մասնագիտության ընտրության կարևոր գործոն է ճշգրիտ, չխեղաթյուրված տեղեկատվությունը դեռահասի ընտրած մասնագիտության վերաբերյալ: Երբեմն ոչ ճշգրիտ տեղեկությունները պատրանքներ են ստեղծում դեռահասի մոտ: Իրազեկվածության կամ տեղեկատվական դաշտից սխալ ինֆորմացիան կարող է հանգեցնել մասնագիտության սխալ ընտրության: Իսկ ահա մասնագիտությունների ուսումնասիրությունը օգնում է նավարկելու մասնագիտությունների լայն օվկիանում, որի հետևանքով էլ աճում է նաև հետաքրքրությունը այլ, նախկինում անհայտ մասնագիտությունների նկատմամբ:

Սուբյեկտիվ գործոններ:

Անհատական մասնագիտական ծրագրեր: Մարդու կյանքում և վարքում մոտիկ և հեռու ապագայի մասին պատկերացումները շատ կարևոր դեր են խաղում: Դեռահասը ինքնուրույն փորձում է մտովի գծել իր անցնելիք ուղին. այն իր մեջ ընդգրկում է ապագայի գլխավոր նպատակները, նրանց հասնելու ճանապարհները և միջոցները:

Ընդունակություններ: Շատ կարևոր է դիտարկել դեռահասի ընդունակությունները և տաղանդը ոչ միայն ուսուցման մեջ, այլև հասարակայնորեն արժեքավոր գործունեության այլ ձևերի մեջ, քանի որ հենց ընդունակություններն են իրենց մեջ բովանդակում ապագա մասնագիտական պիտանելիությունը:

Սուբյեկտիվ անձնային, հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, անհատական-տիպոլոգիական որակները[3]. հետաքրքրությունները, իմացական, մասնագիտական հակումները, հավակնությունների մակարդակը, խառնվածքը, բնավորությունը, սոցիալական դիրքորոշումները, դրդապատճառային ոլորտի ցուցանիշները և այլն:

Հակումները առաջանում և ձևավորվում են գործունեության մեջ: Գիտակցաբար ընդգրկվելով գործունեության տարբեր ոլորտներ՝ երեխան կարող է փոխել իր հետաքրքրությունները, իսկ դա նշանակում է, որ փոխվում է նաև նրա ուղղվածությունը: Ավանդական դպրոցների համար դա կարևոր է, քանի որ մասնագիտական հետաքրքրությունները ճանապարհ են դեպի ապագա[4]:

Այսպիսով, ամփոփելով կարելի է ընդգծել հետևյալը.

1.Անձի ադեկվատ ինքնագնահատականը, ունկությունները, հետաքրքրությունները, հակումները, հնարավորությունները, ցանկությունները, հիմնական գիտելիքները և հմտությունները այն ոլորտներում, որ ընտրվում է մասնագիտությունը:

2.Դպրոցում մասնագիտական կողմնորոշման երկրորդ կարևոր կետը տեղեկությունն է այն մասին, թե ինչով են զբաղված այլ մարդիկ: Պրակտիկան ցույց է տալիս, որ դեռահասների և երիտասարդների մասնագիտական

[3] Տե՛ս Քուրքչյան Լ.Ն., Աթայան Ն.Ա.,Մասնագիտական ինքնորոշման դրդապատճառների հիմնախնդիրը դեռահասության տարիքում,ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 3, Եր., 2016, էջ 721-728:

[4] Տե՛ս http://molodezh79.ru/

ընտրության ամենատարածված դժվարություններն ու սխալները հետևյալներն են. ընտրության ուղեցույցը՝ հիմնված տեղեկատվության ոչ ճիշտ կամ կողմնակալ աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա. գործունեության որոշակի ոլորտի վերաբերյալ ստացված տեղեկատվության սխալ վերլուծություն և համակարգում:

3.Անձի անհատական հոգեբանական բնութագրերի գերագնահատում կամ թերագնահատում, ոչ ադեկվատ ինքնագնահատականը՝ սեփական ունակությունների սխալ գնահատում, ոչ ճիշտ ընկալում ընտրված մասնագիտությունը յուրացնելու հնարավորությունների վերաբերյալ, դեռահասի համար հեղինակություն հանդիսացող մարդկանց կողմից ճնշման գործադրում, կարծրատիպերի առկայություն և այլն: Կարևոր գործոն է նաև որոշակի մասնագիտության ներկայացուցչի անձնական հատկությունների նկատմամբ համակրանքի հիման վրա դպրոցականի կողմից այս կամ այն մասնագիտությանը առաջնահերթություն տալը:


Ելնելով վերոնշվածից՝ նպատակ դրեցինք իրականացնել հետազոտություն Գավառ քաղաքի 14-15 տարեկան դեռահասների շրջանում՝ թվով 24 աշակերտ /15աղջիկ, 9 տղա/՝ պարզելու համար, թե դեռահասները մասնագիտական որ տիպի նկատմամբ ունեն հակումներ: Հետազոտությունը կատարվել է Ե.Կլիմովի «Մասնագիտական տիպերի դասակարգման մեթոդիկայի» «Դիֆերենցիալ-ախտորոշիչ հարցարանի» միջոցով[5]:

Հաշվի առնելով, որ արտաքին ուղղվածության գործոններից առաջնայինն ու գերական ծնողների դիրքորոշումն է, իրականացվել է հետազոտություն նաև ծնողների շրջանում՝ «Իմ դերը երեխայիս մասնագիտության ընտրության հարցում» հարցարանի միջոցով, որը թույլ է տվել բացահայտել ծնողների մասնակցության չափը երեխայի մասնագիտության ընտրության հարցում[6]:

Արդյունքների քանակական և որակական վերլուծությունը ներկայացված է գծանկար 1–ում:

[5] Տե՛ս Климов Е.А.Психология профессионального самоопределения». М. 2004 -400с

[6] Տե՛ս http://www.vashpsixolog.ru/



Գծանկար 1/ Ե. Կլիմովի «Դիֆերենցիալ-ախտորոշիչ հարցարանի» պատասխանները/


Այսպիսով, ստացված արդյունքները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հետազոտվող 24 աշակերտներից 8-ին (33%) բնորոշ է մարդ-նշանային համակարգը, այսինքն՝ նրանց բնորոշ են պայմանական նշանները, թվերը, ծածկագրերը, աղյուսակները, գծագրերը, որոնց համապատասխանում են հետևյալ մասնագիտությունները՝ թարգմանիչ, ծրագրավորող, հաշվապահ և այլն:

Դեռահասներից 6-ին (25%) բնորոշ է մարդ-մարդ տիպը, որը ենթադրում է հիմնական աշխատանք մարդկանց հետ և մասնագիտական աշխատանքից բխող մշտական շփումները: Մասնագիտություններն են՝ բժիշկ, մանկավարժ, հոգեբան, ոստիկան և այլն:

Աշակերտներից 5-ի (21%) մոտ գերակայում է մարդ-տեխնիկա տիպը: Այստեղ աշխատանքի գլխավոր, առաջնային առարկան տեխնիկական օբյեկտներն են՝ մեքենաները, մեխանիզմները: Մասնագիտություններն են՝ ճարտարապետ, էլեկտրիկ, ինժեներ-մեխանիկ, շինարար և այլն: Աշակերտներից 3-ին (13%) բնորոշ է մարդ-բնություն տիպը, որը կապված է բնության երևույթների և օրգանիզմների հետ: Մասնագիտություններն են՝ գյուղատնտես, այգեգործ, կենսաբան, քիմիկոս, դեղագործ:

Դեռահասներից 2-ի (8%) մոտ գերակա է մարդ-գեղարվեստական կերպարը: Աշխատանքի գլխավոր առարկան այստեղ գեղարվեստական կերպարներն ու դրա կառուցման ձևերն են: Մասնագիտություններն են՝ դերասան, նկարիչ, երաժիշտ, դիզայներ, ոճաբան և այլն:

«Իմ դերը երեխայիս մասնագիտության ընտրության հարցում» հարցարանի արդյունքների քանակական և որակական վերլուծությունը ներկայացված է գծանկար 2–ում: Ծնողների համար նախատեսված հարցաթերթը թույլ է տալիս գնահատել ծնողների մասնակցությունը իրենց երեխայի մասնագիտական կողմնորոշման հարցում[7]:



(Գծապատկեր 2 ծնողների համար նախատեսված հարցաթերթի պատասխանները)

Ծնողներից 13-ի (52%) պատասխանների արդյունքում գրանցվել է 8-11 միավոր: Սա նշանակում է, որ նրանք գիտակցում են ընտանիքի դերը երեխայի մասնագիտական ընտրության, աշխատանքային գործունեությանը պատրաստելու հարցում: Ավելի ակտիվ մասնակցություն կարող են ունենալ երեխայի աշխատանքային գործունեության հարցում:

Ծնողներից 7-ի (28%)պատասխանների արդյունքում ստացվել է 4-7 միավոր, այս արդյունքը հուշում է, որ նրանք մեծ ուշադրություն չեն դարձնում իրենց որդու (դստեր) աշխատանքային դաստիարակությանը և նրա՝ հետագա մասնագիտությանը նախապատրաստվելուն: Պետք է հիշել, որ երեխային սպասում է ոչ հեշտ ուսումնառություն, աշխատանք: Պետք է հիմա սովորեցնել նրան հաղթահարել դժվարությունները, հետաքրքրություն առաջացնել աշխատանքի նկատմամբ:

Ծնողներից 5-ի (20%) պատասխանների արդյունքում գրանցվել է 12-16 միավոր: Նման արդյունքը թույլ է տալիս եզրակացնել, որ ծնողները ձգտում են ակտիվորեն ուսուցանել երեխային օգտակար աշխատանքային հմտություններ, օգնում են երեխային, որ ցույց տա իր հետաքրքրությունները, բացահայտի իր կարողությունները և հակումները:

[7] Տե՛ս http://www.vashpsixolog.ru/

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ծնողների մեծամասնությունը (52%) լուրջ և խիստ է մոտենում երեխային մասնագիտական ընտրությանը և աշխատանքային գործունեությանը պատրաստելուն: Ինչպես նաև քաջ գիտակցում են ընտանիքի դերը երեխայի մասնագիտության ընտրության հարցում:

Այսպիսով, կատարելով հետազոտական աշխատանք դեռահասների և նրանց ծնողների շրջանում՝ կարելի է եզրակացնել, որ մասնագիտության ընտրության հիմնական դժվարությունները մեծ մասամբ կապված են ինֆորմացվածության ցածր մակարդակի և տեղեկատվական դաշտից վերցված ոչ բավարար ինֆորմացիայի հետ: Ելնելով արդի աշխատաշուկայի պահանջներից՝ կարևորվում է.

հանրակրթական ուսումնական հաստատություններում դեռահասների համար իրականացնել մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասընթացներ, որոնք թույլ կտան ունենալ մասնագիտության մասին լիարժեք պատկերացումներ և ճիշտ մասնագիտական կողմնորոշում,

մանկավարժների համար վերապատրաստման ծրագրերի կազմում՝ մասնագիտական կողմնորոշում իրականացնելու նպատակով,

հանդիպում-քննարկումներ ոլորտային մասնագետների հետ՝ դեռահաս-ծնող, ծնող-մասնագետ, դեռահաս-մասնագետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Քուրքչյան Լ. Ն., Աթայան Ն. Ա., Մասնագիտական ինքնորոշման դրդապատճառների հիմնախնդիրը դեռահասության տարիքում,ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 3, Եր., 2016թ., էջ 721-728:
2. Климов Е. А., Психология профессионального самоопределения, М., 2004, 400с.
3. Мальцева Л. В., Теоретические подходы к изучению сущности профессионального самооп ределения в отечественной и зарубежной психологии, М., 2008
4. http://molodezh79.ru/
5. http://www.vashpsixolog.ru/

FACTORS OF PROFESSIONAL ORIENTATION AMONG TEENAGERS

POGHOSYAN LUSINE
3rd-year student of Department of History,
Faculty of Humantites, Gavar State University
e-mail: lusinepoghosyan@list.ru
Academic Supervisor: Qurqchyan Lusik
PhD in Pedagogical Sciences, Assistant Professor

The aim of this study is to identify the objective and subjective factors of professional orientation and the motives of choice in adolescence. The main tasks are the analysis of the problem of professional orientation in adolescence, as well as diagnostics of the main trends in professional orientation of adolescents. With the help of practical tests, psychological and experimental studies, the problem of professional orientation of adolescents was clarified and analyzed with certain indicators. The study was carried out by Yu.E. Klimov in his "Methods of professional classification" with the help of the "Differential-diagnostic questionnaire", which made it possible to find out which group of adolescents has a propensity for which profession. Taking into account that one of the crucial and dominant factors of external orientation is the position of the parents, a survey was conducted among the parents using the questionnaire "My role in the professional choice of my child", which made it possible to find out parents' level of participation in the professional orientation of their children. Based on the pedagogical and psychological literature and carrying out researches among adolescents and their parents, it can be concluded that the main difficulties in choosing a profession are largely associated with a low level of awareness. In the course of the study, it turned out that the position of the micro group, the place of residence of adolescents and social conditions are of great importance in terms of the professional choice of children.

Key words: *professional orientation, adolescence, objective and subjective factors, personal characteristics, individual-typological qualities.*

ФАКТОРЫ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ОРИЕНТАЦИИ В ПОДРОСТКОВОМ ВОЗРАСТЕ

ПОГОСЯН ЛУСИНЕ
Студентка 3 курса отделения истории
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: lusinepoghosyan@list.ru
Научный руководитель: Куркчян Лусик
Кандидат педагогических наук, доцент

Целью данной исследовательской статьи является выявление объективно-субъективных факторов профессиональной ориентации, мотивы выбора в подростковом возрасте. Основные задачи - анализ проблемы профессиональной ориентации в подростковом возрасте, а также диагностика основных тенденций профессиональной ориентации подростков. С помощью практических тестов, психологических и экспериментальных исследований проблема профессиональной ориентации подростков была прояснена и проанализирована с определенными показателями. Исследование проведено Ю.Е.Климовым «Методика профессиональной классификации» с помощью «Дифференциально-диагностической анкеты», которое позволило выяснить, какая группа подростков имеет склонности к какой-либо профессии. Учитывая, что одним из факторов внешней ориентации является положение основных и доминирующих родителей, среди родителей был проведен опрос по анкете «Моя роль в выборе профессии моего ребенка», который позволил выяснить участие родителей в выборе профессии ребенка. На основании педагогико-психологической литературы, проведенных исследований среди подростков и их родителей, можно сделать вывод, что основные трудности при выборе профессии в большей степени связаны с низким уровнем информированности. В ходе исследования выяснилось, что положение микрогруппы, место проживания подростков и социальные условия велики в вопросе профессионального выбора детей.

Ключевые слова: *Профессиональная ориентация, подростковый возраст, объективные и субъективные факторы, личные особенности, индивидуально-типологические качества.*

ՔԱՂՑԿԵՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԾԱՂԻԿ
Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
«Հոգեբանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ mikayelyan1999yanyan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Գևորգյան Դավիթ
Երևանի պետական համալսարանի դասախոս, ասիստենտ

Մեր օրերում մեծ տարածում գտած հիվանդություններից մեկը՝ քաղցկեղը, մեր հասարակության մեջ առասպելականացված է: Այդ մասին են վկայում այն բոլոր անհիմն խոսակցությունները, որոնք տարածվել և շարունակում են տարածվել քաղցկեղ հիվանդության մասին: Ուստի մեր ուսումնասիրությունների հիմնական նպատակն էր պարզել, թե ինչ գործոններ են ազդում քաղցկեղի մասին տարածված միֆերի հանդեպ ընկալունակ լինելու համար: Ուսումնասիրությունն իրականացնելիս մենք առաջադրել ենք մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

ուսումնասիրել քաղցկեղ հիվանդությունը,

ուսումնասիրել քաղցկեղի վերաբերյալ տարածված խոսակցությունների նկատմամբ վստահության դրսևորումը՝ պայմանավորված անձնային առանձնահատկություններով և վերահսկման լոկուսով:

Հետազոտության համար ընտրվել են անձի ուսումնասիրման ստանդարտացված բազմամակարդակ մեթոդիկան (MMPI-ի կրճատ տարբերակ՝ ըստ Ֆ. Բերյոզինի, Մ. Միրոշնիկովի) և սուբյեկտիվ վերահսկման մակարդակի հարցարանը: Նաև ստեղծվել է քաղցկեղի մասին առասպելների վերաբերյալ հարցարան, որը ներառում է 12 փակ հարցեր: Հարցերը վերաբերում են հետազոտվողների՝ քաղցկեղի հանդեպ ունեցած վերաբերմունքին, պատկերացումներին, դիրքորոշումներին: Տեսական նյութի ուսումնասիրության և մեր կողմից ընտրված մեթոդիկայի կիրառության արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

Անձնային պրոֆիլը ոչ նշանակալի կապ ունի անձի մոտ քաղցկեղի մասին առասպելականացված պատկերացումների ամրապնդման գործում:

Վերահսկման լոկուսի էքստերնալ լինելը չի հանդիսանում մեծ ազդեցություն ունեցող գործոն քաղցկեղի մասին առասպելականացված պատկերացումների ամրապնդման համար:

Բանալի բառեր՝ *քաղցկեղ, առասպել, անձնային առանձնահատկություն, վերահսկման լոկուս, էքստերնալություն, առասպելականացված պատկերացում, ուսումնասիրություն, անձնային պրոֆիլ:*

Քաղցկեղը 20-րդ դարում ժամանակին չախտորոշվելու և դրան զուգահեռ ընթացող մահացու ելքերի ֆոնին հասարակության համար համարվում էր դարի չարիք, որը, ըստ ունեցած պատկերացումների, պատիժ էր բոլորի համար: Նման գաղափարների լայն տարածումը հիմք էր հանդիսանում հիվանդության հանդեպ ունեցած խիստ բացասական և երբեմն իրականությունից ամբողջովին կտրված պատկերացումների ձևավորման համար: Վերջինս նույնիսկ հանգեցրեց «կանցերոֆոբիա» եզրույթի առաջացմանը՝ վախ քաղցկեղով հիվանդանալուց: Նմանատիպ զարգացումները հիմք հանդիսացան տվյալ թեմայի շրջանակներում բազմաթիվ հետազոտությունների (Սեմյոնովա Ն. Վ., Լյաշկովսկայա Ս. Վ., Լիսենկո Ի. Ս., Չերնով Պ. Դ., 2018թ.) իրականացման համար: Այդ հետազոտություններում անդրադարձ է կատարվում հիմնականում հիվանդին բնորոշ առանձնահատկությունների և հիվանդության հանդեպ ունեցած դիրքորոշման կապին:

Հայ հասարակության մեջ քաղցկեղի վերաբերյալ ձևավորված պատկերացումների հիմքերը ուսումնասիրելու համար կատարված հետազոտությունները սակավաթիվ են: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում նկատվում է քաղցկեղով հիվանդ մարդկանց թվի նկատելի աճ [17]: Ենթադրվում էր, որ մեր հասարակությունը պետք է ավելի շատ տեղեկացված լիներ հիվանդության առանձնահատկությունների մասին: Սակայն նման տարածվածությունը ոչ միայն չի նպաստել հիվանդության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, այլ հակառակը՝ հիվանդության շուրջ ստեղծվել է առեղծվածային, սարսափելի, մշուշոտ պատկերացումների մի ամբողջ համակարգ, որը բնականաբար իր ազդեցությունն է ունենում հիվանդության նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև արդեն հիվանդ մարդու հոգեվիճակի վրա: Արդիական ենք համարում հետազոտել հայ հասարակության շրջանակներում քաղցկեղի մա-

սին մոտեցումները, որպեսզի ապահովենք ինչպես հիվանդության, այնպես էլ առասպելականացված պատկերացումների ձևավորման մասին համապարփակ տեղեկատվություն: Ուստի նախ և առաջ անդրադարձ կատարենք այն հիմնական երևույթներին, որոնք, ըստ մեզ, կարող են ազդեցություն ունենալ քաղցկեղի հանդեպ առասպելականացված պատկերացումների ձևավորման վրա: Առաջինը, ըստ էության, անձնային առանձնահատկություններն են, որոնք առավել խորքային և կայուն (երկարաժամկետ) են: Անձնային առանձնահատկությունների շարքում երբեմն դիտարկում են նաև մարդկանց դրդապատճառները, նրանց ձգտումները և կամքը, նրանց անձնային կայունությունը և անձնային նույնականությունը[3, 14]: Անձնային առանձնահատկությունների մեջ կարող ենք դիտարկել խառնվածքը, բնավորությունը, բնավորության շեշտվածությունները և անձնային խանգարումները, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ յուրահատկությունները և դասակարգումները: Տարբեր հատկանիշներ առանձնացնելով՝ գիտնականները բացատրել են մարդու անհատական հոգեբանական առանձնահատկությունների բնույթը, պարզել դրա ազդեցությունը այս կամ այն հոգեկան գործընթացի աշխատանքի վրա: Մեր անհատահոգեբանական առանձնահատկությունները իրենց ազդեցությունն են ունենում մեր պատկերացումների, դիրքորոշումների, կարծիքների վրա:

Կարող ենք խոսել նաև այն մասին, որ դրան զուգակցվում է այնպիսի երևույթ ինչպիսին է վերահսկման լոկուսը, որը բավականին նկատելի է դառնում մեր կողմից որոշ երևույթների հանդեպ ունեցած դիրքորոշումների արտահայտման ժամանակ: Վերահսկման լոկուսը մարդկանց հակումն է սեփական գործունեության պատասխանատվությունը դնել արտաքին կամ ներքին գործոնների վրա: Վերահսկման լոկուսը ձևավորվում է մարդկանց սոցիալիզացիայի արդյունքում և գոյություն չունի մաքուր ձևով, այսինքն՝ մեկը միշտ դոմինանտում է մյուսին, բայց չի բացառում այն ամբողջությամբ[20, 10]: Վերահսկման լոկուսի ներքին և արտաքին տեսակները հաճախ անվանում են ինտերնալություն և էքստերնալություն[11]:

Այս ամենը նշելուց հետո անհրաժեշտություն է առաջանում անդրադարձ կատարել նաև քաղցկեղին: Քաղցկեղ անվանվում են մի խումբ օնկոլոգիական հիվանդություններ, որոնք ուղեկցվում են չարորակ գոյացությունների աճով [9]: Քաղցկեղի ծանր հետևանքները կարելի է նվազեցնել, եթե ժամանակին այն հայտնաբերվի և վերահսկողություն սահմանվի այն հիվանդների նկատմամբ, որոնց մոտ զարգանում է օնկոլոգիական հիվանդու-

թյուն: Վաղ ախտորոշման և համապատասխան բուժման ժամանակ կա մեծ հավանականություն քաղցկեղի շատ տեսակների հաղթահարման համար[15]:

Անդրադառնանք այն հոգեբանական առանձնահատկություններին, որոնք ունեն քաղցկեղով հիվանդները: «Չարորակ հիվանդություն» ախտորոշումը մեծ մասամբ համարվում է ուժեղ սթրես յուրաքանչյուրի համար, և այն ակտիվացնում է մի շարք հոգեբանական հակազդումներ: Կլինիկական հոգեբանության տեսանկյունից օնկոլոգիական հիվանդությունները հաճախ դասակարգվում են որպես ճգնաժամային և արտակարգ իրավիճակներ: Այդպիսի իրավիճակներին բնորոշ են մի շարք յուրահատուկ նշաններ՝ ապագայի անորոշությունը, մինչ այդ ստեղծված աշխարհի պատկերի փլուզումը, իրավիճակի հանդեպ վերահսկողության բացակայությունը, որի արդյունքում առաջանում է անորոշության զգացում, որն իր հերթին ազդում է հոգեկան կայունության և համեմատաբար դրական դինամիկայի վրա, հենց հիվանդության և նրա հանդեպ ունեցած ռեակցիաների վրա:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ ՀՀ տարածքում շատ քիչ են հավուր պատշաճի ուսումնասիրությունները, որոնք ընդգրկում են այս ոլորտը, և միգուցե այդ ամենով է պայմանավորված այն հանգամանքը, որ հիվանդության մասին թյուր կարծիք է ձևավորվում և նպաստող հանգամանքներ են ի հայտ գալիս կեղծ գիտական առասպելների տարածման համար, որը խոսում է այն մասին, որ առողջապահության ոլորտում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվում այս խնդրին և որը բնականաբար ունենում է իր բացասական հետևանքները: Այդ բացասական հետևանքներից մեկն էլ, այսպես կոչված, առասպելների առաջացումն է:

Առասպելը համարվում է սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի ամենակարևոր բաղադրիչներից մեկը: Այն բավարարում է մարդու՝ աշխարհի մասին ամբողջական պատկեր ունենալու պահանջմունքը, կազմակերպում և կառավարում է հասարակական կյանքը՝ պատմության վաղ փուլերում՝ ամբողջությամբ, իսկ ավելի ուշ հանդես է գալիս գաղափարախոսության, գիտության, արվեստի հետ միասին[7]: Ի տարբերություն հին ժամանակների՝ ներկայումս առասպելականացվում է ոչ թե բնությունը, այլ մարդու սոցիալական և հուզական կյանքը: Ներկայումս բավականին արդի գործընթաց է՝ ռեմիֆոլոգիզացիա, երբ միֆոլոգիական աշխարհընկալումը մեծացնում է իր ազդեցության ոլորտը և վայրը, մասնավորապես արվեստում, քաղաքականության մեջ և նույնիսկ գիտության մեջ: Այն ստանում է

կարևոր, երբեմն նույնիսկ որոշիչ դեր[6]: Առասպելի ստեղծման և տարածման հնարավորությունները, ժամանակակից հասարակության մեջ դրանց չարաշահումը ՋԼՄ-ների միջոցով ավելի է մեծացել: Ամենանկատելի հետևանքը գիտական գիտելիքի ռեմիֆոլոգիզացիայի համարվում է հասարակության մեջ ակտիվ ներմուծումը կեղծ գիտական տեսություններ և ոչ միայն: Այսպիսով, այն սկսում է ադապտացվել հասարակության մեջ գոյություն ապահովելու պայմաններին: Զանգվածային գիտակցության մեջ հաճախ չկա սահմանազատում գիտության և կեղծ գիտության միջև: Առասպելի և գիտության փոխազդեցությունը ուժեղացվում է ինֆորմացիոն միջավայրով[8]: Ավելի շատ ռեմիֆոլոգիզացիայի ենթակա են կյանքի այն ոլորտները, որտեղ գիտելիքի ծավալը աննշան է: Դա ստեղծում է հարմար պայմաններ կեղծ գիտական միֆոլոգիայի զարգացման համար, որը ակտիվ պրոպագանդվում է ՋԼՄ-ների միջոցով: Կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից ռեմիֆոլոգիզացիան իրենից ներկայացնում է միֆոլոգիական մտածողության ակտուալացման գործընթաց տեխնոգեն քաղաքակրթության ֆոնին, երբ մի կողմից տեղեկատվության ավելցուկ է, իսկ մյուս կողմից տեղեկատվության մասնակիությունը ստիպում է զանգվածներին ներառվել սոցիալական իրականության իմաստավորման պրոցեսին՝ օգտագործելով այդ սոցիալ-կոգնիտիվ մեխանիզմները և մշակույթի սիմվոլիկ ձևը՝ որպես առասպել [5]:

Այս ամենը բնականաբար իր ազդեցությունն է ունեցել նաև հիվանդությունների մասին ունեցած պատկերացումների վրա: Այդպիսի հիվանդություններից է համարվում նաև քաղցկեղը, որի մասին տեղեկատվության ազատ հոսք կա համացանց, բայց ոչ բոլոր տեղեկատվություններն են համապատասխանում իրականությանը: Երբեմն ներկայացվում են այնքան խեղաթյուրված պատկերացումներ, որ թվում է, թե այդ հիվանդությունը անխուսափելի մահ է և դրան դիմակայելը ուղղակի ավելորդ դրամական միջոցների և էներգիայի վատնում է: Բայց դա, բնականաբար, այդպես չէ: Ստորև ներկայացվում են որոշ պատկերացումներ, որոնք տարածվում են մեր հասարակության մեջ և աղավաղում քաղցկեղի մասին գիտական տվյալները.

Քաղցկեղը մահ է:

Քաղցկեղի բուժումը անօգուտ է և միայն տանջում է մարդուն:

Քաղցկեղային հիվանդությունը միշտ բերում է արագ մահվան;

Էլեկտրական սարքերը նպաստում են քաղցկեղի զարգացման և տարածման վրա:

Քաղկեղը միշտ զուգակցվում է ուժեղ ցավային զգայություններով:

Քաղցկեղը պատիժ է սխալ ապրելակերպի ու գործած մեղքերի համար:

Քաղցկեղը ժառանգաբար փոխանցված աղետ է [13]:

Քաղցկեղով հիվանդը դառնում է անաշխատունակ և անօգնական:

9. Քաղցկեղի մասին պետք չէ խոսել:

10. Քաղցկեղը մեր ժամանակներում առաջացած հիվանդություն է և պատիժ մարդկության մեղքերի համար:

11. Եթե մի քաղցկեղային հիվանդություն բուժեն, մյուսը կառաջանա:


12. Քաղցկեղով հնարավոր է վարակվել [1]:

13. Չարորակ ուռուցքի հեռոացումը կամ բիոպսիան կարող են նպաստել այլ հատվածներում ուռուցքի առաջացմանը [12]:

Այսպիսի խեղաթյուրված պատկերացումներն են, որ էլ ավելի են բարդացնում ոչ միայն հիվանդ մարդու վիճակը, այլ նաև անդրադառնում են առողջ մարդու հոգեկան առողջության վրա:

Վերոնշյալ երևույթների առկայությունը հաշվի առնելով՝ մենք փորձեցինք ուսումնասիրել քաղցկեղի վերաբերյալ տարածված առասպելների նկատմամբ վստահության դրսևորումը՝ պայմանավորված անձնային առանձնահատկություններով: Հետազոտական աշխատանքի վարկածն է պարզել երիտասարդների անձնային պրոֆիլի և վերահսկման լոկուսի հնարավոր կապը քաղցկեղի մասին առասպելների նկատմամբ վստահության հետ: Հիմնվելով տեսական աղբյուրների վերլուծության վրա հետազոտության համար ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝ Անձի ուսումնասիրման ստանդարտացված բազմամակարդակ մեթոդիկա (MMPI-ի կրճատ տարբերակ՝ ըստ Ֆ.Բերյոզինի, Մ.Միրոշնիկովի)[2], Սուբյեկտիվ վերահսկման մակարդակի հարցարան [4, էջ 46, 16]: Նաև ստեղծվել է քաղցկեղի մասին առասպելների վերաբերյալ հարցարան, որը ներառում է 12 փակ հարցեր: Հարցերը վերաբերում են հետազոտվողների՝ քաղցկեղի հանդեպ ունեցած վերաբերմունքին, պատկերացումներին, դիրքորոշումներին:Հետազոտական ընտրանքը կազմում են 20-30 տարեկան 100 հետազոտվողներ, ովքեր առաջնային առնչություն չունեն հիվանդության հետ: Նրանցից 51-ը՝ իգական, իսկ 49-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ են:


Ըստ հետազոտվողների հետ իրականացրած անձի ուսումնասիրման ստանդարտացված բազմամակարդակ մեթոդիկայի՝ ունենք հետևյալ պատկերը(տե՛ս նկ 1):



Նկար 1. Ցուցանիշներն ըստ mmpi-ի:

Հետազոտական ընտրանքում գերակշռող անձնային տիպը հանդիսանում է հուզական շարժուն տիպը՝ 3-րդ սանդղակ, որին համապատասխանաբար հաջորդում են 6-րդ՝ աֆեկտիվ ռիգիդության սանդղակի գերակայությամբ հետազոտվողները: Իսկ 3-րդ սանդղակն արտահայտում է հետաքրքրությունների կայունությունը, սեփական կարծիքը պնդելու համառությունը, դիրքորոշումների հարցում ոչ ճկուն լինելը, նոր վիճակների անցնելու դժվարությունը:

Սուբյեկտիվ վերահսկման մակարդակի հարցարանի արդյունքում ստացված տվյալների համաձայն հետազոտվողների մոտ էքստերնալության և ինտերնալության հարաբերակցությունը այսպիսին է (տե՛ս նկ. 2).



Նկար 2. էքստերնաության և ինտերնալության ցուցանիշներ:

Կատարելով կորելյացիոն վերլուծություն էքստերնալության և mmpi-ի 1-4,6-9-րդ սանդղակների միջև՝ ստացանք հետևյալ տվյալները (տե՛ս աղյուսակ 1).

Աղյուսակ 1. Կորելիացիոն ցուցանիշները mmpy-ի համապատասխան սանդղակների և էքստերնալության միջև:

	1(Hs)	2(D)	3(Hy)	4(Pd)	6(Pa)	7(Pt)	8(Se)	9(Ma)
Էքստերնա-լություն	0.005	0.104	0.021	0.206	0,111	0.241	0.172	0.062
Նշանակալի-ություն	0,10	0,10	0,10	0,05	0,05	0,01	0,10	0,10

Համաձայն ստացված տվյալների՝ 0,01 նշանակալիությամբ կորելիացիա կա 7-րդ՝ տագնապայնության սանդղակի միջև: Այսինքն՝ մեր կողմից ստացված տվյալները հաստատեցին կապի գոյությունը այս երկու երևույթների միջև: Սակայն դրանք բավարար հիմք չեն հանդիսանում պնդելու, որ կապ կա նաև առասպելների հանդեպ լոյալության հետ: Կախված հարցարանի՝ քաղցկեղին վերաբերող 12 դատողություններին տրված դրական պատասխանների քանակից՝ հետազոտական ընտրանքը բաժանել ենք երեք խմբի՝

Շատ են հակված հավատալու առասպելներին - 6 և ավելի դրական պատասխան:

Միջին - 4-5 դրական պատասխան:

Ցածր - մինչև 3 դրական պատասխան:


Հետազոտական տվյալները ուսումնասիրելիս նկատեցինք այն օրինաչափությունը, որ անձնային պրոֆիլի 3-րդ սանդղակի արդյունքները՝ հուզական շարժունությունը, բոլոր 3 տեղում էլ գերակշռող դիրք է գրավում: Ստորև ներկայացված են ստացված արդյունքները՝

Շատ են հակված հավատալու միֆերին - 6 և ավելի դրական պատասխան:Այստեղ մենք ունեինք նմանատիպ պատասխան տված 13 հետազոտվող, որոնց դեպքում 46%-ի գերակշռող անձնային տիպը հուզական շարժուն տիպն է՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով:

Միջին - 4-5 դրական պատասխան: Ունենք նմանատիպ պատասխան տված 21 հետազոտվող, որից 47,6%-ի մոտ ևս գերակշռում է հուզական շարժուն տիպը:

Ցածր - մինչև 3 դրական պատասխան: Այստեղ ունենք 66 նմանատիպ պատասխան տված հետազոտվող, որից 79%-ը ևս հուզական շարժուն տիպն է:

Այս տվյալների արդյունքում կարող ենք ենթադրել, որ առասպելների հանդեպ հակվածությունը պայմանավորող գործոններից անձնային պրոֆիլն ունի իր դերը, որը, սակայն, գերակշռող չէ: Հետազոտվողների մեծամասնության՝ 61%-ի մոտ նկատվում է վերահսկման լոկուսի ինտերնալ տիպը, որը ցույց է տալիս, որ վերահսկման լոկուսը ևս ունի որոշակի դեր, բայց այն ևս չի հանդիսանում գլխավոր գործոն: Ամփոփելով վերը աստվածը կարելի է եզարակացնել, որ քաղցկեղի մասին տարածված առասպելների հանդեպ վստահությունը պայմանավորող գործոններից են անձնային պրոֆիլը և վերհսկման լոկուսը, որոնք սակայն առասեպլների հանդեպ հավատի վրա ազդող միակ գործոնները չեն: Մեր իրականացրած ուսումնասիրության արդյունքում գրաֆիկի միջոցով կարող ենք արտացոլել, թե երիտասարդության շրջանում որ առասպելն է առավելապես տարածում գտել (տե՛ս նկ. 3): Ինչպես նկատեցիք, 63 հետազոտվող հավատում է 9-րդ առասպելին, այն է՝ էլեկտրական սարքերը նպաստում են քաղցկեղի զարգացմանը և տարածմանը:



Նկար 3. Առավել տարածված առասպելներն ըստ մեր հետազոտական ընտրանքի պատասխանների:

Առանձնացնելով այն հետազոտվողներին՝ որոնց մոտ առկա էր էքստերնալության և տագնապային պրոֆիլի գերակայություն, նկատեցինք, որ 9-րդ և 12-րդ միֆերը (չարորակ ուռուցքի հեռացումը կամ բիոպսիան կարող են նպաստել այլ հատվածներում ուռուցքի առաջացման) մեր հետազոտական խմբում ամենատարածվածն են:

Եզրակացություն: Հենվելով տեսական նյութի վերլուծության և մեր իրականացրած հետազոտության տվյալների վրա՝ կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

Անձնային պրոֆիլը ոչ նշանակալի կապ ունի անձի մոտ քաղցկեղի մասին առասպելականացված պատկերացումների ամրապնդման գործում:

Վերահսկման լոկուսի էքստերնալ լինելը չի հանդիսանում մեծ ազդեցություն ունեցող գործոն քաղցկեղի մասին առասպելականացված պատկերցումների ամրապնդման համար:

Անձնային պրոֆիլի հուզական շարժուն տիպը ունի առավել նշմարելի դրսևորվում, սակայն կենտրոնական դիրք չի զբաղեցնում առասպելի հանդեպ ավելի ընկալունակ լինելու հարցում, ինչի մասին վկայում են մեր ստացած տվյալները:

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնել նաև, որ անձնային պրոֆիլը և վերահսկման լոկուսն ունեն իրենց կապը առասպելականացված դատողություններին արժանահավատորեն վերաբերվելու հետ, բայց չեն հանդիսանում բավարար գործոն: Այսպիսով, մեր կողմից առաջադրված վարկածը մասամբ հերքվել է, քանի որ մեր ստացած հետազոտական տվյալները վկայում էին այն մասին, որ կա որոշակի ազդեցություն անձնային պրոֆիլի և վերհսկման լոկուսի՝ միֆերի հանդեպ արժանահավատության հարցում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասրիբաբայան Ե., Մագիստրոսական թեզ/Քաղցկեղի հանդեպ վերաբերմունքի առանձնահատկությունները հիվանդների, հիվանդության հետ առնչվող անձանց եւ հասարակության մոտ, Երևան, 2012թ.,117 էջ:
2. Ավանեսյան Հ.Մ. և ուրիշներ, Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնակներում, մեթոդական ձեռնարկ, Երևան, «ԱԿՀԿ», 2009թ., 151 էջ:
3. Ավանեսյան Հ. Մ., Փորձարարական հոգեբանություն / ուս. ձեռնարկ/ Եր. «Էդիտ-Պրինտ», 2010թ., 288 էջ:
4. Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա.Ս., Սարգսյան Դ. ՅՈՒ.,Մուրադյան Ե.Բ. / Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում, մեթոդական ուղեցույց /, Եր., ԵՊՀ հրատ., 2017թ., 78 էջ:
5. Максименко Л. А., Мифомышление в современной науке // Наука в © Современные исследования социальных проблем (электронный научный журнал), Modern Research of Social Problems, №10(30), 2013 • www.sisp.nkras.ru различных измерениях: сборник научных трудов II Международной теоретико-практической конференции, посвященной

памяти доктора философских наук, профессора Г. Ф. Миронова, г. Ульяновск, 17-18 мая 2010 г. / под ред. Т. Н. Брысиной. Ульяновск, УлГТУ, 2010, 500 с.

6. Мелетинский Е. М., Мифология // Новая философская энциклопедия / Ин-т философии РАН; Нац. обществ. науч.фонд; Предс.научно-ред.совета В. С. Стёпин, заместители предс.: А. А. Гусейнов, Г. Ю. Семигин, уч. секр. А. П. Огурцов, 2-е изд., испр. и допол., М., Мысль, 2010, ISBN 978-5-244-01115-9.
7. Неклюдов С. Ю., Структура и функция мифа // Мифы и мифология в современной России / Под ред. К. Аймермахера, Ф. Бомсдорфа, Г. А. Бордюгова, М., АИРО-XX, 2000, С. 17—38.
8. Топоров В. Н., Океан Мировой // Мифы народов мира Энциклопедия. Электронное издание / Гл. ред. С. А. Токарев, М., 2008 (Советская Энциклопедия, 1980), с.751-752..
9. Турусов В. С., Ракитский В. Н., Классификация пестицидов по степени канцерогенной опасности для человека. Вопр.онкологии, 1997, 43, 3, 299-303.
10. Rotter, J. B (1954). Social learning and clinical psychology. New York: prentice-Hall.
11. Rotter, J. B.(1990) Internal versus external control of reinforcement: Acase history of a Variable. American psychologist, 45,489-493.
12. https://www.bbc.com/russian/features-42929657
13. https://postnauka.ru/talks/102018
14. https://www.psychologos.ru/articles/view/lichnostnye-osobennosti
15. https://www.who.int/ru/news-room/fact-sheets/detail/cancer
16. http://psyarm.com/wp-content/uploads/2017/03/Conference-Psychology-Armenia-2015.pdf
17. https://www.e-draft.am/files/project_file/1/15665091413065.docx

PERSONAL CONDITIONING OF TRUST RELATED TO COMMON MYTHS ABOUT CANCER

MIKAYELYAN TSAGHIK
4th-year student of Psychology Department,
Faculty of Philosophy and Psychology, Yerevan State University
Academic Supervisor: Gevorgyan David
YSU lecturer, assistant

One of the most widespread diseases in today's society, cancer, is mythologized in our society. This is evidenced by all the myths that have been spread and continue to spread about cancer. Therefore, the main purpose of our research was to find out what factors influence the greater susceptibility to common myths about cancer.

We had a number of problems while conducting the study, in particular:

1. Studying cancer
2. Studying the expression of trust in the popular myths about cancer due to personal characteristics and locus of control.

The following methods were selected for the research: Standardized Multi-Level Methodology of Personality Examination (short version of MMPI according to F. Beryozin, M. Miroshnikov), Subjective Control Level Questionnaire. A questionnaire on cancer myths has been created, which includes 12 closed questions. The questions refer to the attitudes, ideas and approaches towards cancer.

As a result of studying the theoretical material and applying the methods we have chosen, we came to the following conclusions:

1. Personal profile has little to do with reinforcing myths about cancer.
2. The fact that the locus of control is external is not a major factor in reinforcing myths about cancer.

Key words: *Cancer, myth, personal peculiarity, locus of control, externality, mythological notion, study, personal profile.*

ЛИЧНОСТНЫЕ ОСНОВЫ ДОВЕРИЯ К МИФАМ О РАКЕ

МИКАЕЛЯН ЦАХИК
студентка 4 –ого курса отделения психологии
факультета философии и психологии ЕГУ,
электронная почта: mikayelyan1999yanyan@gmail.com
Научный руководитель: Геворгян Давид
Преподаватель ЕГУ, ассистент

Одно из самых распространенных заболеваний в современном обществе - рак, который мифологизируется в нашем обществе. Об этом свидетельствуют все беспочвенные слухи, которые продолжают распространяться о раке.

Поэтому основной целью нашего исследования было выяснить, какие факторы большей частью способствуют распространению мифов о раке.

При проведении исследования мы выдвинули ряд задач, в частности:

1. Изучение раковых заболеваний

2. Изучить проявление доверия к распространенным мифам о раке, обусловленное личностными особенностями и локусом контроля.

Для исследования были выбраны следующие методы: стандартизированная многоуровневая методика исследования личности (сокращенная версия MMPI по Ф. Берёзину, М. Мирошникова), анкета уровня субъективного контроля. Создана анкета по мифам о раке, включающая 12 закрытых вопросов. Вопросы касаются представления, отношения испытуемых к раку.

В результате изучения теоретического материала и применения выбранных нами методик мы пришли к следующим выводам:

1. Персональный профиль не имеет ничего общего с верой в мифы о раке у человека.

2. Тот факт, что локус контроля является внешним, не является важным фактором в укреплении мифов о раке.

Ключевые слова: *рак, миф, личностная особенность, локус контроля, внешний эффект, мифологическое понятие, исследование, личный профиль.*

ՍԵԼԵԿՏԻՎ ԱԲՈՐՏԸ ՈՐՊԵՍ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԵՂԻՆԵ
Երևանի պետական համալսարանի
փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի
«Հոգեբանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ hexine1margaryan@gmail.com
Գիտական ղեկավար՝ Խանամիրյան Իրինա
հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գենդերային կարծրատիպերը ձևավորվում և հաստատվում են տվյալ հասարակությունում՝ կախված այդ միջավայրում ընդունված նորմերից և կանոններից: Գենդերային կարծրատիպերի ձևավորիչ գործոններից է համարվում մշակույթը: Արմատավորվելով դրանք անմիջականորեն ազդում են ինչպես անձի, այնպես էլ նրա կողմից ընդունած որոշումների վրա: Առանձնակի ուշադրության է արժանի գենդերային կարծրատիպերի առանձնահատկությունների ազդեցության ուսումնասիրումը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման գործընթացում:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը ակտուալ խնդիր է աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում: Վերջինս բացասական ազդեցություն է ունենում ինչպես կնոջ՝ վերջինս հոգեկանի, այնպես էլ հասարակության կառուցվածքի վրա: Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման գլխավոր հետևանքներից են սեռերի համամասնության խախտումը և հետաբորտյան սինդրոմը:

Թեմայի ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել գենդերային կարծրատիպերի ազդեցությունը պտղի պահպանման վրա: Տվյալ թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է հետևյալ խնդիրը՝ բացահայտել հայաստանյան ընտանիքներում արու զավակի նախապատվության հիմքում ընկած հիմնական պատճառների և սելեկտիվ աբորտի դրսևորման առանձնահատկությունների հետևաքները:

Բանալի բառեր՝ *գենդեր, սեռ, գենդերային կարծրատրիպեր, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում, գենդերային կարգավիճակ:*

Ժամանակակից հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային և առհասարակ մարդկային հարաբերությունների ձևավորումը հիմնվում է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդու ազատությունը, սոցիալական հավասարությունը և արդարությունը: Ակտուալ խնդիրներից մեկը սոցիալական անհավասարության հաղթահարումն է: Սոցիալական անհավասարությունը դիտվում է տարբեր ոլորտներում՝ սկսած սոցիալ-տնտեսականից մինչև բարոյական ոլորտ: Սոցիալական խմբերի անհավասարությունը, նրանց կից գործոնները, որոնք կարող են սահմանափակել դրանց հնարավորությունը, կարող են լինել դիսֆունկցիոնալ և ունենալ ոչ բարենպաստ հետևանք հասարակության համար: Նման դիսֆունկցիոնալ բնույթ ունեն կարծրատիպերը:

Կարծրատիպերը նախապաշարմունքների հիմքով ձևավորված պատկերացումներ են,որոնք, արմատավորվելով սոցիումում, ազդում են անհատների վրա՝ պայմանավորելով վերջիններիս աշխարհայացքը և վարքը[3]: Սրանցից ամենատարածվածը գենդերային կարծրատիպերն են, որոնց խորքային իմացությունը նախ և առաջ ենթադրում է «գենդեր» տերմինի բացատրությունը:

Շատ հաճախ «գենդեր» և «սեռ» հասկացությունները նույնացվում են, բայց դրանք լիովին տարբերվում են միմյանցից: Սեռը անձին ի ծնե տրվող «որակ է», որը բնութագրվում է անդարձելիությամբ, իսկ գենդերը սոցիալական կոնստրուկտ է, որը ձևավորվում է սոցիալիզացիայի արդյունքում մի շարք արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Վերջինների որոշակիացումը իրականացվում է՝ ելնելով անհատի կարգավիճակային դիրքից: Եթե սեռը դիտարկվում է որպես անհատին վերագրված կարգավիճակ, որը ի ծնե տրվել է մարդուն, ապա գենդերը կապվում է մշակույթի և սոցիալական գործոնների ազդեցության հետ, այդ պատճառով վերջինս մեկնաբանվում է որպես ձեռքբերովի կարգավիճակ:

Վերջին ժամանակներում գենդերի վերաբերյալ տեսություններում շեշտադրումը կատարվում է իշխանության և դոմինանտության վրա, որոնք հասարակությունում հաստատվում են գենդերային հարաբերությունների միջոցով: Մ. Կիմմելը կարծում էր, որ գենդերը հանդիսանում է ոչ թե հատկանիշ, այլ հարաբերություն: Ըստ նրա՝ գենդերը գործում է մի քանի մակարդակներում՝ ոչ միայն նույնականացման և փոխհարաբերությունների, այլև ինստիտուտների, որոնք ևս «գենդերացված» են և արտահայտում են սեռերի անհավասարություն[4]:

Խոսելով սեռի ռեֆերենտության մասին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գենդերային դիսկուրսի այնպիսի գծի վրա, ինչպիսին է տղամարդկայինի և կանացիի կոդավորման երկակիությունը: Երկակիությունը և տարբերությունները, կապված սեռերի հետ, կազմում են գենդեր հասկացության էությունը: Այդ պատճառով տղամարդկայինն ու կանացին ոչ միայն հակասում են, այլև փոխլրացնում են միմյանց: Սակայն գենդերային դիսկուրսը ուղղակի չի բևեռացնում տղամարդկայինը և կանացին, այն նաև ձևավորում է վերջիններիս հիերարխիան: Ամենից առաջ սա վերաբերվում է տղամարդկանց և կանանց սոցիալական փոխհարաբերություններին, որոնց հատկանշական է «պատրիարխատ» տերմինը: Նշված հիերարխիան և պատրիարխիան էլ ընկած են գենդերային կարծրատիպերի ձևավորման հիմքում: Գենդերային կարծրատիպերը «մասկուլինության» և «ֆեմինիզմի» սոցիալական կառույց են, որոնք հաստատվում են տարբեր սոցիալական դերերով, կարգավիճակով, ինչպես նաև սոցիալապես ընդունելի և գենդերին համապատասխան վարվելաձևով: Ամենից առաջ սա որոշակիացնում է տղամարդուն և կնոջը վերագրվող որակները[5]:

Ի սկզբանե տղամարդկանց և կանանց անհավասարությունը հասարակությունում ընկալվում էր որպես աշխատանքի բաժանման արդյունքում ձևավորված բնական փոխհարաբերությունների ստեղծման սկզբունք: Այսպիսի մոտեցումը կանանց երկրորդ պլան մղեց: Նման պատկերացումների հիմքում ընկած է սեռային պատկանելության տեսանկյունից տղամարդկանց և կանանց տարբերակող կենսաբանական դետերմինիզմի սկզբունքը[4]:

Խոսելով գենդերային կարծրատիպերից՝ պետք է նշել դրանց առավել հաճախ դրսևորվող բացասական հետևանքների մասին, որոնցից մեկն էլ սելեկտիվ աբորտն է: Հարց է առաջանում, թե ի՞նչ գործոններով է պայմանավորվում այն, և ինչպե՞ս է դրսևորվում տարբեր մշակույթ ունեցող հասարակություններում: Իրավիճակները, որոնք հանգեցնում են հղիության արհեստական ընդհատմանը, տարբեր են: Օրինակ՝ տղամարդկանց գերակայությամբ մշակույթներում գենդերային անհավասար կարգավիճակները զուգակցվում են կանանց և իգական սեռի զավակների պակաս արժևորմամբ, որն էլ հանգեցնում է նրանց հանդեպ բռնության դրսևորումների նույնիսկ մինչև լույս աշխարհ գալը: Հաճախ հղիության արհեստական ընդհատումը կատարվում է սեռի հատկանիշով: Շատ երկրներում և մշակույթներում պատմականորեն տղաներին առավել էին գնահատում, քան աղջիկներին, ուստի ժառանգ ունենալու համար ծնողները պատրաստ էին դիմել ծայրա-

հեղ քայլերի (նույնիսկ զոհել իրենց նորածին աղջկան): Դրա համար գոյություն ունի կանացի ինֆանտիցիդ տերմինը, այսինքն՝ նորածին աղջիկների սպանություն: Շատ ընտանիքներ ազատվում են պտղից, քանի որ նախընտրում են տղա երեխայի և ուղղակիորեն չեն ցանկանում աղջիկ երեխա դաստիարակել: Ամենից առաջ պատճառները մշակութային «ստանդարտներն» ու սոցիումում առկա անհավասարություններն են, երբ նորածին տղաներին վերաբերվում են այլ կերպ, քան աղջիկներին, իսկ ընտանիքում տղայի ծնունդը համարվում է առավել հարգի: Դեռ պարզագույն հասարակություններում մարդիկ նախապատվությունը տալիս էին տղաներին: Տղա չունենալու «բացը» նրանք լրացնում էին համապատասխան դաստիարակության միջոցով՝ աղջկա մոտ տղայի կերպարի ձևավորմամբ: Հակառակ երևույթը միանշանակ դրսևորում չի ունեցել[2]:

Գենդերային պատկերացումները բխում էին կյանքի ձևից և պայմաններից: Հետզհետե կյանքի ձևը փոխվում է, իսկ ձևավորված պատկերացումները մնում են նույնը: Նշվածի հիմքում ընկած են պատկերացումներ այն մասին, որ ապագայում հենց տղան է հոգ տանելու ծնողների մասին, ֆինանսապես օգնելու նրանց: Հասարակությունում սելեկտիվ աբորտների բացահայտումը բավականին բարդ է: Շատ հաճախ մենք ոչինչ չգիտենք հղի կնոջ մոտիվների մասին, բացի դրանից՝ աբորտը կարող է ունենալ մի քանի պատճառներ:

Հայաստանում գենդերային կարգավիճակները տարբեր պատմական ժամանակահատվածներում բավական տարբերվել են՝ կնոջ ակտիվ և տղամարդուն գրեթե իրավահավասար կարգավիճակից մինչև կնոջ խիստ սահմանափակումներ ու կախյալ կարգավիճակ: Պատմամշակութային որոշակի նախապայմանների հետևանքով ստեղծված ավանդույթներն ու սովորույթներն իրենց հետքն են թողել ներկայիս գենդերային դիրքորոշումների ձևավորման վրա: Համընդհանուր ընդունված կարգը հայրիշխանական էր, ինչը ենթադրում էր մի կողմից տղամարդու գերակա դիրքը հասարակությունում, մյուս կողմից՝ հոր գերակա դիրքը ընտանիքում: Համարվում էր, որ ազգն ուժեղ է այնքան, որքան արու զավակ ունի, ուստի տղաների ծնունդը ավելի մեծ խանդավառությամբ էր ընդունվում: Այս գաղափարները պահպանվել են մինչև մեր օրերը և շարունակում են սնել ցանկացած պայմանով տղա ունենալու ձգտումը[2]:

Հայաստանում 2011թ. ՄԱԿ-ի՝ բնակչության հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ հղիության ընտրողական ընդհատումների աճը պայմանավորող պատճառները երեքն են.

Տղամարդկանց գերակայությամբ մշակույթներում, որտեղ կանայք ունեն մարգինալ սոցիալական և տնտեսական կարգավիճակ և սահմանափակ իրավուքներ, արու զավակը համարվում է ավելի նախընտրելի, քան իգական սեռի զավակը:

Պրենատալ ախտորոշման տեխնոլոգիաների զարգացումը, որոնք թույլ են տալիս ծնողներին իմանալ իրենց չծնված երեխայի սեռը և դիմել հղիության օրինական կամ անօրինական ընդհատման:

Ցածր ծնելիությունը հանդիսանում է երրորդ գործոնը: Երեխաների թվի սահմանափակումը և պարտադիր տղա ունենալու ցանկությունը բերում են ընտանիքին հղիության արհեստական ընդհատման որոշման, եթե պտղի սեռն անցանկալի է նրանց համար:

Համաձայն վերը նշված հետազոտության արդյունքների՝ արու զավակին նախապատվությունը տալու պատճառներներից են նաև.

Ծնողների խնամակալությունը ուշ տարիքում: Հայկական ընտանիքում տղան շարունակում է ապրել հայրական տանը, նույնիսկ երբ սեփական ընտանիքն է կազմում: Չնայած բոլոր խմբերում, անկախ սեռից, տարիքից ու բնակավայրից, բերվում են փաստարկներ այն մասին, որ ոչ բոլոր տղաներն են ծնողների կողքին մնում կամ հոգում նրանց կարիքները, համարում են, որ աղջիկը որոշ դեպքերում տղայից ավելի լավ է հոգ տանում ծնողների մասին, սակայն «ծնողներին պահողը տղան է» կարծրացած համոզմունքը խորը արմատավորվել է բոլորի գիտակցությունում (նույնիսկ պատանիների): Որդու՝ ծնողների հետ միասին ապրելը ծնողներին ծերության ընթացքում ապահովում է մի քանի կարևոր պահանջմունքների բավարարում, որոնք ակտուալ են համարվում կյանքի ուշ փուլում: Այդ պահանջմունքներից են՝ ֆիզիկական խնամքը, ֆինանսական բարեկեցությունը, շփման պահանջմունքը:

Վերարտադրողականությունը: Այստեղ միավորված են՝ ա)հայ ազգի, բ)սեփական տոհմի, գ)ազգանվան և անվան շարունակության գաղափարները: Հայկական մշակույթում տոհմի և ազգի շարունակությունը դիտարկվում է արական գծով: Տղայի բացակայությունը ընկալվում է որպես գերդաստանի վերացում, տոհմի խզում:

Պաշտպանվածությունը՝ հայրենիքի, ընտանիքի, տան: Հատկապես ընդգծվում է ՀՀ բանակի համար զինվորներ ունենալու անհրաժեշտությունը:

Ծնողների ֆիզիկական և ֆինանսատնտեսական աջակցությունը: Սա հատկապես ընդգծված է գյուղական միջավայրում, համարվում է, որ որքան շատ տղա ունենա հայրը, այնքան նրա հոգսը թեթև կլինի: Նմանապես համարվում է, որ որդին կիսում է ընտանիքը ֆինանսապես ապահովելու հոր պարտականությունը, ինչպես նաև համարվում է, որ տղամարդիկ ունենում են ավելի ֆինանսաբեր աշխատանք, քան կանայք:

Պատվախնդրություն, հպարտություն: Համարվում է, որ տղամարդիկ հպարտանում են նրանով, որ տղա ունեն. «որ տղա է, արդեն առավելություն է»:

Անկախ տարիքից թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կողմից արու զավակ ունենալը ընկալվում է որպես տնտեսական և սոցիալական ապահովվածության երաշխիք: Ակնհայտ է, որ այս ընկալումը պայմանավորված է հասարակության մեջ արմատավորված կարծրատիպերով[1]:

Ի՞նչ արդյունքի կարող է հանգեցնել սելեկտիվ աբորտը: Դրսևորվող հետևանքներից մեկը սեռերի համամասնության խախտումն է, որը լի է լուրջ ժողովրդագրական վտանգներով՝ տարիներ անց վերարտադրողական տարիքի կանանց պակաս, որի հետևանքով տղամարդկանց համար ընտանիք կազմելու դժվարություն, հետևաբար նաև քիչ ընտանիքներ, քիչ մայրեր և ծնողներ և արդյունքում երկրի բնակչության նվազում: Բացի դրանից՝ հղիության արհեստական ընդհատումը մեծ վտանգներ է ներկայացնում հղի կնոջ թե՛ հոգեկան, թե՛ ֆիզիկական առողջությանը: Հղիության արհեստական ընդհատման հետևանքներից է հետաբորտյան սինդրոմը, որը բնորոշվում է որպես հոգեկան հետևանքների և հիվանդությունների ամբողջություն, որոնք կարող են առաջանալ աբորտի արդյունքում: Չնայած նրան, որ վերոնշյալը ֆորմալ ձևակերպում չունի, այն հանդիպում է կանանց ճնշող մեծամասնության մոտ: Կարող է տևել երկու ամիս կամ շարունակել դրսևորվել ողջ կյանքի ընթացքում: Հղիության արհեստական ընդհատումը ծանր սթրես է, որը անդառնալի ազդեցություն է ունենում կնոջ հոգեկանի և հուզական ոլորտի վրա: Վերջինս հանգեցնում է կնոջ մոտ մեղքի զգացման, տագնապի, անպաշտպանության, ագրեսիայի, կոպտության և անկայուն հուզական ֆոնի առաջացմանը, ինչը առաջացնում է սեփական հույզերը կառավարելու անընդունակություն[6]:

Այսպիսով, սելեկտիվ աբորտը մեծապես պայմանավորված է հասարակությունում արմատավորված գենդերային կարծրատիպերով, որոնց ձևավորիչ գործոններից է համարվում մշակույթը և առավել շատ բնորոշ է պատրիարխալ ընտանիքներին: Վերջինս հանգեցնում է հասարակության կառուցվածքում լուրջ փոփոխությունների, որոնք անմիջականորեն ազդում են անհատ-անհատ և անհատ-սոցիալական միջավայր հարաբերությունների վրա: Առանձնակի ուշադրության է արժանի անդրադարձը քննարկվող թեմայի բարոյական կողմին, որն էլ հանդիսանում է տվյալ երևույթի լինելիությունը կամ կանխարգելումը պայմանավորող հիմքերից մեկը: Ներկայումս թե՛ Հայաստանում, թե՛ այլ երկրներում տարբեր միջոցառումներ են ձեռնարկվում սելեկտիվ աբորտի կանխման և վերացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գարգրցյան Լ., Հայաստանում արու զավակի նախապատվության պատճառները//Արդիականության մարտահրավերները.Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ:Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. -Եր., ԵՊՀ հրատ., 2014թ., էջ 255-258:
2. Գարգրցյան Լ. Ա., Հարությունյան Ի. Կ., Գենդերային սոցիալականացում. գործընթացն ու արդյունքը, ԵՊՀ հրատ., 2016թ, 94 էջ:
3. Կոբելյան Ա., Էթնիկ կոնֆլիկտների հոգեբանական հիմնախնդիրները:Ուսումնամեթոդական ձեռնարկ; Երևան, «Տիր» հրատ., 2017թ., 132 էջ:
4. Варданян Е. М., Гендерные проблемы политической теории, Гюмри, Дпир, 2007, 245 с.
5. Рабова Т. Б., Пол власти:гендерные стереотипы в современной российской политике/Т.Б. Рабова.-Иваново: Иван гос. ун-т, 2008, 246.:ил.
6. https://www.psychologos.ru/articles/view/gender-dvoe-zn-chem-opredelyaetsya-nash-socialnyy-pol-von-zn

SELECTIVE ABORTION AS A RESULT OF THE INFLUENCE OF GENDER STEREOTYPES

MARGARYAN HEGHINE
4th-year student of Psychology Department,
Faculty of Philosophy and Psychology, Yerevan State University
e-mail: hexine1margaryan@gmail.com
Academic Supervisor: Khanamiryan Irina
PhD in Psychology, associate professor

Gender stereotypes are formed and established in society depending on the accepted norms and rules of that environment. Culture is one of the factors creating gender stereotypes. Taking roots, they directly affect an individual, as well as their decision making. The study of gender stereotypes in the process of gender-selective abortions is especially worth attention. Gender-selective abortion is an actual problem in many countries, including Armenia. Not only has it had a negative effect on the mental health of the woman, but also on the structure of the society. The main consequences of the gender-selective abortions are the change of the proportion of genders and the Post-Abortion Syndrome. The purpose of the research is to study the influence of gender stereotypes on the fetus. In the scopes of the given topic, the following problems have been studied: the disclosure of the features and consequences of gender-selection and main reasons behind the preference of male child in Armenian families.

Key words: *gender, sex, gender stereotypes, sex-selective abortion, gender status.*

СЕЛЕКТИВНЫЙ АБОРТ - КАК РЕЗУЛЬТАТ ВОЗДЕЙСТВИЯ ГЕНДЕРНЫХ СТЕРЕОТИПОВ

МАРГАРЯН ЕГИНЕ
Студентка 4-ого курса отделения психологии
факультета философии и психологии ЕГУ,
e-mail: hexine1margaryan@gmail.com
Научный руководитель: Ханамирян Ирина
Кандидат психолгических наук, доцент

Гендерные стереотипы формируются и укрепляются в данном обществе в зависимости от тех норм и правил, которые приняты в данной среде. Укоренившись, они непосредственно влияют не только на личность, но и на принятые им решения. Особенного внимания достойно исследование гендерных стереотипов во время селективного аборта.

Селективный аборт является актуальной проблемой во многих странах мира, в том числе и Армении. Он имеет отрицательное влияние как на женщину - ее психику, так и на структуру общества. Основными последствиями селективного аборта являются нарушение соотношения полов, и постабортный синдром.

Цель исследуемой темы - изучение влияния гендерных стереотипов на сохранение плода. В рамках данной темы исследовались следующие задачи - выявление связи особенностей предпочтения сыновей в армянских семьях с проявлением селективного аборта.

Ключевые слова: *гендер, пол, гендерные стереотипы, селективный аборт, гендерное состояние.*

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՎԵՅԱՆ ՆԱՐԻՆԵ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ narine.baveyan@mail.ru
Գիտական ղեկավար՝ Դավթյան Արմինե
Գավառի պետական համալսարանի դասախոս,
մանկավարժ, առողջության հոգեբան

Հոդվածում ներկայացված են Գեղարքունիքի մարզի դեռահասների ագրեսիվության տիպերի ու ձևավորման գործոնների՝ մեր ուսումնասիրության արդյունքները: Հետազոտության համար հիմք են ընդունվել Ա. Ա. Ռեանի, Դ. Կրեչի, Դ. Ռիչարդսոնի և այլոց՝ ագեսիվության վերաբերյալ դիտարկումները:

Ագրեսիվ վարքի հոգեբանական հայեցակարգերի և տեսական մոտեցումների հիման վրա ուսումնասիրվել են դեռահասների ագրեսիվ վարքի տիպերն ու ձևավորման գործոնները:

Հետազոտությունները կատարվել են էմպիրիկ դիտման, Ա. Բասի և Ա. Դարկի կողմից մշակված մեթոդների և հարցարանների հիման վրա: Համեմատվել և համադրվել են ագրեսիվ վարքի դրսևորման պատճառներն ու գործոնները, որոշվել են առավել հաճախակի դրսևորվող տիպերը:

Արձանագրվել է, որ ընտրանք հանդիսացող դեռահասների խմբում առավել մեծ հաճախականությամբ դրսևորվում էին ագրեսիվության ֆիզիկական և վերբալ (խոսքային) տիպերը, որոնց համար պատճառական գործոններ են հանդիսացել սոցիալական միջավայրը և տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *դեռահասների ագրեսիվություն, բնածին և ձեռքբերովի ագրեսիա, ֆրուստրացիա, ֆիզիոլոգիական փոփոխություն, օնտոգենեզի ժամանակաշրջան:*

Բազմաթիվ հոգեբաններ և հետազոտողներ են անդրադարձել ագրեսիվ վարքի հիմնախնդրին և այն մեկնաբանել յուրովի: Մինչև 19-րդ դարը

ագրեսիվ էր համարվում ակտիվ վարքի յուրաքանչյուր դրսևորում, լինի բարյացակամ, թե թշնամական: Այնուհետև ագրեսիվությունը դիտվեց որպես թշնամական վարք շրջապատի մարդկանց հանդեպ:

Ագրեսիվության հոգեբանական պատճառների և դրսևորման ձևերի ուսումնասիրման առաջին փորձերը կատարվել են Զ. Ֆրոյդի կողմից: Ըստ նրա՝ ագրեսիվությունը բնածին է, քանի որ անձի անգիտակցական ոլորտում տիրապետող բնազդներից մեկը՝ մահվան բնազդը, մարդուն դարձնում է ագրեսիվ, դեստրուկտիվ և ցանկություն է առաջացնում ջարդելու, սպանելու ու ոչնչացնելու: Ժ. Ժ. Ռուսոն կարծում է, որ ագրեսիվությունը ձեռք է բերվում կյանքի ընթացքում՝ սոցիալական միջավայրի ազդեցությամբ: Ըստ նրա՝ մարդը ծնվում է որպես խաղաղ և ստեղծագործ էակ, որին հասարակությունն է դարձնում ագրեսիվ[1]: Ա. Բասսը գտնում է, որ ագրեսիվությունը վարքաձև է, որը սպառնում կամ վնասում է այլ կենդանի էակի՝ մարդու կամ կենդանու՝ նրանց ցանկությունից անկախ: Նա տալիս է ագրեսիվ գործողությունների երեք նկարագիր՝ ֆիզիկական - խոսքային, ակտիվ - պասիվ, ուղղակի – անուղղակի[2]: Իսկ Է. Ֆրոմը առանձնացրել է ագրեսիայի «բարորակ» և «չարորակ» տեսակներ: Բարորակ ագրեսիվությունը նպաստում է կյանքի պահպանմանը և համարվում է հարմարվողական ագրեսիա, իսկ չարորակ ագրեսիվությունը կապված չէ կյանքի պահպանման հետ[3]:

Ագրեսիվության ծագման վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ, սակայն բոլորի կողմից ընդունելի պատասխան տրված չէ այն հարցին՝ ագրեսիվությունը բնածի՞ն է, թե՞ ձեռքբերովի: Գոյություն ունեն տարբեր գիտափորձեր, որոնք հաստատում են երկու տեսակետներն էլ: Եզրակացություն է արվել, որ եթե ագրեսիվությունը նույնիսկ բնածին է, ապա այն կարելի է ճնշել և ձևափոխել: Ագրեսիվ վարքի թուլացումը հնարավոր է տարբեր գործողությունների միջոցով: Կ. Զ. Լորենցը պնդում էր, որ սերն ու ընկերական հարաբերությունները կարող են անհամատեղելի լինել բացահայտ ագրեսիվության արտահայտման հետ և կարող են արգելափակել դրա դրսևորումները:

---

[1] Տե՛ս Агрессия и принцип удовольствия: к психоаналитической теории агрессии. (psyjournal.ru)

[2] Басс А. Г., Агрессия : Учебное пособие (2014).

[3] Фромм Э., Анатомия человеческой деструктивности, М., Республика, 2004.

Հետազոտության համար հիմք ենք ընդունել ագրեսիվության՝ (լատ. «Agressio» - հարձակում)[4] որպես մոտիվացված, կործանարար վարքի դիտարկումը, որը հակասում է մարդկանց և հասարակություն մեջ ընդունված գոյության նորմերին և կանոններին՝ ֆիզիկական և բարոյական վնաս (բացասական զգացմունքներ, լարվածություն, ընկճվածություն, վախ և այլն) պատճառելով հարձակման օբյեկտներին (անժամկետ):

Ագրեսիվ վարքի ձևավորման գործոնները և պատճառները դեռահասության տարիքում: Դեռահասության շրջանը ընդունված է անվանել օնտոգենեզի կամ անցումային շրջան մանկության և հասունության միջև: Դեռահասությունը համարվում է օնտոգենեզի ամենադժվար ժամանակաշրջաններից մեկը: Այս ժամանակահատվածը բնութագրվում է հուզական անկայունությամբ, ուղեկցվում է ագրեսիվ վարքի կտրուկ աճով: Դեռահասությունն ու դրա ժամանակագրական սահմանները վաղուց առաջացրել և շարունակում են հարցեր առաջացնել հետազոտողների շրջանում: Դեռահասության սահմանը մոտավորապես համընկնում է միջին և ավագ դպրոցական աշակերտների տարիքի հետ, ընդգրկում է 11-13-ից մինչև 14-18 տարեկանը[5]: Դեռահասության տարիքի հոգեբանական կարևորագույն բնութագիրը անձնավորության գիտակցության և բարոյական ըմբռնումների ձևավորումն է, աշակերտի կողմից վարքի և արժանապատվության նորմերի տիրապետումը: Այս տարիքում է տեղի ունենում անձի ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական հասունացում, որը պայմանավորված է շրջապատող իրականության հետ փոխազդման միջոցով: Ըստ է. Շպրանգերի՝ դեռահասության կարևորագույն բնութագիր է համարվում «ես»-ի բացահայտումը և ներհայեցողության ձևավորումը: Դեռահասը սկսում է զգալ իր անհատականությունը, գիտակցել իրեն և իր կյանքի ուղին[6]: Փոխվում է դեռահասների աշխարհայացքը, սկզբունքներն ու իդեալները, որոնցով նա սկսում է առաջնորդվել կյանքում:

Դեռահասության շրջանում օրգանիզմում տեղի են ունենում ֆիզիոլոգիական լուրջ փոփոխություններ. սկսվում է սեռահասունացումը, սկսվում են ակտիվորեն արտադրվել մի շարք հորմոններ, փոփոխվում է ոսկրային հա-

[4] Գրիգորյան Հ. Ա., Պատմական տերմինների դպրոցական համառոտ բառարան, Եր., 1982:

[5] Տե՛ս Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977:

[6] Տե՛ս Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր., 2004:

մակարգը, որոնց պատճառով էլ դեռահասը կանգնում է բարդությունների առաջ: Նա պետք է անընդհատ հարմարվի իր օրգանիզմում կատարվող փոփոխություններին, որոնք ակնհայտորեն արտացոլվում են նրա արտաքին տեսքում և բնութագրվում են որպես երկրորդային սեռական հատկանիշներ՝ հասակն ավելանում է, մեծանում են մարմնի մկանների և ճարպերի զանգվածները, շատ դեպքերում մարմնի որոշ հատվածներ տգեղանում են, դիմագծերը դառնում են անհամաչափ: Այս ամենը ազդում է դեռահասի հոգեվիճակի վրա, որի հետևանքով էլ նրա մոտ կարող են առաջանալ թերարժեքության բարդույթ, սթրես, դեպրեսիա, դիսմորֆոֆոբիա՝ վախ արտաքինի հորինված թերությունից: Դեռահասության տարիքում կամակորությունը երբեմն առաջանում է անկախության և ինքնուրույնության վերաբերյալ թյուր պատկերացումներից:

Դեռահասությունը համարվում է ճգնաժամային տարիք: 1904թ.-ին Սթենլի Հոլլը հրատարակեց պատանեկության վերաբերյալ իր առաջին ուսումնասիրությունը, որում նա նկարագրել է դեռահասության երկիմաստությունն ու պարադոքսը: Ս. Հոլլն այս կարևոր ճգնաժամը բնութագրում էր ինքնագիտակցության ճգնաժամով, որը հաղթահարելով մարդը ձեռք է բերում «անհատականության զգացում»: Այս շրջանն անկայուն է, երբ դեռահասի մոտ ծագում է միաժամանակ իրար հակասող շատ հույզեր, հոգեվիճակներ, ձգտումներ և արժեքներ: Այս ճգնաժամը ներքին և արտաքին հակասությունների արտահայտման ինտենսիվ շրջանն է[7]: Դեռահասության ճգնաժամի պատճառ է հանդիսանում երեխայի ֆիզիոլոգիական և հոգեկան զարգացման անհամաչափությունը, որն էլ հաճախ հանգեցնում է ագրեսիվ վարքի դրսևորումների:

Շատ հոգեբաններ են փորձել բացահայտել ագրեսիվ գործողությունների ձևավորման գործոններն ու պատճառները: Օրինակ՝ Դ. Ռիչարդսոնի[8] կարծիքով՝ ագրեսիվության են դիմում՝ «ակտիվ գործողություն կամ վճռական գործողություն, պարտադրելու կամ ինչ-որ բանի տիրանալու համար»: Դ. Քեմփբելը[9] ագրեսիան դիտում է որպես շահերի օբյեկտիվ բախման, անհատների և սոցիալական խմբերի նպատակների անհամատեղելիության հետևանք: Ագրեսիվ վարքի ձևավորման գործոններից մեկը, ըստ վերը

[7] Семчук Л. А., Янчий А. И., Возрастная психология, ГрГУ им. Я. Купалы, 2006.

[8] Бэрон Р., Ричардсон Д.,Агрессия, СПб., 2001.

[9] Агрессивное поведение (https://ru.wikipedia.org/wiki/)

նշված հոգեբանների, ցավի զգացողությունն է, որը կարող է լինել ինչպես ֆիզիկական (տարբեր հիվանդություններ), այնպես էլ հոգեբանական (վիրավորանք, մերժում): Էությունը նույնն է՝ երկու դեպքում էլ մարդը դառնում է խիստ վտանգավոր ու ագրեսիվ: Ագրեսիվության դրսևորումը արտահայտվում է հիմնականում ցավի պատճառ դարձած մարդու նկատմամբ:

Ագրեսիվության առաջացումը պայմանավորված է ներքին և արտաքին գործոններով: Հոգեբանական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ագրեսիվության դրսևորման հիմնական տեսական հասկացություններն են մղման (բնազդի) տեսությունը և հիասթափությունը, որոնք արտացոլում են տարբեր ուղղությունների ներկայացուցիչների տեսակետները՝ էթոլոգիական, հոգեվերլուծական և վարքագծային[10]: Առաջին երկու ուղղությունների ներկայացուցիչները ագրեսիան հասկանում են որպես բնազդ: Ըստ էթոլոգիական (Կ. Լորենց) և հոգեվերլուծական (Զ. Ֆրոյդ) մոտեցումների՝ ագրեսիվ վարքն ունի ներքին աղբյուր, իսկ անցանկալի պահվածքից խուսափելու համար անհրաժեշտ է, որ ագրեսիվ էներգիան անընդհատ լիցքաթափվի:

Զ. Ֆրոյդը ագրեսիվությունը կապում է մահվան մղման հետ: Ագրեսիվությունը, նրա կարծիքով, մարմնում անընդհատ առկա շարժական ազդակ է՝ պայմանավորված մարդու ինքնության բնույթով: Սա կա՛մ ինքնաոչնչացման, կա՛մ այլ անհատի ոչնչացման բնազդն է[11]:

Կ. Լորենցի տեսության մեջ մարդկային ագրեսիան համեմատվում է կենդանիների ագրեսիայի հետ, և դա բացատրվում է զուտ կենսաբանորեն՝ որպես այլ արարածների հետ պայքար գոյատևելու համար, որպես ինքն իրեն պաշտպանելու և հաստատելու՝ կյանքը ոչնչացնելու կամ հաղթելու միջոցով: Էթոլոգիական մոտեցման շրջանակներում ագրեսիան դիտարկվում է որպես նպատակային բնազդ, զարգացած և համախմբված էվոլյուցիայի գործընթացում[12]:

Ջ. Դոլարդի տեսության համաձայն՝ ագրեսիվ վարքագիծը իրավիճակային է, այլ ոչ թե զարգացող գործընթաց: Նա համարվում է այս ուղղության հիմնադիրը: Ըստ նրա՝ ագրեսիվությունը մարդու մարմնում ինքնաբուխ չէ, այլ հիասթափության արձագանք, կարիքները բավարարելու ճանա-

[10] https://www.expeducation.ru/

[11] Фрейд З., Анализ конечный и бесконечный, 1996.

[12] Лоренц К., Агрессия: так называемое «зло», М., 1994.

պարիին խոչընդոտը հաղթահարելու փորձ՝ հաճույքի և հուզական հավասարակշռության հասնելու համար: Քննարկվող տեսությունը պնդում է, որ նախ և առաջ ագրեսիան միշտ հիասթափության հետևանք է, և երկրորդ՝ հիասթափությունը միշտ ենթադրում է ագրեսիա: Հիասթափություն-ագրեսիայի սխեման հիմնված է չորս հիմնական հասկացության վրա՝ ագրեսիա, հիասթափություն, զսպում և փոխարինում[13]:

Խոսելով ագրեսիայի պատճառների մասին, պետք է հաշվի առնել, որ ագրեսիան բնության մեջ տարասեռ է: Կան ագրեսիայի տարբեր տեսակներ: Կախված իր ուղղվածությունից ագրեսիան լինում է հետերոգեն կամ աուտոգեն: Առաջինն ուղղված է ուրիշներին, արտաքին աշխարհին, երկրորդը՝ սեփական անձին:

Առաջացման պատճառներով պայմանավորված՝ տարբերակվում է ռեակտիվ և ինքնաբուխ ագրեսիա[14]: Ռեակտիվը սովորաբար առաջանում է ի պատասխան որոշակի արտաքին գրգռիչի, մինչդեռ ինքնաբուխ ագրեսիան առաջ է գալիս առանց որևէ պատճառի, ներքին իմպուլսների ճնշման տակ:

Ագրեսիվ վարքը ավելի ընդգծված է դառնում դեռահասության տարիքում, երբ առավել արտահայտված են մի շարք երևույթներ. օրինակ՝ սթրես, ֆրուստրացիա, ծնողական սիրո պակաս կամ բացակայություն, կյանքից անբավարարվածություն, պատիժների կիրառումը (ծնողների կողմից): Դեռահասների մոտ ագրեսիվ վարքը կարող է ունենալ պաշտպանական նշանակություն: Քանի դեռ երեխայի շփման շրջանակը փոքր է, ընտանիքից բացի ուրիշ խրախուսման աղբյուր չունի, ագրեսիվ վարքի անտեսումը որոշ առումներով հնարավոր է, իսկ դեռահասը, քանի որ նրա շփման շրջանակը լայն է, նա կարող է փնտրել խրախուսանքի արտաքին աղբյուրներ, հատկապես հասակակիցներից, որն էլ այդ շրջանում ավելի կարևոր է դարձնում երևույթի սոցիալական նշանակությունը: Այդ պատճառով ծնողի կողմից ագրեսիվ վարքի անտեսումը կարող է դիտվել որպես խրախուսանք:

Դեռահասության փուլում ագրեսիվ վարքի ձևավորման արտաքին գործոններից են ընտանիքը (դաստիարակությունը) և սոցալական միջավայրը (դպրոց, ընկերական միջավայրը):

Դեռահասության տարիքում և՛ տղաների, և՛ աղջիկների մոտ լինում են ագրեսիվության դրսևորման բարձր և ցածր մակարդակներ: Տղաների մոտ

[13] Разочарование и агрессия / Джона Долларда,Нила Миллера, Леонарда В. Дуба, 1939.

[14] Агрессия в подростковом возрасте.(https://works.doklad.ru/view/36WtrD7seBU.html)

ավելի բարձր ագրեսիվության դրսևորումը լինում է 12-ից մինչև 15 տարեկան (ֆիզիկական, բայց նաև վերբալ ագրեսիայի դրսևորումներ), իսկ աղջիկների մոտ՝ 11 և 13 տարեկան (անուղղակի և վերբալ): Նրանց մոտ ագրեսիվության ակտիվ ձևերից է նաև նեգատիվիզմը, որը սովորաբար ուղղված է հեղինակությունների և ղեկավարության դեմ: Այն վարքի ընդդիմադիր ձև է, որը պասիվ հակադրությունից կարող է վերածվել ակտիվ գործողությունների՝ ընդդեմ սահմանված պահանջների, կարգի ու օրենքների: Ոչ պակաս կարևոր խնդիրներից է դեռահասի ինքնագնահատականի և ագրեսիայի փոխկապակցվածությունը:

Հոգեբաններ՝ Ն. Բ. Տրոֆիմովայի, Ա. Ա. Ռեանի հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ առավել ագրեսիվ դեռահասներն ավելի հաճախ ունենում են ծայրահեղ ինքնագնահատական՝ շատ բարձր կամ ծայրահեղ ցածր: Եթե խիստ ագրեսիվ դեռահասների խմբում 31%-ը ունի բարձր ինքնագնահատական, ապա ոչ ագրեսիվ դեռահասների խմբում երկու անգամ պակաս՝ 15%: Ըստ այդմ բարձր ագրեսիվ խմբի 25%-ը ցածր ինքնագնահատական ունի, իսկ ոչ ագրեսիվ խմբի միայն 15%-ը:

Լ. Մ. Սեմեյնուկն ուսումնասիրության ընթացքում ցույց է տրվել, որ եթե 10-11 տարեկան դեռահասների մոտ գերակշռում են ֆիզիկական ագրեսիայի դրսևորումները, ապա իրենց մեծանալուն պես բանավոր ագրեսիան առաջին պլան է մղվում (14-15 տարեկան): Սակայն տարիքը կապված չէ ֆիզիկական ագրեսիայի անկման հետ: Ագրեսիայի բոլոր ձևերի (ինչպես ֆիզիկական, այնպես էլ բանավոր) դրսևորման առավելագույն ցուցանիշները հայտնաբերվում են հենց 14-15 տարեկան հասակում: Բայց ֆիզիկական և բանավոր ագրեսիայի աճի դինամիկան, երբ նրանք մեծանում են, նույնը չէ: Չնայած ֆիզիկական ագրեսիայի դրսևորումները մեծանում են, բայց աննշանորեն, իսկ բանավոր ագրեսիայի դրսևորումները շատ ավելի արագ տեմպերով են աճում[15]:

Ա. Ա. Ռեանի դիտարկումների համաձայն՝ 14-17 տարեկան դեռահասների ֆիզիկական ագրեսիվության մակարդակը փոխկապակցված է անհատի ընդհանուր ինքնագնահատականի մակարդակի հետ: Որքան բարձր էր ինքնագնահատականը, այնքան արտահայտված է ֆիզիկական ագրեսիվության դրսևորման հակումը: Նույն ուսումնասիրության ընթացքում ցույց է

[15] Семенюк Л. М., Психологические особенности агрессивного поведения подростков и условия его коррекции, М., 1996.

տրվել, որ բանավոր ագրեսիվությունը փոխկապակցված է դեռահասի ինքնագնահատականի տարբեր տեսանկյունների հետ: Ինչպես նեգատիվիզմի դեպքում, այնպես էլ խոսքային ագրեսիայի դրսևորման մակարդակն ավելի բարձր է նրանց մոտ, ովքեր բնութագրվում են առաջնորդության բարձր հակումներով: Բարձր բանավոր ագրեսիայի դրսևորման ամենաբարձր հավանականությունը կապված է նաև անհատի բարձր ինքնագնահատականի հետ, հատկապես եթե նա բնութագրվում է որպես ինքնավար, ինքնուրույն անհատականություն, որն արտահայտվում է առաջնորդության ձգտումով և բարձր ինտելեկտով[16]:

Ելնելով վերոնշյալ տեսական ուսումնասիրություններից՝ մեր առջև նպատակ ենք դրել ուսումնասիրել Գեղարքունիքի մարզի դեռահասների ագրեսիվության առանձնահատկություններն ու առաջացման սոցիալ-հոգեբանական գործոնները:

Հետազոտության ընթացքում լուծել ենք հետևյալ խնդիրները. բացահայտել ենք ագրեսիվ վարքի դրսևորման հիմնական ձևերն ու պատճառներն ծնողների տեսակետից՝ հարցարանի միջոցով, ինչպես նաև, ուսումնասիրել ենք դպրոցում դեռահասների կողմից դրսևորվող վարքային մոդելները՝ դիտման և աշակետների հետ հարցարանի կիրառման միջոցով:

Հետազոտական աշխատանքներն իրականացվել է՝ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում: Միջին և ավագ դասարանների (11-17 տարեկան), դեռահասների և պատանիների շրջանում՝ 12 անձ (6 տղա և 6 աղջիկ):

Հետազոտության գործընթացն իրականացնել է հետևյալ մեթոդներով՝

- էմպիրիկ դիտում,
- հարցարան ծնողների համար («Ագրեսիվության նշաններ»),
- Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանշների ախտորոշման մեթոդիկա:

Էմպիրիկ դիտում

Էմպիրիկ դիտման մեթոդը հնարավորություն է տալիս բացահայտելու մարդու ցանկացած վարքագծի դրսևորման հաճախականությունը, օրինաչափությունները և պայմանները: Դիտման մեթոդով փորձեցինք բացահայտել, թե դեռահասության տարիքում աղջիկների և տղաների մոտ ագրեսիվության որ գիծն է ավելի ընդգծված: Դիտումը իրականացվել է ուսումնա-

[16] Реан А.А., Трофимова Н. Б., Гендерные различия структуры агрессивности у подростков // Актуальные проблемы деятельности практических психологов, 2002.

գործնական պրակտիկայի ընթացքում, տևել է 1 ամիս, արդյունքերը արձանագրվել են դիտման աղյուսակում:


Աղյուսակ 1. Դեռահասների և պատանիների ագրեսիվ վարքի դրսևորման դիտման արձանագրություն:

Աղջիկների ցուցանիշներ

Անուն ազգանուն	Տարիք	Ֆիզիկական ագրեսիա	Խոսքային ագրեսիա	Անուղղակի ագրեսիա	Նյարդայնություն
Լ.Հ	17տ	(3)	(6)	(2)	(9)
Լ.Ս	17տ	(1)	(4)	(1)	(4)
Հ.Հ	15տ	(4)	(2)	(3)	(6)
Գ.Մ	15տ	(5)	(8)	(4)	(11)
Ա.Բ	14տ	(1)	(5)	(3)	(3)
Ա.Բ	14տ	(3)	(6)	(6)	(8)


Տղաների ցուցանիշներ

Անուն ազգանուն	Տարիք	Ֆիզիկական ագրեսիա	Խոսքային ագրեսիա	Անուղղակի ագրեսիա	Նյարդայնություն
Մ.Ա	17տ	(6)	(4)	(3)	(10)
Ա.Թ	15տ	(4)	(3)	(2)	(8)
Մ.Տ	14տ	(7)	(2)	(4)	(10)
Ա.Ա	14տ	(9)	(4)	(1)	(7)
Ռ.Բ	13տ	(3)	(1)	(1)	(3)
Ա.Մ	12տ	(10)	(2)	(3)	(7)



Գծապատկեր 1. Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանշների ախտորոշման մեթոդիկա:

Ա. Բասի և Ա. Դարկիի ագրեսիայի տիպերի և ցուցանշների ախտորոշման մեթոդիկայով հնարավոր եղավ պարզել դեռահասների տարբեր տարիքում որ տիպի ագրեսիան է ավելի բնորոշ:




Գծապատկեր 2. Ագրեսիվ վարքի արդյունքները 12-17 տարեկան դեռահասների մոտ:

Արդյունքների ամփոփման արդյունքում պարզ դարձավ, որ 12-17տ դեռահասների մոտ գերակշռում է բարձր նյարդայնությունը (դժգոհություն) 17%: Ագրեսիավության այդ տիպը նկատելի էր դեռահասների մոտ արդեն մեթոդը կիրառելու ընթացքում, նրանք անընդհատ նյարդայնանում էին՝ գրիչը լավ չէր, հարցերը անիմաստ ու շատ էին:

Էքսպրես հարցարան

Հարցարանը ծնողների համար («Ագրեսիվության նշաններ») մշակվել է Կ. Կ. Լյուտովայի և Գ. Բ. Մոնիկայի կողմից: Առաջադրում է 19 հարց: Պատասխանում են «այո» կամ «ոչ»: Դրանք տրվում են դեռահասների ծնողներին և համեմատվում արդեն անցկացրած ագրեսիվությունը ստուգող մեթոդների արդյունքների հետ, որն էլ թույլ է տալիս հասկանալ, թե արդյո՞ք ծնողները ուշադիր են այդքան դժվար տարիք ունեցող երեխաների վարքի հանդեպ: Արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ դեռահասների ցուցանիշները համապատասխանում էին ծնողների ցուցանիշների հետ, և այստեղ ևս արտահայտված էր նյարդայնության բարձր մակարդակ:



Գծապատկեր 3.

Այսպիսով, հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ դեռահասների մոտ առավել ընդգծված է ագրեսիվության նյարդային տեսակը (դժգոհություն), որն էլ նրանց հաճախ դարձնում է խիստ դյուրագրգիռ, ագրեսիվ և նեղացկոտ առանց պատճառի: Բացահայտեցինք նաև, որ որոշ բացառություններով ծնողները մեծ ուշադրությամբ հետևում են երեխաների՝ տրամադրության և հոգեբանական վիճակների փոփոխություններին, գրգռվածությանը, որն էլ թույլ է տալիս ավելի վաղ բացահայտել ագրեսիվության դրսևորումները և կանխարգելել դրա հակասոցիալական մակարդակի հասունացումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գրիգորյան Հ. Ա., Պատմական տերմինների դպրոցական համառոտ բառարան, Եր., 1982թ.:
2. Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր., 2004թ.:
3. Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977թ.:
4. Агрессия и принцип удовольствия: к психоаналитической теории агрессии. (psyjournal.ru)
5. Агрессивное поведение (https://ru.wikipedia.org/wiki/)
6. Агрессия в подростковом возрасте. (https://works.doklad.ru/view/-36WtrD7seBU.html)
7. Басс А. Г., Агрессия // Учебное пособие, 2014.
8. Бэрон Р., Ричардсон Д., Агрессия,СПб., 2001.
9. Лоренц К., Агрессия: так называемое «зло» М., 1994.

10. Фромм Э., Анатомия человеческой деструктивности, М., Республика, 2004.
11. Реан А.А., Трофимова Н.Б. Гендерные различия структуры агрессивности у подростков // Актуальные проблемы деятельности практических психологов, 2002.
12. Разочарование и агрессия / Джона Долларда,Нила Миллера, Леонарда В. Дуба,1939.
13. Семчук Л. А, Янчий А.И., Возрастная психология,ГрГУ им. Я. Купалы, 2006.
14. Семенюк Л. М., Психологические особенности агрессивного поведения подростков и условия его коррекции, М.,1996.
15. Теория агрессии и необходимость интегративного подхода при изучении агрессивных состояний (https://www.expeducation.ru)
16. Фрейд З., Анализ конечный и бесконечный, 1996.

FACTORS OF FORMING AGGRESSIVENESS OF ADOLESCENTS IN THE PERIOD OF ADOLESCENCE

BAVEYAN NARINE
3-rd year student of Department of History
Faculty of Humanities
Gavar State University
e-mail: narine.baveyan@mail.ru
Academic Supervisor: Davtyan Armine
Lecturer at Gavar State University,
Pedagogue, Health Psychologist

The article presents the results of our study of adolescent aggression types and developmental factors in Gegharkunik region.

Our research is based on definitions of aggression by AA Ryan, D. Krechi, D. Richardson and by others, according to which aggression is the type of behavior that is intended to injure or harm another living being, human or animal, regardless of its desire.

Based on the psychological concepts of theoretical approaches of aggressive behavior, we have studied the types of aggressive behavior of adolescents and the factors of mating.

The research was carried out for empirical observation, according to "Types of Aggression Diagnosis Methods" and "Signs of Aggression" by A. Basi and A. Dark's (Questionnaire for Adolescent Parents). The causes and factors of aggressive behavior were compared, the most common types were identified.

We noted that in the sample group of adolescents, the physical-verbal (verbal) types of aggression were more frequent, for which the social environment and psychophysiological features were the causal factors.

Key words: *Adolescent aggression, congenital and acquired aggression, frustration, physiological change, period of ontogeny.*

ИССЛЕДОВАНИЕ ФАКТОРОВ И ПРИЧИН АГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ В ПОДРОСТКОВЫЙ ПЕРИОД

БАВЕЯН НАРИНЕ

Студентка 3-его курса отделения истории
факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: narine.baveyan@mail.ru
Научный руководитель: Давтян Армине
Преподаватель ГГУ, педагог, психолог здоровья

В статье представлены результаты исследования факторов формирования агрессивного поведения и типов агрессивности подростков Гегаркуникской области.

Наше исследование основано на определениях агрессии А. А. Райан, Д. Кречи, и Д. Ричардсона и других, согласно которым агрессия - это форма поведения. направленная на нанесение вреда другому человеку или животному, независимо от его или её пожелания.

На основе психологических представлений, концепций и теоретических подходов к агрессивному поведению изучены типы и факторы агрессивного поведения подростков.

Исследования проводились эмпирически на основе методов и вопросников А. Басса и А. Дарки "Диагностика типов и показателей агрессии", и "Признаки агрессии" (Анкета для родителей-подростков). По методу сравнительного анализа выявлены причины и факторы агрессивного поведения, а также наиболее распространенные типы такого поведения.

Нами зафиксировано, что в группе подростков нашей выборки чаще встречались физические и вербальные (словесный) типы агрессии, причинными факторами которых выступали возрастные психофизиологические особенности социальной среды.

Ключевые слова: *подростковая агрессия, врожденная и приобретенная агрессия, расстройство, физиологические изменения, период онтогенеза.*

5.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՍԻՆ

ԵԳԱՆՅԱՆ ԱՆՆԱ

Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ annaeganyan777@gmail.com
Գիտական ղեկավար՝ Խաչատրյան Սամվել
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածը նվիրված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտին: Հոդվածում փորձ է արվել ներկայացնել տարբեր երկրներում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու կարգը, սկզբունքներն ու ձևերը, ինչպես նաև այդ ինստիտուտի ձևավորման պատմությունը, ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Առաջարկ է արվել Հայաստանի Հանրապետությունում նոր քրեական օրենսգրքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ընդունելու դեպքում հաշվի առնել դրան բնորոշ առանձնահատկությունները՝ կապված իրավաբանական անձին ոչ վերագրելի հանցակազմի տարրերի, մասնավորապես մեղքի, իրավական նշանակություն ունեցող էմոցիաների և պատժատեսակների հետ:

Բանալի բառեր՝ *ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, իրավաբանական անձ, քրեական պատասխանատվություն, պատիժ, մեղք, հանցագործություն:*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածը բովանդակում է ծրագրային նորմ, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետու-

թյուն է»[1]: 1995 թվականին Հայաստանի Հանարապետության Սահմանադրության ընդունումից հետո սկսվեցին դատահիրավական բարեփոխումներ, որոնց արդյունքում մշակված կարևոր իրավական ակտերից է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2003 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք): Այն անմիջական գործողության օրենք է, որը միասնական և համակարգված ձևով կարգավորում է հանցագործության և պատժի հետ կապված հարաբերությունները: Կարևորելով Օրենսգրքի ակնհայտ առավելություններն ու դրական նշանակությունը հանցագործությունների որակման և պատիժների սահմանման գործում՝ միաժամանակ պետք է նշել, որ, մեր կարծիքով, այն զերծ չէր թերություններից, որոնց մի մասն առկա էր օրենսգրքի ընդունման պահից, իսկ մյուսներն ի հայտ եկան դրա գործնական կիրառման ընթացքում: Այդ պատճառով 2019թ. նոյեմբերին հանրության քննարկմանը ներկայացվեց նոր քրեական օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ)[2]: Նախագծի 7 –րդ բաժինը իրավական նորույթ է բովանդակում և նվիրված է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտին: Դրանում առանձին հոդվածներով սահմանված են նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության սկզբունքներն ու առանձնահատկությունները: Նախագծով առաջարկված տարբերակով լուծում է տրվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մոդելի, պատասխանատու անձանց շրջանակի, պատասխանատվության միջոցների հետ կապված և այլ հարցերի: Գործող քրեական օրենսդրությամբ ՀՀ–ում հանցագործության սուբյեկտ է ճանաչվում միայն ֆիզիկական, մեղսունակ անձը, ով հասել է օրենքով սահմանված տարիքի՝ 16, իսկ առանձին հանցագործությունների դեպքում՝ 14, և ի զորու է գիտակցելու իր գործողությունների բնույթը, հասկանալու դրանց հետևանքները և ղեկավարելու դրանք: Օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է, որ «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի»: Ի հավելումն գործող օրենսգրքի՝ նախագծի 126-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն ամրագրում են, որ

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995, ՀՀ Սահմանադրություն, 2005 (փոփոխություններով), ՀՀ Սահմանադրություն 2015 (փոփոխություններով),www.arlis.am

[2] Տե՛ս ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, 06.09.2015:

«1. Հայաստանի Հանրապետությունում քրեական պատասխանատվության են ենթակա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձը, միջազգային կազմակերպությունը, ընկերությունը, օտարերկրյա իրավունքին համապատասխան ստեղծված իրավաբանական անձը կամ օտարերկրյա կազմակերպությունը կամ ընկերությունը:

2. Քրեական պատասխանատվության ենթակա չեն պետությունը, համայնքները, պետական հիմնարկները»: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը գործող օրենսդրության մեջ պահանջում է լուրջ գիտական հիմնավորում: Այս հարցում մասնագետների կարծիքները տարբեր են: Մի տեսակետի համաձայն՝ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը կարող է նպաստել կորպորացիաների հակաիրավական գործունեությանը հակազդելու ուղղությամբ պետության գործունեության արդյունավետության բարձրացմանը, հանցավորության կանխմանը, հասարակության հանցածին լարվածության թոթափմանը: Մենք նույնպես գտնում ենք, որ այս ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք իրավական, սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոններով, որոնք կապված են իրավաբանական անձանց շահերի պաշտպանության, դրանց կողմից և դրանց դեմ կատարվող հանցագործությունների քանակի կրճատման, ինչպես նաև տնտեսության հիմնարար հիմքերը ապակայունացնող, ընդհանրապես հասարակության քրեածին վիճակը վատթարացնող, կոռուպցիայի, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, թրաֆիքինգի, կիբեռհանցավորության և այլ վտանգավոր հանցատեսակների դեմ պայքարի հետ: Ներկայումս իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտն այս կամ այն ձևով առկա է շուկայական տնտեսություն ունեցող երկրների որոշ մասում[3]:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է, վավերացրել է բազմաթիվ միջազգային կոնվենցիաներ, հանցավորության դեմ պայքարի մասին միջազգային-իրավական փաստաթղթեր, ուստի կարծում ենք, որ հանցագործությունների կատարման համար իրավաբանական ան-

[3] Տե՛ս Смирнов Г., Перспективы и условия введения в России института уголовной ответственности юридических лиц // Уголовное право,2011, №2, էջ 77:

ձանց նկատմամբ քրեական պատժամիջոցների կիրառումը արդյունավետ կլինի: Միաժամանակ կորպորատիվ սուբյեկտների պատիժները պետք է լինեն արդյունավետ, համաչափ և ունենան կանխիչ, զսպող ազդեցություն:

Աշխարհում լայն տարածում գտած բազմաթիվ հանցագործություններ, օրինակ, կոռուպցիոն հանցագործությունները, փողերի «լվացումը», պահանջում են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառում: Այն հրամայական է դառնում նաև միջազգային իրավական ակտերի հետ կապված, որոնք պահանջում են դրանք վավերացնող պետություններից ներպետական օրենսդրությամբ ամրագրել իրավաբանական անձանց պատասխանատվությունը: Բերենք օրինակներ: Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված «Կոռուպցիայի մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածը սահմանում է, որ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ-պետություն պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հանցագործությունների կատարման դեպքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար[4]: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը սահմանված չէ բոլոր երկրներում: Քրեական պատասխանատվության սուբյեկտի վերաբերյալ մոտեցումները տարբեր պետություններում ունեն իրենց առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է այս կամ այն պետության քրեական քաղաքականության հայեցակարգային մոտեցումներով: Իհարկե, Հայաստանի Հանրապետությունում այլ պետությունների պես գործում է իրավաբանական անձանց վարչական, քաղաքացիական, նյութական պատասխանատ-վության ինստիտուտը: Այսինքն՝ ստացվում է, որ իրավախախտման համար իրավաբանական անձը ենթարկվում է ոչ թե քրեական, այլ վարչական, քաղաքացիական, ֆինանսական պատասխանատվության, այդ պատճառով այս մոդելն այլ կերպ կոչվում է «իրավաբանական անձանց «քվազիքրեական» կամ «կեղծ քրեական» կամ այլընտրանքային պատասխանատվություն[5]:

Գերմանիան և Իտալիան ավանդաբար դեմ են եղել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ազգային իրա-

[4] Տե՛ս Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (27 հունվարի 1999թ., Ստրասբուրգ): Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2006թ. մայիսի 6-ից:

[5] Տե՛ս Սրբուհի Գալյան Ս. Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, Երևան, 2015:

վական համակարգ ներմուծելուն և դատարաններին վերապահել են իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթ իրականացնելու իրավասություն: Ներկայումս այս մոդելը գործում է Իտալիայում և Գերմանիայում: Գերմանիայում իրավաբանական անձանց պատասխանատվությունը այժմ կրում է «քվազիքրեական» կամ «կեղծ քրեական» այլընտրանքային բնույթ: Այն սահմանվում է հասարակական կարգի խախտումների մասին օրենքի հիման վրա[6]: Գերմանիայի համար խնդիրը դարձել է խիստ արդիական, քանի որ 2013 թվականին Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիա դաշնային հողում շրջանառության մեջ է դրվել «Իրավաբանական անձանց և այլ միավորումների քրեական պատասխանատվության սահմանման մասին» օրենքի նախագիծը: Լատվիայում, Ուկրաինայում իրավաբանական անձիք կրում են վարչական, քաղաքացիական,հարկային, նյութական և քրեական պատասխանատվություն[7]:

Առաջին անգամ 1842 թվականին Անգլիայի Թագավորական աթոռի դատարանը իրավաբանական անձին մեղավոր ճանաչեց՝ օրենքով վերջինիս վրա դրված պարտականությունը չկատարելու համար: 1944 թվականից սկսած՝ Անգլիայում իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության թե՛ առանձին իրավախախտում կատարելու, թե՛ հանցակցությամբ իրավախախտման համար՝ անկախ հանցագործության սուբյեկտիվ կողմի առկայությունից[8]: 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբը դատարանները սկսեցին որոշումներ կայացնելիս ղեկավարվել սուբսիդիար պատասխանատվության տեսությամբ (այլ կերպ ասած՝ պատասխանատվության փոխարինման կամ այլ անձի փոխարեն լրացուցիչ պատասխանատվության կրման հայեցակարգով), որը ծագել է դելիկտային իրավունքից: Նշված տեսության հիմքում ընկած էր հետևյալ սկզբունքը՝

[6] Տե՛ս Уголовная ответственность юридических лиц в Россиии Германии к постановке проблемы, 2017.

[7] Փիեթ Մ., Լոու Լ.Ա., և Քալեն Փ.Զ., (խմբ.), Կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիա. ծանոթագրություն, ՄԹ.Քեմբրիջ, Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, 2007, էջ 223:

[8] Տե՛ս Guy Stessens, Corporate criminal liability: a comparative perspective. «International and Comparative Law Quarterly» 17 Jan 2008, P. 493-520, էջ 508:

«թող պատասխան տա ամենավերևում կանգնածը»[9]: Ներկայումս Անգլիայում գործում է հենց այս մոտեցումը: Միաժամանակ իրավաբանական անձը կարող է ազատվել պատասխանատվությունից կամ պատասխանատվության և պատժի չկրած մասից այն դեպքում, եթե խոստովանում է, որ կատարել է հակաիրավական արարք և փոխհատուցում է վնասները: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն սահմանելիս պետք է հաշվի առնել նրանց կազմակերպաիրավական ձևը, կարգավիճակը:

2015 թվականին Ռուսաստանի Դաշնությունում կրկին արդիական է դարձել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու վիճելի հարցը՝ կապված «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման կապակցությամբ Ռուսաստանի Դաշնության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» դաշնային օրենքի նախագծի մշակման հետ: Նախագծում սահմանված է, որ Ռուսաստանի Դաշնությունում իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական և վարչաիրավական պատասխանատվության առկայությունը համապատասխանում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին ու նորմերին և նրանց քրեական պատասխանատվությունը չի հակասի ՌԴ միջազգային պայմանագրերին:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը սահմանված է ոչ բոլոր հանցավոր արարքների համար: Ֆրանսիայում իրավաբանական անձանց նկատմամբ նյութական պատասխանատվության կիրառման ոլորտը օրենսդիրը բավական ընդլայնել է 1994 թվականից սկսած[10]: Ընդ որում քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերը պետք է հատուկ նախատեսված լինեն նորմատիվ իրավական ակտով:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը դեմ կարծիքները հիմնավորվում են նրանով, որ դա հակասում է դեռևս հռոմեական դասական իրավունքի սահմանած կանոնին՝ «Չկա մեղք, չկա հանցագործություն»(Nullum peccatum, nullum scelus): Իրավաբանական անձի

[9] Տե՛ս Laurel J. Harbour and Natalya Y. Johnson, Can a Corporation Commit Manslaughter? Recent Developments in the United Kingdom and the United States. «Defense Counsel Journal» Jul 2006, P. 226-234:

[10] Տե՛ս Уголовная ответственность юридических лиц во Франции

արարքում դժվար է բացահայտել սուբյեկտիվ կողմը ՝ մեղքը, որն անձի ներքին, հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի և դրա հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ՝ մեղքը կարող է գործել կազմակերպության ղեկավարը՝ տնօրենը, նախագահը, հաշվապահը և պատասխանատու այլ անձը, բայց ոչ ամբողջական կառույցը:

Բացի դրանից՝ անհնար է պատկերացնել իրավաբանական անձին մեղադրյալի աթոռին կամ ազատազրկման ձևով պատիժը կրելիս: Քրեական գործի հետաքննության ու նախաքննության, ապա դատարանում որպես ամբաստանյալ հանդես է գալիս ֆիզիկական անձը, այդ թվում՝ իրավաբանական անձի նախկին ղեկավարը, այլ պաշտոնյա, պատասխանատու անձ: Բացի մեղքից՝ սուբյեկտիվ կողմը ներառում է նաև հույզերը, զգացմունքները, որոք իրավաբանական անձին վերագրելի չեն:

Այսպիսով, իրավաբանական անձին քրեական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հարցում մասնագետների կարծիքները տարբեր են, հաճախ՝ իրարամերժ: Մեր կարծիքով, կարելի է ՀՀ քրեական օրենսդրությամբ ներառել իրավաբանական անձանց պատասխանատվությունը վերապահումներով՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց կարգավիճը, կազմակերպական, գործառութային բոլոր առանձնահատկությունները: Իրավաբանական անձանց նկատմամբ հնարավոր ենք համարում միայն գույքային պատիժներ՝ նյութական սանկցիաների նախատեսում՝ ապահովելով, որ մեղավոր ֆիզիկական անձինք չխուսափեն քրեական պատասխանատվությունից ու պատժից իրենց գործած հանցանքների, այսինքն՝ դրսևորած մեղքի համար:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ-ում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցը քննելիս չպետք է հանդես բերել ավելորդ շտապողականություն, այլ դրսևորել գիտական մոտեցում, բազմակողմանի և խորքային կերպով ուսումնասիրել միջազգային քրեաիրավական պրակտիկան, հաշվի առնել ՀՀ առանձնահատկությունները և հանգել խելամիտ որոշման: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը ՀՀ–ում նախատեսելու դեպքում պետք է սահմանել նաև իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունները՝ կապված իրավաբանական անձին ոչ վերագրելի հանցակազմի տարրերի, մասնավորապես մեղքի, իրավական նշանակություն ունեցող էմոցիաների և պատժատեսակների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (05.06.1995թ.), www.arlis.am
2. ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, 06.09.2015թ.:
3. Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա (27-ը հունվարի, 1999թ., Ստրասբուրգ): ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2006թ. մայիսի 6-ից:
4. Գալյան Ս., Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, Երևան, 2015թ.:
5. Փիեթ Մ., Լոու Լ. Ա., Քալեն Փ. Զ., (խմբ.), Կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիա. ծանոթագրություն, ՄԹ.Քեմբրիջ, Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն, 2007թ., էջ 223:
6. Смирнов Г., Перспективы и условия введения в России института уголовной ответственности юридических лиц // Уголовное право, 2011, №2, с. 77:
7. Уголовная ответственность юридических лиц в Россиии Германии к постановке проблемы, 2017.
8. Уголовная ответственность юридических лиц во Франции.
9. Guy Stessens, Corporate criminal liability: a comparative perspective. «International and Comparative Law Quarterly» 17 Jan 2008, P. 493-520, էջ 508:
10. Laurel J. Harbour and Natalya Y. Johnson, Can a Corporation Commit Manslaughter? Recent Developments in the United Kingdom and the United States. «Defense Counsel Journal» Jul 2006, P. 226-234:

THE HISTORY OF THE FORMATION OF THE INSTITUTE OF CRIMINAL LIABILITY OF LEGAL ENTITIES

YEGANYAN ANNA

2nd-year student of the Department of Jurisprudence
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: annaeganyan777@gmail.com
Academic supervisor: Khachatryan Samvel
Doctor of Law, Associate Professor

The article is devoted to the institution of criminal liability of legal entities. The article attempts to present the experience of legal entities in different countries and

the basis and procedure of criminal liability, as well as the principles and forms of creating criminal liability of legal entities, the history of the formation of this institution and the possibilities of its implementation in the Republic of Armenia. A proposal was made to define the specific features of the institution of criminal liability of legal entities in the new Criminal Code of the Republic of Armenia.

Key words: *RA Constitution, RA Criminal Code, legal entity, criminal liability, punishment, sin, crime.*

ОБ ИНСТИТУТЕ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

ЕГАНЯН АННА
Студентка 2 курса отделения юриспруденции
факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: annaeganyan777@gmail.com
Научный руководитель: Хачатрян Самвел
Кандидат юридических наук, доцент

Статья посвящена институту уголовной ответственности юридических лиц. В статье предпринята попытка представить основания и порядок, принципы и формы привлечения юридических лиц к уголовной ответственности в разных странах, а также историю формирования этого института, возможности его внедрения в Республике Армения. Предложено, в случае принятия в новом Уголовном кодексе Республики Армения института уголовной ответственности юридических лиц, определить характерные для этого особенности.

Ключевые слова: *Конституция РА, Уголовный кодекс РА, юридическое лицо, уголовная ответственность, наказание, вина, преступление.*

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանող
Էլ. փոստ՝ gasparyan-galust@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հարությունյան Մնացական
իրավաբանական գիտությունների թեկնածու

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական իրավունքի սկզբունքներին: Ներկայացված են ինչպես ընդհանուր սահմանադրական, այնպես էլ հատուկ բնույթի քրեաիրավական սկզբունքները, դրանց հարաբերակցությունը:

Առաջարկվել է որոշ սահմանադրական սկզբունքներ պարտադիր ամրագրել նաև ՀՀ քրեական օրենսգրքում՝ դրանց կրկնակի օրենսդրական ամրագրումը և սահմանադրաիրավական հուսալի պաշտպանությունն ապահովելու համար:

Բանալի բառեր՝ *ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, նախագիծ, հոդված, սկզբունք, համեմատաիրավական վերլուծություն, պատասխանատվություն, մեղք, մարդասիրություն, օրինականություն:*

Իրավագիտության մեջ ձևավորված նորմատիվիստական հայեցակարգի համաձայն՝ իրավունքը պետության կողմից սահմանված և սանկցիայի ենթարկված համապարտադիր վարքագծի ընդհանուր կանոնների համակցությունն է: Իրավունքի համակարգը ձևավորվում և գործում է որոշակի սկզբունքների հիման վրա, որոնք արտահայտում են նրա էությունը և սոցիալական նշանակությունը: Նրանցում արտացոլվում են իրավունքի հիմնական առանձնահատկությունները, որոնք հասարակական հարաբերություններում նրան տալիս են ազատության և արդարության չափի պետական կարգավորիչի դեր:

Իրավունքի սկզբունքները հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափություններն իրավաբանորեն ամրապնդող հիմնական ելակետային

դրույթներն են[1]: Նրանք արտահայտում են իրավունքի առավել էական հատկանիշները, որոշում նրա սոցիալ-իրավական բնույթը: Իրավունքի սկզբունքները կազմում են հանրային իշխանության բոլոր մարմինների ձևավորման և գործունեության հիմքը: Ղեկավարվելով դրանցով՝ պետությունն ապահովում է իր քաղաքացիների անձնական, սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավունքներն ու ազատությունները, հետևում նրանց կողմից իրավաբանական պարտականությունների կատարմանը: Նորմ-սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, նորմատիվ իրավական այլ ակտերում:

Իրավունքի պահանջների ճշգրիտ և անշեղ իրականացումը նշանակում է նախ նրանցում սկզբունքների հետևողական կենսագործում: Ուստի կոնկրետ իրավաբանական հարցեր լուծելիս անհրաժեշտ է առաջին հերթին ղեկավարվել իրավունքի սկզբունքներով: Սկզբունքները իրավական նորմերի ճիշտ կիրառման, հիմնավորված և օրինական որոշումների ընդունման հիմք են ծառայում:

Իրավունքի սկզբունքները կարող են հատուկ ամրագրվել ընդհանուր իրավական նորմերում (նորմ-սկզբունքներում)՝ սահմանադրությունների, ներածականներում (պրեամբուլաներում), օրենսգրքերում կամ օրգանապես շաղկապվել «իրավական մատերիային»՝ իրավական ակտի նորմատիվ բովանդակության մաս կազմելով:

Փիլիսոփայության մեջ սկզբունք (լատ.principium-հիմք, նախասկզիբ) ասելով՝ հասկանում են նախասկիզբ, ղեկավար գաղափար, վարքագծի հիմնական կանոն: Տրամաբանության տեսանկյունից՝ սկզբունքը առանցքային հասկացություն է, համակարգի հիմքը, որն իրենից ներկայացնում է ինչ-որ դրույթի ընդհանրացում և տարածում է այն ոլորտի բոլոր երևույթների վրա, որոնց այդ սկզբունքը վերաբերում է: Վարքագծի սկզբունքը այլ կերպ անվանում են «մաքսիմա»՝ հասարակության մեջ մարդկանց հարաբերությունները բնութագրող նորմ[2]:

«Իրավունքի սկզբունքը» իրավունքի տեսության հիմնարար կատեգորիաներից է: Մասնագիտական գրականության մեջ իրավունքի սկզբունքնե-

[1] Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ. Իրավունքի սկզբունքները որպես հիմնարար գաղափարներ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, թիվ 5, էջ 613-620:

[2] Վաղարշյան Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն, հատոր 2-րդ, Երևան, 2011, էջ 45:

րը սահմանվում են որպես օբյեկտիվ օրինաչափությունները իրավաբանորեն արտացոլող հասարակական կյանքի հիմնական գաղափարներ ու ելակետային, ղեկավար դրույթներ, որոնք որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության (կիրառման) գործընթացը, դրա բովանդակության հիմնական հարցերը, սոցիալական էությունը[3]: Իրավունքի սկզբունքները մի կողմից արտահայտում են իրավունքի օրինաչափությունները, իսկ մյուս կողմից՝ համարվում են ամենից ընդհանուր նորմեր, որոնք գործում են իրավական կարգավորման համակարգում:

ՀՀ Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, պոզիտիվ իրավունքի առաջնային աղբյուրը, ուստի հենց Սահմանադրությունից են բխում ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված սկզբունքները: Առաջինը օրինականության սկզբունքն է, ըստ որի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո[4]:

Սույն սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածում հետևյալ կերպ. «Արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեահրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենսգրքով, քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»: Օրինականության սկզբունքը քրեական իրավունքում ունի երկակի նշանակություն, քանի որ այն մի կողմից ենթադրում է, որ արարքի հացավորությունը և պատժելիությունը որոշվում է քրեական օրենսգրքով, մյուս կողմից էլ քրեական օրենքը անալոգիայի կարգով կամ համանմանության սկզբունքով կիրառման ենթակա չէ:

Հաջորդը օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքն է, ըստ որի՝ բոլորը հավասար են օրենքի առջև: Եվս մի հոդված է ամրագրված ՀՀ

[3] Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 258:
[4] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով, հոդված 6-րդ), 06.12.2015:

Սահմանադրության մեջ, որը սահմանում է խտրականության արգելքի սկզբունքը: Ըստ Սահմանադրության 29-րդ հոդվածի՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական, կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Սույն սկզբունքը ամրագրված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 6–րդ հոդվածում, ըստ որի՝ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ վերը նշված հանգամանքներից: Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը նշանակում է, որ հանցագործություն կատարած բոլոր անձինք հավասար են քրեական օրենսգրքի և դատարանի առջև՝ անկախ սեռից, ազգային կամ ռասայական պատկանելիությունից, կրոնական, քաղաքական կամ այլ համոզմունքներից, սոցիալական դրությունից, պաշտոնեական դիրքից, կրթությունից ու այլ հանգամանքներից: Կարծում ենք, որ նշված սկզբունքն ուղղակիորեն կրկնվում է, քանի որ ՀՀ Սահմանադրությունում պարզ, հստակ նշվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև՝ թե՛ օտարերկրացի, թե՛ ՀՀ քաղաքացի, թե՛ բարձրաստիճան կամ միջին օղակի պաշտոնատար անձ: ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը ևս արգելում է խտրականությունը՝ կախված վերոնշյալ հանգամանքներից, այլապես կդիտվի որպես խտրականության տարբերակված մոտեցում առանց օբյեկտիվ հիմքի: ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված սահմանադրական սկզբունքը ստանում է երկակի օրենսդրական ամրագրում և «պաշտպանություն»:

Անդրադառնանք ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածին, ըստ որի՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում բացակայում է նշված սկզբունքը: Համեմատաիրավական վերլուծությունից բխում է, որ այս սկզբունքի բացակայությունը կարող է խնդիրներ առաջացնել: Ուստի պետք է ներառվի քրեական օրենսգրքում: ՀՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածը

ամրագրում է պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, այն է՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Երկրորդ մասով՝ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում: Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ նախագիծ)[5], ամրագրված չէ նշված սկզբունքը: Ուստի առաջարկում ենք այն ներառել նախագծի մեջ, քանի որ դեռևս չի ձևավորվել բարձր իրավագիտակցություն և իրավական մշակույթ, որոնց պայմաններում արգելքը չի խախտվի՝ անկախ օրենքում ամրագրված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Այժմ ներկայացնենք ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածում ամրագրված անձնական պատասխանատվության սկզբունքը, որի համաձայն՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ կատարած հանցանքի համար: Անձնական պատասխանատվությունը նշանակում է, որ անձը քրեական պատասխանատվություն կարող է կրել միայն այն արարքի համար, որը կատարվել է իր կողմից: Եթե անձը իր կատարած արարքի համար չպատժվի, ապա մեծ է հավանականությունը, որ տվյալ անձը դարձյալ հանցանք կկատարի՝ կարծելով, որ նույն կերպ կարող է խուսափել քրեական պատասխանատվությունից:

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից, այսինքն՝ օբյեկտիվ մեղսայնացումը՝ առանց մեղքի վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվությունը արգելվում է: Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը, որն այլ կերպ կոչվում է սուբյեկտիվ մեղսայնացում, ենթադրում է, որ անձը քրեական պատասխանատվության ենթակա է միայն այն արարքի համար, որի նկատմամբ դրսևորել է մեղք: ՀՀ Սահմանադրության 68-րդ և 71-րդ հոդվածները ամրագրում են մեղքի սկզբունքը, պատժի համաչափության սկզբունքը և կրկին դատվելու արգելքը: Ըստ դրանց՝ հանցանք կատարած ան-

[5] Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծ//www. e-draft.am:

ձի պատժի հիմքը նրա մեղքն է: Օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակը և պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին: Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար: Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա: Սույն սկզբունքները ամրագրված են նաև ՀՀ քրեական օրենսգրքում (10-րդ հոդված). հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի և համապատասխանեն հանցանքի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Արգելվում է անձին երկրորդ անգամ դատապարտել նույն հանցագործության համար, որը ճիշտ ենք համարում:

Արդարության սկզբունքը քրեական իրավունքում նշանակում է, որ հանցավորի նկատմամբ նշանակված պատիժը պետք է համաչափ լինի կատարված հանցագործության ծանրությանը և հանցավորի անձը բնութագրող տվյալներին: Բացի դրանից՝ արդարության սկզբունքից հետևում է, որ նույն արարքի համար անձը կրկնակի դատապարտման ենթակա չէ:

Անդրադառնանք մեկ այլ կարևոր սկզբունքի, որը ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածում ամրագրված է հետևյալ կերպ. «Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքը», ըստ որի՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, մարմնական պատիժներն արգելվում են, ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք: Սույն հոդվածը ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածում՝ որպես մարդասիրության սկզբունքի բաղադրատարր. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն, ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային, կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Համեմատաիրավական վերլուծություն կատարելով՝ կարելի է նշել, որ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը գրեթե նույնությամբ վերցված և ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածում, ուստի

ճիշտ ենք համարում այս սկզբունքի կրկնակի ամրագրումը նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում: Օրինակ՝ անձը բերման է ենթարկվել սպանության կասկածանքի հիմքով և նրան հարցաքննության ժամանակ ենթարկում են խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Այս դեպքում քրեական հետապնդման մարմնի պաշտոնատար անձինք կխախտեն և՛ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված 26-րդ հոդվածը, և՛ պատասխանատվության կենթարկվեն ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածով և հատուկ մասի համապատասխան հոդվածով:

2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությունը լրացվեց համաչափության և որոշակիության սկզբունքներով: 78-րդ հոդվածը սահմանում է համաչափության սկզբունքը, ըստ որի՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»: Իսկ 79-րդ հոդվածն ամրագրում է որոշակիության սկզբունքը, որի համաձայն.«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Առաջարկում ենք համաչափության և որոշակիության սկզբունքները՝ որպես քրեական օրենսդրության սկզբունքներ, ներառել նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքում: Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրական դատարանը 2021թ. մարտի 26-ին ընդունված ՍԴՈ-1586 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը ճանաչվեց Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին, այսինքն՝ համաչափության և որոշակիության սկզբունքներին հակասող, ուստի և անվավեր[6]:

Այսպիսով, առաջարկում ենք քրեական պատասխանատվության ոլորտին վերաբերող և մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունեցող սահմանադրական սկզ-

[6] Տե՛ս www.concourt.am

բունքներն ամրագրել նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքում՝ դրանց կրկնակի օրենսդրական ամրագրումը և սահմանադրաիրավական հուսալի պաշտպանությունն ապահովելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով, հոդված 6-րդ), 06.12.2015թ.:
2. ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծ//www. e-draft.am:
3. Վաղարշյան Ա. Գ., Պետության և իրավունքի տեսություն, հատոր 2-րդ, Երևան, 2011թ.:
4. Հակոբյան Հ. Հ., Հակոբյան Ռ. Խ. Իրավունքի սկզբունքները որպես հիմնարար գաղափարներ, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 5, Երևան, 2018թ.:
5. Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997թ.:
6. www.concourt.am

THE PRINCIPLES OF THE RA CRIMINAL LEGISLATION

GASPARYAN GALUST
2nd –year student of Faculty of Humanities
Department of Jurisprudence, Gavar State University
e-mail: gasparyan-galust@mail.ru
Academic Supervisor: Harutyunyan Mnacakan
PhD in Law

The article is devoted to the principles of Criminal law in the Armenian Republic. The article presents both the constitutional and special featured criminal principles and their relationship.

It was offered to enshrine some constitutional principles in Criminal Code of the Armenian Republic to put them on a statutory footing and to provide for its strong constitutional and legal protection.

Key words: *Armenian Republic, Constitution, Criminal Code, project, article, principle, responsibility, guilt, humanity, legality.*

ПРИНЦИПЫ УГОЛОВНОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА РА

ГАСПАРЯН ГАЛУСТ
Студент 2 курса отделения юриспруденции
факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: gasparyan-galust@mail.ru
Научный руководитель: Арутюнян Мнацакан
Кандидат юридических наук

Статья посвящена рассмотрению принципов уголовного права РА. В статье представлены как общие конституционные, так и уголовно-правовые принципы особого характера, их соотношение.

Было предложено обязательное закрепление некоторых конституционных принципов также в Уголовном кодексе РА для обеспечения их повторного законодательного закрепления и надежной конституционно-правовой защиты.

Ключевые слова: *Конституция РА, Уголовный кодекс РА, проект, статья, принцип, сравнительно-правовой анализ, ответственность, вина, гуманизм, законность.*

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿՆՔՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՇԱՀԻՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ

Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի մագիստրատուրայի
1-ին կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ anahit.shahinyan.1998@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հովհաննիսյան Օլգա
Գավառի պետական համալսարանի դասախոս

Հոդվածի նպատակն է ներկայացնել քաղաքացիաիրավական առցանց գործարքների հատկանիշներն ու դրանց հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացմամբ պայմանավորված՝ առաջացել են բազմաթիվ հարցեր՝ կապված առցանց կնքվող գործարքների հետ: Հաճախ քաղաքացիաիրավական շրջանառության սուբյեկտները չեն կարողանում ինքնուրույն իրացնել իրենց իրավունքները և կանգնում են մի շարք բարդությունների առջև: Հոդվածում վերլուծական, համեմատաիրավական մեթոդների կիրառմամբ ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը՝ խնդրո առարկայի իրավական կարգավորման հետ կապված: Արվել է այն եզրակացությունը, որ պետք է ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ առցանց գործարքներ կնքելու ընթացակարգի վերաբերյալ լրացումներ կատարվեն: Ներկայումս, Covid-19 համավարակով պայմանավորված, զգալիորեն աճել է քաղաքացիաիրավական առցանց գործարքների թիվն ամբողջ աշխարհում, ուստի պետք է գիտենալ և կարողանալ ճիշտ օգտվել էլեկտրոնային տարբերակով կնքվող գործարքներից, որը կկանխի հնարավոր վտանգներն ու սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի խախտումները:

Բանալի բառեր՝ *առցանց գործարքներ, իրավական կարգավորում, սուբյեկտ, գույքային հարաբերություններ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային ստորագրություն, իրավական կրթություն:*

Քաղաքացիաիրավական գործարքը առավել հաճախ հանդիպող իրավաբանական փաստ է, որի հիման վրա սահմանված կարգով առաջանում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Գործարքներ կնքվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև: Հատկապես մեծ է առևտրային կազմակերպությունների միջև գույքային հարաբերությունների ոլորտում գործարքների նշանակությունը: Ներկայումս հիմնականում գերակշռում են առցանց կատարվող գործարքները: Այսպիսով, գործարքները ֆիզիկական և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը:

Քաղաքացիական իրավունքների և պարտականությունների սահմանման միջոցով գործարքի կնքման օրինակ է մանրածախ առքուվաճառքի պայմանագիր կնքելու՝ խանութի առաջարկի ընդունումը գնորդ-քաղաքացու կողմից:

Եթե մեծածախ և մանրածախ առևտրական կազմակերպությունները համաձայնագիր են կնքում փոխադարձ պահանջների հաշվանցման մասին, ապա նման համաձայնագիրը նախկինում գոյություն ունեցող իրավահարաբերությունները դադարեցնող գործարքի օրինակ է հանդիսանում:

Գործարքները կամային ակտեր են: Նրանք արտահայտում են իրենց մասնակիցների կամքը[1]:

Գործարքի մասնակիցների կամքն ուղղված է իրավաչափ իրավաբանական հետևանքների առաջացմանը: Այս գործարքը՝ որպես իրավական փաստ, տարբերվում է իրավախախտումներից: Վնաս պատճառող անձը սովորաբար չի ցանկանում իրավական հետևանքներ առաջացնել, դրանք վրա են հասնում անկախ իր կամքից: Իսկ գործարքի մասնակիցները կնքում են այն՝ ցանկանալով առաջացնել այս կամ այն իրավական հետևանքները:

Իրավական հետևանքներ առաջացնելու նպատակ չունեցող անձանց գործողությունները չեն կարող հանգեցնել գործարքի, օրինակ, աշխատողի կողմից մասնագիտական հանձնաժողովի կողմից զբոսաշրջային արշավին մասնակցելու հրավերի ընդունումը կամային ակտ է, որն արտահայտում է անձի որոշակի մտադրությունը: Սակայն այս կամարտահայտությունը չի

[1] Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Եր. Երևանի համալս. Հրատ., 2000:

հանգեցնում քաղաքացիաիրավական գործարքի կնքման, քանի որ այն զուրկ է իրավական հետևանքներ առաջացնելու մտադրությունից:

Գործարքի մասնակիցներից յուրաքանչյուրն ունի որոշակի նպատակ (ներքին կամք)՝ հասնելու ցանկալի իրավական արդյունքի: Գործարքի մասնակիցների ներքին կամքի արտաքին արտահայտությունը, որից կարելի է պատկերացում կազմել դրա բովանդակության մասին, կոչվում է կամարտահայտություն, և որպեսզի կամքը փոխադարձաբար ընկալվի գործարքի մասնակիցների և երրորդ անձանց կողմից, անհրաժեշտ է այն հայտնել արտաքին կամարտահայտությամբ: ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է մասնակիցների կամքը արտահայտելու մի շարք ձևեր: Որոշ դեպքերում այն կարող է արտահայտվել ուղղակի կամարտահայտության ձևով՝ բանավոր կամ գրավոր դիմումների միջոցով, մյուս դեպքերում՝ կոնկրետ գործողությունների միջոցով, որոնց կատարումից կարելի է եզրակացնել կամքի առկայության մասին, երրորդը՝ լռության միջոցով: Այսպիսով, եթե ուղղակի կամարտահայտության միջոցով ներքին կամքը դրսևորվում է ուղղակիորեն բանավոր կամ գրավոր, ապա համաձայնեցված կամարտահայտությունը որոշում է գործարքի մասնակիցների մտադրությունը ոչ թե անմիջականորեն, այլ նախնական վերլուծության և նրանց գործողությունների գնահատման միջոցով, որոնց հիման վրա կարելի է պատկերացում կազմել գործարքի մասնակիցների կամքի մասին: Օրինակ՝ եթե ի պատասխան կազմակերպության կողմից կատարված պատվերի մատակարարը ապրանքը առաքում է առցանց պատվեր կատարած գնորդին, ապա այդ փաստից անկասկած հետևում է, որ մատակարարն իր համաձայնությունը տվել է պատվիրված ապրանքների մատակարարման համար:

Որպես կանոն՝ գործարքի մասնակիցների ներքին կամքն ու դրա արտաքին դրսևորումը, այսինքն՝ կամարտահայտությունը համընկնում են: Եթե նման զուգադիպություն չկա, գործարքը կարող է անվավեր ճանաչվել, օրինակ, որպես մոլորության, խաբեության ազդեցության տակ կնքված եւ այլն: Առցանց գործարքների առանձնահատկություններից են, որ խնայում են ժամանակ, դյուրին են դարձնում կենսագործունեությունը, օգնում են հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց և այլն:

Երկիր մոլորակը պատած համավարակի պայմաններում համացանցը և տեղեկատվական ու հաղորդակցական արդի տեխնոլոգիաները դարձան փրկօղակ, առանց որոնց մարդու առօրյան և հասարակության կյանքն անհնար է պատկերացնել: Ընդհանուր «համակարգչայնացման» և «համացան-

ցայնացման» պայմաններում քաղաքացիական շրջանառության անբաժանելի մասն են կազմում առցանց գործարքները: Քաղաքացիները մտնում են տարաբնույթ առցանց գործարքների մեջ: Այսպիսով, գործարքները եղել և մնում են քաղաքացիական իրավունքի կարևոր ինստիտուտներից, ինչը հիմնավորվում է մի շարք հանգամանքներով[2]:

Առցանց գործարքները բնութագրվում են նաև որոշակի վտանգներով՝ սպառնալով քաղաքացիների թե՛ գույքային, թե՛ անձնական ոչ գույքային իրավունքներին: Քաղաքացիների անիրազեկ լինելու հետևանքով անբարեխիղճ անձինք, ովքեր զբաղված են խաբեությամբ ու կեղծարարությամբ, գումարներ յուրացնելով, մնում են անպատիժ, քանի որ չկան այնպիսի իրավական կարգավորումներ, որոնք եթե չբացառեն, ապա գոնե նվազագույնի կհասցնեն նման դեպքերը: Ուստի առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ կատարել լրացումներ՝ առցանց գործարքներ կնքելու ընթացակարգի վերաբերյալ:

Հատկանշական է, որ Ռուսաստանի Դաշնությունում նախատեսում են անշարժ գույքի գործարքների կնքումն իրականացնել առցանց տիրույթում: Համապատասխան օրինագիծ է մշակվել ՌԴ տնտեսական զարգացման նախարարության կողմից: Փաստաթուղթը ճշգրտում է անշարժ գույքի գնման կամ նվիրատվության առցանց գործարքի ձևը և առաջադրում է կողմերի էլեկտրոնային ստորագրության խիստ պահանջ[3]:

Պայմանագրի էլեկտրոնային ձևի թույլտվությունը նախկինում առաջացրել է վեճեր: Խնդիրն այն է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է կազմել մեկ ընդհանուր փաստաթուղթ, իսկ առցանց ձևով գործարք կնքելիս տեխնիկապես ձևակերպվում էին մի քանի փաստաթղթեր, որն էլ բարդությունների առաջ էր կանգնեցնում հետագայում: Օրինագծի առաջարկվող խմբագրությունում նախատեսված է, որ անհրաժեշտ է էլեկտրոնային եղանակով նույնպես կազմել մեկ ընդհանուր փաստաթուղթ: Հայկական համացանցային տիրույթում գործում են մի շարք կայքեր, որոնք առաջարկում են առցանց գործարքի մեջ մտնել՝ տարաբնույթ գայթակղիչ առաջարկներ ներկայացնելով: Դրանք կարող են լինել բան-

[2] Տե՛ս https://allbest.ru/k-3c0b65625a3ad68b4d43a88421206d27.html

[3] Տե՛ս https://iz.ru/834288/svetlana-volokhina/pod-elektronnyi-kliuch-sdelki-s-zhiloi-nedvizhimostiu-pereidut-v-onlain

կային համակարգի կողմից անշարժ գույքի գրավադրմամբ վարկի առաջարկից մինչև մանրամեծածախ այլ գործարքներ:

Ուսումնասիրելով ՀՀ և ՌԴ քաղաքացիական օրենսդրության նորմերը առցանց գործարքի և դրա անվտանգ գործունեության ընթացակարգի հնարավոր իրավակարգավորումների վերաբերյալ՝ պարզ դարձավ, որ չկան այդպիսիք, որն էական նշանակություն ունեցող իրավական բաց է համարվում:

Դատական պրակտիկան վկայում է, որ իրավակրթության ցածր մակարդակի պատճառով քաղաքացիները հաճախ տուժում են տարբեր գործարքների, պայմանագրերի կնքման դեպքերում, որոնք ստորագրել են առանց ընթերցելու: Օրենսդրությամբ սահմանվում է գործարքի փաստաթղթային ձևակերպում, որի հավաստիությունը ամրագրվում է կողմերի ստորագրությամբ, մինչդեռ քաղաքացին, չունենալով իրավագիտակցության պատշաճ աստիճան, միշտ չէ, որ կարողանում է ճշգրիտ պատկերացում կազմել իր կողմից կնքված գործարքի շրջանակներում իրեն վերաբերող իրավունքների և պարտականությունների մասին և հաճախ կանգնում է բարդ ընտրության առաջ: Այսպիսով,

1. Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 290-րդ (գործարքների տեսակները) և 294-րդ (գործարքների ձևերը) հոդվածների համապատասխան մասերում կատարել լրացում՝ առցանց կնքվող գործարքների տեսակների և ձևերի վերաբերյալ: Առցանց գործարքների օրենսդրական ամրագրումը թույլ կտա լիարժեք պաշտպանելու նման գործարքներ կնքող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

2. Վերջին ժամանակներս հաճախադեպ են դարձել կեղծիքները անչափահասների կողմից կատարվող առցանց գործարքներում, ուստի նպատակահարմար ենք գտնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 310-րդ հոդվածի (տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի կնքած գործարքի անվավերությունը) 4-րդ մասում լրացում կատարել՝ նախատեսելով նաև տասնչորսից տասնութ տարեկան անչափահասների կնքած առցանց գործարքները: Այս դեպքում կլրացվի օրենքի բացը, որը համարում ենք անհրաժեշտություն:

3. Մեր կարծիքով՝ առավել արդյունավետ կլինի ընդլայնել առցանց կատարվող գործարքների շրջանակը, որը քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների իրացման գործընթացը զգալիորեն կհեշ-

տացնի, քանի որ շատ դեպքերում քաղաքացիները չեն ցանկանում մասնակցել քաղաքացիական իրավահարաբերությունների տեղափոխման և այլ խնդիրներ ունենալու պատճառով:

Վերոհիշյալ առաջարկությունը կնպաստի, որ ՀՀ քաղաքացիները նույնպես կարողանան օգտվել արտասահմանում գործող որոշակի արտոնություններից: Օրինակ՝ ռուսական մի շարք բանկեր ունեն ձայնային օգնականներ, որոնց կարող ենք միանալ օրվա յուրաքանչյուր ժամի, անգամ ոչ աշխատանքային օրերին, որի արդյունքում կատարվում են տարաբնույթ բանկային գործարքներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև 2019 թվականի վերջից-2020 թվականի սկզբից ամբողջ աշխարհում տարածում գտած թագավարակի հետևանքները փաստում են, որ համացանցն առաջնային դեր է կատարում մեր օրերում, ուստի առցանց գործարք կնքելն էլ փաստացի անհրաժեշտություն է դարձել, ուստի հարկավոր է ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ առցանց գործարքի ինստիտուտը ինչպես ընդլայնելու, այնպես էլ խստացնելու նպատակով:

Այսպիսով, քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցները պարտադիր պետք է գիտենան գործարք կնքելու հիմքերի, օրինաչափությունների և հնարավոր սահմանափակումների ու հնարավոր ռիսկերի մասին: Առցանց գործարքների իրավական հստակ կարգավորումը կկանխի հնարավոր վտանգներն ու սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի խախտումները:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 2017թ.:
2. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Եր., Երևանի համալսարանի հրատ., 2000թ.:
3. https://iz.ru/834288/svetlana-volokhina/pod-elektronnyi-kliuch-sdelki-s-zhiloi-nedvizhimostiu-pereidut-v-onlain
4. https://allbest.ru/k-3c0b65625a3ad68b4d43a88421206d27.html

THE MAIN FEATURES OF ONLINE CIVIL AND LEGAL TRANSACTIONS AND THE PROBLEMS CONNECTED WITH CONCLUDING THEM

SHAHINYAN ANAHIT
1st-year student of the Department of Jurisprudence
Faculty of Humanities, Gavar State University
e-mail: anahit.shahinyan.1998@mail.ru
Academic Supervisor: Hovhannisyan Olga
GSU Lecturer

Civil litigants must be aware of the grounds, rules, and possible limitations and risks while making a transaction. Clear legal regulation of online transactions will prevent possible risks and violations of entities' rights and legitimate interests.

Key words: *online transactions, legal settlement, entity, property relations, information technologies, legal education.*

ОСНОВНЫЕ ПРИЗНАКИ ГРАЖДАНСКО-ПРАВОВЫХ ОНЛАЙН-СДЕЛОК И ПРОБЛЕМЫ, СВЯЗАННЫЕ С ИХ ЗАКЛЮЧЕНИЕМ

ШАГИНЯН АНАИТ
Студентка 1 курса магистратуры отделения юриспруденции
факультета гуманитарных специальностей
Гаварского государственного университета
электронная почта: anahit.shahinyan.1998@mail.ru
Научный руководитель: Ованнисян Ольга
Преподаватель ГГУ

Участники гражданско-правовых отношений обязательно должны знать об основаниях, закономерностях и возможных ограничениях и рисках, связанных с совершением сделки. Правовое регулирование сделок предотвращает и пресекает нарушения прав и законных интересов юридических лиц при осуществлении онлайн-транзакций.

Ключевые слова: *онлайн-транзакции, юридическое урегулирование, субъект, имущественные отношения, информационные технологии, юридическое образование.*

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԳՐԵՏԱ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ greta.poghosian@bk.ru
Գիտական ղեկավար՝ Գրիգորյան Մարիամ
Արցախի Հանրապետության Նախագահի օգնական,
Գորիսի պետական համալսարանի դասախոս

Միջազգային մարդասիրական իրավունքը կոչված է պատերազմական գործողությունների ժամանակ պաշտպանել այն անձանց իրավունքները, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին, ինչպես նաև սահմանափակելու պատերազմի վարման արգելված մեթոդների և միջոցների կիրառումը: Միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները համարվում են մարդկության դեմ ուղղված կոպտագույն հանցագործություններ: Այդ պատճառով միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների համար պատասխանատվության հիմնախնդրի ուսումնասիրման թեման միշտ արդիական է և՛ տեսական, և՛ գործնական առումներով: Թեման կարևոր է հատկապես մեր երկրի համար, քանզի Արցախյան երկրորդ պատերազմը կրկին ապացուցեց, որ գոյություն ունեն լրջագույն խնդիրներ՝ կապված միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների հետ:

Հոդվածի նպատակը պատմական, տեսական և գործնական ուսումնասիրությունների, գիտականորեն հիմնավորված կարծիքների և մոտեցումների համադրմամբ միջազգային մարդասիրական իրավունքի և դրա խախտման համար նախատեսված պատասխանատվության ուսումնասիրումն է:

Հիմնական խնդիրներն են՝ ուսումնասիրել միջազգային մարդասիրական իրավունքի աղբյուրները և ներկայացնել, թե ինչ եղանակներով է իրացվում այդ իրավունքի նորմերի խախտումների համար պատասխանատվությունը:

Հետազոտության մեջ օգտագործվել են պատմական և համեմատական-իրավաբանական մեթոդները:

Բանալի բառեր՝ *միջազգային մարդասիրական իրավունք, միջազգային մարդասիրական իրավունքի խախտում, սանկցիա, դելիկտ, պատասխանատվություն, Ժնևի կոնվենցիա, միջազգային հանցագործություն:*

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ, ուստի յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը (եթե ոչ ամենահիմնականը) պետք է լինի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Միջազգային մարդասիրական իրավունքը (ՄՄԻ)՝ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ, ձևավորվել է 18-րդ դարում, սակայն ունի շատ ավելի խոր արմատներ: Այն սերտորեն առնչվում է պատերազմի օրենքներին, որոնք նույնքան հին են, որքան պատերազմը[1]:

Զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ պատերազմի ժամանակ անխուսափելիորեն շատ մեծ թիվ են կազմում այն հանցագործությունները, որոնք ունեն պետականորեն կազմակերպված բնույթ: Այսպես, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ մարդու իրավունքների ոտնահարումն իրականացվում էր պետականորեն կազմակերված կերպով և ուղեկցվում էր իշպանությունների և զինված ուժերի կողմից նախադեպը չունեցող հանցագործություններով ու վայրագություններով[2]:

Միջազգային մարդասիրական իրավունքը, որը հայտնի է նաև որպես «պատերազմի օրենք», միջազգային հանրային իրավունքի կարևոր ճյուղերից է: Այն բաղկացած է այնպիսի նորմերից, որոնք զինված ընդհարումների ժամանակ պաշտպանում են այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցել ռազմական գործողություններին՝ սահմանափակելով պատերազմելու մեթոդների և միջոցների կիրառումը: Նրա հիմնական նպատակն է թեթևացնել և կանխել մարդկային տառապանքը զինված ընդհարումների պայմաններում: Այդ իրավունքի կանոններին պարտավոր են ենթարկվել ոչ միայն կառավարություններն ու նրանց զինված ուժերը, այլ նաև զինված ընդդիմադիր խմբավորումներն ու հակամարտության մասնակից այլ կողմերը:

1949թ. Ժնևի չորս կոնվենցիաներն ու 1977թ. դրանց երկու լրացուցիչ արձանագրությունները մարդասիրական իրավունքի կարևորագույն փաստաթղթեր են: Մյուս փաստաթղթերն են քիմիական գազի կիրառումն արգելող 1925թ. Ժնևի արձանագրությունը, 1980թ. համաձայնագիրը որոշակի

[1] Ժ. Պիկտե, Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները, Երևան, 2000, էջ 10:

[2] Վ. Այվազյան, Մարդու իրավունքներ, Եր., ԵՊՀ հրատ, 2014, էջ 446:

տեսակի ավանդական զենքերի և 1997թ. Օտտավայի համաձայնագիրը ականառումբերի մասին:

1949թ. Ժնևի չորս կոնվենցիաները վերաբերում են միջազգային բնույթ կրող զինված ընդհարումներին: Կոնվենցիաներում ամրագրված է, որ անհրաժեշտ է խնայել և մարդասիրաբար վերաբերվել քաղաքացիական բնակչությանը, ինչպես նաև այն անձանց, ովքեր ակտիվորեն չեն մասնակցում պատերազմական գործողություններին: Կոնվենցիաները սահմանում են նաև ԿԽՄԿ-ի դերը մարդկային տառապանքը թեթևացնելու գործում: Բացի դրանից՝ բոլոր չորս կոնվենցիաներում ընդգրկված և ընդհանուր բնույթ կրող 3-րդ հոդվածով ԿԽՄԿ-ին թույլատրվում է իր ծառայություններն առաջարկել նաև ոչ միջազգային բնույթի զինված հակամարտությունների դեպքում և նվազագույն պաշտպանություն ապահովել նման ընդհարումներից տուժածների համար:

1977թ. երկու լրացուցիչ արձանագրությունները ամբողջացնում են Ժնևի կոնվենցիաները: Դրանց նպատակն է նվազեցնել բռնությունն ու պաշտպանել քաղաքացիական բնակչությանը՝ խստացնելով պատերազմական գործողություններ վարելու կանոնները:

Ժնևի ու Հաագայի կոնվենցիաների նորմերը հռչակագրային բնույթ կունենային, եթե դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ չսահմանվեին:

Միջազգային մարդասիրական իրավունքը՝ որպես գրավոր իրավունք, սկիզբ է առնում 1864թ. օգոստոսի 22-ից, երբ ստորագրվեց Ժնևի առաջին պայմանագիրը՝ «Գործող բանակներում վիրավոր զինվորների վիճակի բարելավման մասին»:

Առհասարակ միջազգային իրավական պատասխանատվություն ասելով հասկանում ենք միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից միջազգային իրավունքի նորմերը և իր միջազգային պարտավորությունները խախտելու դեպքում նրա համար առաջացող անբարենպաստ իրավաբանական հետևանքները[3]: Սահմանման առումով նույնը կարելի է ասել և միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար վրա հասնող պատասխանատվության մասին այն տարբերությամբ, որ այդ անբարենպաստ հետևանքները վրա են հասնում միջազգային մարադասիրական իրավունքի խախտման պարագայում: Միջազգային մարդասիրական իրավունքի չպահ-

[3] Տե՛ս Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 130:

պանման համար պատասխանատվություն է նախատեսված ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով:

Պատասխանատվություն առաջանալու համար անհրաժեշտ է պատճառական կապ հակաիրավական արարքի և վնասի միջև: Պատճառական կապը հնարավորություն է տալիս բավականաչափ ստույգ որոշելու պետության առնչությունը որևէ իրադարձություններով կամ գործողություններով պատճառված վնասակար հետևանքներին, հետևաբար լուծել պատասխանատվության հարցը: Այսպիսով, միջազգային իրավական պատասխանատվությունը ծագում է անհրաժեշտ իրավաբանական և փաստական հիմքերի՝ որոշակի իրավական պարտավորության և սուբյեկտի գործողություններում իրավախախտման առկայության դեպքում[4]: Միջազգային իրավախախտումները տարբերվում են իրենց ուղղվածությամբ և ծանրությամբ:

Միջազգային իրավունքում բոլոր միջազգային իրավախախտումները՝ կախված պետությունների և ընդհանրապես միջազգային հանրության համար դրանց վտանգավորության աստիճանից, իրավախախտումների և հետևանքների բնույթից, կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի՝ միջազգային հանցագործությունների և դելիկտների: Միջազգային հանցագործությունը պետությունների և ազգերի կենսական կարևոր շահերի դեմ ոտնձգող, նրանց գոյության հիմքերը քայքայող, միջազգային իրավունքի կարևորագույն հիմնական սկզբունքները կոպտորեն ոտնահարող, միջազգային խաղաղության ու անվտանգության, ամբողջ մարդկության համար վտանգ ներկայացնող առանձնապես վտանգավոր միջազգային իրավախախտում է:

Միջազգային հանցագործություն է պետության կողմից միջազգային հանրության կենսականորեն կարևոր շահերի ապահովման համար հիմնարար միջազգային պարտավորության խախտումը, որը համարվում է հանցագործություն՝ ուղղված ամբողջ միջազգային հանրության դեմ: Այդպիսի միջազգային հանցագործությունների թվին են դասվում ագրեսիան, ցեղասպանությունը, ապարտեիդը, գաղութատիրությունը, զինվորական հանցագործությունները, հանցագործությունները խաղաղության և մարդկության դեմ: Միջազգային հանցագործություն չկազմող արարքը հասարակ միջազգային իրավախախտում է (դելիկտ): Միջազգային դելիկտներն առանձին պետությանը կամ միջազգային իրավունքի սուբյեկտների սահմանափակ

[4] Տե՛ս Վ. Քոչարյան, Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 130:

խմբին վնաս պատճառող հակաիրավական գործողություններն են: Այդ դեպքում պատասխանատվության հարաբերություններն առաջանում են իրավախախտ պետության և անմիջապես տուժած պետության միջև, իսկ եթե իրավախախտումն աննշան է և չի առնչվում պետությունների և ազգերի գոյության հիմքերին, չի պատկանում առաջին խմբի հանցագործությունների թվին: Այդպիսի իրավախախտումներ են, օրինակ, օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների դեմ հակաիրավական գործունեությունը չխափանող պետական մարմինների թողտվությունը (անգործությունը), առևտրային պարտավորությունների խախտումը և այլն: Միջազգային իրավունքի որոշ խախտումներ կարելի է դասակարգել որպես պետության և առանձին անձանց կողմից միջազգային իրավունքի խախտում, որը ենթադրում է հավելյալ իրավական պատասխանատվություն: Ի համեմատություն միջազգային իրավունքի «հասարակ» խախտումների՝ մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի դեմ հանցագործությունները կարող են պատժվել ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային մակարդակով: Այսպես, ցեղասպանությունը, մարդկության դեմ հանցագործությունը և զինվորական հանցագործությունները կարող են Միջազգային տրիբունալի հանգեցնել: Պետությունը միջազգային իրավունքի տեսանկյունից ռազմական հակամարտությունների ժամանակ պատասխանատվություն է կրում մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար, եթե հետևյալ խախտումներն է թույլ տվել.

– խախտումները կատարվել են պետության մարմինների՝ ներառյալ զինված ուժերի կողմից,

– խախտումները կատարվել են այն անձանց կամ կառույցների կողմից, որոնք պետական իշխանության տարրերի գործառույթներ են իրականացնում,

– խախտումները կատարվել են պետության ցուցմամբ գործող կամ պետության վերահսկողության տակ գտնվող անձանց կամ խմբի կողմից,

– խախտումները կատարվել են մասնավոր անձանց ու խմբերի կողմից, որոնք պետությունը ճանաչում և ընդունում է որպես սեփական արարք:

Պետությունը կարող է նաև պատասխանատվության ենթարկվել բավարար ջանքեր չգործադրելու համար, եթե այն չի կանխարգելել և չի պատժել մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, որոնք արվել են մասնավոր անձանց կողմից:

Գոյություն ունեն պետությունների միջազգային իրավական պատասխանատվության երկու տեսակներ՝ քաղաքական և նյութական: Քաղաքական պատասխանատվությունը, որպես կանոն, ուղեկցվում է իրավախախտ պետության դեմ հարկադրական միջոցներ կիրառելով և զուգակցվում է նյութական պատասխանատվությամբ: Քաղաքական պատասխանատվության առավել տարածված ձևերն են ռետորսիաները, ռեպրեսալիաները, սատիսֆակցիան, ռեստորացիան, միջազգային կազմակերպությունում անդամակցության կասեցումը կամ անդամությունից հանելը, ագրեսորին ուժով ճնշելը, որոնք իրացվում են սանկցիաների կիրառման միջոցով: Սանկցիաները խախտող պետության նկատմամբ կիրառվող հարկադրական միջոցներն են: Դրանք կարող են կիրառվել միջազգային կազմակերպությունների (ունիվերսալ և տարածաշրջանային) պետությունների խմբի կամ առանձին կազմակերպությունների կողմից: Սանկցիաների ծավալը և տեսակները կախված են իրավախախտման ծանրության աստիճանից և պատճառված վնասից:

Միջազգային խաղաղության և անվտանգության դեմ ոտնձգությունների համար սանկցիաները նախատեսված են ՄԱԿ-ի կանոնադրության 39-րդ, 41-րդ և 42-րդ հոդվածներում:

Սանկցիաները՝ որպես հարկադրական միջոցներ, կիրառվում են միայն միջազգային ծանր հանցագործության դեպքում: Այլ դեպքերում նման սանկցիաների կիրառումը չի կարելի համարել իրավաչափ, քանի որ, ըստ էության, դրանք պետությունների (միջազգային հանրության) արձագանքն են հակաիրավական գործողությունների կանխամտածված կատարմանը կամ կանխամտածված էական վնաս պատճառելուն[5]:

Պետությունների վարքագիծը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքները, որոնց առկայությունը պետություններին ազատում է պատասխանատվությունից: Դրանք կարող են լինել երկու տեսակ՝ պատասխանատվությունը բացառող և պատասխանատվության իրացումը բացառող հանգամանքներ: Պատասխանատվության առաջացումը բացառվում է այնպիսի իրավիճակներում, որոնց առկայության պարագայում պետությունների վարքագիծը, որը բնականոն պայմաններում որակվում է որպես իրավախախտում, ճանաչվում է իրավաչափ և պատասխանատվություն չի առա-

[5] Տե՛ս Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատարակչություն, 2002, էջ 138-139:

ջացնում: Երկրորդները փաստական այն իրավիճակներն են, որոնց դեպքերում իրավախախտմամբ առաջացած պատասխանատվությունը փաստացի չի իրացվում: Չնայած միջազգային հակաիրավական արարքի գոյության երկու պայմանների առկայությանը՝ չի կարելի անվերապահորեն եզրակացնել միջազգային հակաիրավական արարքի առկայության մասին: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը նշել է միջազգային իրավական պատասխանատվությունից ազատող հետևյալ հանգամանքները՝ համաձայնությունը, հակազդման միջոցները, անհաղթահարելի ուժը և չկանխատեսված դեպքը, աղետը, անհրաժեշտության վիճակը, ինքնապաշտպանությունը:

Իրավաբանական գրականության մեջ բազմաթիվ կարծիքներ կան այն մասին, թե երբ է ծագում հանցագործության համար պատասխանատվությունը: Որոշ հեղինակներ կարծում են, որ պատասխանատվությունն առաջանում է այն պահից, երբ տեղի է ունենում միջազգային–իրավական նորմով նախատեսված խախտում: Մյուսներն ասում են, որ վնասների հատուցման պարտականություն չի կարող լինել, մինչև չլինի պահանջ: Այսինքն՝ իրավախախտ պետության պատասխանատվությունը ծագում է նրան հատուցման պահանջ ներկայացնելու պահից: Երրորդները կարծում են, որ միջազգային իրավական պատասխանատվությունը սկսվում է այն պահից, երբ իրավախախտ պետությունը գիտակցում է, որ միջազգային իրավախախտում է թույլ տվել և տուժած պետության հետ բանակցությունների արդյունքում համաձայնում է իրեն մեղավոր համարել և հետևաբար հատուցել վնասը: Վ. Ա. Վասիլենկոն իրավացիորեն նշում է, որ իրավախախտ պետությունը պատասխանատու է իրավախախտում կատարելու պահից, և հենց դա էլ հիմք է հանդիսանում, որ տուժած պետությունը պահանջներ ներկայացնի իրավախախտ պետությանը:

Միջազգային իրավունքի ժամանակակից զարգացումները և միջպետական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների համար պատասխանատվությունը կարող է իրացվել երկու եղանակով՝ իրավախախտ պետության միջազգային-իրավական պատասխանատվություն և մեղավոր անձանց քրեական պատասխանավություն: Ընդ որում վերջինս կարող է իրականացվել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային ատյաններում: Կոլեկտիվ պատասխանատվությունը՝ իրավախախտ պետության միջազգային-իրավական պատասխանատվություն, իր բնույթով չի վերացնում անհատական պատասխանատվությունը, այսինքն՝ պետության ղեկավարու-

թյունը, զինվորական հրամանատարությունը կամ էլ զուտ հրամանը իրագործող զինվորը ևս ենթակա է միջազգային իրավունքի տեսանկյունից պատասխանատվության, եթե իրականացրել է միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներ, այստեղ ևս ներպետական և միջպետական նորմերի համակարգի մեջ որոշակի մշակումների անհրաժեշտություն կա[6]:

Անհատական քրեական պատասխանատվությունը հիմնարար նշանակություն ունի միջազգային մարդասիրական իրավունքի համակարգում: Այսպես, Նյուրնբերգի Միջազգային զինվորական տրիբունալը շեշտում էր, որ «միջազգային իրավունքի դեմ հանցագործությունները իրագործվում են մարդկանց կողմից, այլ ոչ թե աբստրակտ կերպարների, և միայն նման հանցանքներ գործած առանձին անձանց պատժելու միջոցով կարելի է կյանքի կոչել միջազգային իրավունքի դրույթները»:

Նշենք անհատական քրեական պատասխանատվության առավել կարևոր սկզբունքները.

– յուրաքանչյուրը պարտավոր է հրաժարվել իրականացնել իրեն տրված հստակ հակաօրինական հրամանը: Որպես օրինակ՝ նշենք, որ մարդկության դեմ հանցագործություն իրագործելու հրամանները հստակ հակաօրինական են:

- Բոլոր անձինք քրեական պատախանատվության են ենթակա իրենց կողմից իրագործված միջազգային հանցագործությունների համար:

– Հրամանատարներն ու այլ ղեկավարությունը քրեական պաստախանատվություն են կրում իրենց հրամանների իրագործման արդյունքում կատարված միջազգային հանցագործությունների համար:

– Բոլոր անձինք պետք է քրեական և նյութական պատասխանատվություն կրեն միջազգային հանցագործությունների պատժի հայտարարման համար, եթե հանցագործությունը իրագործվել է կանխամտածված և գիտակցված:

Այսպիսով, միջազգային մարդասիրական իրավունքն անհատական պատասխանատվություն է նախատեսում նրանից բխող պարտականությունները չկատարելու համար:

[6] Международное публичное право: учеб./ Л. П. Ануфриева, К. А. Бекяшев, Е. Г. Моисеев, В. В. Устинов, 5-е изд., М., Проспект, 2010, էջ 874-875

Օգտագործված գրականության ցանկ

1. Պիկտե, Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները, Երևան, 2000թ.:
2. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Եր., ԵՊՀ հրատ, 2014թ.:
3. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2000թ.:
4. Международное публичное право: учеб./ Л.П. Ануфриева, К.А. Бекяшев, Е.Г. Моисеев, В.В. Устинов, 5-е изд., М., Проспект, 2010, էջ 874-875.

LIABILITY FOR VIOLATIONS OF INTERNATIONAL HUMANITARIAN LAW

POGHOSYAN GRETA
3rd-year student of Department of Jurisprudence,
Faculty of Humanities, Goris State University
e-mail: greta.poghosian@bk.ru
Academic Supervisor: Grigoryan Mariam
Assistant of the President of the Artsakh Republic,
lecturer at Goris State University

International humanitarian law is intended to protect the rights of persons who are not or are no longer participating in the hostilities and restricts the use of the prohibited means and methods of warfare.Therefore, violations of international humanitarian law are considered serious crimes against humanity. That is why the topic of studying the issue of liability for violations of international humanitarian law is relevant both theoretically and practically.The topic is especially relevant for our country, since the Second Artsakh war once again proved that there are serious problems with violations of international humanitarian law.

The aim of the topic is to study the liability of international humanitarian law for its violation by combining historical, theoretical and practical research, scientifically based opinions and approaches.

The main tasks are to study the sources of international humanitarian law, to find out how the liability for violation of the norms of this law is carried out.

Historical and comparative-legal methods were used in the research.

Key words: *international humanitarian law, violation of international humanitarian law, sanction, tort, liability, Geneva Convention, international crime.*

ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА НАРУШЕНИЕ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА

ПОГОСЯН ГРЕТА
Студентка Горисского государственного университета
электронная почта: greta.poghosian@bk.ru
Научный руководитель: Григорян Мариам
Помощник Президента Республики Арцах,
Преподаватель Горисского государственного университета

Международное гуманитарное право предназначено для защиты прав тех лиц, которые не участвуют или перестали участвовать в боевых действиях во время войны, а также для ограничения использования запрещенных методов и средств ведения войны. Следовательно, нарушения международного гуманитарного права считаются тяжким преступлением против человечества. Поэтому тема изучения вопроса об ответственности за нарушение международного гуманитарного права актуальна как теоретически, так и практически. Тема особенно актуальна для нашей страны, поскольку Вторая Арцахская война еще раз доказала, что существуют серьезнейшие проблемы, связанные с нарушениями норм международного гуманитарного права. Целью статьи является изучение ответственности международного гуманитарного права и ответственности за его нарушение путем объединения исторических, теоретико-практических исследований, научно-обоснованных мнений-подходов. Основные задачи - изучить источники международного гуманитарного права, выяснить, как привлекают к ответственности за нарушение норм этого права.

В исследовании использованы исторический и сравнительно-правовой методы.

Ключевые слова: *международное гуманитарное право, нарушение международного гуманитарного права, санкция, деликт, ответственность, Женевская конвенция, международное преступление.*

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՄԻՆԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ karine.minasyan.2019@mail.ru
Գիտական ղեկավար՝ Հովհաննիսյան Արկադի
«ԳԱՀ Փարթներս» իրավաբանական
գրասենյակի գլխավոր իրավախորհրդատու

Երեխայի ծնունդը հայ ընտանքում միշտ համարվել և համարվում է կարևոր իրադարձություն: Դրա համար էլ դարեր ի վեր հայ ընտանիքում մեծ ուշադրություն է դարձվել երեխայի՝ որպես ընտանիքի հարատևումն ապահովող էակի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը: Երեխաները իրավունակություն են ձեռք բերում ծնվելու օրվանից:

Հոդվածի շրջանակներում ներկայացվում է այն ամենը, ինչ կապված է երեխայի իրավունքների հետ: Մասնավորապես անդրադարձ է կատարվում անչափահաս երեխաների հիմնական իրավունքներին և երաշխիքներին, ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին, ինչպես նաև երեխայի լավագույն շահերին:

Հոդվածի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ երեխայի իրավունքները, մարդու իրավունքներից զատ, որպես առանձին ինստիտուտ ուսումնասիրելու անհրաժեշտություն կա: Միայն երեխային որպես իրավունքի առանձին սուբյեկտ դիտարկելու դեպքում մենք արժանի տեղ և դեր ենք հատկացնում նրան հասարակության և պետության մեջ, բացահայտում տվյալ հատուկ խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավական կարգավիճակը:

Բանալի բառեր՝ *երեխայի իրավունք, անչափահասի իրավունք, Կոնվենցիա, լավագույն շահ, դաստիարակություն, թրաֆիքինգ, օրինական պաշտպանություն:*

Դեռևս մանկությունից յուրաքանչյուր մարդ դառնում է իրավունքների որոշակի ամբողջության կրող: Սակայն մինչև նախորդ հարյուրամյակի կեսերը երեխան չէր դիտարկվում որպես իրավունքի սուբյեկտ: Դրա ապացույցն են 20-րդ դարի հայտնի մտածող Մարիա Մոնտեսսորիի ուսումնասի-

րությունները, որտեղ նշում է, որ «Երեխան մեծահասակի վերարտադրությունն է, որը տնօրինում է նրան այնպես, ասես երեխան լինի իր սեփականության մի մասը: Ստրուկը երբեք այդպես չի պատկանել իր տիրոջը, ինչպես երեխան ծնողներին[1]»: Պատմությունը ցույց է տալիս, որ երջանիկ մանկության մասին կարգախոսները, որոնք ամրագրված չեն իրավական ակտերով, հիմնված չեն պետության ուժեղ և արդար քաղաքականության վրա, չեն ստանում նյութական և ֆինանսական աջակցություն և որպես աճող սերնդի բնականոն կենսագործունեության գրավականներ՝ այդպես էլ մնում են դատարկ խոսքեր: Ի տարբերություն ազգային իրավունքի՝ միջազգային իրավունքի նորմերով ավելի վաղ են ամրագրվել հասարակության առավել խոցելի խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցներ բոլոր նրանց համար, ովքեր զուրկ են իրենց իրավունքները պաշտպանելու իրական հնարավորություններից: Այդ խմբին առաջին հերթին դասվում են երեխաները:

Երեխաներն իրավունակություն են ձեռք բերում ծնվելու օրվանից: Այդ պահից էլ նրանք ձեռք են բերում օրենքով նախատեսված իրավունքներ: Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի 1-ին հոդվածը Կոնվենցիայի նպատակների համար «երեխա» է սահմանում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձի[2]: Տարիքի սահմանումը որոշակի իրավունքների ձեռքբերման կամ որոշակի պաշտպանությունից զրկվելու առումով բարդ խնդիր է: Այդ սահմանումը ձևակերպում է երեխա հասկացությունը որպես իրավունքների առարկայի, որի զարգացող ունակությունները պետք է հարգվեն (ամրագրված են 5-րդ և 14-րդ հոդվածներում) նրան հատուկ պաշտպանություն տրամադրելու պետության պարտավորության հասկացության հետ:

Երեխաները գործունակություն են ձեռք բերում քաղաքացիական օրենսդրութամբ սահմանված կարգով: ՀՀ քաղօր. 24 հոդվածի համաձայն՝ «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»:

[1] Богуславский М.В., Корнетов Г.Б. Антология гуманной педагогики, М., 1999, էջեր 90-91

[2] Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիա:

Կոնվենցիայի համաձայն՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանել է, որ երեխաներն ունեն հավասար իրավունքներ, անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից կամ այլ հանգամանքից:

Այս իրավունքների իրականացման ապահովումը սահմանադրական իրավունքի խնդիրն է, իսկ ընտանեկան իրավունքը կոչված է թույլ չտալու, որ ընտանեկան հարաբերություններում ոտնահարվեն երեխաների իրավունքները, նրանք ենթարկվեն խտրականության:

Ընտանեկան օրենսդրությամբ երեխաներին տրվում են ինչպես անձնական, այնպես էլ գույքային իրավունքներ:

Երեխաների անձնական իրավունքներն ունեն տարբեր բովանդակություն, հետապնդում են ոչ միատեսակ նպատակներ: Դրանք են՝

1. ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը,
2. ծնողների և մյուս ազգականների հետ հաղորդակցվելու իրավունքը,
3. իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրավունքը,
4. սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը, անվան, հայրանվան և ազգանվան իրավունքը:

1. Ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը: Ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան այդ հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին»[3]: Առաջին հերթին երեխան ունի ծնողների հետ համատեղ ապրելու իրավունք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին ապրում է մշտապես կամ առավելապես: Իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը (23-րդ հոդված): Իհարկե, նրանց հետ շարունակում են ապրել նաև տասնչորս տարեկան դարձած երեխաները:

[3] Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Ընտանիքում ծնողների հետ համատեղ ապրելու դեպքում է, որ կարելի է ապահովել երեխայի ճիշտ դաստիարակությունը: Ծնողներից դաստիարակություն ստանալու իրավունքը երեխայի կենսական իրավունքներից մեկն է, որը ծնողների համար դառնում է երեխաներին դաստիարակելու պարտականություն: Այդ իրավունքը նաև համեմատաբար տևական իրավունք է: Երեխայի ընտանեկան դաստիարակությունը, վերջին հաշվով, եղել ու մնում է երեխայի դաստիարակության ամենալավ ձևը, որ հայտնի է մարդկությանը: Դրա համար էլ եթե երեխան զրկվում է ծնողներից, կամ վերջիններս ի վիճակի չեն լինում նրա դաստիարակությամբ զբաղվելու, ապա խնամակալական մարմինները պետք է առաջին հերթին մտածեն այդ երեխաներին այլ ընտանիքի որդեգրման տալու կամ խնամատարական ընտանիք հանձնելու հնարավորության մասին: Երեխաներն ունեն նաև իրենց ծնողներից հոգատարություն ստանալու, նրանց շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու իրավունք:

Երեխան իրավունք ունի հաղորդակցվել երկու ծնողների հետ, նույնիսկ եթե նրանք դադարեցրել են ամուսնական հարաբերությունները և ապրում են առանձին, այդ թվում՝ տարբեր պետություններում:

2.Երեխայի պաշտպանության իրավունքը: Ընտանեկան օրենսդրությունը երեխային վերապահում է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրավունք, որը կարող է իրականացվել ծնողների, երեխայի օրինական այլ ներկայացուցիչների կողմից, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից (Ընտօր. 43-րդ հոդված, մաս 1): Ընտանեկան նոր օրենսդրության՝ արտաքինից արտասովոր թվացող նորություններից է այն, որ այսուհետև անչափահասն իրավունք ունի իրեն պաշտպանել իր ծնողների կողմից չարաշահումներից: Ընտօր. 43-րդ հոդված 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ «երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք»: Դա, փաստորեն, երեխայի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է այն դեպքերի համար, եթե երեխային վնաս կպատճառեն նրան մոտիկ մարդիկ: Երեխայի իրավունքների ու շահերի խախտման դեպքում, այդ թվում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթություն տալու պարտականությունը չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու, կամ ծնողական իրավունքները չարաշահելու դեպքում, երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմել խնամակալության և հոգաբարձության մարմնին:

Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ երեխան իրավունք ունի իր կարծիքն արտահայտել ոչ միայն ընտանիքում, այլև նրա սահմաններից դուրս, օրինակ, գործը վարչական կամ դատական մարմիններում քննարկելիս: Խնամակալության մարմինների ու դատարանի կողմից որոշում կայացնելիս տասը տարեկան դարձած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է, բացի այն դեպքերից, երբ այդ հակասում է նրա շահերին:

3.Երեխայի անվան, ազգանվան և հայրանվան իրավունքը: «Երեխայի իրավունքների մասին» Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ ամեն մի երեխա ունի «իր անհատականութունը պահպանելու իրավունք, ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը»: Ընդ որում դրանք հարգելը դիտվում է Կոնվենցիայի ամեն մի մասնակից պետության պարտականությունը:

Անունը մարդուն անհատականացնելու միջոց է, իսկ ազգանունը՝ նրա տոհմական անունն է, որ նրան է փոխանցվում իր ծնողներից: Նշանակում է անձին անհատականացնում են ոչ միայն անունը, այլև ազգանունը, քաղաքացիությունը, ընտանեկան կապերը:

Երեխայի անվան իրավունքն ամրագրված է Ընտօր. 45-րդ հոդվածով, ըստ որի երեխան ունի անուն, հայրանուն և ազգանուն ունենալու իրավունք: Երեխային անուն է տրվում ծնողների համաձայնությամբ նրա ծնունդը գրանցելիս: Ծնողներն ազատ են իրենց երեխային անուն ընտրելու հարցում: Երեխային անուն ընտրելիս ծնողները ղեկավարվում են տարբեր նկատառումներով՝ ընտրում են իրենց նախնիների անունները, ելնում են մոդայից, ընտրում են արտասահմանյան կինոնկարների հերոսների ու հերոսուհիների անուններ և այլն: Իրականում անունը պետք է լինի իմաստալի, բարեհունչ, գեղեցիկ, նաև արտահայտի մարդու ազգային ծագումը: Երեխային անուն է տրվում ցմահ կրելու համար: Հետևաբար չի կարելի համաձայնել այն ծնողների հետ, ովքեր զուտ անձնական են համարում իրենց նորածին երեխային անուն, ազգանուն, հայրանուն տալու հարցը: Անշուշտ, դրանք, թեկուզ սկզբում անձնական լինելով, հետագայում ձեռք են բերում հասարակական արժեք:

Բոլոր դեպքերում ծնողներին խորհուրդ է տրվում իրենց նորածիններին տալ հայկական բարեհունչ անուններ:

Եթե ծնողներն ամուսնության մեջ են գտնվում, ապա երեխային հայրանուն է տրվում հոր, այսինքն՝ նրա մոր ամուսնու անունով: Իսկ եթե ծնող-

ներն ամուսնացած չեն և երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, իսկ հայրանուն տրվում է որպես երեխայի հայր գրանցված անձի անունով:

Երեխայի ազգանունը որոշվում է ամուսնության մեջ գտնվող ծնողների ազգանունով: Եթե նրանք կրում են ընդհանուր ազգանուն, այն տրվում է նաև երեխային, իսկ եթե նրանք տարբեր ազգանուններ են կրում, ապա նրանց համաձայնությամբ երեխային տրվում է հոր կամ մոր ազգանունը: Այս առթիվ ևս ծնողների անհամաձայնության դեպքում հարցը լուծվում է խնամակալության ու հոգաբարձության մարմնի կողմից:

Ստացվում է, որ երեխայի անհատական անունն ընտրում են ծնողները, իսկ հայրանունն ու ազգանունը տրվում է Ընտոր. 45-րդ հոդվածի կանոններին համապատասխան:

Տասը տարեկան դարձած երեխայի անվան և ազգանվան փոփոխումը կարող է կատարվել միայն նրա կարծիքը հաշվի առնելով: Դա իր անհատականությունը պահպանելու իրավունքի կարևոր երաշխիք է:

Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ձեռք է բերում ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու, իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու երաշխավորված իրավունքներ, իսկ ծնողներն իրավունք ունեն և միաժամանակ պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

1) երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,

2) երեխայի տարիքը,

3) ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,

4) ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,

5) երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում ևս համարվում է առաջնահերթ լուծման ենթակա խնդիր: ՀՀ-ում երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով: Իր անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական մակարդակով, մասնավորապես ամրագրելով, որ ընտանիքը, մայրությունը և մանկությունը գտնվում են հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո, միանալով համապատասխան միջազգային իրավական ակտերին՝ ձևավորել է համապատասխան օրենսդրական դաշտ: Երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը պահանջում է սահմանադրական լիարժեք կանոնակարգումներ, ինչպես նաև սահմանադրական և միջազգային իրավական կանոնակարգումների համակողմանի իրացում օրենսդրական մակարդակում և այդ ամենի հետևողականորեն կենսագործում: Այս ամենից հետևություն անելով՝ կարծում ենք, որ չնայած այդ ոլորտում մեծ թվով իրավական ակտերի առկայությանը, որոնք ուղղված են երաշխավորելու երեխայի իրավունքների և շահերի ապահովումը, ունեն լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն՝ կապված երեխայի իրավունքների և օրինական շահերի հետ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից անդրադառնալով «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետական իրավասու մարմինների, այդ թվում նաև դատարանների կողմից երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճերի լուծման համար վճռորոշ նշանակություն ունեն երեխայի լավագույն շահերը, որոնց գնահատումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից:

Երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման մասին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի անդամները կոչ են ա-

րել անդամ պետություններին հնարավոր առավելագույն չափով ապահովելու, որ երեխաների լավագույն շահերը (որպես ինքնուրույն իրավատերեր (իրավունքի սուբյեկտներ)) առաջնային ուշադրության արժանանան երեխաների պաշտպանությանն ու զարգացմանը միտված ցանկացած հանրային կամ մասնավոր գործողության շրջանակներում: Այդ գործընթացում երեխաներին անհրաժեշտ է վերաբերվել որպես ինքնուրույն իրավատերերի՝ երաշխավորելով, որ երեխայի լավագույն շահերը առաջնահերթ ուշադրության կենտրոնում լինեն:

Անցումային հասարակություններում երեխաները մշտապես կրում են տնտեսական անկայունության և փոփոխվող սոցիալական միջավայրի բացասական ազդեցությունը, որի հետևանքով ամբողջ սերունդը կարող է հայտնվել ճգնաժամային իրավիճակում: Մուրացկանությունը, թափառաշրջիկությունը, երեխաների սեռական շահագործումը, թրաֆիքինգը, խոշտանգումները և անմադրկային վերաբերմունքը ամենալուրջ խնդիրներից են ցանկացած պետության համար, որոնց դեմ պայքարը պահանջում է ծայրահեղ զգոնություն, օպերատիվություն և անհրաժեշտ միջոցների կիրառություն: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին գրանցվել են փակ կամ կիսափակ հաստատություններում երեխաների հարկադիր աշխատանքի և սեռական բռնության դեպքեր: Օրինակ՝ Ս. Ու.-ն դատապարտվել է 10 տարի ժամկետով ազատազրկման՝ երեխաներին հարկադիր աշխատանք կատարելուն հարկադրելու և հատուկ դպրոցի սաներից մեկի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար: Համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի՝ դատապարտյալը, լինելով Նուբարաշենի թիվ 18 հատուկ դպրոցի փոխտնօրեն, շահադիտական նպատակներով ստիպել է նույն դպրոցի սաներին զբաղվել մուրացկանությամբ մոտ 2 տարի շարունակ, ինչպես նաև սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել 14 տարին չլրացած սաներից մեկի նկատմամբ: Փակ և կիսափակ տիպի ուսումնական հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը ՀՀ-ում վկայում է երեխաների իրավունքների խախտումների մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ ներկայացնելու և անհրաժեշտ միջոցների կիրառություն:

Չնայած այս ամենին՝ ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՊՀ երկրների

խմբում ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների նվազագույն ցուցանիշն արձանագրվել է Հայաստանում:

Երբ երեխաները ենթարկվում են դաժան, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների (նույնիսկ իրենց իսկ ծնողների կողմից), երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 39-րդ հոդվածով նախատեսված են այն պահանջները, որոնք ձեռնարկելով կօգնեն.

1. Բռնության, արհամարհանքի, շահագործման կամ չարաշահման (հոդվածներ 19-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ) ենթարկված երեխաներին,

2. Խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի (հոդված 37-րդ) ենթարկված երեխաներին,

3. Զինված հակամարտությունների զոհ դարձած երեխաների պաշտպանությանը (հոդված 38-րդ):

Կոնվենցիայի համընդհանուր սկզբունքների մեկնաբանումից հետևում է, որ նման միջոցների կիրառումը հասանելի կլինի առանց զոհ դարձած բոլոր երեխաների համար, երեխայի լավագույն շահերը կլինեն առաջնային, ուշադրության կենտրոնում և կապահովվեն երեխայի առավելագույն գոյատևումը և զարգացումը:

Առաջարկում ենք փոփոխություններ կատարել.

1. «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքների նախագիծերում,

2. հստակեցնել «երեխա», «անչափահաս», «դեռահաս» հասկացությունները և դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև «կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ»,«առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ», «անբարենպաստ պայմաններում գտնվող երեխաներ», «ծանր իրավիճակներում գտնվող երեխաներ», «հատուկ կարիք ունեցող երեխաներ» և երեխայի կարգավիճակը բնութագրող այլ հասկացությունները,

3. սահմանել «երեխայի լավագույն շահեր» հասկացությունը, ինչպես նաև երեխայի լավագույն շահերի ճանաչման և գնահատման, այդ շահերից բխող որոշումների կայացման ընթացակարգերը և չափորոշիչները, ինչպես նաև սահմանել երեխաների օրինական ներկայացուցիչների կողմից իրենց

պարտականությունները չկատարելու կամ պատշաճ չկատարելու համար պատասխանատվություն,

4. նախատեսել երեխայի օրինական ներկայացուցիչների՝ ծնողի, խնամակալի, հոգաբարձուի, որդեգրողի՝ իրենց պարտականությունները կատարելուց խուսափելու համար պատասխանատվության ենթարկելու կառուցակարգեր,

5. արդարադատության համակարգում հաշվի առնել անչափահասների գործերի քննության առանձնահատկությունները,

6. պաշտպանել երեխաների անձնական տվյալներն ու առցանց ինքնությունը,

7. տրամադրել թվային գրագիտություն, որպեսզի երեխաները տեղեկացված լինեն, իսկ համացանցից օգտվելիս՝ պաշտպանված, ինչպես նաև կիրառել էթիկական չափորոշիչներին ու քայլերին ուղղված բարելավման գործողություններ, որոնք պաշտպանում են երեխաներին համացանցից օգտվելիս,

8.սահմանափել համակարգչային խաղերը,, որովհետև ամենամեծ ու ակնառու վտանգն են պարունակում և շատ արագ կախվածություն են առաջացնում երեխաների մոտ:

Ուսումնասիրելով երեխաների իրավունքները, հանգեցինք այն եզրակացության, որ երեխաները, լինելով հասարակության և պետության ապագան, պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու, մեծանալու, դաստիարակվելու և պաշտպանվելու կարևորագույն իրավունքները: Այդ ամենը պետք է լինի ժամանակակից յուրաքանչյուր պետության գործունեության առաջնահերթ խնդիրը: Երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության առանձնահատկություններով համարվում են հատուկ խումբ և ունեն մշտական հոգածության ու պաշտպանության կարիք:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների պաշտպանվածության մակարդակը տարբերվում է երկրից երկիր, իսկ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաները կա՛մ լիարժեք պաշտպանված են իրենց բոլոր իրավունքների առումով, կա՛մ էլ անգամ կյանքի իրավունքի առումով չունեն պաշտպանվածություն:

Այսպիսով, չնայած ՀՀ-ում երեխաների պաշտպանությամբ ու իրավունքների ապահովմամբ զբաղվող ենթակառուցվածքների գոյությանը՝ մենք շարունակում ենք բախվել երեխաների իրավունքների խախտումների

մասին վկայող բազմաթիվ խնդիրներիի հետ: Բացակայում է իրապես մարդասիրական, համաչափ և կշռադատված մոտեցումը, որը կվկայի մեր հանրապետությունում երեխաների նկատմամբ լիարժեք հոգատարության, կյանքի և առողջության պաշտպանության, անձեռնմխելիության և այլ իրավունքների պաշտպանության մասին: 21-րդ դարում երեխաների պաշտպանությունը հիմնվում է ոչ միայն արդարադատության սկզբունքի, այլև երկրագնդի վրա կյանքի պահպանման ձգտման վրա: Երեխաների իրավունքներր, մարդու իրավունքներից զատ, որպես առանձին ինստիտուտ, միշտ ուսումնասիրելու անհրաժեշտություն կա: Միայն երեխային՝ որպես իրավունքի առանձին սուբյեկտ դիտարկելու դեպքում, մենք արժանի տեղ և դեր ենք հատկացնում նրան հասարակության և պետության մեջ, բացահայտում տվյալ հատուկ խմբի յուրաքանչյուր ներկայացուցչի իրավական կարգավիճակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Богуславский М. В., Корнетов Г. Б., Антология гуманной педагогики, М., 1999, էջեր 90-91
1. Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիա:
2. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք:
3. ՀՀ Ընտանեկանմ օրենսգիրք:
4. Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի կիրառման ձեռնարկ:
5. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:

CHILDREN'S RIGHTS

MINASYAN KARINE

Goris State University, humanities
Faculty of Law section a third-year student
e-mail: karine.minasyan.2019@mail.ru
Academic Supervisor: Hovhannisyan Arkadi
Chief Legal Advisor of "GAH Partners" Law Office

In the Armenian family, the birth of a child has been considered an important event. That is why for centuries the Armenian family has paid great attention to the organization of the correct upbringing of the child as a creature that ensures the survival of the family. From the day of birth, children gain rights. The article

presents everything related to the rights of the child. Especially, it will touches upon basic rights and guarantees of infants, the issues of protection of children's rights and interests in the Republic of Armenia. The feature of the article is that the rights of the child need to be studied as a separate institution in addition to human rights. Only by considering the child as a separate subject of law we give him a worthy place in the society and reveal the legal status of each representative of the given special group.

Key words: *child rights, juvenile rights, Convention, best interests, upbringing, trafficking, legal protection.*

ПРАВА РЕБЕНКА

МИНАСЯН КАРИНЕ
Студентка 3-его курса отделения юриспруденции
Факультета гуманитарных профессий
Горийского государственного университета
электронная почта: karine.minasyan.2019@mail.ru
Научный руководитель: Оганесян Аркадий
Главный юрисконсульт юридического бюро «ГА Партнерс»

Рождение ребёнка в армянской семье было и является важным событием. Поэтому, испокон веков в армянских семьях уделялось большое внимание организации правильного воспитания ребенка как существа, обеспечивающего долговечность семьи. Дети получают права с рождения. В статье представлено все, что связано с правами детей. В частности, уделяется внимание несовершеннолетним детям, их основным правам и гарантиям, вопросам защиты прав детей в Республике Армения, а также наилучшим интересам ребёнка. Особенность статьи связана с тем, что права детей рассматриваются отдельно как отдельный институт, требующий внимания. Только после рассмотрения детей, как особого субъекта прав, мы можем уделить им достойное место и роль в обществе и государстве, раскрыв настоящее

Только рассматривая ребенка как отдельного субъекта права, мы отводим ему достойное место в обществе и в государстве, раскрываем правовой статус каждого члена данной группы.

Ключевые слова: *права ребенка, права несовершеннолетних, Конвенция, наилучшие интересы, воспитание, торговля людьми, правовая защита.*

ԵՐԵԽԱՅԻ ՈՐԴԵԳՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԵՐԻ
Գավառի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. փոստ՝ meri-sargsyan2001@mail.ru
Գիտական ղեկավար՝ Վարդանյան Գեղեցիկ
Գավառի պետական համալսարանի դասախոս,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի դասախոս

Հոդվածը նվիրված է երեխայի որդեգրման ինստիտուտին, դրա հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորմանը: Ուսումնասիրվել են ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանյան այլ երկրներում որդեգրման առանձնահատկությունները և առաջարկներ են արվել ՀՀ-ում այս ինստիտուտի խստացման վերաբերյալ:

Բանալի բառեր՝ *երեխա, երեխայի որդեգրում, ընտանիք, որդեգիր, խնամակալ, ՀՀ Ընտանեկան օրենսգիրք:*

Որդեգրումը ծնողական խնամքից զրկված երեխայի ընտանեկան դաստիարակության ձև է, որի շրջանակներում որդեգրողի և որդեգրվողի միջև հաստատվում են ծնողի և երեխայի միջև գոյություն ունեցող անձնական և գույքային իրավական հարաբերություններ: Որդեգրումը կատարում է դատարանը՝ երեխա որդեգրելու ցանկություն ունեցող կողմի դիմումի համաձայն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված հատուկ կարգով[1]:

Ծնողական խնամքից զրկված երեխաների համար ընտանիքում տեղ գտնելու հնարավորություններից որդեգումը լավագույնն է, քանի որ որդեգրողի և որդեգրվողի միջև ոչ միայն ձևավորվում են հարազատական կապեր, այլև տեղի է ունենում այդ հարաբերությունների իրավական ամրագրում, երբ որդեգրված երեխան իր իրավունքներով ապարտականություննե-

[1] Տե՛ս Ղարախանյան Գ. Հ., ՀՀ ընտանեկան իրավունք, Երևան, 2005, էջ 298:

րով ամբողջությամբ հավասարվում է արյունակից երեխաներին, իսկ որդեգրողները ստանձնում են ծնողական բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Որդեգրումը երեխային թույլ է տալիս իրեն զգալ ընտանիքի լիարժեք անդամ: Միայն որդեգրման դեպքում է երեխան ձեռք բերում նոր ծնողների գույքի նկատմամբ ժառանգության իրավունք: Որդեգրողը կարող է տալ երեխային իր ազգանունը, փոխել երեխայի անունն ու հայրանունը:

Ճիշտ ենք համարում այն օրենսդրական կարգավորումը, որ որդեգրման արդյունքում քույրերի և եղբայրների բաժանումը անթույլատրելի է, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ բաժանումը բխում է երեխայի շահերից (օրինակ՝ երեխաները տեղյակ չեն ազգակցական կապի մասին, չեն ապրել և չեն դաստիարակվել միասին, երբ նրանք գտնվում են տարբեր մանկատներում, չեն կարող ապրել և դաստիարակվել միասին առողջական խնդիրների պատճառով):

Ծնողական խնամքից զրկված ոչ բոլոր երեխաներին կարելի է որդեգրել: Որդեգրվել կարող են, օրինակ, այն երեխաները, որոնց ծնողները կամ միակ ծնողը որդեգրման համաձայնություն է տվել, որոնց ծնողները հայտնի չեն կամ մահացած են, որոնց երկու ծնողներն էլ զրկված են ծնողական իրավունքից, չեն ապրում երեխայի հետ և խուսափում են խնամել ու դաստիարակել նրան վեց ամսից ավել: Տասը տարեկանից մեծ երեխային որդեգրելու համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Որդեգրումը կարելի է ձևակերպել մեկ անձի կամ ամուսինների համար: Որդեգրողի և որդեգրվողի տարիքային տարբերությունը պետք է լինի 18 տարուց ոչ պակաս և 50 տարուց ոչ ավելի, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան որդեգրվում է որդեգրելու նախապատվության իրավունք ունեցող անձանց կողմից, ինչը ճիշտ ենք համարում թե՛ կեսաբանական, թե՛ իրավաբանական, և թե՛ սոցիալ հոգեբանական առումներով: Ի տարբերություն խնամակալության, որի դեպքում որոշումները կայացվում են խնամակալության մարմինների կողմից, որդեգրման մասին որոշումը կայացվում է դատարանով և գրանցվում է քաղաքացիական կացության ակտերում:

Որդեգրումն ունի առանձնահատկություններ և շահեկանորեն տարբերվում է խնամակալության ինստիտուտից: Այն դեպքում, երբ մեկ երեխային դաստիարակելու ցանկություն ունեն մի քանի ընտանիքներ, առավելությունը տրվում է այն ընտանիքին, որը պատրաստ է նրան որդեգրելու, քան նրան, որը միայն խնամակալություն է ցանկանում ձևակերպել: Խնամակալության տակ գտնվող երեխաների որդեգրման համար անհրաժեշտ է խնա-

մակալների գրավոր թույլտվությունը: Որոշ երկրներում երեխայի որդեգրման դեպքում վճարվում է միանվագ նպաստ պետական բյուջեից: Նման նյութական հետաքրքրվածությունը երբեմն մտահոգություն է առաջացնում որդեգրող և խնամակալ ծնողների շահագրգռվածության կամ մոտիվների առումով: ԱՄՆ-ում, ինչպես նաև աշխարհի մի շարք այլ երկրներում, որդեգրողները չեն ստանում նպաստ պետությունից, ընդհակառակը, որդեգրման համար նրանք ծախսում են տասնյակ հազարավոր դոլարներ (որդեգրողներին առաջադրվում է հարկային հանուրդ մինչև 12650 դոլար), ինչը, այնուամենայնիվ, չի նվազեցնում երեխա որդեգրելու ցանկություն ունեցող ամերիկացիների քանակը, ընդ որում նրանք որդեգրում են երեխաներ ոչ միայն իրենց, այլև ուրիշ երկրներից, ինչը վտանգներով հղի է Հայաստանի Հանրապետության պարագայում: Որդեգրումը չի համարվում առանց խնամքի մնացած երեխայի՝ ընտանիքի գիրկը վերադարձնելու միակ ձևը: Երեխաները կարող են նաև հանձնվել խնամակալության, որը հնարավոր է անհատույց կամ հատուցման ձևով: Վերջին ձևին են վերաբերում երեխաների հանձնումը խնամակալ ընտանիքին:

Որդեգրման գաղտնիքը պետք է պահպանվի օրենքի ուժով: ՀՀ քրեական օրենսգրքի 169-րդ հոդվածի համաձայն՝ Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելը այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը, ինչպես նաև որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը երկուհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Որդեգրման գաղտնիքի պահպանման համար տարբեր պետություններում տարբեր միջոցներ են ձեռնարկում: Օրինակ՝ Ռուսաստանում որդեգրողի խնդրանքով թույլատրվում է ծննդավայրի փոփոխություն, ինչպես նաև ծննդյան ամսաթվի փոփոխություն, բայց երեք ամսից ոչ ավել[2]:

[2] Տե՛ս ՌԴ Ընտանեկան օրենսգիրք, 19-րդ գլուխ//www.consultant.ru:

Բելառուսի՝ ընտանիքի և ամուսնության մասին օրենսգրքով որդեգրման գաղտնիքը պահպանվում է կողմնակի անձանցից, սակայն համաձայնեցվում են չափահաս որդեգրվածների իրավունքները. «Որդեգրված երեխան չափահասության տարիքի հասնելուց կամ գործունակ ճանաչվելուց հետո լիարժեք իրավունք ունի ստանալու իր որդեգրման վերաբերյալ տեղեկություն երեխայի որդեգրման որոշումը կայացրած դատարանից, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից, որդեգրման արձանագրության գրանցման բաժնի վայրից»: Բելառուսում օրենքով սահմանված են նաև քույրերի և եղբայրների իրավունքները. «Քույրերի և եղբայրների բաժանումը որդեգրման ժամանակ հնարավոր է այն դեպքում, երբ որդեգրողները չեն պնդում որդեգրման գաղտնիքի պահպանման հարցում և պարտավորվում են չխոչընդոտել որդեգրվող երեխայի շփմանը քույրերի և եղբայրների հետ: Քույրերի և եղբայրների բաժանման դեպքում դատարանը որդեգրողների վրա պարտավորվածություն է դնում՝ հայտնել երեխային գոյություն ունեցող իր քույրերի կամ եղբայրների և նրանց գտնվելու վայրի մասին[3]»:

Ուկրաինայի Հանրապետության օրենսդրությամբ նույնպես սահմանվում է պատասխանատվություն որդեգրման գաղտնիքի բացահայտման համար, բայց դրա հետ մեկտեղ նշվում է, որ որդեգրված անձը տասնչորս տարեկան դառնալուց հետո իրավունք ունի ստանալու տեղեկություն իր որդեգրման վերաբերյալ: Հաշվի են առնվում նաև քույրերի և եղբայրների կապը. «Եթե երեխայի որդեգրումը չի համարվում գաղտնի, որդեգրվածի եղբայրը և քույրը իրավունք ունեն իմանալ նրա ապրելու նոր վայրը»[4]: Հայաստանի Հանրապետությունում Երեխայի որդեգրման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքով» (այսուհետ՝ օրենսգիրք): Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» տասնութերորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է երեխաների որդեգրմանը: Օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ որդեգրումը դատական ակտ է, որով որդեգրվողը ձեռք է բերում կենսաբանական կապերին համարժեք ընտանեկան կապեր, որոնց շնորհիվ որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում ծնողների և զավակների համար օրենքով

[3] Տե՛ս Բելառուսի Ընտանիքի և ամուսնության մասին օրենսգիրք, 51-րդ հոդված//www.kodeksy-by.com:

[4] Տե՛ս Ուկրաինայի ընտանեկան օրենսգիրք, հոդված 211-րդ//www.lawportal.ua:

նախատեսված իրավունքներ և պարտականություններ[5]: Որդեգրումն իրականացվում է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որդեգրողի և որդեգրվողի համադրելիության չափանիշների գնահատման հիման վրա:

Որդեգրումը համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելիձևը: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխաների որդեգրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու: Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը[6]: Երեխայի որդեգրման կարգը սահմանվում է ՀՀ ԸՕ 113-րդ հոդվածով:

Երեխային որդեգրելու ցանկություն ունեցող անձինք դիմումով դիմում են դատարան: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի քննությունը դատարանն իրականացնում է հատուկ վարույթի՝ ՔԴՕ-ի 34-րդ գլխի 261-265-րդ հոդվածներով սահմանված կարգով: Երեխային որդեգրելու մասին դիմումները քննվում են հատուկ վարույթի կարգով, որտեղ նյութահիրավական վեճեր չեն քննվում: ՔԴՕ-ի 261-րդ հոդվածի համաձայն՝ երեխա որդե-

[5] Տե՛ս ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 112-րդ հոդված// www.arlis.am:

[6] Տե՛ս «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք// ՀՀԱԺՏ 1995/8:

գրելու համար դիմում պետք է ներկայացնեն որդեգրվող երեխայի հաշվառման, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վայրի առաջին ատյանի դատարան[7]:

Դիմումում նախ և առաջ պետք է նշել որդեգրել ցանկացող անձի կամ էլ անձանց անունը, բնակության վայրը, որդեգրվող երեխայի անունը, ծննդյան ժամանակը և բնակության վայրը: Դիմումին պետք է կցվեն որդեգրել ցանկացող անձի (անձանց) անձը հաստատող փաստաթղթի պատճենը, որդեգրել ցանկացող անձի (անձանց) ամուսնության վկայականի պատճենը, եթե որդեգրել ցանկացող անձը (անձինք) ամուսնության մեջ է (են), 10 տարին լրացած երեխայի համաձայնությունը: Եթե երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու: Որդեգրումը հաստատելու մասին գործերը դատարանը քննում է երկու ձևով՝

ա. որդեգրել ցանկացող անձի, խնամակալության և հոգաբարձության մարմնի և 14 տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից երեխաներ որդեգրելու դեպքում, բ. որդեգրել ցանկացող անձի, «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նշանակած կենտրոնական մարմնի և 14 տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխաներ որդեգրելու դեպքում:

Որդեգրվող երեխային դատարանը հարցեր է ուղղում՝ որդեգրման վերաբերյալ երեխայի կարծիքը պարզելու համար, հաշվի առնելով նրա տարիքը և հասունության մակարդակը: Անհրաժեշտության դեպքում դատարանը գործի քննությանը կարող է ներգրավել որդեգրվող երեխայի ծնողներին (ծնողին) կամ այլ օրինական ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ անձանց: Կարևոր ենք համարում այն, որ որդեգրման գործերով դատական

[7] Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 261-265-րդ հոդվածներ//www.arlis.am:

քննությունն անցկացվում է դռնփակ, որի մասին որոշում է կայացվում դիմումը վարույթ ընդունելիս: Որդեգրման գործով եզրափակիչ դատական ակտը չի հրապարակվում:

Հաշվի առնելով, որ որդեգրման վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտցնելուց հետո է որդեգրողը դառնում երեխայի օրինական ներկայացուցիչ, որդեգրման մասին դիմումի հետ միասին չեն կարող քննվել նաև երեխայի գույքային իրավունքների պաշտպանության վերաբերյալ պահանջներ, ասենք՝ սեփականության իրավունքի մասին, բնակտարածությունըմասնավորեցնելու մասին և այլն: Դիմումի քննության արդյունքներով դատարանը վճիռ է կայացնում որդեգրումը հաստատելու մասին կամ մերժում է որդեգրման հաստատումը: Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) եզրակացությունը որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, իսկ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության երեխայի որդեգրման դեպքում՝ կենտրոնական մարմնի եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին:

Երեխաներին որդեգրման հանձնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում որդեգրողների ընտանիքներում երեխաների կյանքի և դաստիարակության պայմանների վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Դատարանը պարտավոր է երեխայի որդեգրումը հաստատելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այդ վճիռը ուղարկել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին՝ ըստ երեխայի ծննդի պետական գրանցման վայրի, և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին: Երեխայի որդեգրումը հաստատելու մասին գործի վարույթի կարճման կամ երեխայի որդեգրումը մերժելու մասին վճիռ կայացնելու դեպքում դատարանը պարտավոր է վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք օրվա ընթացքում այն ուղարկել գործին մասնակցող անձանց, Հայաստանի Հանրա-

պետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, իսկ օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխայի որդեգրելու դեպքում՝ նաև կենտրոնական մարմին: Երեխայի որդեգրումը ենթակա է պետական գրանցման՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով[8]:

Հայաստանի Հանրապետությունում երեխա որդեգրելու իրավունք չունեն դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք: Այն ամուսինները,որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,այն անձինք, որոնք որդեգրման պահին չունեն այնպիսի եկամուտ, որը կապահովի որդեգրվող երեխայի նվազագույն կենսապայմանները, այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր և նախատեսված այլ դեպքերում: Համամիտ ենք այն օրենսդրական կարգավորման հետ, որ ամուսնության մեջ չգտնվող անձինք չեն կարող համատեղ որդեգրել միևնույն երեխային: Տարբեր պետություններում կիրառվում են որդեգրման տարբեր ընթացակարգեր: Օրինակ, ԱՄՆ-ում նախատեսված է ամերակիցների կողմից արտասահմանում երեխաներ որդեգրելու երեք եղանակ.

երեխաների պաշտպանության և միջազգային որդեգրման հարցում համագործակցության Հաագայի կոնվենցիայի դրույթներին

համապատասխան,

ամերիկյան օրենսդրության համաձայն՝ այն դեպքում, երբ որդեգրված երեխան հանդիսանում է այն երկրի քաղաքացի, որը չի վավերացրել Հաագայի կոնվենցիան,

ամերիկացիների կողմից ազգական երեխա որդեգրելը:

Միջազգային կոնվեցիայի ընդունման առաջին երկու կառուցակարգերը հնարավոր են միայն 25 տարեկանից բարձր ԱՄՆ քաղաքացիների համար: Որդեգրման երկրորդ եղանակը կոչվում է «որբ» գործընթաց, որը ԱՄՆ քաղաքացիներն օգտագործում են օտարազգի որբեր որդեգրելու համար: Խոսքը այն երկրների որբերի մասին է, որոնք Հաագայի կոնվենցիայի մասնակից չեն:

Որպեսզի որդեգրված երեխան մուտք գործի Միացյալ Նահանգներ, Միացյալ Նահանգների քաղաքացիության և ներգաղթի ծառայությունները

[8] Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը// www.arlis.am:

(USCIS) պետք է մուտքի թույլտվություն տրամադրեն9: Նման թույլտվություն-համաձայնություն ստանալու համար որդեգրող ծնողները դիմում են Միացյալ Նահանգների քաղաքացիության և ներգաղթի ծառայությանը (USCIS) հատուկ խնդրագրով, որը պետք է պարունակի պահանջվող տեղեկատվություն որդեգրողների և որդեգրված երեխայի մասին: Որդեգրման գործընթացն ավարտելուց հետո որդեգրող ծնողները դիմում են արտասահմանում գտնվող ԱՄՆ հյուպատոսական գրասենյակ և երեխայի մուտքի վիզա ստանում դեպի ԱՄՆ:

Հյուպատոսությունում հարցազրույցի ընթացքում որդեգրված երեխան պետք է ներկա լինի և, ի թիվս այլ փաստաթղթերի, տրամադրվում է որդեգրող ծնողների վերը նշված խնդրագրին USCIS բավարարման վերաբերյալ տեղեկատվություն: Հարցազրույցի դրական արդյունքի դեպքում երեխայի համար տրվում է ներգաղթային վիզա: Միջազգային որդեգրման մյուս երկու մեթոդների համաձայն՝ երեխան կկարողանա ԱՄՆ քաղաքացիություն ձեռք բերել մեկ կամ երկու ծնողների միջոցով՝ որպես ԱՄՆ քաղաքացու կամ քաղաքացիների երեխա: Երրորդ եղանակը օգտագործվում է ամերիկացիների համար, ովքեր որոշում են որդեգրել իրենց հարազատին: Որդեգրող ծնողները կարող են լինել ոչ միայն ԱՄՆ քաղաքացիներ, այլ նաև Միացյալ Նահանգների օրինական մշտական բնակիչներ: Որդեգրումը հնարավոր է մինչև երեխայի 16 տարին լրանալը (կամ մինչև 18 տարեկան, եթե երեխան հարազատ եղբայր է և ապագա որդեգրող ծնողների ընտանիքում որդեգրվել է մինչ նրա 16 տարին լրանալը):

Երեխաների որդեգրման անվճար կարգ է սահմանված Ուկրաինայում, որտեղ երեխա որդեգրելու գործընթացը նույնպես կարելի է բաժանել մի քանի փուլերի: Այդ փուլերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և կարող է ուղեկցվել մի շարք դժվարություններով: Առաջին փուլում անհրաժեշտ է գործընթացը սկսել՝ կապ հաստատելով որդեգրողների բնակության վայրում գտնվող երեխաների բարեկեցության ծառայության հետ և որդեգրող ծնողների թեկնածուի կարգավիճակ ստանալ: Որդեգրման առաջին քայլը որդեգրող ծնողներից գրավոր դիմում և որդեգրման համար փաստաթղթերի փաթեթ ներկայացնելն է՝ անձնագրի պատճենը, ամուսնության վկայականի պատճենը, քրեական գրառման առկայության կամ բացակայու-

[9] Տե՛ս «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիա:

թյան մասին վկայագիր, յուրաքանչյուր դիմողի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որդեգրման համար երկրորդ ամուսնու նոտարական կարգով գրավոր համաձայնություն, աշխատավարձի վկայագիր (վերջին վեց ամիսների ընթացքում) կամ եկամուտների հայտարարագիր, բնակելի տարածքների սեփականությունը կամ օգտագործումը հաստատող փաստաթուղթ:

Երկրորդ փուլում՝ դիմումը ներկայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, երեխաների գործերի ծառայությունը մանրամասն ուսումնասիրում է փաստաթղթերը, կազմում հավակնորդ ծնողների կենցաղային պայմանների հետազոտման ակտ, նրանց հետ զրույց վարում որդեգրման պատճառների, ինչպես նաև երեխաների դաստիարակության նկատմամբ վերաբերմունքի մասին: Որոշումը կայացնելուց հետո դիմումատուներին տրվում է եզրակացություն երեխայի որդեգրման համար փաստաթղթերի հետ միասին, որոնց հիման վրա նրանք կարող են դիմել Ուկրաինայի ցանկացած մարզում գտնվող երեխաների գործերի ծառայության՝ երեխայի հետ կապ հաստատելու համար: Ընդ որում որդեգրման փաստաթղթերի վավերականությունը դրանց թողարկման օրվանից մեկ տարի է:

Երրորդ փուլում որդեգրող ծնողների թեկնածուների ծանոթացումը որդեգրվող երեխաների տվյալների հետ և հետագայում երեխայի հետ անձնական ծանոթությունը: Որդեգրող ծնողների թեկնածուները, բացի երեխաների հետ շփվելուց, իրավունք ունեն ծանոթանալ երեխայի անձնական գործում պարունակվող փաստաթղթերին, նրա բժշկական գրառմանը, կյանքի պատմությանը, հմտություններին և բնավորության գծերին:

Չորրորդ փուլում՝ դիմում երեխաների գործերով զբաղվող ծառայությանը երեխայի գտնվելու վայրում, ներկայացնում են նրան որդեգրելու ցանկության դիմում: Դիմումը կազմվում է պետական լեզվով՝ նշելով որդեգրող ծնողների լրիվ անվանումը, բնակության վայրը, ինչպես նաև երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը և գտնվելու վայրը:

Հինգերորդ փուլում կատարվում է երեխաների գործերով ծառայության կողմից որդեգրման թեկնածուների դիմումի քննություն և որդեգրման նպատակահարմարության և երեխայի շահերին համապատասխանելու մասին եզրակացության ընդունում: Տվյալ եզրակացությունը տրվում է որդեգրողներին ստորագրությամբ և հիմք է դատարան դիմելու համար: Ինչպես այլ պետություններում, այնպես էլ Ղազախստանի Հանրապետությունում երեխայի որդեգրում թույլատրվում է այն դեպքում, եթե որդեգրողի ընտանիքում կան

բավարար պայմաններ երեխայի բնականոն ֆիզիկական, մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման, դաստիարակության և կրթության համար: Որդեգրողները կարող են չափահաս լինել, բացառությամբ մի քանի դեպքերի: Ղազախստանի Հանրապետությունում երեխա չեն կարող որդեգրել. 1) դատարանի կողմից անգործունակ կամ մասամբ անգործունակ ճանաչված անձինք,

2) ամուսիններ, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվում է անգործունակ կամ մասամբ անգործունակ,

3) դատարանի կողմից ծնողական իրավունքներից զրկված կամ ծնողական իրավունքներով դատարանի կողմից սահմանափակված անձինք,

4) Ղազախստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններից հեռացված անձինք,

5) նախկին որդեգրող ծնողները, եթե նրանց մեղավորությամբ որդեգրումը չեղյալ է հայտարարվել դատարանի կողմից,

6) այն անձինք, ովքեր առողջական նկատառումներից ելնելով չեն կարող իրականացնել ծնողական իրավունքներ,

7) մշտական բնակության վայր չունեցող անձինք,

8) քաղաքացիություն չունեցող անձինք:

Միևնույն ժամանակ սահմանված է, որ երեխա դաստիարակելու հավակնող զույգն անպայման պետք է ամուսնացած լինի: Զույգերը չեն կարող երեխա որդեգրել առանց ամուսնության, ինչը ճիշտ մոտեցում ենք համարում: Որդեգրող ծնողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի առնվազն 16 տարեկան: Դատարանի կողմից վավեր համարվող պատճառներով տարիքային տարբերությունը կարող է կրճատվել[10]: Իրականացնելով երեխաների որդեգրման ինստիտուտի համեմատաիրավական վերլուծություն՝ հանգեցինք այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետությունում երեխաների որդեգրման կարգը պետք է խստացնել և ավելացնել պահանջները հատկապես արտասահմանյան երկրների կողմից երեխաներ որդեգրողների համար: Միաժամանակ, անհրաժեշտ է խստացնել քրեական պատասխանատվությունը և պատիժը որդեգրման կանոնները դիտավորությամբ և շահադիտական շարժառիթով խախտած

[10] Տե՛ս Ղազախստանի Հանրապետության Ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, 13-րդ գլուխ//www.online.zakon.kz:

սուբյեկտների նկատմամբ: ՀՀ-ում երեխաների որդեգրման գործընթացի խստացման անհրաժեշտությունը պայմանավորված է հայ ժողովրդի ազգային գենոֆոնդը պաշտպանելու, ժողովրդագրական աճ ապահովելու հրամայականներով, երեխային իր հարազատ միջավայրում մեծանալու և իր ազգային ինքնությունը պահպանելու բնական իրավունքով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղարախանյան Գ. Հ., ՀՀ ընտանեկան իրավունք, Երևան, 2005թ.:
2. ՌԴ Ընտանեկան օրենսգիրք, 19-րդ գլուխ//www.consultant.ru:
3. Բելառուսի Ընտանիքի և ամուսնության մասին օրենսգիրք, 51-րդ հոդված//www.kodeksy-by.com:
4. Ուկրաինայի ընտանեկան օրենսգիրք, հոդված 211-րդ//www.lawportal.ua:
5. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 112-րդ հոդված// www.arlis.am:
6. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք// ՀՀԱԺՏ 1995/8:
7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 261-265-րդ հոդվածներ//www.arlis.am:
8. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը// www.arlis.am:
9. «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիա:
10. Ղազախստանի Հանրապետության Ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, 13-րդ գլուխ//www.online.zakon.kz:

ADOPTION OF A CHILD AS A LEGAL INSTITUTE

SARGSYAN MERI

2nd-year student of the Department of Jurisprudence
Faculty of Humanities
Gavar State University
e-mail: meri-sargsyan2001@mail.ru
Academic Supervisor: Vardanyan Geghetsik
Lecturer at GSU,
Academy of the Educational Complex of the RA Police
Lecturer at the Department of Criminal Procedure

The article is devoted to the legal regulation of the institution of child adoption. The features of adoption both in the Republic of Armenia and in other foreign countries have been studied, proposals have been made to improve this institution.

Key words: *Child, child adoption, family, adoptive parent, guardian, RA Family Code.*

УСЫНОВЛЕНИЕ РЕБЕНКА КАК ПРАВОВОЙ ИНСТИТУТ

САРГСЯН МЕРИ
Студентка 2 курса отделения юриспруденции
факультета гуманитарных специальностей ГГУ,
электронная почта: meri-sargsyan2001@mail.ru
Научный руководитель: Варданян Гехецик
Преподаватель ГГУ,
Преподаватель кафедры уголовного процесса
Образовательного комплекса Полиции РА

Статья посвящена правовому регулированию института усыновления ребенка. Изучены особенности усыновления как в Республике Армения, так и в других зарубежных странах, внесены предложения по совершенствованию этого института.

Ключевые слова: *ребенок, усыновление ребенка, семья, усыновитель, опекун, Семейный кодекс РА.*

ԻՐԱՎԱԲԱՆԻ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՍԱԻԴԱ
Գորիսի պետական համալսարանի
հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ ohanjanyan.saida@gmail.com
Գիտական ղեկավար՝ Հարությունյան Ավետիք
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Տարբեր բնագավառներում պետության և հասարակության առջև ծառացած խնդիրների լուծումն առաջացնում է վերափոխումների անհրաժեշտություն, որը պահանջում է նոր մոտեցում օրենսդրությանը, իրավունքի գերակայությանը, քաղաքացիների իրավական մշակույթին և հասարակության մեջ իրավաբանի դերի և տեղի գնահատմանը:

Իրավաբանի մասնագիտությունը կարևոր սոցիալական դեր ունի, քանի որ իրավաբանը իր ծառայություններն է մատուցում անհատներին, հասարակությանը, հասարակության անդամների միջև մասնագիտորեն լուծում է ամենաբարդ իրավահարաբերությունները, ապահովում է կարգուկանոն՝ հիմնված արդարության, մարդասիրության, օրինականության, իրավահավասարության, բարոյականության, ողջամտության և ճշմարտացիության սկզբունքների վրա:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել իրավաբանին առաջադրվող բարոյական պահանջները, պարզել հասարակության մեջ իրավաբանի ունեցած դերը, իրավաբանի կողմից իր սոցիալական դերի ընկալման և մասնագիտական ողջ ներուժի օգտագործման խնդիրներն ու խոչընդոտները:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համեմատության և դեդուկցիայի մեթոդները:

Բանալի բառեր՝ *իրավաբան, հասարակություն, իրավահարաբերություններ, սոցիալական դեր, բարոյական պահանջներ, մասնագիտական էթիկա, մասնագիտական ներուժ:*

Իրավագիտությունը ամենահին հասարակական գիտություններից է: Պատմականորեն նրա առաջացումը կապված է օրենքների ստեղծման ու զարգացման հետ: Դեռևս հին հունական փիլիսոփայության մեջ առաջ էին

քաշվում իրավագիտության ամենակարևոր տեսական խնդիրները, իսկ հռոմեացի իրավաբանները մշակեցին իրավական հասկացություններ և դրույթներ, որոնք պահպանել են իրենց նշանակությունը մինչ օրս:

Իրավական խնդիրները կենսական դեր են խաղում նաև ժամանակակից ժողովրդավարական հասարակության և իրավունքի գերակայության ապահովման տեսակետից: Այս առումով իրավաբանների մասնագիտական էթիկայի խնդիրը գնալով ավելի հրատապ է դառնում, քանի որ չկա բավարար գրականություն, որը նախատեսված լիներ իրավաբանական էթիկայի ոլորտում գիտելիքներ ստանալու համար, իսկ դրա խնդիրներին նվիրված փոքրաթիվ հրապարակումները չեն արտացոլում ժամանակակից գաղափարները, չնայած իրավաբանների գործունեության ոլորտն անընդհատ ընդլայնվում է: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել իրավաբանի մասնագիտական էթիկայի հիմունքները, նրանց առաջադրվող բարոյական և մասնագիտական պահանջները, առկա խնդիրները:

Ժամանակակից ժողովրդավարական հասարակություն կառուցելու ճանապարհին առաջնային դերակատարում ունի մարդու իրավունքների ու ազատությունների հարգումն ու պաշտպանությունը: Բոլոր ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում մարդը հռչակվում է որպես բարձրագույն արժեք, այդպիսով հումանիզմը դառնում է մարդու իրավունքներն ու ազատությունները երաշխավորող հասարակություն կերտելու հիմնական սկզբունքներից մեկը, սրանից ելնելով՝ մարդկային հարաբերությունների բարոյական կողմերը հատուկ կարևորություն, արժեք և արդիականություն են ստանում:

Իրավաբանի մասնագիտության հիմնական նպատակը մարդկանց միջև այն ամենաբարդ հարաբերությունների կարգավորումն է, որոնք կապված են մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումների հետ, և որը երբեմն զգալիորեն ազդում է մարդու ճակատագրի վրա:

Իրավաբանները մասնակցում են ոչ միայն օրենքների իրագործմանը, այլև նպաստում են օրենսդրության մշակմանը, սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման բարելավմանը՝ իրավասու մարմիններին ներկայացնելով օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկներ, օրենսդրական մարմինների աշխատանքներին մասնակցելով, պատրաստելով օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր, ներկայացնելով եզրակացություններ և կարծիքներ օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ և այլն:

Իրավաբանի աշխատանքի ոլորտները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

իրավաբանական ծառայություններ. խորհրդատվություն, իրավական աջակցություն, ներկայացուցչություն, իրավական աուդիտ և այլն,

իրավական հսկողություն և վերահսկողություն,

արդարադատություն և վեճերի լուծում (քրեական, վարչական և քաղաքացիական):

Իհարկե, իրավաբանի ծառայությունները պետք է ունենան հստակ սահմաններ:

Իրավաբանների խնդիրն է լուսաբանել արդարադատության մարմինների և դատարանների գործունեությունը, ցույց տալ նրանց դերը իրավունքի գերակայության ապահովման գործում, նպաստել դատական իշխանության հեղինակության բարձրացմանը, քաղաքացիների համար մեկնաբանել նոր օրենքները, որպեսզի յուրաքանչյուր ոք ծանոթ լինի իր իրավունքներին, ազատություններին և պարտականություններին, նրանց շրջանում խթանել օրինապահ վարքագծի դրսևորումը և այլն: Ուստի իրավաբանի ընդհանուր իրավական մշակույթը, նրա բարոյական դիրքորոշումն ու կարողությունները ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական գործունեության մեջ ունեն հսկայական կարգավորիչ ու կրթական արժեք: Այն իրավաբանի մասնագիտությունը դարձնում է հանրային, սոցիալական նշանակություն ունեցող ոլորտ, որը մեծ դեր ունի իրավական մշակույթի զարգացման գործում:

Իրավաբանի գործունեության մեջ կարևոր դեր է հատկացվում էթիկայի[1] նորմերին, որը կարգավորում է իրավաբանի աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև աշխատանքային գործունեությունից դուրս վարքագիծը, ուսումնասիրում է այդ բնագավառի բարոյականության պահանջները:

Էթիկայի կանոնները՝ որպես վարքագծի ընդհանուր սոցիալական նմուշներ, ձևավորվել են մարդկության պատմական զարգացման ընթաց-

[1] Էթիկա եզրույթը, որն առաջացել է հունարեն «էթոս» բառից և թարգմանաբար նշանակում է սովորույթ, բարոյական բնավորություն՝ որպես գիտության առանձին ճյուղի անվանում, առաջին անգամ կիրառել է Արիստոտելը՝ մ.թ.ա. 4-րդ դարում: Նա էթիկա ասելով՝ հասկանում էր գիտություն, որն ուսումնասիրում է բարեգործությունը, երջանկության հասնելու համար օգտագործվող միջոցները: (տե՛ս Grant A., The ethics of Aristotle, London, 1857,էջ 258, Адвокатская деятельность, под ред. В. Н. Буробина. Москва, 2003, էջ171, Кобликов А. С., Юридическая этика, Москва, 1999, էջ 11):

քում՝ «չարի դեմ պայքարի, ինչպես նաև բարու, մարդասիրության, արդարության, մարդկանց երջանկության հաստատման համար պայքարի ընթացքում»[2]: Ի տարբերություն իրավունքի՝ էթիկայի նորմերը բավական երկար ժամանակ մասնագիտացված պաշտոնական արտահայտման ձևեր չեն ունեցել, այլ միայն գոյություն են ունեցել մարդկանց գիտակցության մեջ, ինչպես համոզված էր Ի. Կանտը[3]:

Իրավաբանի մասնագիտական էթիկայի առարկան կարող է սահմանվել որպես «մասնագետի, պրոֆեսիոնալի վերաբերմունք իրավունքի նշանակությանը և արժեքներին, օրենսդրական նորմերին, կանոններին և մասնագիտական գործունեության մեջ այդ վերաբերմունքի իրականացում[4]»:

Իրավաբանական էթիկան կարելի է անվանել տարբեր մասնագիտացում ունեցող իրավաբանների բարոյական օրենսգիրք: Հետևաբար իրավաբանի մասնագիտական էթիկան պետք է ներառի նաև հատուկ բարոյական նորմեր, որոնք որոշում են այս մասնագիտության տեր մարդկանց վարքը հատուկ իրավիճակներում: Սակայն նշենք, որ իրավաբանական մասնագիտության տեր աշխատողներին ուղղված հատուկ բարոյական կանոնները չեն կարող հակասել բարոյականության ընդհանուր սկզբունքներին և նորմերին: Դրանք միայն լրացնում և կոնկրետացնում են դրանք՝ կապված իրավական գործունեության հատուկ պայմանների հետ:

Իրավաբանական մասնագիտություն ունեցող աշխատողներին պարտադրվում են բարձր բարոյական պահանջներ, որը բացատրվում է հասարակության կողմից նրանց հանդեպ տածած հատուկ վստահությամբ և նրանց գործառույթների պատասխանատու բնույթով: Մարդիկ, ովքեր որոշում են ուրիշների ճակատագրերը՝ նրանցից պահանջելով պահպանել օրենքը և բարոյականությունը, պետք է ունենան դա անելու ոչ միայն պաշտոնական, ծառայողական, այլ նաև բարոյական իրավունք:

Էթիկան փիլիսոփայական ուսմունք է, որի ներքո ամբողջացվում է «բարոյականություն» եզրույթը, իսկ բարոյականությունը՝ մորալը (լատիներեն mores՝ հասարակական բարքեր, չգրված կանոններ), մարդու վարքագծի

---

[2] Տե՛ս Murray P., Basic trial Advocacy. Harvard, 1995, էջ 37:

[3] Տե՛ս История политических и правовых учений, под. ред. В. С. Нерсесянца, Москва, 2006, էջ 511:

[4] Տե՛ս Букреев В. И., Римская И. Н., Этика права, «Юрайт». М., 1998, էջ 25:

նորմատիվ կարգավորման մեթոդներից մեկն է, հասարակական գիտակցության հատուկ ձև և սոցիալական հարաբերությունների տեսակ:

Բարոյականությունը սկզբունքների և նորմերի համակարգ է, որը որոշում է մարդկանց միջև հարաբերությունների բնույթը՝ տվյալ հասարակության մեջ ընդունված «բարի-չար», «արդար-անարդար», «արժանի-անարժան» հասկացությունների համաձայն: Բարոյականության պահանջների պահպանումը ապահովվում է հոգևոր ազդեցության, հասարակական կարծիքի, ներքին համոզման և մարդկային խղճի ուժով:

Բարոյականության գործառույթներից առանձնացնում են կարգավորող, կրթական, ճանաչողական, գնահատող-հրամայական, կողմնորոշիչ, մոտիվացիոն, հաղորդակցական, կանխատեսող և մի շարք այլ գործառույթներ[5]:

Բարոյական նորմերը պետք է նպաստեն իրավունքի հումանիզացմանը և ժողովրդավարացմանը: Բարոյական նորմերի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է դրանց հաստատմանը նպաստող կամ խոչընդոտող իրավական համակարգից, իսկ իրավական նորմերի աշխատանքի արդյունավետությունը կախված է դրանց բարոյական պահանջներին համապատասխանության մակարդակից:

Իրավաբանը իր գործունեության ընթացքում մեծապես պետք է առաջնորդվի բարոյական նորմերով, որովհետև բարոյականությունն ու իրավունքը կատարում են մեկ սոցիալական գործառույթ՝ հասարակության մեջ մարդկանց վարքի կարգավորում: Դրանք սոցիալական կյանքի կարգավորման համար անհրաժեշտ, փոխկապակցված և փոխլրացնող համակարգեր են, որոնք առաջանում են հասարակության գործունեության ապահովման համար մարդկանց օբյեկտիվ կարիքից ելնելով՝ համակարգելով հասարակության անդամների, նրա խավերի և խմբերի տարբեր, երբեմն տրամագծորեն հակառակ շահերը:

Պետք է նկատել, որ օրենքը կարգավորում է անձի միայն սոցիալական նշանակություն ունեցող վարքը, իրավական կարգավորման մեթոդը իրավական ակտ է, որը ստեղծվում է պետական իշխանության կողմից՝ իրավական նորմերի հիման վրա և սահմաններում: Այն չպետք է, օրինակ, ներխուժի մարդու անձնական կյանք, ավելին, այն նախատեսված է նման ներխուժման դեմ երաշխիքներ ստեղծելու համար: Իսկ բարոյական կարգավորման

[5] Տե՛ս Есикова, М. М., Профессиональная этика юриста, Тамбов, 2006, էջ 11:

օբյեկտը անձի և՛ սոցիալական նշանակություն ունեցող վարքն է, և՛ անձնական կյանքը, միջանձնային հարաբերությունները (ընկերություն, սեր, փոխօգնություն և այլն), այն սուբյեկտների վարքը կարգավորում է հասարակության կարծիքի, ընդհանուր ընդունված սովորույթների և անհատական գիտակցության միջոցով:

Սակայն բարոյական և էթիկական նորմերը պահպանելուց բացի՝ իրավաբանի համար կարևոր է ունենալ վերլուծական, միջանձնային հաղորդակցման, հետազոտական, խնդիրներ լուծելու, խոսակցական և փաստաթղթեր կազմելու հմտություններ, որոնց առկայությունը իրավաբաններին օգնում էպատշաճ ձևով լուծել իրենց հաճախորդների խնդիրները:

Սակայն փաստն այն է, որ իրավաբանական կրթություն ունեցող ոչ բոլոր մասնագետներն ունեն վերոնշյալ հմտությունները, բարոյական և էթիկական արժեքները: Սրանից ելնելով էլ՝ հասարակության շրջանում աճում է հետաքրքրությունը իրավաբանական մասնագիտական խնդիրների նկատմամբ, հատկապես մասնագիտական կրթության բնագավառում, որն ուղղակիորեն կապված է սոցիալ-տնտեսական պայմանների էական փոփոխությունների հետ:

Իրավաբանական կրթության որակի արդի խնդիրների վրա ազդող գործոնները ներառում են հետևյալները.

սոցիալ-տնտեսական կյանքի և իրավական ոլորտում նշանակալի փոփոխություններ, որոնք պահանջում են համարժեք փոփոխություններ իրավաբանական կրթության համակարգում,

իրավաբանական կրթության զանգվածային ձեռքբերում, ինչը նվազեցնում է իրավաբանական անձնակազմի մասնագիտական կրթության որակի մակարդակը,

դիմորդների նախնական իրավական կրթության ցածր մակարդակ,

արագ փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում իրենց պարտականությունները պատշաճ կատարող իրավաբանական անձնակազմի բացակայություն,

իրավաբանական կրթություն տրամադրող որոշ բուհերում դասախոսական անձնակազմի մանկավարժական և մասնագիտական որակավորման ցածր ցուցանիշ,

իրավաբանական կրթություն տրամադրող պետական բուհերի ֆինանսական աջակցության մակարդակի փոփոխություններ, ինչը հանգեցնում է նրանց գոյատևման խնդրին և այլն:

Ելնելով նրանից, որ իրավաբանը մասնագիտական կրթության ընթացքում պատրաստվում է մասնագիտական գործունեություն իրականացնել, մեծ կարևորություն է ստանում ուսանողների ինտելեկտուալ ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրը, որը կարող է արտահայտվել ուսանողներին տեսական, գիտական և պրակտիկային ուղղված կարևոր խնդիրներ առաջադրելով, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ակտիվորեն ներգրավել դրանց լուծման գործընթացներում: Իրավական հարցերի շուրջ ինքնուրույն աշխատանքի, գործնական առաջադրանքների, խնդիրների իրականացման ամբողջականությունը հնարավորություն է տալիս մոդելավորել առաջիկա մասնագիտական իրավական գործունեության առարկան և սոցիալական բովանդակությունը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ իրավաբանները կարևոր սոցիալական դեր ունեն, քանզի պաշտպանում են անհատի շահերը, նրա իրավունքները, ազատությունները, սեփականությունը, հասարակության, պետության շահերը քրեական և այլ անօրինական ոտնձգություններից, հասարակության մեջ ապահովում են կազմակերպվածություն, կարգապահություն և իրավական կարգ՝ հիմնված արդարության, մարդասիրության, օրինականության, իրավահավասարության, բարոյականության, ողջամտության և ճշմարտացիության սկզբունքների վրա:

Հասարակության մեջ իրավաբան լինելը մեծ պատիվ է և հսկայական պատասխանատվություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Букреев В. И., Римская И. Н., Этика права, Юрайт, М., 1998, 25 с.
2. Буробина В. Н., Адвокатская деятельность, Москва, 2003, 171 с.
3. Нерсесянц В. С., История политических и правовых учений, Москва, 2006, 511 с.
4. Есикова М. М., Профессиональная этика юриста, Тамбов, 2006, 11 с.
5. Кобликов А. С., Юридическая этика, Москва, 1999, 11 с.
6. Grant A., The ethics of Aristotle, London, 1857, 258p.
7. Murray P., Basic trial Advocacy. Harvard, 1995, 37p.

THE ROLE OF A LAWYER IN SOCIETY

OHANJANYAN SAIDA
- year student of Department of Jurisprudence,
Faculty of Humanities, Goris State University
e-mail: ohanjanyan.saida@gmail.com
Academic Supervisor: Harutyunyan Avetiq
Doctor of Law, Associate Professor

The solution of the existing problems in the different spheres of the state and society creates the need for transformations, which requires a new approach to the legislation, the rule of law, the legal culture of the citizens, and, respectively, the re-evaluation of the role and position of the lawyer in the society.

The profession of a lawyer has a strong social role, as a lawyer provides his/her services to individuals, society, professionally solves the most difficult legal relations, ensures order based on the principles of justice, humanity, legality, equality before the law, morality, common sense and truthfulness.

The purpose of this research is to explore the moral requirements for a lawyer, to find out the role of a lawyer in society, the problems and obstacles to the lawyer's perception of his/her social role and the use of his/her full professional potential.

The methods of comparison and deduction were used in the research.

Key words: *lawyer, society, legal relations, social role, moral requirements, professional ethics, professional potential.*

РОЛЬ ЮРИСТА В ОБЩЕСТВЕ

ОГАНДЖАНЯН САИДА
Студентка 3-его курса отделения юриспруденции
факультета гуманитарных специальностей
Горисского государственного университета
электронная почта: ohanjanyan.saida@gmail.com
Научный руководитель: Арутюнян Аветик
Кандидат юридических наук, доцент

Решение стоящих перед государством и обществом проблем в различных сферах, приводит к необходимости преобразований, что требует нового

подхода к законодательству, правопорядку, правовой культуре граждан и, соответственно, переоценке роли и места юриста в обществе. Профессия юриста играет важную социальную роль, поскольку юрист предоставляет свои услуги отдельным лицам, обществу, между членами общества профессионально решает самые сложные правоотношения, обеспечивает порядок, основанный на принципах справедливости, гуманизма, законности, равноправия, морали, здравомыслия и правдивости.

Цель данного исследования - изучить моральные требования, предъявляемые юристу, выяснить роль юриста в обществе, проблемы и препятствия восприятия юристом своей социальной роли и использования в полной мере всего профессионального потенциала.

В исследовании использовались методы сравнения и дедукции.

Ключевые слова: *юрист, общество, правоотношения, социальная роль, моральные требования, профессиональная этика, профессиональный потенциал.*

Հայաստանի Հանրապետություն,
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
1201, Հրանտ Հակոբյան 1
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հեռ.: +374 60 460201
Կայքէջ՝ http://www.gsu.am
էլ. փոստի հասցե - info@gsu.am
infogsu@mail.ru